20.959

33
И-19

ԱԴԵՅԱՆ Պ., ԱԴՈՅԱՆ Ա., ՄԱԿԻՆՑ

15 JAN 2010

# ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

## ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

33
Ա-19

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1932

ԱԴԵՅԱՆ Պ., ԱԴՈՅԱՆ Ա., ՄԱԿԻՆՑ Ն.

05 FEB 2007

33
Ղ.19

# ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

## ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

1008
374340

45

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1932

Гос. Публ. Библиотека ՀՍԽՀ—ССРА им. А. Мясникяна

- .01. 2013

20959

# ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Վաղուց եր հասունացել հայերեն լեզվով քաղաքատնտեսության քիչ թե շատ լուրջ, սակայն միաժամանակ մասսայական ձեռնարկ ունենալու պահանջը: Այս պահանջն առանձնապես ակտուալ նշանակություն է ստանում այսօր վոչ միայն այն անմխիթար իրողությամբ, վոր մինչև օրս մենք չունենք հայերեն լեզվով քաղաքատնտեսության վորևե ձեռնարկ՝ մասսաների ծավալվող գիտական ծարավը հագեցնելու համար, այլ և այն պատճառով, վոր հրապարակի վրա յեղած տնտեսագիտական աշխատությունները,—վորոնց հեղինակները հավակնություն ունեն իրենց հետևողական մարքսիստներ կոչելու,—բացահայտորեն խարսխված են հակահեղափոխական Ռուբինի աշխարհայացքի և կամ թե Բոգդանով-Բուխարինյան մեխանիստական մեթոդոլոգիայի հիմքերի վրա:

Տնտեսագիտության բնագավառում վերջին տարիներում ծայր տված դիսկուսիան պերճախոս կերպով ցույց տվեց, վոր մենշևիկ Ռուբինը դիտավորյալ կերպով տեսության բնագավառում զբաղվում եր վնասարարությամբ, կանխօրեն մտածված և բոլոր ուղղություններով ռևիզիայի յեր յենթարկում մարքս-լենինյան քաղաքատնտեսությունը, գուշակելով վերջինիս մոտալուտ մահը: Դուրս մղելով տնտեսական կատեգորիաների մարքսիստական անալիզից նրա դիալեկտիկական վոգին, հասարակական արտադրական հարաբերությունները բղխեցնելով «իրավական» և սուբյեկտիվ աշխարհի հարաբերություններից՝ Ռուբինը փորձում եր ԽՍՀՄ-ի պայմաններում քողարկված ձևով կենսագործել ժամանակակից սոցիալ-ֆաշիզմի թեորիան ու վնասարար պրակտիկան: Ամբողջապես ժխտելով արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների դիալեկտիկան և վերջինիս շարժման մատերիական բովանդակությունը, Ռուբինը կամենում եր հրապարակորեն ժխտել սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում ու այդպիսով լիովին արդարացնել Կաուցկիներին և Հիլֆերդինգներին:

Մարքս-լենինյան քաղաքատնտեսությունը ռմբակոծվում եր նաև Բոգդանով-Ստեպանովի, բուխարինյան մեխանիստական հոսանքի կողմից: Նույնացնելով արտադրողական ուժերը տեխնիկայի հետ, ժխտելով քաղաքատնտեսության առարկայի լենինյան սահմանումը, բացասելով քաղաքատնտեսության կատեգորիաների հասարակական պատմական սպեցիֆիկ բնույթը, առաջադրելով «աշխատանքային ծախսումների», «կազմակերպված կապիտալիզմի», «հավասարակշռության» թեորիաները, քաղաքատնտեսության ասպարեզում յերևան յեկած մեխանիստական հոսանքն ինքնին հանդիսանում եր աջ թեքման տեսական արսենալը, վորտեղից վերցրված զենքերով Բուխարինն և իր համախոհները ռևիզիայի եյին յենթարկում Լենինին ու ակտիվ պայքար մղում կուսակցության գլխավոր գծի դեմ:

Քաղաքատնտեսության հարցերի մեխանիստական լուսաբանությունը հասցրեց արտադրության կապիտալիստական ֆորմացիային հատուկ սպեցիֆիկ կատեգորիաների հավերժացումին:

Ահա թե ինչու անհրաժեշտ էր, վորպեսզի ընկ. Ստալինը տար յերկու կողմերին էլ արժանի լենինյան գնահատական, ասելով, վոր յերկու կողմերն էլ ընկնելով տալմուդիզացիայի յենթարկված աբստրակցիաների գիրկը, յերկու տարուց ավելի ջուր լցրին դասակարգային թշնամու ջրաղացին:

Յերկրի ներսում սրված դասակարգային պայքարն իր արտահայտությունը գտնում է նաև տեսության բնագավառում: Կոնդրատևչչինան, ռուբինշչինան, մեխանիստական հոսանքը, Պրեոբրաժենսկու տրոցկիստական տնտեսագիտական հայացքների վերարտադրությունը («Կապիտալիզմի մայրամուտը»), Մոտիլյովի և այլոց լյուքսեմբուրգականության բացահայտ տուրք տալը, և վերջապես տրոցկիստական կոնտրաբանդը կուս. պատմության մեջ, այս ամենը վկայում են, վոր անհրաժեշտ է ավելի քան ուժեղացնել պայքարը տեսական ֆրոնտում, մերկացնել աջ օպորտունիզմի—իբրև գլխավոր վտանգի — մենշևիզմի, հակահեղափոխական տրոցկիզմի ու ամեն տեսակի հակալենինյան հակահեղափոխական հայացքների ու տեսակետների կոնկրետ արտահայտությունները: Այս պայքարը պետք է ծավալել հիմք ընդունելով բացառապես Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի աշխատությունները և կուսակցության համագումարների ու Կենտկոմի վորոշումները:

Յելնելով այս իսկ դրությունից, մենք ձեռնարկեցինք «մարքս-լենինյան քաղաքատնտեսության հիմունքների» կազմելու աշխատանքը, նպատակ ունենալով հայերեն լեզվով ընթերցող բանվորներին, կոլխոզնիկներին և մեր սովորող յերիտասարդությանը տալ քաղաքատնտեսության ձեռնարկ: «Մարքս-լենինյան քաղաքատնտեսության հիմունքները» ձեռնարկը հիմնականում կազմված է ԲՈԽՀ-երի, կոմ. համալսարանի, կուսուսուցման բարձր օղակների և ինքնակրթությամբ պարապող կուս. բարձր ակտիվի համար: Նման ձեռնարկ, իր տիպով, կառուցվածքով ու ծավալով, չկա նաև ռուսական լեզվով: Նյութերը վերցրված են համարյա բացառապես մարքսիզմի կլասիկներից: Միայն տեղ-տեղ նկարագարդման նպատակով յերկրորդական հարցերում իբրև օժանդակ նյութեր քաղել ենք և միքանի մարքսիստ տնտեսագետներից: Այն հանգամանքը, վոր մինչև որս մենք չունենք թարգմանված Մարքսի «Կապիտալը» և մշակված կայուն տերմինաբանություն կրկնակի դժվարացրեց մեր աշխատանքը:

«Մարքս-Լենինյան քաղաքատնտեսության հիմունքները» լույս է տեսնելու յերեք գրքով հետևյալ բովանդակությամբ:

Առաջին գիրք.—1. Դասընթացի ներածական. 2. Ապրանք. 3. Փող. 4. Հավելյալ արժեք և կապիտալ. 5. Աշխատավարձ:

Յերկրորդ գիրք.—6. Կապիտալի կուտակման պրոցեսը և կապիտալիստական կուտակման ամենաընդհանուր օրենքը. 7. Կապիտալի վոլորտը և շրջապտույտը. 8. Արտադրության գինը և շահույթ. 9. Ապրանքային-առևտրական կապիտալ. 10. Փոխատվական կապիտալ և վարկ. 11. Ռենտա:

Յերրորդ գիրք.— 12. Կապիտալիզմը գյուղատնտեսության մեջ. 13. Հասարակական կապիտալի վերարտադրությունը և կրիզիսները. 14. Իմպերիալիզմի լենինյան թեորիան. 15. Իմպերիալիզմի հակալենինյան թեորիաների քննադատությունը. 16. Կապիտալիզմի համաշխարհային կրիզիսը. 17. Քաղաքատնտեսության առարկան ու մեթոդը:

Առաջին գիրքը պատրաստ է յեղել տպագրության սրանից հինգ ամիս առաջ: Սակայն տեխնիկական պատճառներով նրա հրատարակումը ձգձգվեց:



Յերկրորդ գիրքը պատրաստ կլինի վոչ ուշ քան մայիսի 1-ը:
Յերրորդ գիրքը կհանձնենք տպագրության օգոստոսին:

Մեզ նպատակ ենք դրել կազմել քաղաքատնտեսության դասընթացը, յելնելով «քաղաքատնտեսության նեղ իմաստով» դրույթից: Սակայն հնարավորության սահմաններում մենք կտանք նաև խորհրդային էկոնոմիկայի տնտեսական յերևույթների բացատրությունը: Անհրաժեշտ համարեցինք յուրաքանչյուր գլխում տալ ներածական դիտողություններ և մեթոդական ցուցմունքներ:

Իբրև առաջին լուրջ փորձ, մեր աշխատությունը զերծ չէ թերություններից: Մենք համոզված ենք, վոր բոլշևիկյան քննադատությունը ցույց տալով մեր սխալներն ու բացերը, կօգնի մեզ այդպիսիքն ուղղելու հետագա հրատարակությունների ժամանակ:

Մեջ բերված հատվածները վերցրված են՝

1. К. Маркс, „Капитал“ I. изд. 1923 г.
2. Энгельс „Анти Дюринг“ изд. 1928 г.
3. Ленин, Соб. соч., первое издание.

25/XII—31 թ.

ԱԴԵՅԱՆ Պ.
ԱԴՈՅԱՆ Ա.
ՄԱԿԻՆՑ Ն.

# ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Մարդկային հասարակության գոյության հիմքը,—անկախ հասարակության տվյալ ձևից,—նրա արտադրությունն է, այսպես ասած՝ նրա արտադրական կեցությունը։

Հասարակական բոլոր ֆորմացիաներում սոցիալական կյանքի վճռող պատվանդանը, վորի վրա հանգչում են տվյալ դարաշրջանի հասարակական բազմապիսի հարաբերություններն իրենց այլազան արտահայտություններով՝ այդ արտադրությունն է, նրա «տնտեսական ստրուկտուրան»։

Այն հանգամանքը, վոր նախամարդն սկսեց ակտիվ կերպով ներգործել բնության վրա և արտադրել իր գոյության համար միջոցներ՝ մարդուն անջատեց կենդանական աշխարհից, դարձնելով վերջինիս հասարակական կենդանի, «գործիքներ պատրաստող կենդանի»։ Իր այս հատկության և ունակության շնորհիվ, մարդը դադարեց բնության պասսիվ մասնիկը լինելուց։ Ընդհակառակը, նա արտադրելու միջոցով սկսեց ներգործել բնության վրա, փոփոխելով վերջինս իր պահանջների համեմատ, իր արտադրողական ուժերի կարողության սահմաններում։ Սակայն, փոփոխելով բնությունը, մարդը փոխում է իր բնությունը, նա զարգանում է և ավելի քան մեծացնում իր ազդեցությունը բնության վրա։

Մարդկանց արտադրական հարաբերությունների ամբողջությունը ներկայացնող հասարակությունն իրենից ներկայացնում է բնության հետ վերցրած մի տարբերիչ միասնություն՝ հակառակ մեխանիստների պնդումների։ Այլ կերպ ասած՝ մարդկային հասարակությունը, արտադրող անհատների այդ հանրությունը, կազմում է բնության սպեցիֆիկ մասը, մի մաս՝ վորն անկախ բնությունից, ունի իր ծագման և զարգացման առանձնահատուկ և բարդ որենքները։

Անհրաժեշտ է, վորպեսզի ընթերցողներն ամենից առաջ իրենց պարզ հաշիվ տան այդ որենքների բնության և ազդեցության սահմանների մասին, և մյուս կողմից լավ յուրացնեն այս ներածական բաժնում նշված հետևյալ դրույթը.

> «Մարդկային ամեն մի պատմության առաջին նախադրյալը, հասկանալի յե, վոր կենդանի անհատների, մարդկանց գոյությունն է։ Այս անհատների առաջին պատմական ակտը, վորով նրանք զատվում են կենդանիներից, հանդիսանում է վոչ թե այն, վոր նրանք մտածում են, այլ այն՝ վոր նրանք սկսում են իրենց գոյության համար միջոցներ արտադրել»։

Հետևաբար, արտադրական գործունեությունը մարդուն դարձրեց «գործիքներ շինող կենդանի»։ Առայժմ մեզ համար անհրաժեշտ է ընդգծել, վոր արտադրական մոմենտը Մարքսի և Ենգելսի համար տվյալ դեպքում հանդիսանում է յելակետային մոմենտ։ Վողջ դասընթացքի հաջող յուրաց-

ման համար կարևոր նշանակություն ունի վերոհիշյալ դրույթյան ճիշտ և լիակատար ըմբռնումը:

Այժմ, միանգամայն բնականորեն հարց է ծագում—ո՞րն է այն կամուրջը, որը կապում է հասարակությանը բնության հետ: Այդ, տվյալ դարաշրջանի արտադրությունն է բառիս բուն իմաստով: Սակայն, այս դասընթացը մշակող ընկերներն արտադրության տեղն ու դերը պատմական իրողությունների շղթայում լավ պարզելու համար, պետք է որ խորապես յուրացնեն Մարքսի մեթոդի գեթ էական կողմերը, և մյուս կողմից, ունենան տարրական հասկացողություններ պատմական մատերիալիզմից:

Խոսելով այն մասին, որ իր չելակետն արտադրությունն է, Մարքսը գրում է.

«Այսպիսով, յերբ խոսք է լինում արտադրության մասին, ապա միշտ այդ խոսքը վերաբերում է հասարակական զարգացման վորոշ աստիճանի վրա տեղի ունեցող արտադրությանը,—այն անհատների արտադրությանը, վորոնք ապրում են հասարակության մեջ»:

Անհերքելի է, որ հասարակական զարգացման տվյալ փուլի սոցիալ-տնտեսական օրենքները բացահայտելու և հասկանալու տեսակետից, կարևոր է վերցնել այդ փուլի կոնկրետ արտադրությունը, և վոչ թե արտադրությունն ընդհանրապես: Ամբողջ մետաֆիզիկայից և սխոլաստիկական մեծերից խուսափելու համար չպետք է անուշադրության մատնել պրոլետարիատի քաղաքական տնտեսության հիմնադիր Կ. Մարքսի այն նշանավոր միտքը, թե

«Արտադրությունն ընդհանրապես վերցրած մի աբստրակցիա յե, բայց հասկանալի աբստրակցիա, վորչափով վոր նա իսկապես առաջ է մղում ընդհանուրը, ֆիքսացիայի յենթարկում այն և հենց դրանով մեզ ազատում կրկնություններից»:

«Իսկ յեթե գոյություն չունի արտադրություն ընդհանրապես, ապա գոյություն չունի նաև վոչ մի ընդհանուր արտադրություն: Արտադրությունը միշտ գոյություն ունի իբրև արտադրության առանձին ճյուղեր, կամ իբրև նրանց ամբողջություն, ինչպես յերկրագործություն, անասնապահություն, մանուֆակտուրա և այլն»:

Հասարակական զարգացման յուրաքանչյուր էպոխան ունի իր արտադրության ուրույն յեղանակը, մի յեղանակ, վորով նա տարբերվում է հասարակական մի այլ ֆորմացիայից: Արտադրական պրոցեսում ունեցած մարդկանց հարաբերությունները՝ նրանց արտադրական հարաբերություններն իրենցից արտահայտում են արտադրության այն յեղանակի բնությունը, վորի ներքո նրանք գոյություն ունեն: Այսպիսով, արտադրությունը գերազանցապես և սոսկ հասարակական յերևույթ է: Հետևաբար և, արտադրական հարաբերություններն էությամբ հասարակական հարաբերություններ են:

Ձևակերպելով պատմության մատերիալիստական ըմբռնումը, Մարքսը հստակապես ընդգծում է, որ հասարակական բոլոր ֆորմացիաներում, մարդկանց բազմազան հասարակական հարաբերությունները պայմանավորված են արտադրական հարաբերություններով, իսկ վերջիններս իրենց հերթին՝ արտադրողական ուժերով: Այս արտադրողական ուժերը նյութական ուժեր են, որոնք մարդկային պատմության ամբողջ հիմքն են,—վորովհետև ամեն մի արտադրողական ուժ ձեռք բերված ուժ է, նախորդ գործունեության արդյունք,—ասում է Մարքսը:



«Այսպիսով, արտադրողական ուժերը—մարդկանց գործնական էներ-
գիայի հետևանք են, բայց այդ էներգիան ինքը սահմանափակված է այն
պայմաններով, վորոնց մեջ գտնվում են մարդիկ, արդեն առաջ ձեռք բեր-
ված արտադրողական ուժերով, առաջ գոյություն ունեցող հասարակական
ձևով»:

Բայց մարդկային յուրաքանչյուր սերունդ պատրաստի ստանալով վորոշ
մակարդակի վրա գտնված արտադրողական ուժեր իր նախորդներից, զար-
գացնում է այն:

Մարքսիզմ-լենինիզմն արտադրողական ուժերի տակ հասկանում է ար-
տադրության գործիքներ, արտադրության առարկան և բանվորական ուժը:
Ահա այն անհրաժեշտ տարրերը, վորոնք իմի առած կազմում են այն, ինչ վոր
մենք կոչում ենք արտադրողական ուժեր:

Արտադրության գործիքները կամ արտադրության առարկան վերցրած
առանձին, յերբեք չեն կարող հանդիսանալ արտադրողական ուժ: Այս յեր-
կու անհրաժեշտ տարրերին ուժի հատկություն է հաղորդում կենդանի բանվո-
րական ուժը, վորովհետև «ամբողջ մարդկության առաջին արտադրողական
ուժը՝ բանվորն է», ասում է Լենինը:

Հետևաբար, ամեն մի փորձ, արտադրողական ուժերի ամբողջությունից
անջատելու նրա վճռական մասը՝ բանվորական ուժը, և այն նույնացնելը
տեխնիկայի հետ հասցնում է մարքս-լենինյան փիլիսոփայության և տնտե-
սագիտության դիալեկտիկ վոգու ժխտմանը:

Հենց այդպես էլ վարվում է Բուխարինը, յերբ արտադրողական ուժերը
նույնացնում է տեխնիկայի հետ: Անհրաժեշտ է, վորպեսզի ընթերցողն իրեն
լավ պարզի Բուխարինի մեխանիստական՝ ըստ էության բուրժուական կոն-
ցեպցիան այս խնդրում:

Մյուս կողմից, այս թեման մշակելիս, ընթերցողը պետք է պարզ
պատկերացում ունենա այն մասին, վոր արտադրական հարաբերությունները,
վորոնք հանդիսանում են արտադրողական ուժերի զարգացման հասարակա-
կան ձևը, բովանդակություն են ստանում լոկ այն դեպքում, յերբ մենք
նրանց չենք անջատում նյութական արտադրողական ուժերից, յերբ այն դի-
տում ենք իրենց դիալեկտիկական միասնության մեջ: Ահա թե ինչու վնասա-
բար հակահեղափոխական Ռուբինը, մենշևիկող իդեալիստական ռեվիզիայի
յենթարկելով Մարքսի ուսմունքը, բացասում է արտադրական հարաբերու-
թյունների նյութական բովանդակությունը՝ արտադրողական ուժերի առ-
կայությունը և այդ անբովանդակ ձևը հրամցնում վորպես քաղաքատնտե-
սության առարկա:

Մարքսն ուսուցանում է, վոր իրենց առաջխաղացման վորոշ աստիճանի
վրա նյութական արտադրողական ուժերը հակասության մեջ են ընկնում
տիրապետող արտադրական հարաբերությունների հետ: Այս հակասությունն
անպայման հասնում է իր ժխտմանը «և արդեն վրա յե հասնում սոցիալական
հեղաշրջումը»: Հեղաշրջման արդյունքը լինում է այն, վոր փշրվում են ար-
տադրողական ուժերի համար «այժմ կապանքներ հանդիսացող յերբեմնի ար-
տադրական հարաբերությունները», և ստեղծվում է արտադրության նոր
յեղանակ, նոր հասարակակարգ: Սրան զուգահեռ, Մարքսը մատնանշում
է, վոր բուրժուական արտադրական հարաբերությունները վերոհիշյալ հա-

կամարտության վերջին ձևն են, վորով և վերջանում է մարդկության նախապատմությունը:

Արտադրական հարաբերությունները լինելով հետևանք արտադրողական ուժերի հատկապես զարգացման՝ իրենք դառնում են պատճառ և խթան այդ ուժերի զարգացման համար, նայած թե ինչ աստիճանի յեն զարգացել արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների հակասությունները:

Մարքսի և Լենինի բոլոր աշխատությունների մեջ կարմիր թելի պես անցնում է այն միտքը, վոր արտադրական հարաբերությունները, վոչ թե ինչ վոր նյութական բովանդակությունից զերծ ձև են, այլ նրանք ակտիվ և վճռական ազդեցություն ունեն արտադրողական ուժերի զարգացման վրա: Այսպես օրինակ, սոցիալիստական արտադրական հարաբերությունների զարգացումն ու ծավալումը ԽՍՀՄ—թե՛ գյուղում և թե՛ քաղաքում խոշորագույն խթան է հանդիսանում արտադրողական ուժերի զարգացման համար: Այն հանգամանքը, վոր պլանային կերպով մենք ձգտում ենք 10 տարում հասնել կապիտալիստական առաջավոր յերկրներին տնտեսա-տեխնիկական տեսակետից և անցնել, միթե չի՞ գալիս ապացուցելու, վոր արտադրական հարաբերությունները մեզ մոտ հարատև ազդակում են արտադրողական ուժերի առաջխաղացմանը:

Հակահեղափոխական տրոցկիզմը պնդում է, վոր մեր յերկրում չենք կարող սոցիալիզմ կառուցել, քանի վոր մենք հետին տեղն ենք բռնում արտադրողական ուժերի զարգացման տեսակետից և այլն: Այս մենշևիկյան հակահեղափոխական կոնցեպցիայի «գիտական» մեթոդոլոգիական արմատները պետք է փնտռել նրանում, վոր ինչպես միջազգային մենշևիզմը, նույնպես և տրոցկիզմը բառիս բուն իմաստով ժխտում են արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների դիալեկտիկան, և խնդրին մոտենում են մետաֆիզիկ իդեալիստական մեկնակետից:

Անհրաժեշտ է կրկին հիշել, վոր պատմությունը կատարում են կենդանի մարդիկ: Մի բան պետք է խորապես ըմբռնել, վոր արտադրական հարաբերություններն իրենք վերջին հաշվով պայմանավորված են արտադրողական ուժերի տվյալ մակարդակով, ապա ուրեմն նրանց ազդեցությունն անսահմանափակ չէ:

Այս կապակցությամբ, անպայման պետք է հիմնավորապես մշակել մեր ներածականում մեջ բերված ընկ. Ստալինի յերկու տնտեսաձևերի լենինյան բնույթագիրը և պարզել տրոցկիզմի ու միջազգային մենշևիզմի կողմից մեր յերկրում սոցիալիզմի կառուցման ժխտումը և վերջիններիս հակահեղափոխական բնույթը՝ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների ըմբռնման լենինյան դրույթից յելնելով:

Ինչպես տեսնում է ընթերցողը, իրենց աշխատություններում Մարքսը և Ենգելսն սքանչելի պարզությամբ և մտքի ու գաղափարների աննման խորաթափանցությամբ ուրվագծել են ժամանակակից պրոլետարիատի դիկտատուրայի՝ խորհրդային իշխանության անխուսափելիությունը: Այս լոկ նկատառումով, խիստ հետաքրքիր է կանգ առնել այն խնդրի վրա, թե պրոլետարիատը իշխանության գլուխն անցնելով, տնտեսական վորպիսի կոնկրետ միջոցառումներով վերացնում է գյուղի և քաղաքի հակասությունը: Այս ուղղությամբ պետք է մեր օրերի փայլուն օրինակներով նկարագարգել կուսակցության գծի կենսագործման հետևանքները գյուղում և քաղաքում:

Քաղաքատնտեսության ներածականի հանդույցային հարցերը մշակելիս,



անհրաժեշտ է պարզ և հստակ գաղափար կազմել մարքս-լենինյան քաղաքատնտեսության առարկայի մասին:

Այս հարցում նույնպես, վերջին տարիներում ուղղափառ մարքսիզմը յենթարկվեց հարձակումների միքանի կողմերից: Մինչև Լենինի XI հատորի լույս տեսնելը, դասագրքերում կատարյալ շփոթ եր տիրում քաղաքատնտեսության առարկան սահմանելու հարցում: Ամենուրեք տիրապետող եյին Բուխարինի, Բոգդանով-Ստեպանովի և Ռուբինի անտիլենինյան սկզբունքները: Սակայն Բուխարինի «Անցողիկ շրջանի եկոնոմիկան» աշխատության առթիվ արած իր դիտողության, ինչպես նաև յերկրորդ և մի քանի այլ հատորներում, Լենինը խորացնում և կոնկրետացնում է քաղաքատնտեսության առարկային տրված Ենգելսի բնորոշումը:

Վոչ միայն փիլիսոփայության, այլ նաև քաղաքատնտեսության բնագավառում Լենինը մի նոր, ավելի բարձր աստիճանի վրա դրեց մարքսիզմը: Այնպիսի հռչակավոր աշխատություններ, վորպիսիք են՝ «Ինչ են ժողովրդի բարեկամները», «Նարոդնիկների տնտեսական բովանդակությունը», «Պետություն և հեղափոխությունը», «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում», «Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի նորագույն փուլ», և մի շարք այլ գործեր, նոր դարագլուխ են բացում մարքսիստական քաղաքատնտեսության մեջ:

Ե՛վ դասատուն, և՛ ուսանողները պետք է ջանան հանգամանորեն մշակել վոչ միայն քաղաքատնտեսության կուսակցական դասակարգային բնույթը, այլ մասնավորապես կոնկրետացնեն և բազմակողմանի հիմնավորեն լենինյան ետապը քաղաքատնտեսության մեջ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՅԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Մարդկային ամեն մի պատմության առաջին նախադրյալը, հասկանալի յե, վոր կենդանի անհատների, մարդկանց գոյությունն ե։ Այդ անհատների առաջին պատմական ակտը, վորով նրանք զատվում են կենդանիներից, հանդիսանում ե վո՛չ թե այն, վոր նրանք մտածում են, այլ այն՝ վոր նրանք սկըսում են* իրենց գոյության համար միջոցներ արտադրել։ [1])

*Մարդկանց կարելի յե կենդանիներից տարբերել ըստ իրենց գիտակցության, կրոնով, առհասարակ ինչով կուզեք։ Նրանք իրենք սկսում են իրենց տարբերել կենդանիներից միայն այն ժամանակ, յերբ սկսում են իրենց կյանքի համար անհրաժեշտ միջոցներ* արտադրել.—*մի քայլ, վոր պայմանավորված ե նրանց մարմնական կազմակերպությամբ։ Մարդիկ արտադրելով իրենց կյանքի համար անհրաժեշտ միջոցները, կողմնակի կերպով արտադրում են նաև իրենց նյութական կյանքը։*

*Մարդկանց կողմից իրենց կյանքի համար անհրաժեշտ միջոցների արտադրության յեղանակն ամենամերձավոր կերպով կախված ե գոյության այն միջոցների հատկություններից, վոր նրանք գտնում են առկա և վերարտադրում են իրենք։* [2])

*Մարդը բառացի իմաստով վոչ միայն հանրասեր,* Zoon politicon, *կենդանի յե, այլև այն աստիճանի հասարակական կենդանի յե, վոր միմիայն հասարակության մեջ կարող ե առանձնանալ, իբրև ինքնուրույն միավոր։ Առանձնացած անհատների արտադրությունը հասարակությունից դուրս, իբրև հազվադեպ հնարավորություն պատահաբար անմարդաբնակ մի վայր նետված քաղաքակրթված մարդու համար, վոր արդեն դինամիկ կերպով իր մեջ կրում ե հասարակական ուժերը—նույնպիսի մի անհեթեթություն ե, ինչպես լեզվի զարգացումն արտաքո* միատեղ *ապրող և միմյանց հետ խոսող անհատների։* [3])

*Մենք պետք ե սկսենք նրանից, վոր հաստատենք ամեն մարդկային գոյության, ուրեմն և ամեն պատմության, առաջին նախադրյալը. հատկապես այն նախադրյալը, վոր մարդիկ պետք ե ի վիճակի լինեն ապրելու, վորպեսզի հնարավորություն ունենան «պատմություն ստեղծելու»։ Բայց կյանքի համար ամենից առաջ պետք ե ուտելիք և խմելիք, բնակարան, հագուստ և*

1) Маркс—Энгельс «Архив» I, стр. 214, изд. 1930 г.

2) Նույն տեղը—եջ 215.

3) Маркс «К критике полит. экономии», стр. 10, изд 1923 г.



*ելի ինչ-վոր բան։ Այդպիսով՝ առաջին պատմական գործն այդ պահանջները բավարարելու համար անհրաժեշտ միջոցների արտադրությունն ե, նյութական կյանքի իրեն արտադրությունը։* Այդ պատմական գործն ամեն մի պատմության հիմնական պայմանն ե, *վոր պետք ե կատարվի ամեն որ և ամեն ժամ դեռ այսոր էլ, ինչպես հազար տարի սրանից առաջ, վորպեսզի միայն մարդը կենդանի պահվի։* [1])

*Այսպիսով առաջին պահանջը, վորին պետք ե բավարարե ամեն մի պատմական կոնցեպցիա, այդ հիմնական իրողության դիտողությունն ե իր ամբողջ նշանակությամբ ու ծավալով, ինչպես և նրան պատշաճ տեղ հատկացնելը։* [2])

*Այս ուսումնասիրության առարկան—ամենից առաջ* նյութական արտադրությունն ե։

*Անհատներ, վորոնք արտադրում են հասարակության մեջ—հետևաբար, ուրեմն, անհատների հասարակականորեն—պայմանավորված արտադրություն—այս ե բնական յելակետը։* [3])

*Հատկապես հենց մի կողմ պետք ե նետվեն այն սահմանումները, վորոնք գործադրելի յեն ընդհանրապես յուրաքանչյուր արտադրության վերաբերմամբ, վորպեսզի միասնականության պատճառով չմոռացվեն եյական տարբերությունները. այդ բանը կարող ե տեղի ունենալ արդեն այն պատճառով, վոր ինչպես սուբյեկտը՝ մարդկությունը, այնպես էլ ոբյեկտը՝ բնությունը միևնույնն են հանդիսանում։ Այդ տարբերությունները մոռանալն ե, որինակ, ժամանակակից տնտեսագետների վողջ իմաստությունը, վորոնք պնդում են գոյություն ունեցող սոցիալական հարաբերությունների հավիտենականությունն ու ներդաշնակությունը և ապացուցում են, որինակ, թե վո՛չ մի արտադրություն հնարավոր չե առանց արտադրության գործիքի, թեկուզ այդ գործիքը միայն ձեռքը լինի. և վոր վո՛չ մի արտադրություն հնարավոր չե առանց նախորդող կուտակված աշխատանքի, թեկուզ այդ աշխատանքն իրենից ներկայացներ միայն հմտություն, վոր ձեռք ե բերել վայրենու ձեռքը և ամրապնդել հաճախակի վարժությունների միջոցով։* [4])

*Այդպիսով, յերբ խոսք ե լինում արտադրության մասին, ապա միշտ այդ խոսքը վերաբերում ե* հասարակական զարգացման վորոշ աստիճանի վրա տեղի ունեցող արտադրությանը,—*այն անհատների արտադրությանը, վորոնք ապրում են հասարակության մեջ։ Այդ պատճառով՝ կարող ե այնպես թվալ, թե վորպեսզի առհասարակ խոսենք արտադրության մասին, մենք պետք ե կա՛մ զբաղվենք զարգացման պատմական պրոցեսի հետազոտությամբ նրա տարբեր փուլերում, կա՛մ հենց բոլորովին սկզբից հայտարարենք, վոր*

1) Маркс—Энгельс «Архив» I, стр. 219

2) Նույն տեղը

3) Маркс «К критике полит. экон.», стр. 9

4) Նույն տեղը, եջ 11

*մենք գործ ունենք վորոշ պատմական դարաշրջանի, որինակ՝ ժամանակակից բուրժուական արտադրության հետ, վորը* և փաստորեն հանդիսանում է մեր իսկական թեման: Սակայն, արտադրության բոլոր դարաշրջաններին հատուկ են մի քանի ընդհանուր հատկանիշներ, ընդհանուր սահմանումներ: Արտադրությունն ընդհանրապես վերցրած մի աբստրակցիա յե, բայց հասկանալի աբստրակցիա, վորչափով վոր նա իսկապես առաջ է մղում ընդհանուրը, ֆիքսացիայի յենթարկում այն և հենց դրանով մեզ ազատում կրկնություններից: *Բայց դրանից, համեմատության միջոցով ջոկված այդ ընդհանուրն ու նույնանմանն ինքն հանդիսանում է բազմապատիկ տրոհված և տարբեր սահմանումներ է բովանդակում իր մեջ:* [1])

*Իսկ յեթե գոյություն չունի արտադրությունն ընդհանրապես, ապա գոյություն չունի նաև վո՛չ մի ընդհանուր արտադրություն:* Արտադրությունը միշտ գոյություն ունի իբրև արտադրության առանձին ճյուղեր կամ իբրև նրանց ամբողջություն, *ինչպես յերկրագործություն, անասնապահություն, մանուֆակտուրա և այլն:* [2])

*Վերջապես, արտադրությունը գոյություն չունի նաև իբրև մի ինչ-վոր «առանձին», մասնավոր բան: Սակայն արտադրության ճյուղերի ավելի մեծ կամ ավելի փոքր ամբողջականության մեջ* գործոն պատճառ է հանդիսանում միայն վորոշ սոցիալական որգանիզմը, հասարակական սուբյեկտը: *Այս խնդրին չի վերաբերում դարձյալ գլխական շարադրանքի հարաբերությունը դեպի իրական շարժումը: Հետևաբար, մենք պետք է տարբերենք արտադրությունն ընդհանրապես, արտադրության առանձին ճյուղերը, արտադրության ամբողջությունը:* [3])

*Իսկ ի՞նչ բան է հասարակությունը, ինչպես էլ լինի նրա ձևը: Մարդկանց փոխազդեցությունների արդյունք: Արդյոք մարդիկ ազատ կերպո՞վ են ընտրում այս կամ այն հասարակական ձևը:* Ամենևին վոչ: *Վերցրեք մարդկանց արտադրողական ուժերի զարգացման մի վորոշ աստիճան, և դուք կունենաք փոխանակության և սպառման վորոշ ձև: Վերցրեք արտադրության զարգացման, փոխանակության և սպառման զարգացման մի վորոշ աստիճան, և դուք կստանաք վորոշ հասարակակարգ, ընտանիքի, դասերի կամ դասակարգերի վորոշ կազմակերպություն,—մի խոսքով՝ վորոշ քաղաքացիական հասարակություն: Վերցրեք վորոշ քաղաքացիական հասարակություն, և դուք կունենաք վորոշ քաղաքական հարաբերություններ, վորոնք քաղաքացիական հասարակության պաշտոնական արտահայտությունն են...*

Ավելորդ է սրա վրա ավելացնել, վոր մարդիկ ազատ չեն իրենց արտադրողական ուժերի ընտրության մեջ, վորոնք մարդկային պատմության ամբողջ հիմքն են,—վորովհետև ամեն մի արտադրողական ուժ ձեռք բերված ուժ է, նախորդ գործունեյության արդյունք: *Այդպիսով, արտադրողական ուժե-*

[1]) Маркс «К критике полит. экон.», стр. 10—11

[2]) *Նույն տեղը, եջ* 11.

[3]) *Նույն տեղը.*



րը՝ մարդկանց գործնական եներգիայի հետևանք են. *բայց այդ եներգիան ինքը* սահմանափակված է այն պայմաններով, վորոնց մեջ գտնվում են մարդիկ արդեն առաջ ձեռք բերած արտադրողական ուժերով, առաջ գոյություն ունեցող հասարակական ձևով, վոր այդ մարդիկ չեն ստեղծել, վոր նախորդ սերունդների ստեղծագործությունն է: *Շնորհիվ այն հասարակ փաստի, վոր յուրաքանչյուր հաջորդող սերունդ արդեն յե գտնում նախորդ սերունդների ձեռք բերած արտադրողական ուժերը, և այդ արտադրողական ուժերը նրա համար հում նյութ են ծառայում՝ նոր արտադրության համար, շնորհիվ այդ փաստի՝ մարդկային պատմության մեջ, առաջ է գալիս* կապ, *կազմվում է մարդկության պատմությունը, վորն այնքան ավելի մեծ չափով է մարդկության պատմություն դառնում,* վորքան ավելի յեն աճել (ont grandi) մարդկանց արտադրողական ուժերը, *հետևաբար, ուրեմն, նաև նրանց* հասարակական հարաբերությունները: *Այստեղից անհրաժեշտ յեզրակացություն. մարդկանց հասարակական պատմությունը, գիտակցեն նրանք այդ թե վոչ, միշտ միայն նրանց անհատական զարգացման պատմությունն է: Նրանց նյութական հարաբերությունները նրանց բոլոր հարաբերությունների հիմքն են կազմում: Այդ նյութական հարաբերություններն այն անհրաժեշտ ձևերն են միայն, վորոնց մեջ կենսագործվում է նրանց նյութական և անհատական գործունեյությունը:*

*Պրուդոնը շփոթում է իդեաներն ու իրերը ... մարդիկ յերբեք չեն հրաժարվում այն բանից, ինչ վոր ձեռք են բերել,* բայց այդ չի նշանակում, թե նրանք չեն հրաժարվի այն հասարակական ձևից, վորի մեջ նրանք վորոշ արտադրողական ուժեր են ձեռք բերել, ընդհակառակը: Ձեռք բերված հետևանքներից չզրկվելու համար, քաղաքակրթության արդյունքները չկորցնելու համար, մարդիկ ստիպված են բոլոր ժառանգած (traditionelles) հասարակական ձևերը փոխել այն մոմենտին, յերբ նրանց արտադրական (commerce) յեղանակն արդեն այլևս չի համապատասխանում ձեռք բերված արտադրողական ուժերին....

... Արտադրողական նոր ուժեր ձեռք բերելով՝ մարդիկ փոխում են իրենց արտադրության յեղանակը, իսկ արտադրության յեղանակի հետ՝ նրանք փոխում են բոլոր տնտեսական հարաբերությունները, վորոնք հենց միայն արտադրության տվյալ վորոշ յեղանակի անհրաժեշտ հարաբերություններն են: [1])

Պատմության մատերիալիստական ըմբռնումն հիմնվում է այն դրույթի վրա, վոր արտադրությունը, իսկ արտադրությունից հետո նաև արդյունքների փոխանակությունը, ամեն մի հասարակակարգի հիմքն են կազմում. *թե յուրաքանչյուր պատմական հասարակության մեջ արդյունքների բաշխումը, իսկ նրա հետ միասին նաև հասարակության դասակարգերի կամ դասերի բաժանվելը՝ նրանից է կախված, թե այդ հասարակությունն* ինչպե՞ս և ի՞նչ է արտադրում և ի՞նչ յեղանակով են փոխանակվում արտադրված արդյունք-

[1]) Маркс, Письма, стр. 7—9

ները: Այստեղից հետևում ե, վոր սոցիալական հեղաշրջումների արմատական պատճառները պետք ե վորոնել վո՛չ թե մարդկանց գլուխներում, վո՛չ թե հավիտենական ճշմարտության և արդարության՝ այդ մարդկանց կողմից աճող ըմբռնման մեջ, այլ արտադրության և փոխանակության յեղանակի փոփոխության մեջ, ուրիշ խոսքերով՝ վոչ թե փիլիսոփայության մեջ, այլ տվյալ շրջանի եկոնոմիկայի մեջ[1]):

Վորքան մենք ավելի յենք խորանում պատմության մեջ, այնքան ավելի մեծ չափով անհատը, հետևաբար ուրեմն նաև արտադրող անհատը, յերևան ե գալիս վոչ ինքնուրույն և մի ավելի լայն ամբողջության հետ կապված. սկզբում նա բնական ճանապարհով կապված ե ընտանիքի և բազմացած, տոհմ դարձած ընտանիքի հետ. հետագայում նա կապված ե համայնքի զանազան ձևերի հետ, վորոնք առաջ են գալիս տոհմերի ընդհարումներից և ձուլումներից:[2])

Ամեն մի յերեխա գիտե, վոր յուրաքանչյուր ազգ սովից կմեռնի, յեթե նա դադարեցներ աշխատանքը չասենք մի տարով, այլ թեկուզ միայն մի քանի շաբաթով: Ճիշտ նույնպես նաև բոլորին հայտնի յե, վոր կարիքների տարբեր մասսաներին համապատասխան արդյունքների մասսայի համար՝ պահանջվում են հասարակական միահամուռ աշխատանքի տարբեր և քանակապես վորոշ մասսաներ: Ինքն ըստ ինքյան ակներև ե, վոր հասարակական աշխատանքի այդ կերպով ըստ վորոշ պրոպորցիաների բաժանվելու անհրաժեշտությունը վոչ մի կերպով չի կարող վոչնչացվել հասարակական արտադրության վորոշ ձևի կողմից. փոխվել կարող ե միայն նրա արտահայտության ձևը: Բնության որենքներն առհասարակ չեն կարող վոչնչացվել: Կարող ե փոխվել, տարբեր պատմական պայմաններից կախված, այն ձևը միայն, վորի մեջ յերևան են գալիս այդ որենքները: Իսկ այդ ձևը, վորի մեջ յերևան ե գալիս աշխատանքի այդ պրոպորցիոնալ բաշխումը, այնպիսի հասարակական կառուցվածքի ժամանակ, յերբ հասարակական աշխատանքի կապը գոյություն ունի իբրև աշխատանքի անհատական արդյունքների մասնավոր փոխանակություն, հենց այդ ձևնել այդ արդյունքների փոխանակային արժեքն ե:[3])

Մարդն իր արտադրության ժամանակ կարող ե միայն այնպես գործել, ինչպես գործում ե բնությունն ինքը, այսինքն՝ կարող ե միայն փոփոխել զանազան նյութերի ձևը: Այդ քիչ ե: Ձևավորման այդ աշխատանքի մեջ՝ նա անընդհատ հենվում ե բնության ուժերի աջակցության վրա: Հետևաբար, աշխատանքը նրա արտադրած սպառողական արժեքների, նյութական հարստության միակ աղբյուրը չե: Աշխատանքը հարստության հայրն ե, ինչպես ասում ե Վիլյամ Պետտին, հողը— նրա մայրը:[4])

[1]) Энгельс, «Анти Дюринг», стр. 252.
[2]) Маркс, «К критике полит. экон.» стр. 10.
[3]) Письма Маркса к Кугельману, стр. 49—50, изд. 1928 г.
[4]) Капитал I, стр. 9, изд. 1923 г.



Աշխատանքի պրոցեսի պարզ մոմենտները հետևյալներն են. 1) նպատակահարմար գործունեյությունը կամ աշխատանքն ինքը. 2) առարկան, վորի վրա ներգործում ե աշխատանքը և 3) գործիքները, վորոնցով նա գործում ե:

Հողը (տնտեսական տեսակետից այս կարգին ե պատկանում նաև ջուրը), վոր սկզբնապես մարդուն սնունդ, պատրաստի պատրաստի միջոցներ ե մատակարարում, գոյություն ունի առանց վորևե աջակցության նրա կողմից՝ մարդկային աշխատանքի ընդհանրական առարկա լինելու համար: Այն բոլոր առարկաները, վոր աշխատանքին մնում ե խզել նրանց անմիջական կապակցությունից հողի հետ, բնության կողմից տված աշխատանքի առարկաներ են. որինակ՝ ձուկը, վոր վորսում են, բաժանում նրան իր կենսական տարերքից—ջրից, ծառը, վոր կտրում են նախնական անտառում, հանքը, վոր քանդում են յերակներից: Ընդհակառակն, յեթե աշխատանքի առարկան, այսպես ասած, պտված ե նախորդող աշխատանքի միջոցով, ապա մենք այն անվանում ենք հում նյութ: Ամեն մի հում նյութ աշխատանքի առարկա յե, բայց ամեն աշխատանքի առարկա հում նյութ չե: Աշխատանքի առարկան հում նյութ ե հանդիսանում այն դեպքում միայն, յերբ նա արդեն աշխատանքի միջոցով վորոշ փոփոխություն ե կրել:

Աշխատանքի միջոցը (գործիքը) առարկա յե կամ առարկաների կոմպլեքս (զուգորդում), վոր բանվորը զետեղում ե իրեն և աշխատանքի առարկայի միջև և վորոնք նրա համար ծառայում են իբրև նրա ներգործության հաղորդիչն այդ առարկայի վրա: Նա ոգտվում ե մարմինների մեխանիկական, ֆիզիկական, քիմիական հատկություններով նրա համար, վորպեսզի իր նպատակին համապատասխան կերպով հարկադրի նրանց՝ իբրև ուժեր ներգործելու ուրիշ մարմինների վրա: Այդ առարկան, վորին բանվորը տիրապետում ե անմիջականորեն,—մենք մի կողմ ենք թողնում ապրուստի պատրաստի միջոցների գրավումն, ինչպես պտուղների, ըստ վորում այստեղ միայն բանվորի մարմնի անդամներն են ծառայում իբրև աշխատանքի միջոցներ,—վո՛չ թե աշխատանքի առարկա յե, այլ աշխատանքի միջոց: Այդպես ուրեմն, բնությունից իրեն տված առարկան դառնում ե նրա գործունեյության որգան, մի որգան, վոր նա միացնում ե իր մարմնի որգաններին, այդպիսով, հակառակ աստվածաշնչի, յերկարացնելով վերջինիս բնական չափերը: Հանդիսանալով նրա անդրի սկզբնական ամբարանոցը՝ հողը հանդիսանում ե նաև նրա աշխատանքի միջոցների սկզբնական զինապահեստը: Որինակ՝ նա մատակարարում ե նրան քար, վորից մարդն ոգտվում ե, վորպեսզի նետի, շփում առաջ բերի, ճնշի, կտրի և այլն: Հողն ինքը աշխատանքի միջոց ե դառնում, բայց նրա գործունեյությունն (функционирование) յերկրագործության մեջ իբրև աշխատանքի միջոց իր հերթին յենթադրում ե աշխատանքի այլ միջոցների մի ամբողջ շարք և բանվորական ուժի համեմատաբար բարձր զարգացում: Ընդհանրա-

1008
34340

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

պես, յերբ աշխատանքի պրոցեսը թեկուզ մի վորոշ զարգացման ե հասել, նա արդեն կարիք ունի աշխատանքի մշակման յենթարկված միջոցների[1]):

Այսպես ուրեմն, աշխատանքի պրոցեսի մեջ մարդու գործունեյությունը աշխատանքի միջոցի օգնությամբ՝ նախամտածված փոփոխություն ե առաջ բերում աշխատանքի առարկայի մեջ: Արդյունքի մեջ պրոցեսը հարթվում ե: Աշխատանքի պրոցեսի արդյունքը սպառողական արժեքն ե, բնության մի իր, վոր հարմարեցրած ե մարդկային պահանջներին՝ ձևը փոփոխելու միջոցով, աշխատանքը միացավ աշխատանքի առարկային: Նա իրայնացավ (овеществилея), իսկ առարկան մշակման յենթարկվեց[2]):

Բացի այն առարկաներից, վորոնց միջոցով աշխատանքը ներգործում ե աշխատանքի առարկայի վրա և վորոնք այդ պատճառով այս կամ այն չափով ծառայում են իբրև նրա գործունեյության հաղորդիչները, ավելի լայն իմաստով առած աշխատանքի պրոցեսի միջոցներին են վերաբերում այն բոլոր նյութական պայմանները, վորոնք անհրաժեշտ են, վորպեսզի պրոցեսն ընդհանրապես կարողանա կատարվել: Նրանք ուղղակի կերպով նրա մեջ չեն մտնում, բայց առանց նրանց նա կամ բոլորովին անկարելի յե, կամ կարող ե կատարվել միայն անկատար կերպով: Աշխատանքի այդ տեսակ ընդհանրական միջոց ե հանդիսանում դարձյալ ինքը՝—հողը[3]):

Յեթե ամբողջ պրոցեսը դիտենք նրա հետևանքի, արդյունքի տեսակետից, ապա աշխատանքի միջոցներն ու աշխատանքի առարկան, թե՛ այս և թե՛ այն, արտադրության միջոցներ են հանդիսանում, իսկ աշխատանքն ինքը—արտադրողական աշխատանք:

Յերբ սպառողական մի արժեք իբրև արդյունք դուրս ե գալիս աշխատանքի պրոցեսից, նրա մեջ մտնում են իբրև արտադրության միջոցներ ուրիշ սպառողական արժեքներ, աշխատանքի նախորդ պրոցեսների արդյունքներ: Միևնույն սպառողական արժեքը, աշխատանքի մի պրոցեսի արդյունք հանդիսանալով, արտադրության միջոց ե ծառայում աշխատանքի մի այլ պրոցեսի համար: Այդ պատճառով էլ արդյունքները վո՛չ միայն աշխատանքի պրոցեսի հետևանքն են, այլ և միաժամանակ նրա պայմանը[4]):

Աշխատանքի պրոցեսը, ինչպես մենք նկարագրեցինք այն՝ իր պարզ աբստրակտ մոմենտներով, նպատակահարմար մի գործունեյություն ե՝ սպառողական արժեքներ ստեղծելու համար, բնության տվածի յուրացումն ե՝ մարդկային պահանջների համար, նյութերի փոխանակության ընդհանուր պայմանը՝ մարդու և բնության միջև, մարդկային կյանքի հավիտենական բնական պայմանը, դրա համար էլ նա անկախ ե այդ կյանքի վորևե ձևից, այլ ընդհակառակը, միակերպ ընդհանուր ե նրա բոլոր հասարակական ձևերին: Այդ պատճառով էլ՝ մեզ համար անհրաժեշտություն չկար դիտելու բանվո-

[1]) Капитал I, стр 149—150
[2]) Նույն տեղը, եջ 152
[3]) Նույն տեղը, եջ 151—152
[4]) **Капитал I, стр. 152.**



րին իր հարաբերության մեջ դեպի մյուս բանվորները: Մարդն ու իր աշխատանքը մի կողմում, բնությունն ու նրա նյութերը մյուս կողմում,—այդ բավական եր: [1])

Արտադրության մեջ մարդիկ ներգործում են վո՛չ միայն բնության, այլև միմյանց վրա: Նրանք արտադրում են միայն այնպես, վոր վորոշակի կերպով գործում են միասին և փոխադարձաբար փոխանակում են իրար հետ իրենց աշխատանքները: Վորպեսզի արտադրեն, նրանք պետք ե վորոշ կապերի և հարաբերությունների մեջ մտնեն միմյանց հետ, և միայն հասարակական այդ կապերի և հարաբերությունների շրջանակներում ե կատարվում նրանց ներգործությունը բնության վրա, կատարվում ե նրանց արտադրությունը:

Արտադրության միջոցների բնույթից կախված, իհարկե, տարբեր կլինեն այդ հասարակական հարաբերությունները, վորոնց մեջ են մտնում արտադրողները միմյանց նկատմամբ, տարբեր կլինեն այդ պայմանները, վորոնց ժամանակ նրանք փոխանակում են իրենց աշխատանքները և մասնակցում են ամբողջական արտադրության մեջ: Պատերազմի նոր գործիքի՝ հրացանի գյուտով անհրաժեշտորեն փոխվեց զորաբանակի ամբողջ ներքին կազմակերպությունը, կերպարանափոխվեցին այն հարաբերությունները, վորոնց ժամանակ առանձին անձերը զորաբանակ են կազմում և կարող են իբրև զորաբանակ գործել, փոխվեցին նաև զանազան բանակների փոխադարձ հարաբերությունները:

Հետևաբար, արտադրության նյութական միջոցների, արտադրողական ուժերի փոփոխության և զարգացման հետ միասին՝ փոխվում, կերպարանափոխ են լինում նաև այն հասարակական հարաբերությունները, վորոնց ժամանակ արտադրում են անհատները, այն ե՝ հասարակական-արտադրական հարաբերությունները: Արտադրական հարաբերություններն իրենց ամբողջականությամբ կազմում են այն, ինչ վոր կոչվում ե հասարակական հարաբերություններ, հասարակություն և այն էլ հասարակություն՝ պատմական զարգացման վորոշ աստիճանի վրա, հասարակություն իր առանձնահատուկ տարբերիչ գծերով: Անտիկ հասարակությունը, ֆեոդալական հասարակությունը, բուրժուական հասարակությունը արտադրական հարաբերությունների այնպիսի գումար են, վորոնցից ամեն մեկը միևնույն ժամանակ մի առանձին աստիճան ե նշում մարդկության պատմական զարգացման մեջ:

Կապիտալը նույնպես հասարակական-արտադրական հարաբերություն ե: Այդ՝ բուրժուական հասարակության բուրժուական արտադրական հարաբերություն ե: [2])

Կոոպերացիայից և աշխատանքի բաժանումից առաջացած արտադրողական ուժերը վոչինչ չեն նստում կապիտալի վրա: Նրանք հասարակական ա-

[1]) Капигал I, стр. 155
[2]) **Маркс, «Наемный труд и капитал», стр. 46—47**

խստանճէի բնական ուժերն են: Բնական ուժերը, ինչպես շոգին, ջուրը և այլն, վորոնք գործադրվում են արտադրության պրոցեսների վերաբերմամբ, նույնպես վոչինչ չարժեն: Բայց ինչպես վոր մարդուն շնչառության համար անհրաժեշտ են թոքերը, այնպես էլ կարիք է զգում «մարդկային ձեռք ստեղծելու», վորպեսզի կարողանա արտադրողական կերպով գործադրել այդ բնական ուժերը: Ջրի շարժիչ ուժն ոգտագործելու համար անհրաժեշտ է ջրանիվը, շոգու առաձգականությունն ոգտագործելու համար—շոգեմեքենան: Գիտության վերաբերմամբ էլ նույնն է, ինչ վոր բնական ուժերի: Յերբ արդեն գտնված են մագնիսական սլաքի շեղման որենքը էլեկտրական հոսանքի գործողության վոլորտում կամ յերկաթի մագնիսականացման որենքը յերկաթի շուրջն ընկած էլեկտրական հոսանքի գործողության միջոցով, նրանք էլ վոչ մի կոպեկ չարժեն: Բայց այդ որենքները հեռագրի և այլն մեջ ոգտագործելու համար պահանջվում է մի շատ թանգարժեք և բարդ ապարատ: Ինչպես մենք տեսանք, գործիքը դուրս չի մղվում մեքենայի կողմից: Մարդկային որգանիզմի գաճաճային գործիքից նա չափերով ու քանակությամբ աճում, դառնում է մարդու ստեղծած մեխանիզմի գործիք: Կապիտալն այժմ ստիպում է բանվորին աշխատելու վոչ թե ձեռքի գործիքով, այլ մեքենայով, վորն ինքն էլ գործում է իր գործիքներով[1]):

Ավերված յերկրում առաջին խնդիրն է—փրկել աշխատավորին: Ամբողջ մարդկության առաջին արտադրողական ուժը բանվորն է, աշխատավորը: Յեթե նա դիմանա, ապրի, մենք ամեն բան կփրկենք և կվերականգնենք[2]):

Մեքենան, վոր աշխատանքի պրոցեսի մեջ չի սպասարկում, անոգտակար է: Բացի դրանից նա յենթարկվում է նյութերի բնական փոխանակության կործանիչ ներգործությանը: Յերկաթը ժանգոտում է, փայտը փտում: Մանվածքը, վոր չի ոգտագործվելու գործվածքի կամ գործելու համար, փչացած բամբակ է: Կենդանի աշխատանքը պետք է ընդգրկի այդ իրերը, վերակենդանացնի նրանց մեռյալ վիճակից, փոխակերպի նրանց միայն հնարավոր սպառողական արժեքներից իսկական ու գործող սպառողական արժեքների: Ընդգրկված լինելով աշխատանքի բոցով, աշխատանքի, վորը ձուլում է նրանց իբրև իր մարմինը, և կոչված լինելով աշխատանքի պրոցեսի մեջ նրանց գաղափարին նշանակմանը համապատասխան ֆունկցիաներին, նրանք թեպետ և սպառվում են, բայց սպառվում են նպատակահարմար կերպով վորպես նոր սպառողական արժեքների, նոր մթերքների ստեղծման համար տարրեր, վորոնք ընդունակ են մտնելու անհատական սպառման վոլորտի մեջ վորպես գոյության միջոցներ կամ վորպես արտադրության միջոցներ աշխատանքի նոր պրոցեսի մեջ[3]):

Բոլորի կողմից ընդունված է, վոր գոյություն ունեցող հասարակակարգը ստեղծված է ներկայումս տիրապետող դասակարգի—բուրժուազիայի կողմից: Բուրժուազիային հատուկ արտադրության յեղանակը, վոր Մարքսի ժամանակվանից կապիտալիստական անունն է կրում, չհաշտվեց տեղական և դասային արտոնությունների հետ, ինչպես նաև անձնավորությունների միջև յեղած այն փոխադարձ կապերի հետ, վորոնք գոյություն ունեյին ֆեոդալական հասարակության մեջ. բուրժուազիան կործանեց ֆեոդալական կարգը և նրա ավերակների վրա կանգնեցրեց բուրժուական հասարակակարգը, ազատ մրցության թագավորությունը, տեղափոխությունների ազատությունը, ապրանքատերերի իրահավասարությունը, մի խոսքով բոլոր բուրժուական հրաշալիքները: Արտադրության կապիտալիստական յեղանակը կարող էր այժմ լիակատար ազատությամբ ծավալվել: Այն ժամանակվանից, յերբ շոգին ու մեքենաները հին մանուֆակտուրան խոշոր արդյունաբերության փոխարկեցին, բուրժուազիայի վարչության ներքո մշակված արտադրողական ուժերն սկսեցին զարգանալ մինչև այն չլսված արագությամբ և չտեսնված չափերով: Բայց ճիշտ այնպես, ինչպես վոր մանուֆակտուրան և նրա ազդեցության տակ կատարելագործված արհեստները մի ժամանակ ընդհարվեցին համքյարությունների ֆեոդալական կապանքների հետ, խոշոր արդյունաբերությունն էլ, իր զարգացման ավելի բարձր աստիճանում, ընդհարման մեջ է ընկնում այն նեղ սահմանների հետ, վորոնցով սահմանափակում է նրա արտադրության կապիտալիստական յեղանակը: Նոր արտադրողական ուժերն աճեցին, դուրս յելան իրենց շահագործման բուրժուական ձևերից: Արտադրողական ուժերի և արտադրության յեղանակի միջև յեղած այդ հակասությունը մարդկանց կողմից չի հնարված, ինչպես վոր նախնական մեղքի ու աստվածային արդարության միջև յեղած հակասությունը, այլ նա գոյություն ունի իրականության մեջ, ոբյեկտիվ կերպով, մեզնից դուրս, մինչև անգամ այն մարդկանց կամքից ու վարմունքից անկախ, վորոնց գործունեյությամբ նա ստեղծված է: Ժամանակակից սոցիալիզմը վոչ այլ ինչ է, յեթե վոչ այդ իրական հակասության մտավոր արտացոլումը, նրա իդեալական արտացոլումն ամենից առաջ այն դասակարգի գլուխներում, վոր անմիջական կերպով տառապում է նրանից, այն է՝ բանվոր դասակարգի գլխում:

Ի՞նչն է այդ հակասությունը:

Մինչև կապիտալիզմի յերևան գալը, այն է՝ մինչև միջին դարերը, ամենուրեք գոյություն ուներ մանր արտադրությունը, վոր հիմնված էր արտադրողների մասնավոր սեփականատիրության վրա արտադրության միջոցների վերաբերմամբ, գյուղում տիրապետում էր մանր, ազատ կամ ճորտ գյուղացիների հողագործությունը, քաղաքներում — արհեստը: Աշխատանքի գործիքները — հողը, հողագործական գործիքները, արհեստանոցներն ու արհեստավորների գործիքները — առանձին մարդկանց աշխատանքի գործիքներ եյին, միայն անհատական գործածության համար պատրաստված, և, հետևապես, անհրաժեշտաբար մնում եյին մանր, անկատար, սահմանափակ: Բայց հենց այդ պատճառով էլ նրանք պատկանում եյին իրենց՝ արտա-

[1]) Капитал I, стр. 365.

[2]) Ленин, собр. соч. т. XVI, стр. 214.

[3]) Маркс, Капитал I, стр. 154.

դրողներին: Կապիտալիզմի և նրա կրողի — բուրժուազիայի — պատմական դերը հենց արտադրության այդ ցրված մանր միջոցների կենտրոնացնելն է, նրանց ավելի լայն չափեր տալը, նրանց արտադրության ժամանակակից հզոր լծակներ դարձնելն է: Թե ինչպես էր կատարում նա այդ դերը, սկսած XV դարից, արտադրության յերեք տարբեր պատմական աստիճանների — պարզ կոոպերացիայի, մանուֆակտուրայի և խոշոր արդյունաբերության ժամանակ, այդ բանը մանրամասն նկարագրված է Մարքսի «Կապիտալի» IV բաժնում: Բայց հենց այնտեղ էլ ցույց է տրված, վոր արտադրության սահմանափակ միջոցները վերածելով, ժամանակակից հսկայական արտադրողական ուժերի, բուրժուազիան չեր կարող նրանց դրա հետ միասին մասնավորից չվերածել հասարակականի, վոր գործի յեն դցվում միայն բազմաթիվ մարդկանց ջանքերով: Ինքնամանիչ ճախարակի, ջուլհակի ձեռքի դազգյահի, դարբնի մուրճի փոխարեն հանդես յեկան մանող մեքենաները, ջուլհակային մեքենայական դազգյահը, շոգեմուրճը. փոքրիկ արհեստավորների փոխարեն — ահագին գործարանները, վորոնք պահանջում եյին հարյուրավոր և հազարավոր բանվորների միացյալ աշխատանքը: Արտադրության միջոցների պես՝ արտադրությունն ինքն էլ միավորների մի շարք իրարից անջատված ջանքերից՝ վերածվեց մի շարք հասարակական գործողությունների, իսկ արդյունքները առանձին անձի արտադրանքից դարձան ամբողջ հասարակության արտադրանքը: Մանածը, գործվածքները, մետաղի ապրանքները, վորոնք այժմ դուրս են գալիս ֆաբրիկաներից և գործարաններից, իրենցից ներկայացնում են բազմաթիվ բանվորների աշխատանքի արդյունքը, բանվորների, վորոնք հերթով նրանց վրա ջանք են գործ դրել, նախ քան նրանց վերջնական ձև տալը: Առանձին վերցրած այն բանվորներից վոչ մեկը չի կարող նրանց մասին ասել—«այդ յես եմ արել. այդ իմ արդյունքն է»:

Սակայն այն հասարակության մեջ, վորի արտադրությունը հիմնված է բնականորեն աճած, առանց վորևե պլանի հետզհետե զարգացած աշխատանքի բաժանման վրա, արդյունքներն անխուսափելի կերպով ապրանքների ձև են ընդունում, վորոնց փոխանակությունը, գնումն ու վաճառումը, հնարավորություն է տալիս առանձին արտադրողներին՝ բավարարելու իրենց բազմատեսակ պահանջները: Այդպես էլ եր միջին դարում: Որինակ, գյուղացին վաճառում եր արհեստավորին յերկրագործական արդյունքներ և գնում եր նրանից արհեստավորական արտադրանքներ: Իրարից անջատված ապրանքարտադրողների հենց այդ հասարակության մեջ սեպի նման տեղավորվեց արտադրության նոր յեղանակը: Բնականաբար աճած, առանց վորևե պլանի կազմված աշխատանքի բաժանման մեջ ամբողջ հասարակության անդամների միջև՝ առաջ յեկավ աշխատանքի բաժանումը գործարաններում, վոր կազմակերպված եր նախամտածված պլանով. անհատական արտադրության կողքին յերևան յեկավ հասարակական արտադրությունը:

Թե՛ մեկի և թե՛ մյուսի արդյունքները վաճառվում եյին միևնույն շու-



կաներում, հետևաբար ուրեմն, զոնե մոտավորապես հավասար գներով: Բայց կանխամտածված պլանով ստեղծված կազմակերպությունը ավելի հզոր եր, քան թե բնականորեն աճած աշխատանքի բաժանումը. հասարակական գործարանային աշխատանքի արդյունքները՝ մանր, իրարից անջատված արտադրողների արդյունքներից ավելի եժան եյին նստում: Անհատական արտադրությունը կրում եր մի պարտություն մյուսի հետևից, հասարակական արտադրությունը հեղափոխականացրեց, վերջապես, արտադրության ամբողջ հին յեղանակը: Սակայն նրա հեղափոխական բնույթն այնքան քիչ եր գիտակցվում, վոր նա մտցվում եր հատկապես ապրանքային արտադրությունն ուժեղացնելու և խրախուսելու համար: Նա առաջ յեկավ ապրանքային արտադրության հայտնի, նրանից առաջ արդեն գոյություն ունեցող շարժիչների անմիջական կապակցությամբ, ինչպիսիք եյին առևտրական կապիտալ, արհեստները և վարձու աշխատանքը: Հանդես գալով միայն իբրև ապրանքային արտադրության նոր ձև, նա լիակատար ուժի մեջ եր թողնում այդ արտադրության հատուկ յուրացման ձևերը:

Ապրանքների միջնադարյան արտադրության ժամանակ չեր կարող մինչև անգամ հարց ծագել այն մասին, թե ում պետք է պատկանեն աշխատանքի արդյունքները: Այդ արդյունքները մշակում եր յուրաքանչյուր առանձին արտադրող սեփական նյութից, վոր հաճախ հենց ինքն եր արտադրել, սեփական գործիքներով և սեփական ձեռքերով կամ ընտանիքի անդամների ձեռքերով: Այդպիսի արտադրողը կարիք չուներ յուրացնելու իր արդյունքները, նրանք իրեն եյին պատկանում՝ համաձայն գործի բուն եյության: Հետևաբար, արդյունքների սեփականության իրավունքը հիմնված եր անձնական աշխատանքի վրա: Մինչև անգամ այնտեղ, վորտեղ արտադրության մեջ տեղի ուներ կողմնակի ոգնություն, այդ կողմնակի ոգնությունն ըստ մեծի մասին միայն յերկրորդական դեր եր կատարում և միայն աշխատավարձով չեր վարձատրվում, համքյարային աշակերտն ու վարպետացուն աշխատում եյին վոչ այնքան վարձի կամ իրեն պահելու համար, վորքան նրա համար, վոր իրենք սովորեն և նախապատրաստվեն ինքնուրույն վարպետի կոչման համար: Բայց ահա սկսվեց արտադրության միջոցների համակենտրոնացումը մեծ արհեստանոցներում և մանուֆակտուրաներում, նրանց իրականապես հասարակական արտադրության միջոցների վերածվելը: Յեվ այդ հասարակական միջոցների ու արդյունքների հետ շարունակում եյին այնպես վարվել, կարծես թե նրանք առաջվա նման մնալիս լինեյին վորպես առանձին անհատների արտադրության միջոցներ և աշխատանքի արդյունքներ: Յեթե մինչև այժմ արտադրողը, վոր միևնույն ժամանակ նաև աշխատանքի գործիքների սեփականատերն եր, յուրացնում եր իր արդյունքը, վորի մեջ ուրիշի աշխատանքը միայն իբրև բացառություն եր մասնակցում, ապա այժմ աշխատանքի գործիքների սեփականատերը շարունակում եր յուրացնել արդյունքները, թեև այդ արդյունքներն արտադրվում եյին արդեն վոչ թե նրա, այլ բացառապես

ուրիշների *աշխատանքով: Այդպիսով, հասարակական աշխատանքի արդյունքները սկսեցին յուրացվել վոչ թե նրանց կողմից, ով աշխատել եր հասարակական գործիքների ոգնությամբ և նրա արդյունքների իսկական արտադրողներ եյին,* այլ կապիտալիստների *կողմից: Արտադրության միջոցներն ու արտադրությունն ինքն ըստ իրենց եյության հասարակական դարձան. բայց նրանք յենթարկված եյին մասնավոր անհատական արտադրության վրա հիմնված յուրացման ձևին, վորն հատուկ եր այն ժամանակին, յերբ յուրաքանչյուրը իր սեփական արդյունքի տերն եր և ինքն եր այն շուկա տանում:* Արտադրության նոր ձևը յենթարկվեց յուրացման հին ձևին, չնայելով, վոր առաջինը միանգամայն խորտակեց վերջինի հիմքերը:

Այդ հակասությունը, վոր արտադրության նոր յեղանակին հաղորդեց նրա կապիտալիստական բնույթը, իր մեջ բովանդակում եր բոլոր ժամանակակից հակասությունների սաղմերը: *Յեվ վորքան ավելի կատարյալ եր դառնում արտադրության նոր յեղանակի տիրապետությունը աշխատանքի բոլոր ամենից ավելի նշանակալից ճյուղերում, տնտեսական տեսակետից բոլոր ամենից ավելի ազդեցիկ յերկրներում, վորքան ավելի հետ եր մղում նա անհատական արտադրության աննշան մնացորդները,* այնքան ավելի սուր կերպով պետք է հանդես գար հասարակական արտադրության անհամատեղելիությունը կապիտալիստական յուրացման հետ[1]):

## ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՆ

Հին մատերիալիզմի անհետևողականության, անավարտության, միակողմանիության գիտակցությունը Մարքսին այն համոզմանը բերեց, վոր անհրաժեշտ է «գիտությունը հասարակության մասին՝ համաձայնեցնել մատերիալիստական հիմունքի հետ և այն վերակառուցել համապատասխան այդ հիմունքին»: *Յեթե մատերիալիզմն առհասարակ գիտակցությունը բացատրում է կեցության միջոցով, և վոչ թե հակառակը, ապա մարդկության հասարակական կյանքի վերաբերմամբ գործադրվելիս՝ մատերիալիզմը պահանջում եր հասարակական գիտակցությունը բացատրել հասարակական կեցությամբ: «Տեխնոլոգիան, ասում է Մարքսը,* («Капитал» I)—*բացահայտում է մարդու ակտիվ հարաբերությունը դեպի բնությունը, նրա կյանքի արտադրության անմիջական պրոցեսը, ինչպես և դրա հետ միասին նրա կյանքի հասարակական պայմանների ու նրանցից բղխող հոգևոր պատկերացումների պրոցեսը «մատերիալիզմի հիմնական դրությունների ամբողջական ձևակերպումը, տարածելով մարդկային հասարակության և նրա պատմության վրա, տվել է Մարքսը իր* «К критике пол. экон.»— *աշխատության մեջ* [2]):

[1]) Энгельс, «Анти Дюринг», изд. 1928 г. стр 252—256.

[2]) Ленин, собр. соч. т. XII, ч. 2, стр. 324



Իրենց կյանքի հասարակական արտադրության մեջ մարդիկ վորոշ, անհրաժեշտ, իրենց կամքից անկախ հարաբերությունների մեջ են մտնում,—արտադրական հարաբերությունների, վորոնք համապատասխանում են նրանց նյութական-արտադրողական ուժերի զարգացման վորոշ աստիճանին: Այդ արտադրական հարաբերությունների ամբողջ գումարը կազմում է հասարակության տնտեսական կառուցվածքը, այն իրական հիմքը, վորի վրա բարձրանում է իրավաբանական և քաղաքական վերնաշենքը և վորին համապատասխանում են հասարակական գիտակցության վորոշ ձևերը: Նյութական կյանքի արտադրության յեղանակը պայմանավորում է կյանքի սոցիալական, քաղաքական և հոգևոր պրոցեսները ընդհանրապես: Վո՛չ թե մարդկանց գիտակցությունն է վորոշում նրանց կեցությունը, այլ, ընդհակառակը, նրանց հասարակական կեցությունն է վորոշում նրանց գիտակցությունը:

Իրենց զարգացման վորոշ աստիճանում հասարակության նյութական արտադրողական ուժերը հակասության մեջ են ընկնում գոյություն ունեցող արտադրական հարաբերությունների հետ, կամ գործածելով իրավաբանական արտահայտություն՝ գույքային հարաբերությունների հետ, վորոնց ներսում նրանք մինչև այժմ գործում եյին: Արտադրողական ուժերի զարգացման ձևերից՝ այդ հարաբերությունները դառնում են նրանց կապանքները: Այն ժամանակ վրա յե հասնում սոցիալական հեղափոխության դարաշրջանը: Տնտեսական հիմքի փոփոխության հետ՝ ավելի կամ պակաս արագությամբ կերպարանափոխվում է նաև նրա վրա կառուցված հսկայական վերնաշենքը: Այդպիսի հեղափոխությունները քննության առնելիս միշտ պետք է նկատի ունենալ տարբերությունն արտադրության տնտեսական պայմանների նյութական հեղաշրջման, վոր կարելի յե վորոշել բնագիտական ճշտությամբ, և իրավաբանական, քաղաքական, կրոնական, գեղարվեստական կամ փիլիսոփայական, մի խոսքով՝ իդեոլոգիական ձևերի միջև, վորոնցում մարդիկ իրենց գիտակցության մեջ ըմբռնում են այդ կոնֆլիկտը և հանուն վորի կռվում են: Ինչպես վոր չի կարելի առանձին մարդու մասին դատել նրանով, թե նա ինչ է մտածում իր մասին, ճիշտ նույնպես և այդպիսի հեղափոխական դարաշրջանի մասին չի կարելի դատել ըստ նրա գիտակցության. ավելի շուտ՝ այդ գիտակցությունը պետք է բացատրել նյութական կյանքի հակասություններով, հասարակական արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև գոյություն ունեցող կոնֆլիկտով: Հասարակական վո՛չ մի ֆորմացիա չի վոչնչանում ավելի շուտ, քան թե զարգանում են այն բոլոր արտադրողական ուժերը, վորոնց համար նա բավականաչափ ազատ ասպարեզ է տալիս, և նոր, ավելի բարձր արտադրական հարաբերություններն յել յերբեք ավելի շուտ չեն լույս աշխարհ գալիս, քան թե հին հասարակության ծոցում հասունանում են նրանց գոյության նյութական պայմանները: Այդ պատճառով, մարդկությունն իրեն առաջ միշտ այնպիսի խնդիրներ է դնում միայն,

վրա նա կարող է լուծել, վորովհետև հարցը մոտիկից քննարկելիս՝ միշտ դուրս է գալիս, վոր խնդիրը միայն այն ժամանակ է առաջ մղվում, յերբ արդեն գոյություն ունեն այն նյութական պայմանները, վորոնք անհրաժեշտ են նրա լուծման համար, կամ յերբ նրանք, գոնե, առաջացման պրոցեսում են գտնվում: Ընդհանուր գծերով, իբրև հասարակության տնտեսական ձևավորման առաջադիմական դարաշրջաններ, կարելի յե նշել—արտադրության ասիական, անտիկ, ֆեոդալական և ժամանակակից բուրժուական յեղանակները: Բուրժուական արտադրական հարաբերությունները արտադրության հասարակական պրոցեսի վերջին հակամարտ ձևն են կազմում. հակամարտ՝ վոչ անհատական հակամարտության իմաստով, այլ այնպիսի, վոր անում է անհատների հասարակական կյանքի պայմաններից: Բայց բուրժուական հասարակության ծոցում զարգացող արտադրողական ուժերը միևնույն ժամանակ ստեղծում են այն նյութական պայմանները, վորոնք անհրաժեշտ են այդ հակամարտության լուծման համար: Դրա համար էլ, այդ հասարակական ֆորմացիայով ավարտվում է մարդկային հասարակության նախապատմությունը (Vorgeschichte)[1].

*Կյանքի արտադրությունն ինչպես սեփական՝ աշխատանքի միջոցով, նույնպես նաև ուրիշի կյանքի արտադրությունը՝ ծննդյան միջոցով—հանդիսանում է իբրև յերկակի հարաբերություն. մի կողմից՝ իբրև բնական, իսկ մյուս կողմից՝ իբրև հասարակական հարաբերություն. հասարակական այն իմաստով, վոր դրա տակ հասկացվում է մի քանի անհատների գործակցությունը, անկախ այն հանգամանքից, թե ի՛նչ պայմաններում, ի՛նչ կերպով և ի՛նչ նպատակի համար: Այստեղից հետևում է, վոր արտադրության վորոշ յեղանակը կամ արդյունաբերական աստիճանը միշտ կապված է գործակցության վորոշ յեղանակի կամ վորոշ հասարակական աստիճանի հետ* (Մարքսի ձեռքով՝ և միատեղ գործունեյության այդ յեղանակն ինքը մի վորոշ «արտադրողական ուժ» է), *վոր մարդկանց մատչելի արտադրողական ուժերի մասսան պայմանավորում է հասարակական դրությունը և վոր, հետևաբար,* «մարդկության պատմությունը» պետք է միշտ ուսումնասիրվի և մշակվի արդյունաբերության և փոխանակության պատմության կապակցությամբ[2]:

Զարգացման վորոշ մակարդակի վրա՝ նա (*արտադրության յեղանակը. կազմողներ*) ինքն է ստեղծում իր վոչնչացման նյութական միջոցները: Այդ մոմենտից հասարակության խորքերում սկսում են շարժվել ուժեր և կրքեր, վորոնք իրենց կաշկանդված են զգում արտադրության այդ յեղանակով: Վերջինը պետք է վոչնչացվի և նա վոչնչացվում է: *Նրա վոչնչացումը, արտադրության անհատական և բաժան-բաժան յեղած միջոցների փոխակերպումը հասարակական-համակենտրոնացված միջոցների, հետևաբար՝ շատերի գաճաճյին սեփականության վերածումը սակավաթիվների հսկայական սեփա-*

[1]) «К критике» изд. 1923 г. стр. 38—39

[2]) Маркс—Энгельс, «Архив» I, стр. 220.



*կանության, ժողովրդական լայն զանգվածներից հողը, գոյության միջոցները, աշխատանքի գործիքներն էքսպրոպրիացիայի յենթարկելը,—ժողովրդական զանգվածի այդ սարսափելի և դժվար* էքսպրոպրիացիան կազմում է կապիտալի պատմության նախաբանը:

*... Յերբ փոխակերպման այդ պրոցեսը բավականաչափ քայքայել հին հասարակությունը խորությամբ և լայնությամբ, յերբ բանվորներն արդեն պրոլետարների յեն փոխարկված, իսկ նրանց աշխատանքի պայմանները՝ կապիտալի, յերբ* արտադրության կապիտալիստական յեղանակը կանգնում է իր սեփական վոտների վրա, *այն ժամանակ աշխատանքի հանրայնացումը հողի և արտադրության մյուս միջոցների հետագա փոխարկումը հասարակականորեն շահագործվող միջոցների, հետևաբար և արտադրության ընդհանուր միջոցներն ու դրա հետ կապված մասնավոր սեփականատերերի հետագա էքսպրոպրիացիան* նոր ձև են ստանում:

Այժմ էքսպրոպրիացիայի յե յենթակա վո՛չ թե ինքնուրույնաբար տնտեսավարող բանվորը, այլ բազմաթիվ բանվորների շահագործող կապիտալիստը:

Այդ էքսպրոպրիացիան իրականացվում է կապիտալիստական արտադրության իրեն իմանենտ օրենքների ներգործությամբ, կապիտալների կենտրոնացումով: Մի կապիտալիստն սպանում է շատերին: Այդ կենտրոնացման կամ շատ կապիտալիստներին էքսպրոպրիացիայի հետ ձեռք-ձեռքի տված՝ քչերին ավելի և ավելի լայն մասշտաբով զարգանում են աշխատանքի պրոցեսի կոոպերատիվ ձևը, գիտության գիտակցական տեխնիկական գործադրությունը, հողի պլանաչափ շահագործումը, աշխատանքի այնպիսի միջոցների մշակումը, վորոնք միայն համատեղ գործադրություն են թույլ տալիս, արտադրության բոլոր միջոցների էկոնոմիզացիան՝ նրանց իբրև համակցված, հասարակական աշխատանքի արտադրության միջոցներ գործադրելով, բոլոր ժողովուրդների ներգրավումը համաշխարհային շուկայի ցանցը և, հետևաբար, կապիտալիստական ռեժիմի միջազգային բնույթը: Կապիտալի մագնատների թվի անընդհատ պակասելուն զուգընթաց, վորոնք բռնագրավում և մենաշնորհ են դարձնում հեղաշրջման այդ պրոցեսի բոլոր օգուտները, անում է աղքատության, ճնշման, ստրկացման, այլասերման և շահագործման մասսան, բայց դրա հետ միասին անում է նաև բանվոր դասակարգի վրդովմունքը, բանվոր դասակարգի, վոր անընդհատ մեծանում է, վարժվում, միավորվում և կազմակերպվում հենց իրեն՝ արտադրության կապիտալիստական պրոցեսի մեխանիզմի միջոցով: Կապիտալի մենաշնորհը կապանք է դառնում արտադրության այն յեղանակի համար, վոր նրա հետ միասին և նրա շնորհիվ ծաղկման է հասել: Արտադրության միջոցների կենտրոնացումն ու աշխատանքի հանրայնացումն այնպիսի մակարդակի յեն հասնում, վորի ժամանակ նրանք անհամատեղելի յեն դառնում իրենց կապիտալիստական կեղևի հետ: Վերջինս պայթում է: Խփում է կապիտալիստական մասնավոր սեփականատիրության ժամը: Էքսպրոպրիատորներին էքսպրոպրիացիայի յեն յենթարկում:

Յուրացման կապիտալիստական յեղանակը, վոր բղխում է արտադրության կապիտալիստական յեղանակից, ուստի նաև կապիտալիստական մասնավոր սեփականատիրությունը՝ սեփական աշխատանքի վրա հիմնված անհատական մասնավոր սեփականատիրության առաջին բացասումն է: Սակայն կապիտալիստական արտադրությունը բնության պրոցեսի անխուսափելիությամբ ծնում է ինքն իր բացասումը: Դա—բացասման բացասումն է: Նա վերականգնում է վո՛չ թե բանվորի մասնավոր սեփականությունը, այլ անհատական սեփականությունը՝ կապիտալիստական դարաշրջանի նվաճումների հիման վրա, այն է՝ կոոպերացիայի և հողն ու արտադրության մյուս միջոցները, վորոնք արտադրված են հենց բուն աշխատանքի միջոցով, միասին տիրապետելու հիման վրա[1]):

*Բանող մեքենաների անդամատված սիստեմում, վորոնք իրենց շարժումն ստանում են հաղորդիչ մեխանիզմի միջոցով միայն մեկ կենտրոնական ավտոմատից, մեքենական արտադրությունն* ամենազարգացած ձևն է ձեռք բերում: *Առանձին մեքենայի փոխարեն այստեղ հանդես է գալիս մեխանիկական հրեշը, վորի մարմինն ամբողջ ֆաբրիկային շենքեր է բռնում, և վորի դիվական ուժը, սկզբում համարյա քողարկված նրա հսկայական անդամների հանդիսավոր-չափակցված շարժումով, դուրս է ժայթքում նրա անհամար բանող օրգանների տենդային խոլական պարի մեջ, այդ բառի իսկական իմաստով*[2]):

*Նախ՝* արտադրողական ուժերն անհատներից միանգամայն անկախ են և անջատված, իբրև մի տեսակ ուրույն աշխարհ անհատների կողքին. դրա պատճառն այն է, վոր անհատները, վորոնց ուժն են հանդիսանում նրանք, գոյություն ունեն բաժան-բաժան յեղած կերպով և հակադրության մեջ են միմյանց նկատմամբ, մինչդեռ այդ ուժերն, իրենց կողմից, իսկապես ուժ են հանդիսանում միայն այդ անհատների հետ ունեցած հարաբերությունների և կապակցության մեջ: Այսպիսով, մի կողմում կա արտադրողական ուժերի վորոշ հավաքականություն (совокупность), վորոնք կարծես թե իրային տեսք են ընդունել և հենց իրենց՝ անհատների համար հանդիսանում են արդեն վո՛չ թե այդ անհատների ուժերը, այլ մասնավոր սեփականության ուժերը և, հետևաբար, անհատների ուժեր են միայն այն չափով, վորչափով վերջիններս մասնավոր սեփականատերեր են: *Նախորդ դարաշրջաններից* վո՛չ մեկում *արտադրողական ուժերն այդ* ոտար կերպարանքը չեն ընդունել *անհատների հարաբերության ժամանակ, վորովհետև այդ հարաբերությունները իրենք դեռ* սահմանափակ էյին: *Մյուս կողմում այդ արտադրողական ուժերի դեմ կանգնած է անհատների բազմությունը,* վորոնցից բաժանվել-կտրվել են այդ ուժերը *և վորոնք այդ պատճառով զրկված են ամեն տեսակ իրական կենսական բովանդակությունից, դարձել են վերացական անհատներ, բայց*

[1]) Капитал I, стр. 755—756
[2]) *Նույն տեղը,* եջ 359·



*վորոնք հենց այդ պատճառով էլ ի վիճակի չեն լինում* իբրև անհատներ *միանալու միմյանց հետ* [1]):

Սոցիալական ուժը, այսինքն՝ բազմապատկված արտադրողական ուժը, վոր առաջ է գալիս զանազան անհատների աշխատանքի բաժանումով պայմանավորված գործակցությունից, լինելով վո՛չ թե կամավոր, այլ տարերային գործակցության արդյունք, այդ անհատների աչքերին պատկերանում է վո՛չ թե իբրև իրենց սեփական միավորված ուժը, այլ իբրև մի ինչ-վոր ոտար, իրենցից դուրս գտնվող ուժ, վորի ծագման և նպատակների մասին նրանք վոչինչ չգիտեն, վորը նրանք, հետևաբար չեն կարող ղեկավարել, վորն, ընդհակառակը, պետք է անցնի իր հատուկ փուլերի շարքն ու զարգացման աստիճանները, վորոնք վո՛չ միայն կախված չեն մարդկանց կամքից ու վարվեցողությունից, այլ, ընդհակառակը, ղեկավարում են այդ կամքն ու այդ վարվեցողությունը:

(*Մարքսի ձեռքով*—այդ «ոտարացումը», *խոսելով փիլիսոփաների համար հասկանալի լեզվով*, կարող է, իհարկե, վոչնչացվել միայն յերկու գործնական նախադրյալների առկայության դեպքում: *Վորպեսզի* նա «անտանելի» ուժ դառնա, այսինքն՝ մի ուժ, վորի դեմ հեղափոխություն են կատարում, դրա համար անհրաժեշտ է, վորպեսզի նա մարդկության մասսան փոխարկե միանգամայն «ընչազուրկ» մարդկանց, միևնույն ժամանակ դրան իբրև հակադրություն ստեղծելով հարստության և կրթության մի ամբողջ աշխարհ· *այդ յերկու բաներն էլ յենթադրում են արտադրողական ուժերի ահագին աճում, նրանց զարգացման բարձր աստիճան: Մյուս կողմից, արտադրողական ուժերի այդ զարգացումը (վորի հետ միասին տրվում է արդեն մարդու* համաշխարհային-պատմական, *այլ վոչ թե տեղական գոյությունը) բացարձակապես անհրաժեշտ* գործնական նախադրյալ է *նաև այն պատճառով, վոր առանց նրան միայն ընդհանրացվում է կարիքը, իսկ կարիքի գոյությամբ՝ պետք է նորից կռիվ սկսվի անհրաժեշտ առարկաների համար և, ուրեմն, պետք է հարություն առնի ամբողջ հին անհեթեթությունը· և հետո՝ այն պատճառով, վոր արտադրողական ուժերի այդ ունիվերսալ զարգացման հետ՝ հաստատվում են մարդկանց* ունիվերսալ *հարաբերությունները միմյանց հետ: Դրա համար էլ, մի կողմից՝ «ընչազուրկ» մասսայի յերևույթը յերևան է գալիս միաժամանակ բոլոր ժողովուրդների մեջ (ընդհանրական մրցում), վոր այդ ժողովուրդներից ամեն մեկին կախման վիճակի մեջ է դնում մյուս ժողովուրդների մեջ կատարված հեղաշրջումներից, և վերջապես, լոկալ անհատների տեղ դնում է* համաշխարհային-պատմական, *էմպիրիկ և ունիվերսալ անհատներ: Առանց դրան, նախ՝ կոմունիզմը կարող էր գոյություն ունենալ միայն իբրև ինչ-վոր տեղական բան, յերկրորդ՝ հարաբերությունների ուժերը չէյին կարողանա զարգանալ իբրև ունիվերսալ, ուրեմն և անտանելի ուժեր· նրանք կմնային հարմարվող-սնահավատական—«հանգամանքների»*

[1]) Маркс—Энгельс, «Архив» I, стр. 249.

*աստիճանի վրա. և չորրորդ՝ հարաբերությունների յուրաքանչյուր ընդլայնում կվոչնչացներ տեղական կոմունիզմը:* Կոմունիզմն էմպիրիկ կերպով հնարավոր է միայն իբրև տիրապետող ժողովուրդների միաժամանակյա, միանգամից կատարվող գործ, վորը յենթադրում է արտադրողական ուժերի և սրանց հետ կապված համաշխարհային հարաբերությունների ունիվերսալ զարգացում: *Ի միջի այլոց, ընչազուրկ բանվորների մասսայի առկայությունը, կամ այնպիսի բանվորների առկայությունը, վորոնք մասսայաբար կտրված են կապիտալից կամ գոյության վորևէ սահմանափակ աղբյուրից, պրոլետարիատի առկայությունը, վոր մրցման պատճառով զրկվում է աշխատանքից, իբրև ապրուստի ապահով աղբյուրից, համաշխարհային շուկայի գոյությունն է յենթադրում: Հետևաբար,* պրոլետարիատը կարող է գոյություն ունենալ միայն համաշխարհային պատմական մասշտաբով, ինչպես վոր կոմունիզմն էլ կարող է ակտիվ լինել միայն իբրև «համաշխարհային-պատմական» յերևույթ, յենթադրելով անհատների համաշխարհային-պատմական գոյությունը, այսինքն՝ այնպիսի անհատների գոյությունը, վորոնք անմիջականորեն կապված են համաշխարհային պատմության հետ[1]):

*Արտադրության կապիտալիստական յեղանակն ավարտում է հողագործության և արդյունաբերության այն սկզբնական ընտանեկան միության կապերի խզումը, վոր միմյանց հետ զուգորդում էր այդ յերկուսի մատղահաս-անզարգացած ձևերը: Բայց նա միևնույն ժամանակ ստեղծում է* նյութական նախադրյալներ նոր, ավելի բարձրագույն սինթեզի—հողագործության *և արդյունաբերության միության համար,* նրանց հակամարտորեն զարգացած ձևերի հիման վրա: *Կապիտալիստական արտադրությունը, անընդհատ ավելացնելով քաղաքային բնակչության գերակշռությունը, վոր նա կենտրոնացնում է խոշոր կենտրոններում, դրանով կուտակում է մի կողմից՝* հասարակության պատմական շարժման ուժը, *իսկ մյուս կողմից՝ խանգարում է նյութերի փոխանակությունը մարդու և հողի միջև, այսինքն՝ խանգարում է վերադարձնելու հողին նրա բաղկացուցիչ մասերը, վոր օգտագործել է մարդը սննդի մթերքների և հագուստի ձևով, ուրիշ խոսքով՝ խախտում է հողի մշտական պտղաբերության հավիտենական բնական պայմանը: Դրա շնորհիվ նա միաժամանակ խորտակում է քաղաքային բանվորների ֆիզիկական առողջությունը և գյուղական բանվորների մտավոր կյանքը*[2]):

Մեքենական արտադրությունն սկզբնապես առաջ յեկավ իրեն անհամապատասխան նյութական հիմքի վրա: Զարգացման վորոշ աստիճանի ժամանակ նա պետք է հեղաշրջում առաջացնի այդ հիմքի մեջ, վոր նա գտել է պատրաստի և ավելի յե մշակել, պահպանելով նրա հին ձևը. և նա պետք է

[1]) Маркс—Энгельс, «Архив» I, стр. 223—224.

[2]) Капитал I, стр. 485.



իրեն համար նոր հիմք ստեղծի, վոր համապատասխան լինի արտադրության նրա սեփական յեղանակին[1]):

Արտադրության յեղանակի հեղաշրջումը, կատարվելով արդյունաբերության մի վոլորտում, պայմանավորում է նույնպիսի հեղաշրջում մյուս վոլորտներում: *Այդ բանը վերաբերում է ամենից առաջ արդյունաբերության այնպիսի ճյուղերին, վորոնք հյուսվում են միմյանց հետ իբրև մի ընդհանուր պրոցեսի փուլերը, թեև աշխատանքի հասարակական բաժանումն այն աստիճան մեկուսացրել է նրանց, վոր նրանցից ամեն մեկն ինքնուրույն ապրանք է արտադրում: Այդպես, որինակ, թելը մեքենայով մանելն առաջ բերեց մեքենական ջուլհակության անհրաժեշտությունը, իսկ յերկուսը միասին անհրաժեշտ դարձրին մեխանիկական-քիմիական հեղափոխությունն սպիտակացման, չիթ դաճելու և ներկարարական արտադրությունների մեջ: Նույն կերպով էլ, մյուս կողմից, հեղափոխությունը բամբակաման արդյունաբերության մեջ առաջ բերեց մեքենայի գյուտը՝* Gin-*ի բամբակաթելը սերմերից զատելու համար, վորի շնորհիվ էլ միայն հնարավոր դարձավ բամբակի արտադրությունն այժմյան անհրաժեշտ խոշոր մասշտաբով: Իսկ արդյունաբերության և հողագործության արտադրության յեղանակի մեջ առաջացած հեղափոխությունն անհրաժեշտ դարձրեց հեղափոխությունը հասարակական-արտադրական պրոցեսի ընդհանուր պայմանների մեջ, այն է՝ հաղորդակցության միջոցների և տրանսպորտի մեջ*[2]):

*Ժամանակակից արդյունաբերությունը վորոշ արտադրական պրոցեսի գոյություն ունեցող ձևը յերբեք չի դիտում և քննարկում իբրև մի վերջնական բան: Դրա համար էլ նրա* տեխնիկական հիմքը հեղափոխական է, մինչդեռ արտադրության բոլոր նախկին յեղանակների մեջ հիմքն ըստ էության պահպանողական էր: *Մեքենաների, քիմիական պրոցեսների և այլ մեթոդների միջոցով նա շարունակ հեղաշրջումներ է առաջացնում արտադրության տեխնիկական հիմքի մեջ, իսկ դրա հետ միասին թե՛ բանվորների ֆունկցիաների և թե՛ աշխատանքի պրոցեսի հասարակական զուգորդումների մեջ: Այսպիսով, նա նույնքան մշտական կերպով հեղափոխում է աշխատանքի բաժանումը հասարակության ներսում և անընդհատ նետում է կապիտալի մասսաներն ու բանվորների մասսաներն արտադրության մի ճյուղից՝ մյուսը:*

*Ուստի* խոշոր արդյունաբերության բնությունը պայմանավորում է աշխատանքի փոփոխությունը, ֆունկցիաների շարժումը, բանվորի ամենակողմանի շարժունությունը: *Մյուս կողմից՝ իր կապիտալիստական ձևի մեջ նա* վերարտադրում է *աշխատանքի նախկին բաժանումը նրա քարացած մասնագիտություններով: Մենք տեսանք, թե ինչպես այդ բացարձակ հակասությունը վոչնչացնում է ամեն հանգիստ, կայունություն, բանվորի կենսա-*

[1]) Капитал I, стр. 360.

[2]) *Նույն տեղը,* էջ 361.

*կան դրության ապահովվածություն, շարունակ ստանում է աշխատանքի միջոցների հետ միասին նրա ձեռքից խլել նաև ապրուստի միջոցները և նրա մասնակի ֆունկցիայի հետ միասին հենց իրեն էլ ավելորդ դարձնել. Թե ինչպես* այդ հակասությունը տանում է դեպի արդյունաբերական պահեստի բանակի առաջացման հրեշավոր փաստը, *վորը պետք է աղքատության մեջ պահի, վորպեսզի միշտ պատրաստ լինի կապիտալիստական պահանջին ծառայելու համար. Թե ինչպես նա իր վայրագ արտահայտությունն է գտնում բանվոր դասակարգի անընդհատ հեկատոմբների, բանվորական ուժերի անչափ վատնումի և այն ավերածությունների մեջ, վորոնք կապված են հասարակական անարխիայի հետ, վորն ամեն մի տնտեսական առաջադիմություն հասարակական աղետի յե փոխարկում: Այդ— բացասական կողմն է* [1]):

Բայց զարգացման վորոշ աստիճանում խոշոր արդյունաբերությունը նաև տեխնիկական հակասության մեջ է ընկնում իր արհեստավորական և մանուֆակտուրային հիմքի հետ: *Շարժիչ մեքենաների, հաղորդիչ մեխանիզմի և բանող մեքենաների չափի մեծացումը, բարդության և բազմազանության ավելանալը, բանող մեքենայի բաղկացուցիչ մասերի ավելի խիստ կանոնավորությունը, վոր հետզհետե ավելի և ավելի յե աճում, յերբ վերջինս կտրվում է իր արհեստավորական նմուշից, վորն սկզբնապես ամբողջությամբ վորոշում եր նրա կառուցվածքը, և ազատ ձև է ընդունում, վոր վորոշվում է բացառապես նրա մեխանիկական խնդրով, ավտոմատիկ սիստեմի զարգացումը և ավելի ու ավելի անխուսափելի դարձած ու աճող գործածությունն այնպիսի նյութերի, վորոնք դժվարությամբ են մշակման յենթարկվում, ինչպես՝ փայտի փոխարեն յերկաթ,—ահա այն բնականաբար առաջացած խնդիրները, վորոնց լուծումն ամենուրեք բախվում եր* այն շրջանակներին, վորոնք պայմանավորվում են աշխատանքների կախումով բանվորի անձից և վորը մինչև անգամ մանուֆակտուրայի համակցված բանվորական անձնակազմը կարող եր միայն մի փոքր ընդլայնել, բայց վոչ ըստ եյության վոչնչացնել: *Մանուֆակտուրան չեր կարող ստեղծել այնպիսի մեքենաներ, ինչպես օրինակ, արդի տպագրական մեքենան, արդի ջուլհակային շոգեմեքենան և ժամանակակից գզիչ մեքենան* [2]):

Աշխատանքի հասարակական արտադրողական ուժը զարգանում է անհատույց կերպով, հենց վոր բանվորը դրվում է վորոշ պայմանների մեջ, իսկ կապիտալը նրան հենց այդ պայմանների մեջ էլ դնում է: Վորովհետև աշխատանքի հասարակական արտադրողական ուժը վոչինչ չի նստում կապիտալին, վորովհետև, մյուս կողմից, այն չի զարգացվում բանվորի կողմից, քանի նրա աշխատանքը կապիտալին չի պատկանում, դրա համար էլ նա թվում է արտադրողական մի ուժ, վոր պատկանում է կապիտալին հենց իր բնությամբ, կապիտալին իմանենտ՝ արտադրողական մի ուժ [3]):

1) Капитал I, стр. 467—468.

2) *Նույն տեղը, եջ* 360—361.

3) *Նույն տեղը, եջ* 310—311.



Արտադրության պրոցեսի նյութական պայմանների և հասարակական կոմբինացիայի հետ միասին՝ նա (որենսդրությունը. *կազմողներ*) տանում է դեպի կապիտալիստական ձևի հակասության և հակամարտության հասունացումը, հետևաբար ուրեմն, միևնույն ժամանակ նաև նորի կազմության և հին հասարակության հեղաշրջման համար տարբեր մոմենտներ է բերում[1]):

Կոմունիզմը մեզ համար վիճակ չէ, վոր պետք է հաստատվի, իդեալ չէ, վորի հետ պետք է համակերպվի գրականությունը: Մենք կոմունիզմ ենք անվանում այն ռեալ շարժումը, վորը վոչնչացնում է ներկա վիճակը: Այդ շարժման պայմանները բղխում են այժմ իրականության մեջ առկա նախադրյալներից[2]):

*Ի հակադրություն Հեգելին և մյուս հեգելյաններին, Մարքսն ու Ենգելսը մատերիալիստ եյին: Մատերիալիստորեն դիտելով աշխարհն ու մարդկությունը, նրանք տեսան, վոր ինչպես բնության բոլոր յերևույթների հիմքում նյութական պատճառներ են ընկած, այնպես էլ մարդկային հասարակության զարգացումը պայմանավորվում է նյութական, արտադրողական ուժերի զարգացումով: Արտադրողական ուժերի զարգացումից են կախված այն հարաբերությունները, վորոնց մեջ են մտնում մարդիկ միմյանց հետ՝ մարդկային պահանջները բավարարելու համար անհրաժեշտ առարկաներն արտադրելու ժամանակ:*

Եվ այդ հարաբերությունների մեջ է—հասարակական կյանքի բոլոր յերևույթների, մարդկային ձգտումների, գաղափարների և որենքների բացատրությունը:

*Արտադրողական ուժերի զարգացումը հասարակական հարաբերություններ է ստեղծում, վորոնք հենվում են մասնավոր սեփականատիրության վրա, բայց մենք այժմ տեսնում ենք, թե ինչպես արտադրողական ուժերի միևնույն զարգացումը խլում է սեփականությունը մեծամասնությունից և այն կենտրոնացնում է չնչին փոքրամասնության ձեռքում: Նա վոչնչացնում է սեփականությունը, արդի հասարակակարգի հիմքը. Նա ինքն էլ նույն նպատակին է ձգտում, վոր դրել են իրենց առաջ սոցիալիստները*[3]):

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Տնտեսական դարաշրջանները վոչ թե նրանով են տարբերվում միմյանցից, թե ինչ է արտադրվում, այլ նրանով, թե ի՛նչպես է արտադրվում, աշխատանքի ի՛նչպիսի միջոցներով: Աշխատանքի միջոցները վո՛չ միայն մարդկային բանվորական ուժի զարգացման չափանիշ են, այլև ցուցանիշ են այն

1) Капитал I, стр. 483

2) Маркс—Энгельс, «Архив» стр. 226

3) Ленин, собр. соч. т. XX доп. ч. I, стр. 5.

հասարակական հարաբերությունների, վորոնց ժամանակ կատարվում է աշխատանքը [1]:

*Այն պայմանները, վորոնց ժամանակ մարդիկ արտադրում են և փոխանակում իրենց արդյունքները,* միատեսակ չեն *զանազան յերկիրների համար և յուրաքանչյուր յերկրում փոխվում են սերունդից սերունդ: Ուստի քաղաքատնտեսությունը չի կարող նույնանման լինել բոլոր յերկիրների և բոլոր պատմական դարաշրջանների համար: Հսկայական անդունդ է ընկած այն յերկիրների միջև, վորտեղ դեռևս գործածության մեջ են աղեղն ու նետերը, քարե դանակները, և վայրենի բնակչությունը միայն հազվադեպ, բացառիկ դեպքերում է փոխանակային հարաբերությունների մեջ մտնում, և այնպիսի յերկիրների միջև, վորտեղ գործ են ածվում հազար ձիու ուժանոց շոգեմեքենաներ, ինչպես նաև մեխանիկական ջուլհակային մեքենաներ, յերկաթուղիներ և Անգլիական բանկի նման վաճառականական հիմնարկություններ: Հրո յերկրի բնակիչները չեն հասել մասսայական արտադրությանն ու առևտրին համաշխարհային շուկայում, ճիշտ այնպես, ինչպես նաև մուրհակային սպեկուլյացիային ու բորսայական սնանկություններին: Այդ պատճառով էլ՝ ով ուզում է* միևնույն օրենքներով միացնել Հրո յերկրի էկոնոմիկան և ժամանակակից Անգլիայի էկոնոմիկան, նա, անշուշտ, լույս աշխարհ վոչինչ չի հանի, բացի ամենաանհամ ընդհանուր դարձվածքներից:

*Վորոշ պատմական հասարակության արտադրության ու փոխանակության տեսակի և յեղանակի, ինչպես և նրա գոյության պատմական պայմաններից կախված՝ սահմանվում է արդյունքների բաշխման թե՛ տեսակը, թե՛ յեղանակը: Տոհմական կամ գյուղական համայնքում հողի ընդհանուր սեփականատիրությամբ, վորով կամ վորի խիստ նկատելի մնացորդներով պատմության ասպարեզն են յելնում բոլոր կուլտուրական ժողովուրդները, ինքն ըստ ինքյան հասկանալի յե արդյունքների բավական հավասարաչափ բաշխումը, իսկ վորտեղ առաջ է գալիս նրանց բաշխման ավելի կամ պակաս նշանակալից անհավասարություն համայնքի անդամների միջև, այդ արդեն ծառայում է իբրև հատկանիշ, վոր համայնքն սկսում է քայքայվել: Ինչպես խոշոր, այնպես և մանր հողատիրությունը թույլ են տալիս (նայելով այն պատմական պայմաններին, վորոնցից նրանք զարգացել են) բաշխման խիստ տարբեր ձևեր: Բայց ակներև է, վոր խոշոր հողատիրությունը պայմանավորում է միշտ այլ բաշխում, քան թե մանրը. վոր խոշորը յենթադրում է կամ* ստեղծում դասակարգերի հակադրություն—*ստրկատերերի և ստրուկների, կալվածատերերի և կոռապարտ գյուղացիների, կապիտալիստների և վարձու բանվորների, մինչդեռ մանր հողատիրության ժամանակ—ամենևին անհրաժեշտ չեն դասակարգային տարբերությունները հողագործական արտադրության մեջ զբաղված անհատների միջև և, ընդհակառակը, հենց իրենց գոյության փաստով մատնանշում են պարցելլային տնտեսության սկսվող ան-*

[1]) Капитал I, стр. 151.



*կումը: Մետաղյա փողերի մուծումն ու տարածումն այնպիսի մի յերկրում, վորտեղ մինչև այժմ բացառապես կամ առավելապես բնական տնտեսություն եր վարվում, միշտ կապված է նախկին բաշխման ավելի կամ պակաս արագ կերպարանափոխության հետ, և հատկապես այն իմաստով, վոր այն շարունակ ավելի և ավելի արտահայտվում է անհավասարությամբ առանձին անհատների միջև և, հետևաբար, ծնում և ուժեղացնում է հակադրությունը հարուստների և աղքատների միջև: Վորքան վոր միջին դարերի տեղական համքարային արհեստավորական արտադրությունն անկարելի յեր դարձնում խոշոր կապիտալիստների և ցմահ վարձու բանվորների գոյությունը, նույնքան էլ այդ դասակարգերի յերևան գալն անխուսափելի դարձավ արդի խոշոր արդյունաբերության ժամանակ, վարկի արդի զարգացման ժամանակ և ազատ մրցման վրա հիմնված փոխանակության համապատասխան ձևերի ժամանակ:*

Այսպիսով, արդյունքների բաշխման մեջ տարբերություններ յերևան գալու հետ միաժամանակ, առաջ են գալիս նաև դասակարգային տարբերությունները: *Հասարակությունը բաժանվում է արտոնյալների և ճնշվողների, շահագործողների և շահագործվողների, տիրապետող և յենթարկվող դասակարգերի. և ճիշտ նույնպես էլ պետությունը, վոր զարգացել է միացեղ համայնքների բնականաբար աճած խմբերից, սկզբում միայն նրանց ընդհանուր շահերին բավարարելու (որինակ՝ Արևելքում—վոռոգումը) և արտաքին թշնամիներից պաշտպանելու համար, այսուհետև հատուկ կոչում է ստանում.* ուժով պաշտպանել շահագործող դասակարգերի գոյության և տիրապետության պայմանները շահագործվող դասակարգերի դեմ:

*Սակայն*, բաշխումն արտադրության և փոխանակության հասարակ պասիվ հետևանքը չէ. նա, իր հերթին, վերստին ազդում է արտադրության և փոխանակության վրա: Արտադրության յուրաքանչյուր նոր յեղանակ կամ փոխանակության նոր ձև սկզբում նեղվում է վո՛չ միայն հին ձևերի և նրանց համապատասխանող քաղաքական հիմնարկությունների կողմից, այլ նաև բաշխման հին յեղանակի կողմից: *Նրանք ստիպված են լինում միայն յերկար կռվի միջոցով իրենց համար համապատասխան բաշխում նվաճել: Բայց վորքան ավելի շարժուն է արտադրության և փոխանակության տվյալ յեղանակը, վորքան նա ավելի յե ընդունակ կերպարանափոխության և զարգացման, այնքան ավելի շուտ բաշխումն այնպիսի աստիճանի յե հասնում, վորի ժամանակ նա գերանցում է արտադրության և փոխանակության իրեն առաջացնող յեղանակից և* հակասության մեջ է մտնում նրա հետ: *Հին, բնականորեն աճած համայնքները, վորոնց մասին արդեն խոսք յեղավ, կարող են ամբողջ հազարամյակներ գոյություն ունենալ, ինչպես վոր այդ բանն այժմ էլ նկատվում է հնդուսների և սլավոնների մեջ, մինչև այն ժամանակ, յերբ հարաբերություններն արտաքին աշխարհի հետ այդ համայնքների ներսում գույքային տարբերություններ կառաջացնեն, վորոնց հետևանքը լինում է նրանց քայքայումը: Ընդհակառակը, ժամանակակից կապիտալիստական արտադրությունը, վոր*

Հազիվ յերեք հարյուր տարի յե հաշվում և վճռական տիրապետություն է ձեռք բերել միայն խոշոր արդյունաբերության հանդես գալու օրերից, այսինքն՝ ընդամենը հարյուր տարի մեզանից առաջ, կարողացավ այդ կարճ ժամկետի ընթացքում այնպիսի հակադրություններ ծնել բաշխման մեջ (մի կողմից—կապիտալների համակենտրոնացումը սակավաթիվ ձեռքերում, իսկ մյուս կողմից—չքավոր մասսաների համակենտրոնացումը մեծ քաղաքներում), վորոնցից նա անհրաժեշտաբար պետք է կործանվի։

Տվյալ հասարակության բաշխման և նրա գոյության նյութական պայմանների միջև յեղած կապն այնքան արմատացած է իրերի բնության մեջ, վոր այն համապատասխան կերպով արտացոլվում է ժողովրդական պսիխիկայի մեջ[1])։

Հին-հնդկական համայնքում աշխատանքն հասարակականորեն բաժանված է, թեև նրա արդյունքներն ապրանք չեն դառնում։ Կամ վերցնենք մի ավելի մոտիկ օրինակ. ամեն մի գործարանում աշխատանքը սիստեմատիկ կերպով բաժանված է, բայց այդ բաժանումը չի կենսագործվում այնպիսի յեղանակով, ինչպես վոր բանվորները փոխանակում են իրենց անհատական աշխատանքի արդյունքները։ Միայն ինքնուրույն, միմյանցից կախում չունեցող անհատական աշխատանքների արդյունքներն են, վոր միմյանց հանդեպ են յելնում իբրև ապրանքներ[2])։

Բնա-տնտեսության ժամանակ հասարակությունը կազմված եր միատեսակ տնտեսական միավորների մասսայից (նահապետական գյուղացիական ընտանիքներից, պրիմիտիվ գյուղական համայնքից, ֆեոդալական կալվածքներից) և յուրաքանչյուր այդպիսի միավոր կատարում եր տնտեսական աշխատանքների բոլոր տեսակները, սկսած հումքի զանազան տեսակների հայթայթումից և վերջացրած այն բանով, վոր սրանք գործածության համար վերջնականապես պատրաստ լինեն[3])։

Արտադրության հին յեղանակների ժամանակ տնտեսական միավորները կարող եյին դարերով գոյություն ունենալ առանց փոփոխվելու, վո՛չ բնույթով, վո՛չ մեծությամբ, առանց դուրս գալու կալվածատիրական վոտչինայի, գյուղական շենի կամ գյուղական արհեստավորների ու մանր արդյունաբերողների (այսպես կոչված տնայնագործների) համար յեղած շրջակա շուկայի սահմաններից։ Ընդհակառակը, կապիտալիստական ձեռնարկությունը անխուսափելի կերպով գերաճում է համայնքի, տեղական շուկայի, մարզի, ապա նաև պետության սահմաններից։ Յեվ վորովհետև պետությունների առանձնացումն ու փակվածությունը խորտակված է արդեն ապրանքային շրջանառության շնորհիվ, դրա համար արդյունաբերության յուրաքանչյուր

1) Энгельс, «Анти Дюринг», стр. 135—137.
2) Капитал I, стр. 8
3) Ленин, собр. соч. т. III, стр. 13.



կապիտալիստական ճյուղի բնական ձգտումը նրան տանում է դեպի արտաքին շուկա վորոնելու անհրաժեշտությունը[1])։

Հանրածանոթ իրողություն է, վոր բնա-տնտեսությունը, այսինքն՝ արտադրությունը վո՛չ թե շուկայի, այլ տնտեսավարող ընտանիքի սեփական սպառման համար, հատկապես հողագործության մեջ համեմատաբար շատ մեծ դեր է խաղում և առանձնապես դանդաղ է իր տեղը զիջում առևտրական հողագործությանը։ Յեվ, յեթե ընդունենք քաղաքատնտեսության հաստատված թեորեական դրույթները վոչ շաբլոն, վոչ մեխանիկական կերպով, այլ իմաստավորված, ապա օրինակ, մանր արտադրության դուրս մղումը խոշորի կողմից կարելի յե վերագրել միայն առևտրական հողագործությանը։ Հազիվ թե մեկն սկսի թեո՛րեապես ժխտել այդ դրույթը։ Մինչդեռ տնտեսագետներն ու վիճակագրագետները վերին աստիճանի հազվադեպ են գիտակցական կերպով ուշադրություն դարձնում նրա վրա, վորպեսզի առանձնապես զատեն, հետազոտեն և, հնարավորության չափով, հաշվի առնեն հատկապես այն հատկանիշները, վորոնք վկայում են այն մասին, թե հողագործությունը բնականից առևտրականի յե փոխարկվել։ Տնտեսությունների խմբավորումն ըստ արդյունքների փողային արժեքի մեծության, արդյունքների, վորոնք չեն ծառայում իբրև կեր անասուններին, մի մեծ քայլ է այդ թեորեական պահանջին ընդառաջելու համար[2])։

Իսկ մանր գյուղացու բնա-տնտեսությունը ժամանակակից կապիտալիստական տնտեսությունների միջավայրում, կարող է միայն վողորմելի գոյություն քարշ տալ և տանջալից մահով մեռնել, բայց վոչ յերբեք արդեն ծաղկել։ Բուրժուական և ռեվիզիոնիստական քաղաքատնտեսության ամբողջ «փոկուսն» այն է, վոր չեն հետազոտվում առանձնապես հենց այնպիսի տիպի մանր տնտեսությունների պայմանները, վորոնք «միջակից» ցած են կանգնած (դանիական «միջակ» գյուղացին ունի 1,6 ձի և 3,8 կով) և վորոնք տնտեսատերերի ամբողջ թվի ահագին մեծամասնությունն են կազմում։ Վո՛չ միայն առանձնապես չի հետազոտվում տնտեսության այդ տիպը, այլ մթագնվում է այն՝ հենվելով բացառապես «միջին» տվյալների, «արտադրության» և «վաճառահանման» ընդհանուր աճումի վրա, և լռությամբ տալով այն, վոր շահավետ կերպով վաճառքի հանել կարող են միայն ունևոր տնտեսությունները, վորոնք սակավաթիվ փոքրամասնություն են կազմում[3])։

Կոռային աշխատանքը չափվում է ժամանակով, ճիշտ այնպես, ինչպես և ապրանքներ արտադրող աշխատանքը։ Բայց յուրաքանչյուր ճորտ գիտե, վոր իր տիրոջ ծառայության մեջ նա ծախսում է իր սեփական, անձնական բանվորական ուժի միայն վորոշ քանակություն։ Տասանորդը, վոր

1) Ленин, собр. соч. т. III, стр. 39.
2) Նույնը, т. IX, стр. 228.
3) Նույն տեղը, եջ 176—177.

*նա պետք է վճարի տերերին, անհամեմատ ավելի վորոշակի մի բան է, քան այն որհնությունը, վոր նա ստանում է տերերից: Այդպիսով, ինչպես էլ վոր մենք գնահատելու լինենք այն բնորոշիչ դիմակները, վորոնցով միմյանց հանդեպ են դուրս գալիս միջնադարյան մարդիկ, անկասկած է համենայն դեպս, վոր անձերի հասարակական հարաբերություններն իրենց աշխատանքի մեջ այստեղ յերևան են գալիս հատկապես իբրև իրենց սեփական անձնական հարաբերությունները*, և վոչ թե հագնում են իրերի, աշխատանքի արդյունքների հասարակական հարաբերությունների զգեստը[1]):

Ապրանքային տնտեսությունը զարգանում է աշխատանքի հասարակական բաժանման զարգացմանը զուգընթաց: Իսկ այդ աշխատանքի բաժանման էյությունը հենց այն է, վոր մեկը մյուսի հետևից արդյունաբերության ճյուղը և հում արդյունքի մշակման տեսակը, կտրվում են հողագործությունից և ինքնուրույն են դառնում, կազմելով հետևապես արդյունաբերական բնակչություն: Այդ պատճառով էլ դատել ապրանքային տնտեսության և կապիտալիզմի մասին—և ուշադրության չառնել արդյունաբերական բնակչության աճման վերաբերյալ որենքը,—նշանակում է, վոչ մի պատկերացում չունենալ հասարակական տնտեսության տվյալ կարգի հիմնական հատկությունների մասին[2]):

*Ցեթե աշխատանքի հասարակական բաժանման անարխիան և մանուֆակտուրային բաժանման բռնակալությունը փոխադարձաբար պայմանավորում են միմյանց արտադրության կապիտալիստական յեղանակ ունեցող հասարակության մեջ, ապա հասարակության ավելի վաղ ձևերը, վորոնց մեջ արդյունաբերական ճյուղերի բաժանումը զարգանում է բնական կերպով, ապա բյուրեղանում է և, վերջապես, ամրապնդվում է որենքով՝ իրենցից ներկայացնում են (ձևերը) մի կողմից, հասարակական աշխատանքի պլանաչափ և հեղինակավոր կազմակերպություն, մյուս կողմից՝ բոլորովին բացառում են աշխատանքի բաժանումը արհեստանոցի ներսում կամ զարգացնում են այն գաճաճային մասշտաբով, կամ թե չէ՝ միայն հատուկենտ և պատահական կերպով:*

*Այսպես, որինակ, նախնադարյան մանր հնդկական համայնքները, վորոնք մասամբ մինչև այժմ էլ պահպանվել են, հիմնված են հողի համայնական տիրապետության վրա, հողագործությունն անմիջականորեն արհեստի հետ միացնելու և աշխատանքի բաժանման հաստատություն գտած նորմաների վրա, վորոնք յուրաքանչյուր նոր համայնքի հիմնադրման ժամանակ արտադրության պատրաստի պլան և սխեմա յեն տալիս: Յուրաքանչյուր այդպիսի համայնք մի ինքնաբավ արտադրական ամբողջություն է կազմում, վորի արտադրության ասպարեզն ընդգրկում է 100-ից մինչև մի քանի հազար ակր: Արդյունքի գլխավոր մասսան արտադրվում է համայնքի իրեն անմիջական գործածության համար, և վոչ թե իբրև ապրանք, և այդ պատճառով էլ արտադրությունն ինքը կախված չէ աշխատանքի այն բաժանումից ամբողջ հնդկական հասարակության մեջ, վորը կենսագործվում է ապրանքների փոխանակության միջոցով: Միայն արդյունքի զգալի ավելցուկն է ապրանքի փոխարկվում, և այն էլ իր մասով միայն պետության ձեռքում, վորի ոգտին է մուծվում անհիշատակ ժամանակներից արդյունքի վորոշ քանակություն իբրև բնական ռենտա: Հնդկաստանի տարբեր մասերում հանդիպում են համայնքների զանազան ձևեր: Ամենապարզ տիպի համայնքներում հողի մշակությունը կատարվում է միատեղ, ըստ վորում արդյունքը բաժանվում է առանձին անդամների միջև, մինչդեռ մանելով, գործելով և այլն յուրաքանչյուր ընտանիք պարապում է ինքնուրույն կերպով իբրև կողմնակի տնային զբաղմունք: Միատեսակ աշխատանքով զբաղված այդ մասսայի կողքին մենք գտնում ենք—համայնքի «գլխավորին», վոր մի անձի մեջ միացնում է դատավորին, վոստիկանական պետին և հարկահավաքին. հաշվապահին, վոր պահում է հողագործական գործառնությունների հաշիվը, գնահատում ու գրանցում է այն ամենը, ինչ վոր վերաբերում է դրան. յերրորդ պաշտոնյային, վոր հետապնդում է հանցագործներին և ոտարերկրյա ճանապարհորդներին ուղեկցում գյուղից գյուղ. սահմանապահին, վոր համայնքի սահմանները պաշտպանում է հարևան համայնքների վոտնձգություններից. ջրամբարների վերակացուին, վորը բաշխում է դաշտերը վոռոգելու համար անհրաժեշտ ջուրը համայնական ջրամբարներից. բրամինին, վորը կատարում է կրոնական պաշտամունքի ֆունկցիաները. դպրոցական ուսուցչին, վոր համայնքի յերեխաներին սովորեցնում է կարդալ և գրել ավազի վրա. որացուցային բրամինին, վորն իբրև աստղաբաշխ մատնանշում է ցանքի, հնձի ժամանակը և առհասարակ զանազան յերկրագործական աշխատանքների համար նպաստավոր և աննպաստ ժամանակը. դարբնին և ատաղձագործին, վորոնք պատրաստում և նորոգում են բոլոր յերկրագործական գործիքները. բրուտին, վոր ամանեղեն է պատրաստում ամբողջ գյուղի համար. սափրիչին. լվացարարին, վոր լվանում է շորերը. արծաթագործ վարպետին և, առանձին դեպքերում, բանաստեղծին, վորը մի քանի համայնքներում կատարում է նաև արծաթագործի պաշտոնը, այլ համայնքներում—դպրոցական ուսուցչի պաշտոնը: Այդ մի դյուժին անձերը պահվում են համայնքի հաշվին: Բնակչության աճմանը զուգընթաց՝ նորաբնակիչներն անմշակ հողի վրա նոր համայնքներ են հիմնում հների որինակով: Համայնքի մեխանիզմն յերևան է բերում աշխատանքի պլանաչափ բաժանում, սակայն նրա մանուֆակտուրային բաժանումն անիմաստ է, վորովհետև շուկան դարբնի, ատաղձագործի համար և այլն անփոփոխ է մնում, և լավագույն դեպքում, նայելով գյուղերի մեծությանը, պատահում են մեկի փոխարեն յերկու-յերեք դարբին, բրուտ և այլն:* Համայնական աշխատանքի բաժանումը կարգավորող որենքն այստեղ գործում է բնության որեն-

[1]) Капитал I, стр. 45.

[2]) Ленин, собр. соч. т. II, стр. 248

քի անսասան իշխանությամբ. *յուրաքանչյուր առանձին արհեստավոր, որինակ՝ դարբինը և այլն, իր պրոֆեսիային վերաբերող բոլոր գործառնությունները կատարում է խստորեն սահմանված ավանդական յեղանակով, և, սակայն, միանգամայն* ինքնուրույն կերպով, *արհեստանոցի սահմաններում իր վրա չճանաչելով* և վո՛չ մի իշխանություն: *Այդ ինքնաբավ համայնքների արտադրական մեխանիզմի պարզությունը, համայնքներ, վորոնք միշտ վերարտադրում են իրենց միևնույն ձևով, և կործանվելով՝ առաջ են գալիս կրկին միևնույն տեղում, հենց միևնույն անունով,* բացատրում է ասիական հասարակությունների անփոփոխության գաղտնիքը, վոր այնպիսի սուր հակադրության մեջ է գտնվում ասիական պետությունների մշտական կործանման և նոր կազմության, ինչպես և նրանց դինաստիաների արագ փոփոխության հետ: *Այդ հասարակության հիմնական տնտեսական տարրերի կառուցվածքը չի վնասվում այն փոթորիկներից, վորոնք տեղի յեն ունենում քաղաքականության ամպամած վոլորտում* [1]):

*Վորովհետև արտադրությունն ու ապրանքների շրջանառությունն արտադրության կապիտալիստական յեղանակի ընդհանուր նախադրյալն են հանդիսանում, ապա* աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը պահանջում է արդեն հասունության վորոշ աստիճանի հասած աշխատանքի բաժանում հասարակության ներսում: *Ընդհակառակը, աշխատանքի մանուֆակտուրային բաժանումն իր հերթին ազդեցություն է գործում աշխատանքի հասարակական բաժանման վրա, ավելի ևս զարգացնելով ու անդամատելով այն*[2]):

*Մոռանում են, վոր շուկայի համար կարևոր է վո՛չ ամենևին արտադրողի բարորությունը, այլ նրա մոտ դրամական միջոցների առկայությունը. Նահապետական գյուղացու բարորության անկումը, վոր առաջ առավելապես բնական տնտեսություն եր վարում, միանգամայն համատեղելի յե նրա ձեռքում դրամական միջոցների քանակության ավելանալու հետ, վորովհետև վորքան ավելի յե քայքայվում այդպիսի գյուղացին, այնքան ավելի նա ստիպված է դիմելու իր բանվորական ուժը վաճառելուն, իր ապրուստի միջոցների այնքան ավելի մեծ մասը (թեկուզ և ավելի աղքատիկ) նա պետք է ձեռք բերե շուկայում*[3]):

Մասնավոր սեփականությունը, իբրև հակադրություն հասարակական, կոլեկտիվ սեփականության, միայն այնտեղ գոյություն ունի, վորտեղ աշխատանքի միջոցներն ու աշխատանքի արտաքին պայմանները մասնավոր անձանց են պատկանում: *Յեվ կախված այն բանից, թե արդյո՞ք այդ մասնավոր անձերը բանվորներ են, թե՞ բանվորներ չեն, փոխվում է նաև հենց մասնավոր սեփականության բնույթը: Մասնավոր սեփականության ասպարիզում*

[1]) Капитал I, стр. 335—337.

[2]) *Նույն տեղը, եջ* 331.

[3]) Ленин, собр. соч. т. III, стр. 17.



*պատահող անթիվ յերանգները լոկ արտացոլում են այն միջանկյալ դրությունները, վորոնք ընկած են այդ յերկու ծայրահեղ դեպքերի միջև:*

Բանվորի մասնավոր սեփականությունն արտադրության միջոցների վերաբերմամբ՝ մանր արտադրության հիմքն է. իսկ մանր արտադրությունը հասարակական արտադրության և բանվորի իրեն ազատ անհատականության զարգացման անհրաժեշտ պայմանն է[1]):

Կապիտալիստական հասարակության տնտեսական կառուցվածքը (տընտեսակարգ) աճել է ֆեոդալական հասարակության տնտեսական կառուցվածքից: Վերջինի քայքայումն ազատեց առաջինի տարրերը:

*Անմիջական արտադրողը, բանվորը, միայն այն ժամանակ է* հնարավորություն ստանում տնօրինելու իր անձի վերաբերմամբ, *յերբ դադարում է նրա* ամրացումը հողին *և նրա ճորտական կամ ֆեոդալական* կախումն *ուրիշ անձից: Այնուհետև, բանվորական ուժի ազատ վաճառող դառնալու համար, վոր տանում է իր ապրանքն այնտեղ, վորտեղ նրա պահանջը կա, բանվորը պետք է ազատվեր համքարությունների տիրապետությունից, աշակերտների և վարպետացուների մասին յեղած համքարային կանոնադրություններից և աշխատանքի այլ նեղիչ կարգադրություններից: Այդպես ուրեմն,* արտադրողին վարձու բանվորի փոխարկող պատմական պրոցեսի մի կողմն այն է, վոր նա արտադրողին ազատում է ֆեոդալական և համքարային հարկադրանքից. և մեր բուրժուական պատմաբանների համար հենց միայն այդ մի կողմը գոյություն ունի: *Բայց կա նաև* մյուս կողմը, վորի եյությունն այն է, վոր ազատվողները լոկ այն ժամանակ են իրենք իրենց վաճառող դառնում, յերբ նրանցից խլված են նրանց արտադրության բոլոր միջոցները և գոյության բոլոր յերաշխիքները, վորոնք ապահովված եյին վաղեմի ֆեոդալական հիմնարկությունների կողմից: *Յեվ նրանց այդ եքսպրոպրիացիայի պատմությունը հաստատ յենթադրությունների վրա չի հիմնվում:* Այդ պատմությունը մարդկության տարեգրերում արձանագրված է սրի և հրի բոցավառող լեզվով:

*Արդյունաբերական կապիտալիստները, այդ նոր տիրակալ անձերը, պետք է իրենց կողմից դուրս մղեյին վո՛չ միայն համքարային վարպետներին, նաև ֆեոդալներին, վորոնք տիրում եյին հարստության աղբյուրներին: Այդ տեսակետից նրանց բարձրացումը հաղթական կռվի պտուղն է ֆեոդալական իշխանության դեմ, իր վրդովեցուցիչ արտոնություններով, ինչպես նաև համքարությունների և այն կապանքների դեմ, վոր այդ վերջինները դնում են արտադրության ազատ զարգացման և մարդուն մարդու ձեռքով ազատորեն շահագործելու վրա: Սակայն արդյունաբերության ասպետներին հաջողվեց դուրս մղել սրի ասպետներին միայն այն հանգամանքի շնորհիվ, վոր նրանք ոգտագործեցին այնպիսի դեպքեր, վոր հենց իրենք չեյին ստեղծել: Նրանք բարձրացան, ոգտվելով միևնույն կեղտոտ միջոցներից, վորոնք մի-*

[1]) Капитал I, стр. 754—756.

*ժամանակ համեմատական ազատ արձակված ստրուկներին հնարավորություն էին տալիս իրենց պատրոնների տերերը դառնալու:*

Ինչպես վարձու բանվորին, այնպես և կապիտալիստին ստեղծող զարգացման ելակետը բանվորի ստրկությունն էր: Այդ զարգացման էությունն այն էր, որ ստրկացումը փոխեց իր ձևը, ֆեոդալական շահագործումը փոխարկելով կապիտալիստականի: *Այդ պրոցեսի ընթացքն ըմբռնելու համար մենք կարիք չունենք շատ հեռու գնալու դեպի անցյալի խորքերը: Թեև կապիտալիստական արտադրության առաջին սկզբնավորությունները տեղի ունեցին արդեն XIV և XV դարերում Միջերկրական ծովի շուրջն ընկած առանձին քաղաքներում, այնուամենայնիվ կապիտալիստական դարաշրջանի սկիզբը վերաբերում է միայն XVI դարին: Նա յերևան է գալիս այնտեղ, վորտեղ արդեն վաղուց վոչնչացված է ճորտատիրության իրավունքը և նշանակալից չափով թառամել է միջին դարերի ամենապայծառ ծաղիկը—ազատ քաղաքները:*

*Սկզբնական կուտակման պատմության մեջ ահագին նշանակություն ունեցան այն հեղաշրջումները, վորոնք այսպես թե այնպես իբրև լծակ ծառայեցին կապիտալիստների ձևավորվող դասակարգի բարձրացման համար. բայց առանձնապես կարևոր դեր էին խաղում այն մոմենտները, յերբ մարդկանց զգալի մասսաները հանկարծակի և բռնությամբ կտրվում էին իրենց գոյության միջոցներից և աշխատանքի շուկան էին նետվում իբրև օրենքից դուրս գրված պրոլետարներ:* Ամբողջ պրոցեսի հիմքը կազմում է գյուղատնտեսական արտադրողի եքսպրոպրիացիան, գյուղացու հողազրկումը: *Հենց նրան էլ մենք պետք է քննության առնենք ամենից առաջ: Նրա պատմությունը զանազան յերկրներում զանազան գունավորում ունի, տարբեր փուլեր է անցնում տարբեր կարգով և զանազան պատմական դարաշրջաններում: Կլասիկ ձևով նա կատարվում է միայն Անգլիայում, վորը և մենք այդ պատճառով վերցնում ենք իբրև օրինակ*[1]):

Նյութական և հոգևոր աշխատանքի ամենախոշոր բաժանումը հանդիսանում է քաղաքի անջատումը գյուղից: Հակադրությունը գյուղի և քաղաքի միջև սկսվում է բարբարոսությունից քաղաքակրթության, ցեղային կենցաղից՝ պետական կյանքի, ցեղից՝ ազգության անցնելիս և ձգվում է քաղաքակրթության ամբողջ պատմության ընթացքով մինչև մեր օրերը (Anticorwlab League): *Քաղաքի հետ միասին հանդես է գալիս վարչության, վոստիկանության, հարկերի և այլն, կարճ ասած՝ համայնական կյանքի* (Gemeindewesens), *նշանակում է՝ նաև ընդհանրապես քաղաքականության անհրաժեշտությունը: Այստեղ առաջին անգամ արտահայտվեց բնակչության յերկու մեծ դասակարգերի բաժանվելը, վորը հիմնված է ուղղակի աշխատանքի բաժանման և արտադրության գործիքների վրա: Քաղաքում մենք մեր առաջ ունենք բնակչության, արտադրության գործիքնե-*

[1]) Капитал I, стр. 708—709.



*րի, կապիտալի, հաճույքների, պահանջների համակենտրոնացման փաստը, մինչդեռ գյուղում մենք տեսնում ենք մեկուսացման և առանձնացման տրամագծորեն հակադիր փաստը:* Հակադրությունը քաղաքի և գյուղի միջև կարող է գոյություն ունենալ միայն մասնավոր սեփականատիրության շրջանակներում: *Անհատին, աշխատանքի բաժանմանն ու վորոշ, հարկադրաբար նրա վզին փաթաթած գործունեությանը յենթարկելու փաստի ամենակոպիտ արտահայտությունն է, յենթարկումն, վոր մարդկանցից մեկին դարձնում է սահմանափակ քաղաքային անասուն, մյուսին—սահմանափակ գյուղական անասուն, և ամեն որ նորից յերկուսի շահերի հակասություն է առաջացնում:* Աշխատանքն այստեղ կրկին հանդիսանում է գլխավոր գործը, հանդիսանում է իբրև ուժ անհատների վրա և քանի գոյություն ունի այդ վերջինը, պետք է գոյություն ունենա նաև մասնավոր սեփականությունը: Քաղաքի և գյուղի միջև յեղած հակասության վոչնչացումը հանդիսանում է կոլեկտիվության (Gemeinschaft) առաջին պայմաններից մեկը. մի պայման, վորն իր հերթին, կախված է բազմաթիվ նյութական նախադրյալներից և վորը, ինչպես ամեն վոք միանգամից կտեսնի, վոր չի կարող իրականացվել լոկ միայն կամքով (այդ պայմանները դեռ պետք է զարգանան): Քաղաքի անջատումը գյուղից կարելի յե դիտել իբրև կապիտալի անջատումն հողային սեփականությունից, իբրև սկիզբ կապիտալի՝ անկախ գոյության և զարգացման հողային սեփականությունից, սկիզբ այնպիսի սեփականության, վոր իր հիմքն ունի միայն աշխատանքի և փոխանակության մեջ[1]):

*Ինչպիսի էլ վոր լինեն արտադրության հասարակական ձևերը, բանվորը և արտադրության միջոցները, միշտ էլ մնում են նրա գործոնները: Սակայն, գտնվելով մեկը մյուսից բաժանման վիճակում, թե՛ մեկը և թե՛ մյուսները նրա գործոններն են միայն հնարավորության սահմաններում: Վորպեսզի ընդհանրապես արտադրել, նրանք պետք է միանան:* Այն հատուկ բնույթն ու յեղանակը, վորով իրագործվում է այդ միացումը, տարբերում է սոցիալական ստրուկտուրայի տնտեսական առանձին եպոխաները: *Հետազոտելի դեպքում ազատ բանվորի անջատումը նրա արտադրության միջոցներից նախորոք տրված յելակետ է, և մենք արդեն տեսանք, թե ինչպես և ինչպիսի պայմաններում բանվորներն ու արտադրության միջոցները միանում են կապիտալիստի ձեռքում—միանում հենց* վորպես նրա՝ կապիտալի կեցության արտադրողական ձև: Այդ պատճառով այն ռեալ պրոցեսը, վորի մեջ մտնում են այդ յեղանակով միաձեցած անձնական և իրային ապրանքաստեղծողները, արտադրության պրոցեսը հենց դառնում է կապիտալի ֆունկցիան—կապիտալիստական արտադրության պրոցեսը: *Ընդհանրապես ապրանքային արտադրությամբ զբաղմունքը փոխարկվում է բանվորական ուժի շահագործման զբաղմունքի:* Սակայն միայն կապիտալիստական ապ-

[1]) Маркс—Энгельс, «Архив» I, стр. 234.

րանքային արտադրությունն է դառնում շահագործման այնպիսի եղանակ, որը կազմակերպելով աշխատանքի պրոցեսը և հուժկու կերպով զարգացնելով տեխնիկան, բացում է պատմության նոր էպոխա, իր հետագա շարժման մեջ հեղաշրջում է կատարում հասարակության ողջ տնտեսական ստրուկտուրայի մեջ և շատ ետ թողնում բոլոր նախընթաց էպոխաները:

*Այն դերի տարբերության հետևանքով, որպիսին արտադրական պրոցեսի մեջ խաղում են արտադրության միջոցներն ու բանվորական ուժն արժեքը կազմելու ժամանակ, հետևաբար և հավելյալ արժեքի ստեղծման դեպքում, նրանց տարբերում ենք որպես հաստատուն և փոփոխական կապիտալ, որչափով նրանք հանդիսանում են ավանսավորված կապիտալ արժեքի գոյության ձևերը:* Որպես արտադրողական կապիտալի տարբեր բաղկացուցիչ մասեր, նրանք տարբերվում են, այնուհետև, նրանով, որ առաջինները, քանի որ նրանց տիրում է կապիտալիստը, մնում են նրա կապիտալը և արտադրության պրոցեսից դուրս, այն ինչ բանվորական ուժը միայն նրա մեջ է դառնում անհատական կապիտալի գոյության ձև: *Եթե բանվորական ուժն ապրանք է միայն նրան վաճառողի, վարձու բանվորի ձեռքում, ապա ընդհակառակը, կապիտալ նա դառնում է միայն նրան գնողի, կապիտալիստի ձեռքում, որին բաժին է ընկնում նրա ժամանակավոր սպառումը:* Արտադրության միջոցներն իրենք արտադրողական կապիտալի նյութական ձև, կամ արտադրողական կապիտալ դառնում են միայն այն մոմենտից սկսած, երբ բանվորական ուժը, որպես նույն այդ կապիտալի անձնական ձևի կեցություն, հնարավորություն է ստանում արմատավորվել նրանց մեջ: *Ինչպես մարդկային բանվորական ուժը, այնպես էլ արտադրության միջոցները բնությունից կապիտալ չեն:* Նրանք այդ սպեցիֆիկ հասարակական բնույթը ձեռք են բերում միայն որոշ պատմականորեն զարգացող պայմաններում, *այնպես, ինչպես այդպիսի խիստ պայմաններում միայն ազնիվ մետաղներն ստանում են փողի բնույթ կամ փողը՝ փողային կապիտալի բնույթ*[1]):

*„Դասակարգային պայքարի թեորիան հենց այն պատճառով է կազմում հասարակական գիտությունների խոշոր նվաճումը, որ նա ամենակատարյալ ճշտությամբ և որոշությամբ սահմանում է անհատականը սոցիալիզմին վերածելու հնարները: Առաջին, այս թեորիան մշակել է հասարակական տնտեսական ֆորմացիայի հասկացողությունը: Վերցնելով որպես ելակետ մարդկային ամեն տեսակի համակեցության հիմնական փաստը՝ կյանքի միջոցների հայթայթման եղանակը, նա նրա հետ առնչության մեջ է դրել մարդկանց այն հարաբերությունները, որոնք կազմում են կյանքի միջոցների հայթայթման տվյալ եղանակների սիստեմի մեջ (Մարքսի տերմինոլոգիայով «արտադրական հարաբերությունների»), մատնանշել է հասարակության այն հիմքը, որն զգեստավորվում է քաղաքա-իրավական*

[1]) Маркс, Капитал II, стр. 10, изд. 1927 г .



*ձևերով և հասարակական մտքի որոշ հոսանքներով:* Արտադրական հարաբերությունների յուրաքանչյուր այդպիսի սիստեմը, Մարքսի թեորիայի համաձայն, առանձին սոցիալական օրգանիզմ է, որն ունի իր ծագման, գործելու և բարձրագույն ձևին անցնելու, մի ուրիշ սոցիալական օրգանիզմին փոխակերպվելու առանձին օրենքները: *Այս թեորիայով սոցիալական գիտության վերաբերյալ կիրառվեց կրկնելիության այն օբյեկտիվ, հանրագիտական կրիտերիումը, որի կիրառման հնարավորությունը սոցիոլոգիայի մեջ բացասում էին սուբյեկտիվիստները: Նրանք դատում էին հենց այնպես, որ սոցիոլոգիական երևույթների ահագին բարդության և նրանց բազմապիսության հետևանքով չի կարելի ուսումնասիրել այդ երևույթները, եթե չզատենք կարևորներն անկարևորներից, և այդպիսի զատման համար անհրաժեշտ է «քննադատորեն մտածող» և «բարոյապես-զարգացած» անհատի տեսակետը,—և նրանք այդ կերպ հանգում էին բարեհաջող կերպով այն բանին, որ* հասարակական գիտությունը վերածում էին քաղքենիական բարոյականության *մի շարք խրատների, որի նմուշները մենք տեսանք պատմության աննպատակահարմարության և «գիտության լույսով» ղեկավարվող ուղիի մասին փիլիսոփայող Պ. Միխայլովսկու մոտ: Ահա հենց այս դատողությունների արմատն էլ կտրեց Մարքսի թեորիան: Կարևորի և անկարևորի տարբերության փոխարեն* դրվեց հասարակության տնտեսական ստրուկտուրայի, որպես բովանդակության, և քաղաքական ու գաղափարական ձևի միջև եղած տարբերությունը, տնտեսական ստրուկտուրայի հասկացողությունը հենց ճիշտ պարզաբանվեց նախկին տնտեսագետների հայացքների հերքումով, որոնք բնության օրենքները տեսնում էին այնտեղ, ուր տեղ ունեն արտադրական հարաբերությունների առանձին, պատմականորեն որոշ սիստեմի օրենքները միայն: *Ընդհանրապես «հասարակության» մասին սուբյեկտիվիստների արած դատողությունների անբովանդակ և քաղքենիական ուտոպիաներից դենը չանցնող դատողությունների փոխարեն (որովհետև նույնիսկ պարզված չէր ամենատարբեր սոցիալական կարգերի համայնացման հնարավորությունը սոցիոլոգիական օրգանիզմների առանձին տեսակների մեջ)*—դրվեց հասարակության կառուցվածքի որոշ ձևի հետազոտությունը: *Երկրորդ՝ «կենդանի անհատների» գործողությունները յուրաքանչյուր այդպիսի հասարակական-տնտեսական ֆորմացիայի սահմաններում, որոնք անվերջորեն բազմապիսի են և կարծես թե ոչ մի սիստեմատիզացիայի չեն ենթարկվում, ընդհանրացվեցին և վերածվեցին անհատների խմբերի գործողությունների, անհատների, որոնք տարբերվում են իրարից այն դերով, որ նրանք խաղում են արտադրական հարաբերությունների սիստեմի մեջ, արտադրության պայմանների համաձայն, հետևաբար, նրանց կենսական պարագայի պայմանների համաձայն, այն շահերի համաձայն, որոնք որոշվում են այդ պարագայով, մի խոսքով,* վերածվեցին դասակարգերի գործողությունների, որոնց պայքարը որոշում էր հասարակության զարգացու-

մը: Սրանով հերքվեց պատմության վրա սուբյեկտիվիստների ունեցած մանկորեն միամիտ, զուտ մեխանիկական հայացքը, վորոնք բավարարվում եյին իրենից վոչինչ չասող այն դրույթով, թե պատմությունն անում են կենդանի անհատները, և վորոնք չեյին ուզում քննության առնել, թե սոցիալական ինչպիսի պարագա յե պայմանավորում նրանց գործողությունները և այն էլ ինչպես: Սուբյեկտիվիզմի փոխարեն դրվեց սոցիալական պրոցեսի վորպես բնապատմական պրոցեսի վրա ունեցած հայացքը,—մի հայացք, առանց վորի չեր կարող լինել իհարկե հասարակական գիտություն[1]):

Յեվ ինչպիսի զարմանալի կազմակերպություն է այդ տոհմային հասարակարգն իր ամբողջ մանկությամբ ու պարզությամբ: Առանց զինվորների, ժանդարմների, առանց ազնվականության, թագավորների, փոխարքաների, պրեֆեկտների (կուսակալների) և դատավորների, առանց բանտերի ու առանց դատավարության—ամեն ինչ ընթանում է իր կանոնավոր ընթացքով: Ամեն տեսակի յերկպառակություններն ու ընդհարումները հարդարում է մարդկանց այն միասնությունը, վորին դրանք վերաբերում են, այն է՝ տոհմը կամ ցեղը, կամ թե առանձին տոհմերն իրար միջև: Միայն վորպես ծայրահեղ, հազվադեպ կիրառվող միջոց, սպառնում է արյան վրեժը, վորի քաղաքակրթված ձևը մեր մահապատիժն է, վորն անդրադարձնում է իր մեջ քաղաքակրթության բոլոր դրական ու բացասական կողմերը: Թեպետև շատ ավելի ընդհանուր գործեր գոյություն ունեն, քան ներկայումս է, թեպետև տնային տնտեսությունը վարում են միասին ու կոմունիստորեն, հողը պատկանում է ամբողջ ցեղին (միայն այգիներն ու բանջարանոցներն են առայժմս թողնված առանձին տնտեսություններին), այնուամենայնիվ յոլա յեն գնում առանց մեր վարչության լայն ճյուղավորված ու բարդ ապարատի ստվերն անգամ ունենալու: Ամեն ինչ վճռում են շահագրգռված մարդիկ իրենք, իսկ մեծ մասամբ դարավոր սովորույթն արդեն ինքն է բոլորը կարգավորում: Չքավորներ ու կարիքավորներ լինել չեն կարող: Կոմունիստական տնտեսությունը և տոհմը գիտեն իրենց պարտականությունները զառամյալների, հիվանդների և պատերազմում հաշմանդամ դառածների վերաբերմամբ: Բոլորը հավասար են և ազատ—չբացառելով անգամ կանանց: Ստրուկների համար դեռ տեղ չկա, հող չկա սովորաբար նաև օտար ցեղերին ստրկացնելու համար: Յերբ 1651 թվին իրոկեզները հաղթեցին Երի ցեղին և «չեզոք ազգին»—նրանք առաջարկեցին նրանց մտնել իրենց միության մեջ վորպես իրավահավասարներ, միայն հաղթվողների մերժումից հետո նրանց վռնդեցին իրենց մարզից: Իսկ թե ինչպիսի տղամարդիկ ու կանայք է ծնում այսպիսի հասարակությունը,—ցույց է տալիս անարատ հնդկացիների հետ շփվող բոլոր սպիտակամորթների զարմանքը՝ այդ բարբարոսների սեփական արժանիքի զգացման, պարզասրտության, բնավորության ուժի և քաջության հանդեպ...

[1]) Ленин, т. II.



Այսպիսի տեսք ունեյին մարդիկ ու մարդկային հասարակությունը մինչ այն ժամանակ, յերբ կատարվեց զանազան դասակարգերի բաժանումը: Յեվ յեթե մենք համեմատենք նրանց դրությունն արդի քաղաքակիրթ մարդկանց ահագին մեծամասնության հետ, ապա այժմյան պրոլետարի կամ գյուղացու և տոհմի հին ազատ անդամի միջև ահագին տարածություն կա:

Այս՝ գործի մի կողմն է: Բայց չմոռանանք, վոր այս կազմակերպությունը կործանման եր դատապարտված: Այդ կազմակերպությունը ցեղից դենը չգնաց: Ցեղերի միությունն արդեն նշանակում եր նրա քայքայման սկիզբը, ինչպես այդ մենք կտեսնենք և ինչպես այդ ցուցադրվեց արդեն իրոկեզների ձեռնարկած փորձերի մեջ՝ ստրկացնելու ուրիշ ցեղերին: Այն ամենը, ինչ ցեղից դուրս եր, իրավունքից դուրս եր: Վորոշ խաղաղության պայմանների բացակայության դեպքում ցեղերի միջև թագավորում եր պատերազմ և պատերազմն էլ վարում եյին դաժանությամբ, վորը տարբերում եր մարդուն մնացած կենդանիներից և վորը մեղմացավ միայն հետագայում համապատասխան շահերի պատճառով: Տոհմական հասարակարգն իր բարձրագույն ձևի մեջ, ինչպես մենք գիտեցինք նրան Ամերիկայում, յենթադրում եր վերին աստիճանի անզարգացած արտադրություն, հետևաբար ծայրահեղ նոսր ազգաբնակչության ընդարձակ տարածության վրա, հետևաբար մարդու համարյա կատարյալ յենթարկումը նրան թշնամաբար հակադրված անըմբռնելի արտաքին բնությանը, վորը և անդրադառնում է կրոնական մանկական պատկերացումների մեջ: Ցեղը մարդու համար մնում եր սահման, ինչպես ուրիշ ցեղից օտար մարդու նկատմամբ, այնպես և ինքն իրեն նկատմամբ, ցեղը, տոհմը և նրանց հիմնարկները սրբագործված եյին և անձեռնմխելի, բնությունից տված բարձրագույն ուժ եյին, վորին առանձին անհատը մնում եր յենթարկված իր զգացմունքներով, մտածողությամբ և արարքներով: Ինչքան էլ իմպոզանտ են այս եպոխայի մարդիկ, նրանք Մարքսի արտահայտության համաձայն, դեռ չեյին կտրված նախնական հասարակության պորտապարանից: Այս հասարակության ուժն ու իշխանությունը պիտի կտրվեյին—և նրանք իսկապես վոր կտրվեցին: Սակայն այս կատարվեց այն պատճառների հետևանքով, վորոնք մեզ պատկերանում են վորպես հին տոհմական հասարակարգի անկում և պարզ բարոյական բարձունքից դատվիրազանցություն: Ամենաստոր շահերը — տարրական ագահությունը, դեպի վայելքն ունեցած բիրտ կիրքը, կեղտոտ ընչաքաղցությունը, ընդհանուր պատկանելիության յեսասիրական կողոպուտը—այսպես եյին այն ուժերը, վորոնք ծնեցին նոր, քաղաքակիրթ, դասակարգերի բաժանված հասարակությունը: Ամենաստոր միջոցները—գողությունը, բռնությունը, խաբեբայությունը, դավաճանությունը փորում եյին հին, դասակարգեր չիմացող տոհմական հասարակարգերի հիմքերը և հասցրին նրան անկման: Յեվ ամենանոր հասարակությունը՝ իր գոյության մեկ ու կես հազար տարվա ժամա-

*նախընթացքում միշտ յեղել է վոչ այլ ինչ, բայց յեթե մի հող՝ չնչին փոքրամասնության զարգացման համար, շահագործվող ու կեղեքվող ահագին մեծամասնության հաշվին, սակայն մնում է այդպիսին անգամ այժմ և այն էլ մեծ չափով, քան յերբ և իցե յեղել է առաջներում*[1]):

Այնտեղ ուր ստրկությունը արտադրության տիրապետող ձև է, այնտեղ աշխատանքը դառնում է ստրկական գործունեյություն, այսինքն ազատ մարդկանց պատվազուրկ անող մի բան: *Դրա շնորհիվ փակվում է արտադրության նման յեղանակից յելքը, այն ժամանակ, յերբ մյուս կողմից, պահանջվում է նրա վերացումը, վորովհետև արտադրության զարգացման համար ստրկությունը խոչընդոտ է: Ստրկության վրա հանգչող ամեն մի արտադրություն և նրա վրա հիմնված ամեն մի հասարակություն կկործանվի այս հակասությունից: Նրա լուծումը մեծ մասամբ գլուխ է գալիս կործանվող հասարակության մի ուրիշ, ավելի ուժեղ հասարակության կողմից բռնի նվաճումով*[2]):

*Յեթե հին ժամանակը յելնում եր քաղաքից ու նրան մոտ ընկած փոքրիկ սեփականությունից, ապա միջնադարը յելնում եր գյուղից: Նախնական, ընդարձակ տարածությունով մեկ նոսրացրված և նվաճողների կողմից մեծ աճ չստացող ազգաբնակչությունը պայմանավորում եր յելակետի մեջ այս փոփոխությունը:*

*Այդ պատճառով էլ Հունաստանին և Հռոմին հակադիր ֆեոդալական զարգացումն սկսվում է շատ ավելի ընդարձակ հողի վրա, վոր պատրաստվեց հռոմեյական նվաճումներով, և կապվեց նախապես յերկրագործության այդ ընդարձակման հետ: Կործանվող հռոմեյական կայսրության վերջին դարերի անտեսավարությունը և բարբարոսների նվաճումները կործանեցին ահագին քանակությամբ արտադրողական ուժեր. յերկրագործությունը դեգրադացիայի յենթարկվեց, արդյունաբերությունը վաճառքի բացակայության պատճառով թուլացավ, առևտուրը մեռավ կամ բռնի կերպով ընդհատվեց, գյուղական ու քաղաքային ազգաբնակչությունը նվազեց: Այս փաստերը և նրանցով պայմանավորված նվաճումների կազմակերպության յեղանակը ստեղծեցին՝ գերմանական զորքերի ստրուկտուրայի ազդեցությամբ՝ ֆեոդալական սեփականությունը: Նա, տոհմական և համայնական սեփականության նման նույնպես հասարակական կազմակերպության վրա յե հանգչում, վորին վորպես անմիջական արտադրող դասակարգ հակադրվում են սակայն վոչ թե ստրուկները, ինչպես հին ժամանակ, այլ մանր ճորտ գյուղացիները:* Ֆեոդալիզմի կատարյալ զարգացման հետ միասին յերևան է գալիս նաև հակամարտությունը քաղաքի հետ: *Հողային սեփականության հիյերարխիկ բաժանվածությունը և սրա հետ կապված զինված դրուժինների սիստեմն իշխանություն եյին ընձեռում ճորտերի վրա:* Ֆեոդալական այս ստրուկտուրան, ինչպես և համայնական սեփականությու-

[1]) Энгельс, «Происх. семьи, частной собств. и государства».

[2]) Энгельс, «Диалектика природы».



նը, մի ասսոցիացիա յեր՝ ուղղված ստրկացած արտադրող դասակարգի դեմ, բայց ասսոցիացիայի ձևը և դեպի անմիջական արտադրողները ունեցած հարաբերությունն այլ եյին, կախված արտադրության այլ պայմաններից:

*Հողային սեփականության այս ֆեոդալական բաժանվածությանը համապատասխանում եր քաղաքներում կորպորատիվ սեփականությունը և արհեստի ֆեոդալական կազմակերպությունը: Այստեղ սեփականությունը կայանում եր գլխավորապես յուրաքանչյուր առանձին անհատի աշխատանքի մեջ: Միացյալ ավազակաբարո ազնվականության դեմ միավորվելու անհրաժեշտությունը, ընդհանուր շուկայի շինությունների պահանջը մի եպոխայում, յերբ արդյունաբերողը միաժամանակ նաև վաճառական եր, դեպի ծաղկյալ քաղաքները հոսող փախստական ճորտերի կողմից մրցակցության աճումը և յերկրի ֆեոդալական բաժանվածությունը ծնեցին համքյարությունները: Առանձին արհեստավորների կողմից աստիճանաբար կատարվող փոքրիկ կապիտալների խնայողությունը և նրանց թվի անփոփոխությունն, աճող ազգաբնակչության ժամանակ կյանքի կոչեցին վարպետացուների ու աշկերտության սիստեմը, վորը քաղաքներում ստեղծեց հիյերարխիա, նման վոչ քաղաքային ազգաբնակչության հիյերարխիային:*

*Այսպիսով,* սեփականության գլխավոր ձևը ֆեոդալական եպոխայում մի կողմից հողային սեփականությունն է, ճորտերի աշխատանքով հանդերձ, իսկ մյուս կողմից՝ սեփական աշխատանքը մանր կապիտալի առկայությամբ և նրա կողմից ոգտագործվող վարպետացուների աշխատանքը: *Այս յերկուստեքի սեփականության ստրուկտուրան պայմանավորվում եր արտադրության սահմանափակ հարաբերություններով — աննշան և կոպիտ յերկրագործական կուլտուրայով և արհեստային տիպի արդյունաբերությամբ:* Ֆեոդալիզմի ծաղկման ժամանակ աշխատանքի բաժանումը տեղ ուներ միայն աննշան չափով: Ամեն մի յերկրում գոյություն ուներ քաղաքի ու գյուղի միջև հակադրություն: *Ճիշտ է, դասային բաժանումը շատ խիստ եր արտահայտված, բայց հողի վրա գտնված իշխաններից, հոգևորականությունից և գյուղացիներից, իսկ քաղաքներում՝ վարպետներից, վարպետացուներից, աշակերտներից, շուտով նույնպես և որով վարձվող ամբոխից, այդ եպոխայում աշխատանքի խոշոր բաժանում չկար: Յերկրագործության մեջ աշխատանքի այդ բաժանումը դժվարացնում եր հողի պարցելլար մշակումով, վորի հետ միասին գյուղացիներն ունեյին տնային արդյունաբերություն: Արդյունաբերության մեջ այդ բաժանումը շատ աննշան եր միայն: Արդյունաբերության և առևտրի միջև բաժանումը գոյություն ուներ շատ ավելի հին քաղաքներում: Իսկ ավելի նորերի մեջ այդ բաժանումը զարգացավ միայն հետագայում, յերբ քաղաքները մտան միմյանց հետ փոխհարաբերության մեջ:*

*Ֆեոդալական թագավորությունների մեջ ավելի նշանավոր մարդերի միավորումը պահանջ եր ինչպես հողային ազնվականության համար, այնպես և քաղաքների համար*[1]):

[1]) Маркс—Энгельс «Архив» I, стр. 254—256.

*Այսպիսով, վորպեսզի ճիշտ դատենք ֆեոդալական արտադրության մասին*, հարկավոր ե քննարկել այն վորպես հակամարտության վրա հիմնված արտադրության յեղանակ: *Պիտի ցույց տալ, թե ինչպես եր ստեղծվում հարստությունը հակամարտության վրա հիմնված այդ միջավայրում, թե ինչպես դասակարգերի պայքարի զարգացման հետ զուգահեռ զարգանում եյին արտադրողական ուժերը, թե ինչպես այդ դասակարգերից մեկը,—վորը ներկայացնում ե իրենից հասարակության անհամեմատ վատ կողմը,—աստիճանաբար աճել ե այն աստիճան, մինչև վոր հասունացել են վերջապես նրա ազատագրման նյութական պայմանները: Սակայն, վարվելով այդ կերպ, դուք չե՞ք ընդունում արդյոք, վոր արտադրության յեղանակը, համապատասխանաբար նաև այն հարաբերությունները, վորոնց ժամանակ կատարվում ե արտադրողական ուժերի զարգացումը, ամենևին հավիտենական օրենքներ չեն, այլ համապատասխանում են մարդկանց ու նրանց արտադրողական ուժերի վորոշ զարգացմանը: Դուք չե՞ք ընդունում նույնպես, վոր մարդկանց պատկանող* արտադրողական ուժերի բնագավառում տեղի ունեցած ամեն մի փոփոխություն անհրաժեշտորեն իր հետ բերում ե փոփոխություններ արտադրական հարաբերությունների մեջ: *Քանի վոր անհրաժեշտ ե նախ և առաջ պահպանել ձեռք բերած արտադրողական ուժերը,—քաղաքակրթության այդ պտուղները,—ապա հարկ ե լինելու ջարդելու տրադիցիոն ձևերը, վորոնց մեջ նրանք արտադրվել են: Այդ մոմենտից հետո նախկին հեղափոխական դասակարգը դառնում ե պահպանողական*[1]):

... Արտադրության կապիտալիստական յեղանակի գիտական վերլուծությունը ցույց ե տալիս, վոր վերջինս ներկայացնում ե իրենից արտադրության մի առանձին տեսակի յեղանակ, սպեցիֆիկորեն պատմական վորոշակիություն, վոր նա, ինչպես և արտադրության ամեն մի ուրիշ վորոշ յեղանակ, յենթադրում ե հասարակական արտադրողական ուժերի և նրանց զարգացման տվյալ ձևերի տվյալ աստիճանը՝ վորպես իր պատմական պայմանը, մի պայման, վորն ինքը պատմականորեն կազմակերպված հետևանք ե, նախընթաց պրոցեսի արդյունք և վորից իբրև տվյալ հիմքից, բղխում ե արտադրության նոր յեղանակը, վոր այդ սպեցիֆիկ, պատմականորեն վորոշ արտադրության յեղանակին համապատասխանող արտադրական հարաբերությունները, այսինքն՝ այն հարաբերությունները, վորոնց մեջ դրվում են մարդիկ իրենց հասարակական կենսական պրոցեսում, իրենց սեփական կյանքի արտադրության ընթացքում, ունեն նույնպես սպեցիֆիկ, պատմական, անցողիկ բնույթ, վոր վերջապես բաշխման հարաբերություններն եյապես նույնանման են արտադրական հարաբերություններին, ներկայացնում են վերջիններիս լոկ հակառակ կողմը, այնպես, վոր թե՛ նրանք և թե՛ մյուսները կրում են միևնույն պատմական, անցողիկ բնույթը [2]):

[1]) К. Маркс, «Нищета философии», изд. 1928 г стр. 117—118.
[2]) Маркс, Капитал III, ч. II, изд. 1923 г. стр. 411—412.



# ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ՅԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՍՀՄ-ում

*Չի յեղել դեռ կարծես այնպիսի մի մարդ, վորը, դնելով Ռուսաստանի եկոնոմիկայի հարցը, բացասեր* այդ եկոնոմիկայի անցողիկ բնույթը: *Վոչ մի կոմունիստ, կարծեմ, չի բացասել և այն, վոր «սոցիալիստական խորհրդային հանրապետություն» արտահայտությունը նշանակում ե խորհրդային* իշխանության վճռականությունը՝ իրագործել սոցիալիզմին անցումը, և ամենևին չի նշանակում այն, թե տվյալ տնտեսական կարգերը ճանաչվում են սոցիալիստական:

*Սակայն ի՞նչ ե նշանակում «անցում» բառը: Արդյոք չի՞ նշանակում այդ եկոնոմիկայի կիրառմամբ, վոր տվյալ հասարակակարգի մեջ կան կապիտալիզմի և սոցիալիզմի տարրեր, մասնիկներ, կտորներ: Ամեն վոք կխոստովանի, վոր՝* այո՛: *Սակայն, խոստովանելով այդ, ամեն վոք էլ չի մտածում այն մասին, թե ի՞նչպիսի տարրեր հասարակական տնտեսաձևերի տարբեր են հենց դրանք, վոր առկա կան Ռուսաստանում: Իսկ դրա մեջն ե հենց հարցի վողջ իմաստը:*

*Թվարկենք այդ տարրերը.*

1) *Նահապետական, այսինքն՝ նշանավոր չափով բնական (նատուրալ), գյուղացիական տնտեսություն.*

2) *Մանր ապրանքային արտադրություն (այստեղ վերագրվում ե գյուղացիների մեծամասնությունը, ովքեր վաճառում են հաց).*

3) *Մասնավոր տնտեսական կապիտալիզմ.*

4) *Պետական կապիտալիզմ.*

5) *Սոցիալիզմ:*

*Ռուսաստանն այնպես մեծ ե ու այնպես խայտաբղետ, վոր հասարակական-տնտեսական տնտեսաձևերի այս բոլոր տարբեր տիպերը հյուսվում են նրա մեջ: Դրության յուրատեսակությունը հենց դրա մեջն ե*[1]):

Սոցիալիստական հասարակության ռեսուրսների ամրապնդման համար, նրա ստեղծման համար իրական և միակ բազան մեկ, և միայն մեկ հատ ե,— դա խոշոր արդյունաբերությունն ե: *Առանց կապիտալիստական խոշոր ֆաբրիկայի, առանց բարձր դրված խոշոր արդյունաբերության, խոսք լինել չի կարող սոցիալիզմի մասին ընդհանրապես և ավելի քիչ խոսք կարող ե լինել նրա մասին գյուղացիական յերկրի նկատմամբ, իսկ մենք Ռուսաստանում գիտենք այդ շատ ավելի կոնկրետ կերպով, քան առաջ, և խոշոր արդյունաբերության վերականգնման անորոշ կամ վերացական ձևի փոխարեն, մենք այժմ խոսում ենք ելեկտրիֆիկացիայի վորոշ, ճիշտ հաշված, կոնկրետ պլանի մասին: Մենք ունենք միանգամայն ճիշտ հաշված մի պլան, հաշված լավագույն ռուս մասնագետների աշխատանքի օգնությամբ, մի*

[1]) Ленин, т. XVIII, ч. I.

պլան, վոր մեզ վորոշ պատկերացում ե տալիս այն մասին, թե ինչպիսի ռեսուրսներով, ուշադրության առնելով Ռուսաստանի բնական առանձնահատկությունները, մենք կարող ենք խոշոր արդյունաբերության այդ բազան դնել մեր եկոնոմիկայի տակ, պիտի դնենք և կդնենք: Առանց սրա մեր տնտեսական կյանքի վոչ մի իրական սոցիալիստական հիմքի մասին խոսք լինել չի կարող:[1])

Պրոլետարիատի դիկտատուրան—ինչպես շատ անգամ ասել եմ, դա միայն բռնություն չի շահագործողների վերաբերմամբ և այն էլ վոչ գլխավորապես բռնություն:

Այդ հեղափոխական բռնության տնտեսական հիմքը, նրա հաջողության և կենսունակության գրավականն այն ե, վոր պրոլետարիատը հասկանում ե և կիրառում ե աշխատանքի հասարակական կազմակերպության ավելի բարձր մի տիպար համեմատած կապիտալիզմի հետ. սրա մեջ ե եյությունը:

Սրա մեջ ե ուժի աղբյուրը և կոմունիզմի անխուսափելի, կատարյալ հաղթանակի գրավականը:

Հասարակական աշխատանքի ճորտատիրական կազմակերպումը պահպանվում եր ծեծի դիսցիպլինայի, աշխատավորության ծայրահեղ տգիտության և լքման շնորհիվ, վորոնց կեղեքում ու ծաղրում եյին մի բուռ կալվածատերեր: Հասարակական աշխատանքի կապիտալիստական կազմակերպումը պահպանվում եր քաղցի դիսցիպլինայի վրա և աշխատավորական հսկա մասսան, չնայած բուրժուական քաղաքակրթության և բուրժուական դեմոկրատիայի վողջ առաջադիմության, իր առաջավոր, քաղաքակրթված և դեմոկրատական հանրապետություններում մնացել եր տգետ և լքված ստրուկ, վարձկան մասսա կամ ճորտ գյուղացի, վորոնց թալանում կամ ծաղրում եյին մի բուռ կապիտալիստներ: Հասարակական աշխատանքի կոմունիստական կազմակերպումը, վորի առաջին քայլը սոցիալիզմն ե, պահպանվում ե և քանի գնա պիտի ամրանա, իրենց աշխատավորների ազատ և գիտակցական դիսցիպլինայի վրա, վորոնք խորտակել են ինչպես կալվածատերերի, նույնպես և կապիտալիստների լուծը:

Այս նոր դիսցիպլինան յերկնքից չի իջնելու և վոչ էլ բարի ցանկություններից ծնվելու, նա աճում ե խոշոր կապիտալիստական արտադրության նյութական պայմաններից: Միայն նրանցից: Առանց այս բանի, դա անհնարին ե: Իսկ այդ նյութական պայմաններն իրենց վրա կրողները կամ նրանց ուղեկիցը մի վորոշ պատմական դասակարգ ե, ստեղծված, կազմակերպված, միացած, կրթված, լուսավորված և բովված խոշոր կապիտալիզմով: Այդ դասակարգը պրոլետարիատն ե:[2])

Սոցիալիզմն անկարելի բան ե առանց նորագույն գիտության վերջին խոսքով կառուցված խոշոր կապիտալիստական տեխնիկայի, առանց պլանաչափ պետական կազմակերպության, վորը յենթարկում ե արտադրության և մթերքների բաշխման գործի մեջ միասնական նորման պահելուն հսկող տասնյակ միլիոնավոր մարդկանց... Դրա հետ միասին սոցիալիզմն անկարելի բան ե առանց պետության մեջ պրոլետարիատի տիրապետության [1]):

Հաղթելու, սոցիալիզմ ստեղծելու և ամրապնդելու համար, պրոլետարիատը պիտի լուծի յերկապատիկ կամ յերկմիասնական խնդիր. առաջին՝ կապիտալիզմի դեմ մղած հեղափոխական պայքարի իր անձնվեր հերոսությամբ գրավել աշխատավորների ու շահագործվողների վողջ մասսան, գրավել նրան, կազմակերպել նրան, ղեկավարել նրան բուրժուազիային տապալելու և նրա կողմից կատարվող ամեն տեսակի դիմադրություն կատարելապես ճնշելու համար, յերկրորդ՝ իր հետևից տանել աշխատավորների ու շահագործվողների վողջ մասսան, ինչպես նաև մանր-բուրժուական բոլոր խավերը, նոր տնտեսական շինարարության ուղիով, նոր հասարակական կապի ստեղծման, նոր աշխատանքային դիսցիպլինայի, աշխատանքի նոր կազմակերպության ուղիով, վոր միացնում ե գիտության և կապիտալիստական տեխնիկայի վերջին խոսքերը գիտակից աշխատավորների մասսայական միավորումների հետ, վորոնք ստեղծագործում են խոշոր սոցիալիստական արտադրություն:

Այս յերկրորդ խնդիրն առաջինից ավելի դժվար ե, վորովհետև նա չի կարող վոչ մի դեպքում լուծվել առանձին ավյունի հերոսությամբ, այլ պահանջում ե ամենայերկարատև, ամենահամառ, ամենադժվար հերոսություն մասսայական և առօրյա աշխատանքի մեջ: Սակայն այս խնդիրը և շատ ավելի իրագործված ե, քան առաջինը, վորովհետև վերջին հաշվով բուրժուազիայի վրա հաղթություն տանելու ուժի ամենախոր աղբյուրը և այդ հաղթության ամրության ու անկասպտելիության միակ յերաշխիքը կարող ե լինել միայն հասարակական արտադրության նոր, շատ ավելի բարձր յեղանակը, կապիտալիստական ու մանր-բուրժուական արտադրության փոխարինումը խոշոր սոցիալիստական արտադրությամբ [2]):

Թույլ տվեք ացնելու այս պարզագույն ինդուստրիայի զարգացման մեջ արագ տեմպ թելադրող ներքին ու արտաքին կարգի այդ պայմանների քննարկությանը:

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Մենք իշխանության գլուխ ենք անցել մի յերկրում, վորի տեխնիկան սարսափելի կերպով հետամնաց ե: Քիչ թե շատ նոր տեխնիկայի վրա հիմնված բազմաթիվ արդյունաբերական միավորների հետ միասին, մենք ունենք հարյուրավոր ու հազարավոր ֆաբրիկաներ ու գործարաններ, վորոնց տեխնիկան ժամանակակից նվաճումների տեսակետից վոչ մի քննադատության չի դիմանում: Մինչ դեռ, մեր շուրջը մի ամբողջ շարք կապիտալիստական յերկրներ կան, վորոնք շատ ավելի զարգացած ու

¹) Ленин, т. XVIII, изд. 1-ое, ч. I, «О продналоге».
²) Ленин, Собр. соч. т. XIV, стр. 247—248.

¹) Ленин, т. XVIII, ч. I, стр. 906.
²) Ленин, т. XVI, стр. 25.

*կատարելագործված արդյունաբերական տեխնիկա ունեն, քան մենք: Նայեցեք կապիտալիստական յերկրներին և դուք կտեսնեք, վոր այնտեղ տեխնիկան վոչ միայն գնում է, այլ ուղղակի վազում է դեպի առաջ, իր հետևում թողնելով արդյունաբերական տեխնիկայի հին ձևերը: Յեվ ահա դուրս է գալիս, վոր մենք մեր յերկրում մի կողմից աշխարհիս վրա ամենաառաջավոր իշխանությունը՝ Խորհրդային իշխանությունն ունենք, մյուս կողմից՝ արդյունաբերության չափազանց հետամնաց տեխնիկա, վորն իրենից ներկայացնում է Խորհրդային իշխանության և սոցիալիզմի բազան:* Դուք կարծում եք արդյո՞ք վոր այսպիսի հակասության առկայության դեպքում կարելի յե վերջնական հաղթանակ տանել: *Ինչ պիտի անել, վորպեսզի լիկվիդացիայի յենթարկենք այս հակասությունը:* Դրա համար անհրաժեշտ է այնպես անել, վորպեսզի հասնենք կապիտալիստական զարգացած յերկրներին և նրանցից էլ առաջ անցնենք: *Քաղաքական նոր հասարակակարգ — խորհրդային հասարակարգ սահմանելու մոտքով մենք կապիտալիստական յերկրներին հասել ու նրանցից առաջ ենք անցել: Այդ լավ է: Բայց դա քիչ է:* Սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար, այդ յերկրներին պիտի հասնել ու նրանցից առաջ անցնել ԴԵՌ տեխնիկական-տնտեսական կողմից: Կամ մենք այդ նպատակին կհասնենք կամ մեզ վոտնատակ կտան, կտրորեն: *Դա ճիշտ է վոչ միայն սոցիալիզմ կառուցելու տեսակետից, այլև մեր յերկրի անկախությունը կապիտալիստական շրջապատման պարագայում պաշտպանելու տեսակետից:*

*Չի կարելի մեր յերկրի անկախությունը պաշտպանել առանց պաշտպանության համար բավականաչափ արդյունաբերական բազա ունենալու: Չի կարելի արդյունաբերական այդպիսի բազա ստեղծել՝ առանց արդյունաբերության բարձրագույն տեխնիկա ունենալու: Ահա թե ինչու յե մեզ հարկավոր և ահա թե ինչն է թելադրում մեզ ինդուստրացման զարգացման արագ թափը:*

*Մեր յերկրի տեխնիկական-տնտեսական հետամնացությունը մենք չենք հնարել, այդ հետամնացությունը դարավոր հետամնացություն է, վոր ժառանգություն է թողնված մեզ մեր յերկրի ամբողջ պատմության կողմից: Առաջ էլ մինչ հեղափոխական ժամանակաշրջանում և հեղափոխական ժամանակաշրջանում այդ հետամնացությունը, վորպես չարիք, զգացվել է: Յերբ Պետրոս Մեծը, գործ ունենալով արևմտյան ավելի զարգացած յերկրների հետ, բանակին անհրաժեշտ նյութերը մատակարարելու և յերկրի պաշտպանությունն ուժեղացնելու համար տենդային թափով գործարաններ ու ֆաբրիկաներ եր կառուցում, ապա դա յուրատեսակ մի փորձ եր՝ հետամնացության շրջանակներից դուրս ցատկելու համար: Սակայն միանգամայն հասկանալի յե, վոր* հին դասակարգերից և վոչ մեկը— վոչ ֆեոդալական արիստոկրատիան և վոչ էլ բուրժուազիան չկարողացավ լուծել մեր յերկրի հետամնացությունը վերացնելու խնդիրը: *Ավելին. դեռ այդ դասակարգերը չկարողացան վոչ միայն լուծել այդ խնդիրը,* այլև նրանք անընդունակ գտնվեցին դնել այդ խնդիրը քիչ թե շատ բավարար ձևով: *Մեր յերկրի դարավոր հետամնացությունը կարելի յե վերացնել* միմիայն սոցիալիստական հաջող շինարարության հիման վրա, իսկ վերացնել այդ հետամնացությունը կարող է միայն պրոլետարիատը, վորն արդեն կառուցել է իր դիկտատուրան և իր ձեռքն առել յերկրի ղեկավարությունը:



*Հիմարություն կլիներ մխիթարել մեզ նրանով, թե վորովհետև մեր յերկրի հետամնացությունը մեր հնարածը չէ, այլ մեզ ժառանգություն է թողնված մեր յերկրի ամբողջ պատմության կողմից, ապա մենք չենք կարող ու չպետք է պատասխանատու լինել նրա համար: Դա ճիշտ չէ, ընկերներ: Քանի վոր մենք իշխանության գլուխն ենք անցել և մեզ վրա վերցրել սոցիալիզմի հիմունքով յերկիրը վերակազմելու խնդիրը, ապա մենք պատասխանատու յենք և պետք է պատասխան տանք բոլորի, թե վատի և թե լավի համար: Յեվ հենց այն պատճառով, վոր մենք պատասխանատու յենք բոլորի համար, ապա ուրեմն մենք լիկվիդացիայի պիտի յենթարկենք մեր տեխնիկական-տնտեսական հետամնացությունը: Այս բանը,* մենք պիտի անպատճառ անենք. *յեթե իրոք ցանկանում ենք կապիտալիստական առաջավոր յերկրներին հասնել ու նրանցից առաջ անցնել:* Իսկ այդ բանն անել կարող ենք միայն մենք, բայլշևիկներս և ուրիշ վոչ վոք այլևս: Յեվ այդ խնդիրը կյանքի մեջ մտցնելու համար մենք պիտի սիստեմատիկ կերպով իրականացնենք մեր ինդուստրիայի զարգացման արագ տեմպը: *Իսկ վոր մենք արդեն իրականացնում ենք ինդուստրիայի զարգացման արագ տեմպը, դա բոլորն էլ տեսնում են:*

*Տեխնիկական-տնտեսական կողմից կապիտալիստական առաջավոր յերկրներին հասնելու և նրանցից առաջ անցնելու խնդիրը մեզ համար, բայլշևիկներիս համար մի ինչ վոր նոր կամ անսպասելի բան չէ:* Այդ հարցը մեզ մոտ դրվել է դեռ 1917 թվին Հոկտեմբերյան հեղափոխության շրջանում: *Այդ հարցը դրել է Լենինը, 1917 թ. սեպտեմբերին, Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին, իմպերիալիստական պատերազմի շրջանում, իր «Գալիք աղետն ու ինչպես պայքարել դրա դեմ» բրոշյուրի մեջ:*

*Ահա թե ինչ է ասել այդ մասին Լենինը:*

*«Հեղափոխությունն արավ այն, վոր մի քանի ամսում Ռուսաստանն իր քաղաքական հասարակակարգով հասավ առաջավոր յերկրներին: Բայց դա դեռ քիչ է: Պատերազմն անողոք է, նա հարցը դնում է անխնա սրությամբ, կամ կործանվել, կամ հասնել առաջավոր յերկրներին և նրանցից առաջ անցնել տեխնիկապես և տնտեսապես... կործանվել կամ ամբողջ թափով ու արագությամբ առաջ սլանալ: Հարցն այսպես է դրել պատմությունը»* (*հատ.* 14-*րդ*, *մասն* 2, *եջ* 213):

*Ահա թե ինչպես չեշտակի կերպով Լենինը դրել է մեր տեխնիկական տնտեսական հետամնացության լիկվիդացիայի հարցը:*

*Ընկեր Լենինն այդ բոլորը գրել է Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին, նախքան իշխանությունը պրոլետարիատի ձեռքն անցնելու շրջանում, յերբ բայլշևիկները վոչ իշխանություն ունեյին, վոչ սոցիալիզացիայի յենթարկված արդյունաբերություն, վոչ միլիոնավոր գյուղացիությունն ընդգրկող կոոպերացիայի ծավալուն ցանց, վոչ կոլտնտեսություններ և վոչ*

ել խորհտնտեսությունները: Այժմ, յերբ մենք տեխնիկական-տնտեսական հետամնացությունն արմատապես լիկվիդացիայի յենթարկելու համար մի վորոշ եյական բան ունենք, մենք կարող ենք Լենինի դարձվածքը փոխել մոտավորապես հետևյալ կերպով, «Մենք կապիտալիստական առաջավոր յերկրներին հասել և նրանցից առաջ ենք անցել քաղաքական կողմից՝ կառուցելով պրոլետարիատի դիկտատուրա: Բայց այդ քիչ է: Մենք պիտի ոգտագործենք պրոլետարիատի դիկտատուրան, մեր սոցիալիզացիայի յենթարկած արդյունաբերությունը, տրանսպորտը, վարկային սիստեմը և այլն, կոոպերացիոն կոլտնտեսությունները և այլն նրա համար, վորպեսզի կապիտալիստական յերկրներին տնտեսապես հասնենք և նրանցից էլ առաջ անցնենք»:

Ինդուստրիայի զարգացման արագ տեմպի հարցն այնքան սուր կերպով չեր կանգնի մեր առաջ, ինչպես այժմ կանգնած է, յեթե մենք ունենայինք այնպիսի զարգացած արդյունաբերություն և այնպիսի զարգացած տեխնիկա, ինչպիսին, ասենք ունի Գերմանիան, յեթե ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ ինդուստրիայի տեսակարար կշիռն այնքան բարձր կանգնած լիներ, ինչպիսի բարձրության վրա, որինակ, կանգնած է Գերմանիայում: Այդ դեպքում մենք կարող կլինենք ինդուստրիան ավելի պակաս տեմպով զարգացնել, չվախենալով կապիտալիստական յերկրներից հետ մնալուց և գիտենալով, վոր մենք կարող ենք մի հարվածով նրանցից առաջ անցնել: Սակայն այն ժամանակ մենք չեյինք ունենա այնպիսի լուրջ տեխնիկական-տնտեսական հետամնացություն, ինչպիսին վոր ունենք այժմ: Բայց բանը հենց այն է, վոր այդ կողմից մենք Գերմանիայից հետ ենք մնացել և նրանից դեռ շատ հեռու յենք նրան տեխնիկական-տնտեսական կողմից հասնելու:

Ինդուստրիայի զարգացման արագ տեմպի հարցը մեզ մոտ սուր կերպով չեր դրվի նույնպես և այն դեպքում, յեթե մենք պրոլետարիատի դիկտատուրայի միակ յերկիրը չլինեյինք, այլ մեկը՝ պրոլետարական դիկտատուրայի յերկրներից, յեթե մենք պրոլետարական դիկտատուրա ունենայինք վոչ միայն մեր յերկրում, այլ և մյուս, առաջավոր յերկրներում, որինակ Գերմանիայում կամ Ֆրանսիայում: Այդ դեպքում կապիտալիստական շրջափակումը մեզ համար չեր ներկայացնի այն լուրջ վտանգը, վոր այժմ ներկայացնում է նա, մեր յերկրի տնտեսական ինքնուրույնության հարցը բնականաբար հետին պլանի վրա կանցներ, մենք կարող կլինեյինք ավելի զարգացած պետությունների սիստեմի մեջ մտնել, մենք կարող կլինեյինք նրանց հում նյութեր ու պարենավորման նյութեր մատակարարել և փոխարենը նրանցից մեքենաներ ստանալ մեր արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման համար, հետևաբար մենք կարող կլինեյինք ավելի պակաս տեմպով զարգացնել մեր ինդուստրիան, սակայն մենք դեռ այդ պայմանները չունենք և մենք դեռևս պրոլետարական դիկտատուրայի միակ յերկիրն ենք, շրջապատված կապիտալիստական յերկրներով, վորոնցից շատերը տեխնիկական-տնտեսական կողմից մեզանից շատ առաջ են գտնվում:

Ահա թե ինչու առաջավոր յերկրներին տնտեսապես հասնելու և նրանցից



առաջ անցնելու հարցը ընկ. Լենինը դնում եր վորպես մեր զարգացման կյանքի ու մահի հարց:

Սրանք են արտաքին պայմանները, վորոնք թելադրում են մեզ ինդուստրիայի զարգացման արագ տեմպերը:

ՆԵՐՔԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Սակայն բացի արտաքին պայմաններից կան դեռ ներքին պայմաններ, վորոնք արագ տեմպ են թելադրում մեր ինդուստրիայի, վորպես մեր ամբողջ ժողովրդական տնտեսության վորոշիչ սկզբունքի զարգացմանը: Յես ի նկատի ունեմ մեր յերկրագործության, նրա տեխնիկայի, նրա կուլտուրայի ծայրահեղ հետամնացությունը:

Յես ի նկատի ունեմ այն, վոր մեր յերկրում առկա յե մանր ապրանք արտադրողների գերակշռող մեծամասնությունը՝ իրենց բաժան-բաժան, հետամնաց արտադրությամբ, վորի հետ համեմատած՝ մեր սոցիալիստական խոշոր արդյունաբերությունը նմանում է ծովի մեջ կանգնած մի կղզու, վորի բազան ընդարձակվում է ամեն որ, բայց վորը դեռևս ներկայացնում է իրենից ծովի մեջ կանգնած մի կղզի: Մեզ մոտ սովորաբար ասում են, վոր ինդուստրիան ամբողջ ժողովրդական տնտեսության, նույն թվում նաև գյուղատնտեսության վորոշիչ սկզբունքն է, վոր ինդուստրիան այն բանալին է, վորի ոգնությամբ կարելի յե հետամնաց ու ցաքուցրիվ յերկրագործությունը վերակառուցել կոլեկտիվ հիմունքներով: Այդ միանգամայն ճիշտ է և դրանից վոչ մի րոպե մենք չպիտի նահանջենք: Սակայն պիտի մտաբերել և այն, վոր յեթե ինդուստրիան վորոշիչ սկզբունքն է, ապա գյուղատնտեսությունը ինդուստրիայի զարգացման համար բազա յե ներկայացնում՝ թե վորպես ինդուստրիայի արտադրանքի սպառող շուկա, և թե վորպես հում նյութ և մթերք հայթայթող և թե վորպես արտահանման ռեզերվների աղբյուր, վորոնք անհրաժեշտ են, վորպեսզի ժողովրդական տնտեսության կարիքների համար սարքավորում ներմուծենք: Կարելի՞ յե արդյոք առաջ շարժել ինդուստրիան, թողնելով գյուղատնտեսությունը հետամնաց տեխնիկայի պայմաններում, չապահովելով ինդուստրիայի համար գյուղատնտեսական բազան, չվերակառուցելով գյուղատնտեսությունը և չհարմարեցնելով նրան ինդուստրիային: Վոչ, չի կարելի: Այստեղից էլ առաջանում է խնդիր— ապահովել գյուղատնտեսությունը մաքսիմալ չափի գործիքներով ու արտադրության միջոցներով, վորոնք անհրաժեշտ են նրա համար, վորպեսզի արագացվի ու առաջ շարժվի իրա, գյուղատնտեսության վերակառուցման գործը տեխնիկական նոր հիման վրա: Բայց այդ խնդիրն իրագործելու համար՝ անհրաժեշտ է մեր ինդուստրիայի զարգացման մեջ արագ տեմպ: Ի հարկե բաժան-բաժան ու ցաքուցրիվ գյուղատնտեսության վերակառուցումը անհամեմատ ավելի դժվարին գործ է, քան միավորված ու կենտրոնացած սոցիալիստական արդյունաբերության վերակառուցումը: Սակայն այդ խնդիրը դրված է մեր առաջ և մենք պիտի լուծենք այն: Իսկ լուծել այն չի կարելի այլ կերպ, քան արդյունաբերության զարգացման արագ տեմպի հիման վրա: Չի կարելի անվերջ, այսինքն՝ յերկար ժամանակ խոր-

իրդային իշխանությունը և սոցիալիստական շինարարությունը ՀԻՄՆԵԼ ՅԵՐԿՈՒ ԶԱՆԱԶԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎՐԱ՝ խոշոր ու միացյալ սոցիալիստական արդյունաբերության վրա և իրարից բաժան-բաժան և մանր ապրանքային գյուղացիության տնտեսության վրա:

Պիտի աստիճանաբար, բայց սիստեմատիկ ու համառ կերպով փոխադրել գյուղատնտեսությունը նոր տեխնիկական բազայի վրա, խոշոր արտադրության բազայի վրա, քաշելով նրան դեպի սոցիալիստական արդյունաբերությունը: *Կամ մենք կլուծենք այդ խնդիրը և այն ժամանակ վերջնական հաղթանակն ապահովված է, կամ թե մենք կհեռանանք նրանից, այդ խնդիրը չենք լուծի— և այն ժամանակ անխուսափելի յերևույթ կարող է դառնալ վերադարձը դեպի կապիտալիզմը:*

*Ահա թե ինչ է ասում այդ առթիվ Լենինը:*

*«Քանի դեռ մենք մանր-գյուղացիական յերկրում ենք ապրում, Ռուսաստանում կապիտալիզմի համար ավելի ամուր տնտեսական բազա կա, քան կոմունիզմի համար: Այս բանը անհրաժեշտ է մտաբերել, գյուղի կյանքին ուշադրությամբ հետևող ամեն մեկ իմանում է, վոր, քաղաքի կյանքի համեմատությամբ, մենք կապիտալիզմի արմատները դուրս չենք հանել ու ներքին թշնամու հիմքը չենք քանդել: Վերջինս կանգուն է մնում մանր տնտեսության վրա և նրան քանդելու համար մի միջոց կա, այն է՝ փոխադրել յերկրի տնտեսությունը, նույն թվում նաև յերկրագործությունը, տեխնիկական նոր բազայի վրա, արդի խոշոր արտադրության տեխնիկական բազայի վրա: Այդպիսի բազա հանդիսանում է միայն ելեկտրիֆիկացիան: Կոմունիզմը — դա Խորհրդային իշխանությունն է, պլյուս վողջ յերկրի ելեկտրիֆիկացիան» (հատ. 17-րդ, եջ 427-428):*

*Ինչպես տեսնում ենք, յերկրի ելեկտրիֆիկացիա ասելով Լենինն առանձին ելեկտրոկայանների առանձնացած շինարարություն չի հասկանում, այլ* «յերկրի տնտեսությունը. նույն թվում նաև ՅԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ (ընդգծումն իմն է: Ի. ՍՏ.) աստիճանաբար փոխադրել տեխնիկական նոր բազայի վրա, արդի խոշոր արդյունաբերության տեխնիկական բազայի վրա», *վորն այսպես թե այնպես, ուղղակի և անուղղակի կապված է ելեկտրիֆիկացիայի գործի հետ:*

*Այս ճառն ընկ. Լենինն ասել է 1920 թվի դեկտեմբերին, խորհուրդների 8-րդ համագումարում, յերբ նա այսպես կոչված ելեկտրիֆիկացիայի պլանն եր հիմնավորում, այսինքն՝ ԳՕԵԼՐՕ-ի պլանը: Ընկերներից վոմանք այդ հիման վրա ասում են, վոր Լենինից բերած այս քաղվածքում արտահայտված մտքերն այլևս մեր ներկա իրականության մեջ անգործադրելի յեն: Հարց է դրվում, ինչու: Ասում են նրա համար, վոր այն ժամանակից դեսը շատ տարիներ են անցել, ի հարկե ճիշտ է, վոր այն ժամանակից դեսը շատ տարիներ են անցել: Մենք այժմ ունենք սոցիալիստական զարգացած արդյունաբերություն, մենք ունենք կոլեկտիվ տնտեսություններ վորպես մասսայական յերևույթ, մենք ունենք հին և նոր խորհրդային տնտեսություններ,*



*մենք ունենք զարգացած կոոպերացիայի կազմակերպությունների հարուստ ցանց, մենք ունենք գյուղացիական տնտեսությանը ծառայություն մատուցող վարկատու կետեր, մենք կիրառում ենք այժմ կոնտրակտացիայի մեթոդը վորպես զոդման* (СМЫЧКА) *մի նոր ձև և մենք կարող ենք գործի դնել այդ բոլորը և մի շարք ուրիշ լծակներ, վորպեսզի աստիճանաբար փոխադրենք գյուղատնտեսությունը նոր տեխնիկայի հիմքի վրա: Այս բոլորը ճիշտ է: Բայց ճիշտ է և այն, վոր չնայած այդ բոլորին, մենք շարունակում ենք դեռևս մնալ վորպես մանր գյուղացիական յերկիր, վորտեղ գերակշռում է մանր արտադրությունը: Իսկ սա հիմնականն է: Յեվ քանի վոր մնում է այդ հիմնականը, ապա իր ուժի մեջ է մնում նաև Լենինի այն թեզը, թե՝ «քանի վոր մենք մանր գյուղացիական յերկրում ենք ապրում, կապիտալիզմի համար մեզ մոտ ավելի ամուր տնտեսական բազա կա, քան կոմունիզմի համար», վոր, հետևաբար, կապիտալիզմի վերականգնման վտանգը դատարկ ֆրազա չե:*

*Նույն բանն է ասում Լենինը, բայց ավելի խիստ ձևով. «Պարենհարկի մասին» պլան— բրոշյուրի մեջ, վոր գրել է նա նեպը մտցնելուց հետո արդեն* (1921 *թ. ապրիլ-մայիս*):

*«Յեթե մի 10-20 տարուց հետո իրագործվի ելեկտրիֆիկացիան, ապա մաղաչափ անգամ սարսափելի չե յերկրագործի ինդիվիդուալիզմը և նրա ազատ առևտուրը տեղական շրջանառության մեջ: Յեթե չլինի ելեկտրիֆիկացիան. ապա միևնույն է, անխուսափելի յե վերադարձը դեպի կապիտալիզմը»:*

*Յեվ հետո նույնպես՝*

«10-20 տարի ճիշտ փոխհարաբերություն գյուղացիության հետ, և հաղթությունն ապահոված է համաշխարհային մասշտաբով (նույն իսկ յեթե ձգձգվեն պրոլետարական հեղափոխությունները, վորոնք անում են), այլապես՝ 30-40 տարի սպիտակ-գվարդիական տերրորի տանջանքներ»:

*Ահա թե ինչպես խիստ է դրել հարցը Լենինը. կամ ելեկտրիֆիկացիա, այսինքն յերկրի տնտեսության, նույն թվում նաև յերկրագործության փոխադրություն նոր տեխնիկական բազայի վրա, արդի խոշոր արտադրության տեխնիկական բազայի վրա, կամ վերադարձ դեպի կապիտալիզմ:*[1])

*Մեր շրջանը սովորաբար կոչվում է անցողիկ շրջան՝ կապիտալիզմից դեպի սոցիալիզմ: Այդ շրջանը անցողիկ կոչվել է 1918 թվին, յերբ Լենինը՝ իր «Ձախ» մանկության» մասին նշանավոր հոդվածի մեջ առաջին անգամ բնութագրեց այդ շրջանը տնտեսական կյանքի իր հինգ տնտեսաձևերով: Այդ շրջանը անցողիկ կոչվում է նաև ներկայումս 1930 թվին, յերբ այդ տնտեսաձևերից մի քանիսը վորպես արդեն հնացածներ գնում են դեպի անկում, իսկ այդ տնտեսաձևերից մեկը, այն է՝ նոր տնտեսաձևը արդյունաբերության և գյուղատնտեսության ասպարեզում, աճում և զարգանում է անսահելի արագությամբ: Կարելի յե՞ արդյոք ասել, վոր այս յերկու անցողիկ շրջանները նույն բաներն են, վոր նրանք արմատապես իրարից չեն տարբերվում: Պարզ*

[1]) Ստալին, «Լենինիզմի հարցեր», եջ 509—517

է, որ չի կարելի: Մենք ինչ ունեինք 1918 թվին ժողովրդական տնտեսության ասպարեզում. քայքայված արդյունաբերություն և վառիչներ (зажигалка) կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների վորպես մասսայական յերևույթի բացակայություն, «նոր» բուրժուազիայի աճում քաղաքում և կուլակության աճում գյուղում: Ի՞նչ ունենք մենք այժմ — վերականգնված ու վերակառուցվելիք սոցիալիստական արդյունաբերություն, խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների զարգացած սիստեմ, վորոնք ԽՍՀՄ միայն գարնանացան բոլոր ցանքերից 40 տոկ. ավելին ունեն, մեռնող «նոր» բուրժուազիան քաղաքում, մեռնող կուլակությունը գյուղում: Թե այնտեղ է անցողիկ շրջան և թե այստեղ է անցողիկ շրջան: Յեվ համենայն դեպս նրանք արմատապես տարբերվում են միմյանցից, ինչպես յերկինքն է յերկրից: Յեվ համենայն դեպս վոչ վոք չի կարող բացասել, վոր մենք կանգնած ենք վերջին կապիտալիստական յուրչ դասակարգի, կուլակների դասակարգի լիկվիդացիայի շեմքին: Պարզ է, վոր մենք արդեն դուրս ենք յեկել հին իմաստով անցողիկ շրջանից և մտել ենք վողջ ճակատովը մեկ ուղղակի և ծավալուն սոցիալիստական շինարարության շրջանը: Պարզ է, վոր մենք արդեն մտել ենք սոցիալիզմի շրջանի մեջ, վորովհետև սոցիալիստական սեկտորն այժմ իր ձեռքում է պահում վողջ ժողովրդական տնտեսության բոլոր տնտեսական լծակները, թեպետ և դեռ շատ ժամանակ կա մինչև սոցիալիստական հասարակության կառուցումը և դասակարգային տարբերությունների վոչնչացումը:[1]

## Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՍՏԵՂԾԵԼ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԶԱ

Մենք նվաճել ենք պրոլետարիատի դիկտատուրան և հենց դրանով ստեղծել քաղաքական բազա առաջ ընթանալու դեպի սոցիալիզմ:

Մենք կարող ենք մեր ուժերով ստեղծել սոցիալիզմի տնտեսական բազա, նոր ֆունդամենտ, վոր անհրաժեշտ է սոցիալիզմ կառուցելու համար: Ի՞նչի մեջ է կայանում սոցիալիզմի տնտեսական եյությունն ու տնտեսական բազան: Արդյոք նրա մեջ վոր յերկրի վրա ստեղծենք «յերկնային արքայություն» և ընդհանուր բավականություն: Վո՛չ, դրա մեջ չէ: Դա սոցիալիզմի տնտեսական եյության քաղքենիական հասկացողություն է: Ստեղծել սոցիալիզմի տնտեսական բազա, նշանակում է գյուղացիական տնտեսությունը կապել սոցիալիստական ինդուստրիայի հետ, դարձնել նրան մի միասնական տնտեսություն, գյուղատնտեսությունը յենթարկել սոցիալիստական ինդուստրիայի ղեկավարությանը, հարթել գյուղի և քաղաքի հարաբերությունները ինդուստրիայի և գյուղատնտեսական մթերքների փոխանակության սկզբունքով—փակել ու ծածկել այն բոլոր առուները, վորոնց ոգնությամբ ծնվում են դասակարգերը և ամենից առաջ կապիտալը, վերջ ի վերջո ստեղծել արտա-

1) Ստալին, «Լենինիզմի հարցեր».



դրության և բաշխման այնպիսի պայմաններ, վորոնք տանում են դեպի դասակարգերի ուղիղ, անմիջական վոչնչացումը:

Ահա թե ինչ է ասել այդ մասին Լենինը Նեպին անցնելու շրջանում և յերբ ժողովրդական տնտեսության սոցիալիստական ֆունդամենտ կառուցելու հարցը, իր ամբողջ հասակով ծառացել եր կուսակցության առաջ:

«Հավասար բաժանումը փոխարինել հարկով նրա սկզբունքային նշանակությունը—«ռազմական» կոմունիզմից դեպի ճիշտ սոցիալիստական ֆունդամենտը: Վոչ հավասար բաժանում և վոչ հարկ, այլ խոշոր արդյունաբերական և գյուղատնտեսական մթերքների փոխանակություն, այս է սոցիալիզմի տնտեսական եյությունը, նրա բազան» [1]:

Ահա այսպես է հասկանում Լենինը սոցիալիզմի տնտեսական բազա ստեղծելու հարցը:

Բայց վորպեսզի կարելի լինի գյուղատնտեսությունը կապել համայնացրած ինդուստրիայի հետ, ամենից առաջ անհրաժեշտ է ունենալ մթերքներ բաշխող և կոոպերատիվ որգանների հարուստ ցանց, ինչպես սպառողական, նույնպես և գյուղատնտեսական, արտադրական: Լենինը հենց այդ դրությունից եր յելնում, յերբ իր «Կոոպերացիայի մասին» բրոշյուրում ասում եր, «մեր պայմաններում կոոպերացիան ամենուրեք ամբողջովին զուգադիպում է սոցիալիզմի հետ» (տես հատ. 18–րդ, մաս 2 յերես 144 [2]):

## ԲԱԶԻՍԻ ՅԵՎ ՎԵՐՆԱՇԵՆՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Պատմության մատերիալիստական ըմբռնման համաձայն, պատմության մեջ վորոշիչ մոմենտը վերջին հաշվով արտադրությունը և իսկական կյանքի վերարտադրությունն է: Սրանից ավելի բան չենք հաստատել թե Մարքսը և թե յես: Իսկ յեթե վորևե մեկը փոխում է այս միտքն այն ուղղությամբ, թե տնտեսական մոմենտը միակ վորոշող մոմենտն է, ապա նա դարձնում է այդ հաստատումը վոչինչ չասող, վերացական ու աբսուրդ (անհեթեթ) մի ֆրազա: Տնտեսական դրությունը կազմում է բազիսը, բայց վերնաշենքի զանազան մոմենտները— դասակարգային պայքարի քաղաքական ձևերը և նրա հետևանքները, հայացքները, վորոնց հանդում է հաղթող դասակարգը հաղթությունից հետո և այլն, իրավական ձևերը, նույնիսկ այդ բոլոր իրական ընդհարումների անդրադարձումը մասնակիցների ուղեղում, քաղաքական, իրավաբանական ու փիլիսոփայական թեորիաները, կրոնական հայացքները և նրանց հետագա զարգացումը դոգմատիկ սիստեմների,— այս ամենը ազդեցություն է թողնում պատմական պայքարի ընթացքի վրա և շատ դեպքերում առավելապես վորոշում է նրա ձևը:

Հենց այս բոլոր մոմենտների փոխադարձ ներգործության մեջ վերջ ի վերջո թափանցում է վորպես անհրաժեշտություն տնտեսական շարժումը՝

1) Ленин, т. IV, стр. 372.
2) Ստալին, «Ոպոզիցիայի մասին» — եջ 453—454.

*անվերջ քանակության բոլոր պատահականությունների միջոցով (այսինքն իրերի և դեպքերի, վորոնց ներքին կապն այնպես հեռավոր է և այնպես դժվար ապացուցելի, վոր մենք կարող ենք համարել նրան գոյություն չունեցող և անտես առնել նրան): Հակառակ դեպքում թեորիայի կիրառումը վորևէ պատմական շրջանի վերաբերմամբ շատ ավելի հեշտ կլիներ, քան առաջին աստիճանի պարզ հավասարման լուծումը»:*

Մենք ինքներս ենք անում մեր պատմությունը· սակայն առաջին, միանգամայն վորոշ յենթադրություններով և պայմաններով: Վերջիններից տնտեսականները վերջ ի վերջո վճռական են: Սակայն թե քաղաքական և թե ուրիշ պայմանները, նույնիսկ տրադիցիան ինքը, վորպես մարդկանց գլխում թափառող ուրվական, դեր են խաղում, թեպետ և վոչ վճռական կերպով:

*Պրուսական պետությունը ծագեց և զարգացավ պատմական, վերջին հաշվով տնտեսական պատճառներով: Բայց հազիվ թե վորևէ վոք, չընկնելով բծախնդրության մեջ, կսկսի հաստատել, թե հյուսիսային Գերմանիայի մանր պետություններից հենց Բրանդենբուրգն էր տնտեսական անհրաժեշտությամբ — և վոչ թե այլ մոմենտներով, ուղղված այն բանին, վորպեսզի դառնա առաջնակարգ պետություն, վորի մեջ մարմնացել էին հյուսիսի տնտեսական, լեզվաբանական, իսկ ռեֆորմացիայի ժամանակից սկսած նաև կրոնական հարաբերությունները հարակից (նախ և առաջ այստեղ դեր խաղաց այն կապը, վորը Պրուսիայի տիրապետության շնորհիվ խճճեց նրան Լեհաստանի հետ, իսկ սրա միջոցով նաև ուրիշ միջազգային քաղաքական հարաբերությունների հետ, վորոնք դեր խաղացին նույնպես և ավստրիական հզորության ստեղծման ժամանակ): Հազիվ թե վորևէ մեկին հաջողվի, իրեն ծիծաղելի վիճակում չդնելով, տնտեսական տեսակետով բացատրել յուրաքանչյուր մանր գերմանական պետության տեղափոխության ծագումը, վորն ամբողջ Գերմանիայով անցկացրեց մի իսկական անանցելի սահման, կազմված լեռնային շղթաներով Սուդետներից մինչև Տաունուսը:*[1])

*... Առաջին՝ համաշխարհային իմպերիալիստական պատերազմի հետ կապված է հեղափոխությունը: Այսպիսի հեղափոխության մեջ, հենց պատերազմի առնչությամբ, պետք է արտահայտվեյին նոր գծեր, կամ կերպարանափոխումներ, վորովհետև աշխարհումս յերբեք այսպիսի պատերազմ, այսպիսի պարագայում դեռ չի յեղել: Մինչ այժմ մենք տեսանք, վոր ամենահարուստ յերկրների բուրժուազիան չի կարող այդ պատերազմից հետո կարգավորել «նորմալ» բուրժուական հարաբերությունները, իսկ մեր ռեֆորմիստները, մանր բուրժուաները, վորոնք իրենց հեղափոխականներ են ձևացնում,* սահմանն համարում եյին և համարում են (իսկ նրանց չես անցնի) նորմալ բուրժուական հարաբերությունները, ընդսմին այդ «նորման» հասկանում են ծայրահեղ աստիճանի շաբլոն և նեղ կերպով:

*Յերկրորդ՝ նրանց միանգամայն ոտար է այն միտքը,* թե համաշխարհային ամբողջ պատմության մեջ զարգացած ընդհանուր որինաչափության ժամանակ զարգացման առանձին շերտերն ամենևին չեն բացառվում, այլ ընդհակառակն յենթադրվում են այդ շերտերը, վորոնք պատկերացնում են այդ զարգացման կամ ձևի, կամ կարգի յուրատեսակությունը: *Որինակ, նրանց, մտքովն անգամ չի անցնում, վոր Ռուսաստանը, կանգնած քաղաքակիրթ յերկրների և այս պատերազմով առաջին անգամ վերջնականապես քաղաքակրթության մեջ ներքաշված յերկրների, վողջ Արևելքի, արտայեվրոպական յերկրների սահմանի վրա, վոր* Ռուսաստանն այդ պատճառով կարող էր և պիտի ցուցահաներ մի քանի յուրատեսակություններ, վորոնք ընկած են ի հարկե համաշխարհային զարգացման ընդհանուր գծի վրա, բայց տարբերում են նրա հեղափոխությունը Արևմտյան Յեվրոպական յերկրների բոլոր նախընթաց հեղափոխություններից և մտցնում են մի քանի մասնակի նորություններ արևելյան յերկրներին անցնելու ժամանակ:

*Որինակ, անվերջության չափ շաբլոն է նրանց փաստարկությունը, վորը նրանք անգիր են սովորել Արևմտյան Յեվրոպական սոցիալ-դեմոկրատիայի զարգացման ժամանակ և վորը կայանում է նրանում, թե մենք չենք աճել սոցիալիզմի աստիճանին, թե մենք, ինչպես արտահայտվում են նրանցից զանազան «գիտնական» պարոնները, չունենք ոբյեկտիվ տնտեսական նախադրյալներ սոցիալիզմի համար, և վոչ վոքի մտքովը չի անցնում հարցնելու իրեն, իսկ չի՞ կարող արդյոք մի ժողովուրդ, վոր հանդիպել է հեղափոխական սիտուացիայի, այնպիսին, վորը կազմվեց առաջին իմպերիալիստական պատերազմի ընթացքում, չի՞ կարող արդյոք նա իր անելանելի դրության ազդեցության տակ նետվել այնպիսի պայքարի մեջ, վորն ընձեռի նրան թեկուզ վորևէ շանսեր նվաճելու իրեն ոտերին վոչ ամենևին սովորական պայմաններ հետագա քաղաքակրթության համար:*

*«Ռուսաստանը չի հասել արտադրողական ուժերի զարգացման այնպիսի բարձրության, վորի ժամանակ հնարավոր է սոցիալիզմը»: Այս դրույթն իբրև զարդանկարած տոպրակ Յերկրորդ Ինտերնացիոնալի բոլոր հերոսները և նույն թվում իհարկե նաև Սուխանովը, շալակներն առած ման են գալիս: Այս անվիճելի դրույթը նրանք վորոճում են հազարավոր յեղանակով, իսկ ինձ թվում է, վոր դա մեր հեղափոխության գնահատականի համար վճռական չէ:*

*Դե, հապա ի՞նչ արած, յեթե պարագայի յուրատեսակությունը դրեց Ռուսաստանին առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի մեջ, վորի մեջ խառնված էին բոլոր քիչ թե շատ ազդեցիկ Արևմտյան Յեվրոպական յերկրները, դրեց նրա զարգացումն արևելքի սկսվող և մասամբ արդեն սկսված հեղափոխությունների սահմանի վրա այնպիսի պայմաններում, յերբ մենք կարող եյինք իրագործել բանվորական շարժման հետ «գյուղացիական պատերազմի» հենց այն դաշինքը, վորի մասին վորպես հնարավոր հեռանկարներից մեկի մասին,* 1856 *թվին Պրուսիայի վերաբերմամբ գրել է այնպիսի մի «մարքսիստ», ինչպիսին Մարքսն է:*

[1]) Энгельс, Письма к И. Блоху.

*Հապա ի՞նչ արած, յեթե դրության կատարյալ անելանելիությունը տասնապատկելով ըստ այնմ բանվորների ու գյուղացիների ուժերը, բացեց մեր առաջ այլ հնարավորություն՝* անցնելու քաղաքակրթության հիմնական նախադրյալների ստեղծման գործին, քան այդ կա արևմտյան յեվրոպական մնացած բոլոր պետությունների մեջ: *Փոփոխվե՞ց արդյոք դրանից համաշխարհային պատմության զարգացման ընդհանուր գիծը: Փոփոխվեցի՞ն արդյոք դրանից հիմնական դասակարգերի հիմնական հարաբերությունները յուրաքանչյուր պետության մեջ, վորը ներգրավվում և ներգրավված է համաշխարհային պատմության ընդհանուր ընթացքի մեջ:*

Յեթե սոցիալիզմ ստեղծելու համար պահանջվում է կուլտուրայի վորոշ մակարդակ (թեպետ և վոչ վոք չի կարող ասել — թե վորպիսին է այդ վորոշ «կուլտուրայի մակարդակը»), ապա ինչու չի կարելի, վորպեսզի մենք ըսկըսենք հեղափոխական միջոցով նախ նվաճել այդ վորոշ մակարդակի համար նախադրյալները, իսկ հետո արդեն, բանվորա- գյուղացիական իշխանության և խորհրդային կարգի հիման վրա, առաջ շարժվել հասնելու ուրիշ ժողովուրդներին:

*Սոցիալիզմի ստեղծման համար,— ասում եք դուք,— պահանջվում է քաղաքակրթություն: Շատ լավ: Դե, հապա ինչո՞ւ մենք չենք կարող նախ ստեղծել մեզ մոտ քաղաքակրթության այնպիսի նախադրյալներ, ինչպիսին է կալվածատերերի վռնդումը և ռուսական կապիտալիստների վռնդումը, իսկ հետո արդեն սկսել շարժվել դեպի սոցիալիզմ: Վո՞ր գրքերում եք դուք կարդացել, վոր սովորական պատմական շրջանի նման կերպարանափոխությունները անթույլատրելի յեն կամ անհնարին:*

*Հիշում եմ, Նապոլեոնը գրել է. «Նախ պիտի լուրջ ճակատամարտի մեջ մտնել, իսկ հետո արդեն կտեսնենք»: Ահա և մենք նախ՝* 1917 *թ. հոկտեմբերին լուրջ ճակատամարտի մեջ մտանք, իսկ հետո արդեն տեսանք զարգացման այնպիսի մանրամասնություններ (համաշխարհային պատմության տեսակետից դա անկասկած մանրամասնություններ են), ինչպիսին է Բրեստի խաղաղությունը. կամ նեպը և այլն: Յեվ ներկայումս արդեն կասկածներ չկան, վոր հիմնականում մենք հաղթանակ ենք տարել:*

*Մեր Սուխանովների մտքովն անգամ չի անցնում, չխոսելով արդեն նրանցից ավելի աջ կանգնած սոցիալ-դեմոկրատների մասին, վոր հեղափոխությունները ընդհանրապես այլ կերպ ել չեն կարող կատարվել: Մեր յեվրոպական քաղքենիների մտքովն անգամ չի անցնում, վոր հետագա հեղափոխությունները՝ ազգաբնակչությամբ անչափ շատ հարուստ և սոցիալական պայմանների անչափ շատ բազմազանությամբ տարբերվող Արևելքի յերկրներում՝ նրանց անկասկած կմատուցեն ավելի յուրատեսակություններ, քան ռուսական հեղափոխությունը:*

*Խոսք չկա, վոր ըստ Կաուցկու գրած դասագրքերն իր ժամանակի համար ոգտակար մի բան եյին, բայց ժամանակն է արդեն հրաժարվել այն*



*մտքից, վոր իբր թե այդ դասագրքերը նախատեսել են հետագա համաշխարհային պատմության զարգացման բոլոր ձևերը: Նրանց, ովքեր այսպես են մտածում, ժամանակին կլիներ, յեթե հայտարարեյինք պարզապես հիմարներ:*[1])

## ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

*Քաղաքատնտեսությունը, վորն իսկական գիտություն է դառնում միայն մանուֆակտուրային շրջանում, քննում է, ընդհանրապես ասած, աշխատանքի հասարակական բաժանումը միայն աշխատանքի մանուֆակտուրային բաժանման տեսակետից, այսինքն՝ իբրև միջոց աշխատանքի նույն քանակությամբ ավելի ապրանք արտադրելու, հետևաբար, եժանացնելու ապրանքներն ու արագացնելու կապիտալի կուտակումը: Իբրև հակադրություն գործի քանակային կողմի և փոխանակային արժեքի այդ ընդգծմանը, հնության կլասիկ գրողներն ուշադրություն են դարձնում* բացառապես վորակական կողմի և սպառողական արժեքի վրա: *Արտադրության հասարակական ճյուղերի բաժանման հետևանքով՝ ապրանքները պատրաստվում են ավելի լավ, մարդկանց տարբեր հակումներն ու տաղանդները հնարավորություն են ստանում իրենց համար արտահայտման պատշաճ վոլորտներ գտնելու.* իսկ առանց գործունեյության վոլորտը սահմանափակելու, չի կարելի վո՛չ մի ասպարեզում վորևե աչքի ընկնող գործ կատարել: *Թե՛ արդյունքը և թե՛ այն արտադրողը կատարելագործվում են աշխատանքի բաժանման միջոցով: Յեթե կլասիկ հեղինակները յերբեմն հիշատակում ել են արտադրած արդյունքների մասսայի աճման մասին, ապա նրանց այդ դեպքում հետաքրքրում է լոկ սպառողական արժեքների առատությունը: Վո՛չ մի տող չի նվիրված փոխանակային արժեքին, ապրանքների եժանացմանը* [2]):

Քաղաքատնտեսությունը, բառի լայն իմաստով, գիտություն է այն օրենքների մասին, վորոնք կարգավորում են նյութական-կենսական բարիքների արտադրությունն ու փոխանակությունը մարդկային հասարակությունների մեջ: Արտադրությունն ու փոխանակությունը յերկու տարբեր ֆունկցիաներ են: Արտադրությունը կարող է տեղի ունենալ առանց փոխանակության, *իսկ փոխանակությունը՝ հենց այն պատճառով, վոր նա ամենից առաջ արդյունքների փոխանակություն է, ակներև է, վոր չի կարող* յոլա գնալ առանց այդ արդյունքների արտադրության: *Այդ յերկու հասարակական ֆունկցիաներից յուրաքանչյուրը գտնվում է, մեծ մասամբ, առանձին արտաքին ներգործությունների ազդեցության տակ, ուստի թե՛ այս և թե՛ այն մեծ մասամբ յենթարկվում են իրենց առանձին,* հատուկ օրենքներին: *Բայց, մյուս կողմից, այդ ֆունկցիաները յուրաքանչյուր տվյալ մոմենտում պայ-*

[1]) Ленин, т. XVIII, ч. II, стр. 118—120

[2]) Капитал, т. I, стр. 344—345.

*մանավորում են միմյանց և այն չափով են ներգործում միմյանց վրա, վոր նրանց կարելի յեր անվանել տնտեսական կորագծի արտացոլումն ու արդյունքը···*

Քաղաքատնտեսությունն—իբրև գիտություն արդյունքների արտադրության և փոխանակության պայմանների և ձևերի մասին տարբեր մարդկային հասարակությունների մեջ, և իբրև գիտություն այդ արդյունքների բաշխման համապատասխան յեղանակների մասին,—այդպիսի քաղաքատնտեսությունը, բառիս լայն իմաստով, դեռ պետք է ստեղծվի: *Այն, ինչ վոր ներկայումս ունենք մեզ տնտեսագիտությունը, սահմանափակվում է համարյա* բացառապես արտադրության կապիտալիստական յեղանակի գենեզիսով ու զարգացումով. նա սկսում է արտադրության և փոխանակության փեոդալական ձևերի մնացորդների քննադատությունից, մատնանշում է նրանց՝ կապիտալիստական ձևերով փոխարինելու անհրաժեշտությունը, ապա զարգացնում է արտադրության կապիտալիստական յեղանակի և նրան համապատասխանող փոխանակության ձևերի օրենքները դրական կողմից, այսինքն՝ վորչափով վոր նրանք համապատասխանում են ամբողջ հասարակության շահերին, և վերջացնում է արտադրության կապիտալիստական յեղանակի սոցիալիստական քննադատությամբ, այսինքն՝ նրա օրենքների շարադրությամբ բացասական կողմից, մատնանշելով այն, վոր արտադրության այդ յեղանակը, իր սեփական զարգացման ուղիով ձգտում է այն կետին, վորտեղ նա ինքն անկարելի յե դառնում: *Այդ քննադատությունն ապացուցում է, վոր* արտադրության և փոխանակության կապիտալիստական ձևերն ավելի և ավելի ձեռք են բերում անտանելի կապանքների բնույթ հենց արտադրության իրեն համար, վոր բաշխման՝ այդ ձևերով անհրաժեշտորեն պայմանավորված յեղանակն ստեղծեց դասակարգային հարաբերությունների շարունակաբար աճող անհաշտելիություն, ամեն օր սրվող հակասություն սակավաթիվ ավելի և ավելի հարստացող կապիտալիստների և բազմաթիվ, ընդհանուր առմամբ շարունակ ավելի և ավելի վատ ապահովված, չքավոր վարձու բանվորների միջև. և, վերջապես, վոր արտադրության կապիտալիստական յեղանակի սահմաններում ստեղծված մասսայական արտադրողական ուժերը, վոր նրա կողմից չեն կարող ռացիոնալ կերպով օգտագործվել, միայն սպասում են պլանաչափ միատեղ աշխատանքի համար կազմակերպված հասարակության իշխանության ներքո անցնելուն, վորպեսզի հասարակության բոլոր անդամների համար ապահովեն գոյության և իրենց ընդունակությունները ազատ կերպով զարգացնելու միջոցներ, այն էլ՝ ավելի և ավելի աճող չափերով:

*Բուրժուական տնտեսության այդ քննադատությունը լիովին ավարտելու համար բավական չեր ծանոթությունն արտադրության, փոխանակության և բաշխման կապիտալիստական ձևի հետ: Պետք եր նաև, թեկուզ* ընդհանուր գծերով հետազոտել և համեմատության բերել նախորդող կամ նրա հետ միասին գոյություն ունեցող ձևերն ավելի պակաս զարգացած յերկիրներում: *Այդպիսի հետազոտություն և համեմատություն ընդհանուր գծերով գտնվում է առայժմ միայն Մարքսի աշխատություններում, և այդ պատճառով էլ մենք*



*բացառապես նրան ենք պարտական, ինչ վոր մինչև այժմ արված է նախաբուրժուական թեորետիկական եկոնոմիկայի հիմնական սկզբունքների պարզաբանման համար:*

Քաղաքատնտեսությունը, բառի ավելի նեղ իմաստով, թեև ծագել է մոտավորապես XVII դարի վերջին առանձին հանճարեղ անհատների շնորհիվ, բայց նրա դրական ձևակերպումը նշանակություն ստացավ միայն ֆիզիոկրատների և Ա. Սմիթի յերկերում, և առհասարակ, ըստ եյության, նա հանդիսանում է XVIII դարի զավակ, սերտորեն հարելով ֆրանսիական մեծ լուսավորիչների հայտնագործությունների դարաշրջանին, կրելով իր վրա նրա բոլոր արժանիքների և թերությունների հետքերը: *Այն, ինչ վոր ասված է վերևում այդ դարաշրջանի լուսավորիչների մասին, գործադրելի յե նաև նրան ժամանակակից տնտեսագետների վերաբերմամբ: Նրանց համար նոր տնտեսագիտությունը դարաշրջանի հարաբերությունների և կարիքների արտահայտությունը չեր, այլ հավիտենական բանականության հայտնությունը. արտադրության և փոխանակության նրա կողմից գտած օրենքները տնտեսական գործունեության պատմականորեն վորոշ ձևի օրենքները չեյին, այլ հավիտենական բնական օրենքներ. այդ օրենքները նրանք բխեցնում եյին մարդու բնությունից: Սակայն ուշադիր կերպով քննարկելիս՝ դուրս է գալիս, վոր այդ «մարդը» պարզապես այն ժամանակվա բյուրգերն եր, վոր բուրժուայի յեր փոխարկվել, իսկ նրա «բնության» եյությունն այն եր միայն, վոր նա արդյունքներն արտադրում եր գործարանային յեղանակով և առևտուր եր անում այն ժամանակ տիրապետող պատմականորեն վորոշ հարաբերությունների հողի վրա...»*[1]):

«Քաղաքատնտեսության ձեռնարկի խնդիրն այն է, վորպեսզի այդ գիտությունն ուսումնասիրողին հիմնական հասկացողություններ տա հասարակական տնտեսության զանազան սիստեմների մասին և յուրաքանչյուր սիստեմի գծերի մասին» [2]):

*Պարզ բան է, վոր Մարքսի* հիմնական գաղափարը հասարակական-տնտեսական ֆորմացիաների զարգացման բնապատմական պրոցեսի մասին՝ *արմատախիլ է անում այդ մանկամիտ բարոյախոսությունը, վոր սոցիոլոգիա անունը կրելու հավակնություն ունի: Իսկ ինչպե՞ս է մշակել Մարքսն այս հիմնական գաղափարը: Նա այս* արել է հասարակական կյանքի զանազան բնագավառներից զատելով տնտեսական բնագավառը, հասարակական բոլոր հարաբերություններից զատելով «արտադրական հարաբերությունները», իբրև հիմնական, սկզբնական հարաբերություններ, վորոնք վորոշում են բոլոր այլ հարաբերությունները [3]):

«Քաղաքատնտեսությունն զբաղվում է ամենևին վոչ «արտադրությամբ», այլ մարդկանց հասարակական հարաբերություններով արտադրության մեջ,

[1]) Энгельс, «Анти Дюринг», изд. 1928 г., стр. 135—140.
[2]) Ленин, т. XX, ч I.
[3]) Ленин, т. I, стр. 69.

ըստ արտադրության հասարակակարգի: *Քանի վոր այդ* հասարակական հարաբերությունները մինչև վերջը պարզաբանված են և վերլուծված,—հենց դրանով էլ վորոշված է նաև յուրաքանչյուր դասակարգի տեղն արտադրության մեջ, հետևաբար և ազգային սպառման նրանց ստացվող բաժինը [1]:

«Նրա առարկան (*քաղաքատնտեսութ. կարմ.*) ամենևին «նյութական արժեքների (ценность) արտադրությունը չէ, ինչպես հաճախ ասում են (այդ տեխնոլոգիայի առարկան է), այլ մարդկանց հասարակական հարաբերությունները արտադրության մեջ...[2]):

«Տվյալ, պատմականորեն վորոշ հասարակության արտադրական հարաբերությունների հետազոտությունը նրանց ծագման, զարգացման և անկման ընթացքում—այս է Մարքսի տնտեսական ուսմունքի բովանդակությունը»[3]):

| *ԲՈՒԽԱՐԻՆ* | *ԼԵՆԻՆ* |
|---|---|
| . . . . . . . . . . . . . | Ցերկու անհրաժեշտություն. |
| (7) *Թեորիական քաղաքատնտեսությունը մի գիտություն է սոցիալական տնտեսության մասին, վոր հիմնված է* ապրանքների *արտադրության վրա, այսինքն՝ գիտություն* անկազմակերպ *սոցիալական տնտեսության մասին... Մարքսը... ապրանքային ֆետիշիզմի մասին՝ իր ուսմունքի մեջ տվեց թեորիական եկոնոմիկայի փայլուն սոցիոլոգիական ներածությունը... Ինչպես, հենց վոր մենք վերցնում ենք կազմակերպված հասարակական տնտեսությունը, անհետանում են քաղաքատնտեսության բոլոր հիմնական «պրոբլեմները»...* | 1) վորոշումը մի քայլ է դեպի հետ, եՆգելսի համեմատությամբ. 2) Ապրանքային արտադրությունը նույնպես «կազմակերպված» տնտեսություն է: |
| (8) *...Այդպիսով, կապիտալիստական-ապրանքային հասարակության վերջը կլինի նաև քաղաքատնտեսության վերջը:* | ճիշտ չէ. մինչեվ անգամ մաքուր կոմմունիզմի մեջ թեկուզ I v + m-ի *հարաբերությունը* IIc-*ի նկատմա՞մբ և կուտակո՞ւմը:* |
| *Այդպես ուրեմն, քաղաքատնտեսությունն ուսումնասիրում է* ապրանքային *տնտեսությունը:*[4]) | վոչ միայն! |

Քաղաքատնտեսությունն իր բուն էությամբ — պատմական գիտություն է: Նա գործ ունի պատմական, այսինքն՝ անընդհատ փոփոխվող նյութի հետ: *Նա ամենից առաջ հետազոտում է արտադրության և փոխանակության զարգացման յուրաքանչյուր առանձին աստիճանի հատուկ օրենքները և միայն այդ հետազոտության վերջում կարող է հաստատել սակավաթիվ, արտադրության և փոխանակության վերաբերմամբ գործադրություն ունեցող, միանգամայն ընդհանուր օրենքներ: Ըստ վորում, ինքնըստինքյան հասկանալի յե, վոր արտադրության և փոխանակության վորոշ յեղանակների հա-*

1) Ленин, т. III, стр. 35.
2) Ленин т. II.
3) Ленин, т. XII, ч. 2
4) Ленинск. сборник, XI, стр. 349



*մար ուժ ունեցող օրենքները կարող են նշանակություն ունենալ այն բոլոր պատմական ժամանակաշրջանների համար, վորոնց մեջ տիրապետում են արտադրության և փոխանակության հատկապես այդ յեղանակները: Այդպես, օրինակ, մետաղի դրամներ մտցնելու հետ մեկտեղ՝ մի շարք օրենքներ են գործի դրվում, վորոնք ուժ ունեն այն բոլոր յերկիրների և պատմական ժամանակաշրջանների համար, վորոնց մեջ մետաղի դրամները փոխանակության մեջ են մտնում:*[1])

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻ ՄԱՍԻՆ

Ի հակադրություն Հեգելին և մյուս հեգելականներին, Մարքսն ու Ենգելսը մատերիալիստ եյին: *Մատերիալիստորեն նայելով աշխարհի և մարդկության վրա, նրանք տեսան, վոր* ինչպես բնության բոլոր յերևույթների հիմքում նյութական պատճառներ են ընկած, այնպես էլ մարդկային հասարակության զարգացումը պայմանավորվում է նյութական, արտադրողական ուժերի զարգացումով: Արտադրողական ուժերի զարգացումից են կախված այն հարաբերությունները, վորոնց մեջ են մտնում մարդիկ միմյանց հանդեպ՝ մարդկային պահանջները բավարարելու համար անհրաժեշտ առարկաները արտադրելու ժամանակ: Ցեվ այդ հարաբերությունների մեջ է— հասարակական կյանքի բոլոր յերևույթների, մարդկային ձգտումների, գաղափարների և օրենքների բացատրությունը:

Արտադրողական ուժերի զարգացումը հասարակական հարաբերություններ է ստեղծում, վորոնք հենվում են մասնավոր սեփականատիրության վրա, բայց մենք այժմ տեսնում ենք, թե ինչպես արտադրողական ուժերի միևնույն զարգացումը խլում է սեփականությունը մեծամասնությունից և կենտրոնացնում այն չնչին փոքրամասնության ձեռքում: Նա վոչնչացնում է սեփականությունը, արդի հասարակակարգի հիմքը. նա հենց ինքն էլ նույն նպատակին է ձգտում, վոր դրել են իրենց առաջ սոցիալիստները:[2])

*Մարքսը ճանապարհ ցույց տվեց դեպի* հասարակական-տնտեսական ֆորմացիաների ծագման, զարգացման և անկման պրոցեսի *համապարփակ, ամենակողմանի ուսումնասիրությունը, քննարկելով բոլոր* հակասական տենդենցների, հավաքականությունը, հանգեցնելով նրանց հասարակության տարբեր դասակարգերի կյանքի և արտադրության ճիշտ կերպով վորոշելի պայմաններին, *վերացնելով սուբյեկտիվիզմն ու կամայականությունն առանձին «գլխավորող» գաղափարների ընտրության կամ նրանց բացատրության մեջ, բաց անելով* առանց բացառության բոլոր գաղափարների ու բոլոր տարբեր տենդենցների արմատները նյութական արտադրողական ուժերի դրության մեջ: Մարդիկ իրենք են ստեղծում իրենց պատմությունը. *բայց ինչով են վո-*

1) Энгельс, «Анти Дюринг», стр. 136
2) Ленин, Собр. соч. т. XX, доп. ч. I, стр. 5

րոշվում մարդկանց և հատկապես մարդկանց զանգվածների մոտիվները, ինչից են առաջանում հակասական գաղափարների և ձգտումների ընդհարումները, վո՞րն է մարդկային հասարակությունների ամբողջ մասսայի այդ բոլոր ընդհարումների ամբողջական գումարը, վորո՞նք են նյութական կյանքի արտադրության օբյեկտիվ պայմանները, վորոնք հիմք են ստեղծում մարդկանց ամբողջ պատմական գործունեության համար, վո՞րն է այդ պայմանների զարգացման օրենքը,—այդ բոլորի վրա ուշադրություն է դարձրել Մարքսը և ճանապարհ ցույց տվել դեպի պատմության գիտական ուսումնասիրությունը, վորը մի միասնական օրինաչափ պրոցես է՝ իր ամբողջ հսկայական բազմակողմանիության և հակասականության մեջ:

Վոր յուրաքանչյուր հասարակության մեջ անդամների մի մասի ձգտումները ներհակ են ընթանում նրա մյուս անդամների ձգտումներին, վոր հասարակական կյանքը լի յե հակասություններով, վոր պատմությունը մեզ ցույց է տալիս կռիվ ժողովուրդների և հասարակությունների միջև, ինչպես նաև նրանց ներսում, իսկ բացի դրանից, դեռ խաղաղության ու պատերազմների, հեղափոխության ու ռեակցիայի, լճացման և արագ առաջադիմության կամ անկման ժամանակաշրջանների հերթափոխություն,—այդ իրողությունները հանրածանոթ են: Մարքսը տվել է ղեկավարող ուղղությունը, վոր թույլ է տալիս այդ թվացող լաբիրինթոսի և քաոսի մեջ հայտնագործել օրինաչափությունը, այն է՝ դասակարգային կռվի օրինաչափությունը: Միայն տվյալ հասարակության բոլոր անդամների կամ հասարակությունների խմբի ձգտումների ամբողջ գումարի ուսումնասիրությունը կարող է այդ ձգտումների հետևանքը գիտական վորոշմանը հասցնել:¹)

Մարքսը «վերցնում է հասարակական-տնտեսական ֆորմացիաներից մեկը — ապրանքային տնտեսության սիստեմը — և հսկայական քանակությամբ տվյալների հիման վրա (վոր նա ուսումնասիրել է վոչ պակաս, քան 25 տարի) տալիս է այս ֆորմացիայի գործունեության և զարգացման օրենքների ամենամանրամասն վերլուծությունը: Այս վերլուծությունը սահմանափակված է հասարակության անդամների միջև գոյություն ունեցող միմիայն արտադրական հարաբերություններով. գործի բացատրության համար վոչ մի անգամ չդիմելով այդ արտադրական հարաբերություններից դուրս գտնվող վորևե մոմենտի՝ Մարքսը հնարավորություն է տալիս տեսնելու, թե ինչպես է զարգանում հասարակական տնտեսության ապրանքային կազմակերպությունը, ինչպես է այն փոխակերպվում կապիտալիստականի, ստեղծելով բուրժուազիայի և պրոլետարիատի հակամարտ դասակարգերը (արդեն արտադրական հարաբերությունների սահմաններում), թե ինչպես է այն զարգացնում հասարակական աշխատանքի արտադրողականությունը և դրանով իսկ այնպիսի տարր մացնում, վոր անհաշտ հակասության մեջ է մտնում հենց այդ կապիտալիստական կազմակերպության հիմքերի հետ:

Այս է «Կապիտալի» «կմախքը»: Բանն այն է, սակայն, վոր Մարքսը

1) Ленин, собр. соч., т. XII, ч. II, стр. 325—326.



չբավարարվեց այս կմախքով, վոր նա չսահմանափակվեց սոսկ «տնտեսական թեորիայով», բառիս սովորական իմաստով, վոր տվյալ հասարակական ֆորմացիայի կազմությունն ու զարգացումը «բացատրելով» արտադրական հարաբերություններով «բացատրելով», նա, այնուամենայնիվ, ամենուրեք և մշտապես հետախուզում եր այդ արտադրական հարաբերություններին համապատասխանող վերնաշենքերը, միս ու արյուն իր տալիս կմախքին: «Կապիտալը» հենց այն պատճառով ունեցավ այնպիսի հսկայական հաջողություն, վոր «գերմանացի տնտեսագետի» այս գիրքը կենդանի կերպով ցույց տվեց ընթերցողին ամբողջ կապիտալիստական հասարակական ֆորմացիան իր կենցաղային կողմերով, արտադրական հարաբերություններին հատուկ՝ դասակարգերի հակամարտության փաստական սոցիալական արտահայտությամբ, կապիտալիստների դասակարգի տիրապետությունը պաշտպանող բուրժուական քաղաքական վերնաշենքով, ազատության, հավասարության և այլ բուրժուական գաղափարներով, բուրժուական ընտանեկան հարաբերություններով:¹)

## ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

... Տիրապետող դասակարգի մտքերը յուրաքանչյուր դարաշրջանում հանդիսանում են տիրապետող մտքեր, այսինքն՝ այն դասակարգը, վոր հանդիսանում է հասարակության տիրապետող նյութական ուժը, միևնույն ժամանակ հանդիսանում է նրա տիրապետող հոգևոր ուժը: Այն դասակարգը, վոր կարող է տնորինել նյութական արտադրության միջոցները, միևնույն ժամանակ դրա շնորհիվ տնորինում է հոգևոր արտադրության միջոցները, այնպես վոր, դրա շնորհիվ նա միևնույն ժամանակ ընդհանուր առմամբ տիրապետում է նրանց մտքերի վրա, վորոնք միջոցներ չունեն հոգևոր արտադրության համար: Տիրապետող մտքերը վոչ այլ ինչ են ներկայացնում, բայց յեթե տիրապետող նյութական հարաբերությունների իդեալական արտահայտություն, նրանք ներկայացնում են մտքերի ձևով արտահայտված տիրապետող նյութական հարաբերությունները, այսինքն՝ այն հարաբերությունները, վորոնք հենց վորևե դասակարգ տիրապետող են դարձնում, այսինքն՝ ներկայացնում են նրա տիրապետության մտքերը:²)

Քաղաքատնտեսության բնագավառում ազատ գիտական հետազոտությունն հանդիպում է վոչ միայն այն թշնամիներին, վորոնց հետ նա գործ ունի այլ բնագավառներում: Մշակվող նյութի հենց բնույթի համաձայն՝ քաղաքատնտեսությունն իր վերաբերմամբ առաջ է բերում մարդկային ատելության ամենակատաղի, ամենամանր, ամենաանհաշտ արտահայտությունները, նա զարթեցնում է մասնավոր շահի ֆուրիաներին: Այսպես, բարձր անգլիկան յեկեղեցին ավելի շուտ կների հարձակումն իր հավատո հանգանակի

1) Ленин, т. I, стр. 72

2) Маркс-Энгельс, «Архив», I, стр. 230

39 կետերից 38–ի վրա, քան թե հարձակումն իր դրամական յեկամտի $^1/_{39}$–ի վրա: Մեր որերում աթեյիզմն ինքն ամենափոքր հանցանք ե, համեմատած սեփականության ավանդական հարաբերությունների քննադատության հետ: Սակայն այստեղ ել առաջադիմությունը կասկածի յենթակա չե:[1]

Մեր պրոֆեսիոնալ գիտնականների վերաբերմամբ ճակատագիրն առաջվա նման անողորմ ե մնում: Այն ժամանակ, յերբ նրանք կարող եյին անաչառություն յերևան բերել քաղաքատնտեսությամբ զբաղվելիս, գերմանական իրականության մեջ բացակայում եյին արդի տնտեսական հարաբերությունները: Յերբ այդ հարաբերություններն ստեղծվեցին, այդ բանը տեղի ունեցավ այնպիսի պայմաններում, վորոնք արդեն բացառում են առարկայի անաչառ ուսումնասիրության հնարավորությունը բուրժուական հորիզոնի շրջանակներում: Վորչափով քաղաքատնտեսությունը բուրժուական ե հանդիսանում, այսինքն՝ վորչափով նա կապիտալիստական հասարակակարգը դիտում ե վոչ իբրև զարգացման պատմականորեն անցողիկ աստիճան, այլ, ընդհակառակը, իբրև հասարակական արտադրության բացարձակ, վերջնական ձև, նա կարող ե գիտական մնալ մինչև այն ժամանակ, քանի դասակարգային կռիվը բաց դրության մեջ ե գտնվում կամ յերևան ե գալիս միայն յեզակի արտահայտություններով:

Վերցնենք Անգլիան: Նրա կլասիկ քաղաքատնտեսությունը վերաբերում ե անզարգացած դասակարգային կռվի շրջանին: Անգլիական կլասիկ տնտեսագիտության վերջին մեծ ներկայացուցիչը, Ռիկարդոն, իբրև իր հետազոտության յելակետ գիտակցաբար վերցնում ե դասակարգային շահերի, աշխատավարձի և շահույթի, շահույթի և հողային ռենտայի հակադրությունը, միամտությամբ այդ հակադրությունը դիտելով իբրև հասարակական կյանքի բնական որենք:[2]

Հեղափոխական մտքերի գոյությունը վորոշ դարաշրջանում յենթադրում ե արդեն հեղափոխական դասակարգի գոյությունը:[3]

... Գործնական մատերիալիստի համար, այսինքն՝ կոմունիստի համար գործն այն ե, վոր հեղափոխի գոյություն ունեցող աշխարհը, վոր գործնականորեն դուրս գա իրերի դեմ, ինչպես վոր գտնի նրանց, և փոխի նրանց[4]:

## ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Յեթե մենք հիմք ունենք հպարտանալու սոցիալիստական շինարարության գործնական հաջողություններով, ապա չի կարելի միևնույն բանն ասել մեր թեորիական աշխատանքի հաջողությունների մասին ընդհանրապես եկոնոմիկայի բնագավառում և մասնավորապես գյուղատնտեսության բնագավառում: Դեռ ավելին. պետք ե ընդունել, վոր մեր գործնական հաջողությունների հետևից թեորիական միտքը չի հասնում, վոր մենք վորոշ ճեղքվածք ունենք գործնական հաջողությունների և թեորիական մտքի զարգացման միջև: Մինչդեռ անհրաժեշտ ե, վորպեսզի թեորեական աշխատանքը վո՛չ միայն հասնի գործնականի հետևից, այլև նրանից առաջ անցնի, զինելով մեր պրակտիկներին սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարում:

1) Капитал I, стр. 38.

2) Նույն տեղը, եջ 22—23

3) Маркс-Энгельс. «Архив» I, стр. 231.

4) Նույն տեղը, եջ 217



Յես այստեղ մանրամասն կանգ չեմ առնի թեորիայի նշանակության վրա: Այն ձեզ բավական լավ ծանոթ ե: Հայտնի յե, վոր թեորիան, յեթե նա իսկական թեորիա յե, պրակտիկներին տալիս ե կողմնորոշման ուժ, հեռանկարի պարզություն, վստահություն աշխատանքի մեջ, հավատ մեր գործի հաղթանակի վերաբերմամբ: Այդ բոլորն ունի — և չի կարող չունենալ — հսկայական նշանակություն մեր սոցիալիստական շինարարության գործում: Դժբախտությունը նրանում ե, վոր մենք սկսում ենք կաղալ հենց այդ բնագավառում, մեր եկոնոմիկայի հարցերի թեորիական մշակման բնագավառում: Ուրիշ ի՞նչ կերպ բացատրել այն փաստը, վոր մեզ մոտ, մեր հասարակական–քաղաքական կյանքում, դեռևս ելի տարածված են մեր եկոնոմիկայի հարցերին վերաբերող զանազան բուրժուական և մանր–բուրժուական թեորիաներ: Ինչո՞վ բացատրել, վոր այդ թեորիաներն ու թեորիկները մինչև այժմ պետք յեղած դիմադրության չեն հանդիպում: Ել ինչո՞վ բացատրել, վոր մարքսիստական–լենինյան քաղաքատնտեսության մի շարք հիմնական դրույթները, վորոնք ամենալավ հակաթույնն են հանդիսանում բուրժուական և մանր–բուրժուական թեորիաների դեմ, սկսում են մոռացվել, չեն մասսայականացվում մեր մամուլի մեջ, չգիտես ինչու առաջին պլանը չեն մղվում: Մի՞թե դժվար ե հասկանալ, վոր առանց մարքսիստական–լենինյան թեորիայի հիման վրա անհաշտ կռիվ մղելու բուրժուական թեորիաների հետ, անկարելի յե լիակատար հաղթանակ ձեռք բերել դասակարգային թշնամիների դեմ:

Նոր պրակտիկան նոր մոտեցում ե առաջ բերում դեպի անցման շրջանի եկոնոմիկայի պրոբլեմները: Այժմ նոր ձևով են դրվում նեպի, դասակարգերի, շինարարության տեմպերի, զոդման և կուսակցության քաղաքականության հարցերը: Պրակտիկայից հետ չընկնելու համար այժմ անթ պետք ե զբաղվել այդ բոլոր պրոբլեմների մշակումով նոր հանգամանքների տեսակետից: Առանց դրան անկարելի յե հաղթահարել բուրժուական թեորիաները, վորոնք աղտոտում են մեր պրակտիկների գլուխները: Առանց դրան անկարելի յե արմատախիլ անել այդ թեորիաները, վորոնք նախապաշարմունքների կայունություն են ձեռք բերել: Վորովհետև մարքսիզմ–լենինիզմի դրույթների ամրապնդմանը կարելի յե հասնել միմիայն թեորիայի մեջ բուրժուական նախապաշարմունքների դեմ կռիվ մղելով[1]:

1) Сталин, «Вопросы ленинизма», стр. 613—614, изд. 1931 г.

# ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՑԵՂԱԾ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Սոցիալական և տեխնիկական վերակառուցման հեղափոխական պրոցեսները, վորոնք խորը և լայնորեն թափանցում են հասարակական կյանքի բոլոր կողմերը, կոլեկտիվացման բուռն տեմպը, սոցիալիստական մրցումը — նոր հասարակակարգ ստեղծելու այդ պրոցեսը, յուրաքանչյուր քայլափոխում առաջադրում է նոր պրոբլեմներ, նոր հրատապ հարցեր, վորոնց ճիշտ լուծումը պահանջում է տեսական խորացրած աշխատանք։

Այնինչ, վոչ մի տեղ չկա այնպիսի հետամնացություն կյանքի տեմպից, ինչպես սոցիալիստական շինարարության և ժամանակակից իմպերիալիզմի հարցերում կատարվող տեսական աշխատանքի ասպարեզում։ Յեվ այդ հենց այն ժամանակ, յերբ տեսությունը, հենվելով պրակտիկայի վրա, պարտավոր է ընթանալ նրա առջևից, նշելով նոր ուղիներ, յերևան բերելով նոր հնարավորություններ, տալով մարքսիստական-լենինյան վորոշակի ընդհանրացումներ։ Ընկ. Ստալինը հանդես գալով մարքսիստ-ագրարագետների համամիութենական կոնֆերենցիայում, ճիշտ և ժամանակին մատնանշեց այն մի շարք հարցերը, վորոնց բնագավառում տեսաբան ագրարագետները հետ են մնում իրականությունից։ Ընկ. Ստալինի ցուցումները վերաբերում են վոչ միայն ագրարային պրոբլեմներին, այլև մեր եկոնոմիկայի և կուլտուրայի մնացած բոլոր ասպարեզներին։

Անհրաժեշտ է, զգալիորեն ավելի մեծ չափով, քան մինչև այժմ, զբաղվել մեր զարգացման պրոցեսների տեսական ուսումնասիրությամբ։ ԽՍՀՄ դիմում է անցողիկ շրջանի վախճանին և մտնում է սոցիալիստական հասարակության կառուցմանը՝ տեսանելի ժամանակամիջոցում, հակառակ աջ ոպորտունիստների պանիկյորության։ Մեր պրակտիկան մերկացնում է դեռ մանրբուրժուական խավերում կենսունակ, տրոցկիստական այն տեսությունը, թե մեր յերկրում չկան սոցիալիզմ կառուցելու աղբյուրներ և ուժեր։ Մեր պլանային աշխատանքը դուրս է գալիս հնգամյա պլանի շրջանակից և որվա խնդիր է դառնում գլխավոր պլանի, սոցիալիզմի կառուցման պլանի կազմումը։ Գլխավոր պլանի ասպարեզում առաջիկայում մեր կատարելիք աշխատանքի շնորհիվ, հանդես են գալիս մի շարք պրոբլեմներ, վորոնք պահանջում են խորացրած տեսական մշակում։ Անհրաժեշտ է իմաստավորել հասարակական այն նոր հարաբերությունները, վորոնք պետք է ձևավորվեն այդ պլանի իրականացման պրոցեսում։ Հարկավոր է գիտակցել և տեսականորեն իմաստավորել արտադրական նոր հարաբերությունների բնույթը։ Նոր լույսով է հանդես գալիս արտադրական ուժերի և արտադրական հարաբերությունների փոխհարաբերությունների հարցը։

Գլխավոր պլանն իր իրականացման համար պահանջում է ուսումնասիրել մեր դեպի սոցիալիզմ ընթացող զարգացման առանձին էտապները և լուսաբանել կոնկրետ ուղիները։

Ինչպե՞ս են ընթանալու աշխատանքի նոր կազմակերպման, տեխնիկայի



վերակառուցման, դասակարգային նոր հարաբերությունների զարգացման և տնտեսության ձևերի փոփոխման պրոցեսները համատարած կոլեկտիվացման պայմաններում։ Ի՞նչ դեր են կատարելու խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները նոր պայմաններում։ Ի՞նչպես է փոխվելու մեր տնտեսության մեջ հետևողական-սոցիալիստական տիպի ձեռնարկությունների դերն ու նշանակությունը։ Ի՞նչպես է փոխվելու փողային ձևի նշանակությունը և ի՞նչպես է վերակազմվում ֆինանսական սիստեմը։ Ի՞նչպես է մեռնելու, շուկայական հարաբերությունների հետ միասին, նաև փողային ձևը։ Ի՞նչպես է փոխվում սպառման կառուցվածքը։ Ի՞նչպես է վոչնչացվելու այն հակադրությունը, վոր գոյություն ունի քաղաքի և գյուղի միջև և մասնավորապես ի՞նչպես է վերացվելու «մկրատը»։ Ի՞նչպես պետք է լուծել սոցիալիստական քաղաքների պրոբլեմը։ Ի՞նչպես պետք է ձևավորվեն մեր տնտեսական հարաբերությունները կապիտալիստական աշխարհի հետ՝ ԽՍՀՄ-ի տնտեսական աճուն անկախության պայմաններում։ Վորո՞նք են ընդարձակված վերարտադրության օրենքները՝ անցողիկ եկոնոմիկայի և դեպի կոմունիզմ առաջընթացության պայմաններում։

Վերոհիշյալ հարցերը և մի շարք այլ հարցեր տիրաբար պատասխան են պահանջում և կարիք ունեն տեսական խորացված մշակման։ Հակառակ կյանքի արդիական պահանջներին, քաղաքատնտեսության հարցերի վերաբերյալ յերկարամյա դիսկուսիան, վորը խորացրեց քաղաքատնտեսության մի շարք կարևորագույն հարցերի դրվածքը և յերևան հանեց նրա մեջ մեխանիստական և իդեալիստական տենդենցները, հեռացրեց հսկայական թվով վորակյալ կուսակցական ուժերի ուշադրությունը սոցիալիստական շինարարության կենսական տեսական պրոբլեմներից։ Վորքան էլ կարևոր լինի մշակել քաղաքատնտեսության ընդհանուր մեթոդոլոգիական պրոբլեմները, անհրաժեշտ է հիշեցնել, վոր ամեն մի բարեմասնություն, վոր շարունակվում է վորոշ սահմանից դուրս, վերածվում է իր հակադրության։

Դիսկուսիան տենդենց ցուցաբերեց սահմանափակվելու միմիայն վերացական տեսության և ընդհանուր մեթոդոլոգիայի շրջանակներում, առանց ընդհուպ մոտենալու սոցիալիստական շինարարության չափազանց բարդ հարցերին, վորտեղ դասակարգային շահերի սուր պայքարն առանձնապես դժվարին և քաղաքականապես պատասխանատու յե դարձնում տեսական հետազոտությունը։ Դեռ ավելին. մի քանի տնտեսագետների շրջանում յերբեմն նկատվում է ուղղակի արհամարհական վերաբերմունք դեպի խորհրդային տնտեսության պրոբլեմները, վորպես մի «ցածր» եմպիրիա, վորպես նեղ պրակտիցիզմի հարցեր։ Անտես են առնում, վոր հենց այստեղ է լայն ասպարեզ բացվում ստեղծագործության համար՝ տեսության ասպարեզում։

Սոցիալիստական շինարարության այժմեյական քաղաքական և եկոնոմիկական պրոբլեմներից դիսկուսիայի կտրված լինելու բնորոշ ցուցանիշն է այն փաստը, վոր դիսկուսիան անտես է առել մարքսիզմ-լենինիզմի տեսական հիմունքների այնպիսի մի խեղաթյուրում, ինչպիսին է տրոցկիզմը։

Մինչդեռ տրոցկիզմը լիովին և ամբողջովին մերկացրեց իրեն, վորպես

մանր-բուրժուական ազդեցության ձևերից մեկը պրոլետարիատի վրա, մինչդեռ տրոցկիզմը, անցնելով բոլոր սահմանները, վերածվեց հականեղափոխական մանր-բուրժուական բազմադույն խմբավորման, մինչդեռ Լենինի կուսակցությունը ջախջախիչ հարված հասցրեց տրոցկիզմին — վիճող կողմերը ուշադրություն չնվիրեցին Մարքս-Լենինի ուսմունքի կեղծման այդ ձևի տեսական արմատների հետագա քննադատությանը:

Դիսկուսիան չեր մերկացնում և յերևան չեր բերում տրոցկիզմի հակադիալեկտիկական, հակամարքսիստական եյությունը, նրա համար բնորոշ այն վոչ-մարքսիստական հասկացողությունը, վոր վերաբերում է դասակարգային պայքարի որենքներին և դրա հետ կապված հակալենինյան պատկերացմանը՝ բանվոր դասակարգի և գյուղացիության հարաբերությունների մասին. դիսկուսիան չեր մերկացնում այն վոչ-մարքսիստական հասկացողությունը, վոր վերաբերում է պրոլետարիատի դիկտատուրայի եյությանը, իմպերիալիզմի բնորոշ գծերին, կապիտալիզմի անհամաչափ զարգացման որենքին՝ իմպերիալիստական շրջանում, և դրանից բխող հնարավորությանը՝ մեր յերկրում սոցիալիզմը հաղթականորեն կառուցելու նկատմամբ:

Լենինիստի համար, առավել ևս հնարավոր չէ անտես առնել տրոցկիստական իդեոլոգիայի հակադիալեկտիկական, վոչ-մարքսիստական արմատների մերկացման խնդիրներն այն պատճառով, վոր վերջինիս ռեցիդիվները տեղի յեն ունենում նաև ներկայումս, չնայած այն հանգամանքին, վոր մեր զարգացման ներկա ետապն ակնհայտորեն ցուցադրում է տրոցկիզմի կատարյալ սնանկությունը:

Բուխարինի հակադիալեկտիկական կոնցեպցիայի մերկացման խնդիրները բնավ չեն վերացնում տրոցկիզմի հիմնական տեսական և մեթոդոլոգիական դրույթների վճռական ու խորացված մերկացման անհրաժեշտությունը, նպատակ դնելով հակազդել նրա վորևէ ձևով թափանցմանը բանվոր դասակարգի շարքերը:

Տարակույս չկա, վոր դիսկուսիայի ժամանակ դրված մեթոդոլոգիական պրոբլեմների ճիշտ լուծումն անպայման անհրաժեշտ է տնտեսագետ կոմունիստների արդյունավետ, կոլեկտիվ աշխատանքի համար՝ խորհրդային տնտեսության և ժամանակակից իմպերիալիզմի տեսության հարցերի ասպարեզում: Սակայն չպետք է մոռանալ, վոր միմիայն այդ խմբի պրոբլեմների ասպարեզում կատարվող աշխատանքի հիման վրա կարելի յե հարստացնել և ավելի զարգացնել դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդը: Դժբախտաբար, տեսական եկոնոմիկայի շուրջը տեղի ունեցած դիսկուսիայի ժամանակ, մոռացության է մատնվել այդ անվիճելի դրույթը: Դրանով իսկ մեթոդի վերաբերյալ բազմաթիվ դատողությունները մնում են անպտուղ: Կտրված լինելով իրականությունից, նրանք վերածվում են դատարկության, այլասերվում, դառնում են սխոլաստիկա: Այդպիսի «մեթոդը» դադարում է զարգացման օբյեկտիվ օրինաչափության արտացոլումն լինելուց: Այդ տեսակետից հրամայաբար անհրաժեշտ է տնտեսագետ կոմունիստների բոլոր ուժերը փոխադրել



սոցիալիստական շինարարության հրատապ տեսական հարցերի մշակման ասպարեզը: Այդ առավել ևս անհրաժեշտ է այն պատճառով, վոր այս ասպարեզում դեռ մինչև այժմ ել ուժեղ են սոցիալիստական շինարարության թշնամի բուրժուական և մանր-բուրժուական տեսությունները:

Դիսկուսիայի ժամանակ գործված եյական սխալներն առավել ևս վտանգավոր բնույթ ստացան այն պատճառով, վոր ժամանակակից պայմաններում, մեթոդի բնագավառում գործված սխալներն առանձնապես արագորեն վերածվում են այնպիսի սխալ դրույթների, վորոնք բերում են կուսակցության քաղաքական գծի ամեն տեսակ ոպորտունիստական խեղաթյուրումների:

Վճռաբար պայքար մղելով մարքսիստական-լենինյան ուսմունքի ռեվիզիայի դեմ, հարկավոր է նկատի ունենալ, վոր պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում մարքսիզմի դեմ կատարվող յելույթները միշտ և հանապազ ստանում են Մարքս-Լենինի տեսության «նոր ըմբռնման» և մեկնաբանության ձև: Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, բացահայտ ռեվիզիոնիզմը և Բերնշտայնի և ընկ. ձևով, բուրժուական գիտության հարելը վոչ մի շանս չունի հաջողություն գտնելու: Մարքսիզմի տիրապետումը հասարակական գիտությունների մեջ, հարկադրում է ռեվիզիոնիստական յելույթները զուգել որթոդոքսիայի պատմուճանով: Բուրժուական և մանր-բուրժուական մանավանդ սոցիալ-դեմոկրատական իդեոլոգիան ձեղանում ծնվում և արևմուտքից մեր շրջանն է թափանցում միշտ մարքսիստական ֆրազների պատմուճանով: Առավել ևս մեծ է ռեվիզիոնիստական հայացքների կոմունիստների միջավայրը թափանցելու վտանգը և առավել ևս անհրաժեշտ է լենինիստների հստակ, պարզորոշ, անհաշտ գիծը, կոմունիստների համերաշխ պայքարը Մարքս-Լենինի տեսության և մեթոդի բոլոր խեղաթյուրումների դեմ:

Անհրաժեշտ է վոչ մի րոպե աչքաթող չանել, «վոր առանց անհաշտ պայքար մղելու բուրժուական տեսությունների դեմ՝ հիմնված Մարքս-Լենինյան տեսության վրա, անհնարին է լիակատար հաղթանակ ձեռք բերել դասակարգային թշնամիների նկատմամբ» (ՍՏԱԼԻՆ):

Կործանվող դասակարգը, կապիտալիստական տարրերը մեր յերկրում դիմադրում են քաղաքական, եկոնոմիկական և իդեոլոգիական բնույթ կրող բոլոր միջոցներով և յեղանակներով: Եկոնոմիկական տեսության ասպարեզում այդ կոնկրետ կերպով արտահայտվում է նրանով, վոր կապիտալիզմի պայմաններում տնտեսական զարգացման վերաբերյալ որենքների բուրժուական նոր նարոդնիկական, մենշևիկական պատկերացումները շաբլոն կերպով և միևնույն ժամանակ խորհրդային ֆրազեոլոգիայով քողարկված ձևով փոխադրվում են անցողիկ եկոնոմիկայի պայմանների վրա և վորպես հիմնավորում են ծառայեցվում վորոշ ծրագրերի գործնական ձեռնարկումների համար (Կոնդրատև, Գրոման, Բազարով և ուրիշները):

Շրջադարձը դեպի կուլակության, վորպես դասակարգի, վոչնչացումը պահանջում է վճռաբար հաղթահարել նաև հին պատկերացումների և տեսու-

թյունների այդ մնացորդները, վորոնք հանդիսանում են յերկրի կապիտալիստական տարրերի իդեոլոգիական վարագույրը:

Միմիայն դիալեկտիկական մատերիալիզմի հետևողական կիրառումն է, վոր կարող է ապահովել գիտական հաստատուն բազա լենինյան կուսակցության պրակտիկ գործունեյության համար:

Վերջին տասնամյակներում բուրժուական գիտությունը հարձակումներ գործելով մարքսիզմի վրա, Մարքսի մեթոդը պատկերացնում եր վորպես յերկյակ: Այդ «յերկվությունը» «քննադատները» տեսնում եյին նրանում, վոր իբր թե Մարքսի սիստեմում միացված են նատուրալիստական և «սոցիոլոգիական» հակադիր տենդենցներ: Այստեղ բուրժուական քննադատության բնորոշ գիծն այն է, վոր նույնացվում է նյութականն առարկայականի հետ, սոցիալականն իդեալականի հետ (Ստրուվե, Պետրի, Ֆին-Յենոտայեվսկիյ և ուրիշները): Հենց այդ հիման վրա յե, վոր բուրժուական գիտնականները հասարակական կյանքը հայտարարում են վորպես ազատ կամքի և «տելեոլոգիայի» թագավորություն:

Նարոդնիկների սուբյեկտիվիզմի դեմ իր մղած պայքարում Լենինը ցույց ավեց, վոր հասարակական զարգացումը յենթարկվում է ոբյեկտիվ որինաչափության, վորը ճանապարհ է հարթում մարդկանց գիտակցական գործողությունների միջոցով: Մարքսն ու Լենինը հասարակական-տնտեսական ֆորմացիայի զարգացման վրա նայում եյին վորպես «բնապատմական պրոցեսի» վրա:[1])

Սակայն, ըստ Մարքսի և Լենինի, հասարակական զարգացման անհրաժեշտությունը և որինաչափությունը հանդիսանում է մարդկանց, հասարակական դասակարգերի, գործողության անհրաժեշտությունը: Մատերիալիստ դիալեկտիկը, ի տարբերություն «ոբյեկտիվիստից» և գռեհիկ մատերիալիստից «չի սահմանափակվում, մատնանշելով պրոցեսի անհրաժեշտությունը, այլ պարզում է, թե հասարակական-տնտեսական վո՞ր ֆորմացիան է, վո՞ր հատկապես բովանդակությունն է տալիս այդ պրոցեսին, հատկապես վո՞ր դասակարգն է վորոշում այդ անհրաժեշտությունը»:[2])

Մատերիալիզմը «բովանդակում է… կուսակցականությունը, պարտավորեցնելով իրադարձության ամեն մի գնահատման ժամանակ ուղղակի և բացահայտորեն կանգնել հասարակական վորոշ խմբակի տեսակետի վրա»:[3])

Դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդի չհասկանալը սովորաբար կապված է Մարքս-Լենինի հեղափոխական տեսության՝ վորպես բանվոր դասակարգի գործողության ղեկավարության, դերի թերագնահատման կամ ժխտման հետ: Այդ հիման վրա, աճում են ռեվիզիոնիստական յերկու տեսակ ուղղություններ: Դրանցից մի քանիսն ընթանում են մարքսիզմի նատուրալիստական

1) ԼԵՆԻՆ, Յերկերի ժողովածու, հ. I, եջ 57

2) Նույն տեղը, եջ 276

3) Նույն տեղը:



սիստեմի վերածելու գծով, մյուսները Մարքսի ուսմունքը վերածում են հասկացողությունների անմեղ «սոցիոլոգիական» խաղի:

Դիալեկտիկական մատերիալիզմի յերկու տեսակ խեղաթյուրումների մի քանի կետերում արտառոց կերպով միահյուսվելով, թեպետ վոչ միաչափ, ներկայացված են քաղաքատնտեսության մեջ: Ռեվիզիոնիստական այդ ուղղությունների արմատները թաղված են փիլիսոփայական ագնոստիցիզմի մեջ (Յում, Կանտ), և Մարքսի մեթոդի «սոցիոլոգիական» խեղաթյուրման մեջ, վոր վաղուց սկսել եր ավստրո-մարքսիստական դպրոցը և մասնավորապես Հիլֆերդինգը: Քաղաքատնտեսության մեջ գոյություն ունեցող մեխանիստական ուղղությունն ամենամոտ կերպով բղխում է Բոգդանովի նատուրալիստական-մեխանիստական հայացքներից:

Բոգդանովյան քաղաքատնտեսության հիմքերից մեկն է հանդիսանում այն, վոր նա հասարակական որենքները մեխանիստորեն սահմանափակում է բնության որենքներով: Բոգդանովը փորձում է հասարակական հակասությունները և դասակարգերի պայքարը հեռացնել հասարակության և միջավայրի հավասարակշռության խախտումից (Բոգդանովյան «եներգետիկ բալանսը»): «Եներգետիկ բալանսի տեսությունն» ամբողջովին յուրացված լինելով ընկ. Բուխարինի կողմից՝ նրա «Պատմական մատերիալիզմի տեսություն» գրքում, վորոշ չափով տարածվել է քաղաքատնտեսության մեջ:

Մեխանիստական նույն կոնցեպցիայի ուղղակի շարունակությունն է հանդիսանում հասարակական տվյալ ֆորմացիայի որենքների փոխարինումը ընդհանուր գերպատմական որենքներով: Տնտեսական կատեգորիաների գերպատմականության տեսությունը, աբստրակտ աշխատանքի կատեգորիաների տարածումը հասարակական բոլոր ֆորմացիաների վրա, կազմում է բոգդանովյան-բուխարինյան «աշխատանքային ծախսումների որենքի» հիմքը: Յելնելով դրանից, ընկ. Բուխարինը յեզրակացնում է, վոր ապրանքային տնտեսության «պատմուճանը» վերացնելով, հասարակական զարգացման որենքները հանդես կգան «մերկապարանոց»: Ընկ. Բուխարինի կարծիքով, սոցիալիստական հասարակության մեջ աշխատանքային ծախսումների անխուսափելի որենքն անմիջականորեն կարգավորելու յե արտադրական ուժերի շարժումը: Իրենք, արտադրական ուժերը, հակառակ Լենինի քննադատության, ընկ. Բուխարինը հաճախ նույնացնում է տեխնիկայի հետ և ընդհանրապես վերցնում է նրանց՝ անկախ յուրահատուկ հասարակական ձևերից: Արտադրական հարաբերությունները պարզապես պատկերացվում են վորպես «մարդկանց տեղավորումն տարածության մեջ», վորպես զուտ տեխնիկական կապ:

Այդպիսի դրույթից աճում է վոչ-դիալեկտիկական պատկերացում անցողիկ շրջանի արտադրական ուժերի զարգացման մասին, մի պատկերացում, վորը հաշվի չի առնում զարգացման յուրաքանչյուր ետապի յուրատեսակ հասարակական առանձնահատկությունները: Արտադրական ուժերի աճումը՝ պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, պատկերացվում է մետաֆիզիկորեն, վորպես ընդհանրապես հարստության աճում, վորպես ընդհանրապես ժողովրդական յեկամտի, ընդհանրապես- գյուղատնտեսության ա

ճում: Այդ զարգացման սոցիալական ձևը՝ նրա տարբեր հատվածներով և հակասություններով, անտես է առնվում: Արտադրական ուժերի հենց սոցիալիստական ձևերով աճման անհրաժեշտությունը կոծկվում է: Զարգացման սոցիալիստական ձևերի համար կապիտալիստական տենդենցների դեմ մղվող պայքարը վերջիվերջո հակադրվում է մեր յերկրի արտադրական ուժերի աճմանը:

Տեխնիկական հարաբերությունների և արտադրության հասարակական կառուցվածքի միախառնումն մեխանիստների (ընկ. Բուխարին և նրա դպրոցը), բերում է կապիտալիստական արտադրության պրոցեսի նույնացմանն անմիջականորեն հասարակական աշխատանքի պրոցեսի հետ: Մեխանիստներն աչքաթող են անում, վոր աշխատանքի հանրայնացումը կապիտալի կողմից ուժեղացնում և վոչ թե վերացնում է արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր բնույթի միջև գոյություն ունեցող հակասությունը: Խոսելով աշխատանքի հանրայնացման մասին, նրանք չեն տեսնում այդ հանրայնացման սահմանափակ ձևը, վոր կատարվում է կապիտալի հրամանով: Մեխանիստները յենթադրում են, թե կապիտալիզմը զարգանում է դեպի «գիտակցորեն» կազմակերպված տնտեսությունը», դեպի արտադրական հարաբերությունների «դեֆետիշիզացիան»: Այստեղից է բղխում ընկ. Բուխարինի այն իլյուզիան, թե մոնոպոլիան վերացնում է մրցությունը, կապիտալիզմի անարխիան: Դրա վրա յե հիմնում իր «տեսությունը» «կազմակերպված կապիտալիզմի» մասին, վորն իբրև թե վերացնում է մրցությունը կապիտալիստական առանձին յերկրների ներսում: Ընկ. Բուխարինը չի հասկանում, վոր դա կապիտալիստական մոնոպոլիա յե, այսինքն՝ մի մոնոպոլիա, վոր աճել է կապիտալիզմից և գտնվում է կապիտալիզմի, ապրանքային արտադրության, մրցության ընդհանուր պայմաններում, մշտական և անել հակասության մեջ այդ ընդհանուր պայմանների հետ[1]):

Ընկ. Բուխարինը չի տեսնում, վոր «մոնոպոլիաները», աճելով ազատ մրցությունից, չեն վերացնում նրան, այլ գոյություն ունեն նրա վերևը և նրա կողքին, դրանով իսկ ծնելով մի շարք առանձնապես սուր և խոշոր հակասություններ, շփումներ, «կոնֆլիկտներ»:[2])

Մեխանիստները վերարտադրության պրոցեսը պատկերացնում են՝ վորպես արտադրության առարկայական և անձնական տարրերի մեխանիկական շարժում: Ընկ. Բուխարինը և նրա կողմնակիցներն իսպառ աչքաթող են անում վերարտադրության և նրա հարաբերականության վորակական վորոշակիությունը և այդ պատճառով չեն հասկանում քանակական պրոպորցիաների փոփոխման պրոցեսը, վոր տեղի յե ունենում հասարակական վերարտադրության բնույթի փոփոխմամբ:

Մեխանիստները հասարակական վերարտադրությունը պատկերացնում են վորպես յերերուն շարժումներ, «շեղումներ» հավասարակշռության, դրսից դրված, ինքնուրույն շարժվող մակարդակից: Շարժման բնույթով և ձևով բնորոշվող հավասարակշռությունը, շարժման մոմենտից վերածվում է, ըստ մեխանիստների, մի յելակետի թե՛ տեսական ամբողջ հետազոտության և թե՛ իրական շարժման համար: Նրանք տնտեսական որենքները ձևակերպում են վորպես հավասարակշռության որենքներ և հակադրում են շարժման որենքներին: Դրանից է բղխում կապիտալիզմի գոյության որենքների հակադրումը, նրա կործանման որենքներին:

Հավասարակշռության տեսությունը «վոչ մի ընդհանուր կետ չունի լենինիզմի հետ» (Ստալին): Նա տեսական արգումենտներով զինում է բանվոր դասակարգի թշնամի տարրերին՝ կուսակցության կիրառած ինդուստրացման քաղաքականության դեմ: Նա բուրժուական և մանր-բուրժուական տնտեսագետների ձեռին ծառայում է տեսականորեն պաշտպանելու գյուղացիական անհատական տնտեսությունը՝ կոլեկտիվացման դեմ, ամրացնելու համար, մասնավոր կապիտալի դիրքերը, վորին դուրս է մղում սոցիալիստական արդյունաբերության և կոոպերացիայի զարգացումը: Չնայած իր հակալենինյան ամբողջ եյության, «շարժական հավասարակշռության» տեսությունը չափազանց լայն է տարածվել: Ընկ. Բուխարինի նույնիսկ քաղաքական հակառակորդները և նրա հայացքների քննադատները մինչև այժմ լիովին չեն հաղթահարել դրան, վոր ավելորդ անգամ վկայում է մեխանիստական տենդենցների կենսունակությունը քաղաքատնտեսության մեջ:

Ընկ. Բուխարինը լիովին յենթարկված լինելով իր մեխանիստական մեթոդոլոգիային և հետևողականորեն զարգացնելով հավասարակշռության տեսությունը «բալանսավորման» տեսության, անխուսափելիորեն հանգում է այն հետևության, թե յուրաքանչյուր տվյալ մոմենտի համար հնարավոր է միմիայն գուտ քաղաքական հարաբերությունների մի սխեմ ժողովրդական տնտեսության տարրերի միջև: Թարգմանված եկոնոմիկական քաղաքականության լեզվին, դրանից հետևում է «նեղ» տեղերին հավասարվելու պահանջը: Ընկ. Բուխարինը չի հասկանում, վոր գործը միայն հարաբերականության տարրերի քանակական տարբեր բնութագրումը չէ, այլև նրանց վորակական վորոշակիությունը, վորովհետև վերարտադրության սոցիալիստական ձևից կախված է վերջինիս ընթացքը և նրան հատուկ հակասությունների զարգացումը:

Ակներև է ընկ. Բուխարինի ուտոպիկ այն ձգտման սնանկությունը, վորով նա աշխատում է վերանալ դասակարգային շահերի հակասություններից անցողիկ շրջանում, ստեղծելով վերարտադրության հարթ սխեմներ:

Խորհրդային տնտեսության մեջ, վերարտադրության տիպը վորակապես այլ է, քան կապիտալիզմի պայմաններում, նա յենթարկված է հասարակական արտադրության այլ կառուցվածքին, շարժման այլ որենքներին:

Վերջապես, պետք է առանձնապես ընդգծել, վոր յելնելով մեխանիստական կոնցեպցիայից, չի կարելի ճիշտ ըմբռնել դասակարգային պայքարի զարգացման պայմանները ԽՍՀՄ-ում, պրոլետարիատի ակտիվ դերը արտադրության սոցիալիստական ձևի ստեղծման մեջ և այդ վերջինիս նշանակությունը մեր տնտեսության արտադրական ուժերի զարգացման համար: Դրանից է

1) Լենին, Յերկերի ժողովածու, հ. XIII, եջ 3134. հր. 1924 թ.:

2) Նույն տեղը, եջ 305.

բղխում այն հանգամանքը, վոր ընկ. Բուխարինը թերագնահատում է մեր հնարավորությունները, չի հավատում ինդուստրացման բարձր տեմպին՝ չաեսնված կապիտալիզմի որով:

Դիալեկտիկական մատերիալիզմի հիմունքները չհասկանալն արտացոլվից Բուխարինի մոտ նրանով, վոր նա վոչ–մարքսիստորեն է հասկանում քաղաքատնտեսության առարկան: Յերբ ընկ. Բուխարինն «Անցողիկ շրջանի էկոնոմիկա»-ի մեջ գրում է, թե «Տեսական քաղաքատնտեսությունը մի գիտություն է սոցիալական տնտեսության մասին, վոր հիմնված է ապրանքների արտադրության վրա, այսինքն՝ մի գիտություն չկազմակերպված սոցիալական տնտեսության մասին...» Լենինը լուսանցքում նշում է. «Յերկու սխալ՝ 1) Ենթելսի հանդեպ մի քայլ դեպի հետ գնացող վորոշում. 2) ապրանքային արտադրությունը նույնպես «կազմակերպված տնտեսություն է»: Յերբ ընկ. Բուխարինը գրում է, թե «Քաղաքական տնտեսությունն ուսումնասիրում է ապրանքային տնտեսությունը, Լենինը նշում է՝ «Վոչ միայն»: Իսկ ընկ. Բուխարինի այն պնդումին, թե «կապիտալիստական ապրանքային հասարակության վախճանը լինելու յե նաև քաղաքատնտեսության վախճանը», Լենինը հայտարարում է՝ «սխալ է: Նույնիսկ զուտ կոմունիզմի թեկուզ և Iv + m-ի II c-ի հարաբերությո՞ւնը և կուտակո՞ւմը»:

Քաղաքատնտեսության առարկայի բուխարինյան ըմբռնումից տրամաբանորեն բղխում է այն, վոր նա չի հասկանում, թե խորհրդային տնտեսության տեսության անհրաժեշտությունը, վոր սխալմամբ արդարացվում է միմիայն տարերային «չկազմակերպված» շուկայական հարաբերությունների առկայության չափով մեր տնտեսության մեջ, և թե՝ սոցիալիստական հասարակության արտադրական հարաբերությունների տեսական ուսումնասիրության անհրաժեշտությունը: Մարքսիստական քաղաքատնտեսությունն ուսումնասիրում է «արտադրության մեջ գտնվող մարդկանց հասարակական հարաբերությունները» (Լենին): Նա ուսումնասիրում է արտադրական հարաբերությունները, վորպես հասարակական տվյալ ֆորմացիայի արտադրական ուժերի զարգացման մի ձև: Դրանով իսկ նա հետազոտում է տնտեսական ստրուկտուրան, վորպես բնապատմական մի պրոցես, ճանաչում է տվյալ արտադրական հարաբերությունների ծագման, զարգացման և անկման օրյեկտիվ օրինաչափությունը, այսինքն՝ հասարակության շարժման տնտեսական օրենքը: «Պատմականորեն վորոշ, տվյալ հասարակության, նրա ծագման, զարգացման և անկման պայմաններում գոյություն ունեցող արտադրական հարաբերությունների հետազոտումը — այս է Մարքսի տնտեսական ուսմունքի բովանդակությունը» (Լենին):

Ընկ. Բուխարինի մեթոդոլոգիկ դրություններն անմիջականորեն յուրացրին ընկերներ Կոնը, Բեսսոնովը և ուրիշները: Պայքարի յելնելով ի. ի. Ռուբինի հակամարքսիստական, նեոկանտական հայացքների դեմ, նրանք, փոխանակ հաղթահարելու իդեալիստական ռեվիզիոնիզմը քաղաքատնտեսության մեջ, գործնականում միմիայն խորացրին մեխանիստական ուղղությունն այդ ասպարեզում ու ոժանդակեցին նրան և դրանով իսկ փաստորեն



նպաստեցին իդեալիստական տենդենցների ամրացմանը և նրանց հետագա զարգացմանը: Այդ ընկերների առաջադրած սխալ դրույթների սիստեմը հանդիսանում է ընկ. Բուխարինի մեխանիստական, հակադիալեկտիկական կոնցեպցիայի ուղղակի շարունակությունը: Ընկերներ Կոնը, Բեսսոնովը և ուրիշները դուրս յեկան աջ թեքման տեսական հիմունքների փաստական պաշտպաններ, չնայած վոր նրանք պաշտպանում են կուսակցության հիմնական գիծը և համամիտ չեն ընկ. Բուխարինի քաղաքական հայացքներին:

Ընկերներ Կոնի և Բեսսոնովի մեխանիստական սխալներից գլխավորները հետևյալներն են.

1. Նրանք պնդում են, վոր աբստրակտ աշխատանքի կատեգորիան գերպատմական է. մի ըմբռնում, վոր կապված է աշխատանքի Ֆիզիոլոգիական-էներգետիկ հասկացողության հետ:

2. Չեն հասկանում փոխանակության դերն ապրանքային կապիտալիստական հասարակության մեջ, վոր կապված է Մարքսի ապրանքային Ֆետիշիզմի տեսության դռեհկացման հետ:

3. Նույնացնում են արտադրական ուժերը տեխնիկայի և աշխատանքի պրոցեսի հետ՝ «վորպես այդպիսին»:

4. Մեխանիստորեն սահմանափակում են արտադրական հարաբերությունները անմիջական արտադրողական ուժերով: Այստեղից բղխում է արտադրական հարաբերությունների նյութականության դռեհիկ ըմբռնումը և արտադրական հարաբերությունների տարբեր տիպերի յուրատեսակության անմիջական բնույթագրումը տեխնիկայի զարգացման մակարդակով:

5. Շփոթում են քաղաքատնտեսությունը տեխնոլոգիայի հետ:

6. Առաջադրել են «էներգետիկ բալանսի» բազդանովյան տեսությունը (ընկ. Կոն):

7. Առաջադրել են հավասարակշռության տեսությունը և բուխարինյան «աշխատանքային ծախումների օրենքը»:

8. Առաջադրել են արտադրական հարաբերությունների «դեֆետիշիզացիայի» թեզը՝ կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց, վոր տրամաբանորեն հանգում է սոցիալիզմի մեջ կապիտալիզմի խաղաղ ներաճման դրույթին (ընկ. Բեսսոնով):

9. Գործել են մի շարք արմատական սխալներ իմպերիալիզմի տեսության մեջ, վորոնք վերարտադրում են բուխարինյան կոնցեպցիան (ընկ. Կոն):

10. Ստեղծել են վոչ–մարքսիստական պատկերացում հասարակական գիտությունների մասին (իրավունք, պատմություն և այլն), վորոնք իբրև թե չեն զբաղվում սոցիալական հեղափոխության հարցերով (ընկ. Բեսսոնով):

11. Նույնացնում են ձևը և բովանդակությունը, մի նույնացում, վոր թափանցում է վերև հիշատակված սխալներում և մի շարք այլ սխալներ:

Տեխնոլոգիայի առարկայի վերոհիշյալից բղխող շփոթումը քաղաքատնտեսության առարկայի հետ ցայտուն կերպով յերևան է գալիս ընկ. Բեսսոնովի հետևյալ դրույթի մեջ. «գործողության մեջ գտնվող արտադրական

ուժերը, աշխատանքի պրոցեսը, «վորպես այդպիսին», կազմում են քաղաքատնտեսության նույնպիսի անխզելի բաղադրիչ մասը, ինչպես և արտադրական պրոցեսի վերոհիշյալ պայմանավորված հասարակական ձևը»:[1])

Ժամանակին ընկ. Բեսսոնովը առաջադրեց գռեհիկ—մեխանիստական այն թեզը, թե արտադրական ուժերը և արտադրական հարաբերությունները «իրավահավասար կերպով» կազմում են քաղաքատնտեսության օբյեկտը: Տնտեսագետ—կոմունիստների գերակշռող մեծամասնության վճռական դիմադրումից հետո, ընկ. Բեսսոնովը հրաժարվեց այդ թեզից, սակայն միմիայն ձևականորեն:

Ընկ. Կոնը իր վերջին հոդվածում գրում է. «Տեխնոլոգիան և տնտեսական գիտություններն ուսումնասիրում են միևնույն մատերիալ՝ արտադրությունը, սակայն այդ գիտությունների տեսանկյունը, հայեցակետը միանական օբյեկտի նկատմամբ, միանգամայն տարբեր են: Քաղաքատնտեսության և տեխնոլոգիայի միջև գոյություն ունեցող սահմանագիծը, վորը ջնջելը հանցագործություն կլիներ, կայանում է նրանում, վոր նրանց տեսակետները տարբեր են մատերիալ արտադրության նկատմամբ, նրանում վոր առաջինն (?) ուսումնասիրում է արտադրության մատերիալ պրոցեսը՝ բնության վրա մարդու գործած ներգործության էֆեկտիվության տեսակետից, իսկ յերկրորդն ուսումնասիրում է նյութական արտադրությունը նրա վորպես հասարակական ձևի տեսակետից»:[2])

Աչքի յե ընկնում Կոնի սուբյեկտիվիստական դրույթը: Մարքսիզմը տեխնոլոգիական պրոցեսը տարբերում է տնտեսական զարգացումից, վորպես չարժման օբյեկտիվորեն, գոյություն ունեցող յերկու ձևեր: Ընկ. Կոնը նայած իր ընտրած տեսակետին «տեսնում է» միանական օբյեկտի մերթ մեկ, մերթ մյուս կողմը: Ընկ. Կոնը գործում է ընկ. Բեսսոնովի սխալի նման մի սխալ, շփոթելով քաղաքատնտեսության յելակետը, «անհատների հասարակայնորեն—պայմանավորված արտադրությունը» (Մարքս) աշխատանքի բնականոն պայմանավորված պրոցեսի հետ (տեխնոլոգիա):

«Տեսակետներով» այդպես գործելու առթիվ, Լենինը Բուխարինի «անցողիկ շրջանի էկոնոմիկայի» վերաբերյալ իր դիտողությունների մեջ նշում է. «սուբյեկտիվիզմ, ոլիպսիզմ»: Բանն այն չէ, թե ո՞վ է «քննում» ո՞ւմ համար «հետաքրքիր է», այլ այն թե, ի՞նչն է անկախ մարդկային գիտակցությունից»:[3])

Դիսկուսիան վորոշակի կերպով յերևան հանեց ընկերներ Կոնի ու Բեսսոնովի ու ուրիշների առաջադրած դրույթների ամբողջ սնանկությունը և մեխանիստական բնույթը: Միանգամայն անհրաժեշտ է քննադատել նրանց մեխանիստական հայացքները, վորովհետև նրանց գործած սխալների սիստեմը

1) «Էկոնոմիկայի պրոբլեմները», № 4—5, էջ 210.

2) «Էկոնոմիկայի պրոբլեմները», № 6, էջ 94.

3) Լենինյան 11-րդ ժողովածու, էջ 385.



անմիջականորեն կապվում է ընկ. Բուխարինի հակադիալեկտիկական կոնցեպցիայի հետ:

Այդ սխալներն առավել ևս վտանգավոր են այն պատճառով, վոր վերջերս փորձեր են լինում վերածնելու բացահայտ բոգդանովշչինան (Դաշկովսկուց Շարսից հետո՝ Կոժանովի և Ցյոն–Ցենտաևսկին):

Ընկ. Բեսսոնովի և Կոնի հայտարարությունները[1]), ինչպիսի ցանկություններ էլ նրանք ունենան, բնավ չի կարելի բավարար համարել: Այդ ընկերներն այժմ հայտարարելով, թե իրենք պայքար են մղելու յերկու ֆրոնտով, մինչև այժմ չեն հասկացել, վոր նրանց սխալները հենց մեխանիստական սխալներ են և վոր իրենց հայացքներով նրանք հարում են մեխանիստական ֆրոնտին: Նրանք մինչև այժմ չեն տեսնում մեխանիստական տենդենցներ քաղաքատնտեսության մեջ:

Դրա մասին վկայում է հենց վերջերս նրանց լույս ընծայած «Բուբնովշչինա կամ մարքսիզմ» ժողովածուն, վորը վոչ միայն կրկնում է ընկերներ Կոնի և Բեսսոնովի սխալները, այլ և մի շարք դեպքերում խորացնում է դրանց:

Վերոհիշյալ ընկերների վճռական հրաժարումն իրենց գործած սխալներից և այդ սխալների մեթոդոլոգիկ հիմունքների յերևան հանելը հրամայաբար անհրաժեշտ է հաղթահարելու համար քաղաքատնտեսության մեխանիստական ուղղությունը:

Մարքս—Լենինի գռեհիկ—մեխանիստական խեղաթյուրումներն ընկ. Բուխարինի և նրա աշակերտների կողմից (Մարեցկի, Այխենվալդ և ուրիշները) ներկայացնում են ամենալուրջ վտանգ տեսական տնտեսագիտության մեջ, վորովհետև նրանք անխուսափելիորեն բերում են աջ ոպորտունիստական հետևությունների՝ խորհրդային տնտեսության քաղաքականության և տնտեսության ասպարիզում, վոր գլխավոր վտանգն է մեր կուսակցության շարքերում:

Բնավ չի կարելի վերջացած համարել ընկ. Բուխարինի հակադիալեկտիկական կոնցեպցիայի մերկացումը: Դեռ ավելին, մի շարք դեպքերում այդ մերկացումը դեռ նոր է սկսվում (փիլիսոփայական աշխատություններ և տեսական էկոնոմիկայի վերաբերյալ աշխատություններ): Դրանից համառ անհրաժեշտություն է բխում ամենայն յեռանդով շարունակելու ընկ. Բուխարինի մեխանիստական տեսության քննադատությունը և պայքարը նրա ոպորտունիստական սխալների դեմ՝ խորհրդային տնտեսության և ժամանակակից իմպերիալիզմի հարցերում: Վոչ պակաս վճռականությամբ պետք է մերկացնել նաև ընկ. Բուխարինի այդ սխալների սքողումը և հաշտվողական վերաբերմունքը դեպի այդ սխալները:

Այն հանգամանքը, վոր մի շարք ընկերներ ընդունում են կուսակցության հիմնական գիծը և ակտիվ կերպով պաշտպանում են նրան աջ ոպորտունիստական խեղաթյուրումներից, գործելով հանդերձ մեխանիստական սխալներ

1) «Էկոնոմիկայի պրոբլեմներ», № 10—11

մի սխալ (Կոն, Բեսսոնով և ուրիշները) պետք է համարել վոչ այլ ինչ, բայց յեթե մեծագույն անհետևողականություն:

Սակայն, ամենակոպիտ սխալը կլիներ կարծել, թե մարքսիստական-լենինյան ուսմունքի հիմքերի ռևիզիան ընթանում է միմիայն մեխանիստների կողմից այդ հիմունքների խեղաթյուրման գծով: Դասակարգային սրված պայքարի, կապիտալիզմի արմատների վոչնչացման, մեր ամբողջ հասարակարգի սոցիալիստական բուռն վերափոխման պայմաններում, կապիտալիստական շրջապատման և համաշխարհային կապիտալիզմի ճգնաժամի հետագա զարգացման պայմաններում, սոցիալապես խորթ և պրոլետարիատի գործին թշնամի տարրերը յերկրում սնունդ են տալիս Մարքս-Լենինի ուսմունքի թե մեխանիստական և թե ուղղակի իդեալիստական ռևիզիային: Այդ պատճառով, մեխանիստական վտանգի դեմ մղվող պայքարը վոչ մի կերպ չպետք է թուլացնի մարքսիզմի բացահայտ իդեալիստական խեղաթյուրումների վտանգի դեմ մղվող պայքարը: Յեվ ամենակոպիտ սխալը կլիներ, յեթե վորևէ չափով մարքսիստ-լենինիստները մոռանային այդ առաջնակարգ պարտականությունը, այն է՝ պայքար մղել իդեալիզմի տեսության, նրա բոլոր արտահայտությունների և ուղղությունների դեմ:

Այդ վերջինների դեմ առավել ևս անհրաժեշտ է վճռական պայքար մղել այն պատճառով, վոր համաշխարհային սոցիալ-դեմոկրատիայի իդեոլոգները (Կ. Կաուցկի, Մ. Ադլեր, Կ. Ռեններ, Ռ. Հիլֆերդինգ, Ոտտո Բաուեր և ուրիշները) դրանք վերածել են սիստեմի և նպաստում են մարքսիզմի անհաշտ թշնամիների բուրժուական «սոցիալական դպրոցի» տեսաբանների հաջողությանը, մի դպրոցի, վոր աճել է նեոկանտական իդեալիզմի հիմքի վրա (Ամմոն, Շտոլցման, Պետրի):

Յերկրորդ Ինտերնացիոնալի տեսաբանների իդեոլոգիայի արտահայտիչն ու ներկայացուցիչը քաղաքատնտեսության մեջ մեզանում հանդիսանում է Ի. Ի. Ռուբինը: Կործանվող կապիտալիզմի բուրժուական գիտության էպիգոնների կանտական սխոլաստիկան Ի. Ի. Ռուբինն ավելի բարձր է դասում, քան քաղաքատնտեսության կլասիկների օբյեկտիվ գիտական անալիզը: Նա «սոցիալական ուղղությունը» համարում է «բազմախոստում», նրա մեջ գտնում է գաղափարական «տեսական» ցեղակցություն մարքսիզմի հետ. վողջունում է այն, վոր սոցիալական դպրոցի տեսաբանները «նոր ուղիներ» են վորոնում տնտեսական գիտության համար, համակրում է նրանց ձգտումներին, իր «շնորհակալությունն» է հայտնում նրանց, «արդյունավետ» է համարում Շտոլցմանի, Ամմոնի աշխատանքը:[1]

Մնալով միջազգային մենշևիզմի դիրքերում Ի. Ի. Ռուբինը չի հասկանում և չի կարող հասկանալ, վոր կապիտալիզմի ապոլոգետների քաղաքատնտեսությունը սկզբունքորեն և անհաշտելիորեն թշնամի յե պրոլետարիատին: Ի. Ի. Ռուբինի ընդհանուր քաղաքական դիրքերում թաքված է այն հանգամանքի արմատը, վոր նրա ամբողջ կոնցեպցիան սահմանափակված է, մեկուսացած է ընդհանուր վերացական հարցերի շրջանակներում: Ի. Ի. Ռուբինը քաղաքատնտեսության ընդհանուր մեթոդոլոգիական պրոբլեմներն անջատում է խորհրդային տնտեսության և հետպատերազմյան իմպերիալիզմի պրոբլեմներից, խնամքով զանց առնելով և անտեսելով այդ վերջինները: Այդ պատճառով Ի. Ի. Ռուբինի աշխատությունների մեթոդոլոգիական «նրբությունը» հանգում է հասկացողությունների անպտուղ խաղի և զուտ սխոլաստիկ վարժությունների. նա միմիայն սքողում է մարքսիստական տերմինոլոգիայով նրանց հակամարքսիստական, հակահեղափոխական, նեոկանտական բովանդակությունը: Ի. Ի. Ռուբինի աշխատությունները և նրանց շուրջը տեղի ունեցող վեճերը հեռացնում են տեսական հետազոտությունը խորհրդային եկոնոմիկայի պրոբլեմների (սոցիալիստական շինարարություն) և համաշխարհային իմպերիալիզմի հակասությունների (համաշխարհային հեղափոխության պրոբլեմները) մշակումից: Հակահեղափոխական ընդհանուր-քաղաքական գծի պայմաններում, չի կարող տեղի ունենալ ընդհանուր տեսական պրոբլեմների Որթոդոքսալ մշակում[1]:

1) Ի. Ի. Ռուբին. «Ժամանակակից տնտեսագետներն Արևմուտքում» (առաջաբան):



Ի. Ի. Ռուբինը Մարքսի գերազանցությունը կլասիկների նկատմամբ տեսնում է վոչ թե նրանում, վոր «Մարքսը քաղաքական տնտեսության ասպարեզում գործադրեց Հեգելի դիալեկտիկան՝ նրա զարգացած ձևով (այսինքն մատերիալիստական դիալեկտիկան — Վ. Մ. և Բ. Բ.)» (Լենին), այլ այն, վոր նա վերլուծման է յենթարկել կապիտալիստական տնտեսությունը նոր, «սոցիալիստական» տեսակետից»: Ուստի Մարքսի հետազոտության կարևորագույն արդյունքը, այն է՝ առարկայական կատեգորիաների, առարկաների տնտեսական ձևերի հետևը մարդկանց արտադրական հարաբերությունների և դասակարգային հակադրությունների հայտաբերումը — մնում է փաստորեն Ի. Ի. Ռուբինի տեսողության շրջանակից դուրս: Նա չի տեսնում, վոր կապիտալիզմի ուսումնասիրության ժամանակ Մարքսի գործադրած մեթոդի էությունն այն է, վոր նա կապիտալիստական ֆորմացիան համարում է բնապատմական պրոցես: Ի. Ի. Ռուբինը չի հասկանում, թե ինչպես Մարքսը իրերի տնտեսական ձևերը հետևեցնում է արտադրության յուրահատուկ—հասարակական կարգերից արտադրական այնպիսի հարաբերություններից, վորոնց գոյությունը վոչ միայն «չի կախված մարդու գիտակցությունից, այլ ընդհակառակը, վերջինս ինքը կախված է նրանցից»[2]):

Ռուբինը պատահականորեն չէ, վոր ժխտում է աբստրակտ աշխատանքի նյութականությունը: «Արժեքը կազմող աբստրակտ աշխատանքը, ասում է նա, պետք է հասկանալ վորպես սոցիալական կատեգորիա, վորի մեջ մենք չենք գտնի մատերիայի վոչ մի ատոմ»:

Սոցիալականի այդ ըմբռնումը ցույց է տալիս Ի. Ի. Ռուբինի ամբողջ կոնցեպցիայի հակամարքսիստական, հակադիալեկտիկական բնույթը: Ըստ

1) Այդ նկատառումով, միանգամայն ճիշտ պետք է համարել Եկոնոմիկայի Ինստիտուտի տնտեսական բաժանմունքի վորոշումը Ի. Ի. Ռուբինի մասին (տես «Պրավդա», 1930 թ. փետրվարի 2-ը):

2) Վ. Ի. Լենին, Ժողովածու, I հատ., 2-րդ հրատ. եջ 59

Մարքսի, աբստրակտ աշխատանքը գոյություն ունի միմիայն ապրանքային տնտեսության մեջ, որտեղ աշխատանքի հավասարությունը, որպես մինույն, ֆիզիոլոգիապես միատարր մարդկային բանվորական ուժի ծախսում, հանդես է գալիս, որպես աշխատանքի յուրահատուկ հասարակական ձև: Միմիայն ապրանքային տնտեսության մեջ է, որ աշխատանքի այդ հավասարությունը դառնում է աշխատանքի հասարակական ձև, այսինքն՝ աբստրակտ աշխատանք: Ըստ Ի. Ի. Ռուբինի, աբստրակտ աշխատանքը հանդիսանում է աշխատանքի ոչ թե իրական, օբյեկտիվ հավասարություն, այլ միմիայն ապրանք արտադրողների՝ որպես տնտեսության ավտոնոմ սուբյեկտների հավասարության իրային արտահայտությունը [1]):

Հենց այստեղ արմատացած է ձևի այն խզումը բովանդակությունից, որ բնորոշ է Ի. Ի. Ռուբինի համար և ներկայացնում է անհաշտելի հակասություն Մարքսի–Լենինի մեթոդի հանդեպ: Ջգտելով ծածկել այդ հակասությունը և հաշտեցնել իր տեսությունը Մարքսի հետ, Ի. Ի. Ռուբինը արժեքի բովանդակությունը հայտարարում է մերթ որպես պատմական, մերթ որպես ոչ պատմական՝ նայած մոտեցմանը, նայած տեսակետին. անալիզի «տեսակետից» արժեքի բովանդակություն է հայտարարվում ընդհանուր մարդկային աշխատանքը՝ գերապատմական նյութական կատեգորիան, իսկ սինտեզի «տեսակետից» աբստրակտ աշխատանքը՝ պատմական սոցիալական կատեգորիան: Այդպիսով Ռուբինը խզում է Մարքսի դիալեկտիկ մեթոդի միասնությունը: Զարմացնող բնորոշ է, որ հատկապես այդ հարցում Ի. Ի. Ռուբինի հետ համամիտ է ընկ. Կոնը: Ռուբինի իդեալիստական տենդենցներից անխուսափելիորեն բղխում է նրա հրաժարումը Մարքսի դիալեկտիկայից, չնայած, որ նա խոսքով ընդունում է վերջինս:

Հակառակ Ի. Ի. Ռուբինին և ընկ. Կոնին, Մարքսի մոտ ոչ մի խզում չկա անալիզի և սինտեզի միջև: Մարքսի անալիզի վերջնական կետը և նրա սինտեզի ելակետը միևնույնն է: Սինտեզի խզումը անալիզից հատուկ է է կանտականներին, և ոչ թե դիալեկտիկական մատերիալիզմին: Անալիզը և սինտեզը փոխադարձորեն յենթադրում են իրար: Դիալեկտիկ մեթոդը, «իր շարժման յուրաքանչյուր քայլափոխում գործում է միաժամանակ և՛ անալիտիկորեն, և՛ սինտետիկորեն»: Հեգելի այդ բնութագրմանը Լենինը հավանություն է տվել հետևյալ դիտողությամբ՝ «հիանալի յե» (լենինյան 9-րդ ժողովածու, եջ 307):

Ձևի բովանդակության հակասությունը, որ հանդիսանում է զարգացման շարժող պատճառը, չի բացասում, այլ յենթադրում է նրանց միասնությունը՝ մարքսիզմը հնարավոր չի համարում որևէ խզում ձևի և բովանդակության միջև: Բովանդակությունը անձև չէ, նա ձևավորված մատերիա յե: Ձևը բովանդակություն ունի [2]):

[1]) И. И. Рубин «Очерки», 3-րդ հրատ. եջ 98—111.

[2]) Ձևն իր մեջ բովանդակում է կայուն գոյություն կամ մատերիա, որպես իր որոշումներից մեկը: Այդպիսով (որպես ներքին կառուցվածք—Վ. Մ. և Բ. Բ.) ձևը բովանդակություն է, իսկ իր զարգացած որոշակիությամբ նա յերևույթի օրենքն է (Հեգել, ժողովածու, հատոր 1-ին, եջ 223):



Յե՛վ ձևը, և՛ բովանդակությունը պատմական են: Ձևն ակտիվ է: Բովանդակության գերակշռումը սահմանափակում է յուրաքանչյուր տվյալ ձևի ակտիվությունը բովանդակության զարգացման պատմական որոշ աստիճանով: Այդ զարգացմանը զուգընթաց, աճում է հակասությունը ձևի և բովանդակության միջև: Ձևը, զարգացման պայմանից վերածվում է նրա կապանքների և «ժխտվում է» բովանդակության կողմից: Միմիայն բովանդակության իր իսկ բնույթի փոփոխման հիման վրա ծագող նոր ձևն ստեղծում է այդ բովանդակության հետագա զարգացման պայմանները: Միմիայն այդ հիման վրա կարելի յե հասկանալ արտադրական ուժերի և արտադրական հարաբերությունների դիալեկտիկան, դրանց հակասությունների աճումը, որը դասակարգային հասարակության մեջ տանում է դեպի սոցիալական հեղափոխություն: Դիալեկտիկական մատերիալիզմը ոչ մի այլ «տեսակետ» չգիտե:

Ի. Ի. Ռուբինը անջատելով բովանդակությունը ձևից, ոչնչացնում է նրանց մատերիալիստական ըմբռնման հնարավորությունը, ձևն ավելի վեր դասելով, քան բովանդակությունը: Արտադրական հարաբերությունների բնութագրումը նա հեռացնում է իրավական կազմակերպության առանձնահատկություններից, վերագրելով իրավունքն անմիջականորեն եկոնոմիկական ստրուկտուրայի բնութագրմանը: «Արտաեկոնոմիկական հարկադրման բացակայությունը, առանձին անձնավորությունների աշխատանքային գործունեյության կազմակերպումը ոչ թե հանրային իրավունքի հիմունքներով, այլ մասնավոր իրավունքի և այսպես կոչված ազատ դաշինքի հիմունքներով հանդիսանում է ժամանակակից հասարակության եկոնոմիկական ստրուկտուրայի ամենաբնորոշ գիծը: Այստեղից է բղխում նաև առանձին մասնավոր տնտեսությունների միջև գոյություն ունեցող արտադրական հարաբերությունների հիմնական ձևը, փոխանակության ձևը, փոխանակվող արժեքների հավասարեցումը»[1]):

Այդպես ուրեմն, Ի. Ի. Ռուբինի կարծիքով, ոչ թե հասարակության եկոնոմիկական ստրուկտուրան է որոշում և բնաթագրում հասարակության իրավունքը, այլ իրավունքն է որոշում և բնութագրում եկոնոմիկական ստրուկտուրան: Նա կապիտալիստական արտադրությունը համարում է մի անձև պրոցես, որին ձևը միանում է արտաքուստ, փոխանակության պրոցեսից[2]):

Ի. Ի. Ռուբինն առանձին ձեռնարկության մեջ անմիջական արտադրության պրոցեսում տեսնում է միայն տեխնիկական, «կազմակերպված» հարաբերություններ (տես «Տեսությունների» 2-րդ գլուխ):

Արտադրության կապիտալիստական յեղանակը որպես յուրատեսակ հասարակական–տնտեսական ֆորմացիա բնութագրող հասարակական արտադրական հարաբերությունները, նա փոխադրում է ձեռնարկությունների շուկայական հարաբերությունների ասպարեզը, փոխանակության ասպարեզը:

[1]) И. И. Рубин, «Очерки», հրատ. III, եջ 89:

[2]) Նույն տեղը, եջ 18:

Դրա արդյունքն այն է, որ արտադրական հարաբերությունները, որոնք Ի. Ի. Ռուբինը նույնացնում է գնման և վաճառման հարաբերությունների հետ, հանդես են գալիս միմիայն որպես «առարկաների տերերի» հարաբերություններ, որպես տնտեսության իրավահավասար սուբյեկտների հարաբերություններ, և «ոչ թե որպես» ապրանք արտադրողների հարաբերությունները [1]:

Ապա փոխանակության հարաբերություններն արտադրական հարաբերություններին հակադրելու հիման վրա աղավաղվում են կապիտալիստական արտադրության հենց պրոցեսի հարաբերությունները, շահագործման հարաբերությունները: Զուր չէ, որ Ի. Ի. Ռուբինն արտադրական հարաբերությունները բնորոշելիս, «դասակարգային» տերմինը չակերտների մեջ է վերցնում [2]:

Ի. Ի. Ռուբինը կոպիտ կերպով խեղաթյուրում է արտադրության և փոխանակության փոխհարաբերությունը Մարքսի էկոնոմիկական սիստեմում: Նա անտես է առնում մարքսիստական անվիճելի այն դրույթը, որ էկոնոմիկական ստրուկտուրան որոշվում է արտադրության պրոցեսում մարդկանց ցուցաբերած հարաբերություններով և հայտարարում է, թե «արժեքի մարքսիստական տեսության առարկան» հանդիսանում է «փոխանակության պրոցեսի, նրա հասարակական ձևի և ապրանքային հասարակության արտադրության հետ նրա ունեցած կապի հետազոտումն» [3]:

Իրոք, արտադրության ձևը որոշում է փոխանակության ձևը: Ապրանքային արտադրության պրոցեսը պարունակում է մասնավոր փոխանակության անհրաժեշտությունը հասարակական վերարտադրության շարժման համար: Բացի դրանից, կապիտալիստական վերարտադրությունը պարունակում է նաև բանվորական ուժը գնելու և վաճառելու անհրաժեշտությունը: Դրանք, արտադրության իր իսկ պրոցեսի մոմենտներն են:

Արտադրական աշխատանքի պրոբլեմների սխալ լուսաբանումը Ի. Ի. Ռուբինի կողմից հանդիսանում է Մարքսի ուսմունքի բացահայտ ռեվիզիան: Այդ հարցում մարքսիզմից հեռանալը լայն դուռ է բաց անում բաշխման բուրժուական ժամանակակից տեսությունների համար, որոնք որպես յելակետ արտադրական են համարում այն «աշխատանքի» բոլոր տեսակները, որ կատարում են բուրժուազիան և նրա ոգնականները՝ հավելյալ արժեքը յուրացնելու ասպարեզում: Խորհրդային էկոնոմիկայի նկատմամբ արտադրական աշխատանքի պրոբլեմների հակամարքսիստական լուսաբանումը բազա յե հանդիսանում մեր կուսակցությանը թշնամի մի շարք տեսական կոնցեպցիաների համար, որոնք միանգամայն խեղաթյուրում են մեր տնտեսական շինարարության բնույթը, հեռանկարները և խնդիրները:

Ի. Ի. Ռուբինը, իր մեկնաբանություններով, կծկելով հասարակ ապրանքային տնտեսության և կապիտալիզմի միջև գոյություն ունեցող որակական տարբերությունը, խեղաթյուրում է այն հարաբերությունները, որոնք գոյություն ունեն Մարքսի սիստեմի էկոնոմիկական կատեգորիաների զարգացման և պատմական իրական զարգացման միջև: Հասարակ ապրանքային տնտեսությունը հայտարարվում է որպես մտացածին տրամաբանական սխեմա, միայն կապիտալիզմի աբստրակցիա, և Ի. Ի. Ռուբինի համար դադարում է պատմական աստիճան լինելուց կապիտալիզմի զարգացման մեջ, դադարում է նրա առաջին էմբրիոնալ սաղմային ձևը լինելուց: Հետազոտության տրամաբանական ընթացքի խզումը զարգացման պատմական ընթացքից բացահայտորեն հակասում է Մարքսի, Էնգելսի և Լենինի հայտնած բազմաթիվ կարծիքներին: Այդ խզումը կծկում է կապիտալիզմի ծագման և նրա կործանման մոմենտը՝ դուրս է գցում մարքսիստական տեսությունից նրա հեղափոխականորեն վերակազմող իմաստը:

1) «Очерки», հրատ. 3-րդ, եջ 16, 30 և այլն:

2) И. И. Рубин, «Ժամանակակից տնտեսագետներն Արևմուտքում», եջ 188–189:

3) «Очерки», եջ 96.



Ի. Ի. Ռուբինի ամբողջ կոնցեպցիան տարբերվում է նրանով, որ Ռուբինի սոցիալականը, հասարակականը չի վերցնում որպես դասակարգային: Ռուբինի կոնցեպցիան, որից կտրված, դուրս է գցված մարտական հեղափոխական դասակարգային բովանդակությունը, չի կարող գործնականում չծառայել պրոլետարիատին խորթ և թշնամի խավերի շահերին: Դրանում է Ի. Ի. Ռուբինի հակամարքսիզմը և հակահեղափոխականությունը:

Կուսակցության կենտրոնական որգան «Պրավդան» ժամանակին և ճիշտ առաջադրեց յերկու ճակատով պայքարելու խնդիրը (Տես «Պրավդա», № 234–1929 թ. հոկտեմբերի 10):

Պայքարը մղելով մեխանիզմի դեմ, չի կարելի մոռանալ «ռուբինիզմը»: Մեծագույն սխալ կլիներ կծկել Ի. Ի. Ռուբինի ռեվիզիոնիստական կոնցեպցիայի քննադատական այժմեականությունը: Չպետք է աչքաթող անել այն կապը, որ միացնում է Ի. Ի. Ռուբինի հայացքները ավստրո-մարքսիստների հետ, շրջանառության միջոցով սոցիալիզացիայի տեսության հետ: Այդ ուղղությամբ Ի. Ի. Ռուբինի կոնցեպցիան ներկայացնում է սնունդի հարուստ աղբյուր մենշևիզմի համար: Մարքսիզմի խեղաթյուրումները «չեզոք» չեն և չեն կարող «չեզոք» լինել: Նրանցից կարող են և անխուսափելիորեն պետք է բղխեն հակահեղափոխական մենշևիկյան տենդենցներ:

Կուսակցությունը չտեսնված ակտիվություն ծավալեց բանվորների միջավայրում՝ արտադրության նոր յեղանակի հիման վրա, «դեպի աշխատանքի դիսցիպլինան» բանվորների ցուցաբերած նոր վերաբերմունքի հիման վրա, դեպի արտադրության միջոցները, որպես ամբողջ բանվոր դասակարգի սեփականության միջոցները, նրանց ցուցաբերած վերաբերմունքի հիման վրա: Սոցիալիստական տիպի ձեռնարկություններում ստեղծված արտադրական նոր հարաբերությունները քաղաքում և գյուղում արագացրին մեր յերկրի արտադրական ուժերի զարգացումը: Արտադրական հարաբերությունների ակտիվությունը գործնականորեն ապացուցված է մեր տնտեսության աճման կապիտալիզմի պայմաններում չտեսնված տեմպով: Դրա հետևանքով տրոցկիստական գերինդուստրացման քաղաքականությունը և տրոցկիստական

այն տեսությունը, վոր պնդում է, թե մեր յերկրում հնարավոր չէ կառուցել սոցիալիզմը, ամբողջապես մերկացվելուց հետո, կյանքը ջախջախեց նաև աջ թեքումը և վերջնականապես փոշիացրեց տրոցկիստական–մենշևիկյան տեսական կառուցվածքները:

Կոմունիստ տնտեսագետների համար պետք է պարզ լինի Ի. Ի. Ռուբինի հայացքների ռեվիզիոնիստական–մենշևիկյան բնույթը, նրա անընդունակությունը՝ կանգնելու տնտեսական հարաբերությունների դասակարգային անալիզի ուղու վրա, նրա ուսմունքի հակամարքսիստական բնույթը: Ի. Ի. Ռուբինի հայացքների դեմ վճռական պայքար մղելը հրամայական անհրաժեշտություն է, վորովհետև նրանք փակում են մեր զարգացման մարքսիստական–լենինյան ըմբռնման ուղին: Իսկ նրանց վորևէ ձևով պաշտպանելը կոմունիստների կողմից հանդիսանում է լիակատար խզում մարքսիզմից: Արհամարհել մենշևիկյան վտանգը այն հիման վրա, թե կուսակցության մեջ հանդես է գալիս առավելապես մեխանիստական ձևի ռեվիզիոնիզմը–նշանակում է հայեցողության շրջանակից դուրս դցել ամբողջ յերկիրը, վորտեղ մենշևիզմը ներկայացնում է մարքսիզմին թշնամի մի ուժ: Իդեալիստական մենշևիկյան վտանգի թերագնահատումը, վոր բնորոշ է դիսկուսիայի մեջ մի շարք ընկերների համար, վկայում է, վոր նրանք չեն կարողացել յերկու ճակատով պայքարելու ճիշտ դիրք բռնել: Մեխանիստական տենդենցների դեմ («հակաբուխարինիզմ») միակողմանի պայքար մղելը կամ ռուբինչչինայի դեմ («հակառուբինիզմ») միակողմանի պայքար մղելն ակնհայտորեն չի հասնում իր նպատակին: Այդպես սխալ է Ի. Ի. Ռուբինին պատկերացնել վորպես ործոդոքսալ մարքսիզմի համար՝ ընդդեմ մեխանիստների ռեվիզիոնիզմի և ընդդեմ «սոցիալական ուղղության» պայքարող, սխալ կլիներ վոչ քննադատորեն, աննշան վերապահություններով ընդունել նրա մի շարք տեսական դրույթները, վորպես զուտ մարքսիստական: (Տես «Ընդդեմ մեխանիստական տենդենցների» ժողովածուն՝ նայլն) ընկ. ընկ. Բորիլինի և Լեոնտյեվի խմբագրությամբ ընկ. ընկ. Գրեբլիսի, Կորովայի, Սաեպանովի և Դեբորինի հոդվածները:

Մի խումբ ընկերներ (Բորիլին, Լեոնտյեվ և ուրիշները) ճիշտ հանդես յեկան մեխանիստական վտանգի դեմ, վոր պետք է համարել անվիճելի ծառայություն նրանց կողմից: Սակայն, չհասկանալով Ի. Ի. Ռուբինի աշխատությունների հակամարքսիստական, հակադիալեկտիկական, հակահեղափոխական բնույթը, այդ ընկերներն արմատապես սխալ դրական գնահատական եյին տալիս նրա աշխատություններին (տես մի շարք կետեր «Ընդդեմ մեխանիստական տենդենցների» ժողովածվի մեջ, եջ 9–10, 57, 129) և դրանով իսկ բռնեցին սխալ, եկլեկտիկ դիրք, օբյեկտիվորեն նպաստելով Ի. Ի. Ռուբինի տեսական հայացքների տարածմանը, դժվարացնելով պայքարը յերկու ճակատով, վոր ճշտիվ մղում եյին մի շարք ընկերներ:

Մի քանի ընկերներ, միակողմանի պայքար մղելով մեխանիստների դեմ, համամիտ եյին Ի. Ի. Ռուբինի մի շարք վոչ մարքսիստական այն դրույթներին, վորոնք վերաբերում եյին աբստրակտ աշխատանքին, արտադրության



և փոխանակության հարաբերությանը, համամիտ եյին քաղաքատնտեսության առարկայի նկատմամբ նրա տված բնորոշմանը, արտադրական ուժերի նույնացմանն արտադրության նյութական–տեխնիկական կողմի հետ, տեխնոլոգիական պրոցեսի հետ: Վերջին ժամանակներս այդ ընկերները քննադատության ազդեցությամբ, սկսեցին հեռանալ այդ սխալ դիրքից, ընդունելով վոր Ռուբինն ունի իդեալիստական սխալների մի սիստեմ, սակայն այդ հանգամանքը նրանք զուգակցում եյին այն պնդումի հետ, թե Ի. Ի. Ռուբինի համար բնորոշ է վոչ թե մարքսիզմի խեղաթյուրումը, այլ Մարքսի–Ենգելսի հիմնական ճիշտ լուսաբանումը: Դրանով իսկ այդ ընկերները ընկան՝ բացահայտ անհետևողականության և եկլեկտիզմի մեջ:

Եկոնոմիստ կոմունիստների հայացքների միասնությունը կարող է մշակվել միմիայն յերկու ֆրոնտով մղվող պայքարում, վորը բացասում է հաշտվողական վերաբերմունքը դեպի մեխանիստական և իդեալիստական–մենշևիկյան տենդենցները՝ քաղաքատնտեսության մեջ: Դիսկուսիայի շոշափած հարցերի նկատմամբ դրական հայացքներ մշակելու ամեն մի փորձ այդ պայքարից դուրս դատապարտված է ձախողության և տանում են դեպի եկլեկտիզմը:

Միայն այդ հիման վրա, սակայն բնավ «միասնություն միասնության համար» լոզունգով կայացած անսկզբունք համաձայնության հիման վրա, սրբագրելով կրնթանա կուսակցական ուժերի ամրապնդումը քաղաքատնտեսության ասպարեզում և նախապայման չափի կհասնեն դիսկուսիայի անարատողական ճախումները: Պետք է վերջ տալ տեսական տարաձայնություններին: Կոմունիստական ակադեմիան իրոք պետք է հանդիսանա այն կենտրոնը, վորը հավաքում է կուսակցական ուժերը՝ ժամանակակից տնտեսական պրոբլեմները տեսականորեն մշակելու համար: Եկոնոմիստ կոմունիստները պետք է ոգնեն թե՛ պլանային աշխատանքը գիտական պատշաճ բարձրության հասցնելու համար, և թե մեր ղեկավար տնտեսական օրգաններին (ԺՏԳԽ, Հողժողկոմատ, Հաղորդակցության Ճանապարհների Ժողկոմատ, Առևտրի Ժողկոմատ և այլն) մեր առջև ծառացած սոցիալիստական շինարարության խնդիրների լուծման: Սոցիալիստական շինարարության, պլանավորման և նրա գործնական իրականացման գիտական հիմնավորումը պետք է իբր հիմունք ունենա հասարակական զարգացման ճիշտ հասկացված մարքսիստական–լենինյան տեսությունը:

Եկոնոմիստ կոմունիստները պետք է հաղթահարեն տեսության և պրակտիկայի խզման վնասակար տենդենցը: Խորհրդային եկոնոմիկայի պրոբլեմը պետք է գլխավորի տեսական եկոնոմիկայի հետազոտ աշխատանքը, նրա հետ միասին անհրաժեշտ է խորացնել հետպատերազմյան իմպերիալիզմի պրոբլեմների տեսական մշակումը: Հարկավոր է արմատապես փոխել այն դրությունը, վորով տեսական աշխատանքը չափազանց յետ է մնում մեր ամբողջ շինարարությունից: Միայն այդ դեպքում քաղաքատնտեսությունը կմնա վորպես «իրական տեսություն», վորն ընկ. Ստալինի ասելով, «պրակտիկներին

տալիս է կազմակերպման ույժ, հեռանկարների պարզություն, ինքնավստահություն աշխատանքի մեջ, հավատ մեր գործի հաղթանակի նկատմամբ»[1]) ։

## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1․ Ի՞նչ է հասարակությունը և վորն է նրա գոյության հիմքը։

2․ Ի՞նչ եք հասկանում արտադրական ուժեր, արտադրական հարաբերություններ ասելով։

3․ Վո՞րն է արտադրական ուժերի և արտադրական հարաբերությունների դիալեկտիկական միասնությունը։

4․ Ինչո՞վ է տարբերվում հասարակական մի ֆորմացիան մյուսից։

5․ Վո՞րն է Մարքս-լենինյան քաղաքատնտեսության առարկան։

6․ Ինչո՞ւմն և ինչպե՞ս է արտահայտվում քաղաքատնտեսության դասակարգային բնույթը։

7․ Ի՞նչ նպատակով ենք ուսումնասիրում քաղաքատնտեսություն և ի՞նչ նշանակություն ունի այն մեր յերկրում սոցիալիզմի կառուցման և համաշխարհային սոցիալիստական հեղափոխության վերջնական հաղթանակի համար։

8․ Վո՞րն է քաղաքատնտեսության առարկայի ռուբինյան-մենշևիկյան բուրժուական ըմբռնումը։

9․ Ինչո՞ւմն է արտահայտվում քաղաքատնտեսության առարկայի մեխանիստական ըմբռնումը։

10․ Պարզեք արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների հակահեղափոխական ռուբինյան և մեխանիստական ռևիզիայի սոցիալ-դասակարգային աստառը։

11․ Ի՞նչպես է արտահայտվում դասակարգային պայքարը տնտեսագիտության մեջ։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. К. Маркс „К Критике полит. экономии“ изд. 4-е, 1931 г. стр. 37—89
2. Ф. Энгельс. „Анти-Дюринг“ изд. 1928 г. стр. 135—146.
3. К. Маркс и Ф. Энгельс „Архив“ книга I, изд. 1930 г. стр. 221—256
   „Архив“ кн. II, изд. 1925 г. стр. 89—107
4. Լենին. «Յերկերի ժողովածու» հատ. I, եջ 71—140
5. Լենին «Քաղաքատնտեսության հարցեր» եջ 11—15։
6. «Капитал» том I, предисловие.


---

[1]) Милютин и Борилин.



# ԱՊՐԱՆՔ

## ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Արժեքի տեսությունը Մարքսի տնտեսական ուսմունքի կարևորագույն, միևնույն ժամանակ քաղաքատնտեսության ամենադժվարագույն հարցերից մեկն է։ Սակայն ամեն տեսակի դժվարություն անպայմանորեն կհաղթահարվի համառ ու համբերատար աշխատանքի միջոցով։

«Դեպի գիտությունը—ասում է Մարքսը—տանում է վոչ լայն ռազմական ճանապարհը, և միայն նա կարող է հուսալ հասնելու նրա փայլուն բարձրունքներին, ով չվախենալով աշխատանքից՝ կմագլցի նրա քարքարոտ կածանով»։

Յեթե հաջողությամբ հաղթահարվի արժեքի տեսությունը, այն մարքս-լենինյան իմաստով ըմբռնելու տեսակետից, ապա այդ հանգամանքը կհեշտացնի քաղաքատնտեսության և հետագա թեմաների ճիշտ յուրացումը։

Արժեքի տեսության հանգուցային հարցերը, վորոնք բանալի յեն հանդիսանում քաղաքատնտեսության վողջ դասընթացի համար, հետևյալներն են․

1․ ապրանքի և աշխատանքի յերկյակ բնույթը․

2․ արժեքի ձևը և նրա զարգացումը․

3․ արժեքի սոցիալ-պատմական բնույթը․

4․ ապրանքային ֆետիշիզմը։

Նախ պետք է պարզել, թե սոցիալական ինչպիսի պայմաններում, արտադրական ինչպիսի հարաբերություններում արդյունքն ապրանք է դառնում, տնտեսական կապի ինչպիսի՞ ձևերն են հատուկ ապրանքային տնտեսության, վորից հետո միայն պետք է անցնել ապրանքի անալիզին։

Ապրանքը «բուրժուական հասարակության տնտեսական բջիջն է»․ Նրա անալիզը կատարելիս ժամանակավորապես վերանում ենք բուրժուական հասարակության կոնկրետ, բարդ հարաբերություններից և ուսումնասիրում ենք այն իրենց վերացական, պարզ դրության մեջ պարզ ապրանքարտադրողների արտադրական հարաբերությունների պայմաններում, վերցրած այն իրենց անաղարտ վիճակում։

Մեթոդոլոգիական նման մոտեցումը հնարավոր է դարձնում վոչ միայն արժեքի գիտական խոր վերլուծումը, այլև դրանով չեշտվում է կապիտալիզմի ծագումն իր սաղմային հակասություններով հանդերձ։

«Մի ապրանքի մյուսի հետ փոխանակելու առանձին ակտը—ասում է Լենինը—յուր ներսում արդեն ունի, չզարգացած ձևով, կապիտալիզմի գլխավոր հակասությունները»[1]) ։

---

[1])Ленин, собр. соч. т. IX, стр. 197.

Պարզից բարդին անցնելու, յերևույթների ուսումնասիրելու Մարքսի մեթոդը, լոկ տրամաբանական անցումը չէ, այլ նա միաժամանակ պարզի բարդացման, զարգացման իրական ուղին է:

Սկսելով պարզ ապրանքային տնտեսությունից, մենք անցնում ենք կապիտալիստական էկոնոմիկայի օրինաչափության, կապիտալիստական արտադրական հարաբերությունների ուսումնասիրությանը:

Ապրանքը, այդ, իրար հակադիր, տարբեր բնույթ ունեցող՝ սպառողական արժեքի և փոխանակային արժեքի դիալեկտիկական հակադրությունների միասնություն է, մի հակադրություն, վորը բխում է ապրանքի կեցությունից, նրա սոցիալական էությունից:

Յերևույթի, իրական կյանքի ներքին հակադրությունը հասկանալի յե դարձնում յերևույթի շարժումը՝ ծագման պրոցեսը, զարգացումն ու կործանումը:

Ապրանքի ներքին հակադրությունն իր արտաքին լուծումն ստանալով, արժեքի ձևի մեջ ըմբռնելի յե դարձնում արժեքի ձևերի զարգացումը, փողի ծագումը, վորոնց հիմքն է հանդիսանում նա: Այդ հակադրությունը հետագայում վերածվում է արտադրական հասարակական բնույթի և անհատական յուրացման հակադրությանը: «Կապիտալից» բերած համապատասխան հատվածն ապրանքի էության և բնույթի մասին ցույց է տալիս այդ հակադրության միասնության սպառիչ վերլուծությունը՝ Մարքսին հատուկ դիալեկտիկական խորությամբ:

Չպետք է շփոթել արժեքը և փոխանակային արժեքը միմյանց հետ: Արժեքը, դա ապրանքի մեջ մարմնացած հասարակական աշխատանքի վորոշ քանակություն է, մինչդեռ փոխանակային արժեքն արժեքի յերևան գալու ձևն է, նրա արտաքին արտահայտությունը: Կամ ինչպես Մարքսն է մատնանշում, «փոխանակային արժեքն արժեքի յերևան գալու արտահայտության անհրաժեշտ կերպն է»:

Ապրանքի Մարքսի անալիզը, հանգում է փոխանակային արժեքից արժեքին, ապրանքի մեջ մարմնացած աբստրակտ աշխատանքի վորոշ քանակին:

Աշխատանքի մարքսիստական անալիզը կպարզի վոչ միայն աբստրակտ և կոնկրետ աշխատանքների դիալեկտիկ բնույթը, այլ և այն դերը, վոր կատարում է դրանցից յուրաքանչյուրն արժեք ստեղծելու գործում:

Սակայն, վերջին դիսկուսիան—քաղաքատնտեսության մի շարք խնդիրների մասին—յեկավ վերջնականապես դրսևորելու մարքսիզմը ռևիզիայի յենթարկող յերկու ուղղություններ՝ վորոնք ունեյին իրենց տեսակետները նաև աբստրակտ աշխատանքի մասին:

Մեկը դրանցից, Բոգդանով-բուխարինյան մեխանիստական չկոլան է, ըստ վորի արժեք ստեղծող աշխատանքը կամ աբստրակտ աշխատանքը, դա մարդու ֆիզիոլոգիական էներգիայի ընդհանուր ու միասեռ բոլոր տեսակի կոնկրետ աշխատանքների ծախսումն է:

Ֆիզիոլոգիական էներգիայի ծախսումը բնական յերևույթ է, մարդկային



հասարակության գոյության անհրաժեշտ պայմաններից մեկը հատուկ բոլոր ժամանակներին ու ժողովուրդներին:

Ուստի տրամաբանորեն պետք է հետևեցնել, վոր աբստրակտ աշխատանքը, վորպես ֆիզիոլոգիական էներգիայի ծախսում, և այնուհետև արժեքը վորպես աբստրակտ աշխատանքի իրայնացումը և այդ արժեքից բխող կապիտալիստական արտադրական բոլոր հարաբերությունները բնական են յեղել, կան և կլինեն, ապա ուրեմն՝ նրա դեմ պայքարելը կլիներ անմտություն:

Մինչդեռ, Մարքս-լենինյան քաղաքատնտեսության անմիջական նպատակըն է բացահայտել կապիտալիզմի ծագման, զարգացման և նրա անխուսափելի կործանման օրենքները:

Այստեղից հասկանալի յե, վոր աբստրակտ աշխատանքի մեխանիստական բացատրությունը վոչ միայն ընդհանուր վոչինչ չունի մարքսիզմի հետ, այլև յերգելով բուրժուազիայի հավերժացման գովքը, դառնում է հակամարքսիստական:

Մյուսը, Ռուբինյան դպրոցի տեսակետն է, վոր միանգամայն ժխտելով աբստրակտ աշխատանքի ֆիզիոլոգիական կողմը, գտնում է, թե աբստրակտ աշխատանքը, այդ առանձին ապրանք-արտադրողի միջև յեղած լոկ ֆորմալ հավասարության ու անկախության արտահայտություն է, մի արտահայտություն, վորը յուր մեջ չի պարունակում «մատերիայի և վոչ մի ատոմ»: Նա (Ռուբինը) աբստրակտ աշխատանքի միայն «սոցիալական» կողմն է տեսնում, նրա յերևան գալու արտաքին ձևն առանց նյութական հիմքի ու բովանդակության:

Բացասելով աբստրակտ աշխատանքի մատերիական սուբստանցիան և այդպիսով ժխտելով կապիտալիզմի տնտեսական զարգացման Մարքս-լենինյան ուսմունքը՝ Ռուբինի դպրոցը լիովին կանգնում է սոցիալ ֆաշիզմի ուղեգծերի վրա, պարզելով Մարքսիզմի բացահայտ ռևիզիայի դրոշը: Ինչ խոսք, վոր չի կարելի պրոլետարիատի հեղափոխական տնտեսական թեորիան անաղարտ պահել, առանց անողոք պայքար մղելու յերկու ֆրոնտի վրա:

Թե՛ մեխանիստները և թե՛ ռուբինչինան անջատում են ձևը բովանդակությունից, տրոհում են նրա դիալեկտիկական միասնությունը: Մեխանիստները տեսնում են միայն բովանդակությունը անջատ ձևից, իսկ մենշևիկ Ռուբինի դպրոցը գործ ունի ձևի հետ՝ առանց նրա մատերիական բովանդակության:

Աբստրակտ աշխատանքի խնդրում պետք է լավ յուրացնել, մեխանիստական և իդեալիստական տեսակետներին միանգամայն հակառակ, Մարքս-լենինյան ուսմունքը, ըստ վորի «արժեքը յերկու անձանց միջև գոյություն ունեցող հարաբերություն է, ինչպես ասել է մի հին տնտեսագետ. նա պետք է ավելացներ միայն հարաբերություն, վոր ծածկված է իրային թաղանթով: Միայն հասարակության մի վորոշ և պատմական ֆորմացիայի հասարակական արտադրական հարաբերությունների, այն էլ՝ փոխանակության մաս-

սոցիալական, միլիարդ անգամ կրկնվող յերևույթի մեջ արտահայտվող հարաբերությունների սիստեմի տեսակետից կարելի յե հասկանալ թե ինչ ե արժեքը» (Լենին):

*Արժեք ստեղծող աշխատանքի մանրազնին ու բազմակողմանի քննարկումից հետո, պետք ե պարզել այն հարցը, թե ինչո՞ւ ապրանքների արժեքը, վորպես աբստրակտ աշխատանքի մարմնացումը, անմիջական աշխատանքով դրսևորվել չի կարող, այլ նրա դրսևորումը հնարավոր ե յերկու տարբեր սպառողական արժեք ունեցող ապրանքների փոխանակության պրոցեսում միայն:*

*Այս հարցի պատասխանը մեզ ընդհուպ մոտեցնում ե արժեքի ձևերի զարգացման ուսումնասիրությանը: Հետևելով ապրանքի դիալեկտիկական իմմանենտ հակասությունների հիման վրա զարգացող արժեքի ձևերի պատմական պրոցեսին՝ առանձնակի ուշադրությամբ պետք ե ուսումնասիրել արժեքի հարաբերական և եկվիվալենտ ձևերը, նրանց դիալեկտիկական կապակցությունը, վորպես՝ մի կողմից իրար պայմանավորող անբաժանելի մոմենտներ, մյուս կողմից՝ իրար բացասող հակադիր բևեռներ:*

*Ապրանքը վորպես արժեք իր այդ արժեքային կեցությունը յերևան ե բերում միայն այն ժամանակ, յերբ նա հարաբերության մեջ ե մտնում մի ուրիշ ապրանքի հետ: Այդպիսով, մի ապրանքի սպառողական արժեքը մյուս ապրանքի արժեքի յերևան գալու ձևն ե դառնում, ապրանքի ներքին հակասությունը այդտեղ գտնում ե իր արտաքին արտահայտությունը:*

*Արժեքի ձևերի զարգացման ընթացքը մեզ ցույց կտա, թե ինչպես կոնկրետ աշխատանքն աբստրակտ աշխատանքի յերևան գալու ձև ե դառնում, անհատականը հասարակական աշխատանքի, թե ինչու արժեքի պարզ ձևի զարգացումը տանում ե ապրանքային աշխարհի յերկու տարբեր բևեռների ապրանքի և փողի, բաժանման. ինչո՞ւ աբստրակտ աշխատանքը մարմնանում ե փողի մեջ: Արժեքի մի ձևից մյուսին անցնելու ուսումնասիրության ուղին լոկ տրամաբանական ուղի չե, այլ նա արժեքի ձևերի զարգացման, փոխանակության և փոխանակային հասարակության արտադրական հարաբերությունների զարգացման իրական ընթացքը և նրանց պատմությունն ե:*

*Արժեքի տեսության գիտական ավարտումն ու յեզրափակումը, Մարքսի մոտ, ապրանքային ֆետիշիզմի մասին յեղած ուսմունքն ե, ուստի և նրա մշակման վրա ավելի մեծ ուշադրություն պիտի դարձնել:*

*Մարքսը վոչ միայն բաց արեց կապիտալիստական հարաբերությունների ֆետիշացման փաստը, այլ և տվեց նրա սպառիչ բացատրությունը՝ ֆետիշիզմի եյությունը և ոբյեկտիվ պատճառները:*

*Կապիտալիստական հասարակության մեջ մարդկանց հարաբերությունները* իրայնանում են, յերևան են գալիս վոչ անմիջապես, այլ վորպես իրերի հարաբերություններ: *Այս հանգամանքը, իրերին ինչվոր գերբնական ուժ, կախարդական բնույթ ե տալիս, ստացվում ե մի պատկեր, վոր վոչ թե մարդիկ իրենք են իշխում իրենց հարաբերություններին և կարգավորում այդ*



*հարաբերությունները, այլ ընդհակառակը—վերջիններս իբրև հարաբերության ձևով, իշխում են մարդկանց վրա,* տնորինում *նրանց բախտը:*

*Մարդկանց հարաբերությունների ֆետիշացման գաղտնիքը, նրա ոբյեկտիվ պատճառները թաղնված են արժեքի ձևի՝ մի ապրանքի արժեքը մյուսով արտահայտելու մեջ: Ապրանքային ֆետիշիզմի տեսության հիման վրա պետք ե ըմբռնել արժեքի որենքի* անցողիկ պատմական բնույթը, *նրա հասարակական հարաբերություն լինելը:*

«Արժեքն իրերում արտահայտված, մարդկանց միջև յեղած հարաբերությունների, հասարակական հարաբերությունների իրայնացած արտահայտություն ե լոկ» [1]):

*Չպետք ե արժեքի որենքը պատկերացնել մի ինչ վոր կայուն մակարդակ, վորի շուրջը պտտվում և վորին ձգտում ե ապրանքային տնտեսությունը: Նման «հավասարակշռության որենքը» տանում ե դեպի Բուխարինի հայտնի հավասարակշռության թեորիայի հակամարքսիստական լաչերը:*

*Արժեքն ապրանքային տնտեսության շարժման որենքն ե, շարունակ փոփոխվող աշխատանքի մասսայի բաշխման որենքը, այն «հայտնի» համաչափությունը, վոր գոյություն ունի փոխանակային տնտեսության առանձին մասերի միջև, արժեքի որենքի ներգործման մի կողմն ե միայն,* լոկ մի մոմենտը:

*Ուսանողների աշխատանքը թեթևացնելու և արժեքի տեսությունը լավ յուրացնելու նկատառումով, նպատակահարմար ենք գտնում այն բաժանելու յերեք յենթաթեմաների, յելնելով վերոհիշյալ հանգուցային հարցերից:*

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

*Տարերայնորեն զարգացող արդյունաբերություն ունեցող յուրաքանչյուր հասարակության մեջ—իսկ ժամանակակից հասարակությունն հանդիսանում ե այդպիսին*—վո՛չ թե արտադրողներն են տիրապետում արտադրության միջոցներին, այլ արտադրության միջոցներն են տիրապետում արտադրողներին: *Այդ տեսակ հասարակության մեջ արտադրության յուրաքանչյուր նոր լծակ անհրաժեշտաբար* փոխարկվում ե *արտադրողների ստրկացման նոր միջոցի՝ արտադրության միջոցների կողմից: Այդ բանն ամենից առաջ վերաբերում ե արտադրության այն լծակին, վորը մինչև ընդհուպ խոշոր արդյունաբերության ծագումն ամենից ավելի հզորն եր, այն ե՝* աշխատանքի բաժանումը: *Արդեն աշխատանքի* առաջին մեծ բաժանումը, քաղաքի անջատումը գյուղից, *գյուղական բնակչությանը դատապարտեց յերկարատև հազարամյակների բթացման, իսկ քաղաքացիներին—յուրաքանչյուրին առանձին վերցրած ստրկացման՝ իր մանրամասն աշխատանքի կողմից: Նա վոչնչացրեց առաջինների հոգևոր զարգացման, իսկ յերկրորդների ֆիզիկական զարգացման*

[1]) Маркс, «Теория прибав. ценности», т. III, стр. 109.

հիմքը: Յեթե գյուղացին դառնում է հողի սեփականատեր, իսկ քաղաքային արհեստավորը՝ սեփականատեր իր արտադրության գործիքների, ապա հողն էլ ավելի մեծ չափով է ստրկացնում գյուղացուն, իսկ արհեստն—արհեստավորին: Աշխատանքի բաժանումով մարդն ինքն էլ բաժանվեց մասերի: Մարդու վորևիցե մի գործունեյությունը զարգացնելու նպատակով՝ զոհ բերվեցին նրա բոլոր մյուս ֆիզիկական և մտավոր ընդունակությունները: Մարդու այդ մանրացումն աճում է աշխատանքի բաժանման զարգացման հետ միաժամանակ, վորը բարձրագույն աստիճանի յե հասնում մանուֆակտուրայի մեջ: Մանուֆակտուրան արհեստը տարրալուծում է իր առանձին գործառնությունների, նրանցից ամեն մեկն՝ հատկացնում է առանձին բանվորի՝ իբրև նրա ամբողջ կյանքի զբաղմունքը և այդպիսով նրա ամբողջ կյանքի ընթացքում կապում է վորոշ մասնակի ֆունկցիայի և աշխատանքի վորոշ գործիքի հետ: «Նա խեղանդամ է դարձնում բանվորին, փոխարկում մի ինչ-վոր հրեշի, դուռ ջերմանոցային յեղանակով առաջ բերելով նրա մեջ մասնակի հմտությունների զարգացումն ու ճնշելով արտադրողական հակումների և ընդունակությունների մի ամբողջ աշխարհ... Անձն ինքը բաժան-բաժան է լինում, փոխարկվելով մի ինքնաշարժ անիվի, վորը մի մասնակի աշխատանք է կատարում» (Մարքս),—մի ինքնաշարժ անիվ, վորը շատ դեպքերում իր կատարելությանն է հասնում միայն բանվորին ֆիզիկական և հոգևոր տեսակետից լիովին խեղանդամելու միջոցով: Խոշոր արդյունաբերության մաշինիզմը բանվորին մեքենայից փոխարկում և դարձնում է նրա հասարակ կցորդը (придаток): Աշխատանքի ցմահ մասնագիտությունը մասնակի գործիքով՝ փոխարկվում է մասնակի մեխանիզմին ծառայելու նույնպես ցմահ մասնագիտության: Մեքենան ի չարն է գործ դնում՝ բանվորին իրեն վաղ մանկական հասակից մասնակի մեխանիզմի բաղկացուցիչ մասը դարձնելու համար (Մարքս): Աշխատանքի բաժանման շնորհիվ, իրենց գործունեյության գործիքները ստրկացնում են վո՛չ միայն բանվորին, այլ նաև նրանց ուղղակի կամ կողմնակի կերպով շահագործող դասակարգերին՝ հոգեպես ամայացած բուրժուային ստրկացնում է իր սեփական կապիտալն և իր շահույթի տենչը. իրավաբանին— իր քարացած իրավական հայացքները, վորոնք իշխում են նրա վրա իբրև ինքնուրույն ուժ: «Կրթված դասակարգերին» առհասարակ—իրենց սահմանափակությունը և միակողմանիությունը, իրենց մարմնական և հոգևոր կարճատեսությունը, իրենց խեղանդամությունը, վոր առաջացել է նրանց մասնագիտությանն հարմարեցրած կրթությամբ և նրանով, վոր նրանք ամբողջ կյանքի ընթացքում գամված են մնում այդ մասնագիտությանը, թեկուզ և նրա եյությունը լինի վոչինչ չանելը[1]):

Աշխատանքի բաժանումն հասարակության մեջ և անհատի համապատասխան սահմանափակումը վորոշ զբաղմունքի վոլորտով ունի, ինչպես և աշխատանքի բաժանումը մանուֆակտուրայի ներսում, զարգացման յերկու հա-

[1]) Энгельс, «Анти Дюринг», стр. 277- -278



կադիր յելակետներ: Ընտանիքի սահմաններում—իսկ հետագա զարգացման հետ՝ տոհմի սահմաններում—աշխատանքի բնական բաժանումը ծագում է սեռական և հասակի տարբերությունների հետևանքով, այսինքն՝ զուտ ֆիզիոլոգիական հողի վրա, և նա ընդարձակում է իր նյութը հասարակական կյանքի ընդլայնման, բնակչության աճման հետ միասին, իսկ առանձնապես յերբ կոնֆլիկտներ են առաջ գալիս տարբեր տոհմերի միջև և մի տոհմը յենթարկվում է մյուսին: Մյուս կողմից, ինչպես յես արդեն առաջ նշել եմ, արդյունքների փոխանակությունը ծագում է այն վայրերում, վորտեղ միմյանց հետ շփման մեջ են մտնում զանազան ընտանիքներ, տոհմեր, համայնքներ, վորովհետև մարդկային կուլտուրայի սկզբում վո՛չ թե առանձին անհատներն են իբրև ինքնուրույն միավորներ միմյանց հետ հարաբերությունների մեջ մտնում, այլ ընտանիքները, տոհմերը և այլն: Տարբեր համայնքներն իրենց շրջապատող բնության մեջ արտադրության տարբեր միջոցներ և գոյության տարբեր միջոցներ են գտնում: Այդ պատճառով էլ նրանք միմյանցից տարբերվում են իրենց արտադրության յեղանակով, կենցաղավարությամբ և արտադրված արդյունքներով: Դրանք — այն բնականաբար աճած տարբերություններն են, վորոնք համայնքների միմյանց հետ շփվելու ժամանակ առաջ են բերում արդյունքների փոխադարձ փոխանակություն, հետևաբար ուրեմն, հետզհետե այդ արդյունքները փոխարկվում են ապրանքների, փոխանակությունը տարբերություն չի ստեղծում արտադրության վոլորտների միջև, բայց արդեն տարբեր վոլորտների միջև կապ է հաստատվում և փոխարկում է նրանց՝ միահամուռ հասարակական արտադրության միմյանցից ավելի կամ պակաս չափով կախված ճյուղերի: Այստեղ աշխատանքի հասարակական բաժանումն առաջ է գալիս փոխանակության միջոցով՝ արտադրության սկզբնապես տարբեր, բայց միմյանցից անկախ վոլորտների միջև: Այնտեղ, վորտեղ յելակետ է կազմում աշխատանքի ֆիզիոլոգիական բաժանումը, անմիջականորեն կապված ամբողջի առանձին որգանները բաժան-բաժան են լինում, քայքայվում են,—ըստ վորում այդ քայքայմանը գլխավորապես զարկ է տալիս ոտար համայնքների հետ կատարվող ապրանքների փոխանակությունը,—և ինքնուրույն են դառնում, իրենց մեջ պահպանելով այն կապը միայն, վորը հաստատվում է առանձին աշխատանքների միջև նրանց արդյունքներն իբրև ապրանք փոխանակելու միջոցով: Մի դեպքում ինքնուրույնությունը կորցնում է այն, ինչ վոր առաջ ինքնուրույն էր, մյուս դեպքում ինքնուրույնությունն է ձեռք բերում այն, ինչ վոր առաջ ինքնուրույն չէր: Ապրանքային փոխանակության միջոցով կենսագործվող աշխատանքի յուրաքանչյուր զարգացած բաժանման հիմք հանդիսանում է քաղաքի անջատումը գյուղից: Կարելի յե ասել, վոր հասարակության ամբողջ տնտեսական պատմությունն ամփոփվում է այդ հակադրության շարժման մեջ, վորի վրա մենք, սակայն, այստեղ ավելի յերկար կանգ չենք առնի:

Մանուֆակտուրայի ներսում աշխատանքի բաժանման նյութական նախադրյալը, ինչպես մենք տեսանք, միաժամանակ զբաղված բանվորների վորոշ

քանակությունն է․ Հասարակության ներսում աշխատանքի բաժանման ժամանակ նույնպիսի դեր է խաղում բնակչության մեծությունն ու նրա խտությունը, վորն այստեղ բռնում է մարդկանց միևնույն արհեստանոցում կուտակվելու տեղը: Բայց բնակչության այդ խտությունը հարաբերական մի բան է: Համեմատաբար թույլ բնակված, բայց հաղորդակցության զարգացած միջոցների տեր յերկիրն ավելի խիտ բնակչություն ունի, քան ավելի շատ բնակիչներ ունեցող յերկիրը՝ հաղորդակցության անզարգացած միջոցներով: Այս իմաստով ամերիկական միության հյուսիսային նահանգներն ավելի խիտ բնակչություն ունեն, քանթե, որինակ, Հնդկաստանը:[1])

Ապրանքային տնտեսության հիմքն աշխատանքի հասարակական բաժանումն է: Մշակող արդյունաբերությունն անջատվում է հայթայթող արդյունաբերությունից և նրանից ամեն մեկը տրոհվում է մանր տեսակների և յենթատեսակների, վորոնք հատուկ արդյունքներ են արտադրում ապրանքի ձևով և փոխանակում նրանք բոլոր մյուս արտադրությունների հետ: Այդպիսով՝ ապրանքային տնտեսության զարգացումը տանում է դեպի արդյունաբերության առանձին և ինքնուրույն ճյուղերի թվի մեծացումը․ այդ զարգացման տենդենցն այն է, վորպեսզի արդյունաբերության հատուկ ճյուղի վերածե վո՛չ միայն յուրաքանչյուր առանձին արդյունքի արտադրությունը, այլ մինչև անգամ նաև արդյունքի յուրաքանչյուր առանձին մասնը․ և վո՛չ միայն արդյունքի արտադրությունը, այլ մինչև անգամ սպառման համար նշանակված արդյունքի պատրաստման առանձին գործառնությունները: Բնատնտեսության ժամանակ հասարակությունը կազմված եր միատեսակ տնտեսական միավորների մասսայից (նահապետական գյուղացիական ընտանիքներից, պրիմիտիվ գյուղական համայնքներից, ֆեոդալական կալվածքներից), և յուրաքանչյուր այդպիսի միավոր կատարում եր տնտեսական աշխատանքների բոլոր տեսակները, սկսած հումքի զանազան տեսակների հայթայթումից և վերջացրած նրանց՝ գործածության համար վերջնականապես պատրաստելով: Ապրանքային տնտեսության ժամանակ ստեղծվում են այլազան տնտեսական միավորներ, ավելանում է տնտեսության առանձին ճյուղերի թիվը, պակասում է այն տնտեսությունների թիվը, վորոնք միևնույն տնտեսական ֆունկցիան են կատարում: Աշխատանքի հասարակական բաժանման այդ պրոգրեսիվ աճումը հիմնական մոմենտ է հանդիսանում կապիտալիզմի համար ներքին շուկա ստեղծելու պրոցեսում:

Ինքնըստինքյան հասկանալի յէ, վոր մշակող արդյունաբերության մատնանշված անջատումը հայթհայթող արդյունաբերությունից, մանուֆակտուրայի անջատումը հողագործությունից, հողագործությունն ինքն ել արդյունաբերություն է դարձնում, այսինքն՝ տնտեսության մի ճյուղ, վոր ապրանքներ է արտադրում: Մասնագիտացման այն պրոցեսը, վոր անջատում է միմյանցից արդյունքների մշակման զանազան տեսակները, ստեղծելով արդյու–

[1]) Маркс, Капитал I, стр. 329—331



նաբերության ճյուղերի չարունակ ավելի և ավելի մեծ թիվ, յերևան է գալիս նաև հողագործության մեջ, ստեղծելով հողագործության մասնագիտացող շրջաններ (և հողագործական տնտեսության սիստեմներ), փոխանակություն առաջ բերելով վոչ միայն հողագործության և արդյունաբերության արդյունքների միջև, այլև գյուղատնտեսության տարբեր արդյունքների միջև: Առևտրական (և կապիտալիստական) հողագործության այդ մասնագիտացումը յերևան է գալիս աշխատանքի միջազգային բաժանման մեջ, յերևան է գալիս նաև հետռեֆորմական Ռուսաստանում, ինչպես մենք մանրամասն ցույց կտանք ստորև:

Այդպես ուրեմն, աշխատանքի հասարակական բաժանումը՝ ապրանքային տնտեսության և կապիտալիզմի զարգացման ամբողջ պրոցեսի հիմքն է:[1])

## ԱՊՐԱՆՔԱԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Սեփականության միևնույն իրավունքն է գործում թե՛ սկզբում, յերբ արդյունքը պատկանում է արտադրողին, իսկ այս վերջինը՝ փոխանակելով եկվիվալենտն եկվիվալենտի հետ՝ կարող է հարստանալ միայն իր սեփական աշխատանքի հաշվին, և թե՛ կապիտալիստական շրջանում, յերբ հասարակական հարստությունն ավելի և ավելի նրանց սեփականությունն է դառնում, ովքեր ի վիճակի յեն չարունակ յուրացնել ուրիշների չվճարված աշխատանքի նոր բաժիններ:

Այդ հետևանքն անխուսափելի յէ, քանի վոր բանվորական ուժն ազատ կերպով վաճառվում է բանվորի իրեն կողմից, իբրև ապրանք: Բայց միայն այս պատճառով է ապրանքային արտադրությունը ընդհանրական բնույթ ձեռք բերում և արտադրության տիպիկ ձև դառնում․ միայն այս պատճառով է յուրաքանչյուր արդյունք սկսում արտադրվել վաճառքի համար և ամբողջ արտադրած հարստությունն անցնում է շրջանառության վոլորտի միջով:

Միայն այն ժամանակ, յերբ վարձու աշխատանքը դառնում է ապրանքային արտադրության հիմքը, այդ վերջինը փաթաթում է իրեն ամբողջ հասարակության վիզը: Բայց միայն այդ պայմանով նա կարող է ծավալել իր մեջ թագնված բոլոր ուժերը: Ասել, թե վարձու աշխատանքի հանդես գալը աղավաղում է ապրանքային արտադրության իսկական բնույթը—բոլորովին միևնույնն է, թե ասել՝ վորպեսզի ապրանքային արտադրության իսկական բնույթը առանց աղավաղման մնա, նա չպետք է զարգանա: Հենց նույն չափով, վոր չափով ապրանքային արտադրությունը՝ իր սեփական որենքներին համապատասխան զարգանալով՝ փոխարկվում է կապիտալիստական արտադրության, այդ միևնույն չափով ել ապրանքային արտադրու–

[1]) Ленин, т. III, стр. 13—15.

թյանը հատուկ սեփականատիրության որենքներն անցնում — փոխարկվում են կապիտալիստական յուրացման որենքների[1]) :

*Ապրանքային արտադրությունն ամենևին հասարակական արտադրության բացառիկ ձևը չէ: Հին հնդկական համայնքներում և հարավային-սլավոնական ընտանեկան համայնքներում արդյունքներն ապրանքների չեն փոխարկվում: Համայնքի անդամները միանում են հասարակության մեջ անմիջական կերպով արտադրելու համար, աշխատանքը բաշխվում է սովորությունների և պահանջների համաձայն, ճիշտ այնպես, ինչպես նաև այն արդյունքները, վորչափով վոր նրանք ծախսվում են անմիջականորեն սպառման համար: Անմիջական հասարակական արտադրությունը, ինչպես նաև ուղղակի բաշխումը, բացասում է ամեն տեսակ ապրանքային փոխանակություն, հետևաբար ուրեմն, նաև արդյունքների փոխարկումն ապրանքների (գոնե համայնքի ներսում), իսկ դրա հետ միասին նաև նրանց փոխարկումն արժեքների*[2]) :

*Յերկու բնորոշ գծեր հենց սկզբից տարբերում են արտադրության կապիտալիստական յեղանակը:*

Առաջին. Նա իր արդյունքները արտադրում է իբրև ապրանքներ: Վո՛չ թե ապրանքների արտադրության փաստն ինքն է այն առանձնահատկությունը, վոր տարբերում է նրան արտադրության մյուս յեղանակներից, այլ այն հանգամանքը, վոր նրա արդյունքների համար ապրանքների փոխարկվելը տիրապետող և վորոշող գիծ է հանդիսանում: Այդ բանն յենթադրում է ամենից առաջ, վոր բանվորն ինքը հանդես է գալիս միայն իբրև ապրանք վաճառող, իբրև ազատ վարձու բանվոր, հետևաբար և, աշխատանքն ընդհանրապես իբրև վարձու աշխատանք: *Այն բոլորից հետո, ինչ վոր մենք շարադրեցինք մինչև այժմ, ավելորդ կլիներ այստեղ նորից ապացուցել, թե* կապիտալի հարաբերությունը դեպի վարձու աշխատանքը վորոշում է արտադրության տվյալ յեղանակի ամբողջ բնույթը: *Արտադրության հենց այդ յեղանակի գլխավոր գործիչները, կապիտալիստն ու վարձու բանվորը, իբրև այդպիսիներ, ներկայացնում են միայն* կապիտալի և վարձու աշխատանքի մարմնացումն ու պերսոնիֆիկացիան: *Այդ հասարակական վորոշ բնույթներ են, վոր անհատների վրա դրոշմում է արտադրության հասարակական պրոցեսը, տվյալ վորոշ հասարակական արտադրական հարաբերությունների արդյունքներ:*

*Առաջին*, արդյունքի բնույթն իբրև ապրանք, յերկրորդ՝ ապրանքի բնույթն իբրև կապիտալի արդյունք՝ արդեն յենթադրում է շրջանառության հարաբերությունների ամբողջական լրությունը, այսինքն՝ յենթադրում է վորոշ հասարակական պրոցես, վոր պետք է կատարեն արդյունքները և վորի մեջ նրանք վորոշ հասարակական բնույթ են ձեռք բերում. *միևնույն ժամա-*

[1]) Капитал I, стр. 571—572.

[2]) Энгельс, «Анти—Дюринг», стр. 294—295.



*նակ այստեղ վոչ պակաս վորոշ հարաբերություններ են յենթադրվում արտադրության գործիչների միջև, վորոնցով վորոշվում է նրանց արդյունքի գործադրությունը և նրա հետադարձ փոխակերպումը կամ գոյության միջոցների կամ արտադրության միջոցների: Բայց մինչև անգամ այդ բանը մի կողմ թողնելով*, արդյունքի իբրև ապրանքի կամ ապրանքի իբրև կապիտալիստորեն արտադրված ապրանքի վերևում մատնանշված յերկու բնորոշ առանձնահատկություններից բղխում է արժեքի ամբողջ վորոշումը և ամբողջ արտադրության կարգավորումը արժեքի միջոցով: Արժեքի այդ միանգամայն սպեցիֆիկ ձևի մեջ աշխատանքը նշանակություն ունի, մի կողմից միայն իբրև հասարակական աշխատանք. մյուս կողմից՝ այդ հասարակական աշխատանքի բաշխումը և նրա փոխադարձ ավարտումը, նյութերի փոխանակությունը նրա արդյունքների միջև, նրա յենթարկումը հասարակական մեխանիզմի ընթացքին և այդ վերջինի մեջ մտնելը,—այդ բոլորը թողնված է անհատ կապիտալիստական արտադրողների պատահական, փոխադարձաբար միմյանց վոչնչացնող ձգտումներին, վորովհետև այդ արտադրողները կանգնած են միմյանց հանդեպ միայն իբրև ապրանքատերեր, ըստ վորում յուրաքանչյուրն աշխատում է իր ապրանքը վորքան կարելի յե եժան վաճառել (և մինչև անգամ արտադրության կարգավորման ժամանակ ղեկավարվում է կարծես միայն իր կամայականությամբ) դրա համար էլ ներքին որենքը իրեն համար ճանապարհ է բաց անում լոկ նրանց մրցակցության միջոցով, նրանց միմյանց վրա գործադրած փոխադարձ ճնշման միջոցով, վորի շնորհիվ փոխադարձաբար վոչնչանում են բոլոր շեղումները: *Միայն իբրև ներքին որենք, իբրև բնության կույր որենք այստեղ արտադրության առանձին գործիչների աչքում հանդես է գալիս արժեքի որենքը և կենսագործում է արտադրության հասարակական հավասարակշռությունը պատահական տատանումների մեջ:*

*Այնուհետև*, արդեն ապրանքն իբրև այդպիսին, և է՛լ ավելի մեծ չափով ապրանքն իբրև կապիտալի արդյունք, յենթադրում է հասարակական-արտադրական հարաբերությունների իրայնացումը և արտադրության նյութական հիմքերի պերսոնիֆիկացիան, վոր և հանդիսանում է արտադրության ամբողջ կապիտալիստական յեղանակի բնորոշ առանձնահատկությունը:

Յերկրորդ առանձնահատկությունը, վոր հատկապես բնորոշում է արտադրության կապիտալիստական յեղանակը, այդ — հավելյալ արժեքի արտադրությունն է, իբրև արտադրության անմիջական նպատակը և վորոշող մոտիվը: Կապիտալն ամենից առաջ կապիտալ է արտադրում և այդ նպատակին հասնում է այն չափով, վոր չափով հավելյալ արժեք է արտադրում:[1])

... *Ներքին շուկայի ստեղծման (այսինքն՝ ապրանքային արտադրության և կապիտալիզմի զարգացման* հիմնական պրոցեսը աշխատանքի հասարակական բաժանումն է: *Նրա էությունն այն է, վոր հողագործությու-*

[1]) Маркс, Капитал т. III, ч. II, стр. 340—341.

նից մեկը մյուսի հետևից անջատվում են հումքի մշակության զանազան տեսակները (և այդ մշակության վերաբերյալ զանազան գործառնությունները) և արդյունաբերության ինքնուրույն ճյուղեր են կազմում, վորոնք իրենց արդյունքները (այժմ արդեն ապրանքները) փոխանակում են հողագործության արդյունքների հետ: Այդպիսով հողագործությունն ինքը արդյունաբերություն է դառնում (այսինքն՝ ապրանքների արտադրություն) և նրա մեջ էլ տեղի յե ունենում մասնագիտացման նույն պրոցեսը:

Նախորդ դրույթի անմիջական յեզրակացությունը հանդիսանում է յուրաքանչյուր զարգացող ապրանքային և առավել ևս կապիտալիստական տնտեսության այն որենքը, թե ինդուստրիալ (այսինքն՝ վոչ հողագործական) բնակչությունը հողագործականից ավելի արագ է աճում, ավելի և ավելի շատ բնակչություն է հողագործությունից քաշում դեպի մշակող արդյունաբերությունը:

Անմիջական արտադրողի անջատումն արտադրության միջոցներից այսինքն՝ նրա եքսպրոպրիացիան, նշանակելով անցումն պարզ ապրանքային տնտեսությունից դեպի կապիտալիստական տնտեսություն (և կազմելով այդ անցման անհրաժեշտ պայմանը), ստեղծում է ներքին շուկա: Ներքին շուկայի ստեղծման այդ պրոցեսը գալիս է յերկու կողմից. մի կողմից՝ արտադրության միջոցները, վորոնցից «ազատվում է» մանր արտադրողը, իրենց նոր տիրոջ ձեռքում կապիտալ են դառնում, ծառայում են ապրանքների արտադրության համար և, հետևաբար, իրենք էլ ապրանքի յեն փոխարկվում: Այդպիսով՝ մինչև անգամ արտադրության այդ միջոցների պարզ վերարտադրումն այժմ պահանջում է արդեն նրանց գնումը (առաջ արտադրության այդ միջոցները մեծ մասամբ վերարտադրվում եյին բնական ձևով և մասամբ պատրաստվում եյին տանը), այսինքն՝ առաջադրում է արտադրության միջոցների շուկա, իսկ ապա նաև արտադրության այդ միջոցների ոգնությամբ այժմ արտադրած արդյունքն ևս ապրանք է դառնում: Մյուս կողմից, գոյության միջոցներն այդ մանր արտադրողի համար դառնում են փոփոխական կապիտալի իրային տարրեր, այսինքն այն փողային գումարը, վոր ծախսում է ձեռնարկողը (միևնույնն է՝ հողագործը, կապալառուն, փայտարդյունաբերողը թե ֆաբրիկանտը և այլն) բանվորներ վարձելու համար: Այդպիսով գոյության այդ միջոցներն այժմ նույնպես ապրանքի յեն փոխարկվում, այսինքն՝ ստեղծում են սպառման առարկաների ներքին շուկա [1]):

Բոլորովին այլ բան պետք է ասել կապիտալի մասին: Նրա գոյության պատմական պայմաններն ամենևին չեն սպառվում ապրանքային և դրամական շրջանառության առկայությամբ: Կապիտալը առաջ է գալիս այնտեղ միայն, վորտեղ արտադրության միջոցների և գոյության միջոցների սեփականատերը շուկայում ազատ բանվոր է գտնում իր բանվորական ուժը վաճառողի դերում. և արդեն այս մի պատմական նախադրյալը իր մեջ պարու-

[1]) Ленин, т. III, стр. 39—40.



նակում է հատուկ պատմական զարգացման մի ամբողջ աշխարհ: Այդպիսով, կապիտալն իր ծագման հենց բոլորովին սկզբից ազդարարում է հասարակական-արտադրական պրոցեսի հատուկ դարաշրջանի գալուստը:[1])

## ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԿԱՊԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԸ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Այն խնդիրը, վոր մենք դրել ենք մեր առաջ, այն է, վորպեսզի ապացուցենք, թե հասարակությունը չի կարող գոյություն ունենալ առանց հասարակական աշխատանքի, այսինքն՝ առանց պլանաչափ կազմակերպված աշխատանքի: Մենք բոլոր ժամանակներում էլ հանդիպում եյինք այսպիսի հասարակական աշխատանքի ամենաբազմազան ձևերի: Արդի հասարակության մեջ մենք այդ բանը չենք գտնում. պլան չի կենսագործվում վոչ իշխանության, վոչ որենքի, վոչ դեմոկրատիայի կողմից, մենք չենք գտնում կազմակերպման և պլանի վոչ մի հետք,—մենք միայն անարխիա յենք տեսնում: Այսպիսի պայմաններում ի՞նչպես է հնարավոր կապիտալիստական հասարակության գոյությունը:

Կապիտալիստական բաբելոնյան աշտարակի կառուցվածքն ուսումնասիրելու համար պատկերացնենք մեզ մի հասարակություն՝ աշխատանքի պլանաչափ կազմակերպությամբ: Թող այդ մի հասարակություն լինի աշխատանքի զարգացած բաժանումով, վորտեղ վոչ միայն գյուղատնտեսությունն է անջատված արդյունաբերությունից, այլ վորտեղ թե մեկի և թե մյուսի ներսում յուրաքանչյուր ճյուղը աշխատավորների առանձին խմբերի մասնագիտությունն է դարձել: Ուրեմն՝ այդ հասարակության մեջ կան գյուղատնտեսներ և անտառաբույծներ, ձկնորսներ և այգեգործներ, կոշկակարներ և դերձակներ, փականագործներ և դարբիններ, մանողներ, ջուլհակներ և այլն: Հասարակությունն ամբողջությամբ վերցրած ապահովված է աշխատանքի բոլոր տեսակներով և արդյունքների բոլոր տեսակներով: Այդ արդյունքները մեծ կամ փոքր քանակությամբ տրվում են հասարակության բոլոր անդամներին, վորովհետև աշխատանքն հանդիսանում է ընդհանուր, նախորոք բաշխված և պլանաչափ կերպով կարգավորված վորևէ հեղինակավորության կողմից, լինի այն կառավարության բռնակալ որենքը, ճորտատիրական իրավունքը, թե կազմակերպության վորևէ այլ ձև: Պարզության համար յենթադրենք, թե այդ կոմունիստական մի համայնք է՝ հասարակական սեփականատիրությամբ, ինչպիսին մենք արդեն տեսանք Հնդկաստանի որինակով: Մի րոպե պատկերացնենք մեզ նաև, թե աշխատանքի բաժանումն այդ հասարակության մեջ շատ ավելի յե առաջ գնացել, քան թե այդ պատմականորեն համապատասխանում է իսկական դրությանը և վոր

[1]) Маркс, Капитал, I, стр. 140.

համայնքի անդամների մի մասն զբաղվում է բացառապես գյուղատնտեսությամբ, մինչդեռ բոլոր մյուս աշխատանքները կատարում են մասնագետ-արհեստավորները: Այդ համայնքի տնտեսության պատկերը մեզ համար բոլորովին պարզ է. հասարակության անդամներն իրենք միահամուռ կերպով տիրում են հողին և արտադրության բոլոր միջոցներին: Նրանց ընդհանուր կամքն է վորոշում, թե յուրաքանչյուր արդյունքից ինչ, յերբ և վորքան պետք է արտադրվի: Արտադրված արդյունքների ամբողջ մասսան, հավասար չափով պատկանելով բոլորին, բաշխվում է բոլորի միջև համապատասխան նրանց ունեցած պահանջների: Այժմ պատկերացնենք մեզ, վոր մի գեղեցիկ օր այդ ձևով կառուցված կոմունիստական համայնքի մեջ վոչընչացվում է հասարակական սեփականությունը, իսկ դրա հետ վոչնչացվում են նաև հասարակական աշխատանքն ու արտադրությունը կարգավորող ընդհանուր կամքը: Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր մինչև այդ մոմենտը ձեռք բերված աշխատանքի բարձր բաժանումը մնում է: Կոշկակարը մնում է իր կաղապարների տերը, հացթուխը գիտե միայն իր հնոցը, դարբինը միայն դարբնոց ունի և վարվել գիտե միայն մուրճի հետ և այլն, բայց կտրվել է այն շղթան, վոր առաջ այդ բոլոր հատուկ աշխատանքները միացնում և հասարակական տնտեսություն եր դարձնում: Այժմ յուրաքանչյուր գյուղատնտեսությամբ զբաղվողը, կոշկակարը, հացթուխը, փականագործը, ջուլհակը և այլն իրենց բախտին են թողնված: Այժմ յուրաքանչյուրը միանգամայն ազատ և անկախ մարդ է: Համայնքն այժմ այլևս չի կարող միջամտել նրա գործերին, վոչ վոք չի կարող հրամայել նրան՝ աշխատել բոլորի համար, բայց վոչ վոք էլ հոգս չի քաշում նրա կարիքների մասին: Համայնքը, վոր ինչ վոր մի ամբողջություն եր ներկայացնում, բաժանվեց առանձին ատոմների, առանձին մասնիկների, ինչպես հազար կտոր դարձած մի հայելի: Ամեն մի մարդ կարծես վեր է ածվում մի առանձնացած, ոդի մեջ սավառնող փոշեհատիկի, և պետք է ինքն իր գլխի ճարը տեսնի: Ի՞նչ կլինի այդ համայնքի վիճակը, վոր հանկարծակի յենթարկվել է նման կատաստրոֆի: Ի՞նչ կսկսեն անել հետևյալ օրը այդ բոլոր իրենց բախտին թողնված մարդիկ: Վստահությամբ միայն մի բան կարելի յե ասել. նրանք հետևյալ օրն ամենից առաջ կաշխատեն ճիշտ այնպես, ինչպես վոր անում եյին առաջ, վորովհետև, քանի վոր մարդկային պահանջներն առանց աշխատանքի չեն կարող բավարարվել, յուրաքանչյուր մարդկային հասարակություն պետք է աշխատի: Ինչպիսի հեղաշրջումներ ու փոփոխություններ էլ տեղի ունենան հասարակության մեջ, աշխատանքը չի կարող վոչ մի րոպե կանգ առնել: Այդ պատճառով՝ կոմունիստական հասարակության նախկին անդամները—նրանց միմյանց հետ միացնող կապերը կտրվելուց և յուրաքանչյուրն իր բախտին թողնվելուց հետո էլ — ամենից առաջ կշարունակեն իրենց աշխատանքը: Յեվ վորովհետև մենք յենթադրեցինք, թե աշխատանքն արդեն մասնագիտացման է հասել, ապա յուրաքանչյուրը կարող է միայն այն աշխատել, վորը դարձել է նրա պրոֆեսիան, և արտադրության այն միջոցների ոգնությամբ, վոր ունի ինքը. կոշկակարը կոշիկ կկարի, հացթուխը



հաց կթխի, ջուլհակը գործվածքներ կգործի, գյուղացին հաճար կցանի և այլն: Բայց հենց այստեղ էլ միանգամից դժվարություններ են ծագում: Ճիշտ է, այս արտադրողներից յուրաքանչյուրը պատրաստում է գործածության չափազանց կարևոր և խիստ անհրաժեշտ առարկաներ. այդ մասնագետներից ամեն մեկը — կոշկակարը, հացթուխը, դարբինը, ջուլհակը — յերեկ դեռ հասարակության ոգտակար անդամ եր համարվում, առանց վորի այդ հասարակությունը չի կարող գոյություն ունենալ: Նրանցից յուրաքանչյուրը կարևոր տեղ եր գրավում այդ հասարակական ամբողջության մեջ: Իսկ այժմ ամբողջությունն ինքը դադարել է գոյություն ունենալուց և յուրաքանչյուրը կարծես թե գոյություն ունի ինքն իր համար: Բայց վոչ վոք չի կարող ապրել միայն իր աշխատանքի արդյունքներով: Կոշկակարը չի կարող գործածել իր բոլոր կոշիկները, հացթուխը չի կարող հացով բավարարել իր բոլոր պահանջները, գյուղացին կարող եր հաճարով լիքն ամբարներ ունենալով՝ սովից ու ցրտից մեռնել, յեթե նա լոկ միայն հացահատիկ ունենար: Ամեն մեկը բազմազան պահանջներ ունի, բայց իր սեփական աշխատանքով կարող է նրանցից միայն մեկը բավարարել: Այդ պատճառով էլ՝ յուրաքանչյուրն անպայման վորոշ չափով կարիք ունի բոլոր մյուսների արդյունքների: Նրանք բոլորը կախումն ունեն միմյանցից: Բայց ի՞նչպես կենսագործել այդ կախումը, յերբ մենք գիտենք, վոր առանձին արտադրությունների միջև այլևս վոչ մի հարաբերություն և վոչ մի կապ գոյություն չունի: Կոշկակարը խիստ կարիք ունի հացթուխի հացի, բայց նա վոչ մի միջոց չունի այդ հացը ձեռք բերելու. նա չի կարող հացթուխին ստիպել, վոր իրեն հաց մատակարարի, վորովհետև նրանք յերկուսն էլ հավասար են, ազատ են, անկախ մարդիկ են: Յեթե նա ուզում է ոգտվել հացթուխի աշխատանքի արդյունքից, ապա ակներև է, վոր այդ հնարավոր է, միայն արժեքի սկզբունքով, այսինքն՝ յեթե նա իր կողմից հացթուխին մատակարարի նրան պետք յեղած արդյունքը: Բայց հացթուխն իր կողմից կարիք ունի կոշկակարի աշխատանքի արդյունքներին և ճիշտ նույնպիսի դրության մեջ է գտնվում, ինչպես վերջինս: Դրանով հենց դրված է հիմքը փոխադարձության համար: Կոշկակարը հացթուխին կոշիկներ է տալիս, վորպեսզի նրանից հաց ստանա: Կոշկակարն ու հացթուխը փոխադարձաբար փոխանակում են իրենց արդյունքները, և կարող են այժմ յերկուսն էլ բավարարել իրենց պահանջները: Այդպիսով, դուրս է գալիս, վոր բարձր զարգացման հասած աշխատանքի բաժանման ժամանակ և յերբ վոչ մի կազմակերպություն գոյություն չունի նրանց մոտ, ապա զանազան տեսակ աշխատանքների արդյունքները բոլորի միջև բաշխելու միակ միջոցը փոխանակությունն է: Կոշկակարը, հացթուխը, գյուղացին, մանողը, ջուլհակը, փականագործը — նրանք բոլորը փոխադարձաբար փոխանակում են իրենց արդյունքները և այդպիսով բավարարում իրենց տարբեր պահանջները: Այդպիսով, փոխանակությունը մի նոր կապ ստեղծեց բաժան-բաժան յեղած, միմյանցից կտրված մասնավոր արտադրողների միջև: Արտադրությունն ու սպառումը, — խորտակված համայնքի ամբողջ կյանքը կարող է սկսվել նորից, վորովհետև փոխանակությունը

նրանց հնարավորություն տվեց կրկին աշխատելու միմյանց համար. Այսինքն՝ նա կրկին հնարավոր դարձրեց հասարակական գործակցությունը, հասարակական արտադրությունը, թեպետ և կոտորակված մասնավոր արտադրության կեղևի ներքո:

*Սակայն այս—հասարակական գործակցության մի բոլորովին նոր, յուրատեսակ ձև է, վորի հետ մենք պետք է մոտիկից ծանոթանանք: Ամեն մեկն աշխատում է իր ռիսկով և պատասխանատվությամբ, յուրաքանչյուրն արտադրում է իր հաշվին, սեփական հայեցողությամբ: Վորպեսզի ապրել կարողանա, նա այժմ պետք է այնպիսի արդյունքներ արտադրի, վորոնք նա ինքը չունի, բայց վորոնք պետք են ուրիշներին: Այդպիսով, յուրաքանչյուրն աշխատում է ուրիշների համար: Այդ բանն ըստ ինքյան վոչ մի առանձնահատուկ և նոր բան չէ: Կոմունիստական հասարակության մեջ ել բոլորն աշխատում եյին միմյանց համար:* Առանձնահատկությունը միայն այն է, վոր այժմ յուրաքանչյուրն իր արդյունքն ուրիշներին տալիս է միայն փոխանակության միջոցով և միայն նույն կարգով էլ կարող է ստանալ ուրիշների արդյունքները: *Այդպիսով յուրաքանչյուրը պետք է այժմ իրեն պետքական արդյունքներն ստանալու համար իր աշխատանքով այնպիսի արդյունքներ արտադրի, վորոնք կանխորոշված են փոխանակության համար: Կոշկակարը պետք է անընդհատ կոշիկ կարե, վոր իրեն պետք չէ, անոգուտ է, նրա համար դեն նետված աշխատանք է: Այդ կոշիկների ոգտակարությունը նրա համար միայն այն է, վոր նա կարող է փոխանակել նրանց ուրիշ արդյունքների հետ, վորոնց կարիքը նա ունի: Այդպիսով, նա իր կոշիկներն առաջուց կարում է փոխանակության համար, այսինքն՝ արտադրում է այն իբրև ապրանք: Յուրաքանչյուրը կարող է այժմ իր պահանջները բավարարել, այսինքն՝ ստանալ ուրիշների արտադրած արդյունքները, այն դեպքում միայն, յեթե նա յել այնպիսի արդյունքներ ունի, վորոնց կարիքն զգում են ուրիշները և վորոնք նա ստեղծում է իր աշխատանքով: Ուրիշ խոսքով՝ յուրաքանչյուրն ստանում է մյուսների արդյունքների մի մասը, այսինքն՝ հասարակական արդյունքի բաժինը միայն այն դեպքում, յեթե նա ինքն ել ապրանքով է շուկա գալիս:*

*Ամեն մեկն արտադրում է իբրև մասնավոր մարդ, իր պատասխանատվությամբ և ռիսկով, և պատրաստի արդյունքները միայն փոխանակության պրոցեսում են վորոշ գումար կազմում, վոր կարելի յե դիտել իբրև հասարակական հարստություն: Յուրաքանչյուրի բաժինն ինչպես հասարակական աշխատանքի, այնպես նաև հասարակական հարստության մեջ ներկայացված է այն հատուկ ապրանքով, վոր նա պատրաստել է իր սեփական աշխատանքով և բերել է՝ ուրիշների հետ փոխանակելու համար: Յուրաքանչյուրի մասնակցությունը միահամուռ հասարակական աշխատանքի մեջ ներկայացված չէ այժմ առաջուց նրան մատնանշած աշխատանքի վորոշ քանակությամբ, այլ այն պատրաստի արդյունքով, ապրանքով, վոր նա մատակարարում է իր սեփական ազատ հայեցողությամբ: Յեթե նա չի ուզում, նա կարող է բոլորովին չաշխատել, նա կարող է գնալ զբոսնելու, վոչ վոք դրա համար նրան չի նախատի կամ պատժի, ինչպես այդ անշուշտ տեղի կունենար կոմունիստական համայնքի զանցառու անդամի վերաբերմամբ, վորտեղ ծույլերն, ամենայն հավանականությամբ, «գլխավոր բնակչից», համայնքի գլխավորից դաժան հանդիմանություն եյին ստանում կամ թե չէ՝ համայնքի բոլոր անդամների ժողովում հրապարակային պարսավանքի եյին յենթարկվում: Այժմ ամեն մարդ—իր սեփական, վոչնչով չսահմանափակված տերն է: Համայնքի հեղինակությունն այլևս գոյություն չունի: Բայց յեթե նա չի աշխատում, վոչինչ չի ստանա իբրև փոխանակություն ուրիշների աշխատանքի արդյունքներից: Մյուս կողմից, այժմ յուրաքանչյուրն առանձին վերցրած, վորքան ել նա ջանասիրությամբ աշխատի, ամենևին չի կարող վստահ լինել, թե կստանա իրեն անհրաժեշտ կենսամթերքները, վորովհետև չէ՞ վոր վոչ վոք պարտավոր չէ տալու նրան այդ կենսամթերքները, թեկուզ իբրև փոխանակություն: Փոխանակությունը տեղի յե ունենում այն ժամանակ միայն, յերբ փոխադարձ պահանջ կա մեջտեղը:*



Վոչ ամեն աշխատանք, ինչքան էլ այն ջանասեր և հաջող լինի, սկզբից ևեթ արժեք և նպատակահարմարություն ունի հասարակական տեսակետից. արժեք ունի այն արդյունքը միայն, վորը փոխանակվում է. իսկ այն արդյունքը, վոր վոչ վոքի կողմից փոխանակության համար չի ընդունվում, վորքան էլ լավ լինի այն, արժեք չի ներկայացնում և դեն գցված աշխատանք է:

*Այժմ ամեն մեկը, հասարակական արտադրության արդյունքներից ոգտվելու և, հետևաբար, հասարակական աշխատանքի մեջ մասնակցելու համար պետք է ապրանքներ արտադրե: Բայց վոչ վոք նրան առաջուց չի ասում, թե իսկապե՞ս արդյոք նրա աշխատանքն ընդունվում է իբրև հասարակականորեն անհրաժեշտ աշխատանք, և այդ բանը նա կիմանա միայն նրանով, թե արդյոք իր ապրանքը փոխանակության համար վերցվում է, թե վոչ: Նրա մասնակցությունը հասարակական աշխատանքի և արդյունքի մեջ ապահովված է միայն այն դեպքում, յեթե նրա արդյունքը հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի կնիքն է ստանում, այն է՝ փոխանակային արժեքի կնիքը: Յեթե նրա արդյունքը փոխանակության համար չեն վերցնում, այդ ցույց է տալիս, վոր նա այնպիսի արդյունք է արտադրել, վոր վոչ մի արժեք չունի և, հետևաբար, նրա աշխատանքը հասարակական տեսակետից ավելորդ եր: Հետևաբար, նա այն ժամանակ միայն «մասնավոր» կոշկակար եր, վոր սեփական ժամանցի համար վատնում եր կաշին և կոշիկներ եր կարում. այդպիսով, նա վորոշ չափով հասարակությունից դուրս եր մնում, վորովհետև հասարակությունը չի ուզում ունենալ նրա արդյունքները, և դրա համար ել նրան անմատչելի յեն հասարակության արդյունքները: Յեթե մեր կոշկակարն այսոր իր կոշիկները լավ փոխանակեց և նրանց փոխարեն կենսամթերքներ ստացավ, նա կարող է տուն վերադառնալ վոչ միայն հագնված ու կուշտ, այլև այն հպարտ գիտակցությամբ, թե նա հասարակու-*

*թյան համար օգտակար անգամ է և թե նրա աշխատանքն ընդունվեց իբրև անհրաժեշտ աշխատանք: Բայց յեթե նա տուն է վերադառնում իր կոշիկները հետ բերելով, վորովհետև վոչ վոք չուզեց նրանից առնել այն, նա ամեն հիմք ունի մելամաղձոտ լինելու, վորովհետև նա վոչ միայն անճաշ է մնում, այլև նրան կարծես խելյան հայտարարեցին. «սիրելի բարեկամ, հասարակությունը քո կարիքը չունի, քո աշխատանքն ամենևին անհրաժեշտ չեր, դու հետևաբար, ավելորդ մարդ ես և կարող ես հանգիստ կերպով կախվել»: Այդպիսով, մեր կոշկակարին հասարակության հետ կապում են, յուրաքանչյուր առանձին դեպքում, նրա փոխանակած կոշիկները, ընդհանրապես ասած՝ փոխանակային արժեք ունեցող ապրանքը: Բայց նույն վիճակի մեջ են գտնվում, ինչպես մեր կոշկակարը, թե հացթուխը, թե ջուլհակը, թե գյուղացի տնտեսավարը: Այն հասարակությունը, վոր մեկ ընդունում եր կոշկակարին, մեկ դաժան կերպով հետ վանում նրան, չե՞ վոր հանդիսանում է այդ բոլոր առանձին ապրանքարտադրողների գումարը միայն, ապրանքարտադրողներ, վորոնք փոխադարձաբար աշխատում են փոխանակության համար: Այդ պատճառով էլ հասարակական աշխատանքի և այդ առթիվ ստացվող հասարակական արդյունքների գումարը ամենևին չի համապատասխանում առանձին անդամների բոլոր աշխատանքների և արդյունքների գումարին, ինչպես այդ տեղի ուներ առաջ՝ հասարակական կոմունիստական տնտեսության մեջ: Այժմ մեկը կամ մյուսը կարող է ջանասիրությամբ աշխատել, իսկ նրա արդյունքը, յեթե այն վոչ վոք չի վերցնում փոխանակության համար, ավելորդ է հանդիսանում, հաշվի չի առնվում:* Միայն փոխանակությունն է վճռում այն հարցը, թե վոր աշխատանքն ու վոր արդյունքներն էին անհրաժեշտ և նշանակություն ունեն հասարակության համար: *Ստացվում է, կարծես, այնպիսի դրություն, վոր բոլորն աշխատում են տանը կուրորեն, ապա իրենց պատրաստի մասնավոր շինվածքները հրապարակ են քաշ տալիս. այստեղ այդ արդյունքները մաղվում են, նրանց վրա կնիք է դրոշմվում—այս և այս հանդիսանում է հասարակականորեն անհրաժեշտ աշխատանք և փոխանհատվում է, իսկ այն և այն անհրաժեշտ չեյին և վոչ մի բանի պետք չեն: Այդ կնիքն ասում է. սա ունի արժեք, իսկ սա արժեք չունի և մնում է, վորպես ավելորդ անձի մասնավոր հաճույք կամ դժբախտություն:*[1])

## ԱՐԴՅՈՒՆՔԻ ՓՈԽԱՐԿՈՒՄՆ ԱՊՐԱՆՔԻ

Իրը կարող է սպառողական արժեք լինել, առանց արժեք լինելու: *Այդպես է դրությունը, յերբ նրա օգտակարությունը մարդու համար կապված չէ աշխատանքի հետ: Այդպես են օդը, բուսական հողը, բնական մարգագետինները, վայրի-աճող անտառը և այլն:* Իրը կարող է օգտակարություն և մարդկային աշխատանքի արդյունք լինել, առանց ապրանք լինելու: Նա, ով իր աշխատանքի արդյունքով բավարարում է իր սեփական պահանջը,

[1]) Р. Люксембург, «Введение в полит. экономию», стр. 186—192



միայն սպառողական արժեք է ստեղծում, բայց վոչ ապրանք: Ապրանք արտադրելու համար նա պետք է վոչ թե պարզապես սպառողական արժեք արտադրե, այլ սպառողական արժեք ուրիշների համար, հասարակական սպառողական արժեք:

*Վերջապես*, իրը չի կարող արժեք լինել, առանց սպառման առարկա լինելու: Յեթե նա օգտավետ չէ, ապա նրա վրա գործադրված աշխատանքն էլ օգտավետ չէ, աշխատանք չի համարվում, և այդ պատճառով էլ վոչ մի արժեք չի ստեղծում[1]):

Վորպեսզի արդյունքն ապրանք դառնա, դրա համար անհրաժեշտ է վորոշ պատմական պայմանների գոյություն: *Օրինակ՝ քանի նա արտադրվում է արտադրողի պահանջների անմիջական բավարարման համար, նա չի փոխարկվում ապրանքի: Յեթե մենք ավելի առաջ գնայինք մեր հետազոտության մեջ, յեթե մենք մեզ հարց տայինք, թե ինչպիսի պայմաններում արդյունքներն ամբողջությամբ կամ գոնե նրանց մեծ մասն ապրանքի ձև են ընդունում, ապա մենք կգտնեյինք, վոր այդ* կատարվում է միայն արտադրության միանգամայն վորոշ, այն է՝ կապիտալիստական յեղանակի հիման վրա[2]):

Ապրանքային արտադրությունն ու ապրանքային շրջանառությունը կարող են գոյություն ունենալ, չնայած նրան, վոր անմիջական սեփական սպառման համար կանխորոշված արդյունքների ճնշող մեծամասնությունն ապրանքների չի փոխարկվում և, հետևաբար, արտադրության հասարակական պրոցեսը դեռ ամենևին էլ իր ամբողջ ծավալով փոխանակային արժեքի տիրապետությանն յենթարկված չէ. վորպեսզի արդյունքն ապրանքի փոխարկվի, աշխատանքի բաժանումն հասարակության ներսում պետք է այն աստիճան զարգանա, վորպեսզի միանգամայն ավարտված լինի սպառողական արժեքի և փոխանակային արժեքի սահմանագծումը, վոր հազիվ սկսվում է անմիջական փոխանակային առևտրի ժամանակ: Բայց զարգացման այդ աստիճանը հանդիպում է պատմականորեն բոլորովին տարբեր հասարակական-տնտեսական փորմացիաներում[3]):

*Ապրանքային արտադրությունն ամենևին հասարակական արտադրության բացառիկ ձևը չէ: Հին հնդկական համայնքներում և հարավսլավոնական ընտանեկան համայնքներում արդյունքներն ապրանքների չեն փոխարկվում: Համայնքի անդամները միանում և հասարակություն են կազմում անմիջականորեն արտադրության համար, աշխատանքը բաշխվում է համաձայն սովորության և կարիքների, իսկ արդյունքները, վոր չափով վոր նրանք ծախսվում են անմիջական սպառման համար, ապրանքների չեն փոխարկվում: Անմիջական հասարակական արտադրությունը, ինչպես և ուղղակի բաշխումը, բացառում են ամեն տեսակ ապրանքային փոխանակու—*

[1]) Маркс. Капитал I, стр. 7

[2]) Նույն տեղը, էջ 139—140.

[3]) Նույն տեղը.

թյուն, հետևաբար ապա ուրեմն, արդյունքների փոխարկումն ապրանքների (գոնե համայնքի ներսում), իսկ դրա հետ միասին նաև նրանց փոխարկվելը արժեքների [1]):

Ի՞նչ են ապրանքները.—Արդյունքներ, վորոնք արտադրված են ավելի կամ պակաս չափով բաժան-բաժան յեղած մասնավոր արտադրողների հասարակության մեջ, այսինքն՝ ամենից առաջ մասնավոր արդյունքներ: Սակայն այդ մասնավոր արդյունքները միայն այն ժամանակ են ապրանք դառնում, յերբ նրանք արտադրվում են վո՛չ թե արտադրողների իրենց սպառման համար, այլ ուրիշների սպառման, այսինքն՝ հասարակական սպառման համար. նրանք հասարակական սպառման մեջ են մտնում փոխանակության միջոցով: Այդպիսով՝ մասնավոր արտադրողները հասարակական կապակցության մեջ են գտնվում միմյանց հետ, կազմում են հասարակություն: Նրանց արդյունքները, լինելով նրանցից՝ առանձին վերցրած յուրաքանչյուրի մասնավոր արդյունքները, հետևաբար, միևնույն ժամանակ, բայց վոչ նախամտածված կերպով և կարծես նրանց կամքի հակառակ, հանդիսանում են նաև հասարակական արդյունքներ [2]):

Վորպեսզի արդյունքն ապրանք դառնա, որա համար անհրաժեշտ է պատմական վորոշ պայմանների իրականացումը: Քանի դեռ արդյունքը, որինակ. արտադրվում է արտադրողի կարիքների անմիջական բավարարման համար, այն չի դառնում ապրանք: Իսկ յեթե մենք առաջ գնայինք մեր հետազոտության մեջ, յեթե մենք հարցնեյինք մեզանից, թե ինչպիսի՞ պայմաններում է, վոր բոլոր արդյունքները կամ արդյունքների գոնե մեծամասնությունն ապրանքի ձև է ընդունում, ապա մենք կգտնեյինք, վոր այս կատարվում է արտադրության մի լրիվին վորոշ, այն է՝ կապիտալիստական յեղանակի հիմքի վրա: Բայց այսպիսի հետազոտությունը կապված չէ ապրանքի, իբրև այսպիսու, վերլուծության հետ: Ապրանքային արտադրությունն ու ապրանքային շրջանառությունը կարող է գոյություն ունենալ, չնայած այն բանին, վոր արդյունքների ճնշող բազմությունը, վոր նախանշվում է անմիջաբար սեփական սպառման համար, ապրանք չի դառնում, և, հետևաբար, դեռ շատ կա, մինչև վոր արտադրության հասարակական յեղանակն իր ամբողջ ծավալով յենթարկվի փոխանակային արժեքի տիրապետությանը: Վորպեսզի արդյունքն ապրանք դառնա, հասարակության ներսում աշխատանքի բաժանումը պետք է այն աստիճան զարգանա, վոր լրիվին ավարտվի սպառողական արժեքի ու փոխանակային արժեքի այն սահմանազծումը, վորը նոր-նոր է սկսված լինում անմիջական փոխանակային առևտրի ժամանակ: Սակայն զարգացման այս աստիճանը պատահում է պատմականորեն բոլորովին տարբեր հասարակական-տնտեսական ֆորմացիաներում [3]):

[1]) Энгельс, «Анти—Дюринг»

[2]) Նույն տեղը, եջ 292

[3]) Капитал I, стр. 5.



# ԱՊՐԱՆՔԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՐԺԵՔ ՅԵՎ ԱՐԺԵՔ

Նախ՝ ապրանքը մի իր է, վոր բավարարում է մարդու վորևիցե պահանջը. յերկրորդ՝ մի իր, վոր փոխանակելի յե ուրիշ իրի հետ: Իրի ոգտակարությունը նրան սպառողական արժեք է դարձնում: Փոխանակային արժեքը (կամ պարզապես արժեքը) ամենից առաջ հարաբերություն է հանդիսանում, պրոպորցիա՝ մի տեսակի սպառողական արժեքների վորոշ քանակություն մի այլ տեսակի սպառողական արժեքների վորոշ քանակության հետ փոխանակելու ժամանակ: Ամենորյա փորձը մեզ ցույց է տալիս, վոր այդպիսի միլիոն և միլիարդ փոխանակություններ միշտ մեկը մյուսին են հավասարեցնում բոլոր և ամեն տեսակ, ամենազանազան և միմյանց հետ անհամեմատելի սպառողական արժեքներ: Իսկ ի՞նչ ընդհանուր բան կա այդ տարբեր իրերի միջև, վորոնք հասարակական հարաբերությունների վորոշ սիստեմում շարունակ հավասարեցվում են միմյանց: Նրանց միջև ընդհանուրն այն է, վոր նրանք—աշխատանքի արդյունքներ են [1]):

Հասարակությունների հարստությունը, վորոնց մեջ գերիշխում է արտադրության կապիտալիստական յեղանակը, ներկայացնում է «ապրանքների վիթխարի կուտակումը», իսկ առանձին ապրանքը նրա տարրական ձևն է (նրա յելակետային ձևը):

Ուստի և մեր հետազոտությունն սկսվում է ապրանքի վերլուծությամբ:

Ապրանքն ամենից առաջ մի արտաքին առարկա յե, իր, վոր ըստ իր հատկությունների ունակ է բավարարելու մարդկային վորևէ պահանջ: Այս պահանջի բնությունը,—առաջ է գալիս նա արդյոք, որինակ, ստամոքսի պահանջով թե յերևակայությամբ,—գործում վոչինչ չի փոխում այդ: Նմանապես և նշանակություն չունի, թե տվյալ իրն հատկապես ինչպես է բավարարում մարդկային պահանջը. անմիջականորեն, իբրև գոյության միջոց, այսինքն՝ վորպես սպառման առարկա՞, թե՞ շրջանառության ճանապարհով, իբրև արտադրության միջոց:

Յուրաքանչյուր ոգտակար իր, ինչպես, որինակ, յերկաթը, թուղթը և այլն, կարելի յե դիտել յերկու տեսակետից—վորակային և քանակային: Յուրաքանչյուր այդպիսի իր բազմաթիվ հատկությունների մի ամբողջական գումար է և այդ պատճառով կարող է ոգտակար լինել իր տարբեր կողմերով: Հայտնաբերել այս տարբեր կողմերը, հետևաբար ուրեմն, նաև իրերի գործածության բազմազան յեղանակները, այդ—պատմական զարգացման գործն է: Նույն բանը պետք է ասել նաև ոգտակար իրերի քանակական կողմի հասարակական չափ վորոնելու մասին: Ապրանքային չափերի տարբերությունները մասամբ վորոշվում են չափվող առարկաների իրենց տարբեր բնությամբ, մասամբ էլ պայմանական են հանդիսանում:

Տվյալ իրի ոգտակարությունը, նրա այն հատկությունը, վոր նա կարող է
բավարարել մարդկային այս կամ այն տեսակ պահանջները, նրան դարձնում

[1]) Ленин, т. XII, ч. II, стр. 327—328.

է սպառողական արժեք: Սակայն օգտակարությունը չի կախված օդում: Պայմանավորված լինելով ապրանքային մարմնի հատկություններով, նա այս վերջինից դուրս գոյություն չունի: Սրա համար էլ ապրանքային մարմինը, ինչպես, օրինակ, յերկաթը, ցորենը, ալմաստը և այլն, ինքը հանդիսանում է սպառողական արժեք կամ բարիք: Նրա այդ բնույթը կախված չի նրանից, թե արդյոք մարդուն շա՞տ թե քիչ աշխատանք է նստում նրա սպառողական հատկությունների յուրացումը: Սպառողական արժեքների քննարկման ժամանակ՝ նրանց քանակային վորոշակիությունը միշտ յենթադրվում է տրված, օրինակ մի դյուժին ժամացույց, մի արշին քաթան, մի տոնն յերկաթ և այլն: Ապրանքների սպառողական արժեքները մի հատուկ ինքնուրույն դիսցիպլինի՝ ապրանքագիտության առարկան են կազմում: Սպառողական արժեքը իրացվում է միայն սպառման պրոցեսում: Սպառողական արժեքները կազմում են հարստության իրային բովանդակությունը, ինչպիսին էլ վոր լինի նրա հասարակական ձևը: Հասարակության այն ձևի ժամանակ, վորը մեր հետազոտության առարկան է կազմում, նրանք միևնույն ժամանակ հանդիսանում են փոխանակային արժեքի իրային կրողները:

Փոխանակային արժեքն ամենից առաջ պատկերացվում է քանակական փոխհարաբերության կերպարանքով, իբրև պրոպորցիա, վորում մի տեսակի սպառողական արժեքները փոխանակվում են մի ուրիշ տեսակի սպառողական արժեքների հետ,—մի պատահական փոխհարաբերություն, վոր շարունակ փոխվում է, նայելով ժամանակին և տեղին: Այդ պատճառով էլ փոխանակային արժեքը թվում է ինչ վոր պատահական, միանգամայն հարաբերական բան. ապրանքի համար ներքին, իմմանենտ փոխանակային արժեքը ( valenz ntrinsegue ), ըստ յերևույթին, անհեթեթություն է հանդիսանում:

Ավելի մոտիկից քննենք այդ խնդիրը:

Վորոշ ապրանք, օրինակ մի կվարտեր ցորենը, ամենատարբեր պրոպորցիաներով փոխանակվում է ուրիշ ապրանքների հետ, օրինակ՝ 20 ֆունտ կոշկի վաքսի, կամ 2 արշին մետաքսի կամ $1/2$ ունցիա վոսկու հետ և այլն. սակայն մի կվարտեր ցորենի փոխանակային արժեքն անփոփոխ է մնում, արտահայտվի նա կոշկի վաքսի, մետաքսի թե վոսկու միջոցով, այդ միևնույնն է: Հետևաբար, փոխանակային արժեքը պետք է մի ինչ-վոր բովանդակություն ունենա, վոր տարբեր է արտահայտության այդ յեղանակներից:

Վերցնենք ապա յերկու ապրանք, օրինակ ցորեն և յերկաթ. ինչպես էլ լինի նրանց փոխանակային հարաբերությունը, այն միշտ կարելի յե արտահայտել մի հավասարությամբ, վորի մեջ ցորենի տվյալ քանակությունը հավասարեցվում է յերկաթի վորոշ քանակությանը. օրինակ մեկ կվարտեր ցորենը=2 ցենտներ յերկաթի: Ի՞նչ է ասում մեզ այս հավասարությունը: Վոր, յերկու տարբեր իրերի մեջ—1 կվարտեր ցորենի և 2 ցենտներ յերկաթի մեջ—գոյություն ունի ինչ վոր մի ընդհանուր բան՝ հավասար մեծություն: Հետևաբար, այդ յերկու իրերն էլ հավասար են ինչ-վոր մի յերրորդ բանի, վորն ինքն ըստինքյան չի հանդիսանում նրանցից վո՛չ առաջինը, վո՛չ յերկ-



րորդը: Այդպիսով՝ նրանցից ամեն մեկը, վորչափով վոր նա փոխանակային արժեք է, կարող է վերածվել այդ յերրորդին:

Նկարագրենք այդ մի հասարակ յերկրաչափական օրինակով: Բոլոր ուղղագիծ ֆիգուրաների մակարդակները վորոշելու և համեմատելու համար, վերջինները կտրատում են յեռանկյունների: Յեռանկյունին ինքը՝ վերածում են այնպիսի արտահայտության, վոր միանգամայն տարբեր է նրա տեսանելի ֆիգուրայից,—հիմքի և բարձության արտադրյալի կիսին: Ճիշտ նույնպես և ապրանքների փոխանակային արժեքներն անհրաժեշտ է վերածել նրանց համար մի ինչ-վոր ընդհանուր բանի, վորի քանակական կերպարանափոխությունն են պատկերացնում նրանք:

Ընդհանուր այդ հիմքը չեն կարող լինել ապրանքների յերկրաչափական, ֆիզիկական, քիմիական կամ վորևէ այլ բնածին հատկությունները: Նրանց մարմնական հատկություններն այստեղ յենթակա յեն քննարկման ընդհանրապես միայն այն չափով, վորչափով վոր նրանցից է կախված ապրանքների օգտակարությունը, այսինքն՝ վորչափով վոր նրանք ապրանքներն սպառողական արժեքներ են դարձնում: Մյուս կողմից, ակներև է, վոր ապրանքների փոխանակային արժեքը վերանում է նրանց օգտակարությունից: Ապրանքների փոխանակային հարաբերության սահմաններում՝ յուրաքանչյուր տվյալ սպառողական արժեք բոլորովին նույն դերն է կատարում, ինչպես և յուրաքանչյուր մեկ ուրիշը, յեթե միայն նա գոյություն ունի պատշաճ պրոպորցիայով: Կամ ինչպես ասում է ծերունի Բարբոնը. «ապրանքների մի տեսակը նույնքան լավ է, վորքան և մյուսը, յեթե միատեսակ են նրանց փոխանակային արժեքները: Միատեսակ փոխանակային արժեք ունեցող իրերի միջև գոյություն չունի վո՛չ մի տարբերություն»: Իբրև սպառողական արժեքներ՝ ապրանքները տարբերվում են ամենից առաջ վորակապես. իբրև փոխանակային արժեքներ՝ նրանք կարող են լոկ քանակական տարբերություններ ունենալ, հետևաբար, իրենց մեջ չեն պարունակում սպառողական արժեքի և վո՛չ մի ատոմ:

Յեթե վերանանք ապրանքային մարմինների սպառողական արժեքից, ապա նրանց մոտ մնում է լոկ մեկ հատկություն, այն՝ վոր նրանք աշխատանքի արդյունքներ են: Բայց այս տեսակետից աշխատանքի արդյունքն էլ ձեռք է բերում բոլորովին նոր կերպարանք: Իսկապես, քանի վոր մենք վերացանք նրա սպառողական արժեքից, նրա հետ միասին մենք վերացանք նույնպես նյութական բաղկացուցիչ մասերից և ձևերից, վորոնք նրան սպառողական արժեք են դարձնում: Այժմ սա արդեն սեղան կամ տուն, կամ թե մանվածքը և վորևէ այլ օգտակար իր չէ: Նրա մեջ հանգած ամբողջ զգայապես ըմբռնելի հատկությունները: Հավասարապես, այժմ- արդեն դա հյուսնի կամ տաղձագործի և կամ թե մանողի, կամ ընդհանրապես վորևէ այլ վորոշ արտադրողական աշխատանքի արդյունքը չէ: Աշխատանքի արդյունքի օգտակար բնույթի հետ միասին, անհետանում է և նրա մեջ ներկայացրած օգտակար աշխատանքների բնույթը. հետևաբար անհետանում են, այդ աշխատանքների տարբեր-կոնկրետ, վորոշ ձևերը: Այլևս վերջինները

չեն տարբերվում միմյանցից, այլ, բոլորը հանգում են մարդկային միատեսակ աշխատանքի՝ մարդկային աբստրակտ աշխատանքի, մարդկային աշխատանքի **ընդհանրապես**:

Այժմ քննարկենք այն մնացորդը, վորն ստացվում է աշխատանքի արդյունքների այս վերածումից հետո: Նրանցից վոչինչ չմնաց, բացի բոլորի համար միատեսակ թափանցիկ առարկայականությունից մարդկային պարզ միատեսակ աշխատանքի խտացումից (сгусток) այսինքն, մարդկային բանվորական ուժի ծախսումը անկախ այդ ծախսումի ձևից:

Այժմ այս բոլոր իրերը ներկայացնում են լոկ այն բանի արտահայտությունը, վոր նրանց արտադրության մեջ ծախսված է մարդկային բանվորական ուժ, կուտակված է մարդկային աշխատանք: Իբրև իրենց բոլորին ընդհանուր հասարակական սուբստանցիաների բյուրեղներ, նրանք հանդիսանում են արժեքներ,—ապրանքային արժեքներ.

Ապրանքների իրենց փոխանակային հարաբերության մեջ, նրանց փոխանակային արժեքը յերևում եր մեզ իբրև մի ինչ-վոր բան, նրանց սպառողական արժեքներից միանգամայն անկախ: Յեթե մենք իրոք վերանանք աշխատանքի արդյունքների սպառողական արժեքից, ապա մենք կստանանք նրանց արժեքը, ինչպես վոր այն հենց նոր բնորոշվեց: Այսպիսով, այն ընդհանուրը, վոր արտահայտվում է ապրանքի փոխանակային հարաբերության կամ փոխանակային արժեքի մեջ, է՛ նաև նրա արժեքը:

Հետազոտության հետագա ընթացքը մեզ դարձյալ կհասցնի փոխանակային արժեքին, իբրև ապրանքային արժեքի արտահայտության անհրաժեշտ յեղանակին կամ նրա յերևան գալու անհրաժեշտ ձևին. այնուամենայնիվ, այդ ապրանքային արժեքն սկզբից պետք է քննարկվի իբրև այդպիսին, անկախ նրա այդ ձևից:

Յեվ այդպես, սպառողական արժեքը, կամ բարիքը, արժեք ունի միայն այն պատճառով, վորովհետև նրա մեջ իրայնացվում է կամ նյութականացվում է մարդկային աբստրակտ աշխատանքը:[1])

Իսկ ինչո՞ւմն է այս մասնավոր արդյունքների հասարակական բնույթը: Ակներև է՝ յերկու հատկությունների մեջ. նախ՝ նրանում, վոր նրանք բոլորը բավարարում են մարդկային վորևիցե պահանջ, սպառողական արժեք ունեն վոչ միայն իրենց արտադրողի, այլև ուրիշների համար. և յերկրորդ՝ նրանում, վոր նրանք, լինելով աշխատանքի առանձին տեսակների արդյունքներ, հանդիսանում են դրա հետ միաժամանակ ընդհանրապես մարդկային հասարակ աշխատանքի արդյունք: Վորչափով վոր նրանք ուրիշների համար սպառողական արժեք ունեն, այդ չափով նրանք կարող են ընդհանրապես փոխանակության մեջ մտնել, իսկ վորչափով վոր նրանց մեջ պարունակվում է ընդհանրապես մարդկային աշխատանք, մարդկային բանվորական ուժի պարզ գործադրություն, այդ չափով նրանք կարող են փոխանակության մեջ

[1]) Маркс, Капитал I, стр. 1—5.



համասարվել, լինելով այդ տեսակետից միմյանց հավասար և անհավասար, այդ աշխատանքի նրանցից յուրաքանչյուրի մեջ համապատասխան չափով պարունակված քանակությանը[1]):

## ԱՐԺԵՔԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՒՄԸ

Իսկ ինչպես չափել ապրանքի արժեքի մեծությունը: Ակներև է՝ նրա մեջ բովանդակված աշխատանքի քանակությամբ, այդ «արժեք ստեղծող սուբստանցիայով»: Աշխատանքի իրեն քանակությունը չափվում է նրա տեվողությամբ, բանվորական ժամանակով, իսկ բանվորական ժամանակը իր հերթին—յուր չափն է գտնում ժամանակի վորոշ մասերում, ինչպիսին են՝ ժամ, օր և այլն:

Յեթե ապրանքի արժեքը վորոշվում է նրա արտադրության ընթացքում ծախսված աշխատանքի քանակությամբ, ապա կարող եր այնպես թվալ, թե ապրանքի արժեքն այնքան ավելի մեծ է, վորքան ավելի ծույլ և անհմուտ է այն արտադրող մարդը, քանի վոր նրան այնքան ավելի շատ ժամանակ է պահանջվում ապրանքը պատրաստելու համար: Բայց այն աշխատանքը, վոր կազմում է արժեքների սուբստանցիան, մարդկային միատեսակ աշխատանք է, մարդկային միևնույն բանվորական ուժի ծախսումը: Հասարակության ամբողջ բանվորական ուժը, վոր արտահայտություն է գտնում ապրանքային աշխարհի արժեքների մեջ, այստեղ ընդունվում է իբրև մարդկային միևնույն բանվորական ուժը, թեև նա կազմված է անթիվ անհատական բանվորական ուժերից: Այդ անհատական բանվորական ուժերից յուրաքանչյուրը ներկայացնում է, յուրաքանչյուր ուրիշի նման, մարդկային միևնույն բանվորական ուժը, քանի վոր նա հասարակական միջին բանվորական ուժի բնույթ ունի և գործում է իբրև այդպիսի հասարակական միջին բանվորական ուժ, հետևաբար, տվյալ ապրանքի արտադրության համար գործադրում է միայն անհրաժեշտ միջին, կամ հասարակականորեն-անհրաժեշտ բանվորական ժամանակը: Հասարակականորեն-անհրաժեշտ բանվորական ժամանակն այն բանվորական ժամանակն է, վորը պահանջվում է վորևէ սպառողական արժեք պատրաստելու համար՝ արտադրության առկա հասարակականորեն-նորմալ պայմաններում և տվյալ հասարակության աշխատանքի ինտենսիվության ու հմտության միջին մակարդակի դեպքում: Այդպես, օրինակ, Անգլիայում ջուլհակային շոգեմեքենան մտցնելուց հետո, տվյալ քանակությամբ մանվածքը գործվածքի վերածելու համար պահանջվում է, գուցե, այն աշխատանքի կեսը միայն, վոր ծախսվում եր դրա վրա առաջ: Ի հարկե, ձեռքով աշխատող անգլիական ջուլհակը դրանից հետո էլ այդ մանվածքը գործվածքի փոխարկելու համար նույնքան բանվորական ժամանակ է գործադրում, վորքան առաջ, բայց այժմ նրա անհատական բանվորական ժամի արդյունքը ներկայացնում է միայն կեսը հասարակական բանվորական ժամի համեմատու-

[1]) Энгельс, «Анти—Дюринг», стр. 292—293.

թյամբ, և այդ պատճառով էլ՝ այդ արդյունքի արժեքը կրկնակի պակասեց:

Եվ այսպես, տվյալ սպառողական արժեքի՝ արժեքի մեծությունը որոշվում է միայն աշխատանքի քանակությամբ կամ նրա պատրաստման համար հասարակականորեն–անհրաժեշտ բանվորական ժամանակի քանակությամբ: *Յուրաքանչյուր առանձին ապրանք տվյալ դեպքում նշանակություն ունի միայն իբրև իր տեսակի միջին նմուշահատը (էկզեմպլյարը)*: Հետեվաբար, այն ապրանքները, որոնց մեջ պարունակվում են աշխատանքի հավասար քանակություններ կամ որոնք կարող են պատրաստվել միևնույն բանվորական ժամանակի ընթացքում, արժեքի միատեսակ մեծություն ունեն: Մի ապրանքի արժեքը հարաբերում է յուրաքանչյուր մյուս ապրանքի արժեքին այնպես, ինչպես առաջնի արտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակը՝ յերկրորդի արտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակին: «Իբրև արժեքներ՝ բոլոր ապրանքները միայն մարած բանվորական ժամանակի որոշ քանակություններ են»:

Հետևաբար, ապրանքի արժեքի մեծությունը հաստատուն կմնար անփոփոխ միատեսակ, քանի նրա արտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակն անփոփոխ լինի: *Բայց բանվորական ժամանակը փոխվում է աշխատանքի արտադրողական ուժի յուրաքանչյուր փոփոխության հետ*: Աշխատանքի արտադրողական ուժը որոշվում է բազմաբարդ հանգամանքներով, ի միջի այլոց՝ բանվորի հմտության միջին աստիճանով, գիտության զարգացման և նրա տեխնիկական գործադրությունների մակարդակով, արտադրական պրոցեսի հասարակական կազմակերպությամբ, արտադրության միջոցների չափերով և գործունակությամբ և, վերջապես, բնական պայմաններով:[1]

*Այդպիսով՝ յես հավաստում եմ, որ նրանց մեջ մարմնացած հասարակական բանվորական ժամանակը հասարակականորեն չափված է և հավասար է գտնված: Բայց բանվորական ժամանակը չափում են ոչ ուղղակի բացարձակ կերպով, ինչպես այլ դեպքերում — բանվորական ժամերով կամ օրերով և այլն, այլ կողմնակի ճանապարհով*, փոխանակության ոգնությամբ, նշանակում է՝ հարաբերական կարգով: *Հետևաբար, յես չեմ կարող տվյալ ապրանքի մեջ մարմնացած բանվորական ժամանակի այդ որոշ քանակությունն արտահայտել* ուղղակի *բանվորական ժամերով, որոնց թիվը ինձ անհայտ է մնում, այլ միայն* կողմնակի *ճանապարհով, հարաբերական կերպով,—մի որևէ այլ ապրանքի միջոցով, որը ներկայացնում է առաջինի հետ հավասար հասարակական բանվորական ժամանակի քանակություն*:[2]

*Յեթե ապրանքի սպառողական արժեքի նկատմամբ նշանակություն ունի միայն նրա մեջ պարունակվող աշխատանքի որակը, ապա արժեքի մեծության նկատմամբ նշանակություն ունի միայն աշխատանքի քանակը, ընդվո-*

[1] Маркс. Капитал I, стр. 5—6.

[2] Энгельс, «Анти—Дюринг», стр. 293.



*րում վերջինը պետք է վերածվի արդեն մարդկային աշխատանքի՝ առանց որևէ հետագա որակի: Առաջին դեպքում հարցը վերաբերում է նրան, ինչպես և հատկապես ինչ աշխատանք է գործ դրվում, յերկրորդ դեպքում խոսքն այն մասին է, թե որքան աշխատանք է ծախսվում, նրա տևողության մասին: Քանի որ ապրանքի արժեքի մեծությունն արտահայտում է միայն նրա մեջ պարունակվող աշխատանքի որակը, ապա որոշ պրոպորցիայով վերցված ապրանքները միշտ պետք է հավասարամեծ արժեքներ ներկայացնեն*[1]:

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

*Կարող է թվալ, որ յեթե ապրանքի արժեքը որոշվում է այն ստեղծելու վրա գործադրված աշխատանքի քանակով, ապա դրանից բխում է այն, որ ինչքան ծույլ ու անընդունակ է աշխատողը, այնքան մեծ պետք է լինի պատրաստված ապրանքի արժեքը, որովհետև ապրանքը պատրաստելու վրա նա համեմատաբար շատ ժամանակի կարիք կզգա: Սակայն այդ մեղքը շատ տխուր մոլորություն կլիներ: Դուք հիշում եք, որ յես գործածեցի «հասարակական աշխատանք» արտահայտությունը: Այդ՝ «հասարակական»— շատ հարմար որոշումը բազմաթիվ հասկացողություններ է պարունակում: Յերբ մենք ասում ենք, որ ապրանքի արժեքը որոշվում է նրա վրա գործադրված և նրա մեջ բյուրեղացած աշխատանքի քանակով, ապա այդ ասելով մենք հասկանում ենք* աշխատանքի այն քանակը, որ անհրաժեշտ է այն ստեղծելու համար տվյալ հասարակական վիճակում, արտադրության որոշ հասարակական միջին պայմաններում, բնակչության տվյալ միջին խտության և աշխատանքի գործադրության միջին կարողության պայմաններում:

*Յերբ Անգլիայում հյուսվածքային մեխանիկական դազգյահն սկսեց մրցել ձեռքի դազգյահի հետ, այն ժամանակ որոշ քանակի մանվածքը մեկ արշին մահուդ կամ չիթ դարձնելու համար պահանջվում եր նախկին աշխատանքային ժամանակի կեսը: Խեղճ ձեռնաշխատ ջուլհակը որական աշխատում եր տասնյոթ և տասնութ ժամ, փոխանակ ինը և տաս ժամվա, որչափ աշխատում եր առաջ: Սակայն նրա քսանժամյա աշխատանքի արդյունքը այժմ ներկայացնում եր միայն հասարակական տաս ժամ կամ հասարակական աշխատանքի տաս ժամ, որոնք անհրաժեշտ եյին այն ժամանակ որոշ քանակի մանվածքը հյուսվածքի վերածելու համար: Հետևաբար՝ քսան ժամում պատրաստված նրա արդյունքը նրա նախկին տասժամյա աշխատանքի արդյունքից ավելի արժեք չուներ:*

*Այսպես ուրեմն՝ յեթե ապրանքների մեջ իրագործված հասարակական անհրաժեշտ աշխատանքի քանակը որոշում է նրանց փոխանակային արժեքները*, ապա ապրանքի արտադրության համար անհրաժեշտ աշխատանքի քանա-

[1] Капитал I, стр. 12.

կի յուրաքանչյուր մեծացում պետք ե բարձրացնի ապրանքի արժեքը և, ընդհակառակը՝ յուրաքանչյուր փոքրացումն պետք ե իջեցնի այն [1]):

## ԱՊՐԱՆՔԻ ՄԵՋ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՑԵՐԿԱԿԻ ԲՆՈՒՅԹԸ

Աշխատանքն ամենից առաջ մի պրոցես ե, վոր կատարվում ե մարդու և բնության միջև, մի պրոցես, վորի մեջ մարդն իր սեփական գործունեությամբ պայմանավորում, կարգավորում և վերահսկում ե նյութերի փոխանակությունը իր և բնության միջև: Նա ինքը բնության նյութի հանդեպ կանգնած ե իբրև բնության ուժ: *Վորպեսզի յուրացնի բնության նյութն իր սեփական կյանքի համար պիտանի վորոշ ձևով, նա շարժման մեջ ե դնում իր մարմնին պատկանող բնական ուժերը—ձեռքերն ու վոտքերը, գլուխն ու մատները:* Այդ շարժման միջոցով ներգործելով արտաքին բնության վրա և փոփոխության յենթարկելով այն, նա միևնույն ժամանակ փոփոխում ե իր սեփական բնությունը: Նա զարգացնում ե վերջինիս մեջ ննջող ընդունակությունները և այդ ուժերի խաղը յենթարկում իր սեփական իշխանությանը: *Մենք այստեղ չենք քննարկի աշխատանքի առաջին կենդանականերպ բնազդական ձևերը: Հասարակության այն վիճակի համեմատությամբ, յերբ բանվորն ապրանքային շուկայում հանդես ե գալիս իբրև իր սեփական բանվորական ուժի վաճառող, նախնադարյան ժամանակների խորքերին ե վերաբերում այն վիճակը, յերբ մարդկային աշխատանքը դեռ չի ազատվել իր նախնական (պրիմիտիվ), բնազդական ձևից: Մենք աշխատանքը յենթադրում ենք այն ձևով, վոր կազմում ե բացառապես մարդու սեփականությունը:* Սարդը կատարում ե գործողություններ, վորոնք հիշեցնում են ջուլհակի գործողությունները, և մեղուն իր մոմե բջիջների կառուցումով ամաչեցնում ե վորոշ ճարտարապետ մարդկանց: Բայց նույնիսկ ամենավատ ճարտարապետը ամենալավ մեղվից հենց սկզբից տարբերվում ե նրանով, վոր նախքան մոմից բջիջ կառուցելը՝ նա այն կառուցեց արդեն իր գլխում: *Աշխատանքի պրոցեսի վերջում ստացվում ե հետևանք, վորն արդեն այդ պրոցեսն սկսվելուց առաջ գոյություն ուներ իդեալապես, այսինքն՝ աշխատավորի պատկերացման մեջ: Նա վոչ միայն փոփոխություն ե յենթարկում բնության տվածի ձևը, այլ բնության կողմից տրվածի մեջ նա միևնույն ժամանակ կենսագործում ե* նաև իր գիտակցական նպատակը, վորն իբրև որենք վորոշում ե նրա գործողությունների յեղանակ ու բնույթը և վորին նա պետք ե *յենթարկի իր կամքը: Ցեվ այդ յենթարկումը յեզակի գործողություն չե: Մի կողմ թողնելով այն որգանների լարումը, վորոնցով կատարվում ե աշխատանքը, նպատակահարմար կամքը, վորն արտահայտվում ե ուշադրության մեջ, անհրաժեշտ ե աշխատանքի ամբողջ տևողության ընթացքում, և այն ե՛լ այնքան ավելի յե անհրաժեշտ, վորքան աշխատանքն իր բովանդակությամբ և կա-*

[1]) *Մարքս, «Աշխատավարձ, գին և շահույթ»* եջ 42—43.



*տարման յեղանակով ավելի քիչ ե գրավում բանվորին. հետևաբար, վորքան բանվորն աշխատանքից ավելի քիչ ե հաճույք ստանում, իբրև ֆիզիկական և մտավոր ուժերի խաղից:* [1])

Սկզբնապես ապրանքը մեր հանդեպ յելավ իբրև ինչ-վոր յերկակի բան, իբրև սպառողական արժեք և փոխանակային արժեք: Հետագայում յերևան հանվեց, վոր աշխատանքն ել, վորչափով վոր այն արտահայտվում ե արժեքի մեջ, արդեն այն հատկանիշները չունի, վորոնք պատկանում են նրան իբրև սպառողական արժեքներ ստեղծողի: Ապրանքի մեջ պարունակված աշխատանքի այդ յերկակի բնությունն առաջին անգամ քննադատորեն եմ յես մատնանշել: Վորովհետև այդ արդյունքն հանդիսանում ե կենտրոնականը, վորովհետև դեպի նրան ե ձգտում քաղաքատնտեսության ըմբռնումը, *ապա մենք այստեղ լուսաբանենք ավելի հանգամանորեն:*

*Վերցնենք յերկու ապրանք, որինակ, մի սերտուկ և 10 արշին քաթան: Թող առաջինի արժեքը 10 արշին քաթանի արժեքից յերկու անգամ մեծ լինի:*

*Սերտուկը սպառողական արժեք ե, վոր բավարարում ե վորոշ պահանջ: Այն ստեղծելու համար՝ անհրաժեշտ ե արտադրողական գործունեության վորոշ տեսակ: Վերջինս վորոշվում ե իր նպատակով, գործառնությունների բնույթով, նրանց առարկայով, միջոցներով և հետևանքով: Այդպիսով, այն աշխատանքը, վորի ոգտակարությունն արտահայտվում ե նրա արդյունքի սպառողական արժեքի մեջ, կամ նրա մեջ, վոր նրա արդյունքն հանդիսանում ե սպառողական արժեք, կարճ ասած մենք կանվանենք ոգտակար աշխատանք: Հետևաբար, այդ տեսակետից, աշխատանքը միշտ պետք ե քննության առնվի նրա ոգտակար եֆեկտի կապակցությամբ:*

*Ինչպես վոր սերտուկն ու քաթանը վորակապես տարբեր սպառողական արժեքներ են հանդիսանում, ճիշտ նմանապես և միմյանցից վորակապես տարբեր են դերձակի և ջուլհակի նրանց գոյությունն ապահովող աշխատանքները: Յեթե այդ իրերը վորակապես տարբեր սպառողական արժեքներ, և, հետևաբար, ոգտակար աշխատանքի վորակապես տարբեր տեսակների արդյունքներ չլինեյին, ապա նրանք առհասարակ չեյին կարող հակադրվել իբրև ապրանքներ: Սերտուկը սերտուկով՝ տվյալ սպառողական արժեքը միևնույն սպառողական արժեքով չեն փոխանակում:*

Զանազան տեսակ սպառողական արժեքների, կամ ապրանքային մարմինների, ամբողջ գումարի մեջ յերևան ե գալիս ոգտակար աշխատանքների ամբողջ գումարը, վորոնք նույնքան բազմազան են, բաժանվում են նույնքան տարբեր սեռերի, տեսակների, ընտանիքների, յենթատեսակների և տարբեր տեսակների, մի խոսքով՝ յերևան ե գալիս աշխատանքի հասարակական բաժանումը: Նա ապրանքային արտադրության գոյության պայմանն ե, թեև ապրանքային արտադրությունը, ընդհակառակն, աշխատանքի հասարակական բաժանման գոյության պայման չի հանդիսանում...

Այդպես ուրեմն, յուրաքանչյուր ապրանքի սպառողական արժեքի մեջ

[1]) Маркс, Капитал I, стр. 148—149.

բովանդակվում է վորոշ նպատակահարմար կերպով ուղղված արտադրական գործունեության, կամ օգտակար աշխատանք: Սպառողական արժեքները չեն կարող հակադրվել իբրև ապրանքներ, յեթե նրանց մեջ չեն պարունակվում օգտակար աշխատանքի վորակապես տարբեր տեսակներ: Հասարակության մեջ, վորի արդյունքներն իբրև ընդհանուր կանոն ապրանքների ձև են ընդունում, այսինքն՝ ապրանք արտադրողների հասարակության մեջ, առանձին օգտակար աշխատանքների միջև յեղած այդ վորակական տարբերությունը (աշխատանքներ, վորոնք այստեղ ինքնուրույն արտադրողների միմյանցից անկախ գործառնություններ են դառնում) զարգանում է և բարդ բազմաթիվ սիստեմի յե վերածվում,—աշխատանքի հասարակական բաժանման սիստեմի:

Սերտուկի համար, իբրև այդպիսին, նշանակություն չունի, թե ով է հագնում այն, արդյոք դերձա՞կը, թե դերձակի պատվիրատուն: Յերկու դեպքում էլ նա գործում է իբրև սպառողական արժեք: Նույնքան քիչ է փոխում սերտուկի և այն արտադրող աշխատանքի միջև յեղած հարաբերությունն այն փաստը, վոր դերձակային աշխատանքը հատուկ պրոֆեսիա յե դառնում, աշխատանքի հասարակական բաժանման սիստեմի մի ինքնուրույն օղակը: Այնտեղ, վորտեղ այդ բանը հարկադրվում եր հագուստի պահանջով, մարդն ամբողջ հազարամյակներ դերձակություն եր անում, նախքան մարդը դերձակ դառնար: Բայց սերտուկը, քաթանը և առհասարակ նյութական հարստության յուրաքանչյուր տարր, վոր չի կարելի բնության մեջ պատրաստի ձևով գտնել, միշտ պետք է ստեղծվեր հատուկ, նպատակահարմար կերպով ուղղված արտադրողական գործունեության միջոցով, վոր տվյալ բնական նյութը հարմարեցնում է մարդկային պահանջներին: Հետևաբար, աշխատանքն իբրև սպառողական արժեքներ ստեղծող, իբրև օգտակար աշխատանք, անկախ՝ ամեն տեսակի հասարակական ձևերից, մարդկանց գոյության պայմանն է հանդիսանում, իբրև հավիտենական բնական անհրաժեշտություն. առանց նրան հնարավոր չեր լինի նյութերի փոխանակությունը մարդու և բնության միջև, այսինքն՝ հնարավոր չեր լինի նույն ինքն մարդկային կյանքը:

Սպառողական արժեքները՝ սերտուկ, քաթան և այլն, մի խոսքով՝ ապրանքային մարմինները, ներկայացնում են յերկու տարրերի—բնական նյութի և աշխատանքի—միացումը: Յեթե հեռացնենք սերտուկի, քաթանի և այլն մեջ պարունակվող զանազան օգտակար աշխատանքների գումարը, ապա կմնա միայն նյութական սուբստրատը, այն մնացորդը, վոր կա բնության մեջ առանց մարդու վորևէ աջակցության: Մարդն իր արտադրության մեջ կարող է գործել միայն այնպես, ինչպես գործում է բնությունն ինքը, այսինքն՝ կարող է միայն փոխել զանազան նյութերի ձևերը: Այդ դեռ քիչ է: Ձևավորման այդ աշխատանքի մեջ նա անընդհատ հենվում է բնության ուժերի աջակցության վրա: Հետևաբար, աշխատանքն իր արտադրած սպառողական արժեքների, նյութական հարստության միակ աղբյուրը չէ: Աշխատանքը հարստության հայրն է, ինչպես ասում է Վիլյամ Պետտին, հողը—նրա մայրը...

Իբրև արժեքներ, սերտուկն ու քաթանը իրեր են, վորոնք միևնույն սուբստանցն ունեն, միևնույն եյությունը, միասեռ աշխատանքի օբյեկտիվ ար-



տահայտություններ են: Բայց դերձակությունն ու ջուլհակությունը— աշխատանքի վորակապես այլասեռ տեսակներ են: Սակայն, գոյություն ունեն հասարակության այնպիսի վիճակներ, վորոնց ժամանակ միևնույն մարդը փոխնիփոխ կարում է և գործում, հետևաբար ուրեմն, աշխատանքի այդ յերկու տարբեր տեսակները հանդիսանում են միայն միևնույն անհատի աշխատանքի ձևափոխություններ, և վոչ թե զանազան անհատների հաստատուն կերպով առանձնացած ֆունկցիաներ,— ճիշտ այնպես, ինչպես վոր սերտուկը, վոր դերձակը կարում է այսոր և շալվարը, վոր նա կարելու յե վաղը. լոկ միևնույն անհատական աշխատանքի վարիացիաներ են հանդիսանում: Այնուհետև, ամենօրյա փորձը ցույց է տալիս, վոր մեր կապիտալիստական հասարակության մեջ, աշխատանքի փոփոխվող պահանջի կախված ուղղությունից, մարդկային աշխատանքի տվյալ քանակությունը առաջարկվում է փոխնիփոխ, մեկ՝ դերձակության ձևով, մեկ էլ ջուլհակության ձևով: Աշխատանքի ձևի այս փոփոխությունը ինհարկե միանգամայն ավարտված չէ առանց վորոշ բաղխումների, բայց այն պետք է կատարվի: Յեթե մի կողմ թողնենք (աբստրակցիայի յենթարկենք) արտադրողական գործունեության վորոշ բնույթը և, հետևաբար, աշխատանքի օգտակար բնույթը, ապա նրա մեջ միայն մի բան նման, այն է՝ վոր նա մարդկային բանվորական ուժի ծախսումն է հանդիսանում: Ինչպես դերձակությունը, այնպես նաև ջուլհակությունը, չնայելով արտադրողական գործունեության այդ տեսակների վորակական տարբերությանը, ներկայացնում են մարդկային ուղեղի, մկանների, նյարդերի, ձեռքերի և այլն արտադրողական ծախսում, և այդ իմաստով հանդիսանում են միևնույն մարդկային աշխատանքը: Դրանք միայն մարդկային բանվորական ուժի ծախսումների յերկու տարբեր ձևերն են:[1])

Փոխանակելով արդյունքները՝ մարդիկ հավասարեցնում են աշխատանքի ամենատարբեր տեսակները: Ապրանքների արտադրությունը հասարակական հարաբերությունների սիստեմ է, վորի ժամանակ առանձին արտադրողներն ստեղծում են բազմազան արդյունքներ (աշխատանքի հասարակական բաժանում), և այդ բոլոր արդյունքները փոխանակության ժամանակ հավասարեցվում են միմյանց: Հետևաբար այն ընդհանուրը, վորը կա բոլոր ապրանքների մեջ վո՛չ թե արտադրության վորոշ ճյուղի կոնկրետ աշխատանքն է հանդիսանում, վո՛չ թե մի տեսակի աշխատանքը, այլ աբստրակտ մարդկային աշխատանքը, մարդկային աշխատանքն առհասարակ: Տվյալ հասարակության ամբողջ բանվորական ուժը, վոր ներկայացված է բոլոր ապրանքների արժեքի գումարի մեջ, միևնույն մարդկային բանվորական ուժն է հանդիսանում. փոխանակության միլիարդ փաստերն այդ են ապացուցում: Յեվ, հետևաբար, յուրաքանչյուր առանձին ապրանք ներկայացնում է միայն իբրև հասարակականորեն անհրաժեշտ բանվորական ժամանակի վորոշ մաս:[2])

Յուրաքանչյուր աշխատանք, մի կողմից, մարդկային բանվորական ուժի

[1]) Капитал I, стр. 7—11.

[2]) Ленин, т. XII, ч. II, стр. 327—328

ծախսումն է, բառիս ֆիզիոլոգիական իմաստով,— և իբրև այդպիսի միատեսակ կամ աբստրակտ մարդկային աշխատանք՝ նա կազմում է (образует) ապրանքների արժեքը: Մյուս կողմից, յուրաքանչյուր աշխատանք մարդկային բանվորական ուժի ծախսումն է հատուկ նպատակահարմար ձևով, և իբրև այդպիսի կոնկրետ օգտակար աշխատանք՝ նա ստեղծում է սպառողական արժեքներ ¹):

## ԱԲՍՏՐԱԿՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ՎՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՊԵՑԻՖԻԿ ՁԵՎ

*Ապրանքների արժեքի բնությունը, արժեքի վորոշումը հատուկ է վոչ թե այն բանվորական ժամանակով, վորն անհրաժեշտ է վորոշ անհատական արտադրողին, վորոշ քանակությամբ ապրանքներ կամ առանձին ապրանքներ արտադրելու համար, այլ հասարակականորեն անհրաժեշտ այն բանվորական ժամանակով, վորն արտադրության տվյալ միջին հասարակական պայմաններում անհրաժեշտ է, վորպեսզի արտադրվի շուկայում գտնվող դանազան ապրանքների հասարակականորեն անհրաժեշտ ամբողջ քանակությունը* ²):

Արժեքի մեծությունը վորոշվում է հասարակականորեն այն անհրաժեշտ աշխատանքի քանակությամբ կամ բանվորական ժամանակով, վորը հասարակականորեն անհրաժեշտ է տվյալ ապրանքը, տվյալ սպառողական արժեքն արտադրելու համար: «Հավասարեցնելով փոխանակության ժամանակ իրենց տարբեր պրոդուկտները մեկը մյուսին, մարդիկ հավասարեցնում են իրենց աշխատանքի տարբեր տեսակները մեկը մյուսին: Նրանք այդ չեն գիտակցում, բայց նրանք այդ անում են ³):

*Աշխատանքի բոլոր տեսակների հավասարությունն ու հավասարանշությունը, վորչափով նրանք մարդկային աշխատանք են հանդիսանում ընդհանրապես,—արժեքի արտահայտության այդ գաղտնիքը կարող է վերծանվել միայն այն ժամանակ, յերբ մարդկային հավասարության գաղափարն արդեն ժողովրդական նախապաշարմունքի կայունություն է ձեռք բերել: Իսկ այս հնարավոր է միայն այնպիսի հասարակության մեջ*, վորտեղ ապրանքային ձևը աշխատանքի արդյունքի ընդհանուր ձևն է, *և հետևապես մարդկանց վերաբերմունքը՝ մեկը մյուսին, վորպես ապրանքատերերի*, իշխող հասարակական հարաբերությունն է ⁴):

*Այդպիսով՝ այդ արժեքն եւ այժմ* մարդկային անխտիր աշխատանքի խտացած բյուրեղն է: Վորովհետև այն ստեղծող աշխատանքն այժմ միանգամայն վորոշակի կերպով արտահայտված է վորպես մի աշխատանք, վոր հավասարանիշ է ամեն մի մարդկային այլ աշխատանքի, անկախ այն բանից, թե ինչ բնական ձև ունի վերջինը, և իրանում է արդյոք այն սուրտուկի, ցորենի, յերկաթի, վոսկու մեջ և այլն ¹):

Արժեքի սուբստանցիան աբստրակտ աշխատանքն է. ապրանքները լույս աշխարհ են գալիս սպառողական արժեքների կամ ապրանքային մարմինների ձևով, ինչպես յերկաթ, կտավ, ցորեն և այլն: Այդ նրանց տնարույս նատուրալ *ձևն է: Սակայն նրանք* ապրանք են դառնում միայն իրենց յերկակի բնույթի շնորհիվ, միայն այն բանի շնորհիվ, վոր նրանք միաժամանակ թե՛ սպառման առարկաներ են, թե՛ արժեքի կրողներ: Հետևապես, նրանք ապրանքներ են կամ ապրանքային ձև ունեն միայն այն չափով, վորչափով նրանք ունեն այդ յերկակի ձևը — նատուրալ ձևը և արժեքի ձևը:

Ապրանքների արժեքի սուբստանցիան նրանով է տարբերվում Կվիկլի այրուց, Ֆալստաֆի ընկերուհուց ²), վոր հայտնի չէ, թե վորտեղ է գտնվում այդ սուբստանցիան: Վորպես ուղղակի հակադրություն ապրանքային մարմինների զգայական կոպիտ սուբստանցիայի, բնական նյութի և վոչ մի ատոմ չի մտնում նրանց արժեքի սուբստանցիայի մեջ: *Դուք կարող եք շոշափել և տնտղել յուրաքանչյուր առանձին ապրանք, ինչպես ուզում եք,— նրա արժեքը կմնա ձեզ համար անմատչելի, անըմբռնելի* (неуловимый): *Սակայն յեթե մենք հիշենք, վոր ապրանքները արժեքի սուբստանցիա ունեն միայն* այն չափով, վորչափով նրանք մարդկային աշխատանքի միևնույն հասարակական միավորի արտահայտություններն են, *վոր նրանց արժեքի սուբստանցիան այդ պատճառով եւ* զուտ հասարակական բնույթ ունի, *ապա մեզ համար ինքնին հասկանալի կլինի, վոր նա կարող է արտահայտվել վորպես մեկ ապրանքի* յուկ հասարակական հայտաբերությունը դեպի մյուսը: *Իրոք, մենք յելնում ենք ապրանքների փոխանակային արժեքից կամ փոխանակային հարաբերությունից, վորպեսզի գտնենք նրանց մեջ թաքնված արժեքի հետքը: Մենք պետք է վերադառնանք այժմ արժեքի արտահայտության այդ ձևին* ³):

«Արժեքը յերկու անձանց միջև գոյություն ունեցող հարաբերությունն է, *ինչպես ասել է մի հին տնտեսագետ. նա պետք է ավելացներ միայն՝* հարաբերություն, վոր ծածկված է իրային թաղանթով: Միայն հասարակության մի վորոշ և պատմական ֆորմացիայի հասարակական արտադրական հարաբերությունների, այն էլ փոխանակության մասսայական, միլիարդավոր անգամ կրկնվող յերևույթի մեջ արտահայտվող հարաբերությունների սիստեմի տեսակետից կարելի յե հասկանալ, թե ինչ է արժեքը»: Վորպես արժեք, ապրանքները միայն կուտակված աշխատանքային ժամանակի վորոշ քանակություններ են ⁴):

Footnotes, page 126:

¹) Капитал I, стр. 13.
²) Маркс, Капитал III, стр. 145.
³) Ленин, с с. XII т. стр. 328.
⁴) Маркс, Капитал I, стр. 27.

Footnotes, page 127:

¹) Маркс—Капитал I, стр. 27.
²) *Կվիկլի և Ֆալստաֆը Շեքսպիրի «Հենրիխ* IV—V» *պիեսների գործող դեմքերից*:
³) Капитал I, стр. 14.
⁴) Ленин, XII, стр. 328.

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Արժեքի հասկացողությունը ապրանքային արտադրության տնտեսական պայմանների ամենաընդհանուր և այդ պատճառով էլ ամենալրիվ արտահայտությունն է: Ուստի արժեքի հասկացողության մեջ սաղմային վիճակում պարունակվում են վոչ միայն փողը, այլև ապրանքային արտադրության և ապրանքային փոխանակության բոլոր ավելի զարգացած ձևերը: Այն հասկացողության մեջ, վոր արժեքը մասնավոր արդյունքներում պարունակվող հասարակական աշխատանքի արտահայտությունն է,—ընկած է աշխատանքի իր իսկ՝ պրոդուկտի մեջ պարունակվող մասնավոր աշխատանքից տարբերելու հնարավորությունը: Յեթե այդպիսով վորևէ մասնավոր արտադրող շարունակում է արտադրել հին յեղանակով այն ժամանակ, յերբ արտադրության հասարակական յեղանակն առաջադիմում է, ապա անշահավետությունը նրա համար չափազանց զգալի յե դառնում: Նույն յերևույթը տեղի յե ունենում, յերբ վորևէ վորոշ տեսակի ապրանքների մասնավոր արտադրողների հանրակցությունն այդ ապրանքներից արտադրվում է հանրային պահանջներից գերազանցվող քանակությամբ [1]) :

Յեթե բանվորն ապրանքն արտադրելու վրա զգալի չափով ավելի աշխատանքային ժամանակ է գործ դնում, քան այդ հանրորեն անհրաժեշտ է, յեթե նրա համար անհատորեն անհրաժեշտ բանվորական ժամանակն զգալի չափով շեղվում է հասարակականորեն անհրաժեշտ կամ միջին բանվորական ժամանակից, ապա նրա աշխատանքը չի կարող միջին աշխատանք համարվել, իսկ նրա բանվորական ուժը չի կարող միջին բանվորական ուժ համարվել: Այդպիսի բանվորական ուժը կամ ամենևին չի կարող վաճառվել կամ կվաճառվի բանվորական ուժի միջին արժեքից ցած: Այդպիսով աշխատունակության վորոշ մինիմում, յենթադրվում է միշտ, և մենք կտեսնենք հետագայում, վոր կապիտալիստական արտադրությունը գտնում է այդ մինիմումը չափելու յեղանակը: Այդ մինիմումը շեղվում, հեռանում է միջին մակարդակից, չնայած, վոր հարկե լինում բանվորական ուժը վարձատրել նրա միջին արժեքի համաձայն: Շեղումները հավասարակշռվում են ամբողջ հասարակության համար, բայց վոչ առանձին վարպետի համար: Հետևապես արժեքի անման օրենքը լիովին իրացվում է առանձին արտադրողի համար միայն այն դեպքում, յերբ նա արտադրում է վորպես կապիտալիստ, այսինքն՝ հենց սկզբից արդեն շարժման մեջ է դնում հասարակական միջին աշխատանքը [2]) :

Սակայն ապրանքի իսկական արժեքը վոչ թե նրա անհատական, այլ նրա հասարակական արժեքն է, այսինքն այդ արժեքը չափվում է վոչ թե բանվորական ժամանակի այն քանակությամբ, վոր ապրանքը նստել է փաստորեն արտադրողի վրա՝ տվյալ առանձին դեպքում, այլ այն բանվորական ժամանակով, վորը հասարակականորեն անհրաժեշտ է ապրանքն արտադրելու համար [1]) :

1) Энгельс, «Анти—Дюринг», стр. 226.
2) Маркс, Капитал, стр. 300.



Ամեն մի ապրանքի, հետևապես նաև կապիտալ կազմող ապրանքների արժեքը վորոշվում է վոչ թե այն անհրաժեշտ բանվորական ժամանակով, վորը հենց նրա մեջն է պարունակվում, այլ՝ այն բանվորական ժամանակով, վորը հասարակականորեն անհրաժեշտ է նրա վերարտադրության համար [2]) :

## ՀԱՍԱՐԱԿ ՅԵՎ ԲԱՐԴ ԱՇԽԱՏԱՆՔ

Իհարկե, ինքը մարդկային բանվորական ուժը պետք է ավելի կամ պակաս չափով զարգացած լինի, վորպեսզի ծախսվի այս կամ այն ձևով: Սակայն ապրանքի արժեքի մեջ արտահայտվում է մարդկային հասարակ աշխատանքը, ընդհանրապես մարդկային աշխատանքի ծախսումը: Այնպես, ինչպես բուրժուական հասարակության մեջ գեներալը կամ բանկիրը խոշոր դեր է խաղում, իսկ հասարակ մարդը՝ շատ խղճուկ, ճիշտ այդպես է գործի դրությունը նաև մարդկային աշխատանքի վերաբերմամբ: Այդ աշխատանքը հասարակ ծախսումն է բանվորական ուժի, վոր միջին չափով ունի սովորական, վորևէ մասնագիտական պատրաստություն չունեցող յուրաքանչյուր մարդու մարմնական օրգանիզմը: Հասարակ միջին աշխատանքը, թեև տարբեր բնույթ է կրում տարբեր յերկրներում և տարբեր կուլտուրական դարաշրջաններում, այնուամենայնիվ, յուրաքանչյուր վորոշ հասարակության համար տվյալ մեծություն է ներկայացնում: Համեմատաբար բարդ աշխատանքը միայն աստիճանի բարձրացված կամ ավելի շուտ բազմապատկված հասարակ աշխատանք է, այնպես վոր բարդ աշխատանքի փոքր քանակությունը հավասար է հասարակ աշխատանքի մեծ քանակության: Փորձը ցույց է տալիս, վոր բարդ աշխատանքի այդպիսի վերածումը հասարակ աշխատանքի՝ կատարվում է մշտապես: Ապրանքը կարող է ամենաբարդ աշխատանքի արդյունք լինել, սակայն նրա արժեքը նրան հավասար է դարձնում հասարակ աշխատանքի արդյունքի, և, հետևապես ինքը միայն հասարակ աշխատանքի վորոշ քանակություն է: Այն տարբեր պրոպորցիաները, վորոնցով աշխատանքի տարբեր տեսակները վեր են ածվում հասարակ աշխատանքի, վորպես նրանց չափման միավորի, սահմանվում են հասարակական պրոցեսով արտադրողների թիկունքի յետևում, ուստի և վերջիններիս թվում են, վոր նրանք սահմանված են սովորույթով: Հետագա շարադրանքում պարզության համար մենք բանվորական ուժի ամեն մի տեսակ կքննենք, վորպես անմիջականորեն հասարակ բանվորական ուժ,—այդ մեզ կազատի յուրաքանչյուր մասնավոր դեպքում բարդ աշխատանքը հասարակի վերածելու գործառնությունը կրկնելու անհրաժեշտությունից [3]) :

1) Капитал I, стр. 294.
2) Капитал III, стр. 98.
3) Капитал I, стр. 11.

Յերկու միատեսակ մասնավոր արդյունքներում հասարակական անփոփոխ հարաբերությունների պայմաններում, կարող է պարունակվել մասնավոր աշխատանքի վոչ միատեսակ քանակություն, սակայն միշտ՝ անպայման առհասարակ մարդկային աշխատանքի միատեսակ քանակություն: Անվարժ դարբինը կարող է հինգ պայտը շինել նույն ժամանակվա ընթացքում, վորի ընթացքում,— հմուտ դարբինը կշինի տասը: Սակայն հասարակությունն առանձին անձնավորության պատահական անվարժությունը չի մարմնացնում արժեքի մեջ. նա մարդկային աշխատանք է համարում ընդհանրապես միայն այն աշխատանքը, վորն իր մեջ պարունակում է աշխատողի միջին նորմալ վարժվածություն: Առաջին դարբնի հինգ պայտերից մեկն այդ պատճառով փոխանակության մեջ ավելի մեծ արժեք չի ներկայացնում, քան նույն ժամանակվա ընթացքում յերկրորդի արտադրած տաս պայտերից մեկը: Միայն այն չափով, վորչափով մասնավոր աշխատանքը հասարակականորեն անհրաժեշտ է, այն չափով էլ այն իր մեջ առհասարակ մարդկային աշխատանք է պարունակում [1]):

Վորպեսզի կարելի լինի ապրանքների արժեքը չափել նրանց մեջ պարունակվող բանվորական ժամանակով, պետք է աշխատանքի տարբեր տեսակները վերածել միատեսակ, վոչ մի տարբերություն չներկայացնող հասարակ աշխատանքի, կարճ ասած՝ այնպիսի աշխատանքի, վորը վորակապես միատեսակ է և միայն քանակական տարբերություն է ներկայացնում:

Այդ վերածումը աբստրակցիա յե, սակայն այդ մի աբստրակցիա յե, վորն արտադրության հասարակական պրոցեսում տեղի յե ունենում ամեն օր: Բոլոր ապրանքների վերածումը բանվորական ժամանակի՝ ամենևին ավելի մեծ աբստրակցիա չէ, բայց և վոչ պակաս ռեալ աբստրակցիա յե, քան բոլոր օրգանական մարմինների վերածումն օդի: Այսպիսով, ժամանակով չափվող աշխատանքը հրապարակ է գալիս իրականության մեջ վոչ վորպես տարբեր անհատների աշխատանք, այլ ավելի շուտ տարբեր աշխատող անհատներ հանդես են գալիս, վորպես այդ աշխատանքի հասարակ օրգաններ: Այլ խոսքով— վորչափով աշխատանքը հանդես է գալիս փոխանակային արժեքների մեջ, այն կարող է ներկայացվել վորպես ընդհանրական մարդկային աշխատանք: Ընդհանրական մարդկային աշխատանքի այս աբստրակցիան գոյություն ունի այն միջին աշխատանքի մեջ, վորն ընդունակ յե կատարելու տվյալ հասարակության յուրաքանչյուր միջին անհատ. այդ, մարդկային մկանների, ներվերի, ուղեղի և այլ նյութերի վորոշ արտադրողական ծախսումն է: Այդ պարզապես այն աշխատանքն է, վորին կարող է ընտելանալ՝ վարժվել յուրաքանչյուր միջին անհատ, և վորը նա այս կամ այն ձևով պետք է կատարի: Այդ միջին աշխատանքի բնույթը տարբեր է տարբեր յերկրներում և մարդկային կուլտուրայի տարբեր դարաշրջաններում, սակայն տվյալ հասարակության մեջ վորոշ է: Հասարակ աշխատանքը կազմում է աշխատանքի ընդհանուր մասսայի ամենամեծ մասը բուրժուական հասարակության

1) Энгельс, «Анти—Дюринг», стр. 293.



մեջ, ինչպես սրանում կարելի յե համոզվել վիճակագրությունից: Արդյոք A 6 ժամվա ընթացքում կտավ է արտադրում և 6 ժամվա ընթացքում՝ յերկաթ, և B ճիշտ նույնպես 6-ական ժամ է նվիրում կտավի ու յերկաթի արտադրությանը, կամ թե A 12 ժամվա ընթացքում յերկաթ է արտադրում, իսկ B 12 ժամվա ընթացքում՝ կտավ,— առաջին իսկ հայացքից յերևում է, վոր խոսքը վերաբերում է միայն՝ միևնույն բանվորական ժամանակի տարբեր կիրառումներին: Սակայն ի՞նչպես վարվել բարդ աշխատանքի հետ, վորը բարձրանում է միջին մակարդակից, վորպես ավելի կենդանի աշխատանք, մեծ տեսակարար կշիռ ունեցող աշխատանք: Այդ տեսակ աշխատանքը վեր է ածվում բազմապատկված հասարակ աշխատանքի. այդ— հասարակ աշխատանք է՝ բարձրացված բարձր աստիճանի. այսպես, օրինակ, բարդ աշխատանքի մեկ օրը հավասար է հասարակ աշխատանքի յերեք օրին: Այստեղ դեռ տեղը չէ քննելու այդ վերածումը ղեկավարող օրենքները: Սակայն, վոր այդ վերածումը կատարվում է, միանգամայն ակներև է, վորովհետև ամենաբարդ աշխատանքի արդյունքը, վորպես փոխանակային արժեք, վորոշ հարաբերությամբ հասարակ, միջին աշխատանքի արդյունքի եկվիվալենտն է. հետևապես հավասար է այդ հասարակ աշխատանքի վորոշ քանակության[1]:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՐԺԵՔԸ

Յեթե աշխատանքի՝ զանազան տեսակ ապրանքներ ստեղծելու համար անհրաժեշտ քանակությունները անփոփոխ մնային, ապա նրանց համեմատական արժեքներն էլ անփոփոխ կլինեին: Սակայն ուրիշ բան ենք տեսնում մենք իրականում: Աշխատանքի այն քանակությունը, վոր անհրաժեշտ է վորևէ ապրանք արտադրելու համար, շարունակ փոփոխվում է կիրառվող աշխատանքի արտադրողականության փոփոխության հետ միասին: Վորքան ավելի շատ է աշխատանքի արտադրողական ուժը, այնքան ավելի շատ արդյունքներ են պատրաստվում տվյալ բանվորական ժամանակում, և ընդհակառակը, վորքան փոքր է աշխատանքի արտադրողական ուժը, այնքան ավելի քիչ պրոդուկտ է պատրաստվում միևնույն ժամանակում: Յեթե, օրինակ, բնակչության ավելանալու դեպքում անհրաժեշտ դառնար ավելի պակաս պտղաբեր հողերը մշակել, ապա վորոշ քանակությամբ պրոդուկտներ ստանալու համար պետք կլիներ ավելի մեծ քանակությամբ աշխատանք կիրառել, վորի հետևանքով գյուղատնտեսական պրոդուկտների արժեքը պետք է աճեր: Մյուս կողմից, պարզ է, վոր յեթե մեկ մանողը աշխատանքային օրվա ընթացքում, ժամանակակից արտադրական գործիքների օգնությամբ, կաժ է դարձնում մի քանի հազար անգամ ավելի բամբակ, քան նա այդ կարող էր անել ճախարակի օգնությամբ այդ միևնույն ժամանակի ընթացքում, ապա բամբակի յուրաքանչյուր առանձին ֆունտ այնքան անգամ էլ պակաս աշխա-

1) Маркс, «К критике полит. экономии».

տանք է կլանում ճանողից, քան առաջ: Կաժի արժեքը պետք է համապատասխանորեն իջնի[1]):

Յեթե մեկ սյուրտուկ արտադրելու համար անհրաժեշտ՝ աշխատանքի բոլոր օգտակար տեսակների արտադրողական ուժն անփոփոխ է մնում, ապա սյուրտուկների արժեքի մեծությունն աճում է նրանց քանակության պրոպորցիոնալ կերպով: Յեթե մեկ սյուրտուկը ներկայացնում է, որինակ, 3 բանվորական որ, ապա 2 սյուրտուկը ներկայացնում է 3×2=6 բանվորական որ և այլն: Սակայն, յենթադրենք, վոր մեկ սյուրտուկ արտադրելու համար անհրաժեշտ աշխատանքն աճում է յերկու անգամ կամ կիսով չափ ընկնում է: Առաջին դեպքում մեկ սյուրտուկն այնքան արժի, վորքան առաջ յերկու սյուրտուկն արժեր, յերկրորդ դեպքում յերկու սյուրտուկն այնքան արժեն, վորքան առաջ մեկն արժեր, թեև յերկու դեպքում էլ սյուրտուկի մատուցած ծառայությունը մնում է անփոփոխ, այնպես, ինչպես անփոփոխ է մնում նաև նրա մեջ պարունակվող օգտակար աշխատանքի քանակը: Սակայն նրա արտադրության վրա ծախսված աշխատանքի քանակը փոխվեց:

Սպառողական արժեքի մեծ քանակը ինքնին իրային հարստության մեծ քանակ է ներկայացնում. յերկու սյուրտուկն ավելի շատ է, քան մեկը: Յերկու սյուրտուկով կարելի յե յերկու մարդու հագցնել, մեկով միայն մեկին և այլն: Այնուամենայնիվ իրային հարստության աճող մասսային կարող է համապատասխանել նրա արժեքի մեծության միաժամանակ տեղի ունեցող իջեցումը: Այդ հակադիր շարժումը տեղի յե ունենում աշխատանքի յերկակի բնույթից: Արտադրողական ուժը, իհարկե, միշտ օգտակար, կոնկրետ աշխատանքի արտադրողական ուժ է և փաստորեն իրենով վորոշում է միայն նպատակահարմար արտադրողական աշխատանքի գործունեության աստիճանը տվյալ ժամանակամիջոցի ընթացքում: Հետևապես, օգտակար աշխատանքը մերթ արդյունքների ավելի հարուստ աղբյուր է հանդիսանում, մերթ աղքատ, ուղիղ համեմատական է նրա արտադրողական ուժի բարձրացման կամ անկման: Ընդհակառակը, արտադրողական ուժի փոփոխությունն ինքնըստինքյան ամենևին չի շոշափում աշխատանքը, վորչափով այն արտահայտվում է ապրանքի արժեքի մեջ: Վորովհետև արտադրողական ուժը պատկանում է աշխատանքի կոնկրետ օգտակար ձևին, ուստի այն, իհարկե, չի կարող այլևս վորևէ առնչություն ունենալ աշխատանքի հետ, յերբ մենք արդեն հրաժարվեցինք նրա կոնկրետ օգտակար ձևից: Հետևապես, միևնույն աշխատանքը տարբեր ժամանակամիջոցներում միշտ ստեղծում է իրենից մեծությամբ հավասար արժեքներ, վորքան էլ փոփոխվի նրա արտադրողական ուժը: Սակայն այն բերում է այդ պայմաններում, հավասար ժամանակամիջոցներում սպառողական արժեքների տարբեր քանակություններ. ավելի, յերբ արտադրողական ուժն աճում է, պակաս, յերբ այն ընկնում է: Արտադրողական ուժի հենց այն փոփոխությունը, վորն ավելացնում է աշխատանքի արդյունավետությունը, և հետևապես, նաև նրա բերած սպառողական ար-

[1]) Маркс, «Зарпл. цена и прибыль», стр. 43—44.



ժեքի մասսան, պակասեցնում է, ինչպես մենք տեսնում ենք, այդ աճած մասսայի արժեքի ընդհանուր մեծությունը, յերբ այդ փոփոխությունը կրճատում է բանվորական ժամանակի այն քանակությունը, վորն անհրաժեշտ է այդ արժեքն արտահայտելու համար: Յեվ ընդհակառակը: [1])

Յեթե հաջողվի փոքր քանակությամբ աշխատանք գործ դնելով ածուխը վերածել ալմաստի, ապա ալմաստի արժեքը կարող է աղյուսի արժեքից ավելի ընկնել: Առհասարակ, վորքան մեծ է աշխատանքի արտադրողական ուժը, այնքան ավելի պակաս է այն բանվորական ժամանակը, վորն անհրաժեշտ է վորոշ ապրանք պատրաստելու համար, այնքան էլ պակաս է նրա արժեքը: Ընդհակառակը, վորքան պակաս է աշխատանքի արտադրողական ուժը, այնքան ավելի մեծ է բանվորական այն ժամանակը, վորն անհրաժեշտ է ապրանքը պատրաստելու համար, այնքան ավելի յե նրա արժեքը: Այսպիսով ապրանքի արժեքի մեծությունը փոխվում է ուղիղ համեմատական քանակին և հակառակ համեմատական նրա մեջ իրացած աշխատանքի արտադրողական ուժին:[2])

## ԱՐԺԵՔԸ ՅԵՎ ՆՐԱ ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԸ

Յերբ մենքասում ենք՝ վորպես արժեքներ, ապրանքները միայն մարդկային աշխատանքի պարզ թանձրուքներն են, ապա մեր անալիզն ապրանքները վեր է ածում աբստրակտ արժեքի, վորը չի արտահայտվում նրանց արժեքի վոչ մի ձևի մեջ, վորը տարբերվում է նրանց բնական ձևից: Մեկ ապրանքի հարաբերությունը դեպի մյուսն ըստ արժեքի՝ այլ է: Ապրանքի, վորպես արժեքի բնույթն այստեղ յերևան է գալիս շնորհիվ նրա սեփական հարաբերության դեպի մյուս ապրանքը:

Յերբ, որինակ, սյուրտուկը, վորպես արժեքի մարմնացում, հավասարեցվում է կտավին, ապա առաջինի մեջ պարունակվող աշխատանքը հավասարեցվում է յերկրորդի մեջ պարունակվող աշխատանքին, իհարկե, դերձակի աշխատանքը, վորով սյուրտուկն է ստեղծվում, մի այլ տեսակի կոնկրետ աշխատանք է, քան կտավ գործող ջուլհակի աշխատանքը: Սակայն ջուլհակությունը հավասարեցնելը փաստորեն դերձակությունը վեր է ածում այն բանին, վորն իսկապես նույնն է աշխատանքի յերկու տեսակների մեջ, նրանց՝ մարդկային աշխատանքի ընդհանուր բնույթին: Հետևապես, այս անուղղակի ճանապարհով հաստատվում է, վոր ջուլհակությունն էլ, վորչափով այն արժեք է ստեղծում, չի տարբերվում դերձակությունից, հետևապես մարդկային աբստրակտ աշխատանք է[3]):

Վորովհետև յուրաքանչյուր ապրանքի արժեք չի կարող արտահայտվել այլ կերպ, քան յերբ մի ուրիշ ապրանքի արժեքով, և միայն նրա հետ փոխանակվելով կարող է իրացվել, հնարավոր է դառնում այն, վոր կամ ընդհան-

[1]) Капитал I, стр. 12--13.

[2]) Նույն տեղը, եջ 7.

[3]) Капитал I. стр. 17--18.

բապես տեղի չի ունենում ապրանքների փոխանակություն, կամ թե իրացվում է տվյալ ապրանքի վոչ ամբողջ արժեքը :[1])

Ամեն մեկը գիտե, — յեթե նա դրանից ավել ուրիշ բան չգիտե, — վոր ապրանքներն ունեն արժեքի ընդհանուր ձև, վորը նրանց սպառողական արժեքների բնական խայտաբղետ ձևերի խիստ հակապատկերն է, այն է՝ ունեն արժեքի դրամական ձևը :[2])

Վորպեսզի արտահայտի, թե աշխատանքը, վորպես մարդկային աշխատանքի աբստրակտ վորակ, կազմում է նրա սեփական արժեքը, նա ասում է, վոր սյուրտուկը, վորչափով այն հավասար է կտավին, և հետևապես, արժեք է, բաղկացած է նույն այն աշխատանքից, ինչից բաղկացած է նաև այն, կտավը: Վորպեսզի արտահայտի, վոր նրա արժեքի բարձրացրած սուբստանցիան տարբեր է նրա կոշտ մարմնից, նա ասում է, վոր արժեքը սյուրտուկի տեսք ունի, վոր նա ինքը, վորպես արժեքի մարմնացում, նման է այդ պատճառով սյուրտուկին, ինչպես յերկու կաթիլ ջուրը միմյանց: Նկատենք իմիջի այլոց, վոր ապրանքային լեզուն, բացի հրեյականից, ունի ավելի կամ պակաս մշակված շատ բարբառներ[3]) :

Սկզբում ապրանքները փոխանակության պրոցեսում յերևան են գալիս չվոսկեզոծած, չշաքարած ձևով, այնպես, ինչպես մորից ծնվել են: Այդ պրոցեսում մենք մի յերեսում գտնում ենք վոսկի, մյուս յերեսում մյուս բոլոր սպառելի իրերը: Յերկու կողմում էլ մենք գտնում ենք ապրանքներ, վորոնք սպառողական արժեքի և փոխանակային արժեքի միասնություն են ներկայացնում: Փոխանակային ակտի յերկու բևեռներից յուրաքանչյուրում այդ տարբերությունների միասնությունն իրագործվում է հակառակ իմաստով, այդ պատճառով էլ այդ միևնույն ժամանակ ներկայացվում է նրանց փոխհարաբերությամբ: Ապրանքն ռեալ կերպով սպառողական արժեք է. նրա կեցությունը, վորպես արժեք, միայն իդեալականապես գոյություն ունի գնի մեջ, վորն արտահայտվում է ապրանքին հակադրվող վոսկու մեջ, վորպես նրա արժեքի ռեալ պատկերի մեջ: Ընդհակառակը, վոսկու նյութը միայն արժեքի նյութականացման, այսինքն՝ փողի դեր է խաղում: Ուստի վոսկին ռեալ կերպով փոխանակային արժեք է: Նրա սպառողական արժեքը միայն իդեալականապես է յերևան գալիս արժեքի այն հարաբերական արտահայտությունների շարքում, վորոնց ոգնությամբ նա վերաբերում է նրան հակադրվող ապրանքներին, վորպես իր ռեալ սպառողական ձևերի գումարին: Ապրանքների այս հակադիր ձևերը նրանց շարժման իրական ձևերն են փոխանակության պրոցեսում [4]) :

1) Энгельс, «Анти—Дюринг», стр. 296.
2) Капитал I, стр. 14.
3) Капитал I, стр. 19
4) Նույն տեղը, էջ 72



## ՄԱՐՔՍԻ ԱՐԺԵՔԻ ԹԵՈՐԻԱՅԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Ապրանք արտադրելու համար պետք է նրա մեջ ներդնել կամ նրա վրա գործադրել վորոշ քանակությամբ հասարակական աշխատանք: Յես ասում եմ վոչ թե պարզապես աշխատանք, այլ հասարակական աշխատանք: Այն մարդը, վոր առարկան արտադրում է իր սեփական, անմիջական սպառման համար, այսինքն նրա համար, վորպեսզի ինքն սպառի այն, ապա արդյունք է արտադրում, բայց վոչ ապրանք: Վորպես հենց իր համար աշխատող՝ արտադրող, նա հեռու յե կանգնած հասարակությունից: Ապրանք արտադրելու համար մարդը պետք է վոչ միայն այնպիսի արդյունք ստեղծի, վորը բավարարում է վորևէ հասարակական պահանջ, այլ նրա աշխատանքն էլ իր հերթին պետք է կազմի հասարակության ծախսած աշխատանքի ընդհանուր գումարի մի մասը: Նա պետք է գտնվի աշխատանքը հասարակության մեջ բաժանելու վոլորտում: Նա վոչինչ է առանց աշխատանքի մյուս ստորաբաժանումների և իր կողմից պետք է լրացնի այդ ստորաբաժանումները:

Խոսելով ապրանքների, վորպես արժեքի մասին, մենք վերցնում, քննում ենք դրանք բացառապես իրացած, ֆիկսացիայի յենթարկված կամ, յեթե պետք է, բյուրեղացած հասարակական աշխատանքի ընդհանուր տեսակետից: Այս տեսակետից նրանք կարող են մեկը մյուսից տարբերվել միայն նրանով, վոր մեծ կամ փոքր քանակությամբ աշխատանք են ներկայացնում. այսպես, որինակ, մետաքսի թաշկինակի մեջ ավելի աշխատանք է ներդրված, քան աղյուսի մեջ. սակայն ի՞նչպես է չափվում, արդյոք, աշխատանքի քանակությունը: Այն ժամանակով, վորի ընթացքում աշխատանքը կատարվում է, այն է՝ ժամերով, որերով և այլն: Իհարկե այսպես չափելու համար անհրաժեշտ է նախապես աշխատանքի բոլոր ձևերը վերածել միջին կամ հասարակ աշխատանքի, վորպես նրանց ընդհանուր միավորի:

Այսպիսով, մենք հանգում ենք հետևյալ յեզրակացության: Ապրանքն ունի արժեք, վորովհետև այն բյուրեղացված հասարակական աշխատանք է. նրա արժեքի մեծությունը, կամ նրա հարաբերական արժեքը կախված է նրա մեջ պարունակվող հասարակական այդ տարրի շատ կամ քիչ քանակությունից, այսինքն՝ նրա արտադրության համար անհրաժեշտ աշխատանքի հարաբերական քանակությունից: Այսպիսով, ապրանքների հարաբերական արժեքը վորոշվում է այն աշխատանքի հարաբերական քանակությամբ կամ գումարով, վորը գործադրված է այդ ապրանքների վրա, իրագործված ու ֆիքսացիայի յե յենթարկված նրանց մեջ:

Այն ապրանքների համապատասխան քանակությունը, վորոնք կարող են արտադրվել բանվորական ժամանակի միևնույն քանակի մեջ, ունեն հավասար արժեքներ, կամ մեկ ապրանքի արժեքը վերաբերում է մյուսի արժեքին այնպես, ինչպես մեկի մեջ ֆիքսացիայի յենթարկված բանվորական ժամանակը վերաբերում է յերկրորդի մեջ ֆիքսացիայի յենթարկված բանվորական ժամանակին:

Այսպես ուրեմն, մենք յենթադրում ենք, վոր մի կվարտեր ցորենը կամ

մի ունցիա վոսկին միատեսակ արժեքներ կամ էկվիվալենտներ են ներկայացնում, վորովհետև նրանք բյուրեղացումն են հանդիսանում միևնույն քանակությամբ միջին աշխատանքի այսինքն՝ մի աշխատանքի, վորը նրանցից յուրաքանչյուրի վրա գործադրվում է այսքան որվա կամ այսքան շաբաթվա ընթացքում:

Ապրանքի փոխանակային արժեքը վորոշելիս մենք պետք է հենց արտադրության վրա գործադրված աշխատանքին ավելացնենք այն աշխատանքի քանակությունը, վոր առաջ ներդրված է յեղել հում նյութի մեջ, ինչպես նաև այն աշխատանքը, վոր գործադրված է արտադրության պրոցեսում դեր խաղացող գործիքների, արհեստանոցների, մեքենաների, տների վրա: Այսպես, որինակ, վորոշ քանակությամբ բամբակի մանածի արժեքը բյուրեղացված քանակությունն է այն աշխատանքի, վոր գործադրված է բամբակաթելի վրա մանելիս, քանակն այն աշխատանքի, վորն իրացած է յեղել առաջ հենց բամբակի մեջ, քանակն այն աշխատանքի, վոր դրված է յեղել ածխի, յուղի և աշխատանքի համար անհրաժեշտ օժանդակ միջոցների մեջ, քանակն այն աշխատանքի, վորն իրացված է շոգեմեքենաների, մանող մեքենաների, գործարանային շենքերի մեջ և այլն: Արտադրության գոյություն ունեցող միջոցները, ինչպես, որինակ, գործիքները, մեքենաները, շենքերը արտադրության կրկնվող պրոցեսի շատ կամ քիչ տևական շրջանից հետո պետք է փոխարինվեն նորերով: Յեթե նրանք, վորպես հում նյութ, մի տարվա ընթացքում մաշվեյին, ապա իրենց ամբողջ արժեքը նրանք միանգամից կփոխանցեյին այն ապրանքների վրա, վորոնց արտադրության միջոցին ել նրանք գործածվեյին: Սակայն, քանի վոր, որինակ, մանող մեքենան մաշվում է աստիճանաբար, ապա կատարվում է միջին հաշիվ, վորի հիմքում դրվում է մեքենայի գոյության և նրա ոգտագործման կամ նրա կիրառման միջին տևողությունը վորոշ ժամանակի ընթացքում, ասենք, մեկ տարվա ընթացքում: Այսպիսով, մենք հաշվում ենք, թե մանող մեքենայի արժեքի վոր մասն է անցնում որվա ընթացքում պատրաստված մանածի մեջ և, այդ պատճառով, որինակ, մի ֆունտ մանածի մեջ իրայնացած աշխատանքի ընդհանուր գումարի վոր մասն է ընկնում այն աշխատանքին, վորն առաջ իրայնացել է մանող մեքենայի մեջ: Սակայն մեր այս խնդիրը լուծելու համար մենք կարիք չունենք այժմ ավելի յերկար կանգ առնելու այս կետի վրա:

Կարող է թվալ, վոր յեթե ապրանքի արժեքը վորոշվում է նրա ստեղծման վրա գործ դրված աշխատանքի քանակությամբ, ապա դրանից բղխում է, վոր վորքան ավելի ծույլ և անընդունակ է աշխատողը, այնքան ավելի մեծ արժեք պետք է ունենա պատրաստվող ապրանքը, քանի վոր ապրանքը պատրաստելու համար նա համեմատաբար ավելի շատ ժամանակի կարիք կունենա: Սակայն, այս միտքը շատ ցավալի մոլորություն կլիներ: Դուք հիշում եք, վոր յես գործ ածեցի «հասարակական աշխատանք» արտահայտությունը, և այդ «հասարակական» շատ համապատասխան բնորոշման մեջ շատ հասկացողություններ են պարունակվում: Յեթե մենք ասում ենք, վոր ապրանքի արժեքը վորոշում է նրա վրա գործադրված նրա մեջ բյուրեղացած աշխատանքի քանակությամբ, ապա այդ ասելով՝ մենք հասկանում ենք այն աշխատանքի քանակը, վորն անհրաժեշտ է նրա ստեղծման համար հասարակության տվյալ վիճակում, արտադրության վորոշ հասարակական միջին պայմաններում, բնակչության տվյալ միջին խտության և աշխատանքը կիրառելու միջին կարողության դեպքում: Յերբ Անգլիայում մեքենայական մանածագործական մեքենան սկսեց մրցել ձեռքի մեքենայի հետ, ապա վորոշ քանակությամբ մանած մեկ արշին մահուդի կամ չթի վերածելու համար պահանջվում էր նախկին աշխատանքային ժամանակի կեսը: Խեղճ դեր ջուլհակը առաջվա աշխատած որական իննից-տաս ժամի փոխարեն գործի տակ նստում էր տասնյոթ և տասնութ ժամ: Սակայն նրա քսան ժամվա աշխատանքի արդյունքն այժմ ներկայացնում էր միայն տաս հասարակական ժամ, կամ հասարակական աշխատանքի տաս ժամ, վորոնք անհրաժեշտ եյին այդ ժամանակ վորոշ քանակությամբ մանած գործվածքի վերածելու համար: Հետևապես, նրա արտադրանքը, վոր պատրաստված էր քսան ժամի ընթացքում, ավելի արժեք չուներ, քան նրա նախկին տասնաժամյա աշխատանքի արդյունքը:



Յեվ այսպես, յեթե ապրանքների մեջ իրայնացած հանրորեն—անհրաժեշտ աշխատանքի քանակությունը վորոշում է նրանց փոխանակային արժեքը, ապա ապրանքն արտադրելու համար անհրաժեշտ աշխատանքի քանակության ամեն մի ավելացում պետք է բարձրացնի վերջինի արժեքը, և ընդհակառակը, ամեն մի պակասեցում պետք է իջեցնի այդ արժեքը:

Յեթե զանազան տեսակ ապրանքներ ստեղծելու համար անհրաժեշտ աշխատանքի քանակություններն անփոփոխ մնացին, ապա նրանց հարաբերական արժեքներն էլ անփոփոխ կլինեյին: Սակայն այլ բան ենք տեսնում մենք իրականում: Վորևէ ապրանք արտադրելու համար անհրաժեշտ աշխատանքի քանակությունը շարունակ փոփոխվում է՝ արտադրողական ուժերում կիրառվող աշխատանքի փոփոխվելու հետ միասին: Վորքան մեծ է աշխատանքի արտադրական ուժը, այնքան ավելի շատ արդյունք է պատրաստվում տվյալ բանվորական ժամանակի ընթացքում, և ընդհակառակը, վորքան փոքր է աշխատանքի արտադրողական ուժը, այնքան ավելի քիչ արդյունք է պատրաստվում նույն ժամանակի ընթացքում: Յեթե որինակ, բնակչությունն ավելանելու դեպքում անհրաժեշտ լիներ ավելի պակաս պտղաբեր հողեր մշակել, ապա վորոշ քանակությամբ արդյունք ստանալու համար պետք կլիներ ավելի մեծ քանակությամբ ժամանակ գործ դնել, վորի հետևանքով կավելանար գյուղատնտեսական արդյունքների արժեքը: Մյուս կողմից, պարզ է, վոր յեթե մի մանող բանվորական որվա ընթացքում, ժամանակակից արտադրության գործիքների ոգնությամբ, մի քանի հազար անգամ ավելի բամբակ է մանածի վերածում, քան նա կարող էր այդ անել ճախարակի ոգնությամբ նույն այդ ժամանակի ընթացքում, ապա բամբակի յուրաքանչյուր առանձին ֆունտ մանողի այդքան անգամ ավելի քիչ աշխատանք է կլանում, քան առաջ: Մանածի արժեքը պետք է համապատասխանորեն իջնի: Վորքան

ավելի բարձր է աշխատանքի արտադրողականությունը, այնքան ավելի պակաս աշխատանք պետք է գործ դնել վորոշ քանակությամբ արդյունքներ արտադրելու համար — այնքան ավելի պակաս է, հետևապես, արդյունքի արժեքը, վորքան ցած է աշխատանքի արտադրողականությունը, այնքան ավելի շատ աշխատանք է ծախսվում նույն քանակությամբ արդյունքներ արտադրելու վրա,— այնքան ավելի շատ է այդ դեպքում նրանց արժեքը:

Սրա հետևանքով մենք պետք է ընդունենք, վորպես ընդհանուր օրենք, վոր ապրանքների արժեքներն ուղղակի համեմատական են նրանց արտադրության վրա ծախսված բանվորական ժամանակի քանակությանը և հակառակ համեմատական են նրանց վրա գործադրված ժամանակի արտադրողականությանը: [1])

## ԱՐԺԵՔԻ ՁԵՎԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Յուրաքանչյուր վոք գիտե,— յեթե նա նույնիսկ ավելի վոչինչ չգիտե, վոր ապրանքներն ունեն արժեքի ընդհանուր ձև, վորը խիստ հակադիր է նրանց սպառողական արժեքների խայտաբղետ նատուրալ ձևերին, այն է՝ ունեն արժեքի փողային ձև:

Մեզ հարկ կլինի այստեղ հետևելու այն հարցին, վորը բուրժուական քաղաքատնտեսությունը մինչև անգամ չի փորձել դնելու, այսինքն՝ ցույց տալ այդ փողային ձևի ծագումը, այն է՝ հետևել արժեքի այն արտահայտության զարգացմանը, վորպիսին հանդիսանում է ապրանքների արժեքների հարաբերությունը, սկսած նրա ամենապարզ, ամենահամեստ ձևից կից մինչև շլացուցիչ դրամական ձևը: Դրա հետ միասին կանհետանա նաև փողի առեղծվածականությունը:

Արժեքների ամենապարզ հարաբերությունը, ըստ յերևույթին, այն հարաբերությունն է, վոր գոյություն ունի տվյալ ապրանքի և այլ տեսակի, բոլորովին միևնույն է, թե հատկապես ինչ տեսակի,— յեզակի ապրանքի արժեքների միջև: Յերկու ապրանքների արժեքների միջև յեղած հարաբերությունը այդպիսով տալիս է ամենից ավելի պարզ արտահայտությունը տվյալ ապրանքի արժեքի համար:

### A. ԱՐԺԵՔԻ ՊԱՐԶ, ՅԵԶԱԿԻ ԿԱՄ ՊԱՏԱՀԱԿԱՆ ՁԵՎԸ

(20 արշ. կտավը=1 սյուրտուկի, կամ 20 արշ. կտավն արժի մեկ սյուրտուկ):

Արժեքի արտահայտության յերկու բևեռները— արժեքի հարաբերական ձևը և էքվիվալենտային ձևը:

Արժեքի ամեն մի ձևի գաղտնիքը արժեքի այդ պարզ ձևի մեջն է: Նրա անալիզն էլ այդ պատճառով գլխավոր դժվարությունն է ներկայացնում: A և B յերկու տարբեր տեսակի ապրանքները, մեր օրինակում կտավն ու սյուրտուկը, այստեղ, ակներևաբար, յերկու տարբեր դեր են խաղում: Կտավն իր արժեքն արտահայտում է սյուրտուկի մեջ, սյուրտուկը վորպես նյութ է ծառայում արժեքի այդ արտահայտության համար: Առաջին ապրանքն ակտիվ, յերկրորդը՝ պասիվ դեր է խաղում: Առաջին ապրանքի արժեքը ներկայացված է վորպես հարաբերական արժեք, կամ այն գտնվում է արժեքի հարաբերական ձևի մեջ: Յերկրորդ ապրանքը հանդես է գալիս վորպես էքվիվալենտ (համարժեք) կամ գտնվում է էքվիվալենտային ձևի մեջ:

[1]) Маркс. «Зарплата, цена и прибыль» стр. 37—42.



Արժեքի հարաբերական ձևը և էքվիվալենտային ձևը հարաբերական, փոխադարձաբար միմյանց պայմանավորող, անբաժան մոմենտներ են, սակայն միաժամանակ միմյանց բացառող կամ հակադիր ծայրահեղություններ են, այսինքն՝ արժեքի միևնույն արտահայտության բևեռներն են: Նրանք միշտ բաշխվում են արժեքի տվյալ արտահայտությամբ կապված տարբեր ապրանքների միջև: Յես չեմ կարող, օրինակ, կտավի արժեքն արտահայտել կտավով, «20 արշ. կտավը= 20 արշ. կտավի» արժեքի արտահայտություն չէ: Այդ հավասարությունն ավելի շուտ հակառակն է ասում—20 արշ. կտավը վոչ այլ ինչ է, բայց յեթե 20 ար շ. կտավ, այսինքն վորոշ քանակությամբ սպառման առարկա— կտավ: Հետևապես, կտավի արժեքը կարող է արտահայտվել միայն հարաբերաբար, այսինքն՝ այլ ապրանքով: Կտավի արժեքի հարաբերական ձևը յենթադրում է այդ պատճառով, վոր վորևէ այլ ապրանք հակադրվում է նրան էքվիվալենտային ձևով: Մյուս կողմից, այդ այլ ապրանքը, վոր հանդես է գալիս էքվիվալենտային ձևով, չի կարող միևնույն ժամանակ արժեքի հարաբերական ձևի մեջ գտնվել: Նա չէ, վոր արտահայտում է իր արժեքը: Այն միայն նյութ է մատակարարում ուրիշ ապրանքի արժեքն արտահայտելու համար:

Ճիշտ է, 20 արշ. կտավը=1 սյուրտուկի, կամ 20 արշ. կտավն արժե 1 սյուրտուկ արտահայտությունն իր մեջ պարունակում է նաև հակառակ հարաբերությունը— 1 սյուրտուկը=20 արշ. կտավի, կամ 1 սյուրտուկն արժե 20արշ. կտավ: Սակայն յես ստիպված եմ այդպիսով շրջելու հավասարությունը, վորպեսզի տամ սյուրտուկի արժեքի հարաբերական արտահայտությունը, և, յերբ յես այդ անում եմ, կտավը սյուրտուկի փոխարեն դառնում է էքվիվալենտ: Հետևապես հենց միևնույն ապրանքը արժեքի նույն արտահայտությամբ չի կարող միաժամանակ յերկու ձևն էլ ընդունել: Այդ վերջինները բևեռաբար, վորպես միևնույն գծի յերկու ծայրակետեր, բացասում են մեկ-մեկու:

Գտնվո՞ւմ է արդյոք ապրանքն արժեքի հարաբերական ձևի, թե՝ նրան հակադիր էքվիվալենտային ձևի մեջ, այդ վորոշվում է բացառապես այն տեղով, վոր ապրանքը գրավում է արժեքի տվյալ արտահայտության մեջ, այսինքն՝ նրանով,—հանդիսանո՞ւմ է, արդյոք, նա այն ապրանքը, վորի արժեքն արտահայտում է, թե այն ապրանքը, վորով արտահայտվում է արժեքը:

## ԱՐԺԵՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՎԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վորպեսզի պարզենք, թե ինչպես է ապրանքի արժեքի պարզ արտահայտությունը մտնում յերկու ապրանքների միջև յեղած հարաբերության մեջ, անհրաժեշտ է ամենից առաջ այդ վերջինը քննության առնել՝ անկախ նրա քանակական կողմից: Սակայն սովորաբար ճիշտ հակառակ ձևով են վարվում և արժեքների հարաբերության մեջ տեսնում են միայն պրոպորցիա, վորով միմյանց են հավասարեցնում ապրանքի յերկու տարբեր տեսակների վորոշակի քանակությունները: Ընդսմին մոռանում են, վոր տարբեր իրերի մեծությունները կարող են քանակապես համեմատվել միայն նրանից հետո, յերբ նրանք վեր են ածված չափման միևնույն միավորի: Միայն վորպես միևնույն միավորի վերածված արտահայտություններ, նրանք հանդիսանում են միափոխված, հետևապես և համաչափելի (մի չափով չափվող) մեծություններ:

Հավասա՞ր է արդյոք, 20 արշ. կտավը մեկ սյուրտուկի, թե նրանք=20, կամ = X սյուրտուկի, ուրիշ՝ խոսքով կտավի տվյալ քանակությունը շատ թե քիչ սյուրտուկ արժի, համենայն դեպս այդպիսի համեմատության հենց գոյությունն իսկ միշտ յենթադրում է, վոր կտավն ու սյուրտուկները, վորպես վորոշ մեծության արժեքներ արտահայտված են միևնույն միավորներով, միասեռ իրեր են: Կտավը = սյուրտուկի՝ այդ հավասարության հիմքն է:

Սակայն այդ՝ քանակապես միմյանց հավասարեցված յերկու ապրանքները միատեսակ դեր չեն խաղում: Միայն կտավի արժեքն է իր արտահայտությունը գտնում: Յեվ, ընդսմին, ի՞նչ ձևով: Հարաբերվելով սյուրտուկին, վորպես իր «եքվիվալենտին», վորի հետ այն կարող է փոխանակվել: Այդ տեսակետից սյուրտուկը հանդիսանում է արժեքի գոյության ձև, արժեքի մարմնացում, վորովհետև միայն վորպես արժեք այն նույնանում է կտավի հետ: Մյուս կողմից, միայն այստեղ է յերևան գալիս կամ ինքնուրույն արտահայտություն է ստանում հենց իր՝ կտավի արժեքի կեցությունը, վորովհետև միայն վորպես արժեք է կտավը վերաբերում սյուրտուկին, վորպես հավասար արժեքի, կամ եքվիվալենտի:

...Սյուրտուկի արտադրության մեջ իսկապես ծախսված է մարդկային բանվորական ուժ՝ դերձակի աշխատանքի ձևով: Հետևապես, նրա մեջ կուտակված է մարդկային աշխատանք: Այդ տեսակետից սյուրտուկը հանդիսանում է «արժեքի կրող», թեև նրա այդ հատկությունը չի յել յերևում նրա գործվածքի միջից, վորքան էլ բարակ լինի այն: Յեվ, արժեքի տեսակետից, իր հարաբերությամբ դեպի կտավը նա հանդես է գալիս միայն իր այդ կողմով այսինքն՝ վորպես մարմնացած արժեք, վորպես արժեքի մարմին: Չնայած նրան, վոր սյուրտուկը հանդես է գալիս բոլոր կոճակները կոճկած, կտավը նրա մեջ ճանաչում է արժեքի՝ իրեն ազգակից գեղեցիկ հոգին: Սակայն սյուրտուկը չի կարող կտավի աչքում արժեք ներկայացնել այլ կերպ, քան այն դեպքում, յեթե արժեքը վերջինի համար սյուրտուկի ձև է ընդունում: Այսպես, A անհատը չի կարող B անհատին վերաբերել, վորպես նորին մեծության, առանց այն բանի, բայց յեթե վորպես A-ի համար մեծությունը, վորպես այդպիսին, ընդունի B-ի մարմնական ձևը,—վորովհետև դիմագծերը, մազերը և ուրիշ շատ բաներ փոխվում են ամեն անգամ, յերբ փոխվում է յերկրի իշխողը:



Հետևապես, արժեքների այն հարաբերության մեջ, վորում սյուրտուկը կտավի եկվիվալենտն է կազմում, սյուրտուկի ձևը արժեքի ձևի դեր է խաղում: Կտավ-ապրանքի արժեքն, այդ պատճառով էլ, արտահայտվում է սյուրտուկ կտավ-ապրանքի մարմնի մեջ, մեկ ապրանքի արժեքը—մյուսի սպառողական արժեքի մեջ: Վորպես սպառողական արժեք կտավը մի իր է, վորն զգալապես տարբեր է սյուրտուկից. վորպես արժեք, այն «սյուրտուկանման է», ճիշտ նույնպիսի տեսք ունի, ինչպես և սյուրտուկը: Այսպիսով, կտավն ստանում է արժեքի մի ձև, վորը տարբերվում է նրա բնական ձևից: Նրա կեցությունը, վորպես արժեքի, արտահայտվում է նրա ու սյուրտուկի հավասարության մեջ, ինչ քրիստոնյայի վոչխարային բնավորությունն իրեն՝ աստծու գառին նմանեցնելու մեջ:

... Այսպես, ուրեմն, արժեքների հարաբերության ոգնությամբ B ապրանքի բնական ձևը դառնում է A ապրանքի արժեքի ձև, կամ B ապրանքի մարմինը դառնում է A ապրանքի արժեքի հայելի: A ապրանքը, հարաբերելով B ապրանքին, ինչպես արժեքի մարմնի, վորպես մարդկային աշխատանքի նյութացմանը, B սպառողական արժեքը դարձնում է իր սեփական արժեքն արտահայտելու նյութ: A ապրանքի արժեքը, վորն այդպիսով արտահայտված է B ապրանքի սպառողական արժեքի մեջ, ունի հարաբերական արժեքի ձև:

Միայն տարբեր ապրանքների համարժեքության արտահայտությունն է յերևան բերում արժեք ստեղծող՝ աշխատանքի սպեցիֆիկ բնույթը, քանի վոր տարբեր տեսակի ապրանքների մեջ պարունակվող՝ աշխատանքի տարբեր տեսակներն այն իսկապես վեր է ածում մի ընդհանուր հիմքի, մարդկային աշխատանքի առհասարակ:

## ԵԿՎԻՎԱԼԵՆՏԱՅԻՆ ՁԵՎ

... Մենք տեսանք, վոր յերբ մի վորևե A ապրանք (կտավ) իր արժեքն արտահայտում է նրանից տարբեր B ապրանքի (սյուրտուկ) սպառողական արժեքի մեջ, այն միաժամանակ տպավորում է այդ վերջինի մեջ արժեքի ձևը եքվիվալենտային (համարժեքի) ձևը: Կտավ-ապրանքն իր սեփական կեցությունը, վորպես արժեք յերևան է բերում նրանով, վոր այն հավասարվում է սյուրտուկին, վորի մեջ չի յենթադրվում ընդսմին արժեքի և վոչ մի ձև, վոր տարբեր լինի նրա բնական իրային ձևից: Այսպիսով, կտավը, վորպես արժեք, իր կեցությունը փաստորեն դրսևորում է նրանով, վոր սյուրտուկը կարող է անմիջաբար փոխանակվել նրա հետ: Տվյալ ապրանքի եքվիվալենտային ձևը, այդ պատճառով, նրա՝ այլ ապրանքի հետ անմիջականորեն փոխանակելիության ձևն է:

Յեթե ապրանքի տվյալ տեսակը, օրինակ, սյուրտուկները, ապրանքի այլ տեսակի, օրինակ՝ կտավի համար ծառայում են վորպես եքվիվալենտ, յեթե այդպիսով սյուրտուկները ձեռք են բերում մի բնորոշ հատկություն—գտնվել անմիջաբար կտավի հետ փոխանակվող ձևի մեջ, ապա դրանով յերբեք դեռ չի մատնանշվում այն պրոպորցիան, վորով սյուրտուկներն ու կտավը կարող են իրար հետ փոխանակվել: Այդ պրոպորցիան յերբ դրված է կտավի արժեքի մեծությունը, կախված է սյուրտուկների արժեքի մեծությունից: Արդյոք սյուրտուկը եկվիվալենտ է, իսկ կտավը,—հարաբերական արժե՞ք, թե՞ ընդհակառակը, կտավը եքվիվալենտ է, իսկ սյուրտուկը—հարաբերական արժեք, նրանց արժեքի մեծությունը համենայն դեպս վորոշվում է այն բանվորական ժամանակով, վորն անհրաժեշտ է նրանց արտադրության համար, հետևապես անկախ նրանց արժեքի ձևից: Սակայն, յերբ սյուրտուկ ապրանքի տեսակը—արժեքի արտահայտության մեջ, եքվիվալենտի տեղ է գրավում, ապա նրա արժեքի մեծությունը, վորպես այդպիսին, վոչ մի արտահայտություն չի ստանում: Նա արժեքների հավասարության մեջ հանդես է գալիս ավելի շուտ միայն վորպես տվյալ իրի վորոշ քանակություն:

Օրինակ, 40 արշ. կտավն ի՞նչ «արժի»: Յերկու սյուրտուկ: Քանի վոր սյուրտուկ ապրանքների տեսակն այստեղ եքվիվալենտի դեր է խաղում, ապա սյուրտուկների սպառողական արժեքը կտավի վերաբերմամբ հանդիսանում է արժեքի մարմնացում, և բավական են վորոշ քանակությամբ սյուրտուկներ, վորպեսզի արտահայտվի կտավի արժեքի վորոշ մեծությունը: Յերկու սյուրտուկ այդ պատճառով էլ կարող են արտահայտել 40 արշ. կտավի արժեքի մեծությունը, սակայն նրանք յերբեք չեն կարող արտահայտել իրենց սեփական արժեքի մեծությունը, սյուրտուկների արժեքի մեծությունը: Այս փաստի մակերեսային ըմբռնումը—թե արժեքի հավասարության մեջ եքվիվալենտը միշտ միայն վորոշ իրի, վորոշ սպառողական արժեքի մի վորոշ քանակության ձև ունի,—մոլորության մեջ ձգեց Bailey-ին և ստիպեց նրան, ինչպես նրա նախորդներից ու հետևորդներից շատերին, արժեքի արտահայտության մեջ տեսնել միայն քանակական հարաբերություն: Իրականում ապրանքի եքվիվալենտային ձևը արժեքի վոչ մի քանակական վորոշում չի պարունակում:

Առաջին առանձնահատկությունը, վոր աչքի յե ընկնում եքվիվալենտային ձևը քննելիս, այն է, վոր սպառողական արժեքը դառնում է իր հակադրության արժեքի արտահայտության ձև:

Ապրանքի բնական ձևը դառնում է արժեքի ձև:

...Շաքարի գլխի քաշն արտահայտելու մեջ յերկաթը ներկայացնում է յերկու մարմինների էլ հատուկ բնական վորպիսություն, այսինքն՝ ծանրություն,—այն ժամանակ, յերբ սյուրտուկը կտավի արժեքն արտահայտելու մեջ ներկայացնում է յերկու իրերի գերբնական հատկությունը—նրանց արժեքը, մի ինչ վոր զուտ հասարակական բան:



Քանի վոր ապրանքի, որ., կտավի արժեքի հարաբերական ձևն արտահայտում է նրա, իբրև արժեքի կեցությունը, այսինքն՝ մի ինչ-վոր՝ նրա մարմնից ու վերջինի հատկություններից միանգամայն տարբեր բան, օրինակ, վորպես մի ինչ-վոր «սյուրտուկանման» բան, ապա արդեն հենց այս արտահայտությունն ակնարկում է, վոր այստեղ ինչ-վոր հասարակական հարաբերություն է թաքնված: Ճիշտ հակառակ բնույթ է կրում եքվիվալենտային ձևը: Չե՞ վոր այդ ձևը հենց այն է, վոր ապրանքի, ասենք սյուրտուկի տվյալ մարմինը, տվյալ իրը, վորպես այդպիսին, արժեք է արտահայտում, հետևաբար հենց իր իսկ բնությամբ արժեք ունի: Ճիշտ է, այդ իրավացի յե միայն արժեքների այն հավասարության սահմաններում, վորի մեջ ապրանք-կտավը վերաբերում է սյուրտուկ ապրանքին, վորպես եկվիվալենտի: Սակայն քանի վոր տվյալ իրի հատկությունները չեն առեղծվում դեպի այլ իրերը ունեցած նրա հարաբերությամբ, այլ միայն դրսևորվում են այդպիսի հարաբերության մեջ, ապա ծագում է այն պատկերացումը, թե սյուրտուկն իր եքվիվալենտային ձևով, իր՝ այլ ապրանքների հետ անմիջապես փոխանակվելու ընդունակությունը բնությունից ունի, բոլորովին այնպես, ինչպես ունի ծանրություն կամ ջերմություն պահելու հատկություն: Այստեղից էլ բխում է եքվիվալենտային ձևի առեղծվածականությունը, վորն ապշեցնում է տնտեսագետի բուրժուականորեն—կոպիտ հայացքը միայն այն ժամանակ, յերբ եքվիվալենտը նրան հակահարված է պատրաստի փողային ձևով: Այն ժամանակ տնտեսագետն աշխատում է ազատվել վոսկու և արծաթի միստիկական բնույթից, նրանց փոխարեն խցկելով ավելի պակաս շլացուցիչ ապրանքներ և հետզհետե նոր և նոր բավականությամբ թվելով այն ապրանքային կույտի ցուցակը, վորն իր ժամանակ ապրանքային եքվիվալենտի դեր եր խաղում: Նա չի յել կասկածում, վոր արդեն արժեքի պարզ արտահայտությունն, անգամ թե 20 արշ. կտավ=1 սյուրտուկի, լուծում է եքվիվալենտային ձևի առեղծվածը:

Եքվիվալենտ ծառայող ապրանքի մարմինը շարունակ ներկայացնում է մարդկային աբստրակտ աշխատանքի մարմնացում և միշտ, միաժամանակ, վորոշ օգտակար կոնկրետ աշխատանքի արդյունք է: Այդպիսով, այս կոնկրետ աշխատանքը դառնում է մարդկային աբստրակտ աշխատանքի արտահայտություն: Յեթե սյուրտուկը, օրինակ, արժեքի պարզ մարմնացման դեր է խաղում, ապա դերձակային աշխատանքը ևս, վորը փաստորեն մարմնանում է նրա մեջ, մարդկային աբստրակտ աշխատանքի մարմնացման պարզ ձևի դեր է խաղում: Կտավի արժեքի արտահայտության մեջ դերձակային աշխատանքի օգտակարությունն արտահայտվում է վոչ թե նրանով, վոր նա զգեստ, հետևապես,—ըստ գերմանական առածի,—նաև մարդիկ է պատրաստում, այլ նրանով, վոր նա ստեղծում է մի մարմին, վորի վրա արժեքի կնիքն է դրված, և վորը, հետևապես աշխատանքի պարզ թանձրուքն է, վորը վոչնչով չի տարբերվում կտավի արժեքի մեջ իրայնացած աշխատանքից: Արժեքի այդպիսի հայելի պատրաստելու համար ինքը, դերձակությունը

չպետք է իր մեջ ուրիշ այլ բան արտացոլի, բացի առհասարակ մարդկային աշխատանք լինելու իր աբստրակտ հատկությունից։

Դերձակության ձևի մեջ, ինչպես ջուլհակության ձևի մեջ, ծախսվում է մարդկային բանվորական ուժը։ Հետևապես այդ յերկու գործունեությունն էլ մարդկային աշխատանքի ընդհանուր բնույթ ունեն և մի քանի վորոշ դեպքերում, օրինակ, արժեքի արտադրության մեջ, պետք է քննության առնվեն միայն այդ տեսակետից։ Այստեղ միստիկական վոչինչ չկա։ Սակայն ապրանքի արժեքի արտահայտության մեջ գործն ուրիշ կերպարանք է ընդունում։ Որինակ, վորպեսզի արտահայտենք, վոր ջուլհակությունը՝ վոչ վորպես այդպիսին վոչ թե իր կոնկրետ ձևով է կտավի արժեքն ստեղծում, այլ միայն վորպես մարդկային աշխատանք, առհասարակ,—այդ նպատակով ջուլհակությանը հակադրվում է դերձակությունը, այն կոնկրետ աշխատանքը, վորն ստեղծում է կտավի եկվիվալենտը, վորպես մարդկային աբստրակտ աշխատանքի մարմնացման ակնառու ձև։

Յեվ այսպես, եքվիվալենտային ձևի յերկրորդ առանձնահատկությունն այն է, վոր կոնկրետ աշխատանքն այստեղ դառնում եր հակադրության, մարդկային աբստրակտ աշխատանքի արտահայտության ձև։ Բայց քանի վոր այդ կոնկրետ աշխատանքը, դերձակությունը, այստեղ հանդես է գալիս վորպես առհասարակ մարդկային աշխատանքի պարզ արտահայտություն, ապա նա այլ աշխատանքի հետ հավասար լինելու ձև ունի, այն աշխատանքի հետ. վորը պարունակվում է կտավի մեջ, և այդ պատճառով էլ հանդիսանում է աշխատանք իր անմիջականորեն — հասարակական ձևով, թեպետ և միաժամանակ մասնավոր բնույթ է կրում, ինչպես և ապրանք արտադրող աշխատանքի ամեն մի այլ տեսակ։ Հատկապես այս պատճառով էլ այն արտահայտվում է արդյունքի մեջ, վորն ընդունակ է անմիջապես փոխանակվելու ուրիշ ապրանքի հետ։ Այսպիսով, եքվիվալենտային ձևի յերրորդ առանձնահատկությունն այն է, վոր մասնավոր աշխատանքն ընդունում է իր հակադրության ձև, անմիջական հասարակական աշխատանքի ձև։

## ԱՐԺԵՔԻ ՊԱՐԶ ՁԵՎԸ՝ ՎԵՐՑՐԱԾ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ

Ապրանքի արժեքի պարզ ձևը պարունակվում է նրա դեպի վոչ համասեռ ապրանքի, արժեքի հետ ունեցած հարաբերության մեջ, կամ նրա փոխանակային հարաբերության մեջ դեպի այս վերջինը։ A ապրանքի արժեքը վորակապես արտահայտվում է Б ապրանքի այն ընդունակության մեջ, վոր նա անմիջականորեն փոխանակվում է ապրանքի հետ։ Քանակապես այդ արժեքն արտահայտվում է B ապրանքի վորոշյալ քանակության այն ընդունակության մեջ, վորով այն փոխանակվում է A ապրանքի տվյալ քանակության հետ։ Այլ խոսքով՝ ապրանքի արժեքն ինքնուրույն արտահայտություն է ստանում, յերբ ապրանքը ներկայացնում է վորպես «փոխանակային արժեք»։ Յերբ մենք այս գլխի սկզբում հետևելով տարածված նշանակությանը, ասում եյինք, վոր ապրանքը սպառողական և փոխանակային արժեք է,



կամ սպառման առարկա և «արժեք»։ Այն, իր այդ յերկակի բնույթյունը դրսեվորում է, յերբ նրա արժեքն ստանում է սեփական բնական ձևից տարբեր արտահայտության ձև, այն է՝ փոխանակային արժեքի ձև. ընդվորում, մեկուսացված ձևով քննարկվող, ապրանքը յերբեք այդպիսի ձև չի ունենում, սակայն այդպիսի ձևն ունի միշտ միայն արժեքի տեսակետից՝ կամ դեպի մի այլ, նրա հետ վոչ համասեռ ապրանքն ունեցած հարաբերության մեջ։ Քանի վոր մենք այդ հիշում ենք, վերոհիշյալ անճիշտ բառագործածությունը սխալ չի առաջացնում, այլ միայն ծառայում է կըրճատման համար։

Մեր վերլուծությունը ցույց տվեց, վոր ապրանքի արժեքի ձևը կամ արժեքի արտահայտությունը պայմանավորվում է ապրանքային արժեքի բնությամբ, և վոչ թե ընդհակառակը, արժեք և արժեքի մեծությունը պայմանավորվում է նրա՝ վորպես փոխանակային արժեքի արտահայտության ձև։

... Այդպիսով, սպառողական արժեքի և արժեքի միջև գոյություն ունեցող ներքին հակասությունը, վոր թաքնված է ապրանքի մեջ, արտահայտվում է արտաքին հակասության ոգնությամբ, այսինքն՝ յերկու ապրանքների այն հարաբերության ոգնությամբ, վորի մեջ մեկ ապրանքը—այն, վորի արժեքն արտահայտվում է,—անմիջականորեն խաղում է միայն սպառողական արժեքի դեր, իսկ մյուս ապրանքը այն, վորի մեջ արժեքն արտահայտվում է, անմիջականորեն միայն փոխանակային արժեքի դեր է խաղում։ Հետևապես, տվյալ ապրանքի արժեքի պարզ ձևը—նրա մեջ պարունակվող՝ սպառողական արժեքի և արժեքի միջև յեղած հակասության արտահայտության պարզ ձևն է։

Աշխատանքի արդյունքը հասարակության բոլոր վիճակների ժամանակ սպառման առարկա յե, սակայն զարգացման միայն մեկ պատմականորեն վորոշ դարաշրջան արդյունքը վերածում է ապրանքի, այսինքն՝ այն դարաշրջանը, վորը սպառման առարկայի արտադրության վրա ծախսված աշխատանքին տալիս է վերջինիս «իրայնացած» հատկության տեսք, նրա արժեքի տեսք։ Այստեղից հետևում է, վոր ապրանքի արժեքի պարզ ձևը միաժամանակ աշխատանքի արդյունքի պարզ ապրանքային ձևն է, վոր այդ պատճառով էլ ապրանքային ձևի զարգացումը զուգադիպում է արժեքի ձևի զարգացման հետ։

Արդեն առաջին հայացքից ակներև է արժեքի պարզ ձևի, այդ սաղմային ձևի անբավարարությունը, մի ձև, վորը միայն մի շարք մետամորֆոզներից (կերպարանափոխություններից) հետո զարգանում, հասունանում է մինչև գնի ձևը։

...Արժեքի յեզակի ձևն ինքնըստինքյան փոխվում է ավելի կատարյալ ձևի։ Թեև այդ ձևի ոգնությամբ մեկ A ապրանքի արժեքն արտահայտվում է միայն ուրիշ տեսակի մեկ ապրանքի մեջ, այնուամենայնիվ այն դեպքում բոլորովին միևնույն է թե, հատկապես ինչ տեսակի յե այդ ուրիշ ապրանքը—վերարկո՞ւ է արդյոք, յերկա՞թ, ցորեն և այլն։ Համեմատ այն բանի, թե ինչ–

պես է միևնույն ապրանքը փոխանակային հարաբերության մեջ մտնում ապրանքի մյուս տեսակներից յուրաքանչյուրի հետ, ծագում են նրա արժեքի տարբեր պարզ արտահայտությունները: Նրա արժեքի հնարավոր արտահայտությունների թիվը սահմանափակված է միայն ապրանքի՝ նրանից տարբեր տեսակների թվով: Ապրանքի արժեքի յեզակի արտահայտությունն այդպիսով վեր է ածվում նրա արժեքի մի շարք տարբեր պարզ արտահայտությունների, ընդվորում այդ շարքը կարող է յերկարացվել ըստ ցանկության:

## B. ԱՐԺԵՔԻ ԼՐԻՎ ԿԱՄ ԾԱՎԱԼՈՒՆ ՁԵՎԸ

(20 արշ. կտավը=1 սյուրտուկի, կամ=10 ֆ. թեյի, կամ=40 ֆ. սուրճի, կամ=1 կվարտեր ցորենի, կամ=2 ունցիա վոսկու, կամ=½ տոնն յերկաթի, կամ=և այլն):

## ԱՐԺԵՔԻ ԾԱՎԱԼՈՒՆ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՎԸ

Տվյալ ապրանքի, որինակ, կտավի արժեքն արտահայտվում է այժմ ապրանքային աշխարհի անհամար այլ տարրերի մեջ: Յուրաքանչյուր այլ ապրանքային մարմին դառնում է կտավի արժեքի հայելի:

...Իր արժեքի ձևի շնորհիվ կտավն այժմ հասարակական հարաբերության մեջ է մտնում վոչ միայն ապրանքի առանձին այլ ձևի հետ, այլ նաև ամբողջ ապրանքային աշխարհի հետ: Միևնույն ժամանակ նրա արտահայտությունների անվերջ շարանը ցույց է տալիս, վոր ապրանքային արժեքը կատարյալ անտարբերությամբ է վերաբերվում ամեն մի առանձին սպառողական ձևի, վորով այն արտահայտվում է:

Առաջին ձևի մեջ՝ 20 արշ. կտավը=1 սյուրտուկի, կարող է պարզ պատահականություն թվալ այն փաստը, վոր այդ յերկու ապրանքը վորոշ քանակական հարաբերությամբ, ընդունակ են փոխանակվելու միմյանց հետ: Ընդհակառակը, յերկրորդ ձևի մեջ իսկույն նկատվում է հավասարության հիմքը, վորն ըստ էյության տարբեր է նրա պատահական արտահայտությունից և իրենով վորոշում է այդ վերջինը: Կտավի արժեքը մնում է միատեսակ, արտահայտվո՞ւմ է արդյոք այն սյուրտուկի, սուրճի, յերկաթի մեջ և այլն,—այլ անհամար թվով տարբեր ապրանքների մեջ, վորոնք պատկանում են ամենատարբեր տերերի: Յերկու անհատական ապրանքատերերի պատահական հարաբերությունն ընկնում, վերանում է: Ակնհայտ է դառնում, վոր վոչ թե փոխանակությունն է կարգավորում ապրանքի արժեքի մեծությունը, այլ ընդհակառակը, ապրանքի արժեքի մեծությունն է կարգավորում նրա փոխանակային հարաբերությունը:

Յուրաքանչյուր ապրանք—սյուրտուկ, թեյ, ցորեն, յերկաթ և այլն կտավի արժեքի արտահայտության մեջ եքվիվալենտի, այսինքն՝ արժեքի մարմնի դեր է խաղում: Այս ապրանքներից յուրաքանչյուրի տվյալ բնական ձևն այժմ առանձին եքվիվալենտային ձև է շատ ուրիշների շարքում: Հավասարապես, ոգտակար աշխատանքի վորոշ, կոնկրետ բազմազան տեսակները, վորոնք պա-



րունակվում են տարբեր ապրանքային մարմինների մեջ, այժմ քննության են առնվում միայն վորպես ընդհանրապես մարդկային աշխատանքի իրագործման ու արտահայտության առանձին ձևեր:

...Այս ծավալուն ձևի մեջ արտահայտված են առանց բացառության բոլոր ապրանքների հարաբերական արժեքները, սակայն յուրաքանչյուր ապրանքի արժեքի հարաբերական ձևն ստանում են մի անվերջ շարք արտահայտություններ, վորը տարբերվում է ամեն մի այլ ապրանքի արժեքի հարաբերական ձևի արտահայտություններից: Արժեքի ծավալուն հարաբերական ձևի թերություններն արտացոլվում են իրենց հերթին նաև նրան համապատասխանող եքվիվալենտային ձևի մեջ: Քանի վոր յուրաքանչյուր առանձին ապրանքային տեսակի բնական ձևն այստեղ առանձին եքվիվալենտային ձև է անհամար այլ առանձին եքվիվալենտային ձևերի կողքին, ուստի գոյություն ունեն ընդհանրապես միայն սահմանափակ եքվիվալենտային ձևեր, վորոնցից յուրաքանչյուրը բացառում է մնացած բոլոր ձևերը: Հավասարապես աշխատանքի վորոշ, կոնկրետ ոգտակար տեսակը, վոր պարունակվում է յուրաքանչյուր առանձին ապրանքային եքվիվալենտի մեջ, հանդիսանում է լոկ առանձին 4 մարդկային աշխատանքի արտահայտության մի չսպառվող ձև: Ճիշտ է, վերջինն արտահայտության իր լիակատար կամ սպառիչ ձևն ստանում է արտահայտություն այդ առանձին ձևերի հավաքականության մեջ: Այնուամենայնիվ նա այստեղ արտահայտության միասնական ձև չունի: Այնուամենայնիվ, արժեքի ծավալուն հարաբերական ձևը բաղկացած է միայն արժեքի պարզ հարաբերական արտահայտությունների կամ առաջին ձևի հավասարությունների գումարից, որինակ.

20 արշ. կտավը=1 սյուրտուկի,
20 արշ. կտավը=10 ֆ. թեյի և այլն:

Յեվ իսկապես, յեթե վորևե մեկը փոխանակում է իր կտավը ուրիշ շատ ապրանքների հետ և, հետևապես, նրա արժեքն արտահայտում է մի շարք այլ ապրանքների մեջ, ապա շատ ուրիշ ապրանքատերեր պետք է ակներևաբար, նույնպես փոխանակեն իրենց ապրանքները կտավի հետ, հետևապես, պետք է իրենց զանազան ապրանքների արժեքն արտահայտեն միևնույն յերրորդ ապրանքի մեջ—կտավի մեջ: Յեվ այսպես, շրջենք շարքը—20 արշ. կտավը=1 սյուրտուկի, կամ 10 ֆ. թեյի, կամ=և այլն, այսինքն՝ արտահայտենք միայն այն հակառակ հարաբերությունը, վորը ըստ գործի էյության արդեն պարունակվում է այդ շարքի մեջ, այն ժամանակ կստացվի՝

## C. ԱՐԺԵՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՁԵՎԸ

| | | |
|---|---|---|
| 1 սյուրտուկը | = | 20 արշին կտավի |
| 10 ֆ. թեյը | = | |
| 40 ֆ. սուրճը | = | |
| 1 կվարտ. ցորենը | = | |
| 2 ունցիա վոսկին | = | |
| ½ տոնն յերկաթը | = | |
| X A ապրանքը | = | |
| և այլն: | | |

## 1. ԱՐԺԵՔԻ ՁԵՎԻ ՓՈՓՈԽՎԱԾ ԲՆՈՒՅԹԸ

*Այժմ ապրանքներն իրենց արժեքներն արտահայտում են՝* 1) *պարզ ձևով, այսինքն՝ մեկ յեզակի ապրանքի մեջ և* 2) *միատեսակ ձևով, այսինքն՝ միևնույն ապրանքի մեջ։ Նրանց արժեքի ձևը պարզ և հասարակ է նրանց բոլորի, հետևապես՝ ընդհանրական է։*

A (*պարզ*) *և* B (*արժեքի ծավալուն ձևը*) *ձևերը հասնում էին միայն այն բանին, վոր տվյալ ապրանքի արժեքն արտահայտվում էր վորպես մի ինչ վոր՝ նրա սեփական սպառողական արժեքից կամ նրա ապրանքային մարմնից* տարբեր բան։

...*Յերկրորդ ձևը վորն* ավելի լրիվ է, *քան առաջինը, բաժանում է ապրանքի արժեքը նրա սեփական սպառողական արժեքից, քանի վոր, օրինակ, սյուրտուկի արժեքն այստեղ հակադրվում է նրա բնական ձևին՝ բոլոր հնարավոր տեսակներում, վորպես մի ինչ-վոր բան, վոր հավասար է յերկաթին, հավասար է թեյին և այլն, հավասար է ամեն բանի, ինչի ուզում եք, միայն վոչ հենց սյուրտուկին։ Մյուս կողմից՝* այստեղ ուղղակի բացառվում է ապրանքների արժեքի ամեն մի ընդհանուր արտահայտություն, *քանի վոր յուրաքանչյուր առանձին ապրանքի արժեքի արտահայտության մեջ բոլոր այլ ապրանքները մտնում են միայն եքվիվալենտների ձևով։* Արժեքի ծավալուն ձևն առաջին անգամ իրագործվում է փաստորեն այն ժամանակ, յերբ աշխատանքի վորևէ մեկ արդյունք, *օրինակ, անասունը արդեն* վոչ վորպես բացառություն, այլ վորպես ընդհանուր կանոն, փոխանակվում է ուրիշ շատ ապրանքների հետ։

*Մեր՝ նոր ստացած* C *ձևն արտահայտում է ապրանքային աշխարհի արժեքները նրանից չինված միևնույն ապրանքային ձևի մեջ, օրին., կտավի մեջ, և այդպիսով բոլոր ապրանքների արժեքները ներկայացնում է նրանց կտավի հետ հավասարության միջոցով։ Վորպես մի ինչ-վոր՝ կտավին հավասար բան, յուրաքանչյուր ապրանքի արժեքն այժմ տարբերվում է վոչ միայն իր սեփական սպառողական արժեքից, այլ նաև ամեն մի սպառողական արժեքից, և հենց դրանով էլ արտահայտում է այն, ինչ վոր ընդհանուր է տվյալ ապրանքի և մնացած բոլորի համար։ Հետևապես,* միայն այդ ձևն է *իրոք հարաբերություն սահմանում ապրանքների, վորպես արժեքների միջև, կամ նրանք դարձնում է մեկ-մեկու համար փոխանակային արժեքներ։*

*Յերկու նախկին ձևերն էլ արտահայտում են յուրաքանչյուր ապրանքի արժեքը կամ յեզակի՝ նրա հետ վոչ-միատեսակ ապրանքի մեջ, կամ նրանից տարբեր մի շարք շատ ապրանքների մեջ։ Յերկու դեպքում էլ իր համար արժեքի ձև գտնելը դառնում է յեզակի ապրանքի, այսպես ասած, մասնավոր գործը, և այն կատարում է այդ գործն առանց մնացած ապրանքների աջակցության։ Վերջինները նրա նկատմամբ խաղում են միայն եկվիվալենտի պասսիվ դեր։ Ընդհակառակը,* արժեքի ընդհանրական ձևը ծագում է միայն վորպես ապրանքային աշխարհի ընդհանուր գործ։ *Տվյալ ապրանքն արժեքի ընդհանուր արտահայտություն է ձեռք բերում միայն այն պատճառով, վոր*



*նրա հետ միաժամանակ բոլոր մյուս ապրանքներն իրենց արժեքն արտահայտում են միևնույն եկվիվալենտի մեջ, և յուրաքանչյուր նոր հանդես յեկող ապրանք պետք է նմանվի դրան։ Դրա հետ միատեղ պարզվում է, վոր* ապրանքային արժեքի սուբստանցիան, ներկայացնելով ապրանքների զուտ «հասարակական կեցությունը», կարող է արտահայտվել նույնպես միայն նրանց բազմակողմանի հասարակական հարաբերության մեջ, վոր այս պատճառով էլ ապրանքային արժեքի ձևը պետք է լինի հասարակականորեն նշանակելի ձև։

*Կտավին իրենց հավասարվելու ձևի մեջ բոլոր ապրանքներն այժմ վոչ միայն վորակապես հավասար, այսինքն առհասարակ արժեքներ են հանդես գալիս, այլև՝ միաժամանակ արժեքի քանակապես համեմատելի մեծություններ են։ Վորովհետև նրանք իրենց արժեքների մեծություններն արտահայտում են միևնույն նյութի, կտավի մեջ, ուստի շնորհիվ հակառակ արտահայտության նրանք այդ մեծություններն արտացոլում են և փոխադարձաբար։ Օրինակ,* 10 *ֆ. թեյը=*20 *արշ. կտավի, և* 40 *ֆ. սուրճը=*20 *արշ. կտավի։ Հետևապես,* 10 *ֆ. թեյը=*40 *ֆ. սուրճի. կամ՝ մեկ ֆունտ սուրճի մեջ պարունակվում է միայն քառորդ մասը արժեքի սուբստանցիայի այն քանակության, վոր պարունակվում է* 1 *ֆունտ թեյի մեջ։*

*Ապրանքային աշխարհի արժեքի ընդհանրական հարաբերական ձևն այդ աշխարհից հեռացված եքվիվալենտային ապրանքի—կտավի վրա ընդհանուր եքվիվալենտի բնույթն է կնքում։ Նրա սեփական բնական ձևը դառնում է ապրանքային աշխարհի արժեքի ընդհանուր արտահայտություն, հետևապես, կտավը ընդունակություն է ձեռք բերում բոլոր այլ ապրանքներով անմիջականորեն փոխանակվելու համար։ Նրա մարմնական ձևն ամեն տեսակ մարդկային աշխատանքի տեսանելի մարմնացման,* ընդհանուր հասարակական ձևի դեր է խաղում։ *Ջուլհակությունը, կտավ ստեղծող մասնավոր աշխատանքը* միաժամանակ *գտնվում է ընդհանրական և հասարակական ձևի մեջ, աշխատանքի բոլոր մյուս տեսակների հետ հավասար լինելու ձևի մեջ։ Անհամար հավասարությունները, վորոնցից բաղկացած է արժեքի ընդհանրական ձևը, հավասարեցնում են յուրաքանչյուր կտավի մեջ կենսագործված աշխատանքը հերթով աշխատանքի բոլոր այն տեսակներին, վորոնք պարունակվում են յուրաքանչյուր այլ ապրանքի մեջ, և այդպիսով ջուլհակությունը դարձնում են ընդհանրապես մարդկային աշխատանքի արտահայտության ընդհանրական ձև։ Այդպիսով, ապրանքային արժեքի մեջ իրացված աշխատանքն ստանում է վոչ միայն բացասական արտահայտություն, վորպես աշխատանք, վորից զատված, հեռացված են իսկական աշխատանքների* (работ) *բոլոր կոնկրետ ձևերն ու օգտակար հատկությունները, այլ բացի դրանից, պարզորոշ կերպով առաջ է մղվում նրա դրական բնությունը։ Վերջինի* էությունն այն է, վոր աշխատանքի բոլոր իրական տեսակները վեր են ածվում մարդկային աշխատանքի ընդհանուր բնույթի, մարդկային աշխատանքային ուժի ծախսմանը։

Արժեքի ընդհանուր ձևը, վորը ներկայացնում է աշխատանքի արդյունք-

ները ուղղակի՝ վորպես առհասարակ մարդկային աշխատանքի խտացումներ,
հենց իր կառուցվածքով ցույց է տալիս, վոր այն՝ ապրանքային աշխարհի
հասարակական արտահայտությունն է: Այսպիսով, այն պարզում, մերկաց-
նում է, վոր այդ աշխարհի սահմաններում աշխատանքի համամարդկային
բնույթը նրա սպեցիֆիկ հասարակական բնույթն է:

## ԱՐԺԵՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՎԻ ՅԵՎ ԷԿՎԻՎԱԼԵՆՏԱՅԻՆ ՁԵՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԵՎ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արժեքի հարաբերական զարգացման աստիճանին համապատասխանում է
էկվիվալենտային ձևի զարգացման աստիճանը: *Սակայն, և այս կարևոր է
նշել,*—էկվիվալենտային ձևի զարգացումը միայն արժեքի հարաբերական
ձևի զարգացման արտահայտությունն ու արդյունքն է:

*Ապրանքի արժեքի պարզ կամ յեզակի հարաբերական ձևը մյուս ապրանքը
դարձնում է յեզակի էքվիվալենտ: Հարաբերական արժեքի ծավալուն ձևը—
այդ մեկ ապրանքի արժեքի արտահայտությունն է, բոլոր մյուս ապրանքների
մեջ, վերջիններին տալիս է բազմազան առանձնահատուկ էքվիվալենտների
ձև: Վերջապես, ապրանքի տվյալ առանձնահատուկ տեսակն ընդհանրական
էկվիվալենտային ձև է դառնում, յերբ մյուս բոլոր ապրանքներն այն դարձ-
նում են նյութ՝ արժեքի իրենց յեզակի, ընդհանրական ձևն արտահայտելու
համար: Հենց նույն* այն չափով, վորչափով զարգանում է ընդհանրապես ար-
ժեքի ձևը, այդ չափով էլ զարգանում է նաև նրա յերկու բևեռների միջև—
արժեքի հարաբերական ձևի և էկվիվալենտային ձևի միջև գոյություն ունե-
ցող հակադրությունը:

*Արդեն* առաջին ձևը—20 *արշ. կտավը*=1 *սյուրտուկի*՝ պարունակում է
այդ հակադրությունը, սակայն ֆիկսացիայի չի յենթարկում այն: *Նայած
թե մենք ինչպես կկարդանք այդ հավասարումը—ձախից աջ, թե հակառակը՝
յերկու ապրանքային բևեռներից յուրաքանչյուրն էլ, թե՛ կտավը, թե՛ սյուր-
տուկը, հերթով՝ մերթ արժեքի հարաբերական ձևի մեջ կլինի, մերթ էքվի-
վալենտական ձևի մեջ*: Այստեղ դեռ բավական դժվար է նկատել բևեռային
հակադրությունը:

B *ձևի մեջ միայն ապրանքի վորևէ մեկ տեսակը կարող է լիովին ծավալել
իր հարաբերական արժեքը, և նա ինքը միայն այն ժամանակ և այն չափով
է արժեքի հարաբերական ծավալուն ձև ունենում, յերբ և վորչափով մյուս
բոլոր ապրանքները հակադրված են նրան էկվիվալենտային ձևի մեջ: Չի
կարելի պատկերացնել արժեքի հավասարման յերկու մասը ևս, օրինակ,* 20
*արշ. կտավը*=1 *սյուրտուկի կամ*=10 *ֆ. թեյի, կամ*=1 *կվարտ. ցորենի և
այլն, առանց նրա ընդհանուր բնույթը փոխելու, առանց այն*՝ արժեքի լիա-
կատար ձևից ընդհանրական ձևի փոխելու:

*Վերջապես, վերջին* C *ձևը ապրանքային աշխարհին արժեքի ընդհան-
րական և հասարակական հարաբերական ձև է տալիս, այն պատճառով և*



*այն չափով, վորովհետև և վորչափով այստեղ* ապրանքային աշխարհին պատ-
կանող բոլոր ձևերը—միայն մեկի բացառությամբ—զուրկ են ընդհանրական
էկվիվալենտային ձևից: *Ուստի մեկ ապրանքը, կտավը գտնվում է մի ձևի
մեջ, վորը նրան տալիս է անմիջաբար բոլոր մյուս ապրանքների հետ փոխա-
նակվելու ընդունակություն, կամ գտնվում է անմիջականորեն հասարակական
ձևի մեջ այն պատճառով, վոր և վորչափով մնացած բոլոր ապրանքները
զուրկ են այդ ձևից:*

*Ընդհակառակն, այն ապրանքը, վոր հանդես է գալիս, վորպես ընդհան-
րական էկվիվալենտ, զուրկ է ապրանքային աշխարհի արժեքի միասնական՝
հետևապես, նաև ընդհանրական հարաբերական ձևից: Յեթե կտավը կամ
ընդհանրապես ուրիշ վորևէ, ընդհանրական էկվիվալենտային ձևի մեջ գտնը-
վող ապրանք միաժամանակ մասնակցեր նաև արժեքի ընդհանրական հարա-
բերական ձևի մեջ, ապա այն պետք է ինքն իր համար էկվիվալենտ ծառայեր:
Մենք կստանայինք այն ժամանակ՝* 20 *արշ. կտավը*=20 *արշ. կտավի տավ-
տալոգիան, վորի մեջ չեն արտահայտվում վո՛չ արժեքը, և վո՛չ էլ արժեքի
մեծությունը: Վորպեսզի արտահայտենք ընդհանրական էկվիվալենտի հարա-
բերական արժեքը, մենք պետք է ավելի շուտ շրջենք* C *ձևը: Ընդհանրական
էկվիվալենտը չունի արժեքի այն հարաբերական ձևը, վորը հատուկ է մնա-
ցած բոլոր ապրանքներին, սակայն իր արժեքին հարաբերական արտահայտու-
թյուն է տալիս մնացած բոլոր ապրանքային մարմինների անվերջ շարքում:
Այսպիսով* արժեքի ծավալուն հարաբերական ձևը, կամ B ձևը, դառնում է
ապրանքի արժեքի՝ էկվիվալենտի սպեցիֆիկ (հատուկ) հարաբերական ձև:

## ԱՆՑՈՒՄ ԱՐԺԵՔԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՁԵՎԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՁԵՎԻՆ

Ընդհանրական էկվիվալենտային ձևը—արժեքի ձևն է ընդհանրապես:
*Հետևապես, այն կարող է պատկանել ամեն մի ապրանքի: Մյուս կողմից՝
տվյալ ապրանքի ընդհանրական էկվիվալենտային ձևի մեջ է գտնվում* (C
*ձև) միայն այն ժամանակ և այն չափով, յերբ և վորչափով այն, վորպես
էկվիվալենտ, մնացած բոլոր ապրանքների կողմից դուրս է մղվում նրանց
շարքից: Յեվ միայն այն մոմենտից, յերբ այդպիսի զատումը վերճակվում է
մեկ սպեցիֆիկ, առանձին ապրանքային տեսակի, միայն այդ մոմենտից* ապ-
րանքային աշխարհի արժեքի միասնական հարաբերական ձևը օբյեկտիվ ամ-
րություն և ընդհանրական հասարակական նշանակություն է ստանում:

*Ապրանքային սպեցիֆիկ տեսակը, վորի նատուրալ ձևի հետ հասարա-
կականորեն սերտ աճում է էկվիվալենտային ձևը, դառնում է փողային ապ-
րանք, կամ գործում է, վորպես փող: Ապրանքային աշխարհում ընդհանրա-
կան* էկվիվալենտի դեր կատարելը դառնում է նրա սպեցիֆիկ հասարակական
ֆունկցիան, հետևապես և, նրա հասարակական մենաշնորհը: *Այդ արտոնյալ
տեղն ապրանքների շարքում, վորոնք* B *ձևում հանդես եյին գալիս վորպես
կտավի առանձնահատուկ էկվիվալենտներ, իսկ* C *ձևի մեջ բոլորն իրենց*

հարաբերական արժեքն արտահայտում էյին կտավի մեջ, այդ տեղը պատմության մեջ նվաճել է մի որոշ ապրանք, այն է՝ ոսկին: Ուստի C ձևի մեջ ապրանք-կտավի տեղը դնենք ապրանք-ոսկին: Կստացվի՝

D. ՓՈՂԱՅԻՆ ՁԵՎ

| | | |
|---|---|---|
| 20 արշին կտավը | = | |
| 1 սյուրտուկը | = | |
| 10 ֆ. թեյը | = | |
| 40 ֆ. սուրճը | = | 2 ունցիա ոսկու |
| 1 կվ. ցորենը | = | |
| 1/2 տոնն յերկաթը | = | |
| X A ապրանքը | = | |

A ձևից B ձևին և B ձևից C ձևին անցնելիս էական փոփոխություններ են տեղի ունենում: Ընդհակառակը D ձևը միայն նրանով է տարբերվում C ձևից, որ այժմ կտավի փոխարեն ընդհանրական էկվիվալենտի ձև ունի ոսկին: Պրոգրեսը միայն այն է, որ անմիջական փոխանակելիության կամ ընդհանրական ձևը հասարակական սովորույթի ուժով այժմ վերջնականապես սերտ աճել է ոսկի ապրանքի նատուրալ սպեցիֆիկ ձևի հետ:

Ոսկին միայն այն պատճառով է մյուս ապրանքներին հակադրվում, որպես փող, որ այն առաջուց արդեն հակադրվում էր սրանց, որպես ապրանք: Նման մյուս բոլոր ապրանքներին՝ այն հանդես էր գալիս թե որպես էկվիվալենտ, թե որպես յեզակի էկվիվալենտ փոխանակության յեզակի ակտերում, և թե՛ որպես առանձին էկվիվալենտ ուրիշ ապրանք-էկվիվալենտների կողքին: Կամաց-կամաց այն սկսեց գործել որպես ընդհանրական էկվիվալենտ, ավելի կամ պակաս ընդարձակ շրջաններում: Հենց որ նա նվաճեց ապրանքային աշխարհի արժեքի արտահայտության մեջ այդ տեղը գրավելու մենաշնորհը, այն դարձավ փողային ապրանք, և միայն այն մոմենտից սկսած, յերբ այն այդպիսի փողային ապրանք դարձավ, ձևն սկսում է տարբերվել D ձևից, ուրիշ խոսքով՝ արժեքի ընդհանրական ձևը վեր է ածվում փողային ձևի:

Ապրանքի, օրինակ, կտավի արժեքի պարզ հարաբերական արտահայտությունն արդեն որպես փողային ապրանք գործող ապրանքի, օրինակ ոսկու մեջ, գնի ձևն է, հետևապես կտավի գնի ձևն այսպես է՝

20 արշ. կտավը=2 ունց ոսկու, կամ, յեթե 2 ֆ. ստերլինգը կազմում է յերկու ունցիա ոսկու անունը, ապա՝

20 արշ. կտավը=2 ֆ. ստերլ.:

Փողային ձևի ըմբռնման դժվարությունը սահմանափակվում է միայն ընդհանրական էկվիվալենտային ձևի, հետևապես ընդհանրապես արժեքի ընդհանրական ձևի, C ձևի ըմբռնման դժվարությամբ: C ձևը ռետրոսպեկտիվորեն վերածվում է B ձևի՝ արժեքի ծավալուն ձևի, իսկ այդ վերջինի կոնստիտուտիվ, և սկզբնական տարրը հետևյալ 1 ձևն .—20 արշ. կտավը=



1 սյուրտուկի, կամ X ապրանքը= Y ապրանքի: Ուստի, պարզ ապրանքային ձևը փողային ձևի սաղմն է:[1])

## ԱՐԺԵՔ ՅԵՎ ԳԻՆ

Ինքըստինքյան գինը ոչ այլ ինչ է, բայց յեթե՝ արժեքի փողային արտահայտություն: Անգլիայում, օրինակ, բոլոր ապրանքների արժեքներն արտահայտվում են ոսկով, մինչդեռ մայր ցամաքի վրա նրանք արտահայտվում են արծաթով: Ոսկու և արծաթի, ինչպես և բոլոր մյուս ապրանքների արժեքը որոշվում է նրանց հանույթի համար անհրաժեշտ աշխատանքի քանակով: Դուք ձեր՝ որոշ քանակությամբ ազգային արդյունքներ, որոնց մեջ բյուրեղացված է ձեր՝ որոշ քանակությամբ ազգային աշխատանքը, փոխանակում եք այն յերկրների արդյունքների հետ, որոնք արտադրում են ոսկի ու արծաթ, որոնց մեջ բյուրեղացված է նրանց՝ որոշ քանակությամբ աշխատանքը: Այսպիսով, գների միջոցով ոսկու և արծաթի մեջ արտահայտում եք բոլոր ապրանքների արժեքը, այսինքն՝ նրանց ստեղծման համար գործադրված աշխատանքի հարաբերական քանակությունները:

Յեթե դուք ավելի խորը թափանցեք արժեքի փողային արտահայտության մեջ, գնի մեջ, ապա կգտնենք, որ հենց այդ էլ այն պրոցեսն է, որի օգնությամբ դուք բոլոր առարկաների արժեքին տալիս եք ինքնուրույն և միատեսակ ձև կամ որի օգնությամբ, դուք նշանակում եք նրանց, որպես միատեսակ հասարակական աշխատանքի քանակություն:

Սակայն, վերջապես, ի՞նչ հարաբերություն գոյություն ունի արժեքի և շուկայի գնի միջև կամ նատուրալ շուկայական գների միջև: Դուք բոլորդ գիտեք, որ միատեսակ բոլոր ապրանքների շուկայական գինը միևնույնն է լինում,—որքան էլ այս դեպքում տարբեր լինեն առանձին արտադրողների արտադրության պայմանները: Շուկայական գինն արտահայտում է միայն հասարակական աշխատանքի միջին քանակությունը, որն անհրաժեշտ է արտադրության միջին պայմաններում, որպիսի աշխատանքն անհրաժեշտ է շուկան առարկաների որոշ քանակությամբ մատակարարելու համար: Այդ գինը սահմանվում է որոշ տեսակի ապրանքների ընդհանուր քանակության համեմատ:

Դրա համեմատ ապրանքների շուկայական գինը համաձայնեցվում է նրանց արժեքի հետ: Մյուս կողմից, շուկայական գների տատանումները, որոնք (գները) մերթ արժեքից կամ նատուրալ գնից ավելի յեն բարձրանում, մերթ նրանից ցած են իջնում, կախված են առաջարկի ու պահանջի տատանումներից: Շուկայի գնի շեղումներն արժեքից տեղի յեն ունենում շարունակ, սակայն Ադամ Սմիթի բառերով ասած՝

«Նատուրալ գինը այն գինն է, որն առաջացնում է մի կենտրոն, որի

[1]) Маркс ,Капитал I, стр. 15—38

չուրջն են շարունակ պտտվում ապրանքների գները: Զանազան պատահականություններ կարող են յերբեմն նրանց անհամեմատ ավելի բարձր պահել նրանից և յերբեմն նույնիսկ իջեցնել՝ նրանից ցած: Սակայն ինչպիսի արդյունքներ ել վոր խանգարեն նրանց՝ մնալու, կանգնելու հանգստի ու կայունության այդ կենտրոնում, նրանք այնուամենայնիվ շարունակ ձգտում են դրան»:

Յես չեմ կարող այժմ ավելի մանրամասնորեն կանգ առնել դրա վրա: Բավական ե ասել, վոր յեթե առաջարկն ու պահանջը միմյանց վերաբերմամբ հավասարակշռության մեջ են, ապա ապրանքների շուկայական գները զուգադիպում են նրանց նատուրալ գների հետ, այսինքն՝ նրանց այն արժեքի հետ, վորը վորոշվում ե նրանց արտադրության համար անհրաժեշտ՝ աշխատանքի քանակությամբ: Սակայն առաջարկն ու պահանջը պետք ե շարունակ ձգտեն հավասարակշռության, թեկուզ և այդ իրագործվի միայն յուրաքանչյուր տատանում հակադիր տատանման միջոցով, յուրաքանչյուր բարձրացում՝ իջեցումով հավասարեցնելով, և ընդհակառակը: Յեթե դուք միայն տատանումները քննության առնելու փոխարեն հետազոտեք այն շարժումները, վորոնք տեղի յեն ունենում շուկայական գների մեջ յերկար ժամանակաշրջանների ընթացքում, ինչպես, որինակ, այդ արել մ-ր Տուկն իր «Գների պատմությունը» գրքում, ապա դուք կգտնեք, վոր շուկայական գների տատանումները, նրանց շեղումներն արժեքից, նրանց բարձրացումն ու անկումը վոչընչացնում և լրացնում են մեկ-մեկու, այնպես վոր, յեթե նկատի չունենանք մենաշնորհների և այլ սահմանափակումների ներգործությունը, վորոնց յես չեմ կարող այստեղ շոշափել, ամեն տեսակ ապրանքները, վաճառվում են միջին հաշվով իրենց համապատասխան արժեքներով կամ նատուրալ գներով»[1]:

Գինը—ապրանքի մեջ իրայնացած աշխատանքի փողային անունն ե: Հետևապես, ապրանքի և փողի այն քանակության եկվիվալենտությունը, վորի անունն ե նրա գինը, հասարակ տավտոլոգիա յեն ներկայացնում,—ինչպես և ընդհանրապես ապրանքի արժեքի հարաբերական արտահայտությունները միևնույն ժամանակ յերկու ապրանքների եկվիվալենտության արտահայտությունն են: Սակայն յեթե գինը, վորպես միաժամանակ նրա փոխանակային հարաբերության ցուցանիշն ե դեպի փողը, ապա այստեղից չի բխում այն հակառակ դրույթը, թե ապրանքի՝ փողի նկատմամբ ունեցած փոխանակային հարաբերության ցուցանիշն անխուսափելիորեն պետք ե արժեքի մեծության ցուցանիշը լինի: Թող հավասար մեծության հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքը արտահայտվի 1 կվարտեր ցորենի և 2ֆ. ստեռլ. (մոտ ½ ունցիա վոսկու) մեջ. 2 ֆ. ստեռլ. մեկ կվարտ. ցորենի արժեքի մեծության դրամական արտահայտությունն ե, կամ նրա գինը: Սակայն յեթե հանգամանքները թույլ են տալիս այդ կվարտերը հավասարեցնել 3 ֆ. ստեռլինգի կամ հարկադրում են այդ նշանակել 1 ֆ. ստ., ապա, ակնհայտ ե, վոր ցորենի արժեքի մեկ ֆ. ստ., չափազանց փոքր, իսկ յերեք ֆ. ստ.

[1]) Маркс, «Зарплата, цена и прибыль», стр. 45—46



չափազանց մեծ արտահայտությունն ե,—այնուամենայնիվ, տվյալ դեպքում 1 ֆ. ստ. և 3 ֆ. ստ. ցորենի գինն են, վորովհետև, նախ, նրանք նրա փողային ձևն են, փող են, և, յերկրորդ, հանդիսանում են նրա փոխանակային հարաբերությունը դեպի փողը: Արտադրության անփոփոխ պայմաններում կամ աշխատանքի անփոփոխ արտադրողականության դեպքում մեկ կվարտեր ցորենի վերարտադրության վրա պետք ե ծախսվի հասարակական բանվորական ժամանակի նախկին քանակություն: Այս հանգամանքը կախված չե վոչ ցորեն արտադրողների և վոչ էլ այլ ապրանքարտադրողների կամքից: Ապրանքի արժեքի մեծությունն այդպիսով արտահայտում ե ապրանքի անհրաժեշտ, նրա ստեղծման բուն իսկ պրոցեսին իմանենտ՝ նրա հարաբերությունը դեպի հասարակական աշխատանքային ժամանակը: Արժեքի մեծությունը գնի վերածվելով՝ այդ անհրաժեշտ հարաբերությունն արտահայտվում ե վորպես տվյալ ապրանքի փոխանակային հարաբերությունը դեպի նրանից դուրս գտնվող մերեյի (ходящее) փողային ապրանքին: Սակայն այդ փոխանակային հարաբերության մեջ կարող ե արտահայտվել թե ապրանքի արժեքի մեծությունը և թե այն պլյուսը կամ մինուսը նրա համեմատությամբ, վորն ընթացակցում ե ապրանքի խորթացմանը տվյալ պայմաններում: Հետևապես՝ գնի և արժեքի մեծության քանակական անզուգադիպության հնարավորությունը կամ գնի՝ արժեքի մեծությունից շեղվելու հնարավորությունը պարունակվում ե արդեն հենց գնի ձևի մեջ: Յեվ այստեղ չի կարելի տեսնել այդ ձևի թերությունը, ընդհակառակը, հենց այդ տարբերական գիծն ե դարձնում նրան ամենից ավելի հարմարված արտադրության այնպիսի յեղանակին, յերբ կանոնը կարող ե իրեն համար ճանապարհ հարթել անկարգ քաոսի միջով, միայն վորպես միջին թվերի կուրորեն գործող օրենք:

Սակայն գնի ձևը վոչ միայն չի թույլատրում քանակական անզուգադիպում արժեքի մեծության և գնի միջև, այսինքն՝ արժեքի մեծության և նրա սեփական փողային արտահայտության միջև—այն կարող ե բացի դրանից թաքցնել իր մեջ վորակական հակասություններ, վորի հետևանքով գինն ընդհանրապես դադարում ե արժեքի արտահայտություն լինելուց, թեև փողը միայն ապրանքների արժեքի գինն ե ներկայացնում:

Վորպեսզի փաստորեն դրսևորի իր փոխանակային արժեքը, ապրանքը պետք ե պոկի, նետի իր վրայից իր նատուրալ մարմինը, մտքով պատկերացվող վոսկուց վերածվի իսկական վոսկու, թեկուզ և այդ վերագոյացումը նրա համար ավելի դառն լինի, քան Հեգելյան՝ անհրաժեշտությունից ազատության անցնելու «գաղափարը», կամ խեցգետնի համար՝ իր պատյանը դեն նետելը կամ սուրբ Յերոնիմի համար՝ իրենից հին Ադամին դեն նետելը: Իր ռեալ կերպարանքի, օրինակ յերկաթի, հետ միասին ապրանքը կարող ե գնի մեջ ունենալ արժեքի իդեալական կերպարանք կամ վոսկու՝ մտքով պատկերացվող կերպարանք, սակայն նա չի կարող միաժամանակ լինել իսկական յերկաթ և իսկական վոսկի: Նրան գին տալու համար բավական ե հավասարեցնել նրան մտքով պատկերացվող վոսկուն: Սակայն նա պետք ե փոխարինվի

իսկական վոսկով, վորպեսզի իր տիրոջ համար ընդհանրապես եկվիվալենտի դեր խաղա: Յեթե, որինակ, յերկաթի տերը հանդիպեր վորևէ ուրախ ապրանքի տիրոջ և մատնանշեր վերջինին, թե յերկաթի գինն արդեն փողային ձև է, ապա նրան հանդիպող ուրախ մարդը, իհարկե նույն այն պատասխանը կտար, ինչ վոր ասաց յերկնքում սուրբ Պետրոսը Դանտեյին, վորը նրա առաջ կարդաց իր հավատո հանգանակը[1]):

Փողի ձևը յենթադրում է ապրանքների խորթացումն և այդպիսի խորթացման անհրաժեշտություն: Մյուս կողմից, վոսկին գործում է վորպես արժեքի իդեալական չափ միայն այն պատճառով, վոր նա արդեն շրջանառություն ունի վորպես փողային ապրանք փոխանակային պրոցեսում: Արժեքների իդեալական չափի մեջ թագնված է այդպիսով հնչուն դրամը[2]):

## ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՏԻՇԻԶՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԳԱՂՏՆԻՔԸ

Ապրանքն առաջին հայացքից մի շատ հասարակ ու տրիվիալ (բոլորին հայտնի) իր է թվում: Նրա վերլուծությունը ցույց է տալիս, վոր այս մի իր է, լի քմայքներով՝ (причуд) բացասական (գերզգայական) նրբություններով ու աստվածաբանական մանվածամտություններով: Ապրանքն, իբրև սպառողական արժեք, վոչինչ առեղծվածային բան չի պարունակում, կքննենք մենք ապրանքն այն հատկությունների տեսակետից, վորոնցով նա բավարարում է մարդկային պահանջները, կամ թե հենց այդ հատկությունները հետազոտենք, իբրև մարդկային աշխատանքի արդյունք: Ինքնըստինքյան հասկանալի յէ, վոր մարդը յուր գործունեությամբ փոխում է բնական նյութեղենների ձևերը՝ նրա համար օգտակար մի հայտնի ուղղությամբ: Որինակ, փայտի ձևերը փոխվում են, յերբ նրանից սեղան են շինում: Յեվ սեղանն այսուամենայնիվ մնում է ելի փայտ, մի սովորական, զգայարանապես ըմբռնելի իր: Բայց հենց վոր սեղանն ապրանք է դառնում, նա փոխարկվում է զգայական-գերզգայական իրի: Նա վոչ միայն գետնի վրա կանգնում է յուր բոլոր չորս վոտներով, այլև մյուս բոլոր ապրանքների աչքի առջև տնկվում է գլխի վրա, և նրա այս փայտյա կոճը ծնում է տարօրինակություններ, վորոնք շատ ավելի զարմանալի բան են պարունակում, քան յեթե սեղանը պարել սկսեր յուր սեփական նախաձեռնությամբ:

Այսպիսով ապրանքի միստիկական բնույթը նրա սպառողական արժեքի ծնունդը չէ: Նույնքան էլ դժվար է ասել, թե վորոշ արժեքի բովանդակության ծնունդ է այն: Վորովհետև նախ՝ օգտակար աշխատանքի կամ արտադրողական գործունեության առանձին տեսակները վորքան էլ տարբեր լինեն իրարից, նրանք ֆիզիոլոգիական կողմից մարդկային օրգանիզմի ֆունկցիաներ են համենայն դեպս, և ամեն մի այդպիսի ֆունկցիա ինչպիսի յել վոր լինի նրա բովանդակությունն ու նրա ձևերը, մարդկային ուղեղի, նյարդերի, մկանների, զգայարանական օրգանների ու այլն ծախսումն է ըստ յուր էյու-

1) «Այս դրամի կշիռն ու բաղադրությունը լավ հայտնի յեն, սակայն ասա, կա՞ արդյոք դրանից քո քսակում»:

2) К. Маркс, Капитал, I, стр. 69—71.



թյան: Յերկրորդ՝ այն բանը, վոր արժեքի մեծությունը վորոշելու հիմքն է, այսինքն՝ այսպիսի ծախսումների տևողությունը կամ աշխատանքի քանակը, արդեն անմիջաբար, շոշափելիորեն տարբերվում է աշխատանքի վորակից:

Այն բանվորական ժամանակը, վոր գնում է գոյամիջոցների արտադրության վրա, ամեն տեսակ պայմաններում էլ պետք է հետաքրքրեր մարդկանց, թեպետև միևնույն աստիճան չեր հետաքրքրել զարգացման տարբեր փուլերի միջոցին: Վերջապես, մի անգամ, վոր մարդիկ այսպես թե այնպես իրար համար են աշխատում, նրանց աշխատանքը հենց սրանով էլ հասարակական ձևեր է ստանում:

Ապա ուրեմն վո՞րտեղից է առաջ գալիս աշխատանքի արդյունքի առեղծվածային բնույթը, հենց վոր այս վերջինն ապրանքի ձև է ստանում: Ակներև է, հենց բուն իսկ այս ձևից: Մարդկային տարբեր աշխատանքների հավասարությունն իրային ձև է ընդունում աշխատանքի արդյունքների մեջ, իբրև այնպիսի բանի մեջ, վորոնք արժեքի միևնույն սուբստանցիան են ներկայացնում. մարդկային բանվորական ուժի ծախսումները սրանց տևողությամբ չափելն աշխատանքի արդյունքների արժեքի մեծության ձև է ստանում. վերջապես, արտադրողների միջև յեղած այն հարաբերությունները, վորոնց մեջ յերևան են գալիս նրանց աշխատանքների այս հասարակական վորոշումները, աշխատանքի արդյունքների հասարակական հարաբերության ձև են ստանում:

Հետևաբար, ապրանքային ձևի խորհրդավորությունը պարզապես կազմում է այն, վոր այս ձևը մի հայելի յէ, վորը մարդկանց սեփական աշխատանքի հասարակական բնույթն արտացոլելով նրանց ցույց է տալիս, իբրև աշխատանքի բուն իսկ արդյունքների իրային բնույթ, իբրև տվյալ իրերի այնպիսի հասարակական հարաբերություններ, վորոնք բնությունից հատուկ են նրանց. հենց այս պատճառով էլ արտադրողների՝ հավաքականության նկատմամբ ունեցած հասարակական հարաբերությունը նրանց ներկայանում է իբրև այնպիսի հասարակական հարաբերություն, վոր մարդկանցից դուրս է գտնվում: Այդպիսի quid pro quo-ի հետևանքով աշխատանքի արդյունքները դառնում են ապրանք, զգայական-գերզգայական կամ հասարակական իր: Այսպես էլ հենց իրի՝ բուն իսկ տեսողական նյարդի վրա արած լուսային ներգործությունն ըմբռնվում է վոչ թե իբրև բուն իսկ տեսողական նյարդի սուբյեկտիվ գրգիռ, այլ իբրև իրերի օբյեկտիվ ձև, վորը գտնվում է աչքից դուրս: Բայց տեսողական ըմբռնումների ժամանակ լույսն իրոք վոր նետում է մի իր, մի արտաքին առարկա, մի ուրիշ իրի վրա, աչքի վրա: Այս մի ֆիզիկական հարաբերություն է ֆիզիկական իրերի միջև: Այն ինչ ապրանքային ձևն ու աշխատանքի արդյունքների արժեքների այն հարաբերությունը, վորի մեջ արտահայտվում է այս ձևը, վճռապես վոչ մի ընդհանուր բան չունեն իրերի ֆիզիկական բնության հետ: Այս բուն իսկ մարդկանց հասարակական վորոշ հարաբերություն է լոկ, վորը նրանց աչքում ընդունում է իրերի միջև յեղած հարաբերությունների ֆանտաստիկ ձև: Սրա անալոգիան

գտնելու համար հարկ կլիներ, վոր մենք թևակոխեյինք կրոնական աշխարհի մշուշապատ բնագավառը: Այստեղ մարդկային ուղեղի արդյունքները պատկերացվում են իբրև ինքնակա էակներ՝ օժտված սեփական կյանքով և մարդկանց հետ ու միմյանց հետ վորոշ հարաբերությունների մեջ կանգնած: Ապրանքների աշխարհում հենց այդպիսի դեր են կատարում մարդկային ձեռքերի արդյունքները: Այս յես անվանում եմ ֆետիշիզմ, վորը հատուկ է աշխատանքի արդյունքներին, հենց վոր նրանք արտադրվում են իբրև ապրանք, և վորը, հետևաբար, չի կարելի բաժանել վոչ մի ապրանքատնտեսությունից առհասարակ:

Ինչպես արդեն ցույց տվեց նախընթաց վերլուծությունը, ապրանքային աշխարհի այս ֆետիշիստական բնույթն ապրանքներ արտադրող աշխատանքի սպեցիֆիկ հասարակական բնույթի ծնունդն է:

*Սպառման առարկաներն ընդհանրապես ապրանք են դառնում լոկ այն պատճառով, վոր* նրանք միմյանցից անկախ մասնավոր աշխատանքների արդյունք են: *Այս մասնավոր աշխատանքների կոմպլեքսը կազմում է հասարակության միագումար աշխատանքը: Վորովհետև արտադրողները միմիայն իրենց աշխատանքի արդյունքների փոխանակության միջոցին են հասարակական կոնտակտի (շփման) մեջ մտնում իրար հետ, ուստի* նրանց մասնավոր աշխատանքների սպեցիֆիկ-հասարակական բնույթն էլ յերևան է գալիս հենց այս փոխանակության շրջանակներում միայն: *Ուրիշ խոսքով, առանձին մասնավոր աշխատանքները փաստորեն իրացվում են լոկ իբրև հասարակական միագումար աշխատանքի օղակներ,—իրացվում են այն հարաբերություններով, վոր փոխանակությունը սահմանում է աշխատանքի արդյունքների միջև, իսկ սրանց միջոցով նաև բուն իսկ արտադրողների միջև: Այս պատճառով էլ* արտադրողների մասնավոր աշխատանքների հասարակական հարաբերությունները նրանց աչքին հենց այն են յերևում, ինչ վոր նրանք իրոք պատկերացնում են, այսինքն վոչ թե բուն իսկ անձերի ու սրանց աշխատանքների անմիջական հասարակական հարաբերություններ, այլ, ընդհակառակն, անձերի արտաքին հարաբերություններ ու իրերի հասարակական հարաբերություններ:

*Աշխատանքի արդյունքները միմիայն փոխանակության սահմաններում են ստանում* արժեքի հասարակական հավասար սուբստանցիա, *վոր* առանձնացած *է նրանց զգայականորեն տարբեր սպառողական սուբստանցիաներից:* Աշխատանքի արդյունքի այս տարաճեղքումը (расщепление) օգտակար իրի ու արժեքը մարմնացնող իրի, գործնականում իրագործելի յե միմիայն այն ժամանակ, յերբ փոխանակությունն արդեն բավականաչափ ծավալ ու բավականաչափ կարևորություն է ստացած լինում այնքան, վոր կարելի լինի օգտակար իրերն արտադրել հատկապես փոխանակության համար, ուստի և իրերի, իբրև արժեքների, բնույթը հենց բուն իսկ նրանց արտադրության ժամանակ արդեն ուշադրության է առնվում: *Այս*



*րոպեյից սկսած՝* արտադրողների մասնավոր աշխատանքներն իրոք յերկակի հասարակական բնույթ են ստանում: Մի կողմից նրանք, իբրև *վորոշ օգտակար աշխատանքներ, պետք է բավարարեն հասարակական մի վորոշ պահանջ և այսպիսով պետք է արդարացնեն իրենց կոչումն, իբրև ստորաբաժանումներ միագումար աշխատանքի, վորը բնականաբար աճելով դարձել է աշխատանքի հասարակական բաժանման սիստեմ: Մյուս կողմից, նրանք բավարարում են իրենց սեփական արտադրողների բազմազան պահանջներն այն չափով միայն, վորչափով վոր մասնավոր օգտակար աշխատանքի յուրաքանչյուր առանձնահատուկ տեսակ կարող է փոխանակվել մասնավոր օգտակար աշխատանքի ամեն մի այլ առանձնահատուկ տեսակի հետ և ուրեմն վերջինիս հետ հավասար նշանակություն ունի: Միմյանցից* toto coelo *(ամեն կողմով) տարբեր աշխատանքների հավասարությունը կարող է գոյություն ունենալ* միմիայն նրանց իրական անհավասարությունից վերացվելու դեպքում, այն դեպքում՝ յերբ նրանք վերածվեն այն ընդհանուր բնույթին, վոր նրանք ունեն իբրև մարդկային բանվորական ուժի, մարդկային աբստրակտ աշխատանքի ծախսումն: *Մասնավոր արտադրողների ուղեղը լոկ արտացոլում է նրանց մասնավոր աշխատանքների այս յերկակի հասարակական բնույթը և այն էլ այն ձևերով, վոր նա ընդունում է առօրյա գործնական կյանքում, արդյունքների փոխանակության միջոցին. մասնավոր աշխատանքների հասարակականորեն օգտակար բնույթն արտացոլում է այն ձևով, վոր աշխատանքի արդյունքը պետք է օգտակար լինի, բայց վոչ թե հենց իրեն—արտադրողի համար, այլ ուրիշ մարդկանց համար. տարասեռ աշխատանքների հավասարության հասարակական բնույթն արտահայտում է արժեք լինելու այն ընդհանուր հատկության ձևով, վոր պատկանում է նյութականորեն տարբեր այս իրերին—աշխատանքի արդյունքներին: Հետևաբար, մարդիկ իրենց աշխատանքի արդյունքներն առնչում են իրար հետ վոչ թե այն պատճառով, վոր այս իրերը նրանց համար միասեռ մարդկային աշխատանքի իրային պատյաններ են լոկ: Ընդհակառակը: Փոխանակության միջոցին տարասեռ արդյունքներն իբրև արժեք իրար հետ հավասարեցնելով՝* նրանք հենց սրանով միմյանց հետ հավասարեցնում են իրենց տարբեր աշխատանքները, իբրև ընդհանրապես մարդկային աշխատանք: Նրանք այս չեն գիտակցում, բայց անում են այս բանը: *Այսպիսով, արժեքի ճակատին չի գրված, թե ինչ բան է այդ: Ավելին—արժեքն աշխատանքի յուրաքանչյուր արդյունք դարձնում է խորհրդավոր հասարակական հիերոգլիֆ: Հետագայում մարդիկ ձգտում են կռահելու այս հիերոգլիֆի իմաստը, թափանցելու իրենց սեփական հասարակական արդյունքի գաղտնիքի մեջ, վորովհետև սպառման առարկաների, իբրև արժեքների, վորոշումը հասարակական վոչ պակաս ստեղծանի արդյունք է, քան, որինակ, լեզուն: Հետագայում արված* այն գիտական հայտագործությունը, թե աշխատանքի արդյունքները, վորչափով վոր նրանք արժեք են, նրանց արտադրության վրա ծախսված մարդկային աշխատանքի իրային արտահայտություններն են լոկ, մարդկության զարգացման պատմու-

թյան մեջ դարագլուխ է կազմում, բայց այն ամենևին չի վոչնչացնում աշխատանքի հասարակական իրային կերպարանքը: Միմիայն արտադրության տվյալ հատուկ ձևի համար, ապրանքային արտադրության համար է իրավացի այն, թե միմյանցից անկախ մասնավոր աշխատանքների սպեցիֆիկ հասարակական բնույթը նրանց, իբրև ընդհանրապես մարդկային աշխատանքի, հավասարությունն է, և թե հիշյալ բնույթն աշխատանքի արդյունքների արժեքի ձև է ընդունում: Այնինչ ապրանքային արտադրության հարաբերություններով բռնված մարդկանց համար վերջինիս մասնահատուկ վորպիսությունները, ինչպես նշված հայտնագործությունից առաջ, այնպես էլ հետո, ընդհանրական նշանակություն ունեցող են թվում ճիշտ այնպես, ինչպես օդի հատկությունները—նրա ֆիզիկական մարմնական ձևը—շարունակում են գոյություն ունենալ, չնայած այդ բանին, վոր գիտությունն օդը վերլուծել է նրա հիմնական տարրերին:

Արդյունքները փոխանակող անձերին գործնականորեն հետաքրքրում է ամենից առաջ այն հարցը, թե ուրիշների վորքան արդյունքներ կարելի յե ստանալ յուր արդյունքի փոխարեն, այսինքն թե արդյունքներն ինչ պրոպորցիաներով են փոխանակվում իրար հետ: Յերբ այս պրոպորցիաները մի վորոշ կայունության են հասնում և այս պատճառով դառնում են սովորական, այն ժամանակ թվում է, թե նրանք աշխատանքի արդյունքների բուն իսկ բնությամբ են պայմանավորված: Այսպես օրինակ, մեկ տոնն յերկաթի ու մի ունցիա վոսկու համար հավասար արժեքը միանգամայն նույն կերպ է ըմբռնվում, ինչպես այն իրողությունը, վոր մի ֆունտ վոսկին ու մի ֆունտ յերկաթը միևնույն քաշն ունեն, չնայած այս մարմինների ֆիզիկական ու քիմիական հատկությունների տարբերությանը: Իրականում, աշխատանքի արդյունքների, իբրև արժեքների, բնույթը ֆիքսացիայի յե յենթարկվում նրանց, իբրև վորոշ մեծություն ունեցող արժեքների, իրացման միջոցով միայն: Արժեքների մեծություններն անընդհատ փոխվում են, արդյունքները փոխանակող անձերի ցանկությունից, նախատեսումից ու գործունեությունից անկախ: Վերջիններիս աչքում նրանց հասարակական սեփական շարժումն ընդունում է իրերի շարժման ձև, շարժում, վորի վերահսկողության տակ են գտնվում նրանք, փոխանակ այն բանի, վոր իրենք նրան վերահսկեն:

Անհրաժեշտ է լիովին զարգացած ապրանքային արտադրություն այն բանի համար, վորպեսզի բուն իսկ փորձից կարողանար աճել այն գիտական հայացքը, վորի համաձայն առանձին մասնավոր աշխատանքները, վորոնք կատարվում են իրարից անկախ, բայց բազմակողմանիորեն կապված են իրար հետ, իբրև աշխատանքի բաժանման բնականորեն աճած սիստեմի օղակներ,—վորոշ պրոպորցիաներով մշտապես վեր են ածվում իրենց հասարակական չափին. սրա համար անհրաժեշտ է լիովին զարգացած ապրանքային արտադրություն այն պատճառով, վոր արդյունքների արտադրության համար հասարակականորեն անհրաժեշտ բանվորական ժամանակն արդյունքների միջև յեղած պատահական ու հարատատան փոխանակային հարաբերությու-



ների մեջ է միայն յերևան գալիս իբրև բնության բռնությամբ գործող օրենք այնպես, ինչպես, օրինակ, ծգողության օրենքը յերևան է գալիս այն ժամանակ, յերբ տունը փուլ է գալիս վորևե մեկի գլխին:

Այս պատճառով էլ արժեքի մեծությունը բանվորական ժամանակով վորոշելը մի գաղտնիք է, վոր թաքնվում է ապրանքային հարաբերական արժեքների՝ աչքի համար տեսանելի շարժման տակ: Այս գաղտնիքի հայտագործումը վերացնում է աշխատանքի արդյունքների արժեքի մեծությունը վորոշելու թվացող պատահականությունը, բայց ամենևին չի վերացնում արժեքի իրային ձևը:

Մարդկային կյանքի ձևերի վրա խորհրդածելն ու հետևաբար նաև այս ձևերի գիտական վերլուծությունը, ընդհանրապես ասած, նրանց իրական զարգացմանը հակադիր ուղի յեն ընտրում: Այս խորհրդածությունն սկսվում է post festum (հետո, հետադայում), այսինքն յելնում է զարգացման պրոցեսի պատրաստի հետևանքներից: Աշխատանքի արդյունքների վրա ապրանքի դրոշմ դնող ու այս պատճառով էլ ապրանքների շրջանառության նախադրյալներ հանդիսացող ձևերը կարողանում են հասարակական կյանքի բնական ձևերի կայունություն ձեռք բերել այն ժամանակ արդեն, յերբ մարդիկ առաջին փորձն են անում իրենց հաշիվ տալու այս ձևերի վոչ թե պատմական բնույթի մասին—վերջիններս նրանց աչքում արդեն անխախտելիության բնույթ են ստացած լինում,—այլ միայն նրանց բովանդակության մասին: Այսպիսով միմիայն ապրանքային գների վերլուծությունը բերեց, հասցրեց արժեքի մեծության վորոշմանը, և միմիայն ապրանքների ընդհանուր փողային արտահայտությունը հնարավորություն տվեց ֆիքսացիայի յենթարկելու նրանց, իբրև արժեքների, բնույթը: Բայց ապրանքային աշխարհի նույն այդ ամենալիավարտ ձևը—նրա փողային ձևը—մասնավոր աշխատանքների հասարակական բնույթի վրա, ուրեմն և մասնավոր գործավորների հասարակական հարաբերությունների վրա իրային քող է ձգում՝ փոխանակ մերկացնելու այս հարաբերությունները ամբողջ խստությամբ: Յերբ յես ասում եմ՝ սյուրտուկը, կոշիկը և այլն հարաբերում են կտավին, իբրև մարդկային վերացական աշխատանքի ընդհանրական մարմնացում, այն ժամանակ այս արտահայտության անհեթեթությունն աչք է ծակում: Բայց յերբ սյուրտուկներ, կոշիկներ ու այլ բաներ արտադրողներն այս ապրանքները հարաբերության մեջ են դնում կտավի հետ կամ—վոր չի փոխում գործի էությունը—վոսկու և արծաթի հետ, իբրև ընդհանրական էկվիվալենտի հետ, ապա նրանց մասնավոր աշխատանքների՝ հասարակական միագումար աշխատանքի հետ ունեցած հարաբերությունը նրանց ներկայանում է հենց այս անհեթեթ ձևով:

Բուրժուական տնտեսության ձևերը հանգում են հենց այդպիսի կատեգորիաների (հիմնական ըմբռնումների): Նրանք մտքի՝ հասարակական իմաստանշվելի, ուրեմն և օբյեկտիվ ձևերն են արտադրության տվյալ, պատմականորեն վորոշ հասարակական յեղանակի—ապրանքային արտադրության—

արտադրական հարաբերությունների շրջանակներում: Ապրանքային աշխարհի ամբողջ միստիցիզմը, բոլոր հրաշքներն ու տեսիլները, վորոնք պարուրում են աշխատանքի արդյունքները ապրանքային արտադրության տիրապետության ժամանակ,—այս ամենն անհապաղ չքանում են, հենց վոր մենք անցնում ենք արտադրության ուրիշ ձևերին:[1])

*Սակայն թողնենք Ռոբինզոնի լուսապայծառ կղզին և փոխադրվենք յեվրոպական խավարամռայլ միջնադարը: Մեր անկախ մարդի փոխարեն մենք այստեղ գտնում ենք մարդիկ, վորոնք բոլորը կախյալ են—ճորտեր ու կալվածատերեր, վասալներ ու սենյորներ, աշխարհականներ ու տերտերներ: Այստեղ անձնական կախումը բնորոշում է նյութական արտադրության հասարակական հարաբերությունները հենց նույն աստիճան, ինչքան և կյանքի այլ վոլորտները, վորոնք խարսխված են այս հիմքի վրա: Բայց հենց այն պատճառով, վոր անձնական կախման հարաբերությունները կազմում են տվյալ հասարակության հիմքը, հարկ չի լինում, վոր աշխատանքներն ու արդյունքներն իրենց իրական կեցությունից տարբերվող ֆանտաստիկ ձև ընդունեն: Նրանք հասարակական կյանքի հորձանքի մեջ մտնում են իբրև բնածառայություններ ու բնապարտույթներ: Այստեղ աշխատանքի անմիջաբար հասարակական ձևը նրա բնավճար ձևն է, նրա առանձնահատկությունն է և վոչ թե նրա ընդհանրականությունը, ինչպես վոր է այն հասարակության մեջ, վորը հաստատված է ապրանքային արտադրության հիմքի վրա: Կոռային աշխատանքը ժամանակով է չափվում ճիշտ այդպես, ինչպես և այն աշխատանքը, վոր ապրանքներ է արտադրում. բայց ամեն մի ճորտ գիտե, վոր յուր տիրոջը ծառայելու միջոցին նա ծախսում է յուր սեփական, անձնական աշխատանքի վորոշ քանակ միայն: Այն տասանորդը, վոր նա պարտական է վճարելու տերտերին, մի անհամեմատ ավելի վորոշակի բան է, քան այն որհնանքը, վոր նա ստանում է տերտերից: Այդպիսով, ինչ գնահատության էլ վոր յենթարկեն այն բնութագրական դիմակները, վորոնցով հանդես են գալիս միջնադարյան մարդիկ միմյանց նկատմամբ, համենայն դեպս, անկասկածելի յե, վոր անձերի՝ իրենց աշխատանքի միջոցին ունեցած հասարակական հարաբերությունները այստեղ յերևան են գալիս իբրև* նրանց սեփական, անձնական հարաբերություններ և վոչ թե պարուրվում են իրերի, աշխատանքի արդյունքների հասարակական հարաբերությունների զգեստավորման մեջ: ԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆ ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՌԵՖԼԵՔՍՆ Է ՄԻԱՅՆ:

... Իրական աշխարհի կրոնական արտացոլումը կարող է ընդհանրապես չքանալ այն ժամանակ միայն, յերբ մարդկանց ամենօրյա գործնական կյանքի հարաբերությունները կարտահայտվեն մարդկանց՝ իրար հետ ու բնության հետ ունեցած թափանցիկ ու բանական կապերի մեջ: Հասարակական կենսական պրոցեսի—արտադրության նյութական պրոցեսի—իրակարգը միմիայն այն ժամանակ դեն կնետե միստիկական միգամած քողը յուր վրա-

[1]) Капитал I, стр. 38—51



-յից, յերբ այս իրակարգը կդառնա ազատորեն հանրայնացված մարդկանց արդյունք և կգտնվի նրանց գիտակցական պլանաչափ վերահսկողության տակ: Բայց այդպիսի հասարակության համար անհրաժեշտ է վորոշ նյութական հիմք կամ գոյության մի շարք նյութական վորոշ պայմաններ, վորոնք իրենց հերթին զարգացման յերկարատև ու տանջալից պրոցեսի բնականորեն առած արդյունք են ներկայացնում:

*Ճիշտ է*, քաղաքատնտեսությունը վերլուծում էր—թեկուզ և անբավարար չափով—արժեքն ու արժեքի մեծությունը և յերևան էր հանում այս ձևերի մեջ թաքնված բովանդակությունը: Բայց նա վոչ մի անգամ նույնիսկ չի էլ դրել այն հարցը, թե ինչու յե այս բովանդակությունն այսպիսի ձև ընդունում, ուրիշ խոսքով՝ ինչու յե աշխատանքն արտահայտվում արժեքի մեջ, իսկ աշխատանքի տևողությունը, իբրև նրա չափը, արտահայտվում աշխատանքի արժեքի մեծության մեջ: *Այս ֆորմուլաները, վորոնց ճակատին գրված է, թե նրանք պատկանում են այնպիսի հասարակական ֆորմացիայի, վորտեղ* արտադրության պրոցեսն է տիրապետում մարդկանց վրա և վոչ թե մարդը՝ արտադրության պրոցեսի վրա,—այս ֆորմուլաները նրա բուրժուական գիտակցությանը ներկայանում են իբրև մի բան, վոր ինքնըստինքյան հասկանալի յե, նույնքան բնական է և անհրաժեշտ, ինչպես հենց ինքն արտադրողական աշխատանքը: *Այս պատճառով նա հասարակական-արտադրական օրգանիզմի մինչ-բուրժուական ձևերը* ծանակում է *մոտավորապես նույնպիսի վոգով, ինչպես յեկեղեցու հայրերը ծանակում էին մինչքրիստոնեյական կրոնները:*

*Թե ապրանքային աշխարհին հատուկ ֆետիշիզմը կամ աշխատանքի հասարակական վորոշումների իրային կերպարանքը մինչև վոր աստիճան է շփոթեցնում մի քանի տնտեսագետների, ցույց է տալիս ի միջի այլոց նրանց այն տաղտկալի ու անիմաստ վեճը, վոր վերաբերում է փոխանակային արժեքի ստեղծման պրոցեսում բնության ունեցած դերին: Վորովհետև փոխանակային արժեքն իրի արտադրության վրա ծախսված աշխատանքն արտահայտելու* մի վորոշ հասարակական յեղանակ է միայն, *ապա ինքնըստինքյան հասկանալի յե, վոր* փոխանակային արժեքի մեջ բնության տված նյութն ավելի շատ չի պարունակվում, քան, որինակ, մուրհակային կուրսի մեջ:[1])

*Յեթե ապրանքները խոսելու ձիրք ունենային, նրանք կասեյին. մեր սպառողական արժեքը գուցե հետաքրքրում է մարդկանց: Այն չի վերաբերում մեզ, իբրև իրերի: Բայց այն արժե՛քն է հենց, վոր պատկանում է մեր իրային բնությանը: Դրա լավագույն ապացույցը մեր, իբրև իր-ապրանքների, սեփական շրջանառությունն է:* Մենք միմյանց հարաբերում ենք լոկ իբրև փոխանակային արժեքներ: *Հիմա լսենք, թե ապրանքի այս հոգին ինչպես է բարբառում տնտեսագետի բերանով. «Արժեքը (փոխանակային արժեքը) իրերի հատկությունն է, հարստությունը (սպառողական արժեքը)*

[1]) Капитал I, стр. 33—51

մարդու հատկությունն է: Այս իմաստով՝ արժեքն անհրաժեշտորեն փոխանակություն է յենթադրում, իսկ հարստությունը՝ ոչ»: «Հարստությունը (սպառողական արժեքը) մարդու ատրիբուտն է, արժեքն ապրանքի ատրիբուտն է: Մարդը կամ հասարակությունը հարուստ են. մարգարիտը կամ ադամանդը՝ թանգարժեք... Մարգարիտը կամ ադամանդն արժեք ունեն, իբրև մարգարիտ ու ադամանդ»: Մինչև հիմա դեռ ոչ մի քիմիկոս մարգարտի կամ ադամանդի մեջ փոխանակային արժեք չի հայտնագործել: Սակայն այս քիմիական նյութի հնարիչ տնտեսագետները, վորոնք մտքի քննադատական խորություն ունենալու առանձնահատուկ հավակնություն են յերևան բերում, գտնում են, վոր իրերի սպառողական արժեքը կախում չունի նրանց նյութական հատկություններից, այն ինչ արժեքը հատուկ է նրանց, իբրև իրերի: Այս համոզման մեջ նրանց ամրապնդում է այն զարմանալի պարագան, վոր իրերի սպառողական արժեքը մարդկանց համար իրացվում է առանց փոխանակության, այսինքն իրի ու մարդու միջև յեղած անմիջական հարաբերության միջոցին, այն ինչ արժեքը կարող է իրացվել միմիայն փոխանակության մեջ, այսինքն հասարակական հայտնի պրոցեսի մեջ: Մարդ այստեղ ինչպե՞ս չմտաբերի բարեհոգի Դոգբերրուն, վորն ուսուցանում է գիշերային պահապան Սիկոլին, թե «բարեբաստիկ արտաքինը հանգամանքների շնորհած պարգևն է, իսկ կարդալու և գրելու արվեստը բնությունն է տալիս: (Շեքսպիր, «Ջուր տեղը մեծ աղմուկ»)[1]:

## ԱՐԺԵՔԻ ԴԵՐՆ ԱՊՐԱՆՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արդի կապիտալիստական հասարակության մեջ յուրաքանչյուր արդյունաբերական կապիտալիստ իր հայեցողության համաձայն արտադրում է, ինչպես ու ինչ և ինչքան ուզում է: Բայց հասարակական պահանջը նրա համար մնում է անհայտ մեծություն ինչպես պահանջվող առարկաների վորակի ու սեռի կողմից, այնպես և նրանց քանակի կողմից: Այն, ինչ վոր այսոր չեր կարող պահանջվող քանակով շուտ հասցվել, հենց վաղը կարող է շուկայում հայտնվել պահանջից շատ գերազանցող մի քանակով: Այնուամենայնիվ, այսպես կամ այնպես, լավ թե վատ, վերջիվերջո պահանջը բավարարվում է, և արտադրությունն ընդհանրապես ու ամբողջությամբ առած ուղղվում է պահանջվող առարկաների կողմը: Ի՞նչ միջոցով է հապա լուծվում այս հակասությունը: Մրցման միջոցով: Իսկ ի՞նչ յեղանակով է մրցումը հասնում այս լուծմանը: Նա պարզապես հարկադրում է իրենց աշխատանքային արժեքից ցած ծախելու այն բոլոր ապրանքները, վորոնք ըստ իրենց սեռի կամ քանակի տվյալ մոմենտին չեն համապատասխանում հասարակական պահանջին: Այսպիսով կողմնակի ճանապարհով նա զգալ է տալիս արտադրողներին, թե նրանց արդյունքները կամ հարկավոր չեն

[1]) Капитал I, стр. 51.



ընդհանրապես կամ թե մատակարարված են անհարկավոր, ավելորդ քանակով: Այստեղից բղխում է յերկու յեզրակացություն:

Նախ՝ ապրանքների գների մշտական շեղումները նրանց արժեքից՝ կազմում է այն անհրաժեշտ պայմանը, հենց վորի ժամանակ ու վորի միջոցով միայն կարող է յերևան գալ ապրանքների բուն իսկ արժեքը: Մրցման, իսկ սրա հետ միասին ապրանքային գների մշտական տատանումների միջոցով է միայն, վոր իրագործվում է ապրանքային արտադրության խատուկ արժեքի որենքը և իրականություն է դառնում արժեքը հասարակականորեն անհրաժեշտ բանվորական ժամանակով վորոշելը: Յեվ յեթե գինը, արժեքի յերևան գալու այս ձևը, սովորաբար նման չի լինում մի քիչ բուն իսկ արժեքին, ապա վերջինս այս դեպքում մասնակից է լինում հասարակական հարաբերությունների մեծ մասի վիճակին: Թագավորը նույնպես այլ կերպարանքով է յերևում, քան այն միապետությունը, վորի ներկայացնողն է նա: Յեթե դուք ուզում եք փոխանակություն անող ապրանքատերերի հասարակության մեջ արժեքի՝ բանվորական ժամանակով արվող վորոշում հաստատել և յերևակայում եք, թե այս նպատակին կարելի յե հասնել՝ արգելելով այն բանը, վոր մրցումն արժեքի վորոշումն իրականացնե գների վրա ճնշում գործ դնելու միջոցով, այսինքն վերացնելով այն միակ ուղին, վորով ընդհանրապես կարելի յե հասնել արժեքի վորոշմանը, —ապա դրանով միայն այն եք ապացուցում, վոր, գոնե այս ասպարեզում, դուք յուրացրել եք այն արհամարհանքը, վոր ուտոպիստները տանում են տնտեսական որենքների նկատմամբ:

Յերկրորդ՝ փոխանակություն անող ապրանքատերերի հասարակության մեջ մրցումը՝ գործողության մեջ դնելով ապրանքային արտադրությանը հատուկ արժեքի որենքը, հենց դրանով էլ հանրային արտադրության մեջ մտցնում է տվյալ պարագաներում միակ հնարավոր կազմակերպություն ու կարգ: Արդյունքների գնազրկման կամ թե թանգության միջոցով է միայն, վոր առանձին արտադրողները սեփական կաշու վրա զգալով իմանում են, թե վորքան ու ինչ է հարկավոր կամ հարկավոր չե հասարակությանը:[1])

## ԱՐԺԵՔԻ ՁԵՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Կլասիկ քաղաքատնտեսության հիմնական թերություններից մեկն այն է, վոր նրան յերբեք չեր հաջողվում ապրանքի ու մասնավորապես ապրանքային արժեքի վերլուծությունից բղխեցնել արժեքի ձևը, վորը հենց փոխանակային արժեքի բնույթ է տալիս արժեքին: Հենց ի դեմս իր լավագույն ներկայացուցիչների—Ա. Սմիթի ու Ռիկարդոյի, այն քննում է արժեքի ձևը, իբրև միանգամայն անտարբեր ու ապրանքի բնության նկատմամբ նույնիսկ արտաքին մի բան: Պատճառը միայն այն չե, վոր արժեքի մեծության վերլուծությունը կլանում է նրա ամբողջ ուշադրությունը: Պատճառն ավելի խորքումն է գտնվում: Աշխատանքի արդյունքի արժեքի ձևն արտա-

[1]) Энгельс. Предисловие «Нищета философии», стр. 15—16.

դրության բուրժուական յեղանակի ամենավերացական ու միևնույն ժամանակ ամենից ընդհանրական ձևն է, վոր արժեքի հենց այդ ձևով է բնորոշվում, իբրև հասարակական արտադրության առանձնահատուկ տեսակ, և ընդ սմին բնորոշվում է պատմականորեն: Իսկ յեթե մարդ քննե արտադրության բուրժուական յեղանակը, իբրև հասարակական արտադրության հավիտենական բնական ձև, ապա անխուսափելիորեն չնկատված կմնան արժեքի ձևի, ուրեմն և ապրանքային ձևի, իսկ հետազոտության հետագա ընթացքի միջոցին՝ փողային ձևի, կապիտալի ձևի ու այլոց սպեցիֆիկ առանձնահատկությունները:¹)

### ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ դեր են խաղացել հասարակական զարգացման մեջ աշխատանքի տեխնիքական և հասարակական բաժանումները:
2. Սոցիալ-տնտեսական ինչպիսի՞ պայմաններում պրոդուկտը ապրանքի յե փոխարկվում:
3. Ինչո՞ւմն է արտահայտվում ապրանքի և արժեք ստեղծող աշխատանքի յերկակի բնույթը:
4. Տվեք աբստրակտ և կոնկրետ աշխատանքների Մարքս-Լենինյան բնորոշումը:
5. Աշխատանքն արժեք ունի՞ թե վոչ:
6. Ինչպիսի՞ կերպարանք է ընդունում ապրանքի մեջ իրայնացած աբստրակտ աշխատանքը:
7. Տվեք արժեքի ձևերի զարգացման դիալեկտիկան:
8. Ինչպե՞ս է առաջ գալիս փողը և վո՞րն է նրա դերը փոխանակային տնտեսության մեջ:
9. Ի՞նչ է ապրանքային ֆետիշիզմը և վորոնք են նրա օբյեկտիվ հիմքերը:
10. Վո՞րն է արժեքի օրենքը և ի՞նչ դեր է կատարում նա ապրանքա-կապիտալիստական հասարակարգում:
11. Ցույց տվեք արժեքի մարքս-լենինյան տեսության մենշևիկյան և մեխանիստական ռևիզիաների սոցիալ-դասակարգային աստառը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. К. Маркс, «К критике» изд .193: г. стр. 90—129.
2. К. МАРКС, «Капитал». I, изд. 1923 г. стр. 1—51.
3. Ф. Энгельс, «Анти—Дюринг» изд. 1928 г. стр. 171—187.
4. К. Маркс, «Письма к Кугельману», изд. 1928 г. стр. XVII—XXIV и 49—51.
5. Ленин, т. XVIII, стр. 15—17.
6. Маркс—Энгельс, «Архив», V, стр. 380—408


¹) Капитал I, стр. 48—49

## ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

# Փ Ո Ղ

## ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

*«Ապրանք» թեման մշակելիս, յեկանք այն յեզրակացության, վոր արժեքն իր ներքին բովանդակությամբ՝ հասարակականորեն անհրաժեշտ աբստրակտ աշխատանքով, անմիջականորեն յերևան գալ չի կարող, նրա արտաքին դրսևորումը հնարավոր է միայն ապրանքների փոխանակային հարաբերությունների՝ մի ապրանք մյուսի հետ փոխանակելու պրոցեսում:*

«Այդ պրոցեսի—ասում է Մարքսը—առաջին անհրաժեշտ գործողությունը, ինչպես մենք տեսանք, այն է, վոր ապրանքները իրենց միջից զատում են մի սպեցիֆիկ ապրանք, որինակ վոսկին, վորպես ընդհանուր եկվիվալենտ»:

*Ընդհանուր եկվիվալենտի՝ վոսկու յերևան գալն ապրանքի ներքին հակասության՝ սպառողական արժեքի և փոխանակային արժեքի հակադրություն տալիս է արտաքին լուծում, բևեռացնելով ապրանքային աշխարհն ապրանքի և փողի: Ուստի, ինչպես մենք տեսանք այդ նախորդ թեմայում, ապրանքի եյությունից, նրա սպառողական արժեքի և փոխանակային արժեքի հակադրությունների միասնությունից Մարքսը բղխեցնում է արժեքի ձևը: Արժեքի ձևերի պատմական զարգացումը, նրա մի ձևից մյուսին անցնելու դիալեկտիկ փոխանցումը, վորը բերում հասցնում է փողին, վորպես անխուսափելի հետևանք ապրանքային փոխանակային տնտեսության, փոխանակային հարաբերությունների զարգացման:*

«Փողի անալիզի գլխավոր դժվարությունը—ասում է Մարքսը—կվերանա այն մոմենտից, յերբ հասկանալի կլինի փողի ծագումն իրեն ապրանքից»:

*Փողի ծագման մարքսիստական բացատրությունը տրվեց արժեքի ձևերի զարգացման ուսումնասիրության ընթացքում, ուստի դրանով պետք է վերացած համարել վոչ միայն փողի ծագումը հասկանալու դժվարությունը, այլև ջախջախված այն սխալ տեսակետը, ըստ վորի, փողը մարդկանց հնարած, նրանց կողմից մտցրած «չափի իդեալական միավորն է»:*

*Մեզ մնում է, այս թեմայով, յերևան բերել փողի սոցիալական եյությունը և մարքսիստական անալիզի յենթարկել նրա տարբեր ֆունկցիաները, յելնելով այդ ֆունկցիաների միասնական եյությունից: Այս կապակցությամբ էլ, պետք է աշխատել մերկացնելու Հիլֆերդինգի ռևիզիան փողի մարքսյան թեորիայի բնագավառում, ինչպես նաև բուրժուական տնտեսագետների վուլգար տեսակետներն այս խնդրում:*

*Փողն իր եյությամբ ապրանք է և վորպես այդպիսին ունի ապրանքին հատուկ բոլոր հատկությունները: Վորպես փող, վորպես ընդհանուր եկվի-*

վալենտ նա վոչ միայն տարբերվում է մյուս հասարակ ապրանքներից, այլև
ձեռք է բերում հասարակական յուրահատուկ գծեր, դառնում փոխանակա-
յին հասարակության հարաբերությունների կապի ընդհանուր արտահայ-
տություն, այդ հարաբերությունների պայմաններում, յերբ արդյունքների
արտադրությունը փոխարկվում է ապրանքների արտադրության, յերբ
աշխատանքի պրոդուկտը նախքան սպառողական արժեքը դառնալը փոխանա-
կային արժեքի ձև է ընդունում: Ցեվ միայն այդ հարաբերությունների առ-
կայության դեպքում հանդես է գալիս «սպեցիֆիկ ապրանքը»,—փողը և
այդ իմաստով էլ պետք է հասկանալ, վոր «փողն իր չէ, այլ հասարակական
հարաբերություն» (*Մարքս*): Վոսկին և արծաթը փող են դառնում վոչ
իրենց բնական հատկությունների շնորհիվ, այլ այն հարաբերությունների
շնորհիվ, վոր արտահայտվում է այդ փողով:

*«Փողն իր բնույթով լոկ վոսկի և արծաթ է, չնայած վոսկին և արծաթը
իրենց բնությամբ փող չեն» (Մարքս): Փոխանակային հարաբերությունների
զարգացման պայմաններում միայն* վոսկին դառնում է արժեքի նյութական
կեցություն, *ձեռք է բերում ինքնուրույն գոյություն:*

*Փողի սոցիալական այդ էությունը հասկանալուց հետո՝ պետք է անց-
նել նրա ֆունկցիաների քննարկմանը՝ չմոռանալով, վոր փողի այդ ֆունկ-
ցիաներն ինքնուրույն կատեգորիաներ չեն,* չունեն իրենց առանձին էյու-
թյունը, *նրանք փողի միասնական էությունն են կազմում, նրանցից յու-
րաքանչյուրն այդ միասնական էության տարբեր արտահայտություններն
են ներկայացնում իրար հետ կապված և մեկը—մյուսից բղխող:*

*Փողի ամենաառաջին ֆունկցիան նրա արժեքի չափանիշ լինելն է: Նրա
հետ է կապված նաև գների հաստացողությունը և փողը վորպես շրջանա-
ռության միջոց ֆունկցիան: Ուստի և փողի մանրակրկիտ ուսումնասիրու-
թյունը պետք է սկսել նախ և առաջ այդ ֆունկցիայի ուսումնասիրությու-
նից:*

*Ապրանքային աշխարհում վոսկին ձեռք է բերում ընդհանուր էկվիվա-
լենտի պատվավոր կոչումը, ուստի նրա մեջ պարունակած բանվորական
ժամանակը դառնում է ընդհանուր բանվորական ժամանակ:*

*Հասարակական անհրաժեշտ աշխատանքը, ժամանակի իր միավորնե-
րով, արժեքի չափն է, սակայն արժեքի այդ իմմանենտ չափը վորպես այդ-
պիսին, ապրանքային հասարակության մեջ, անմիջականորեն յերևան գալ
չի կարող, նա իր արտաքին արտահայտությունը գտնում է փողի մեջ, փո-*
ղը դառնում է բոլոր ապրանքների արժեքների չափանիշը:

*«Այնքան, վորքան վոսկու և ապրանքի չափը բանվորական ժամա-
նակն է, վոսկին էլ արժեքի չափանիշն է դառնում միայն այնքան, վոր-
քան բոլոր ապրանքները չափվում են նրանով, այն կարծիքը, վոր իբր
փողն է ապրանքներին համաչափելի դարձնում, շրջանառության պրոցե-
սի էլլյուզիան է և վոչ ավելի:* Ընդհակառակը, ապրանքների համաչա-
փելիությունը, վորպես իրայնացած բանվորական ժամանակ՝ վոսկուն
փողի յե փոխարկում» (Մարքս):



*Այս պատճառով էլ «մի կվարտեր ցորեն փոխանակ 30 բանվորական օր-
վա գնահատելու, գնահատվում է մի ունցիա վոսկով, յեթե մի ունցիա վոս-
կին արդյունք է 30 բանվորական օրվա»* «К критике» 135

*Փողի արժեքի չափանիշ լինելու ֆունկցիայից անմիջապես յերևան է
գալիս գնի յերևույթը: Ցեթե վերցնելու լինենք յերկու տարբեր ապրանքնե-
րի փոխանակության ակտը, ասենք Ա.—Փ կտեսնենք, վոր դրանցից յու-
րաքանչյուրն սպառողական արժեքի և փոխանակային արժեքի միասնու-
թյուն է:* «Բայց ապրանքի մեջ նրա փոխանակային արժեքը գոյություն ու-
նի իդեալապես, գնի ձևով, մինչդեռ վոսկու մեջ, չնայած նա իսկն սպառո-
ղական արժեք է, նրա սպառողական արժեքը գոյություն ունի միայն վոր-
պես փոխանակային արժեք կրող, հետևապես անհատական վոչ մի սպառ-
ման չվերաբերող ձևական սպառողական արժեք: *Հետևապես փոխանակա-
յին արժեք և սպառողական արժեք բևեռայնորեն բաժանվում է յերկու ան-
դամների Ա.—Փ, այնպես վոր ապրանքը հակադրվում է վոսկուն վորպես
սպառողական արժեք, վոր դեռ պիտի իրացնի վոսկու մեջ իր իդեալական
փոխանակային արժեքը—գինը, մինչդեռ վոսկին հակադրվում է ապրանքին,
վորպես փոխանակային արժեք, վոր ապրանքի մեջն է միայն իրացնում իր
ձևական սպառողական արժեքը» (Մարքս):*

*Ուրեմն,* գինն ապրանքի իդեալական փոխանակային արժեքն է՝ արտա-
հայտած փողով, *վոր պետք է դեռ իրացվի վոսկու մեջ, իսկ դրանից պետք
բղխի մի նոր ֆունկցիա—շրջանառության միջոցի ֆունկցիա: Կամ «Գինն
ապրանքում իրայնացած աշխատանքի փողային արտահայտությունն է»: Այս
յերևույթն առաջ է գալիս նրա համար, վոր փողը վորպես ընդհանուր էկվի-
վալենտ արժեքների չափանիշի դերն է կատարում:*

*Փողի արժեքի չափանիշ ֆունկցիայի հետ սերտ կերպով կապված է գնե-
րի մասշտաբի ֆունկցիան, սակայն իրար հետ սերտ կերպով կապված այդ
յերկու տարբեր ֆունկցիաները չպետք է շփոթել, վորովհետև* «վոսկին վոր-
պես արժեքի չափանիշ և վորպես գների մասշտաբ ունեն միանգամայն տար-
բեր բնորոշ ձևեր, մեկը մյուսին խառնելն առաջ կբերի ամենաանհեթեթ
թեորիաներ» (*Մարքս*): *Փողը վորպես գների մասշտաբ, կատարում է տեխ-
նիկական ֆունկցիա, առանց վորի հնարավոր չեր լինի նրա արժեքի չափա-
նիշի սոցիալական ֆունկցիան:*

*Ինչպես ասացինք, փողի կարևոր ֆունկցիաներից մեկն էլ նրա շրջա-
նառության միջոց լինելն է: Այդ ֆունկցիան ուսումնասիրելիս չպետք է կար-
ծել, վոր մեր նպատակն է տալ միայն փողի միջնորդի դերի բացատրությու-
նը: Շրջանառության անալիզն իր բոլոր կողմերով մեզ կտա ճիշտ պատկեր
փողի էության, նրա սոցիալական դերի մասին:*

*Շրջանառության պրոցեսը բևեռային կերպով բաժանելով ապրանքա-
յին աշխարհը հասարակ ապրանքի և փողային ապրանքի՝ «չի*
վերացնում այդ հակասությունը, այլ ստեղծում է նրանց շարժ-
ման ձևը» (*Մարքս*): *Վորպես արժեքի չափանիշ վոսկին իդեա-*

յական փող էր, վորպես շրջանառության միջոց վոսկին դառնում է իրական փող. յերևան էր գալիս նյութական կերպարանքով. բնական է, վոր յեթե չլիներ առաջին ֆունկցիան, այսինքն յեթե վոսկին արժեքների չափանիշի ֆունկցիան չունենար, չէր կարող լինել և յերկրորդ ֆունկցիան, փողը, վորպես շրջանառության միջոց:

Ապրանքների շրջանառության անալիզը հիմնականում պետք է պարզի փողի շրջանառության գլխավոր օրենքները: Ապրանքային շրջանառության պրոցեսի ֆորմուլան է Ա—Փ—Ա, այդ ֆորմուլան կարելի յե բաժանել յերկու մետամորֆոզի, Ա—Փ վաճառումը և Փ—Ա գնումը: Կազմելով Ա—Փ—Ա շրջապտույտի միասնականությունը, այդ նշանակում է, վոր «վաճառումը Ա—Փ միևնույն ժամանակ գնում է Փ—Ա, իսկ գնումը Փ—Ա միևնույն ժամանակ վաճառում Ա—Փ» (Մարքս): Այստեղ փողը հանդես է գալիս վորպես ապրանքային շրջանառության հասարակ գործիք՝ մնալով շարունակ շրջանառության սֆերայում: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս մեզ պարզելու շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակը, յելնելով ապրանքների և փողի քանակությունից ու գների մեծությունից և շրջանառության արագությունից:

Պետք է հասկանալ, վոր շրջանառության պրոցեսի զարգացումը խորացնելով իր աշխատանքի արդյունքի ոտարացումը և ուրիշի արդյունքի յուրացումը, առաջ է բերում գնման և վաճառման յերկու հակադիր գործողություններ՝ վորոնք հնարավոր են դարձնում կրիզիսների գոյությունը, վորը հետագայում դառնում է անխուսափելի կապիտալիզմի համար:

Շրջանառության պրոցեսի լավ հասկանալը կթեթևացնի հետևյալ հարցերի յուրացումը՝ թե ինչպես է առաջ գալիս փողի դրամական ձևը, ինչ հանգամանքների շնորհիվ է հնարավոր շրջանառության մեջ յեղած վոսկուն փոխարինել լիարժեք, թերարժեք և թղթյա դրամներով: Այդ հարցերը պարզելիս պետք է յելակետ ունենալ փողը վորպես շրջանառության միջոց ֆունկցիան և խիստ քննադատության յենթարկել այն հիմնովին սխալ տեսակետները, վորոնք ձգտում են բացատրել զանազան փողերի շրջանառության փաստը, նրանց հարմար կամ անհարմար վիճակով: Շրջանառության պրոցեսում, նրա յերկարության կամ արագության հետևանքով «դրամի իրական բովանդակությունը բաժանվում է իր անվանական բովանդակությունից» (Մարքս) և հնարավոր է դառնում լիարժեք դրամները և նրանց ֆունկցիան՝ փոխարինել իրենց սիմվոլներով, թղթադրամներով: Վոչ մի արժեք չունեցող, կամ շատ չնչին արժեք ունեցող դրամանիշները կատարում են շրջանառության մեջ ազգային սահմաններում այն դերը, վոր մի ժամանակ կատարում էր վոսկին: Սոցիալ-Փաշիստ Հիլֆերդինգը, ռեվիզիայի յենթարկելով Մարքսի տեսակետն այդ խնդրում՝ գտնում է, վոր «շրջանառության ժամանակի անփոփոխության դեպքում թղթադրամների արժեքը բնորոշվում է այն ապրանքների գների գումարով, վորոնք պիտի անցնեն շրջանառության սֆերայից, թղթադրամներն այստեղ վոսկու արժեքից միանգամայն անկախ են և անմիջականորեն արտացոլում են ապրանքների արժեքները» (Гилфердинг—Фин-кап., изд. 1923 г. стр. 20).



Մինչդեռ Մարքսն ասում է՝

«Թղթադրամների շրջանառության սպեցիֆիկ որենքը կարող է առաջ գալ նրա վոսկու հանդեպ ունեցած հարաբերությունից, լոկ նրանից, վոր նա վերջինի ներկայացուցիչն է: Յեվ այդ որենքը հանգում է նրան, վոր թղթադրամների բաց թողնելը պետք է սահմանափակվի նրանց այն քանակությամբ, վորով իրոք սիմվոլիկ կերպով շրջանառության կկազմեր նրանով պատկերացրած վոսկին»: «Հետևապես—գրում է Մարքսը—թղթադրամների քանակությունը բնորոշվում է վոսկյա փողով, վոր նրանք փոխարինում են շրջանառության մեջ, իսկ քանի վոր նրանք արժեքի դրամանիշն են այնքանով, վորքանով փոխարինում են վոսկուն, ապա նրանց արժեքը բնորոշվում է վոսկու արժեքով»: Պետք է ապացուցել, թե ինչու թղթադրամների արժեքն ապրանքների գներով բնորոշելը հիմնովին սխալ է, թե ինչ հակասության մեջ է ընկնում Հիլֆերդինգն իր այդ տեսակետով:

Փողը դուրս գալով շրջանառության պրոցեսից, դառնում է գանձ, կուտակված հարստություն, վոր հետագայում խոշոր դեր է կատարում շրջանառության համար վորպես «շրջանառության մեջ գտնվող փողի տանող և բերող խողովակ»:

Այնուհետև ապրանքային շրջանառության զարգացման հետագա աստիճանը փողին տալիս է վորպես վճարելամիջոց ֆունկցիան:

Համաշխարհային շուկայում փողն այլ կերպ յերևան գալ չի կարող, քան իր նախկին կերպարանքով «դեն գցելով իր ազգային կոստյումը»:

Փողի ֆունկցիաների զարգացումը միևնույն ժամանակ փոխանակության պրոցեսի տարբեր աստիճանների իրական զարգացումն է:

Անհրաժեշտ է մանրամասնորեն լուսաբանել և ուշադրության առնել այն իրողությունը, վոր փողն իբրև ապրանքների աշխարհի զարգացման վերջին աստիճանը, ավելի քան արմատավորում և խորացնում է ապրանքային ֆետիշիզմը: Փողի առկայությամբ, շատ դժվար է լինում տեսնել ապրանքների և այդ փողերի թիկունքում թաքնված մարդկանց հասարակական արտադրական հարաբերությունները:

## ՓՈՂ

## ԱՐԺԵՔԻ ՓՈՂԱՅԻՆ ՁԵՎԸ

Ապրանքային արտադրությունը և ապրանքային փոխանակությունը, հարկադրելով հասարակությանը դիմելու այսպիսի զարտուղի ճանապարհի, նրան միաժամանակ ստիպում են ձգտելու այս պրոցեսի ըստ կարելույն ավելի պարզեցման: Ապրանքների պլեյբեյական ընդհանուր զանգվածից նրանք զատում են ավելի ազնիվ մի ապրանք, վորի մեջ մեկ ընդմիշտ ար-

տահայտվում է մյուս բոլոր ապրանքների արժեքը,—մի ապրանք, վորն ստանում է հասարակական աշխատանքի անմիջական մարմնացման նշանակություն և այս իսկ պատճառով անմիջականորեն ու անպայման փոխվում է մյուս բոլոր ապրանքների հետ,—փողը: Փողը սաղմային վիճակում արդեն պարունակվում է «արժեք» գաղափարի մեջ,— նա հանդիսանում է արժեքի սոսկ զարգացած ձևը: Բայց յերբ ապրանքների արժեքը, ապրանքների իսկ վերաբերմամբ, սկսում է արտահայտվել փողով՝ ապրանքներ արտադրող և փոխող հասարակության մեջ այն ժամանակ մտնում է մի նոր գործոն,—հասարակական նոր ֆունկցիաներով և ազդեցությամբ մի գործոն: Հիշատակելով այս մասին հարևանցորեն՝ մենք չենք տալու այն դերի մանրամասն շարադրանքը, վոր փողն ունի արդի հասարակության մեջ:[1])

Վորպեսզի այն գները, վորոնցով փոխադարձաբար փոխանակվում են ապրանքները, մոտավորապես համապատասխանեն նրանց արժեքներին՝ միայն պահանջվում է, վոր՝ 1) տարբեր ապրանքների փոխանակությունը դադարի սոսկ պատահական կամ յեզակի յերևույթ լինելուց, 2) վոր վորքանով մենք քննում ենք ապրանքների անմիջական փոխանակությունը՝ այս ապրանքներն արտադրվեն այս և այն կողմից հարաբերական քանակներով, վոր մոտավորապես համապատասխան լինեն այդ ապրանքների պահանջին, վորը սահմանվում է վաճառքի միջոցին ստացված փոխադարձ փորձով և, այսպիսով, ժամանակի ընթացքում զարգանում է վորպես փոխանակության իսկ հետևանք, և 3) վոր ինչքան գործը վաճառքին է վերաբերում, բնական թե արհեստական վոչ մի մոնոպոլիա հնարավորություն չտա գործարք կատարող կողմերին՝ վաճառելու արժեքից բարձր և չհարկադրի զիջելու նրանից ցածր[2]):

Փողը՝ չէ՞ վոր դա հասարակական հարստության թանձրույթը, հասարակական աշխատանքի թանձրույթն է, փողը՝ բոլոր աշխատավորներից տուրք ստանալու վկայականն է, փողը՝ դա յերեկվա շահագործման մնացորդն է: Ահա թե ի՞նչ բան է փողը: Արդյոք կարելի՞ յե վորևէ կերպ նրան մեկեն վոչնչացնել: Վո՛չ: Տակավին մինչև սոցիալիստական հեղափոխությունը սոցիալիստները ևս գրում էյին, վոր փողը մեկեն վերացնել չի կարելի, և մենք մեր փորձով կարող ենք հաստատել այդ: Հարկավոր են շատ տեխնիկական և, վոր ավելի դժվար ու ավելի կարևոր է, կազմակերպչական նվաճումներ՝ փողը վոչնչացնելու համար, իսկ մինչ այդ ստիպված ենք մնալ՝ սահմանադրության մեջ խոսքով ընդունված հավասարությամբ և մի դրությամբ, յերբ ամեն մեկը, վոր փող ունի, փաստական իրավունք ունի շահագործելու: Յեվ մենք չէյինք կարող մեկեն վերացնել փողը, մենք ասում ենք. առայժմ փողը մնում է և բավականին յերկար ժամանակ կմնա կապիտալիստական հին հասարակությունից սոցիալիստական նոր հասա-

[1]) Энгельс, «Анти—Дюринг», стр. 293—294
[2]) Маркс, Капитал III ч. I



րակության անցնելու շրջանի ընթացքում: Հավասարությունը խաբեբայություն է, յեթե նա հակասում է աշխատանքը կապիտալիզմի լծից ազատագրելու շահերին:[1]):

## ՓՈՂԱՅԻՆ ՖԵՏԻՇԻԶՄԸ

Լինելով փոխանակության և ապրանքային արտադրության զարգացման բարձրագույն արդյունք՝ փողն սքողում, թաքցնում է մասնավոր աշխատանքների հասարակական բնույթը, շուկայով միավորված առանձին արտադրողների միջև յեղած հասարակական կապը: Մարքսը չափազանց մանրամասն անալիզի յե յենթարկում փողի տարբեր ֆունկցիաները, ընդամին՝ այստեղ ևս (ինչպես ընդհանրապես «Կապիտալի» առաջին գլուխներում) կարևոր է մանավանդ նշել այն, վոր շարադրանքի աբստրակտ և յերբեմն զուտ դեդուկտիվ թվացող ձևն իրականում վերարտադրվում է փաստական հսկայական նյութ՝ փոխանակության և ապրանքային արտադրության զարգացման պատմության մասին: «Փողը յենթադրում է ապրանքային փոխանակության վորոշ բարձրություն: Փողի տարբեր ձևերը—ապրանքային պարզ էկվիվալենտ (համարժեք) կամ շրջանառության միջոց, կամ վճարման միջոց, գանձ և համաշխարհային փող—նայած այս կամ այն ֆունկցիայի կիրառման տարբեր չափերին, նրանցից մեկն ու մեկի համեմատական գերակշռմանը՝ ցույց է տալիս արտադրության հասարակական պրոցեսի խույժ տարբեր աստիճանները («Կապիտալ», I)[2]):

Այնտեղ, վորտեղ բուրժուական տնտեսագետները տեսնում էյին իրերի հարաբերություն (ապրանքը ապրանքի հետ փոխանակելը)՝ այնտեղ Մարքսը հայտաբերեց հարաբերություն մարդկանց միջև: Ապրանքների փոխանակությունն արտահայտում է առանձին արտադրողների միջև՝ շուկայի միջոցով յեղած կապը: Փողը ցույց է տալիս, վոր այդ կապը դառնում է ավելի ու ավելի սերտ, անխզելիորեն միացնելով մի ամբողջության մեջ առանձին արտադրողների տնտեսական վողջ կյանքը:[3])

## ԱՐԺԵՔԻ ՉԱՓԱՆԻՇ ՅԵՎ ԳՆԵՐԻ ՄԱՍՇՏԱԲ

Վոսկու առաջին ֆունկցիան այն է, վոր ապրանքային աշխարհին նյութ հայթայթե՝ նրա արժեքն արտահայտելու համար, այսինքն՝ նրա համար, վոր արտահայտե ապրանքների արժեքները՝ վորպես համանուն մեծու-

[4]) Ленин, т. XVI, стр. 208—209.
[1]) Ленин, т XII, стр 328—329
[3]) Ленин, т XII, стр. 57.

*թյուններ, վոր վորակապես միատեսակ և քանակապես համեմատելի յեն: Այսպիսով, նա գործում է վորպես արժեքների ամենաընդհանուր չափանիշ, և սկզբից վոսկին եկվիվալենտ սպեցիֆիկորեն այս ապրանքը—սոսկ այս ֆունկցիայի պատճառով դառնում է փող:*

Փողը չէ, վոր ապրանքները դարձնում է համաչափելի: Ընդհակառակը: Հենց այն պատճառով, վոր ապրանքները իբրև արժեքներ հանդիսանում են մարդկային իրայնացած աշխատանք և, հետևաբար, ըստ ինքյան համաչափելի յեն, — հենց այս պատճառով էլ նրանք կարողանում են իրենց արժեքները չափել սպեցիֆիկ միևնույն ապրանքով, այս կերպ փոխարկելով այս վերջինս իրենց արժեքների մի ընդհանուր չափանիշի, այսինքն, փողի: *Փողը վորպես արժեքի չափանիշ՝ ապրանքներին իմմանենտ (եյական) արժեքի բանվորական ժամանակի չափանիշի դրսևորման անհրաժեշտ ձև է միայն:*

*Գինը*, կամ ապրանքների փողային ձևը, ինչպես և նրանց արժեքի ամեն մի ձևը մի բան է, վոր տարբեր զգայորեն ըմբռնելի նրանց ռեալ մարմնականությունից, հետևաբար միայն իդեալականորեն միայն պատկերացման մեջ գոյություն ունեցող ձև է: *Յերկաթի, քաթանի, ցորենի և այլնի արժեքը, թեկուզ և անտեսանելի, գոյություն ունի իրենց իսկ իրերի մեջ: Նա արտահայտվում է նրանց հավասարությամբ վոսկու հետ, նրանց հարաբերությամբ դեպի վոսկին, մի հարաբերությամբ, վորը նրանք, այսպես ասած միայն նախադրում են: Ապրանքների պահողին այս պատճառով հարկ է լինում նրանց տրամադրության տակ դնելու իր լեզուն կամ նրանց վրա կախելով (դնել) թղթե տոմսակները, վորպեսզի արտաքին աշխարհին հաղորդեն նրանց գները, քանի վոր* ապրանքային արժեքների արտահայտությունը փողով կրում է իդեալական բնույթ, ուստի այս գործողության համար կիրարկելի յե վոսկին, վոր գոյություն ունի միայն իդեալականորեն, միայն պատկերացման մեջ: *Յուրաքանչյուր ապրանքատեր գիտե, վոր նա իր ապրանքները տակավին ամենևին չի դարձրել իսկական վոսկի, յեթե նրանց արժեքին տվել է գնի կամ մտքով պատկերացրած վոսկու ձև, և վոր հարկ չկա նրան ունենալու ռեալ կանխիկ վոսկու վոչ մի նշույլ, վորպեսզի վոսկով արտահայտե ամբողջ միլիոններով ապրանքային արժեքները: Հետևաբար, փողը արժեքների չափանիշի իր ֆունկցիան կատարում է վորպես մտքով պատկերացվող կամ իդեալական փող: Այս հանգամանքը ծնել է փողի ամենաանհեթեթ տեսություններ: Թեև, իր, վորպես արժեքների չափանիշի ֆունկցիան կատարելու համար ծառայում է միայն մտքով պատկերացվող փողը, այնուամենայնիվ, ապրանքների գները ամբողջապես կախված են փողային ռեալ մատերիալից: Արժեքը, այսինքն, մարդկային աշխատանքի քանակը, վոր պարունակվում է, օրինակ, մի տոնն յերկաթի մեջ, արտահայտվում է փողային ապրանքի մտքով պատկերացվող այն քանակով, վորը պարունակում է նույնքան աշխատանք: Հետևաբար, նայած նրան, թե վորպես չափանիշ վոսկի՞ն է ծառայում, արծա՞թը, թե՞ պղինձը, մի տոնն յերկաթի արժեքն արտահայտվում է միանգամայն տարբեր գներով կամ պատկերացվում է վոսկու, արծաթի կամ պղնձի միանգամայն տարբեր քանակների ձևով:*



*Վորպես արժեքների չափանիշ և վորպես գների մասշտաբ*՝ փողը կատարում է միանգամայն տարբեր յերկու ֆունկցիա: Արժեքների չափանիշ է նա՝ վորպես մարդկային հասարակական աշխատանքի մարմնացում, գների մասշտաբ է՝ վորպես մետաղի ֆիքսացիայի յենթարկված կշիռ: Վորպես արժեքի չափանիշ՝ փողը ծառայում է այն բանի համար, վոր անվերջ բազմազան ապրանքների արժեքները փոխանակի գների, վոսկու՝ մտքով պատկերացվող քանակների: Վորպես գների մասշտաբ՝ նա չափում է վոսկու այդ քանակները: Արժեքների չափանիշով ապրանքները չափվում են վորպես արժեքներ՝ ընդհակառակը, գների մասշտաբը չափում է վոսկու տարբեր քանակները նրա տվյալ քանակով, և վոչ թե վոսկու տվյալ քանակի արժեքը նրա մյուս քանակների կշռով: *Գների մասշտաբի համար վոսկու վորոշ կշիռ պետք է ֆիքսացիայի յենթարկվի վորպես չափի միավոր: Այստեղ, ինչպես և ամեն մի դեպքում համանուն մեծությունները չափելիս՝ վճռական նշանակություն ունի չափման միավորի կայունությունը: Հետևաբար, գների մասշտաբն իր ֆունկցիան այնքան լավ է կատարում, վորքան վոսկու միևնույն քանակը անփոփոխ է ծառայում վորպես չափման միավոր:* Վոսկին վորպես արժեքների չափանիշ է կարողանում ծառայել սոսկ այն պատճառով, վոր նա ինքն աշխատանքի արդյունք է, հետևաբար՝ պոտենցիալ փոխանակման արժեք է:

*Ամենից առաջ ակներև է, վոր վոսկու արժեքի փոփոխումը վոչ մի կերպ չի կարող խանգարել նրան իբրև գների մասշտաբի ֆունկցիան: Վորքան էլ փոփոխվի վոսկու արժեքը՝ նրա վորոշ քանակների արժեքները պահպանում են իրար նկատմամբ միևնույն հարաբերությունը: Յեթե վոսկու արժեքն ընկներ անգամ 1000 տոկոսով՝ վոսկու 12 ունցիան առաջվա պես տասներկու անգամ ավելի արժեք կունենար, քան վոսկու մի ունցիան, իսկ գները սահմանելիս՝ բանը միայն այն է, թե վոսկու տարբեր քանակները ինչպես են հարաբերում միմյանց: Մյուս կողմից, վորովհետև վոսկու արժեքն ընկնելիս կամ բարձրանալիս՝ նրա մի ունցիայի կշիռն անփոփոխ է մնում, ուստի և անփոփոխ են մնում ունցիայի նույնպես առանձին մասերը: Հետևաբար, վոսկին վորպես գների ֆիկսացված մասշտաբ, վորքան և փոփոխվի նրա արժեքը, միշտ մատուցում է միևնույն ծառայությունը:*[1])

*Այնտեղ, վորտեղ և՛ արծաթն և՛ վոսկին օրենքի հիմունքով գործում են վորպես փող, այսինքն, վորպես արժեքի չափանիշ՝ չարունակ ապարդյուն փորձեր են յեղել նրանց իբրև միևնույն իր դիտելու: Իրոք, յեթե յենթադրվում է, վոր բանվորական միևնույն ժամանակն անփոփոխ իրայնացվում է արծաթի և վոսկու միևնույն պրոպորցիաներով՝ ապա այդպիսով յենթա-*

[1]) Капитал I, стр. 61—66

դրվում է, որ արծաթն ու ոսկին՝ իսկապես ներկայացնում են միևնույն իրերը, և որ արծաթի, այս ավելի քիչ արժեքավոր մետաղի արժեքը կազմում է ոսկու արժեքի կոտորակային անփոփոխ մասը: Եդվարդ III թագավորությունից մինչև Գեորգ II ժամանակն անգլիական փողային շրջանառության պատմությունը անընդհատ խախտումների մի ամբողջ շարք է, որ առաջ է գալիս ոսկու և արծաթի արժեքի՝ օրենքով սահմանված հարաբերակցության և նրանց արժեքի իրական տատանումների բախումից: Մեկ ոսկու գնահատումն էր շատ բարձր դուրս գալիս, մեկ՝ արծաթինը: Չափազանց ցածր գնահատված մետաղը հանվում էր շրջանառությունից, վերահալվում էր ձուլքի և արտահանվում էր արտասահման: Այնուհետև օրենքը նորից էր փոփոխում յերկու մետաղի արժեքի հարաբերությունը, բայց շուտով անվանական այդ նոր արժեքն այնպիսի կոնֆլիկտի մեջ էր ընկնում արժեքների իրական հարաբերակցության հետ, ինչպես և հնում: Մեր ժամանակներում ոսկու արժեքի՝ նույնիսկ շատ թույլ և կարճատև անկումը, համեմատած արծաթի հետ, որ հետևանք էր Հնդկաստանի և Չինաստանի՝ ոսկու պահանջի,—Ֆրանսիայում առաջացրեց լայն չափով միևնույն յերևույթը, հրակայական չափերով արծաթի արտահանումը և շրջանառությունից նրա դուրս մղվելը ոսկու կողմից: 1855, 1856 և 1857 թվականների ժամանակաշրջանում ոսկու ներմուծումը Ֆրանսիա գերազանցում էր նրա՝ արտահանումից 41·580·000 ֆունտ ստերլինգով, մինչդեռ՝ արծաթի արտածման ավելցուկը գերազանցում էր նրա ներածումից 14·704·000 ֆ. ստերլինգով: Իսկապես այնպիսի յերկրներում, որտեղ ըստ օրենքի յերկու մետաղն էլ արժեքի չափանիշ ճանաչված և հետևաբար յերկուսն էլ ընդունվում են վճարման ժամանակ, ըստ որում ամեն մեկը կարող է ըստ իր ցանկության վճարել ոսկով կամ արծաթով,—այն յերկրներում, ուր բարձրանում է մետաղի արժեքը՝ նա ձեռք է բերում լաժ ն, ամեն մի այլ ապրանքի նման իր գինը որոշում է այն մետաղով, որ գնահատված է չափազանց բարձր, այնպես որ միայն այս վերջինը իրապես ծառայում է որպես արժեքի չափանիչ: Պատմական ամբողջ փորձն այս բնագավառում պարզապես հանգում է այն բանին, որ ամենուրեք, ուր օրենքը յերկու ապրանքներին ամրացնում է արժեքի չափանիշի ֆունկցիան՝ փաստորեն այս ֆունկցիան իրեն վերապահում է նրանցից միայն մեկը:[1])

# ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

## ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԵՏԱՄՈՐՖՈԶԸ

Մենք տեսանք, որ ապրանքների փոխանակության պրոցեսն իր մեջ պարունակում է հակասող և միմյանց բացառող հարաբերություններ: Այս

2) Капитал I, стр. 64—65



պրոցեսի զարգացումը, որը հայտնաբերում է սպառողական արժեք և փոխանակային արժեք հանդիսացող ապրանքի յերկակի բնույթը՝ բերում է ապրանքային աշխարհի հատուկ ապրանքների և փողային ապրանքի բաժանման, չի վերացնում այդ հակասությունները, սակայն ստեղծում է ձև նրանց շարժման համար: Այսպիսին է և առհասարակ այն մեթոդը, որի միջոցով լուծվում են իրական հակասությունները: Այսպես, օրինակ, հակասություն է պարունակվում այն բանում, որ մի մարմին անընդհատ ընկնում է մի այլ մարմնի վրա և անընդհատ հեռանում է նրանից: Էլիպսը շարժման մի ձև է, որի մեջ այդ հակասությունը միաժամանակ թե իրագործվում է և թե լուծվում:

Որքան որ փոխանակության պրոցեսը տեղափոխում է ապրանքները մի ձեռքից, որտեղ նրանք սպառողական արժեք չեն, մի այլ ձեռք, որտեղ նրանք սպառողական արժեք են այնքանով և այդ պրոցեսը նյութերի հասարակական փոխանակություն է: Աշխատանքի մի օգտակար տեսակի արդյունքը կանգնում է աշխատանքի մի այլ օգտակար տեսակի տեղ: Ապրանքը, հասնելով մի կետի, որտեղ նա ծառայում է որպես սպառողական արժեք՝ ապրանքային փոխանակության սֆերայից անցնում է սպառման սֆերան: Այստեղ մեզ հետաքրքրում է միայն առաջին սֆերան: Ուստի՝ ամբողջ պրոցեսը մենք քննելու յենք միայն մի կողմից, հետևաբար, միայն ձևերի փոփոխությունը, կամ ապրանքների մետամորֆոզը, որ սպասարկում է նյութերի հասարակական փոխանակությունը:

Գնանք այժմ որևէ ապրանքատիրոջ, թեկուզ մեր հին ծանոթի, քաթանագործ ջուլհակի հետևից՝ փոխանակային պրոցեսի ասպարեզ, ապրանքային շուկա: Նրա ապրանքի, 20 արշին քաթանի գինը մի որոշ մեծություն է: Այդ գինը հավասար է 2 ֆունտ ստերլինգի: Նա փոխանակում է քաթանը 2 ֆունտ ստերլինգի հետ, և որպես հին սովորույթի մարդ, նորից փոխանակում է այդ 2 ֆունտ ստերլինգը նույն գնի ընտանեկան աստվածաշնչի հետ: Քաթանը, նրա համար միայն ապրանք, միայն արժեքի կրող է. քաթանը խորթացվում է՝ փոխանակվելով ոսկու, նրա արժեքի մարմնացման հետ, և մարմնացման այս ձևից նորից փոխարկվում է այլ ապրանքի, աստվածաշնչի, որը, սակայն, կուղղվի դեպի ջուլհակի տունը որպես սպառման առարկա և այնտեղ բավարարելու յե հոգեշահ ընթերցանության պահանջը: Ապրանքի փոխանակության պրոցեսն այսպիսով իրագործվում է յերկու հակադիր և միմյանց լրացնող մետամորֆոզների (փոխարկումների) ձևով,—ապրանքը փողի փոխարկելու և նրան փողից ապրանքի հակադարձորեն փոխարկելու ձևով: Ապրանքային մետամորֆոզի մոմենտները միաժամանակ ներկայացնում են ապրանքատիրոջ գործարքները,—վաճառքը, ապրանքի փոխանակումը փողի հետ, գնումը, փողի փոխանակումը ապրանքի հետ, և այս յերկու գործողության միասնությունը՝ վաճառքը գնման համար:

Յեվ այսպես, ապրանքի փոխանակության պրոցեսը կատարվում է ձևի հետևյալ փոխարկման կերպով·

Ապրանք—Փող—Ապրանք

Ա—Փ—Ա.

Իր նյութական բովանդակության կողմից այս շարժումը ներկայացնում է Ա—Ա, ապրանքի փոխանակումը ապրանքի հետ, հասարակական աշխատանքի նյութերի փոխանակություն, վորի վերջնական հետևանքով մարում է և բուն պրոցեսը:

Ա—Փ: Ապրանքի առաջին մետամորֆոզը, կամ վաճառքը: Ապրանքային արժեքի տեղափոխումը ապրանքի մարմնից փողի մարմինը, ինչպես յես այդ անվանեցի մի այլ տեղ, ապրանքի salto mortale է (հուսահատական վոստյուն): Յեթե այն չի հաջողվում, ապա խաբված է դուրս գալիս իր հույսերի մեջ յեթե վոչ ինքն ապրանքը, գոնե նրա տերը: Աշխատանքի հասարակական բաժանումը վերջինիս աշխատանքը դարձնում է նույնքան միակողմանի, վորքան բազմակողմանի են նրա պահանջները:

Աշխատանքի բաժանումն աշխատանքի արդյունքը փոխարկում է ապրանքի և այդ պատճառով անհրաժեշտ է դարձնում նրա փոխարկումը փողի: Այն միաժամանակ պատահականության գործ է դարձնում, թե արդյո՞ք հաջողվելու յե այս գոյափոխությունը:

Մի ապրանքատիրոջ համար վոսկին է փոխարինում նրա ապրանքին, մյուսի համար—ապրանքն է փոխարինում նրա վոսկուն: Զգայորեն ըմբռնելի յերևույթն այն է, վոր ապրանքն ու վոսկին, 20 արշին քաթանը և 2 ֆունտ ստերլինգը, տեղափոխվում են ձեռքից ձեռք կամ տեղից տեղ, այսինքն, փոխանակվում են միմյանց հետ: Բայց ի՞նչ բանի հետ է փոխանակվում ապրանքը: Իր բուն արժեքի ամենաընդհանուր մարմնացման հետ: Իսկ վոսկի՞ն: Իր սպառողական արժեքի տվյալ հատուկ մարմնացման հետ: Ինչո՞ւ յե վոսկին կանգնած քաթանի դիմաց վորպես փող: Վորովհետև քաթանի գինը, 2 ֆունտ ստերլինգը, այսինքն, նրա փողային անունը, արդեն հարաբերել է վոսկուն՝ վորպես փողի: Ապրանքային սկզբնական ձևի խորթացումը կատարվում է ապրանքի խորթացման ճանապարհով, հետևաբար, այն մոմենտում, յերբ ապրանքի սպառողական արժեքն իրապես ձգում է դեպի ինքը վոսկին, վոր միայն մտավորապես է ներկայացված ապրանքի գնի մեջ: Գնի կամ ապրանքի արժեքի միայն իդեալական ձևի իրացումը հանդիսանում է, մյուս կողմից, փողի միայն իդեալական սպառողական արժեքի իրացում,—ապրանքի փոխարկումը փողի, միևնույն ժամանակ փողի փոխարկումն է ապրանքի: Այս միասնական պրոցեսը, այսպիսով, յերկկողմանի յե. նրա մի բևեռը կազմում է ապրանքատիրոջ վաճառքը, մյուս բևեռը՝ փողատիրոջ գնումը: «Վաճառքը ե՛ գնում», Ա—Փ միաժամանակ ե՛ Փ—Ա:

Մինչև այժմ մենք գիտենք միայն մի տնտեսական հարաբերություն մարդկանց միջև—ապրանքատերերի հարաբերությունը, վոր հանգում է միայն ուրիշի աշխատանքի արդյունքը յուրացնելուն՝ իր սեփականը խորթացնելու միջոցով: Հետևաբար, մի ապրանքատեր կարող է կանգնել մի ուրիշի դիմաց միայն վորպես փողատեր, կամ այն պատճառով, վոր նրա աշխատան-



քի արդյունքն ի բնե ունի փողային ձև, այսինքն, հանդիսանում է փողային նյութ, որինակ, վոսկի, կամ այն պատճառով, վոր նրա ապրանքն արդեն փոխել է կաշին թոթափելով իրենից իր սկզբնական սպառողական ձևը: Վորպես փող գործելու համար, վոսկին, ինհարկե, պետք է վորևէ կետում մտնի ապրանքային շուկա: Այդ կետը գտնվում է նրա արտադրության աղբյուրի մոտ,—այնտեղ, վորտեղ նա, վորպես աշխատանքի անմիջական արդյունք, փոխանակվում է աշխատանքի նույն արժեքի արդյունքի հետ: Սակայն, սկսած այս մոմենտից, վոսկին գրավվում է միմիայն նրանով, վոր անընդհատ արտահայտում է իրենով ապրանքների իրացված գները:

Ապրանքի առաջին մետամորֆոզը, նրա փոխարկումն ապրանքաձևից փողի, միշտ հանդիսանում է միաժամանակ մի այլ ապրանքի հակադիր մետամորֆոզ, այդ ապրանքի հակադարձ փոխարկումը փողային ձևից ապրանքի:

Փ—Ա: Ապրանքի յերկրորդ, կամ յեզրափակիչ մետամորֆոզը՝ գնումը: Վորպես մյուս բոլոր ապրանքների խորթացված պատկեր կամ վորպես նրանց ամենաընդհանուր խորթացման արդյունք՝ փողը հանդիսանում է բացարձակապես խորթացվող ապրանք:

Փ—Ա, այսինքն, գնումը միաժամանակ վաճառք է, կամ Ա—Փ, հետևաբար, տվյալ ապրանքի վերջին մետամորֆոզը միաժամանակ ե՛ մի այլ ապրանքի առաջին մետամորֆոզը:

Այսպիսով, մի ապրանքի յեզրափակիչ մետամորֆոզը կազմում է այլ ապրանքների առաջին մետամորֆոզների գումարը:

Յեթե մենք այժմ վերցնենք վորևէ ապրանքի, որինակ, քաթանի մետամորֆոզն ամբողջությամբ, ապա մենք ամենից առաջ կտեսնենք, վոր այդ մետամորֆոզը բաղկացած է յերկու հակադիր և միմյանց լրացնող շարժումներից. Ա—Փ և Փ—Ա: Ապրանքի այս յերկու հակադիր փոխարկումները իրագործվում են ապրանքատիրոջ հասարակական յերկու հակադիր գործողությունների մեջ և արտացոլվում են նրա տնտեսական յերկու հակադիր ֆունկցիաների մեջ: Վորպես վաճառքի գործողության ագենտ՝ ապրանքատերը վաճառորդ է, վորպես գնման գործողության ագենտ՝ գնորդ է: Բայց վորովհետև ապրանքն իր յուրաքանչյուր փոխարկման մեջ միաժամանակ գոյություն ունի իր յերկու—ապրանքային և փողային— ձևերով, վորոնք գտնվում են միայն հակադիր բևեռներում, ուստի միևնույն ապրանքատիրոջ դիմաց, վորքան վոր նա վաճառորդ է, կանգնած է մի ուրիշը վորպես գնորդ, իսկ վորքան վոր նա գնորդ է, կանգնած է դիմացը մի ուրիշը վորպես վաճառորդ: Նման այն բանի, թե ինչպես միևնույն, իսկ ապրանքը հաջորդաբար կատարում է յերկու հակադիր փոխարկում—ապրանքից՝ փող և փողից՝ ապրանք,—ճիշտ այդպես էլ ապրանքատերը փոխում է վաճառորդի դերը գնորդի դերի հետ: Հետևաբար, գնումը և վաճառքը վոչ թե հաստատապես ֆիքսացված ֆունկցիաներ են, այլ այնպիսի ֆունկցիաներ, վորոնք ապրանքային շրջանառության մեջ շարունակ փոխում են այն անհատներին, վորոնցով նրանք (այդ ֆունկցիաները) կատարվում են:

Յերկու մետամորֆոզ, վոր կազմում են մի ապրանքի լիակատար շրջապտույտը, միաժամանակ ներկայացնում են յերկու այլ ապրանքների հակադիր ուղղված մասնակի մետամորֆոզները: Միևնույն ապրանքը (քաթանը) բաց է անում իր մի շարք սեփական մետամորֆոզները և միևնույն ժամանակ ավարտում է մի այլ ապրանքի (ցորենի) մետամորֆոզը: Իր առաջին փոխարկման ժամանակ, վաճառքի գործողության մեջ, նա այդ յերկու դերումն էլ հանդես է գալիս իր սեփական անձով: Իսկ դառնալով վոսկե տիկնիկ, վորի տեսքով նա անցնում է ապրանքային ամեն մի մարմնի ուղին՝ նա սրա հետ միասին իրագործում է մի վորևէ յերրորդ ապրանքի առաջին մետամորֆոզը: Այսպիսով, այն շրջապտույտը, վոր գործում են յուրաքանչյուր տվյալ ապրանքի մի շարք մետամորֆոզները՝ անխզելիորեն հյուսվում են այլ ապրանքների շրջապտույտների հետ: Պրոցեսն իր ամբողջ առումով ներկայացնում է ապրանքների շրջանառությունը: Գնումը և վաճառքը ներկայացնում են միևնույն ակտը, վորպես բևեռորեն հակադիր յերկու անձի— փողատիրոջ և ապրանքատիրոջ փոխհարաբերությունը: Բայց նրանք ներկայացնում են բևեռորեն հակադիր յերկու ակտ՝ վերցրած վորպես միևնույն անձի գործողություններ:

Գնորդն ապրանք ունի, վաճառողը՝ փող, այսինքն՝ ապրանք, վորը պահում է շրջանառության համար ընդունակ ձև՝ անկախ նրանից, թե վաղ թե ուշ նա նորից փաստորեն հանդես կգա շուկայում: Վոչ վոք չի կարող վաճառել առանց նրա, վոր մի ուրիշը գնե: Բայց վոչ վոք պարտավոր չէ անհապաղ գնելու միմիայն այն պատճառով, վոր նա մի բան վաճառել է: Ապրանքների շրջանառությունը խզում է արդյունքների փոխանակության ժամանակավոր, տարածական և անհատական սահմանները հենց շնորհիվ այն բանի, վոր աշխատանքի իր արդյունքի խորթացման և ուրիշների ստացման միջև (յեղած) անմիջական նույնությունը շրջանառությունը բաժանում է վաճառքի և գնման հակադիր յերկու ակտի: Յեթե միմյանց վերաբերմամբ ինքնուրույն հանդիսացող պրոցեսները կազմում են ներքին վորոշ միասնություն, ապա այդ նշանակում է, վոր նրանց ներքին միասնությունն իրագործվում է արտաքին հակադրությունների շարժումով:

Վորպես միջնորդ ապրանքների շրջանառության պրոցեսում՝ փողը կատարում է շրջանառության միջոցների ֆունկցիան[1]):

---

## ՓՈՂԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ձևի փոփոխումը, վորի ոգնությամբ կատարվում է իրերի փոխանակումն աշխատանքի արդյունքների միջև, —Ա.—Փ—Ա.—յենթադրում է, թե միևնույն արժեքը, վորպես ապրանք, կազմելով պրոցեսի յելակետը, նորից վերադառնում է նույն կետին ապրանքի ձևով: Այսպիսով՝ ապրանքների

[1]) Капитал I, стр. 71—82



այս շարժումը հանդիսանում է շրջապտույտ: Մյուս կողմից, այդ նույն ձևը բացառում է փողի շրջապտույտը: Այս ձևի հետևանք է հանդիսանում փողի անընդհատ հեռանալը իր յելակետից, և վոչ թե դեպի վերջինիս վերադառնալը: Մինչև վոր ապրանքը վաճառողի ձեռքում պահվում է իր փոխարկված ձևով, փողի ձևով, ապա այդ ապրանքը գտնվում է իր առաջին մետամորֆոզի ստադիայում; այսինքն, նա կենսագործել է իր շրջանառության միայն առաջին կեսը: Յերբ պրոցեսը — վաճառքը հանուն գնման ավարտված է, ապա փողն արդեն հեռացել իր սկզբնական տիրոջ ձեռքից:

Հետևաբար, շարժման այն ձևը, վոր անմիջականորեն հաղորդվում է փողին ապրանքների շրջանառությամբ՝ հանդիսանում է նրանց հարատև հեռացումը յելակետից, նրանց անցումը մի ապրանքատիրոջ ձեռքից մյուսի ձեռքը, կամ նրանց շրջանառությունը:

Փողի շրջանառությունը միևնույն պրոցեսի մշտական միօրինակ կրկնությունն է: Ապրանքը միշտ գտնվում է վաճառողի կողմում, փողը՝ միշտ գնողի կողմում, վորպես գնողական միջոց: Փողը գործում է վորպես գնողական միջոց, իրացնելով ապրանքի գինը: Բայց իրացնելով այս վերջինը՝ փողն ապրանքը փոխանցում է վաճառողի ձեռքից գնողի ձեռքը և միաժամանակ ինքը հեռանում է գնողի ձեռքից վաճառողի ձեռքը նրա համար, վոր կրկնե նույն պրոցեսը մի այլ այլ ապրանքի հետ: Այն փաստը, վոր փողի շարժման այդ միակողմանի ձևը ծագում է ապրանքի շարժման յերկկողմանի ձևից՝ մնում է վարագուրված: Ապրանքաշրջանառության բնությունն իսկ ստեղծում է պրոցեսի հենց արտաքին հակադիր պատկեր:

Ապրանքի առաջին մետամորֆոզն արդեն իր արտաքին տեսքով վոչ միայն փողի շարժումն է, այլև իր իսկ ապրանքի սեփական շարժումն է, ընդհակառակը, ապրանքային յերկրորդ մետամորֆոզը հանդիսանում է միմիայն վորպես փողի շարժում: Իր շրջանառության առաջին կիսում ապրանքն իր տեղը փոխում է փողի տեղի հետ: Սրա հետ միասին նրա սպառողական մարմինը դուրս է ընկնում շրջանառության սֆերայից և անցնում սպառման սֆերան: Նրա տեղը բռնում է արժեքի մարմինը, կամ փողային տիկնիկը: Շրջանառության յերկրորդ կիսին ապրանքն անցնում է արդեն վոչ թե իր «բնական տեսքով», այլ իր վոսկե զգեստավորումով: Այսպիսով, շարժումն անընդհատ է միայն փողի տեսակետից: Նույն այդ շարժումը, վորն ապրանքի վերաբերմամբ բաժանվում է յերկու հակադիր պրոցեսի՝ մեկ, միշտ անփոփոխ պրոցեսի, յեթե նրան դիմենք վորպես մի պրոցես, վորի մեջ փողն իր տեղը փոխում է շարունակ նոր և նոր ապրանքների տեղի հետ:

Յուրաքանչյուր ապրանք՝ իր առաջին քայլը շրջանառության պրոցեսում անելիս, իր ձևն առաջին իսկ անգամ փոխելիս դուրս է ընկնում շրջանառության սֆերայից, ուր նրա տեղը մշտական բռնում է նոր ապրանք: Ընդհակառակը, փողը, վորպես շրջանառության միջոց, շարունակ լինում է շրջանառության սֆերայում, շարունակ վազում է նրանում: Այստեղից հարց է ծագում, թե այդ սֆերան անընդհատ վորքա՞ն փող կարող է կլանել:

Ամեն մի յերկրում յուրաքանչյուր որ կատարվում են ապրանքների բազմաթիվ, միաժամանակյա և, հետևաբար, տարածականորեն զուգացվող միակողմանի մետամորֆոզներ, կամ, այլ խոսքով, միայն վաճառք՝ մի կողմից, միայն գնում՝ մյուս կողմից: Իրենց գներով ապրանքներն արդեն հավասարված են փողի վորոշ իդեալական քանակությունների: Այնքան, վորքան շրջանառության այստեղ քննված անմիջական ձևը միշտ իրայնորեն հակադրում է իրար. ապրանքն ու փողը— առաջինը՝ վաճառքի բևեռում, յերկրորդը՝ գնման հակադիր բևեռում— ուստի ապրանքների շրջանառության պրոցեսի համար անհրաժեշտ՝ շրջանառության միջոցների մասսան արդեն վորոշված է ապրանքների գների գումարով: Հիրավի, փողն իրենով իրապես միայն ներկայացնում է վոսկու այն գումարը, վորն իդեալականորեն արդեն արտահայտված է ապրանքների գների գումարով: Հետևաբար, այդ գումարների հավասարությունն ինքնին ակներև է: Սակայն, մենք գիտենք, վոր ապրանքների արժեքն անփոփոխ է, մինչդեռ նրանց գները փոփոխվում են վոսկու իսկ (փողային մատերյալ) արժեքի փոփոխմամբ,—համեմատաբար բարձրանում են, յեթե վերջինս ընկնում է, և, ընդհակառակը, ընկնում են, յեթե վերջինս բարձրանում է: Ապրանքների գների գումարի այդպիսի բարձրացման կամ իջման հետ միասին պետք է նույն համեմատությամբ ավելանա կամ պակասի շրջանառություն կատարող փողի մասսան: Ճիշտ է, շրջանառության միջոցների մասսայի փոփոխման պատճառն այստեղ ինքը փողն է, բայց վոչ թե շրջանառության միջոցի իր ֆունկցիայով, այլ արժեքի չափանիշի իր ֆունկցիայով: Ապրանքների գինը սկզբից փոփոխվում է հակառակ համարաբերությամբ փողի արժեքի փոփոխության վերաբերյալ, իսկ հետո շրջանառության միջոցների մասսան փոփոխվում է ապրանքների գների փոփոխության ուղիղ համարաբերությամբ: Բոլորովին նույն յերևույթը տեղի կունենար, յեթե օրինակ, վոչ թե վոսկու արժեքն իջներ, այլ արծաթը բռներ վոսկու տեղը վորպես արժեքի չափանիշ, կամ ընդհակառակը, վոչ թե արծաթի արժեքը բարձրանար, այլ վոսկին արտամղեր արծաթին արժեքի չափանիշի ֆունկցիայից: Առաջին դեպքում արծաթն ավելի շատ պետք է շրջանառություն գործեր, քան առաջ շրջան էր գործում վոսկին, յերկրորդ դեպքում վոսկին ավելի քիչ, քան առաջ շրջան էր կատարում արծաթը: Յերկու դեպքումն էլ կփոփոխվեր փողային մատերյալի արժեքը, այսինքն՝ ապրանքի, վոր գործում է վորպես արժեքների չափանիշ, կփոփոխվեր այս պատճառով ապրանքային արժեքների արտահայտությունը գներով. հետևաբար՝ կփոփոխվեր շրջանառություն գործող փողի մասսան, վորը ծառայում է այդ գների իրացման համար:

Շրջանառության միջոցների մասսան վորոշվում է իրացման յենթակա ապրանքային գների գումարով: Յեթե մենք այնուհետև յենթադրենք, վոր տրված է ապրանքային յուրաքանչյուր տեսակի գինը, ապա ակներև է, ապրանքների գների գումարը, ակնհայտ է, կախումն է ունենալու շրջանառության մեջ գտնվող ապրանքների քանակից:



Յեթե մենք յենթադրենք, վոր ապրանքների մասսան տրված է, ապա շրջանառության մեջ յեղող փողի մասսան ավելանալու կամ պակասելու է ապրանքային գների այս կամ այն կողմը տատանվելու հետ միասին: Նա աճում և ընկնում է նայած այն բանին, թե բարձրանում կամ ընկնում է ապրանքների գների գումարը՝ գների մեծության փոփոխման հետևանքով: Այս դեպքում վոչ մի անհրաժեշտություն չկա այն բանի, վոր միաժամանակ բարձրանան կամ իջնեն բոլոր ապրանքների գները: Վորոշ քանակի գլխավորող ապրանքների գների բարձրացումը՝ մի դեպքում, նրանց գների իջեցումը՝ այդ դեպքում բավական է նրա համար, վորպեսզի շրջանառություն գործող բոլոր ապրանքների գների իրացման յենթակա գումարը նկատելիորեն բարձրացվի կամ իջեցվի ապա հետևաբար և շրջանառության սֆերան ավել կամ պակաս փող ներգրավելու համար:

Շրջանառության պրոցեսի տվյալ շրջանում վորպես շրջանառության միջոց գործող փողի մասսան հավասար է ապրանքների գների գումարին, բաժանած նույնանուն դրամների պտույտների թվի վրա: Այս օրենքն ունի ամենաընդհանուր գործադրություն:

Վորովհետև շրջանառության տվյալ միջին արագության ժամանակ տրված է այն փողի մասսան, վորը կարող է գործել վորպես շրջանառության միջոց, ուստի բավական է շրջանառության մեջ դնել տոմսերի, օրինակ, միֆունտանի արժողությամբ արժանիքների վորոշ քանակ, վոր նրանից դուրս հանես ուղիղ նույնքան վոսկե սովերեն (մի ֆունտ ստերլինգանոց դրամ) մի ֆոկուս է, վոր լավ է հայտնի բոլոր բանկերին:

Յեթե փողի շրջանառությամբ ընդհանրապես յերևան է գալիս միայն ապրանքների շրջանառության պրոցեսը, այսինքն՝ նրանց շրջապտույտը հակադիր մետամորֆոզների ճանապարհով, ապա փողի շրջանառության արագության մեջ յերևան է գալիս ապրանքային ձևերի հերթափոխի արագությունը, մետամորֆոզների մի շարքի—անընդհատ արմատացումը մի այլ շարքի մեջ, իրերի այս փոխանակության սլացությունը, ապրանքների արագ անհետացումը շրջանառության սֆերայից և նրանց նույնքան արագ փոխարինումը նոր ապրանքներով: Փողային շրջանառության արագության մեջ դրսեվորվում է, այսպիսով, հակադիր և փոխադարձաբար միմյանց լրացնող փազերի հոսուն միասնությունը, ապրանքի սպառողական մարմնի փոխարկումն արժեքի մարմնի և արժեքի մարմնի հակառակ փոխարկումն սպառողական մարմնի, այսինքն՝ յերկու պրոցեսի—վաճառքի և գնման միասնությունը: Ընդհակառակը, փողային շրջանառության դանդաղման մեջ արտահայտվում է այդ պրոցեսների բաժանումը և առանձնացումը՝ յերկու հակադիր բևեռների ձևով, այսինքն՝ ձևերի փոխարկման, հետևաբար և իրերի փոխարկման դադարումը:

Այսպիսով, տվյալ յուրաքանչյուր ժամանակաշրջանի ընթացքում վորպես շրջանառության միջոց գործող փողի ընդհանուր քանակը վորոշվում է, մի կողմից, շրջանառություն գործող բոլոր ապրանքների գների գումարով, իսկ

մյուս կողմից՝ նրա շրջանառության՝ հակադիր ուղղված պրոցեսների հեղեղի ավելի կամ պակաս արագությամբ: Հեղեղի արագությունից է կախված, թե գների ընդհանուր գումարի վո՛ր մասը կարող է իրացվել միևնույն դրամի ոգնությամբ: Սակայն ապրանքների գների այսինկ գումարը կախված է յուրաքանչյուր ապրանքային տեսակի ինչպես մասսայից, այնպես և գնից:

Ապրանքային անփոփոխ գների պարագայում շրջանառության միջոցների մասսան կարող է աճել, յեթե ավելանում է շրջանառություն գործող ապրանքների մասսան կամ պակասում է փողի շրջանառության արագությունը, կամ այդ յերկու հանգամանքները միատեղ են գործում: Ընդհակառակը, շրջանառության միջոցների մասսան կարող է պակասել, յեթե պակասում է ապրանքների մասսան, կամ աճում է նրանց շրջանառության արագությունը:

*Ապրանքային գների ամենաընդհանուր բարձրացման դեպքում շրջանառության միջոցների մասսան կարող է մնալ անփոփոխ, յեթե շրջանառություն գործող ապրանքների մասսան պակասում է այնինկ հարաբերությամբ, վորով աճում է նրանց գինը, կամ փողի շրջանառության արագությունն ավելանում է գների աճման համեմատությամբ, ընդսմին՝ շրջանառություն գործող ապրանքների մասսան մնում է մշտական: Շրջանառության միջոցների մասսան կարող է պակասել, յեթե ապրանքների մասսան պակասում կամ շրջանառության արագությունն ավելանում է ավելի արագ, քան գները:*

*Ապրանքային գների ընդհանուր իջեցման դեպքում շրջանառության միջոցների մասսան կարող է անփոփոխ մնալ, յեթե ապրանքների մասսան ավելանում է այնինկ հարաբերությամբ, վորով ընկնում է նրանց գինը և կամ՝ յեթե փողի շրջանառության արագությունը պակասում է այնինկ հարաբերությամբ, ինչպես և գները: Շրջանառության միջոցների մասսան կարող է աճել, յեթե ապրանքային մասսան աճում կամ շրջանառության արագությունը պակասում է ավելի արագ, քան ընկնում են ապրանքային գները:*

Այն օրենքը, վորի համաձայն շրջանառության միջոցների քանակը վորոշվում է շրջանառություն գործող ապրանքների գների գումարով և փողի շրջանառության միջին արագությամբ, կարող է արտահայտվել նույնպես հետևյալ կերպ· ապրանքների արժեքի տվյալ գումարի և նրանց մետամորֆոզների տվյալ միջին արագության պարագայում շրջանառություն գործող փողի կամ փողային մատերիալի քանակը կախումն ունի վերջինիս բուն արժեքից: Այն ապրանքը, թե իբր՝ բոլորովին հակառակն է լինում, թե իբր՝ ապրանքային գները վորոշվում են շրջանառության միջոցների մասսայով, իսկ վերջինս իր հերթին վորոշվում է տվյալ յերկրում գտնվող փողային մատերիալով՝ այդ պատրանքի առաջին ներկայացուցիչների մոտ այն անհերթեթ հիպոտեզի մեջ է արմատացած, թե ապրանքները շրջանառության պրոցես են մտնում առանց գների, իսկ փողը՝ առանց արժեքի, և ապա, այդ պրոցեսում ապրանքային խառնուրդի վորոշ մասը փոխանակվում է մետաղի *կույտի համապատասխան մասի հետ*:[1])

[1]) Капитал I, стр. 82—92



*Ապրանքային շրջանառության հետևանքը, մի ապրանքի փոխարինումը մի այլ ապրանքով ստեղծվում է այս պատճառով վոչ թե նրա բուն ձևի փոփոխմամբ, այլ փողի, վորպես* շրջանառության միջոցի՝ ֆունկցիայով: *Ինքնին անշարժ փողը շարժման մեջ է դնում ապրանքները, փողը փոխադրում է նրանց մի ձեռքից, վորտեղ նրանք չեն հանդիսանում սպառողական արժեք՝ մի այլ ձեռք, վորտեղ նրանք ունեն սպառողական արժեք, և ընդսմին՝* փոխադրում է փողի բուն շարժմանը հակադիր ուղղությամբ: Փողը շարունակ հեռացնում է ապրանքները շրջանառության սֆերայից (շրջանից)՝ շրջանառության պրոցեսում կանգնելով (բռնելով) նրանց տեղը և սրանով իսկ հեռանալով իր բուն յելակետից: *Ուստի, թեև փողի շարժմամբ սոսկ արտահայտվում է ապրանքների շրջանառությունը, արտաքուստ* ապրանքների շրջանառությունը թվում է, ընդհակառակը, փողի շարժման հետևանք *միայն*:

*Մյուս կողմից, փողին հատուկ է շրջանառության միջոցի ֆունկցիա այն պատճառով միայն, վոր նա ներկայացնում է ապրանքների արժեքը, վոր ստացել է անջատ ձև: Նրա, վորպես շրջանառության միջոցի շարժումն այս պատճառով իրականում մի շարժում է, վորը հատուկ է ապրանքների միայն բուն ձևին: Հետևաբար, նա (այդ շարժումը) պետք է անդրադառնա փողի շրջանառության վրա և տեսանելի կերպով*[1]):

*Մինչև այժմ մենք ազնիվ մետաղը քննում էյինք նրա կրկնակի հատկությամբ՝ վորպես արժեքի չափանիշ և վորպես շրջանառության միջոց: Նա առաջին ֆունկցիան կատարում է վորպես իդեալական փող, վորպես պատկերացման մեջ գոյություն ունեցող փող. յերկրորդ ֆունկցիայում նա կարող է փոխարինվել փողային նշանով (փողանշով): Բայց գոյություն ունեն ֆունկցիաներ, վորոնց մեջ նա պետք է հանդես գա իր վոսկե (կամ արծաթե) մարմնով (էությամբ), հետևաբար, վորպես փողային ապրանք, նշանակում է՝ վոչ պարզապես իդեալականորեն, ինչպես արժեքի չափանիշ լինելու դեպքումն է, և չի կարող փոխարինվել իր ներկայացուցչով, ինչպես շրջանառության միջոց լինելու դեպքումն է: Մյուս կողմից՝ կամ մի ֆունկցիա, վորը նա կարող է կատարել կամ իր սեփական անձով (իրենով) կամ տեղակալի միջոցով, վորտեղ նա կանգնած է (դիմակայում է) մյուս բոլոր ապրանքների դիմաց, վորպես պարզապես սպառողական արժեքների դիմաց՝ միայն իբրև նրանց փոխանակային արժեքի համանիշ կեցություն կամ իբրև նրանց արժեքի միակ պատկեր: Բոլոր այս դեպքերում մենք ասում ենք, վոր նա գործում է վորպես փող՝ իսկական իմաստով՝ ի հակադրություն նրա, վորպես արժեքի չափանիշի և վորպես դրամի՝ ֆունկցիաների*[2]):

[1]) Капитал I, стр. 83—84.

[2]) *Նույն տեղը*, *էջ* 97—98

## ԴՐԱՄ, ԱՐԺԵՔԻ ՆՇԱՆ

Փողի, վորպես շրջանառության միջոցի ֆունկցիայից ծագում է նրա դրամական ձևը: Վոսկու կշռամասը, իդեալականորեն գոյություն ունի ապրանքների գնի կամ փողային անվան մեջ, պետք է կանգնեն վերջիններիս դիմաց շրջանառության պրոցեսում վորպես վոսկու համանուն կտոր կամ վորպես դրամ: Ինչպես և գների մասշտաբի սահմանումը՝ դրամահատումն ընկնում է պետության ձեռքը: Ազգային այն բազմազան համազգեստների մեջ, վոր կրում են իրենց վրա վոսկին ու արծաթը վորպես դրամներ, և վորոնց նրանք վերստին հանում են համաշխարհային շուկայում յերևալով՝ հայտաբերվում է ապրանքային շրջանառության ներքին կամ ազգային սֆերայի և համաշխարհային շուկայի սֆերայի միջև յեղած բաժանումը:

Հետևաբար, վոսկեդրամը և ձուլյ վոսկին իրարից տարբերվում են միմիայն արտաքինով, և վոսկին շարունակ կարող է մի ձևից փոխարկվել մյուս ձևի: Այն ճանապարհը վորի վրա վոտք է դնում վոսկին դրամատնից դուրս գալիս՝ վերջիվերջո նրան տանում է հալելու հալոցը: Ահա թե ինչպես. շրջանառության ժամանակ վոսկեդրամները մաշվում են, մեկը՝ շատ, մյուսը՝ քիչ: Վոսկեդրամի անունը և նրա վոսկե սուբստանցիայի քանակը, նրա անվանական և նրա ռեալ բովանդակությունն սկսում են քիչ առ քիչ տարբերվել: Համանուն վոսկեդրամներն ստանում են տարբեր արժեք, վորովհետև նրանք այժմ տարբեր կշիռ ունեն: Վոսկին, վորպես շրջանառության միջոց, շեղվում է վոսկուց վորպես գների մասշտաբից և միաժամանակ դադարում է լինել ապրանքների իրական էկվիվալենտը, վորոնց գները նա իրացնում է:

Յեթե փողի շրջանառությունն իսկ անջատում, բաժանում է դրամի ռեալ բովանդակությունը անվանական բովանդակությունից, անջատում է դրամի մետաղի գոյությունը, նրա ֆունկցիոնալ գոյությունից, ապա նրա մեջ արդեն թագնված է հնարավորություն՝ մետաղյա փողը իր դրամանիշի ֆունկցիայում փոխարինելու ուրիշ մատերյալով կամ պարզ սիմվոլով: Արծաթանիշների և պղնձանիշների, վորպես վոսկեդրամի տեղակալների դերը պատմականորեն բացատրվում է, մի կողմից, բոլորովին չնչին կշռաքանակով վոսկի կամ արծաթ կտրելու տեխնիկական դժվարություններով և, մյուս կողմից, այն հանգամանքով, վոր ցածր մետաղները բարձրերից առաջ,—արծաթը վոսկուց առաջ, պղինձը արծաթից առաջ,—ծառայել են վորպես արժեքի չափանիշ, և, հետևաբար, արդեն շրջանառություն են կատարել վորպես փող այն մոմենտին, յերբ ավելի ազնիվ մետաղը նրանց գահընկեց արեց: Նրանք փոխարինում են վոսկուն ապրանքային շրջանառության այն բնագավառներում, վորտեղ դրամը շրջում է ամենից արագ, և հետևաբար, ամենից արագ էլ մաշվում է, այսինքն, այնտեղ, վորտեղ գնման և վաճառման ակտերը շարունակ վերանորոգվում են ամենափոքր մասշտաբով: Վոսկու այդ արբանյակներին իր, վոսկու տեղում հաստատվելու գործում խանգա-



րելու համար՝ որենքը սահմանում է վճարումների շատ ցածր չափեր, վորոնց սահմաններում պարտադրորեն ընդունում են նրանց վոսկու փոխարեն: Այն հատուկ սֆերաները, վորտեղ շրջան են կատարում դրամների տարբեր տեսակներ, իհարկե, ներհյուսվում են միմյանց: Մանրադրամը յերևան է գալիս վոսկու կողքին՝ վոսկեդրամներից ամենամանրի կոտորակային մասերը վճարելու համար. վոսկին շարունակ մտնում է մանրածախ այս շրջանառության բնագավառը և նույնքան շարունակ էլ այնտեղից դուրս է շպրտվում մանրադրամի հետ փոխանակվելու միջոցով:

Արծաթանիշների և պղնձանիշների մետաղի բովանդակությունը կամայորեն սահմանվում է որենքով: Շրջանառության մեջ նրանք ավելի արագ են մաշվում, քան վոսկեդրամը: Այդ պատճառով նրանց դրամական ֆունկցիան փաստորեն դառնում է միանգամայն անկախ նրանց կշռից, այսինքն՝ ամեն մի արժեքից: Վոսկու դրամական գոյությունը վերջնականապես անջատվում է նրա արժեքի սուբստանցիայից: Շնորհիվ սրա՝ համեմատաբար վոչ մի արժեք չունեցող իրերը, որինակ, թղթիկները, հնարավորություն են ստանում նրա փոխարեն շրջելու վորպես դրամ: Մետաղի փողանիշների մեջ նրանց զուտ սիմվոլիկական բնույթը վորոշ աստիճանով տակավին թագնված է: Թղթափողի մեջ նա հանդես է գալիս կատարյալ ակներևությամբ: Ինչպես տեսնում ենք՝ դժվար է միայն առաջին քայլը:

Մենք այստեղ նկատի ունենք միայն պետական թղթափողերը՝ հարկադիր կուրսով նրանք աճում են անմիջականորեն մետաղի շրջանառությունից: Ընդհակառակը, վարկային փողերը յենթադրում են այնպիսի պայմաններ, վորոնք մեզ, քանի մենք մնում ենք պարզ ապրանքային շրջանառության սահմաններում, դեռ բոլորովին անծանոթ են: Միայն հարևանցիորեն նշենք, թե ճիշտ այնպես, ինչպես թղթափողը բառիս բուն իմաստով ծագում է փողի, վորպես շրջանառության միջոցի ֆունկցիայից, այնպես էլ վարկային փողի բնական արմատը գտնվում է փողի, վորպես վճարման միջոցի ֆունկցիայի մեջ:

Թղթափողը ներկայացնում է վոսկու նշան կամ փողի նշան: Նրա հարաբերությունը ապրանքային արժեքների հետ այն է, վոր վերջիններն իդեալորեն արտահայտվում են վոսկու այն քանակներով, վորոնք թղթիկների մեջ ստանում են զգայականորեն ըմբռնելի սիմվոլիկ արտահայտություն: Թղթափողն այնքան է արժեքի նշան, վորքան վոր նա ներկայացնում է վոսկու վորոշ քանակ, վորը, ինչպես և ամեն մի ապրանքային զանգված, միաժամանակ արժեքի քանակի:

Վերջապես, հարց է տրվում, թե ինչո՞ւ վոսկին կարող է փոխարինվել նրա իսկ՝ սեփական վոչ մի արժեք չունեցող նշաններով: Սակայն, ինչպես մենք տեսանք, նա կարող է փոխարինվել միայն այնքան, վորքան վոր շրջանառության դրամի կամ միջոցի իր ֆունկցիայում նա մեկուսանում է, ձեռք է բերում ինքնուրույնություն: Ճիշտ է, այս ֆունկցիայի առանձնացումը տեղի չունի առանձին վոսկեդրամների նկատմամբ, թեև նա արտահայտվում է նրանով, վոր մաշված դրամները շարունակում են մնալ շրջանառության մեջ:

վոսկու կտորները ներկայացնում են դրամներ կամ շրջանառության միջոցներ միայն մինչև այն ժամանակ, քանի նրանք իրապես գտնվում են շրջանառության մեջ: *Բայց այն, ինչ անկիրառելի յե առանձին վոսկեդրամների նկատմամբ, կիրառելի յե վոսկու այն նվազագույն զանգվածի նկատմամբ, վորը կարող է փոխարինվել թղթադրամով: Այդ զանգվածը շարունակ գտնվում է շրջանառության սֆերայում, անընդհատ* գործում է վորպես շրջանառության միջոց և այս պատճառով գոյություն ունի բացառապես վորպես այդ ֆունկցիայի կրող: *Հետևաբար, նրա շարժումը՝ ապրանքային մետամորֆոզ Ա–Փ–Ա.–ի հակադիր պրոցեսների սոսկ մշտական փոխարկումն է մեկը մյուսի, վորի մեջ ապրանքին հակադրվում է նրա փողային ձևը միմիայն նրա համար, վոր նորից անհետանա: Ապրանքի փոխանակային արժեքի ինքնուրույն արտահայտությունն այստեղ միայն անցողիկ մոմենտ է: Նա անհապաղ փոխարինվում է այլ ապրանքով: Հենց այն պատճառով այստեղ բավական է լինում փողի սոսկ սիմվոլիկ գոյությունը, վոր այս պրոցեսը շարունակ հեռացնում է փողը մի ձեռքից մի այլ ձեռք:* Փողի ֆունկցիոնալ գոյությունը կլանում է, այսպես ասած, նրա նյութական գոյությունը: Տվյալ դեպքում ներկայացնելով ապրանքային գների օբյեկտիվացված փութանցիկ արտացոլումը՝ փողը գոյություն ունի վորպես իր իսկ նշան, ուստի և կարող է փոխարինվել հասարակ նշաններով: *Միայն անհրաժեշտ է, վոր փողանիշը, վորպես այդպիսին, ստանա օբյեկտիվ — հասարակական նշանակելիություն (կարևորություն), և թղթե սիմվոլն ստանում է այն հարկադիր կուրսի միջոցով: Պետական այս հարկադրանքն ուժ ունի միայն տվյալ հասարակության սահմաններում, կամ ներքին շրջանառության ընագավառում, բայց սրա դիմաց՝ փողը միայն այստեղ է ամբողջապես լուծվում շրջանառության միջոցի կամ դրամի իր ֆունկցիայում, և, հետևաբար, թղթադրամի ձևով կարող է ստանալ գոյության՝ արտաքուստ իր մետաղե սուբստանցիայից մեկուսացած և մաքուր ֆունկցիոնալ ձևը:*[1])

Վոսկին շրջանառության միջոցի իր ֆունկցիայում ստանում է հատուկ տեսք, նա դառնում է դրամ: *Վորպեսզի նրա շրջանառությունը չդանդաղի տեխնիկական դժվարություններով՝ նրան կտրում են դրամների ձևով համապատասխան հաշվային փողի մասշտաբի: Վոսկու այն կտորները, վորոնց ոտոխսկը և ձևը ցույց են տալիս, թե նրանք պարունակում են վոսկու կշռաքանակներ, վոր նշանակում են փողի հաշվային անուններով,—ստեռլինգների ֆունտերով, շիլլինգներով և այլն, դրամներ են, ինչպես և վոսկու դրամական գնի սահմանումը՝ փողահատման տեխնիկական գործառնությունը պետության գործ է: Փողը վորպես դրամ, ինչպես և վորպես հաշվային փող՝ ստանում է* տեղական *և* քաղաքական *բնույթ, նա խոսում է տարբեր լեզուներով և կրում է ազգային տարբեր համազգեստներ:* Այս պատճառով այն սֆերան, վորտեղ փողը շրջանառություն է կատարում վորպես դրամ, իբրև տվյալ պետության սահմաններով շրջափակված ապրանքային ներքին շրջանառություն՝ տարբերվում է ապրանքային աշխարհի ամենաընդհանուր շրջանառությունից:

[1]) Капитал I, стр. 92—97



Սակայն՝ ձույլ վոսկին և դրամ վոսկին իրարից տարբերվում են վոչ ավելի չափով, քան տարբերվում են իրարից նրա դրամական անունը և կշռային անունը: *Այն, ինչ վերջին դեպքում անվան տարբերություն է՝ առաջին դեպքում միայն արտաքին ձևի տարբերություն է: Վոսկեդրամը կարող է դցվել հալոցը և նորից կփոխարկվի վոսկու* sans phrase (*առանց խոսակցության, ուղղակի*), *ինչպես և ընդհակառակը, բավական է, վոր ձույլ վոսկին ուղարկես դրամատուն, վորպեսզի նա դրամի ձև ստանա: Փոխարկումը և հակադարձ փոխարկումն արտաքին մի ձևից մի այլ ձևի հանդիսանում է զուտ տեխնիկական մի գործառնություն:*[1])

*Քանի՞ ոզմա տոմսերի համար կտրված թուղթ կարող է շրջանառություն կատարել վորպես փող: Այսպիսի հարցադրումն անհեթեթություն է:* Արժեք չունեցող նշանները արժեքի նշան են հանդիսանում այնքան, վորքան նրանք փոխարինում են վոսկուն շրջանառության պրոցեսի ներսում, իսկ նրանք փոխարինում են վոսկուն այնքան, վորքան վոսկին ինքը վորպես դրամ կմըտներ շրջանառության պրոցեսի մեջ,—*այս քանակը վորոշվում է նրա բուն արժեքով, յեթե տրված են ապրանքների փոխանակային արժեքները և նրանց մետամորֆոզների արագությունը: Յեթե 14 միլիոն ֆունտ ստերլինգը (այս թիվն է ընդունված անգլիական բանկային օրենսդրության մեջ, բայց վոչ թե դրամի, այլ վարկային փողի համար) ներկայացներ այն մակարդակը, վորից ցածր յերբեք չի ընկնում շրջանառությունը տվյալ յերկրում, ապա կարող կլիներ շրջանառվել 14 միլիոն թղթե տոմսեր, վորոնցից յուրաքանչյուրը կներկայացներ 1 ֆունտ ստեռլինգի արժեքանիշ: Յեթե վոսկու արժեքն ընկնի կամ բարձրանա այն պատճառով, վոր պակասել կամ ավելացել է նրա արտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակը, ապա միևնույն ապրանքային զանգվածքի փոխանակային անփոփոխ արժեքի դեպքում՝ շրջանառություն կատարող միաֆունտանի տոմսերի քանակը կավելանա կամ կպակասի հակադարձ հարաբերությամբ վոսկու արժեքի փոփոխության նկատմամբ: Յեթե վոսկին իբրև արժեքի չափանիշ փոխարինվեր արծաթով, ապա,—արծաթի արժեքի և վոսկու արժեքի 1 : 15 հարաբերությամբ և այն պայմանով, վոր առաջիկայում յուրաքանչյուր տոմս պետք է ներկայացնի արծաթի նույն քանակը, ինչքան առաջ վոսկու քանակ էր ներկայացնում,—14 միլիոն տոմսի փոխարեն այժմ շրջանառության մեջ պետք է լինեյին 210 միլիոն միաֆունտանի տոմսեր:* Հետևաբար, թղթատոմսերի քանակը վորոշվում է վոսկե փողի այն քանակով, վորին փոխարինում են նրանք շրջանառության մեջ, և վորովհետև թղթատոմսերն արժեքի նշաններ են միայն այնքան, վորքան նրանք փոխարինում են փողին, ուստի և նրանց քանակը վորոշվում է պարզապես նրանց քանակով: Այսպիսով, այն ժամանակ, յերբ

[1]) Маркс, «К критике» изд. 1931 г. стр. 175

շրջանառության մեջ գտնվող վոսկու քանակը կախված է ապրանքային գներից՝ շրջանառություն կատարող թղթատոմսերի արժեքը, ընդհակառակը, կախված է բացառապես նրանց սեփական քանակից:

Պետության միջամտությունը, վորը բաց է թողնում թղթադրամ հարկադիր կուրսով,—խոսք միայն այդպիսի թղթադրամի մասին էլ այստեղ մենք խոսում ենք,—առաջին հայացքից կարծես թե վոչնչացնում է տնտեսական որենքները: Պետությունը, վորը դրամական գնով վոսկու վորոշ կշռաքանակին միայն տալիս էր բացահայտ անուն, իսկ դրամահատության ժամանակ վոսկու վրա միայն դնում էր իր շտեմպելը՝ այժմ, ըստ յերևույթին, իր շտեմպելի մոգական ուժով թղթի կտորները դարձնում է փող: Վորովհետև թղթե տոմսերը հարկադիր կուրս ունեն, ուստի վոչ վոք չի կարող խանգարել պետությանը, վոր շրջանառության մեջ խցկի այդ տոմսերի կամայականորեն մեծ քանակ և տպի նրանց վրա դրամական ուզած անունները, որինակ, 1 ֆունտ ստերլինգ, 5 ֆունտ ստերլինգ, 20 ֆունտ ստերլինգ: Մի անգամ շրջանառության մեջ ընկած տոմսը չի կարող այնտեղից դուրս շպրտվել, վորովհետև տվյալ պետության սահմանային սյուները կասեցնում են նրա շարժումը, իսկ շրջանառությունից դուրս նա կորցնում է ամեն մի արժեք, ինչպես սպառողական, այնպես և փոխանակային արժեքը: Կտրված իր ֆունկցիոնալ կեցությունից՝ նա դառնում է արժեքազուրկ թղթի մի կտոր: Սակայն, պետության այս իշխանությունը միայն թվացող է: Պետությունը կարող է շրջանառության մեջ գցել ամեն քանակով թղթատոմսեր — դրամական ամեն տեսակի անուններով, բայց այս մեխանիկական ակտով վերջ է դրվում նրա հսկողությանը: Շրջանառության կլանած արժեքանիշները կամ թղթադրամները ընկնում են այն իմմանենտ որենքների իշխանության ներքո:

Յեթե 14 միլիոն ֆունտ ստերլինգը ներկայացներ վոսկու մի գումար, վոր անհրաժեշտ է ապրանքային շրջանառության համար, իսկ պետությունը շրջանառության մեջ գցեր 210 միլիոն թղթատոմսեր՝ յուրաքանչյուրը 1 ֆունտ ստերլինգ անունով, ապա այդ 210 միլիոն տոմսերը կդառնային ընդհանուր գումարով 14 միլիոն ֆունտ ստերլինգի ներկայացուցիչներ: Այստեղ կպատահեր նույն բանը, ինչ կպատահեր, յեթե պետությունը միաֆունտանի տոմսերը դարձներ մի այլ մետաղի ներկայացուցիչներ, վորի արժեքը 15 անգամ ցածր է վոսկու արժեքից կամ դարձներ այնպիսի քանակով վոսկու ներկայացուցիչներ, վորի կշիռը 15 անգամ պակաս է առաջվա քանակից: Վոչինչ չէր փոխվի, բացի գների մասշտաբի անունից, իսկ այդ անունը, բնականաբար, կրում է պայմանական բնույթ, միևնույն է՝ փոխվո՞ւմ է արդյոք նա անմիջականորեն, դրամի պարունակության փոփոխությունից, թե՞ անուղղակի՝ թղթատոմսերի թիվն այն չափով ավելանալուց, վորը համապատասխանում է նոր, ավելի ցածր մասշտաբին: Վորովհետև ֆունտ ստերլինգի անունն այժմ նշանակում է վոսկու 15 անգամ պակաս քանակ, ուստի ապրանքային բոլոր գները կբարձրանային 15 անգամ, և 210 միլիոն միաֆունտանի տոմսերն այժմ, իրոք, նույնքան անհրաժեշտ կլինեյին, վորքան առաջ 14 միլիոնը:



նույն չափով, ինչ չափով վոր կավելանար արժեքանիշների ընդհանուր գումարը՝ կավելանար և վոսկու այն քանակը, վոր ներկայացնում է յուրաքանչյուր նշան: Գների բարձրացումը կլիներ միայն ռեակցիա շրջանառության պրոցեսի, վորը հարկադրաբար հավասարեցնում է արժեքանիշները վոսկու այն քանակին, վորին նրանք փոխարինում են իրենց շրջանառությամբ[1]):

## ՓՈՂԸ ՎՈՐՊԵՍ ԳԱՆՁ

Փողի շրջանառությունն ապրանքների մետամորֆոզի կամ ձևի այն փոփոխության արտահայտությունն է միայն, վորով կատարվում է իրերի հասարակական փոխանակությունը: Նայած, մի կողմից, շրջանառության մեջ գտնվող ապրանքների գների գումարի փոփոխմանը կամ ապրանքների միաժամանակյա մետամորֆոզների չափի փոփոխմանը, և, մյուս կողմից, նրանց ձևերի փոփոխման տվյալ արագությանը՝ շրջանառության մեջ գտնվող փողի քանակը պետք է շարունակ ավելանա կամ պակասի: Այս հնարավոր է շնորհիվ միայն այն հանգամանքի, վոր տվյալ յերկրում յեղող փողի ընդհանուր քանակը գտնվում է փոփոխվող հարաբերության մեջ շրջանառության մեջ գտնվող փողի հանդեպ: Այս պայմանը կատարվում է գանձի առաջանալու միջոցով: Յեթե գներն ընկնում են, կամ շրջանառության արագությունն աճում է, ապա գանձերի ռեզերվուարները կլանում են փողի՝ շրջանառությունից դուրս ընկած մասը. յեթե, ընդհակառակը, գները բարձրանում են, կամ շրջանառության արագությունը պակասում է, ապա գանձերը բացվում են և համապատասխան քանակով ելի հոսում են շրջանառության մեջ:

Շրջանառություն կատարող փողի վոսկրացումը գանձերի ձևով և գանձերի հոսումը շրջանառության մեջ — սա շարունակ փոփոխվող և տատանվող մի շարժում է, վորում այս կամ այն ուղղության գերակշռությունը վորոշվում է բացառապես ապրանքային շրջանառության տատանումներով: Հետևաբար, գանձերը շրջանառություն կատարող փողի մակընթացության և տեղատվության կանալներն են, այնպես վոր՝ իբրև դրամ միշտ շրջանառություն է կատարում մի այնպիսի քանակով փող, վորն անհրաժեշտ է շրջանառության անմիջական պահանջների բավարարման համար: Յեթե ամբողջ շրջանառության չափերը մեկեն ընդլայնվում են, և գնման ու վաճառքի շարժման միասնությունը գերակշռում է, սակայն, այնպես, վոր իրացվելիք գների ընդհանուր գումարն աճում է ավելի արագ, քան փողի շրջանառության արագությունը, ապա գանձերը նկատելիորեն պակասում են, իսկ յեթե ընդհանուր շարժումը նշանակելի չափով թուլանում է, կամ գնումների և վաճառումների շարժումը դանդաղում է՝ այն ժամանակ շրջանառության միջոցները նշանակելի քանակությամբ վոսկրանում են վորպես փող, և գանձերի ռեզերվուարներն իրենց միջին մակարդակից շատ ավելի յեն լցվում: Զուտ

[1]) Маркс. «К критике» стр. 186—188

մետաղի շրջանառություն ունեցող յերկրներում կամ անզարգացած արտադրության աստիճանի վրա գտնված յերկրներում գանձերը չափազանց մանրացված և ցրված են ամբողջ յերկրում, մինչդեռ զարգացած բուրժուական յերկրներում նրանք կենտրոնացվում են բանկային ռեզերվուարներում։ Չպետք է շփոթել գանձը դրամական ռեզերվի հետ, վորն ինքը կազմում է չարունակ շրջանառության մեջ գտնվող փողի ընդհանուր քանակի բաղկացուցիչ մասը, մինչդեռ ակտիվ հարաբերությունը գանձի և շրջանառության միջոցների միջև յենթադրում է փողի ընդհանուր քանակի պակասում կամ ավելացում։ Վոսկե և արծաթե ապրանքները, ինչպես մենք տեսանք, նույնպես կազմում են կանալ՝ ավելի մետաղների տեղատվության համար և ծածուկ աղբյուր՝ նրանց մակընթացության համար[1])։

Ապրանքային շրջանառությունն իր զարգացման առաջին իսկ սաղմերից սկսած կյանքի յե կոչում անհրաժեշտություն և բուռն ձգտում՝ իր մոտ պահելու առաջին մետամորֆոզի արդյունքը, ապրանքի փոխարկված ձևը, կամ նրա փողային տիկնիկը։ Ապրանքը նրա համար չեն վաճառում, վոր գնեն այլ ապրանքներ, այլ նրա համար, վոր փոխարինեն ապրանքային ձևը փողայինով։ Իբրև փոխանակության ժամանակ միջնորդական պարզ ոգակից ձևի այդ փոխումը դառնում է ինքնանպատակ։ Այսպիսով, ապրանքի խորթացված ձևը արգելքների յե հանդիպում իր ֆունկցիայի, վորպես ապրանքի բացարձակ խորթացվող ձևի կամ վորպես նրա փութանցիկորեն սոսկ փողային ձևի՝ ճանապարհին։ Միաժամանակ փողը քարանում է գանձի ձևով և ապրանքավաճառը դառնում է գանձահավաք։ Այն է, ապրանքային շրջանառության սկզբնական շրջանում, փողի յե փոխարկվում սպառողական արժեքների միայն ավելցուկը։ Այսպիսով, վոսկին ու արծաթն իրենք իրենց դառնում են ավելցուկի կամ հարաբերության հասարակական արտահայտություն։ Գանձի կուտակման այս նայիվ ձևն ամրանում է այնպիսի ժողովուրդների մոտ, վորտեղ արտադրության ավանդական, սեփական սպառման համեմատ գործող յեղանակին համապատասխանում է պահանջների հաստատուն սահմանված շրջան։ Ապրանքային շրջանառության ընդլայնումով աճում է իշխանությունը փողի, հարստության բացարձակորեն հասարակական այս ձևի, վորը միշտ գտնվում է մարտական պատրաստության վիճակում։ «Վոսկին զարմանալի բան է! Ով տիրանում է նրան, նա տեր է այն ամենի, ինչ ուզում է նա։ Վոսկին նույնիսկ կարող է բաց անել հոգիների առջև դրախտի ճանապարհը» (Կոլումբոս, Յամայկայից գրած նամակից, 1503 թ.)։

Վորովհետև փողի արտաքինից չի կարելի իմանալ, թե ինչն է փոխարկվել փողի, ապա փողի յե փոխարկվում ամեն բան՝ ինչպես ապրանքները, այնպես և վոչ ապրանքները։ Ամեն ինչ դառնում է առ ու ծախքի առարկա։

[1]) К. Маркс, «К кригике» изд. 1931 г. стр. 205—206



Բայց փողն ինքն ապրանք է, արտաքին իր, վորը կարող է դառնալ ամեն մարդու մասնավոր սեփականություն։ Հասարակական ուժն այսպիսով դառնում է մասնավոր անձի մասնավոր ուժ։ Անտիկ հասարակությունն այս պատճառով անզոսնում է վորպես մի դրամ, վորի հետ փոխվում է նրա կյանքի տնտեսական և բարոյական ամբողջ կերտվածքը։ Արդի հասարակությունը, վորը տակավին իր մանկության օրերին «դուրս քաշեց Պլուտոսին (հարստության աստծուն) մազերից բռնած՝ յերկրի խորքերից», վողջունում է վոսկին վորպես կենսական իր ամենախնդիր սկզբունքի փառահեղ մարմնացում։

Գանձ կուտակելու ձգտումն իր բնույթով անչափ է։ Վորակապես կամ իրենց ձևով փողը սահման չունի, այսինքն՝ հանդիսանում է նյութական հարստության ամենաընդհանուր ներկայացուցիչը, վորովհետև նա անմիջականորեն կարող է դառնալ ամեն տեսակի ապրանք։ Բայց միաժամանակ փողային ամեն մի ռեալ գումար քանակապես սահմանափակված է, հանդիսանում է գնման միջոց սահմանափակ գնողունակությամբ։ Այս հակասությունը փողի քանակական սահմանի և վորակական անսահմանության միջև ստիպում է գանձ հավաքողին նորից և նորից ձեռնարկելու կուտակման սիզիֆյան աշխատանքի (մինչև անվերջություն վերսկսվող աշխատանք)։ Գանձահավաքը զգում է իրեն վորպես մի մեծ նվաճող, վորն ամեն մի նոր յերկիր նվաճելիս նվաճում է միայն մի նոր սահման։

Վոսկին իր մոտ վորպես փող, այսինքն՝ վորպես գանձ ստեղծելու էլեմենտ պահելու համար՝ պետք է արգելակել նրա շրջանառությունը, նրա, վորպես գնման միջոցի՝ լուծման սպառման միջոցների մեջ։ Հետևաբար, գանձ ստեղծողն իր մարմնի պահանջները զոհաբերում է վոսկե ֆետիշին։ Նա լուրջ վերցնում է հրաժարիմքի ավետարանը։ Բայց, մյուս կողմից, նա կարող է ստանալ փողի ձևով շրջանառությունից միայն այն, ինչ տալիս է նա շրջանառությանն ապրանքի ձևով։ Նա վորքան շատ է արտադրում, այնքան շատ կարող է վաճառել։ Աշխատասիրություն, խնայողություն և ժլատություն — ահա, հետևաբար, նրա հիմնական առաքինությունները. շատ վաճառել, քիչ գնել — սրանումն է նրա ամբողջ քաղաքատնտեսությունը։

Գանձի անմիջական ձևի հետ միասին զարգանում է նրա գեղարվեստական (եսթետիկական) ձևը վոսկե և արծաթե ապրանքներին, վորպես շքեղության առարկաների տիրանալը։ Վերջինս աճում է բուրժուական հասարակության հարստության աճման զուգընթաց։[1])

## ՎՃԱՐԵԼԱՄԻՋՈՑ

Ապրանքային շրջանառության՝ մեր տված անմիջական ձևի մեջ արժեքի միևնույն մեծությունը միշտ յեղել է յերկակի. ապրանքի ձևով՝ մի բևեռում, փողի ձևով՝ հակադիր բևեռում։ Այս պատճառով ապրանքատերերը միմյանց հետ շփման մեջ են մտնում վորպես պատրաստի փոխադարձ եկ-

[1]) Капитал I, стр. 98—102

վիվալենտների ներկայացուցիչներ: Սակայն ապրանքային շրջանառության
զարգացմամբ զարգանում են պայմաններ, վորոնց դեպքում ապրանքների
խորթացումը ժամանակով անջատվում է նրանց գնի իրացումից: Այստեղ
բավական կլինի նշել այդ պայմաններից միայն ամենատարրականները: Իր
արտադրության համար ապրանքների մի տեսակը պահանջում է ավելի յեր-
կար ժամանակ, մյուսն՝ ավելի կարճ ժամանակ: Տարբեր ապրանքների ար-
տադրությունը կապված է տարվա տարբեր յեղանակների հետ: Մի ապրանք
ծնվում է հենց իր շուկայի մոտ, մյուսը պետք է ճանապարհորդություն կա-
տարի դեպի հեռավոր շուկա: Այս պատճառով մի ապրանքատեր վորպես
վաճառորդ կարող է հանդես գալ ավելի վաղ, քան մյուսը՝ վորպես գնորդ:
Միևնույն գործարքների հաճախակի կրկնության դեպքում միևնույն անձերի
միջև՝ ապրանքների վաճառման պայմանները կարգավորվում են նրանց ար-
տադրության պայմաններով: Մյուս կողմից, ապրանքների վորոշ տեսակից,
որինակ տնից ոգտվելը՝ կարող է վաճառվել վորոշ ժամանակամիջոցով: Այս
դեպքերում՝ տվյալ սպառողական արժեքի գնորդը միմիայն այս ժամկետը
լրանալուց հետո կարող է այդ արժեքը փաստորեն ստանալ — այն իր տնո-
րինության տակ: Նա այս պատճառով ապրանքը գնում է ավելի վաղ, քան
վճարում է նրա համար: Մի ապրանքատերը վաճառում է կանխիկ ապրանք,
մյուսը գնում է այդ ապրանքը վոչ թե կանխիկ փողով, այլ վորպես փողի
ներկայացուցիչ ընդհանրապես կամ վորպես ապագա փողի ներկայացուցիչ:
Վաճառորդը դառնում է վարկատու, գնորդը՝ պարտապան: Վորովհետև ապ-
րանքի մետամորֆոզը կամ նրա արժեքի ձևի զարգացումը, այստեղ նոր բնույթ
ստացավ, ուստի և փողն ստանում է այլ ֆունկցիա: Նա դառնում է վճարե-
լամիջոց:

Վարկատուի և պարտապանի միջև այստեղ հարաբերությունը ծագում է
ապրանքային պարզ շրջանառությունից: Վերջինիս ձևի փոփոխությունը վա-
ճառորդի և գնորդի վրա դնում է այս նոր կնիքը: Հետևաբար, սկզբնապես
բոլորովին նույնպիսի փութանցիկ դերեր է սա, վոր փոփոխակի կատարում
են շրջանառության միևնույն գործիչները, ինչպես և վաճառորդի և գնորդի
դերերը: Սակայն նրանց հակադրությունն սկզբից և եթ այնքան էլ անմեղ
բնույթ չի կրում և հայտաբերում է ավելի հաստատուն բյուրեղացման ունա-
կություն: Սակայն նույն հարաբերությունները կարող են ծագել և անկախ
ապրանքային շրջանառությունից: Այսպես, որինակ, անտիկ աշխարհում
դասակարգային պայքարը տեղի յե ունենում առավելապես պարտատիրոջ և
պարտապանի միջև պայքարի ձևով, և Հռոմում վերջանում է պարտապան
պլեբեյի կործանումով, վորը փոխարինվում է ստրուկով: Միջին դարերում
նույն պայքարը վերջանում է պարտապան—ֆեոդալի կործանումով, վորը
կորցնում է իր քաղաքական իշխանությունը վերջինիս տնտեսական բազան
կորցնելով: Սակայն փողային ձևը — իսկ չէ՞ վոր պարտապանի հարաբերու-
թյունը վարկատուի հանդեպ ունի փողային հարաբերության ձև — այստեղ
իրենով անդրադարձնում է կյանքի խորքում ընկած տնտեսական պայման-
ների հակամարտությունը:



Վճարման միջոցը մտնում է շրջանառության պրոցես, բայց միայն
նրանից հետո, յերբ ապրանքն արդեն դուրս է յեկել նրանից: Փողն այլևս
չի սպասարկում պրոցեսին: Փողն ինքնուրույնորեն ավարտում է այդ պրո-
ցեսը վորպես փոխանակային արժեքի բացարձակ (աբսոլյուտ) կեցություն
կամ վորպես ամենաընդհանուր ապրանք: Վաճառորդն ապրանքը փոխարկեց
փողի, վորպեսզի վերջինիս միջոցով բավարարի վորևէ պահանջ, գանձի
ստեղծարարը՝ ապրանքը փողի ձևով պահպանելու (консервировать) հա-
մար, պարտապան —գնորդը՝ վճարելու հնարավորություն ունենալու հա-
մար: Յեթե նա չվճարի՝ նրա գույքը կենթարկվի հարկադիր վաճառման:

Հետևաբար, ապրանքի փոխարկումը նրա արժեքի պատկերի, փողի՝ այժմ
դառնում է հասարակական մի անհրաժեշտություն, վորն ստիպողաբար ծա-
գում է ապրանքարտադրողի մոտ՝ անկախ նրա պահանջներից և անձնական
հակումներից: Այս անհրաժեշտությունն առաջանում է շրջանառության պրո-
ցեսի հարաբերություններից իսկ:

Շրջանառության պրոցեսի յուրաքանչյուր տվյալ շրջանում այն պար-
տավորությունները, վորոնց վերաբերմամբ հասնում է վճարման ժամկետը,
ներկայացնում են այն ապրանքների գների գումարը, վորոնց վաճառումը
կյանքի յե կոչել այդ պարտավորությունները: Փողի այն մասսան, վոր ան-
հրաժեշտ է այսպիսի մի գումարի գների իրացնելու համար, կախված է ամե-
նից առաջ վճարման միջոցների շրջանառության արագությունից: Նա վորոշ-
վում է յերկու հանգամանքով, տարբեր պարտապանների և պարտատերերի
միջև յեղած փոխադարձ կապով,—որինակ, հնարավոր է, վոր A, ստանա-
լով փող իր պարտապան B-ից, այդ փողը վճարում է իր վարկատու C-ին և
այլն,— և վճարման ժամկետների միջև յեղած ժամանակամիջոցի տևակա-
նությամբ: Միմյանց հաջորդող վճարումների կամ հետին թվով կենսագործ-
վող մետամորֆոզների շղթան եյապես տարբերվում է մեր կողմից նախորոք
քննարկված մետամորֆոզների շարքերի հյուսվածքից: Շրջանառության մի-
ջոցների շարժման մեջ վոչ միայն արտահայտվում է վաճառորդների և գնորդ-
ների միջև յեղած կապը, այդ իսկ կապը ծագում է միայն փողային շրջա-
նառության մեջ և նրա հետ միասին: Ընդհակառակը, վճարման միջոցների
շրջանառությունն իրենով արտահայտում է հասարակական վորոշ կապ, վոր
առաջուց գոյություն է ունեցել պատրաստի վիճակում:

Գնման կամ վաճառքի ակտերի միաժամանակությունը և տարածական
դոյությունը սահմանափակում են դրամների մասսայի փոխհատուցման հնա-
րավորությունը՝ նրանց շրջանառության արագությունը մեծացնելու միջո-
ցով: Ընդհակառակը, այս իսկ հանգամանքներն ստեղծում են նոր լծակ՝
վճարման միջոցների վրա խնայողություն կատարելու համար: Վճարումները
միևնույն տեղում կենտրոնանալու հետ միասին բնականորեն զարգանում են
հատուկ հիմնարկներ և յեղանակներ՝ նրանց փոխադարձ մարելու համար:

Փողի, վորպես վճարման միջոցի ֆունկցիան իր մեջ պարունակում է
անմիջական հակասություն: Վորքան վոր վճարումները հավասարեցվում են՝

փողը գործում է սոսկ իդեալականորեն, որպես հաշվային փող կամ արժեքի չափանիշ: *Վորքան վոր կարիք է լինում կատարելու իրական վճարումներ՝ փողը հանդես է գալիս վոչ թե վորպես շրջանառության միջոց, վոչ թե վորպես փութանցիկ միջնորդ իրերի փոխանակության մեջ,* այլ վորպես հասարակական աշխատանքի անհատական մարմնավորում, վորպես փոխանակային արժեքի ինքնուրույն կեցություն կամ վորպես բացարձակ ապրանք: Այս հակասությունն առանձին ուժով հայտագործվում է արդյունաբերական և առևտրական ճգնաժամերի այն մոմենտին, վորը կոչվում է փողային ճգնաժամ: *Վերջինս հնարավոր է միայն այնտեղ, վորտեղ միմյանց հաջորդող վճարումների շղթան և նրանց արհեստական հավասարեցման սիստեմը հասել են կատարյալ զարգացման: Այդ մեխանիզմի ընթացքի ընդհանուր խախտումների ժամանակ, ինչից էլ առաջ յեկած լինեն այդ խախտումները՝ փողը հանկարծակի և անմիջականորեն հաշվային փողի զուտ իդեալական ձևից փոխարկվում է հնչուն դրամի: Այժմ նա չի կարող փոխարինվել սովորական ապրանքով: Ապրանքի սպառողական արժեքը կորցնում է իր արժեքը, և ապրանքի արժեքը չքանում է նրա արժեքի սեփական ձևի դիմաց: Տակավին յերեկ արբած արդյունաբերության բուրժուան ծաղկմամբ դիտում էր փողը լուսավորչական փիլիսոփայության մշուշի միջով և հայտարարում էր այն դատարկ յերևություն՝ «Միայն ապրանքն է փող»: «Միայն փողն է ապրանք!»— աղաղակում են այսօր նույն այդ բուրժուաները համաշխարհային շուկայի բոլոր ծայրերում:* Ինչպես վոր յեղջերուն ծարավ է սառը ջրի, այնպես և բուրժուական հոգին այժմ ծարավի յէ փողի, այս միակ հարստության: Ճգնաժամերին ապրանքի և նրա արժեքի մարմնացման, փողի միջև յեղած հակադրությունը հասնում է բացարձակ հակասության աստիճանի: Այդ պատճառով փողի արտահայտման ձևն այստեղ անխտիր է: *Փողի սովն իր լարվածությունը չի փոխում նրանից, թե հարկավոր է լինում վճարել վոսկով կամ վարկային փողով, որինակ, բանկնոտով:*

Վարկային փողն անմիջականորեն ծագում է փողի, վորպես վճարման միջոցի ֆունկցիայից, *ընդամին՝ վաճառված ապրանքների համար տրված պարտային ստորագրությունների իրենց հերթին սկսում են շրջանառության կատարել՝ փոխանցելով պարտային պահանջները մի անձից այլ անձի վրա: Մյուս կողմից, վարկային գործի լայնացմամբ նույն աստիճանով լայնանում է և փողի, վորպես վճարման միջոցի ֆունկցիան:* Իր այս ֆունկցիայով փողն ստանում է գոյության սեփական ձևեր, *վորոնցով նա իր համար տեղ է գտնում առևտրական խոշոր գործարքների սֆերայում, մինչդեռ վոսկե և արծաթե դրամը հետ է մղվում առավելապես մանր առևտրի սֆերան:*

Ապրանքային արտադրության զարգացման վորոշ աստիճանում և բավականաչափ լայն չափերի հասնելու ժամանակ փողի, վորպես վճարման միջոցի ֆունկցիան դուրս է գալիս ապրանքային շրջանառության սֆերայի սահմաններից: *Փողը դառնում է ամենաընդհանուր ապրանք՝ պայմանագրային ամեն տեսակի պարտավորությունների մեջ:*



*Փողի, վորպես վճարման միջոցի ֆունկցիայի զարգացումն առաջացնում է վճարումների ժամկետներից առաջ փող կուտակելու անհրաժեշտություն: Մինչդեռ իրրև դանձ հավաքելը, վորպես հարստացման ինքնուրույն ձև, անհետանում է բուրժուական հասարակության զարգացման զուգընթաց, նա, ընդհակառակը, աճում է վերջինիս հետ՝ վճարման միջոցների պահեստի ֆոնդ կուտակելու ձևով*[1]:

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՂ

*Դուրս գալով ներքին շրջանառության սահմաններից՝ փողն իր վրայից ընկնում է այդ սֆերայում իր ստացած՝ գների մասշտաբի լոկալ ձևերից— դրամի, մանրադրամի, արժեքանիշերի ձևերը— և դարձյալ հանդես է գալիս ազնիվ մետաղների ձուլերի իր սկզբնական ձևով: Համաշխարհային առևտրի ապրանքները թատերաբեմում ունիվերսալ կերպով ծավալում են իրենց արժեքը: Այդ պատճառով այստեղ ևս նրանց արժեքի ինքնուրույն մարմնավորումը կանգնած է նրանց դիմաց վորպես փող, համաշխարհային փող: Միայն համաշխարհային շուկայումն է, վոր փողը կատարելապես զարգացնում է ապրանքի իր ֆունկցիան, վորի նատուրալ ձևը միաժամանակ մարդկային* in abstracto *(աբստրակտ) աշխատանքի իրացման անմիջական հասարակական ձևն է: Նրա գոյության յեղանակը դառնում է համանիշ նրա գաղափարին:*

*Ներքին շրջանառության սֆերայում միայն վորևէ մեկ ապրանք կարող է ծառայել վորպես արժեքի չափ, հետևաբար և վորպես փող: Համաշխարհային շուկայում իշխում է արժեքի յերկու չափ՝ վոսկով և արծաթով:*

*Համաշխարհային փողը գործում է վորպես ամենաընդհանուր վճարելամիջոց, միջոց, վորպես ամենաընդհանուր գնողական միջոց և վորպես առհասարակ հասարակական հարստության (անգլիերեն՝* universal wealth*) բացարձակորեն մատերիալիզացիա:*

*Վորպես միջազգային գնողական միջոց վոսկին և արծաթը ծառայում են գլխավորապես այն ժամանակ, յերբ հանկարծակի խախտվում է դանադան ազգերի միջև յեղած իրերի փոխանակության սովորական հավասարակշռությունը: Վերջապես, նրանք գործում են վորպես հարստության բացարձակորեն հասարակական մատերիալիզացիան այնտեղ, վորտեղ բանը վոչ թե գնման կամ վճարման մասին է, այլ հարստությունը մի յերկրից մի այլ յերկիր փոխադրելու մասին է, և վորտեղ այդ փոխադրումը անմիջականորեն ապրանքային ձևով անկարելի յէ՝ կամ աննպաստ կոնյունկտուրաների (փոփոխվող վիճակների) պատճառով կամ այն պատճառով, վոր հարստության փոխադրման նպատակն իսկ տվյալ դեպքում պահանջում է փողային ձև:*

*Ինչպես ներքին շրջանառության, այնպես և համաշխարհային շուկայի շրջանառության համար յուրաքանչյուր յերկիր պահեստի վորոշ ֆոնդի կա-*

[1]) Капитал I, стр. 103—111

րիք ունի: Հետևաբար, դանձի ֆունկցիաները ծագում են մի մասով փողի, վորպես ներքին շուկայում շրջանառության և վճարման միջոցի ֆունկցիայից, մի մասով էլ՝ նրա, վորպես համաշխարհային փողի ֆունկցիայից: Վերջին դերի համար միշտ պահանջվում է փողային իրական ապրանք, վոսկու և արծաթի մարմինը, վորի պատճառով Ջեմս Ստյուարտը վոսկին ու արծաթը բնորոշում է ի տարբերումն նրանց լոկալ (մեկուսիկ) տեղակալներից՝ վորպես money of the word («համաշխարհային փողեր»):

Բուրժուական զարգացած արտադրությամբ յերկրները բանկային ռեզերվուարներում մեծ քանակով կուտակվող դանձերը սահմանափակում են նրանց սպեցիֆիկ ֆունկցիաների համար անհրաժեշտ մինիմումով: Վորոշ բացառություններով՝ դանձերի՝ միջին մակարդակի համեմատությամբ չափից անց կուտակումը վկայում է ապրանքային շրջանառության թուլության կամ ապրանքային մետամորֆոզների ընթացքի դադարման մասին[1]):

ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Վո՞րն է փողի էությունը Մարքս-լենինյան հասկացողությամբ:

2. Ի՞նչ դեր է կատարում փողը ապրանքային տնտեսության մեջ:

3. Ապրանքային տնտեսության կապիտալիստականի փոխարկվելու պրոցեսում ի՞նչ դեր է խաղում փողը:

4. Վորո՞նք են փողի գլխավոր ֆունկցիաները և ինչո՞վ են նրանք իրարից տարբերվում:

5. Ինչո՞ւ և ինչպե՞ս է ծագել թղթադրամը:

6. Ինչո՞ւ փողն անհրաժեշտ է խորհրդային տնտեսության մեջ և նրա վորակային տարբերությունը կապիտալիստական փողից:

7. Տվեք փողային ֆետիշիզմի մարքսիստական բացատրություն և այդ կապակցությամբ յերեան հանեք բուրժուական և ռևիզիոնիստ էկոնոմիստների վոչ գիտական տեսակետները:

8. Ինչպե՞ս է արտահայտվում աջ վտանգը և «ձախ» խոտորումները խորհրդային փողի լուսաբանման բնագավառում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. К. Маркс.—«Капитал» т. I стр. 52—115
2. К. Маркс.—«К критике» стр. 130—227
3. Розенберг.—«Коментарии к I т. «Капитал», стр. 81—98


[1]) Капитал I, стр. 111—115

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔ

## ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Նախորդ թեմաների ուսումնասիրությունից մենք հանգանք հետևյալ յեզրակացության.

1. Վոր կապիտալիստական արտադրությունն ամենից առաջ ապրանքային արտադրություն է, վորում իշխում են տարերային տնտեսական օրենքները:

2. Այդ օրենքներն իրենց ուռուցիկ արտահայտությունն են գտնում գլխավորապես արժեքի օրենքի մեջ: Արժեքի օրենքը վոչ թե ապրանքա-կապիտալիստական հասարակության հավասարակշռության, այլ վերջինիս ծագման, զարգացման և անկման օրենքն է:

3. Յեվ վերջապես, վոր մարդկանց արտադրական հասարակական հարաբերությունները կապիտալիստական տնտեսության մեջ ձեռք են բերում իրային կեղև, վորոնք արժեքային հարաբերությունների զարգացման վորոշ աստիճանների վրա հանդես են գալիս փողային ձևով: Յեվ այս իսկ իրողությունն ավելի քան խորհրդավոր է դարձնում ապրանքային ֆետիշիզմը: Հավելյալ արժեք կոչված գլխում մենք պետք է ծանոթանանք այդ իրողության հետ, թե ինչպես է փողը վերածվում կապիտալի և միաժամանակ բացահայտենք հավելյալ արժեքի աղբյուրն ու սոցիալ-դասակարգային բնությունը:

Այժմ արդեն վեր է ամեն կասկածից, վոր արժեքի զարգացման ձևերը իրականում արտահայտում են պատմական զարգացման կոնկրետ ընթացքն իր բազմապիսի պատահական ու օրինական յերանգավորումներով:

Ապրանքային շրջանառությունը կապիտալ յելակետային մոմենտն է,— գրում է Կ. Մարքսը: Յեվ կապիտալը հանդես է գալիս այնտեղ ու այն ժամանակ, յերբ և վորտեղ ապրանքային արտադրությունը, ինչպես նաև շրջանառությունն ու միջազգային առևտուրը հասնում են զարգացման մի վորոշ աստիճանի:

Ապրանքային հարաբերությունների՝ ապրանքի անալիզը ցույց է տալիս, վոր փողը վորպես այդպիսին, հանդիսանում է ապրանքային արտադրության տնտեսական վերջին արդյունքը: Յեվ միաժամանակ պետք է ընդգծել, վոր «ապրանքային շրջանառության այս վերջին արդյունքը, կապիտալի յերևան գալու առաջին ձևն է» (Մարքս):

«Ապրանքային արտադրության զարգացման վորոշ աստիճանի վրա փողը փոխարկվում է կապիտալի: Ապրանքային արտադրության ֆորմուլան էր— Ա.—Փ.—Ա., այսինքն մի ապրանքի վաճառքը մյուսի գըն-

ման համար: Կապիտալի ընդհանուր ֆորմուլան ընդհակառակը հանդիսանում է, Փ—Ա—Փ, այսինքն, գնումն վաճառքի համար (շահույթով): Փողի նախնական արժեքի այս աճումը, վորը դրված է վոլորտի մեջ, Մարքսը կոչում է հավելյալ արժեք: Փողի «աճման» այս փաստը կապիտալիստական վոլորտի մեջ հանրահայտնի յե: Հենց այս «աճումը» փողը փոխարկում է կապիտալի, վորպես հատուկ, պատմականորեն վորոշ, արտադրության հասարակական հարաբերության» (Լենին, հատ. XVIII. եջ 17, II հրատ.):

Հետևաբար, փողի փոխարկումը կապիտալի՝ այդ մի թռիչք է հասարակական հարաբերությունների մեջ, վորը հայտնի յե դառնում ամենից առաջ իր նոր վորակով և հասարակական հարաբերությունների ավելի քան բարդացումով:

Պատմական զարգացման այն շրջանում, յերբ հասարակական անհատն սկսեց արտադրել վոչ միայն իր սեփական կարիքների բավարարության համար, այլ նաև ուրիշների պահանջներին գոհացում տալու նպատակով՝ այս իսկ հանդույցակետում արդյունքը վերածվեց ապրանքի: Ապրանքային շրջանառության զարգացման վորոշ աստիճանում բնաանհրաժեշտորեն առաջացավ փողը: Բոլորովին այլ բան պետք է ասել կապիտալի մասին: Վերջինիս գոյության պատմական պայմանները բնավ չեն սպառվում ապրանքային և փողային շրջանառությամբ: Կապիտալը ծագում է լոկ այնտեղ, ուր արտադրության և գոյության միջոցների տերը շուկայում գտնում է ազատ բանվորին իր բանվորական ուժը վաճառողի դերում, և արդեն միայն այս պատմական նախադրյալը իր մեջ պարփակում է հատուկ պատմական զարգացման ամբողջ աշխարհ: Այսպիսով կապիտալը իր ծագմամբ ազդարարում է հասարակական-արտադրական արտադրության հատուկ եպոխայի գալուստը,— գրում է Մարքսը:

Կապիտալի յերևան գալը փողի կերպարանքով խորապես սքողում է՝ այն դասակարգային արտադրական հարաբերությունները, վորոնք ստեղծում են կապիտալն ու փողը, վորպես իրենց բնության դրսևորման հասարակական սպեցիֆիկ ձև:

Հավելյալ արժեքը չի կարող ծագել շրջանառությունից, և վոչ էլ շուկայում թանկ կամ աժան վաճառելուց: Հավելյալ արժեքի տեսության մեջ, Մարքսը ջարդ ու փշուր արեց բուրժուական տնտեսագետների «տեսությունները» հավելյալ արժեքի գոյացման մասին: Մտքի չտեսնված խորությամբ և փաստերի անթիվ քանակով, Մարքսն ապացուցեց, վոր հավելյալ արժեքի աղբյուրը կենդանի բանվորական ուժի շահագործումն է:

Շնորհիվ այն հանգամանքի, վոր արտադրության պրոցեսում գործադրության մեջ է դրվում կապիտալիստի կողմից գնված յուրաքանչյուր ապրանք՝ բանվորական ուժը, «արժեքն այդպիսով դառնում է ինքնաշարժվող արժեք, ինքնաշարժվող փողեր, և վորպես այդպիսին, նրանք կապիտալ են» (Մարքս):



Մեր իսկ նպատակն է, փողի կերպարանքով հանդես յեկող կապիտալի յերևութականության մեջ բացահայտել եյությունը՝ բանվոր դասակարգի և կապիտալի, դասակարգային շահագործողական արտադրական հարաբերությունը: Այսպիսով, կապիտալը վոչ թե իր է, այլ հասարակական վորոշ պատմական ֆորմացիային հատուկ արտադրական հասարակական հարաբերություն: Սակայն այս հարաբերությունները յերևան են գալիս իրերի միջոցով: Այս իսկ պատճառով իրերն՝ ապրանքները կապիտալիստական հասարակարգում, ստանում են սպեցիֆիկ հասարակական բնույթ:

Անհրաժեշտ է, վորպեսզի ընթերցողները լավ հիշեն, վոր կապիտալի գոյացման համար սոսկ բավական չե, վորպեսզի վորոշ մարդկանց ձեռքում կուտակվեն փողային գումարներ: Կապիտալի ծագման համար գլխավորապես անհրաժեշտ է, վորպեսզի արտադրության միջոցներից զուրկ վորոշ քանակությամբ մարդիկ և վոր նրանք ազատ լինեն իրենց բանվորական ուժը վաճառելու արտադրության միջոցների տերերին՝ կապիտալիստներին: Ահա թե ինչու կապիտալի և վարձու աշխատանքի հարաբերությունները բնորոշում են կապիտալիստական հասարակությունը:

Ապրանքային արտադրությունը, ինչպես մենք տեսանք նախորդ գլուխներում՝ իրենցից ներկայացնում է սպառողական արժեքի և արժեքի միասնության պրոցես: Մինչդեռ կապիտալիստական արտադրությունը իրականում արժեքի և հավելյալ արժեքի միասնական, բայց հակամարտություններով լի մի պրոցես է:

Անհրաժեշտ է ուշադրություն առնել հետևյալ հանգամանքը: Ապրանքը, վորը ներկայացնում է սպառողական արժեքի և արժեքի հակադրության միասնություն, կապիտալի արտադրության վոլորտում հավելյալ արժեքի աճման զուգընթաց, սրվում է վերջինիս հակասությունը: Հավելյալ արժեքի և կապիտալի ինքնաճման պրոցեսը. դա վոչ միայն քանակային, այլև վորակային աճման պրոցես է: Իսկ այս վորակային պրոցեսի զարգացման տենդենցն անտագոնիստական է, խիստ հակամարտական, վորը տանում է դեպի արժեքային հակամարտությունների խորտակումը բանվոր դասակարգի կողմից, և պրոլետարիատի դիկտատուրայի ստեղծումը:

Մարքսն ապացուցեց, վոր հավելյալ արժեքի ստեղծման գործում վոչ մի դեր չի խաղում կապիտալի այն մասը, վորն ավանսավորված է իբրև արտադրության միջոցներ, հում նյութ և այլն: Հավելյալ արժեք է ստեղծում լոկ բանվորական ուժի գնի կերպարանքով ավանսավորված կապիտալը:

«Ուրեմն, արտադրության պրոցեսի տեսակետից, կապիտալի մեջ պետք է տարբերել յերկու մաս՝ մնայուն կապիտալ, վոր ծախսվում է արտադրության միջոցների վրա (մեքենաներ, աշխատանքի գործիքներ, հում նյութ և այլն),— դրա արժեքը (միանգամից կամ մաս մաս) առանց փոփոխվելու անցնում է պատրաստի արդյունքին, և ապա փոփոխական կապիտալ, վորը ծախսվում է բանվորական ուժի վրա: Այս կապիտալի արժեքն անփոփոխ չի մնում, այլ աճում է աշխատանքի պրոցեսում, ստեղծելով հավելյալ արժեք: Ուստի և բանվորական ուժի

շահագործման աստիճանը ցույց տալու համար պետք է հավելյալ արժեքը համեմատել ոչ թե ողջ կապիտալի, այլ միայն փոփոխական կապիտալի հետ»: (Լենին XVIII հ. էջ 18 հրատ. II):

Լենինյան այս հարցադրումը պետք է մեզ համար յելակետ հանդիսանա, հավելյալ արժեքի և միաժամանակ կապիտալի ինքնաճման պրոցեսի արմատները քննելիս:

Բավական չէ պարզել հավելյալ արժեքի բնությունը, վերջինիս դասակարգային եյությունը: Միաժամանակ անհրաժեշտ է պարզ պատկերացում ունենալ հավելյալ արժեքի մեծացման և արտադրության կապիտալիստական մեթոդների մասին՝ բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքների մասին: Այս մեթոդների լուսաբանումը կգա կրկին անգամ լույս սփռելու հավելյալ արժեքի աշխատանքային շահագործման աղբյուրի վրա մի կողմից, և մյուս կողմից՝ պարզելու հավելյալ արժեքի ու բանվորական ուժի միջև յեղած դարավոր պայքարի իմանենտ պատճառները և այդ պայքարի վախճանը հօգուտ պրոլետարիատի:

Հավելյալ արժեքի գլուխը մշակող ընկերները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն ներքոհիշյալ խնդիրների վրա:

1. Փողի փոխարկումը կապիտալի խնդրի քննարկման դեպքում, ինկատի առնել, որ ապրանքա-կապիտալիստական հասարակության տնտեսական կատեգորիաների դիալեկտիկ զարգացումը (արժեք—փող—կապիտալ) ոչ միայն տրամաբանական է, այլ ամենից առաջ նա համապատասխանում է պատմական իրականության բուն ընթացքին:

2. Մարքսը յեզրակացնում է, որ կապիտալը չի կարող ծագել շրջանառությունից, նույնքան և չի կարող ծագել շրջանառությունից դուրս: Նա պետք է ծագի շրջանառության մեջ և միաժամանակ ոչ շրջանառության մեջ: Ուսանողները պետք է պարզ պատկերացում ունենան այն մասին, թե ինչպես է լուծվում այս հակասությունը յերբ հանդես է գալիս բանվորական ուժ ապրանքը: Այստեղ մասնակի դժվարությունն այն է, որ պետք է հասկանալ, թե ինչպես եկվիվալենտների փոխանակության դեպքում կարող է մի ապրանքը հավելյալ արժեքի աղբյուր դառնալ իր գործադրմամբ:

3. Շահագործման կապիտալիստական յեղանակը շղարշում է հավելյալ արժեքի աշխատանքային աղբյուրը: Այս իսկ պատճառով անհրաժեշտ է մանրամասն կերպով քննության առնել բանվորական ուժի՝ որպես ապրանքի գլխավոր առանձնահատկությունը, որը կայանում է նրանում, որ վերջինիս սպառման պրոցեսը արժեքի աճման պրոցես է: Սրա հետ մեկտեղ, կարիք կա հիմնովին լուսաբանելու կապիտալի առանձին մասերի դերը կապիտալիստական արտադրության մեջ:

4. Վերոհիշյալ խնդիրներից բացի, մեր ընթերցողները պետք է հասկանան հավելյալ արժեքի նորմայի խիստ փոփոխիկ բնույթը և ըմբռնեն նրա բարձրացման կապիտալիստական եյությունը: Այստեղից ել կապիտալի ձգտումը բանվորական օրվա յերկարացման համար, և բանվոր դասակարգի պայքարը հանուն բանվորական օրվա կրճատման: Մասնավորապես անհրաժեշտ է այս հարցերը շաղկապել ժամանակակից կապիտալիզմի կրիզիսի հետ:



5. Այնքանով, որքան բանվորական օրի յերկարացումն ունի իր բնական սահմանը, ապա կապիտալիստները հավելյալ արժեքի նորման ու մասսան բարձրացնելու նպատակով, կիրառում են հարաբերական հավելյալ արժեքի մեթոդը, մի մեթոդ, որը վճռական ազդեցություն ունի բանվոր դասակարգի դրության վրա բառիս բացասական առումով: Պետք է նշել նմանապես, թե ինչ ազդեցություն է ունենում մեքենայական արդյունաբերությունը կանանց, յերեխաների և ընդհանրապես բանվոր դասակարգի վրա:

6. Մշակվող թեմայի լավ յուրացման համար, անհրաժեշտ է լավ հիշել Մարքսի այն դրույթը, որ բացարձակ հավելյալ արժեքի արտադրությունը յենթադրում է աշխատանքի լոկ ձևական յենթարկումն կապիտալի: Մինչդեռ, «հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը յենթադրում է արտադրության սպեցիֆիկ կապիտալիստական յեղանակ»: Սխալ կլինի. այնպես պատկերացնել, որ որպես թե կապիտալը զարգացման որոշ ետապում օգտվել է լոկ մեկ մեթոդով, իսկ հետո մյուսով: Այս այսպես է, որովհետև «որոշ տեսակետից— բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքի մեջ տարբերություն դնել ընդհանրապես յերևակայական է: Հարաբերական հավելյալ արժեքը բացարձակ է, որովհետև նա պայմանավորում է բանվորական օրվա յերկարացումը բանվորական ժամանակի սահմաններում, որն անհրաժեշտ է իրեն՝ բանվորի գոյության համար: Բացարձակ հավելյալ արժեքը հարաբերական է, որովհետև նա պայմանավորվում է աշխատանքի արտադրողականությամբ, որը թույլատրում է սահմանափակել անհրաժեշտ բանվորական ժամանակը բանվորական օրվա մասով»: Հետևաբար, ոչ միայն պետք է հայտնաբերել հավելյալ արժեքի արտադրության մեթոդների տարբերությունը, այլ նաև նրանց դիալեկտիկական միասնությունը: Միակողմանի մոտեցում խնդրին, ընթերցողին հեռու կտանի մարքս-լենինյան անալիզի ուղիներից:

7. Վերջում անհրաժեշտ է արմատավորել այն գաղափարը կապիտալիստական արտադրության մասին, որ վերջինս իրոք արտադրություն է հավելյալ արժեքի համար, որի եյությունը շահագործված մարդկային բանվորական ուժն է:

8. Լավ կլիներ զուգահեռ անցկացնել ԽՍՀՄ-ի սոցիալիստական և կապիտալիստական արտադրությունների պրոցեսում ունեցած մարդկանց արտադրական հարաբերությունների միջև, ցույց տալ վերջիններիս խիստ տարբերությունը:

## ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼ

### ՓՈՂԻ ՓՈԽԱՐԿՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻ

Ապրանքային շրջանառությունը կապիտալի յելակետն է: Կապիտալը հանդես է գալիս միայն այնտեղ, որտեղ ապրանքային արտադրությունն ու

զարգացած ապրանքային շրջանառությունը, առևտուրը, զարգացման վորոշ մակարդակի յեն հասել: *Համաշխարհային առևտուրն ու համաշխարհային շուկան սկսում են XVI դարում արդի կապիտալի կյանքի և գործունեության պատմությունը:*

*Յեթե մենք մի կողմ թողնենք ապրանքային շրջանառության նյութական բովանդակությունը, զանազան սպառողական արժեքների փոխանակությունը, և հետազոտելու լինենք միմիայն այդ պրոցեսների ստեղծած տնտեսական ձևերը, ապա մենք կգտնենք, վոր նրա* վերջին արդյունքը փողն է: *Ապրանքային շրջանառության այս* վերջին արդյունքը կապիտալի յերևան գալու առաջին ձևն է:

Պատմականորեն *կապիտալն ամենուրեք սկզբից հողային սեփականատիրության հակադրվում է փողի ձևով, դրամական գույքի, վաճառականական և վաշխառուական կապիտալի ձևով: Բայց ամենևին կարիք էլ չկա կապիտալի ծագման պատմությանը դիմելու, վորպեսզի համոզվենք, թե փողն է հանդիսանում նրա յերևան գալու առաջին ձևը: Այդ պատմությունն ամեն օր խաղացվում է մեր աչքերի առաջ: Յուրաքանչյուր նոր կապիտալ բեմի վրա, իր առաջին յերևան գալու ժամանակ, այսինքն՝ ապրանքային բանվորական կամ փողային շուկայում, անփոփոխ կերպով հանդես է գալիս փողի կերպարանքով,— փողի, վորը վորոշ պրոցեսների միջոցով պետք է փոխարկվի կապիտալի:*

Փողն իբրև այդպիսին և փողն իբրև կապիտալ սկզբնապես միմյանցից տարբերվում են միայն շրջանառության վոչ միատեսակ ձևով:

*Ապրանքային շրջանառության անմիջական ձևն է Ա—Փ—Ա, ապրանքների փոխարկումը փողի և փողի վերափոխարկումն ապրանքի, վաճառքը գնման համար: Բայց այդ ձևի կողքին մենք գտնում ենք մի ուրիշը, վոր* էյականապես տարբերվում է նրանից, *Փ—Ա—Փ ձևը, փողի փոխարկումն ապրանքի և ապրանքի վերափոխարկումը փողի, գնումը վաճառքի համար:* Փողը, վոր իր շարժման մեջ կատարում է այդ վերջին պտույտը, փոխարկվում է կապիտալի, կապիտալ է դառնում և արդեն իր կոչումով կապիտալ է ներկայացնում: [1])

## ԿԱՊԻՏԱԼԻ ՖՈՐՄՈՒԼԱՅԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԶ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖՈՐՄՈՒԼԱՅԻՑ

*Ավելի մոտիկից դիտենք Փ—Ա—Փ շրջանառությունը: Պարզ ապրանքային շրջանառության նման՝ նա անցե կենում* յերկու հակադիր փուլեր: *Առաջին փուլը— Փ—Ա, գնումը, ներկայացնում է փողի փոխարկվելը ապրանքի: Յերկրորդ փուլը—Ա—Փ, կամ վաճառումը ապրանքի փողի վերափոխարկվելն է: Յերկու փուլերը միասին մի միասնական պրոցես են կազմում, վորի մեջ փողերը փոխանակվում են ապրանքի հետ, և ապա հենց այդ ապրանքը*

1) Маркс, Капитал I, стр. 116—117.



*կրկին փոխանակվում է փողերի հետ, ապրանքը գնվում է վաճառելու համար, կամ, մի կողմ թողնելով գնման և վաճառման միջև յեղած* ձևական *տարբերությունները,— փողով գնվում է ապրանք, և ապրանքով փող: Այն հետևանքը, վորի մեջ լուծվում է ամբողջ պրոցեսը, փողի փոխանակությունն է փողով, Փ—Փ: Յեթե յես 100 ֆունտ ստերլինգով գնում եմ 2000 ֆ. բամբակ և կրկին վաճառում այդ 2000 ֆ. բամբակը 110 ֆունտ ստերլինգով, ապա հետևանքն այն յեղավ, վոր յես 100 ֆ. ստ. փոխանակեցի 110 ֆ. ստ., փողը՝ փողով:*

... *Ամենից առաջ մենք պետք է բնորոշենք Փ—Ա—Փ և Ա—Փ—Ա շրջապտույտների միջև յեղած ձևական տարբերությունը: Դրա հետ միասին յերևան կգան նաև* ըստ էյության յեղած տարբերությունը, վոր թաքնված է այդ ձևական տարբերությունների հետևը:

*Նախ և առաջ տեսնենք, թե ի՞նչ ընդհանուր բան կա այդ յերկու ձևերի մեջ:*

*Յերկու շրջապտույտներն էլ տրոհվում են միևնույն հակադիր փուլերին—Ա—Փ, վաճառումն, և Փ—Ա, գնումն: Յերկու փուլերից յուրաքանչյուրի մեջ միմյանց հանդեպ են կանգնած միևնույն յերկու իրային տարրերը, ապրանքն ու փողը,— և յերկու անձեր միևնույն տնտեսական դիմակներով— գնողն ու վաճառողը: Յերկու շրջապտույտներից յուրաքանչյուրը ներկայացնում է միևնույն հակադիր փուլերի միասնությունը և յերկու անգամն էլ այդ միասնությունը կենսագործվում է յերեք կոնտրագենտների միջնորդությամբ, վորոնցից մեկը միայն վաճառում է, մյուսը միայն գնում է, իսկ յերրորդը՝ փոխնիփոխ գնում է և վաճառում:*

*Բայց ինչը վոր հենց բոլորովին սկզբից բաժանում է միմյանցից Ա—Փ—Ա և Փ—Ա—Փ շրջապտույտները, այդ— շրջանառության* միևնույն հակադիր փուլերի հակադարձ հաջորդականությունն է: Պարզ ապրանքային շրջանառությունն սկսվում է վաճառումով և վերջանում է գնումով, փողի շրջանառությունն իբրև կապիտալ սկսվում է գնումով և վերջանում վաճառումով: Շարժման յելակետն ու վախճանական կետը այնտեղ ապրանքն է կազմում, այստեղ փողը:

*Ա—Փ—Ա շրջանառության մեջ վերջիվերջո փողը փոխարկվում է ապրանքի, վորը ծառայում է իբրև սպառողական արժեք: Հետևաբար, այստեղ փողը ծախսվում է վերջնականորեն: Ընդհակառակը, Փ—Ա—Փ հակադիր ձևում գնողը միայն նրա համար է ծախսում փողը, վորպեսզի փող ստանա իբրև վաճառող:*

*Փողի հետադարձ հոսանքը դեպի իր յելակետը կախված չէ նրանից—վաճառվում է արդյոք ապրանքն ավելի թանկ, քան թե այն գնվել է, թե՞ վոչ: Այդ հանգամանքն ազդում է միայն հետահոս դրամական գումարի մեծության վրա: Համենայն դեպս՝ հետահոսի յերևույթն ինքնին տեղի յե ունենում այն ժամանակ միայն, յեթե գնված ապրանքն իսկապես նորից վաճառվում է, այսինքն՝ յեթե Փ—Ա—Փ շրջապտույտը կատարվում է լրիվ: Հետևաբար, այստեղ մենք գտնում ենք* զգալապես ըմբռնելի տարբերությունը փողի շրջ—

ջանառության միջև իբրև կապիտալ և նրա շրջանառության միջև պարզապես իբրև փող:

*Ա—Փ—Ա շրջապտույտը լիովին ավարտված է, հենց վոր մի ապրանքի վաճառումից ստացված փողը առնված և տարված է մի ուրիշ ապրանքի գնման հետևանքով: Յեվ յեթե այստեղ այնուամենայնիվ կատարվում է փողի հետադարձ հոսանքը դեպի իր յելակետը, ապա այդ տեղի յե ունենում միայն շնորհիվ ամբողջ պրոցեսի վերանորոգման կամ կրկնության:*

*Փողը կրկին հեռանում է ինձանից, յեթե յես ավարտեմ այդ նոր գործարքը կատարելով նոր գնում: Հետևաբար, Ա—Փ—Ա շրջանառության մեջ փողերի ծախսումը վոչինչով կապված չե նրանց հետադարձ հոսանքի հետ: Ընդհակառակը, Փ—Ա—Փ-ի մեջ փողի հետադարձ հոսանքը պայմանավորվում է նրա ծախսման հենց բնույթով: Առանց այդ հետահոսի ամբողջ գործառնությունը պետք է ընդունել չհաջողված կամ պրոցեսն ընդհատված և դեռ անավարտ, քանի վոր պակասում է նրա յերկրորդ փուլը,— վաճառումը, վորը լրացնում և ավարտի յե հասցնում գնումը:*

*Պարզ ապրանքային շրջանառության ժամանակ յերկու ծայրահեղ կետերը միևնույն տնտեսական ձևն ունեն: Նրանք յերկուսն էլ ապրանք են: Յեվ այն էլ՝ տարբեր արժեք ունեցող ապրանք: Բայց դրա փոխարեն նրանք վորակապես տարբեր սպառողական արժեքներ են, որինակ հացը և զգեստը: Այստեղ* շարժման բովանդակությունն է կազմում արդյունքների փոխանակությունը, զանազան նյութերի փոխանակությունը, վորոնց մեջ արտահայտություն է գտնում հասարակական աշխատանքը: *Այլ կերպ է խնդիրը Փ—Ա—Փ շրջանառության մեջ:* Առաջին հայացքից նա անբովանդակ է յերևում իր սույնաբանության (տավտոլոգիականության) հետևանքով, այն բանի հետևանքով, վոր նրա վախճանական կետը վո՛չ այլ ինչ է, յեթե վոչ նրա յելակետի կրկնությունը: Յերկու ծայրահեղ կետերն էլ միևնույն տնտեսական ձևն ունեն: *Նրանք յերկուսն էլ— փող են, հետևաբար, վորակապես տարբեր սպառողական արժեքներ չեն հանդիսանում, վորովհետև փողը պատկերացնում է ապրանքների հենց այնպիսի փոխակերպված ձևը, վորի մեջ հանգցվում են վերջինների բոլոր առանձնահատուկ սպառողական արժեքները: Սկզբում փոխանակել* 100 *ֆ. ստերլինգ բամբակի հետ, իսկ հետո այդ բամբակը նորից փոխանակել* 100 *ֆ. ստերլինգի հետ, այսինքն՝ կողմնակի ճանապարհով փողը՝ փողի հետ, միևնույնը՝ միևնույնի հետ,—այդպիսի գործառնությունը նույնքան աննպատակ է, վորքան և անհեթեթ: Մի դրամական գումարը առհասարակ կարող է մի ուրիշ դրամական գումարից տարբերվել միայն մեծությամբ: Այդ պատճառով՝ Փ—Ա—Փ պրոցեսն իր բովանդակությունը պարտական է վո՛չ թե իր ծայրահեղ կետերի միջև յեղած վորակական տարբերությանը,—նրանք յերկուսն էլ փող են,—այլ միայն նրանց* քանակական տարբերությանը: *Այդ պրոցեսի հետևանքով շրջանառությունից ավելի փող է հանվում, քան թե սկզբնապես նետված եր նրա մեջ: Որինակ* 100 *ֆ. ստ. գնված բամբակը կրկին վաճառվում է* 100+10 *ֆ. ստ. կամ* 110 *ֆ. ստերլինգով:*



Սկզբնական արժեքի համեմատությամբ առաջացած այդ աճումը կամ ավելցուկը յես անվանում եմ հավելյալ արժեք:

*Ճիշտ է, հնարավոր է, վոր Ա—Փ—Ա ձևի մեջ յերկու ծայրակետերը Ա— և Ա, որինակ հաց և զգեստ, քանակապես տարբեր արժեքներ են ներկայացնում: Գյուղացին կարող է հացը վաճառել նրա արժեքից բարձր կամ զգեստը գնել նրա արժեքից ցած գնով: Մյուս կողմից, նրան կարող է խաբել զգեստավաճառը: Բայց շրջանառության հենց այդ ձևի տեսակետից՝ արժեքի մեջ յեղած այդ տարբերությունները մի բոլորովին պատահական բան են ներկայացնում: Շրջանառության այդ ձևը, հակառակ Փ—Ա—Փ-ի, ամենևին չի կորցնում իր իմաստն ու նշանակությունը, յեթե յերկու ծայրակետերը, որինակ հացն ու զգեստը, միմյանց էկվիվալենտ են: Ընդհակառակը, նրանց ար*ժեքների հավասարությունը ավելի շուտ պրոցեսի նորմալ ընթացքի պայմանն է:

*Վաճառելու վերջնական նպատակը գնելու համար, ինչպես նաև այդ պրոցեսի վերանորոգման կամ կրկնության նպատակը իրենից դուրս է գտնվում, սպառման մեջ, վորոշ պահանջների բավարարման մեջ: Ընդհակառակը, վաճառելու համար գնելու դեպքում սկիզբն ու վերջը միևնույնն են, այսինքն՝ փողը, փոխանակային արժեքը, և արդեն միայն դրա հետևանքով տվյալ շարժումն անվերջ է:*

*Պարզ ապրանքային շրջանառությունը— վաճառումը՝ գնելու համար— միջոց է ծառայում շրջանառությունից դուրս գտնված վերջնական հետևանքին հասնելու համար սպառողական արժեքների յուրացման համար պահանջները բավարարելու համար: Ընդհակառակը,* փողի շրջանառությունն իբրև կապիտալ ինքնանպատակ է, վորովհետև արժեքի ինքնաճումը կենսագործվում է միայն այդ շարունակ վերանորոգվող շարժման սահմաններում: Այդ պատճառով էլ կապիտալի շարժումը սահմաններ չունի:

Իբրև այդ շարժման գիտակից ներկայացուցիչ՝ փողատերը դառնում է կապիտալիստ: Նրա անձնավորությունը կամ, ավելի ճիշտ, նրա գրպանը— ահա այն կետը, վորտեղից յելնում են և ուր վերադառնում են փողերը: Այդ շրջանառության օբյեկտիվ բովանդակությունը— արժեքի աճումը— նրա սուբյեկտիվ նպատակն է, և վորչափով վոր աբստրակտ հարստության աճող յուրացումը նրա գործառնության միակ շարժիչ մոտիվն է հանդիսանում, այդչափով— և միայն այդ չափով— նա գործում է իբրև կապիտալիստ, այսինքն՝ իբրև մարմնացած, կամքով ու գիտակցությամբ ոժտված կապիտալ: Այդ պատճառով էլ սպառողական արժեքն ամենևին չի կարելի դիտել իբրև կապիտալիստի անմիջական նպատակը: Նմանապես և նրա նպատակն է հանդիսանում վո՛չ թե միակ շահույթի ստացումը, այլ նրա անդուլ շարժումը: Այդ ձգտումը դեպի բացարձակ հարստացումը, այդ բուռն վազքը արժեքի հետևից ընդհանուր է կապիտալիստի և գանձ հավաքողի համար, բայց մինչդեռ գանձ հավաքողը միայն ցնորված կապիտալիստ է, կապիտալիստը բանական (ռացիոնալ) գանձահավաք է: *Արժեքի անդիմադրավելի աճմանը դանձա—*

հավաքը ձգտում է հասնել նրանով, վոր փողերը փրկում է շրջանառությունից, մինչդեռ ավելի լրջմիտ կապիտալիստը նույն նպատակին հասնում է շարունակ փողերը կրկին ու կրկին անգամ շրջանառության մեջ գցելով:

Կապիտալիստը գիտե, վոր ապրանքները, ինչքան էլ նրանք խղճուկ յերևան, ինչքան էլ վատ հոտ գա նրանցից, փողն են հոգով և ճշմարտությամբ, ներքին թլփատման հրեաներ են և բացի դրանից էլ՝ հրաշագործ միջոց են—փողից ավելի մեծ քանակությամբ փող շինելու համար:

Յեթե պարզ շրջանառության մեջ ապրանքների արժեքն, իբրև հակակշիռ նրանց սպառողական արժեքի, լավագույն դեպքում ձեռք էր բերում փողի ինքնուրույն ձևը, ապա այստեղ նա հանկարծ դուրս է գալիս ինքնազարգացող, ինքնուրույն շարժվող սուբստանցիա, վորի համար ապրանքներն ու փողերը միայն յերևան գալու ձևեր են: Դեռ ավելին: Փոխանակ իրենով արտահայտելու ապրանքների հարաբերությունը, նա այժմ, այսպես ասած, անձնական հարաբերության մեջ է մտնում ինքն իրեն հետ: Նա տարբերում է իրեն իբրև սկզբնական արժեք իրենից իսկ իբրև հավելյալ արժեք, ճիշտ այնպես, ինչպես վոր հայր աստվածը տարբերվում է ինքն իրենից իբրև վորդի աստծուց, թեև նրանք յերկուսն էլ նույն հասակն ունեն և իսկապես ներկայացնում են միևնույն անձը:

Այդպիսով՝ արժեքը դառնում է ինքնաշարժ արժեք, ինքնաշարժ փող և իբրև այդպիսին՝ նա կապիտալ է: Նա դուրս է գալիս շրջանառության վոլորտից, կրկին մտնում է նրա մեջ, պահպանում և բազմապատկում է իրեն նրա մեջ, վերադառնում է մեծացած կերպարանքով և նորից ու նորից սկսում է միևնույն շրջապտույտը:

Այսպիսով, Փ—Ա—Փ ֆորմուլան կապիտալի իսկապես ընդհանուր ֆորմուլան է, ինչպես վոր այն անմիջականորեն յերևան է գալիս շրջանառության վոլորտում: 1)

## ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՅԱՑՈՒՄԸ

Շրջանառության այն ձևը, վորի մեջ փողային հարսնյակը (куколка) փոխարկվում է կապիտալի, հակասում է մեր սկզբում ցույց տված բոլոր օրենքներին, ապրանքի բնության, փողի արժեքի և իրեն շրջանառության: Պարզ ապրանքային շրջանառությունից նրան տարբերում է նույն յերկու հակադիր պրոցեսների՝ վաճառքի և գնման՝ հակադարձ հաջորդականությունը: Բայց ի՞նչպիսի հրաշքով կարող է այդպիսի զուտ ձևական տարբերությունը կերպարանափոխել տվյալ պրոցեսի բնությունը:

Հնարավոր է, վոր գինի վաճառողը և հաց գնող A-ն տվյալ բանվորական ժամանակի ընթացքում ավելի գինի յե արտադրում, քան թե միևնույն բանվորական ժամանակի ընթացքում կարող էր այն արտադրել հաց մշակող B-ն, և հակառակը՝ հաց մշակող B-ն, տվյալ բանվորական ժամանակի ընթացքում արտադրում է ավելի շատ հաց, քան կարող էր այն արտադրել գինեգործ A-ն: Այդպիսով, A-ն միևնույն փոխանակային արժեքի համար ստանում է ավելի շատ հաց, B-ն ավելի շատ գինի, քան թե կստանար նրանցից յուրաքանչյուրը, յեթե նրանք ստիպված լինեյին իրենց համար գինի և հաց արտադրելու, առանց դիմելու փոխանակության: Հետևաբար, սպառողական արժեքի տեսակետից կարելի յե ասել, թե «փոխանակությունը մի գործարք է, վորի մեջ շահում են յերկու կողմերն էլ»: Այլ է խնդիրը փոխանակային արժեքի վերաբերմամբ: «Շատ գինի ունեցող, բայց հաց չունեցող մարդը գործարքի յե մտնում մի մարդու հետ, վորը շատ հաց ունի, բայց գինի չունի, և նրանց միջև տեղի յե ունենում 50 ի չափի արժեքով ցորենի փոխանակություն հենց նույն 50-ի չափի արժեքով գինու հետ: Այդ փոխանակությունը վո՛չ առաջինի և վո՛չ էլ յերկրորդի համար փոխանակային արժեքի ավելացում չի ներկայացնում. վորովհետև արդեն փոխանակությունից առաջ նրանք յերկուսն էլ ունեյին արժեք, հավասար այն արժեքին, վոր նրանցից յուրաքանչյուրն ստանում է այդ գործառնության միջոցով»: Խնդիրն ամենևին չի փոխվում նրանով, վոր փողը կանգնում է ապրանքների միջև իբրև շրջանառության միջոց և վոր գնման գործողությունը շոշափելի կերպով անջատվում է վաճառման գործողությունից: Ապրանքների արժեքն արտահայտվում է նրանց գների մեջ նախքան նրանց շրջանառության մեջ մտնելը, հետևաբար նա— այդ արժեքը— շրջանառության նախադրյալն է, և վո՛չ թե նրա հետևանքը:

Քննարկելով այդ պրոցեսն աբստրակտ կերպով, այսինքն՝ մի կողմ թողնելով պատահական հանգամանքները, վորոնք չեն բխում պարզ ապրանքային շրջանառության իմմանենտ օրենքներից, մենք այստեղ, կգտնենք, բացի մի սպառողական արժեքը մյուսով փոխարինելուց, միայն ապրանքային կերպարանափոխություն (մետամորֆոզ), այսինքն՝ ապրանքի ձևի հասարակ փոփոխություն: Միևնույն արժեքը, այսինքն՝ իրայնացած հասարակական աշխատանքի միևնույն քանակությունը գտնվում է միևնույն ապրանքատիրոջ ձեռքում, սկզբում ապրանքի ձևով, ապա փողի ձևով, վորին փոխարկվել է ապրանքը, վերջապես դարձյալ ապրանքի ձևով, վորին կրկին փոխարկվել է փողը: Ձևի այդպիսի փոփոխությունը չի պարունակում իր մեջ արժեքի մեծության փոփոխություն:

Վորչափով վոր ապրանքի շրջանառությունը բերում է լոկ նրա արժեքի ձևի փոփոխմանը, նա բերում է՝ քանի տվյալ յերևույթը ուրիշ յերևույթով չի բարդացել, և հասցնում է էկվիվալենտների փոխանակությանը: Մինչև անգամ վուլգար քաղաքատնտեսությունը, չնայելով վոր նա ամենևին չէր հասկանում այն, թե ինչ է արժեքը, ամեն անգամ, յերբ փորձում է, վորչափով այդ նրան հնարավոր է, դիտել յերևույթն իր մաքուր ձևով, յենթադրում է, թե պահանջն ու առաջարկը փոխադարձաբար ծածկում են միմյանց, այսինքն՝ նրանց ազդեցությունն ընդհանրապես վոչնչացվում է: Հետևաբար, յեթե սպառողական արժեքի տեսակետից յերկու կոնտրագենտներն էլ կարող են շահել, ապա փոխանակային արժեքի վերաբերմամբ նրանք չեն կարող

1) Капитал I, стр. 117—125

յերկուսն էլ շահել: Այստեղ ավելի շուտ տիրապետում է՝ «Վորտեղ հավասարություն է, այնտեղ ոգուտ չկա» կանոնը: Թեև ապրանքները կարող էլ են վաճառվել այնպիսի գներով, վորոնք շեղվում են նրանց արժեքներից, բայց այդպիսի շեղումը ապրանքափոխանակության որենքների խախտումն է: Իր մաքուր կերպարանքով նա եկվիվալենտների փոխանակություն է և հետևաբար, հնարավորություն չի տալիս հարստանալու արժեքի ավելացման հաշվին:

Ապրանքների շրջանառությունն իբրև հավելյալ արժեքի աղբյուր դիտելու փորձերի հետևը սովորաբար թաքնված է quid pro quo սպառողական արժեքի և փոխանակային արժեքի շփոթությունը:

Յեթե փոխանակվում են հավասար փոխանակային արժեք ունեցող ապրանքներ կամ ապրանքներ ու փողեր, այսինքն՝ եկվիվալենտներ, ապա ակներև է, վո՛չ վոք շրջանառությունից ավելի արժեք չի դուրս հանում, քան թե ներմուծում է նրա մեջ: Այսպիսի դեպքում հավելյալ արժեք կազմվելը տեղի չի ունենում: Իր մաքուր ձևով՝ ապրանքների շրջանառության պրոցեսը իրենով պայմանավորում է եկվիվալենտների փոխանակություն: Սակայն, իրականության մեջ պրոցեսները մաքուր ձևով չեն կատարվում: Այդ պատճառով յենթադրենք, թե եկվիվալենտներ չեն, վոր փոխանակվում են:

Համենայն դեպս, ապրանքային շուկայում ապրանքատիրոջ դիմացը կանգնած են միայն ապրանքատերեր և այն իշխանությունը, վոր այդ անձերն ունեն մեկը մյուսի վերաբերմամբ, միայն նրանց ապրանքների իշխանությունն է: Ապրանքների նյութական տարբերությունը փոխանակության նյութական մոտիվն է, նա պայմանավորում է ապրանքատերերի փոխադարձ կախումը միմյանցից, վորովհետև նրանցից վոչ վոք չունի իր սեփական սպառման առարկան և ունի մյուսի սպառման առարկան: Բացի ապրանքների սպառողական արժեքների այդ նյութական տարբերությունից, նրանց միջև գոյություն ունի միայն մի տարբերություն. բնական ձևի և նրանց փոխակերպված ձևի մեջ, ապրանքների և փողերի միջև յեղած տարբերությունը: Այսպիսով ապրանքատերերը տարբերվում են միմյանցից միայն իբրև վաճառողներ, ապրանքատերեր և իբրև գնողներ, փողատերեր:

Յենթադրենք այժմ, թե վաճառողը անբացատրելի արտոնություն ունի վաճառելու ապրանքները նրանց արժեքից բարձր, 110-ով, յեթե նրանք 100 արժեն, այսինքն՝ գնի վրա 10% անվանական վերադիր անելով: Այդ յեղանակով վաճառողն ստանում է հավելյալ արժեք՝ հավասար 10-ի: Բայց վաճառող լինելուց հետո՝ նա դառնում է գնող: Այժմ նրան հանդիպում է յերրորդ ապրանքատերն իբրև վաճառող և սա յել իր հերթին ոգտվում է ապրանքը 10%-ով թանկ վաճառելու արտոնությունից: Մեր ապրանքատերն իբրև վաճառող շահեց 10, վորպեսզի իբրև գնող կորցնե նույն 10-ը: Ընդհանուր առմամբ գործն այն կերպարանքն է ստանում, վոր բոլոր ապրանքատերերն իրենց ապրանքները վաճառում են միմյանց նրանց արժեքից 10%-ով ավելի թանկ, իսկ այդ բոլորովին միևնույնն է, թե ապրանքները վաճառվե-



յին իրենց արժեքով: Ապրանքների գնի վրա կատարված այդպիսի ընդհանրական անվանական վերադիրը նույնպիսի նշանակություն ունի, ինչպես որինակ, ապրանքային արժեքների չափումն արծաթով՝ վոսկու փոխարեն: Ապրանքների դրամական անունները, կամ գները, աճում են, բայց նրանց արժեքների հարաբերությունները անփոփոխ են մնում:

Յենթադրենք, ընդհակառակն, թե գնողն արտոնություն ունի ապրանքներն իրենց արժեքից ցած գնով ձեռք բերելու: Այստեղ նույնիսկ կարիք չկա հիշեցնելու, վոր գնողն իր հերթին վաճառող է դառնալու: Նա արդեն վաճառող եր ավելի առաջ, քան գնող դառնալը: Նա արդեն իբրև վաճառող 10% կորցրեց, նախքան իբրև գնող 10% շահելը: Ամեն ինչ մնում է ինչպես հնում: Յեվ այսպես հավելյալ արժեքի կազմվելը, այդ պատճառով նաև փողի փոխարկվելը կապիտալի չի կարող բացատրվել վո՛չ նրանով, վոր վաճառողներն իրենց ապրանքները վաճառում են նրանց արժեքից բարձր, վոչ նրանով, վոր գնողները գնում են նրանք արժեքից ցած:

Պնդել, թե արտադրողի համար հավելյալ արժեքն առաջ է գալիս այն բանի հետևանքով, վոր սպառողներն ապրանքների համար վճարում են նրանց արժեքից բարձր, նշանակում է միայն քողարկել հետևյալ պարզ դրությունը. ապրանքատերն իբրև վաճառող արտոնություն ունի ապրանքները վաճառելու՝ վերադիր անելով գնի վրա: Վաճառողն ինքն է արտադրել իր ապրանքը կամ ներկայացնում է նրա արտադրողին, բայց գնողն ինքն էլ հավասարապես ապրանքներ է արտադրել, վորոնք արտահայտվում են նրա փողերով, կամ ներկայացնում են նրանց արտադրողին: Հետևաբար, արտադրողը կանգնած է արտադրողի դեմ: Նրանց տարբերում է միայն այն, վոր մեկը գնում է, մինչդեռ մյուսը վաճառում է:

Ապրանքատեր A-ն կարող է այնքան ճարպիկ խաբեբա լինել, վոր միշտ կխաբի իր ընկերներին՝ B-ին և C-ին, մինչդեռ այս վերջինները, հակառակ իրենց ամբողջ ցանկության, ի վիճակի չեն լինի վրեժ առնելու: A-ն վաճառում է B-ին գինի 40 ֆ. ստ. արժողությամբ և այդ փոխանակության միջոցով ստանում է 50 ֆ. ստ. արժողությամբ ցորեն: A-ն իր 40 ֆ. ստ. փոխարկեց 50 ֆ. ստերլինգի, ավելի փոքր քանակությամբ փողն ավելի մեծ քանակությամբ փող դարձրեց և իր ապրանքը փոխարկեց կապիտալի: Ավելի ուշադիր կերպով և մոտիկից նայենք գործին: Մինչև փոխանակությունը կար 40 ֆ. ստ., գինի A-ի ձեռքում և 50 ֆ. ստ. ցորեն B-ի ձեռքում, ընդամենը 90 ֆ. ստերլինգի ընդհանուր արժեքով: Փոխանակությունից հետո մենք ունենք միևնույն 90 ֆ. ստ. ընդհանուր արժեքը: Շրջանառության մեջ գտնված արժեքը չավելացավ վո՛չ մի ատոմով, փոխվեց միայն նրա բաշխումը A-ի և B-ի միջև: Այն, ինչ վոր այստեղ մի կողմի համար հավելյալ արժեք է հանդիսանում, մյուսի համար ներկայացնում է պակասող արժ.—պլյուս է մեկի համար՝ մինուս է մյուսի համար: Այդ միևնույն հետևանքը կստացվեր, յեթե A-ն, առանց փոխանակության պրոցեսով քողարկվելու՝ ուղղակի գողանար B-ից 10 ֆ. ստերլինգ: Ակներև է, շրջանառության մեջ գտնված արժեքների գումարը չի կարելի ավելացնել

*նրանց բաշխման մեջ կատարված վո՛չ մի փոփոխությամբ, ինչպես վոր հին դրամներ վաճառող հրեան ամենևին չի ավելացնի իր յերկրի ազնիվ մետաղի քանակությունը, յեթե նա Աննա թագուհու ժամանակների փարտինգը (կես կոպեկ) վաճառի մի գինեյով (վոսկով)*:

Վորոշ յերկրի կապիտալիստների վողջ դասակարգն ամբողջությամբ վերցրած չի կարող խաբստանալ ինքն իր հաշվին:

Վոր կողմն ուզում ես շուռ տուր, փաստը մնում է փաստ. յեթե փոխանակվում են եկվիվալենտները, ապա չի առաջանում վո՛չ մի հավելյալ արժեք. և յեթե փոխանակվում են վոչ եկվիվալենտները, նույնպես վո՛չ մի հավելյալ արժեք առաջ չի գալիս: Շրջանառությունը կամ ապրանքափոխանակությունը վո՛չ մի արժեք չի ստեղծում: *Այստեղից հասկանալի յե, թե ինչու կապիտալի հիմնական ձևի մեր վերլուծության մեջ, նրա այն ձևի*, վոր վորոշում է իրենով ժամանակակից հասարակության տնտեսական կազմակերպությունը, *մենք այժմ բոլորովին չենք շոշափի կապիտալի ամենից ավելի ժողովրդական և, այսպես ասած*, անդրջրհեղեղյան ձևերը, այսինքն՝ առևտրական կապիտալն ու վաշխառուական կապիտալը:

*Ինչպես մենք տեսնում ենք*, հավելյալ արժեքը չի կարող ծագել շրջանառությունից. *հետևաբար*, վորպեսզի այն առաջանա, շրջանառության թիկունքում պետք է մի այնպիսի բան կատարվի, վորն իրեն շրջանառության պրոցեսի մեջ յերևան չի գալիս: *Բայց կարո՞ղ է արդյոք հավելյալ արժեքը ծագել վորևէ այլ տեղից այլ կերպ, բացի շրջանառության պրոցեսից*: Շրջանառությունն ապրանքատերերի բոլոր ապրանքային (*նրանց ապրանքներով վորոշվող*) հարաբերությունների գումարն է: *Շրջանառությունից դուրս՝ ապրանքատերը պահպանում է հարաբերությունը միայն դեպի իր սեփական ապրանքը: Արժեքի տեսակետից՝ այդ հարաբերությունը սահմանափակվում է նրանով, վոր տվյալ անձին պատկանող ապրանքը պարունակում է նրա սեփական աշխատանքի վորոշ քանակություն, վոր չափվում է վորոշ հասարակական օրենքների համաձայն* :

Ապրանքատերը կարող է իր աշխատանքով արժեքներ ստեղծել, բայց վոչ ինքնիրեն աճող արժեքներ: *Նա կարող է բարձրացնել ապրանքի արժեքը, առկա արժեքին միացնելով նոր արժեք նոր աշխատանքի միջոցով, օրինակ, կաշվից կոշիկներ պատրաստելով: Միևնույն նյութն այժմ ավելի մեծ արժեք ունի, վորովհետև իր մեջ պարունակում է աշխատանքի ավելի մեծ քանակություն: Կոշիկներն ավելի մեծ արժեք ունեն, քան թե կաշին, բայց կաշվի արժեքը մնաց այն, ինչ վոր եր: Նա չաճեց, իրեն չմիացրեց հավելյալ արժեք կոշիկների արտադրության ժամանակ: Հետևաբար*, ապրանք արտադրողը շրջանառության վոլորտից դուրս չի կարող ավելացնել արժեքը, չի կարող փողը կամ ապրանքը կապիտալ դարձնել, առանց այդ առթիվ շփման մեջ մտնելու մյուս ապրանք-արտադրողների հետ:

Այսպես ուրեմն, կապիտալը չի կարող ծագել շրջանառությունից և նույնքան ել չի կարող ծագել շրջանառությունից դուրս: Նա պետք է առաջանա շրջանառության մեջ և միևնույն ժամանակ վոչ շրջանառության մեջ:



*Այսպիսով մենք ստացանք յերկակի հետևանք:*

*Փողի փոխարկվելը կապիտալի պետք է բացահայտվի ապրանքափոխանակության իմմանենտ օրենքների հիման վրա, այսինքն՝ յելակետ պետք է ծառայի մեզ համար եկվիվալենտների փոխանակությունը: Մեր փողատերը, վոր առայժմ դեռ ներկայացնում է միայն կապիտալիստի թրթուրը, պետք է ապրանքները գնի իրենց արժեքով, վաճառե նրանք իրենց արժեքով և այնուամենայնիվ վերջ ի վերջո այդ պրոցեսից ավելի արժեքներ դուրս կորզե, քան թե նա դրել եր նրանց մեջ: Նրա թիթեռի, այսինքն՝ իսկական կապիտալիստի, փոխարկվելը պետք է տեղի ունենա շրջանառության վոլորտում և միևնույն ժամանակ վոչ շրջանառության վոլորտում: Այսպես են պրոբլեմի պայմանները*: Hic Rhadus, hic salta! *)[1]):

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺՆ ԻԲՐԵՎ ԱՊՐԱՆՔ ՅԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Տակավին ամենահին ժամանակներում մենք տեսնում ենք չահագործումն ու հավելյալ աշխատանքի յուրացումը—բնակչության չաշխատող շերտերի կողմից: Հին ստրկությունը, այնպես ինչպես նաև միջնադարյան կալվածական և ճորտային հարաբերությունները, հիմնված է աշխատանքի արդեն վորոշ բարձրության հասած արտադրողականության վրա, այն է՝ մարդկային աշխատանքի ընդունակության վրա՝ պահելու ավելի քան մի մարդու գոյություն: Այդ յերկու տնտեսական փորմացիաներն ել միայն տարբեր ձևեր են հանդիսանում, վորոնց մեջ հասարակության մի դասակարգն օգտագործում է այդ արտադրողականությունը, ստիպելով մյուս դասակարգին պահելու իրեն: Այդ իմաստով* անտիկ շրջանի ստրուկը, ինչպես նաև միջնադարյան ճորտը, հանդիսանում է այժմյան վարձու բանվորի անմիջական նախորդը: Բայց վո՛չ անտիկ հին աշխարհում, վո՛չ ել միջին դարերում բանվորական ուժն ապրանք չեր դառնում չնայելով նրա արտադրողականությանը և նրա շահագործմանը: *Այն, ինչ վոր արդի հարաբերությունը վարձու բանվորի և ձեռնարկողի միջև տարբերում է ինչպես ստրկությունից, այնպես նաև ճորտատիրությունից,— այդ* ամենից առաջ աշխատողի անձնական ազատությունն է: *Չե՞ վոր ապրանքի վաճառումը կամավոր մասնավոր գործարք է հանդիսանում, վոր հիմնված է մարդկանց ամենակատարյալ անհատական ազատության վրա: Անազատ մարդը չի կարող վաճառել իր բանվորական ուժը: Այնուհետև, դրա համար անհրաժեշտ է մի պայման ևս, այնե՝* վորպեսզի բանվորը արտադրության միջոցներ չունենա: *Յեթե նա այդ միջոցներն ունենար, այն ժամանակ նա ինքն ապրանքներ կարտադրեր և իր բանվորական ուժը չեր խորթացնի իբրև ապրանք: Հետևաբար, այդ ազատագրումը*, բանվորական ուժի այդ անջատումն արտադրության միջոցներից հանդիսանում է, անձնական ազատության հետ մեկտեղ, այն պայմանը, վոր բանվո–

[1]) Капитал I, стр. 125—136.

*) *Բառացի նշանակում է «Հռոդոսը վոր կա, այս է, այստեղ պարիր» Ծ. Թ.*:

բական ուժը ներկայումս ապրանք է դարձնում: *Ստրկատիրական անտեսության մեջ բանվորական ուժն ամենևին անջատված չէ արտադրության միջոցներից: Ընդհակառակը, այդ բանվորական ուժն ինքը ներկայացնում է իրենից արտադրության միջոց և աշխատանքի գործիքների, հումքի և այլն հետ միասին պատկանում է իր տիրոջն իբրև նրա մասնավոր սեփականությունը: Ստրուկն ինքը հանդիսանում է ստրկատիրական դարաշրջանի արտադրության միջոցների ընդհանուր մասսայի լոկ մի մասը: Ճորտատիրական հարաբերությունների ժամանակ՝ բանվորական ուժն անմիջական կերպով իրավաբանորեն ամրացված է արտադրության միջոցին, հողին, նա ինքը ներկայացնում է իրենից արտադրության այդ միջոցի լոկ պատկանելիությունը: Չէ՞ որ բահրան ստացվում է ամենևին ոչ անձերից, այլ որոշ հողամասերից. յերբ այդ հողամասը ժառանգաբար կամ այլ կերպով ուրիշ բանվորական ձեռք է անցնում, ապա նրա հետ միասին անցնում են նաև բահրայական պարտավորությունները: Ներկայումս բանվորն անձնապես ազատ է և չի հանդիսանում ոչ որևէ մեկի սեփականությունը, ո՛չ էլ արտադրության որևէ միջոցի բաղկացուցիչ մասը: Ընդհակառակը, արտադրության միջոցները գտնվում են մի ձեռքում, բանվորական ուժն—ուրիշ, և յերկու սեփականատերերը կանգնած են միմյանց հանդեպ իբրև ինքնուրույն և ազատ անձնավորություններ, իբրև վաճառողներ և գնողներ. կապիտալիստն իբրև բանվորական ուժ գնող, բանվորն—իբրև այդ ուժը վաճառող...*[1])

*Հռոմեյական ստրուկն իր սեփականատիրոջ հետ կաշկանդված էր շղթաներով, վարձու բանվորը—կապված է իր սեփականատիրոջը անտեսանելի թելերով: Միայն թե այդ սեփականատերը ո՛չ թե առանձին կապիտալիստն է, այլ կապիտալիստների դասակարգը:*[2])

Բանվորական ուժ կամ աշխատունակություն ասելով մենք հասկանում ենք ֆիզիկական և հոգևոր ունակությունների այն գումարը, վոր ունի կենդանի որգանիզմը, մարդու կենդանի անձնավորությունը, և վորքան նրա կողմից ամեն անգամ ընթացքի մեջ են դրվում, յերբ նա վորևե սպառողական արժեք է արտադրում:

*Բայց վորպեսզի փողատերը փաստորեն կարողանա շուկայում բանվորական ուժ գտնել իբրև առանձին ապրանք, պետք է ի կատար ածվեն զանազան նախադրյալներ:* Ապրանքափոխանակությունն, ինքնըստինքյան, ո՛չ մի այլ կախման հարաբերություն չի յենթադրում, բացի նրանցից, վորոնք բղխում են նրա սեփական բնությունից: *Իսկ քանի վոր այդ այդպես է, բանվորական ուժը կարող է շուկայում յերևան գալ իբրև ապրանք այն ժամանակ միայն և այն չափով միայն,* յերբ և վորչափով այն շուկա յե դուրս բերվում կամ վաճառվում է իր սեփական տիրոջ կողմից, այսինքն՝ այն անձի կողմից, վորի բանվորական ուժը հանդիսանում է այն: *Վորպեսզի նրա տերը կարողանա վաճառել այն իբրև ապրանք, նա պետք է հնարավորություն ունենա տնօրի-*

[1]) Р. Люксембург—«Введение в политэконом»., изд 1930 г. стр. 228—230.
[2]) Капитал I, стр. 557.



*նելու այն, հետևաբար, նա պետք է իր աշխատանքի ընդունակության ազատ սեփականատերը լինի. ազատ անձնավորություն լինի: Բանվորական ուժի սեփականատերը և փողի սեփականատերը հանդիպում են շուկայում և միմյանց հետ գործարք են կնքում իբրև իրավահավասար ապրանքատերեր, վորոնք միայն նրանով են միմյանցից տարբերվում, վոր մեկը գնում է, մինչդեռ մյուսը՝ վաճառում, հետևաբար,* իրավաբանորեն նրանք հավասար անձնավորություններ են: *Այդ տեսակ հարաբերության յերկարատև գոյությունը պահանջում է, վորպեսզի բանվորական ուժի սեփականատերը վաճառե այն միշտ միայն վորոշ ժամանակով, վորովհետև յեթե նա վաճառեր այն ամբողջությամբ, միանգամ ընդմիշտ, ապա նա դրա հետ միասին վաճառած կլիներ ինքն իրեն, ազատ մարդուց կփոխարկվեր ստրուկի, ապրանքատերն ապրանք կդառնար: Իբրև անձնավորություն նա միշտ պետք է պահպանե հարաբերությունը դեպի իր բանվորական ուժը իբրև իր սեփականությունը, իբրև իր ապրանքը, իսկ այդ հնարավոր է լոկ այն չափով, վորչափով վոր նա գնողին թույլ է տալիս իր բանվորական ուժով օգտվելու կամ այն գործածելու միայն վորոշ ժամանակի ընթացքում, հետևաբար, վորչափով վոր նա, տալով բանվորական ուժը՝ չի հրաժարվում նրա վրա ունեցած սեփականության իրավունքից:*

*Յերկրորդ անհրաժեշտ պայմանը, վոր անհրաժեշտ է, վորպեսզի փողատերը կարողանա շուկայում բանվորական ուժ գտնել իբրև ապրանք, այդ այն է, վոր* բանվորական ուժի սեփականատերը պետք է զրկված լինի վաճառելու այն ապրանքները, վորոնց մեջ իրայնացած է նրա աշխատանքը, և միևնույն ժամանակ ստիպված լինի իբրև ապրանք վաճառելու հենց այն բանվորական ուժը, վոր գոյություն ունի միայն նրա կենդանի օրգանիզմի մեջ:

*Նրա համար, վորպեսզի հնարավորություն լինի վաճառել բանվորական ուժից տարբեր վորևե այլ ապրանք, պետք է, իհարկե, արտադրության միջոցներ ունենալ, օրինակ՝ հում նյութեր, աշխատանքի գործիքներ և այլն: Կոշիկ չի կարելի կարել, առանց կաշի ունենալու: Բացի դրանից՝ աշխատավորին անհրաժեշտ են նաև ապրուստի միջոցներ: Վոչ վոք, մինչև անգամ յերազողը, ստեղծագործող «յերազողը, վոր ստեղծագործում է» «ապագայի յերաժշտությունը», չի կարող ապրել ապագայի արդյունքներով, չի կարող ապրել այն սպառողական արժեքների հաշվին, վորոնց արտադրությունը դեռ վերջացած չէ. յերկրագնդի վրա իր յերևալու առաջին օրվանից սկսած՝ մարդը պետք է ամեն օր սպառե, նախքան արտադրել սկսելը, սպառե և այն ժամանակ, յերբ նա արտադրում է: Յեթե արդյունքներն արտադրվում են իբրև ապրանքներ, ապա նրանք պետք է վաճառվեն իրենց արտադրությունն ավարտվելուց հետո, և միայն իրենց վաճառվելուց հետո նրանք կարող են բավարարել արտադրողի կարիքները: Այսպիսով, արտադրության համար անհրաժեշտ ժամանակի վրա ավելանում է վաճառելու համար անհրաժեշտ ժամանակը:*

*Այսպիսով*, փողատերը միայն այն դեպքում կարող է իր փողը կապիտալ դարձնել, յեթե շուկայում ազատ բանվոր գտնի, ազատ յերկակի իմաստով.

նախ և առաջ՝ նա պետք է իր բանվորական ուժը, իբրև ազատ անձնավորություն, տնօրինի իբրև ապրանք, յերկրորդ՝ չպետք է ունենա վաճառելու համար վոչ մի ուրիշ ապրանք, վոչնչից վոչինչ չպետք է ունենա (պետք է բազեյի նման մերկ լինի), պետք է ազատ լինի այն բոլոր առարկաներից, վորոնք անհրաժեշտ են բանվորական ուժի պրակտիկ գործադրության համար:

*Այն հարցը, թե ինչու այդ ազատ բանվորը շրջանառության վոլորտում կանգնած է փողատիրոջ հանդեպ, չի հետաքրքրում փողատիրոջը, վոր բանվորական շուկան գտնում է պատրաստի ձևով, իբրև ապրանքի շուկայի մի առանձին ստորաբաժանումը: Յեվ մեզ էլ այն առայժմ նույնքան քիչ է հետաքրքրում: Մենք թեորեապես կառչում ենք հենց փաստից, վորից կառչում է փողատերը գործնականապես: Համենայն դեպս՝ մի բան պարզ է.* Բնությունը չի արտադրում մի կողմից փողատերերին և ապրանքատերերին, մյուս կողմից լոկ միայն բանվորական ուժի տերերին: Այդ հարաբերությունը չի հանդիսանում վո՛չ բնության իրեն ստեղծած, վո՛չ էլ այնպիսի հասարակական հարաբերություն, վոր հատուկ լիներ բոլոր պատմական ժամանակաշրջաններին: *Ակներև է, վոր նա ինքը նախորդ պատմական զարգացման հետևանք է, բազմաթիվ տնտեսական հեղաշրջումների արդյունք և հասարակական արտադրության ամբողջ մի շարք ավելի հին ֆորմացիաների կործանման արդյունք:*[1])

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ԱՐԺԵՔԸ

*Ի՞նչ բան է բանվորական ուժի արժեքը: Ինչպես վոր ամեն տեսակ ուրիշ ապրանքի համար, նրա* արժեքն էլ վորոշվում է այն ստեղծելու համար անհրաժեշտ աշխատանքի քանակությամբ: *Մարդու բանվորական ուժը գոյություն ունի միայն նրա կենդանի անձնավորության մեջ: Մարդը պետք է գործածի արդյունքների վորոշ քանակություն, վորպեսզի կարողանա պահպանել իր գոյությունն ու իր զարգացումը: Բայց մարդն էլ մաշվում է ճիշտ այնպես, ինչպես և մեքենան, և այն ժամանակ նրան հարկավոր է փոխարինել ուրիշ մարդկանցով: Բացի կենսամիջոցների վորոշ քանակությունից, վորոնք անհրաժեշտ են անձնապես նրա համար, բանվորը պետք է միջոցներ ունենա նմանապես նրա համար, վորպեսզի կրթի յերեխաներին, վորոնք փոխարինելու յեն նրան բանվորական շուկայում և պետք է շարունակեն բանվորների ցեղը: Բացի դրանից, վորպեսզի զարգացնե իր բանվորական ուժը և վորոշ հմտություն ձեռք բերի, նրան անհրաժեշտ է ծախսել արժեքների վորոշ քանակություն էլ: Մեր նպատակի համար բավական է քննության առնել* միայն միջին աշխատանքը, *վորի կազմության և զարգացման համար անհրաժեշտ է աննշան մեծություն ունեցող արժեք ծախսել: Սակայն, յես պետք է այս առիթից օգտվեմ, վորպեսզի հաստատեմ, վոր արդյունաբերության զանազան ճյուղերում գործադրվող բանվորական ուժերի արժեքը, նույնպես տարբեր-*

[1]) Капитал I, стр. 137—139



*վում է միմյանցից, ինչպես և տարբեր են այն արժեքները, վորոնք ստեղծում են զանազան տեսակ բանվորական ուժով: Այդ պատճառով՝* աշխատավարձի հավասարեցնելու ձգտումը հիմնված է սխալի վրա, այն անիրական ցանկության վրա, վոր յերբեք չի կարող կենսագործվել: *Այդ այն կեղծ և մակերեսային ռադիկալիզմի արդյունքն է, վորն ընդունելով նախադրյալներն՝ աշխատում է ճողոպրել նրանց յեզրակացություններից: Բանվորական ուժի, ինչպես նաև ամեն մի այլ ապրանքի, արժեքը* կարգավորվում է վարձու աշխատանքի սիստեմի հիման վրա, *և վորովհետև բանվորական ուժի տարբեր տեսակները տարբեր արժեքներ ունեն և իրենց ստեղծման համար աշխատանքի տարբեր քանակություններ են պահանջում, դրա համար էլ նրանք բանվորական շուկայում տարբեր գին ունեն:* Պահանջել հավասար կամ միայն արդարացի վարձատրություն՝ մնալով վարձու աշխատանքի սիստեմի հողի վրա, միևնույնն է, թե պահանջել ազատություն, յերբ գոյություն ունի ստրկությունը: *Այն, ինչ վոր դուք արդարացի կամ օրինական եք համարում, այստեղ հաշվի չի առնվում: Ընդհակառակը, այստեղ հարցը վերածվում է գլխավորապես այն խնդիրը պարզելուն, թե արտադրության տվյալ սիստեմի ժամանակ ինչն է հանդիսանում անհրաժեշտ և անխուսափելի:*

*Բոլոր շարադրածից հետո պարզ է, վոր* բանվորական ուժի արժեքը վորոշվում է կենսամիջոցների արժեքով, վորոնք անհրաժեշտ են նրա համար, վորպեսզի կարելի լինի ստեղծել, զարգացնել, պահպանել բանվորական ուժը և ապահովել նրա գոյությունը ապագայի համար:[1])

*Այդ յուրահատուկ ապրանքը, բանվորական ուժն այժմ յենթակա յե մեր ամենամոտիկ քննարկման: Բոլոր մյուս ապրանքների նման ունի արժեք: Ինչո՞վ է վորոշվում այն:*

*Բանվորական ուժի, ինչպես և ամեն մի այլ ապրանքի, արժեքը վորոշվում է այն բանվորական ժամանակով, վոր անհրաժեշտ է առևտրի այդ* սպեցիֆիկ առարկայի արտադրության, հետևաբար նաև վերարտադրության համար: Վորչափով վոր բանվորական ուժը արժեք է հանդիսանում, նա ինքը ներկայացնում է միայն իր մեջ իրայնացած հասարակական միջին աշխատանքի վորոշ քանակություն: *Բանվորական ուժը գոյություն ունի միայն իբրև կենդանի անհատի ունակություն: Դրա համար էլ՝ այդ անհատի գոյությունը բանվորական ուժի պահպանման նախադրյալն է: Քանի վոր դրված է անհատի գոյությունը, նրա բանվորական ուժի արտադրության էությունը նրա ինքնարտադրությունն է կամ ինքնապահպանումը: Ինքնապահպանման համար կենդանի անհատը կարիք ունի գոյության միջոցների վորոշ գումարի: Այդպիսով՝ բանվորական ուժի արտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակը վեր է ածվում այն բանվորական ժամանակին, վոր* անհրաժեշտ է գոյության այդ միջոցների արտադրության համար, կամ բանվորական ուժի արժեքը գոյության այն միջոցների արժեքն է, վորոնք անհրաժեշտ են նրա տիրոջ կյանքը պահպանելու համար: *Բայց բանվորական ուժը կենսա-*

[1]) Маркс—«Зарпл., цена и прибыл», стр. 45—50

գործվում է միայն արտաքին արտահայտման միջոցով և դրսևորվում է միայն աշխատանքի մեջ: Նրա արտահայտման պրոցեսում, աշխատանքի մեջ ծախսվում է մարդկային մկանների, նյարդերի, ուղեղի և այլն որոշ քանակություն,—մի քանակություն, որ պետք է նորից հատուցվի: Այդ ուժեղացրած ծախսումը ստեղծում է ուժեղացրած հատուցման անհրաժեշտություն: Այսօր աշխատող բանվորական ուժի սեփականատերը պետք է հնարավորություն ունենա վաղն էլ կրկնելու միևնույն պրոցեսը՝ ուժի և առողջության նախկին պայմաններում: Հետևաբար, գոյության միջոցների գումարը բավական պետք է լինի նրա համար, որպեսզի աշխատավոր անհատին իբրև այդպիսին պահպանե նորմալ կենսագործության վիճակում: Բնական կարիքներն իրենք, ինչպես՝ կերակուրը, հագուստը, վառելիքը, բնակարանը և այլն, տարբեր են, այս կամ այն յերկրի բնության կլիմայական և այլ առանձնահատկությունների հետ կապված: Մյուս կողմից, այսպես կոչված անհրաժեշտ կարիքների չափը, ինչպես նաև նրանց բավարարման յեղանակներն իրենք պատմության արդյունք են և կախված են մեծ մասամբ յերկրի կուլտուրական մակարդակից, ի միջի այլոց նաև նրանից, թե ինչպիսի պայմաններում, հետևաբար և ինչպիսի սովորություններով ու կենսական պահանջներով ձևավորվեց ազատ բանվորների դասակարգը: Այսպես ուրեմն, իբրև հակադրություն մյուս ապրանքների՝ բանվորական ուժի արժեքի որոշումը իր մեջ պատմական և բարոյական տարր է պարունակում: Սակայն, որոշ յերկրի և որոշ ժամանակաշրջանի համար բանվորին անհրաժեշտ գոյամիջոցների միջին քանակությունը որոշ մեծություն է:

Բանվորական ուժի սեփականատերը մահկանացու յե: Հետևաբար, այս բոլորով հանդերձ, որպեսզի նա մշտական լինի շուկայում,--ինչ հենց այդ էլ պահանջվում է, որպեսզի փողը միշտ կապիտալի փոխարկվի,—բանվորական ուժի սեփականատերերը պետք է «հավերժացնեն իրենց», ինչպես յուրաքանչյուր անհատ հավերժացնում է իրեն, այն է բազմացման միջոցով: Բանվորական այն ուժերը, որոնք հեռանում են շուկայից անհատների մաշվելու և մահվան հետևանքով, պետք է միշտ փոխարինվեն նոր բանվորական ուժերի առնվազն նույնպիսի քանակությամբ: Բանվորական ուժի արտադրության համար անհրաժեշտ գոյամիջոցների գումարը, այդ պատճառով, պարունակում է իր մեջ այդպիսի փոխարինողների գոյության միջոցները, այսինքն՝ բանվորների յերեխաներինը, և այդ միջոցով ապրանքային շուկայում հավերժացվում է այդ յուրատեսակ ապրանքատերերի ցեղը:

Մարդու ընդհանուր բնությունն այն ուղղությամբ կազմավորելու համար, որպեսզի նա արվեստ ու փորձառություն ձեռք բերի աշխատանքի որոշ ճյուղի մեջ, տեր դառնա զարգացած և այն էլ սպեցիֆիկ բանվորական ուժի, պահանջվում է որոշ ուսում կամ կրթություն, որն իր հերթին ապրանքային համարժեքների ավելի մեծ կամ ավելի փոքր գումար արժե: Կրթության այդ ծախքերը զանազան են, նայելով տվյալ բանվորական ուժի շատ կամ քիչ բարդությանը: Հետևաբար, ուսուցման այդ ծախքերը, որոնք



բոլորովին չնչին են սովորական բանվորական ուժի համար, մտնում են այն արժեքների շրջագծի մեջ, որոնք ծախսվում են նրա արտադրության վրա:

Այսպես ուրեմն, բանվորական ուժի արժեքը վեր է ածվում գոյության միջոցների որոշ գումարի արժեքին: Այդ պատճառով էլ նա փոփոխվում է գոյության այդ միջոցների արժեքի փոփոխության հետ, այսինքն՝ նրանց արտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակի մեծության փոփոխության հետ:

Գոյության միջոցների մի մասը, օրինակ կենսամթերքները, վառելիքը և այլն, սպառվում են ամեն օր և այդ պատճառով էլ ամեն օր պետք է փոխարինվեն: Գոյության մյուս միջոցներն, ինչպես հագուստը, կահկարասին և այլն, գործ են ածվում ավելի կամ պակաս յերկարատև ժամանակաշրջանի ընթացքում, դրա համար էլ յենթակա յեն փոխարինման՝ միայն ավելի յերկարատև ժամանակ անցնելուց հետո: Ապրանքների մի մասը գնվում և վճարվում է ամեն օր, մյուսներն՝ ամեն շաբաթ, յերեք ամիսը մի անգամ և այլն: Բայց ինչպես էլ որ բաշխվելու լինի այդ ծախքերի գումարն, օրինակ, տարվա ընթացքում, այն պետք է ծածկվի սովորական, միջին օրեցօր ստացվող յեկամուտներից: Յեթե բանվորական ուժի արտադրության համար ամեն օր անհրաժեշտ ապրանքների մասսան=A-ի, ամեն շաբաթ պահանջվող ապրանքների մասսան=B-ի, յերեք ամիսը մի անգամ պահանջվող ապրանքների մասսան=C-ի և այլն, ապա այդ ապրանքների ամենօրյա միջին քանակությունը կլինի՝

$$\frac{365A + 52B + 4C + \text{և այլն}}{365}$$

Յենթադրենք, թե միջին օրվա համար անհրաժեշտ այդ ապրանքային մասսայի մեջ պարունակված է 6 ժամվա հասարակական աշխատանք. այն ժամանակ բանվորական ուժի մեջ օրական իրայնացվում է հասարակական միջին աշխատանքի օրվա կեսը, այսինքն բանվորական ուժի ամենօրյա արտադրության համար կես բանվորական օր է պահանջվում: Բանվորական ուժի ամենօրյա արտադրության համար անհրաժեշտ աշխատանքի այդ քանակությունը կազմում է նրա օրական արժեքը, կամ ամեն օր վերարտադրվող բանվորական ուժի արժեքը: Յեթե միջին հասարակական աշխատանքի կես օրն արտահայտվում է 3 շիլլինգի ոսկու մասսայով կամ մի թալերով, ապա թալերն այն գինն է, որ համապատասխանում է բանվորական ուժի օրական արժեքին: Յեթե բանվորական ուժի տերն ամեն օր վաճառում է այն մեկ թալերով, ապա նրա վաճառքի գինը հավասար է նրա արժեքին, և մեր յենթադրությամբ՝ իր թալերը կապիտալի փոխարկելու ցանկությամբ կլանված փողատերն իսկապես վճարում է այդ արժեքը:

Բանվորական ուժի արժեքի ամենաստորին կամ նվազագույն սահմանը կազմում է ապրանքային մասսայի արժեքը, առանց որի ամենօրյա հոսանքի՝ բանվորական ուժի տերը, մարդը, ի վիճակի չեր լինի վերանորոգելու իր կենսական պրոցեսը, այսինքն՝ գոյության ֆիզիկապես անհրաժեշտ միջոց-

ների արժեքը: Ցեթե բանվորական ուժի գինը ընկնում է մինչև այդ մինիմումը, ապա՛ նա ընկնում է արժեքից ավելի ցած, վորովհետև այդպիսի պայմաններում բանվորական ուժը կարող է պահպանվել և յերևան գալ միայն վոխտ կերպարանքով: Մինչդեռ ամեն մի ապրանքի արժեք վորոշվում է այն բանվորական ժամանակով, վորը պահանջվում է նորմալ հատկության ապրանք արտադրելու համար:

Այդ որիգինալ ապրանքի, բանվորական ուժի, յուրահատուկ բնությունն արտահայտվում է ի միջիայլոց նրանով, վոր գնողի և վաճառողի միջև պայմանագիր կնքելուց հետո՝ նրա սպառողական արժեքը փաստորեն դեռ չի անցնում գնողի ձեռքը: Նրա արժեքը, յուրաքանչյուր այլ ապրանքի արժեքի նման, ավելի շուտ եր վորոշված, քան նրա շրջանառության մեջ մտնելը, վորովհետև հասարակական աշխատանքի վորոշ քանակություն արդեն ծախսված եր բանվորական ուժի արտադրության վրա, բայց նրա սպառողական արժեքը կայանում է լոկ նրա ուշ հետագայի ակտիվ արտահայտումների մեջ: Այդպիսով, ուժի խորթացումն ու նրա ռեալ արտահայտումը, այսինքն՝ նրա գոյությունն իբրև սպառողական արժեք, բաժանվում է ժամանակի մեջ: Բայց այդպիսի ապրանքների վաճառման ժամանակ, վորոնց սպառողական արժեքի ձևական խորթացումը բաժանվում է ժամանակի տեսակետից այն փաստորեն գնողին հանձնելուց, գնողի փողերը սովորաբար գործում են իբրև վճարման միջոց:

Այժմ մենք ծանոթացանք այն բանի հետ, թե ինչպես է վորոշվում այն արժեքը, վոր փողատերը վճարում է այդ յուրատեսակ ապրանքի, բանվորական ուժի, տիրոջը: Նրա սպառողական արժեքը, վոր փողատերն իր հերթին ստանում է փոխանակության ժամանակ, յերևան է գալիս միայն նրա իրական ոգտագործման պրոցեսում, բանվորական ուժի գործադրության պրոցեսում: Այդ պրոցեսի համար անհրաժեշտ բոլոր իրերը, հում նյութը և այլն փողատերը գնում է ապրանքային շուկայում և վճարում լիուլի գնով: Բանվորական ուժի սպառման պրոցեսը միևնույն ժամանակ ապրանքի և հավելյալ արժեքի արտադրության պրոցեսն է: Բանվորական ուժի սպառումը, ինչպես և ամեն մի ուրիշ ապրանքի սպառումը, տեղի յէ ունենում շուկայի կամ շրջանառության վոլորտի սահմաններից այն կողմը:

Շրջանառության կամ ապրանքափոխանակության վոլորտը, վորի շրջանակներում կենսագործվում է բանվորական ուժի գնումն ու վաճառքը, մարդու բնածին իրավունքների իսկական յեդեմն է: Այստեղ տիրապետում է միայն ազատությունը, հավասարությունը, սեփականությունը և Բենթամը: Ազատությո՜ւնը: Վորովհետև ապրանքի, որինակ, բանվորական ուժի, գնողն ու վաճառողը յենթարկվում են միայն իրենց ազատ կամքի կարգադրություններին: Նրանք պայմանագիր են կնքում իբրև ազատ, իրավաբանորեն իրավահավասար անձեր: Պայմանագիրն այն վերջնական հետևանքն է, վորի մեջ նրանց կամքն իր ընդհանուր իրավաբանական արտահայտությունն է գտնում: Հավասարությո՜ւնը: Վորովհետև նրանք վերաբերվում են միմյանց միայն իբրև ապրանքատերեր և փոխանակում են եկվիվալենտ եկվիվալենտի հետ: Սեփականությո՜ւնը: Վորովհետև նրանցից յուրաքանչյուրը միայն այն է տնօրինում, ինչ վոր իրեն է պատկանում: Բենթա՞մը, վորովհետև յուրաքանչյուրը հոգում է միայն իր մասին: Միակ ուժը, վոր նրանց կապում է միատեղ, այդ նրանցից յուրաքանչյուրի ձգտումն է դեպի իր սեփական ոգուտը, շահախնդրությունը, անձնական շահը: Բայց հենց այն պատճառով, վոր յուրաքանչյուրն հոգում է միայն իր մասին և վոչ վոք չի հոգում մյուսի մասին, նրանք բոլորն էլ, իրերի կանխահաստատ ներդաշնակության շնորհիվ կամ ամենախորամանկ նախախնամության ղեկավարությամբ կենսագործում են միայն իրենց փոխադարձ ոգուտը, իրենց ընդհանուր ոգուտը, իրենց ընդհանուր շահը:



Հրաժեշտ տալով պարզ շրջանառության կամ ապրանքափոխանակության այդ վոլորտին, վորից Ֆրիտրեդերը vulgaris քաղում է իր բոլոր հայացքները, հասկացողությունները, իր բոլոր դատողությունների մասշտաբը կապիտալի և վարձու աշխատանքի հասարակության մասին,—բաժանվելով այդ վոլորտից՝ մենք նկատում ենք, վոր սկսում են մի փոքր փոխվել մեր «գործող անձերի» (personae dramatis) կերպարանքները: Նախկին փողատերն ընթանում է առաջից իբրև կապիտալիստ, բազմանշանակ ժպտում է և այրվում է գործի անցնելու ցանկությամբ. մյուսը քաշ է գալիս գլուխը կախ գցած, ընդդիմանում է իբրև մի մարդ, վոր շուկայում վաճառել է իր սեփական մորթին և այդ պատճառով էլ ապագայում վո՛չ մի ուրիշ հեռանկար չի տեսնում, բացի մեկից. վոր այդ մորթին պետք է դաբաղեն:[1])

Վերջապես, յեթե շուկա յէ դուրս գալիս սպեցիֆիկ ապրանք բանվորական ուժը, նրա արժեքը, ինչպես և ամեն մի այլ ապրանքի արժեք, վորոշվում է նրա արտադրության համար հասարակականորեն անհրաժեշտ բանվորական ժամանակի համաձայն: Այդ պատճառով՝ արդյունքների արժեքի ձևի մեջ արդեն սաղմնային վիճակում գտնվում է կապիտալիստական արտադրության ամբողջ ձևը, հակասությունը կապիտալիստների և վարձու բանվորների միջև, արդյունաբերական պահեստի բանակը և կրիզիսները: Հետևաբար, ցանկանալ արտադրության կապիտալիստական յեղանակի վոչնչացումն «իսկական արժեքի» վերականգնման ոգնությամբ, այդ միևնույն է, թե ձգտել կաթոլիկությունը վոչնչացնել «իսկական» պապին վերականգնելու միջոցով, կամ թե չէ՝ աշխատել այնպիսի հասարակություն ստեղծել, վորի մեջ արտադրողները, վերջապես, կսկսեն տիրապետող լինել իրենց արդյունքների վերաբերմամբ, այն տնտեսական գործոնն հետևողականորեն անցկացնելու միջոցով, վորը կարող է արտադրողների ստրկացման ամենաիսկական միջոցը հանդիսանալ իրենց սեփական աշխատանքի արդյունքների կողմից:[2])

Արժեքը, մի կողմ թողնելով, նրա զուտ սիմվոլական արտահայտությու-

[1]) Капитал I, стр. 140—147.

[2]) Энгельс, «Анти—Дюринг», стр. 296

նը արժեքի նշանի մեջ, գոյություն ունի միայն այս կամ այն իրի, այս կամ այն սպառողական արժեքի մեջ: Մարդն ինքը, դիտվելով պարզապես իբրև բանվորական ուժի գոյությունը, բնության առարկա յե, մի իր, թեև կենդանի, գիտակցական իր, իսկ աշխատանքն ինքն այդ ուժի իրային արտահայտումն ե:[1])

## ԱՇԽԱՏԱՆՔ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺ

«Աշխատանքի ընդունակությունը» դեռ չի նշանակում «աշխատանք», ինչպես վոր սնունդը մարսելու ընդունակությունը ամենևին չի համատեղվում կերակուրն իրապես մարսելու հետ: Վորպեսզի այդ վերջին պրոցեսը կարողանա կատարվել, դրա համար, ինչպես հայտնի յե, բավական չե լավ ստամոքս ունենալը: Ով վոր խոսում ե աշխատանքի ընդունակության մասին, նա չի վերանում գոյության միջոցներից, վորոնք անհրաժեշտ են այդ ընդունակության պահպանման համար, քանի վոր նրա արժեքը հենց իրենով արտահայտում ե գոյության այդ միջոցների արժեքը: Բայց այդ հանգամանքը բանվորին վոչ մի օգուտ չի բերում, քանի նրա բանվորական ուժն իրեն համար գնող չի գտնում: Ընդհակառակը, այդ դեպքում նա իբրև մի բնական դաժան անհրաժեշտություն ե ըմբռնում այն փաստը, վոր նրա աշխատանքի ընդունակությունը վորոշ քանակությամբ գոյության միջոցներ պահանջեց իր արտադրության համար և շարունակ նորից ու նորից պահանջում ե նրանք իր վերարտադրության համար, իր վերականգնման համար: Նա այն ժամանակ Սիսմոնդիի հետ միասին հետևյալ հայտնագործությունն ե անում. «Աշխատանքի ընդունակությունը... վոչինչ բան ե, քանի այն վաճառված չե»:

Մենք արդեն տեսանք վերևում, վոր աշխատանքի արժեքի մասին խոսել՝ նշանակում ե հակասության մեջ ընկնել: Վորովհետև աշխատանքը, վորոշ հասարակական հարաբերությունների ժամանակ, վո՛չ միայն արդյունքներ ե արտադրում, այլև արժեք, և այդ արժեքը չափվում ե աշխատանքով, ապա նա նույնքան քիչ կարող ե հատուկ արժեք ունենալ, ինչպես ծանրությունն իբրև այդպիսին՝ հատուկ կշիռ, կամ տաքությունը—առանձին տեմպերատուրա: Բայց «իսկական արժեքի» բոլոր իմաստուններին խառնաշփոթ սոցիալական պատկերացումների բնորոշ առանձնահատկությունն այն պնդումն ե հանդիսանում, թե ժամանակակից հասարակության մեջ բանվորը չի ստանում իր աշխատանքի լրիվ «արժեքը» և թե սոցիալիզմը կոչված ե վերացնելու այդ: Այդ դեպքում ամենից առաջ պետք եր վորոշել, թե ի՞նչ բան ե աշխատանքի արժեքը. և այդ բանն անում են, փորձելով չափելու աշխատանքը վո՛չ թե նրա ադեքվատ չափով—ժամանակով, այլ նրա արդյունքով: Բանվորը պետք ե ստանա «իր աշխատանքի լրիվ արդյունքը»: Վո՛չ միայն աշխատանքի արդյունքը, այլև աշխատանքն ինքը պետք ե անմիջականորեն փոխանակվի ար-

[1]) Капитал I, стр. 174.



դյունքի հետ, աշխատանքի մի ժամը—աշխատանքի մյուս ժամի արդյունքի հետ: Բայց այստեղ իսկույնևեթ «վտանգավոր» դժվարություն ե ծագում: Յերբ ամբողջ արդյունքը բաշխվելու յե բանվորների միջև, այն ժամանակ հասարակության ամենագլխավոր առաջադիմական ֆունկցիան—կուտակումը ուժասպառվում ե կամ կթողնվի առանձին վերցրած յուրաքանչյուրի գործունեյության ու կամայականության:[1])

Մարդկային բանվորական ուժը հոսուն վիճակի մեջ, կամ մարդկային աշխատանքն ստեղծում ե արժեք, բայց աշխատանքն ինքն արժեք չե: Նա արժեք ե դառնում խտացած կերպարանքով, իրայնացած ձևով: Նրա համար, վորպեսզի արտահայտենք քաթանի արժեքն իբրև մարդկային աշխատանքի խտացում, անհրաժեշտ ե արտահայտել այն իբրև առանձին «սուբստանցիա», վորն իրայնորեն տարբեր ե քաթանից և միևնույն ժամանակ ընդհանուր ե նրան՝ մյուս ապրանքի հետ: Այդ խնդիրն արդեն լուծված ե:

Սյուրտուկի արժեքի վերաբերմամբ սյուրտուկը հանդիսանում ե վորակապես հավասար քաթանին, միևնույն տեսակի իր, վորովհետև նա արժեք ե: Նա այստեղ կատարում ե այն իրի դերը, վորի մեջ յերևան ե գալիս արժեքը, կամ վորն իր շոշափելի բնական ձևով ներկայացնում ե արժեքը: Իհարկե, սյուրտուկն իբրև ապրանք «սյուրտուկի» մարմին, միայն սպառողական արժեք ե: Սյուրտուկը նույնքան քիչ ե արժեք արտահայտում, վորքան և առաջին պատահած քաթանը: Բայց այդ ապացուցում ե միայն այն, վոր սյուրտուկն արժեքի տեսակետից իր հարաբերության սահմաններում դեպի քաթանն ավելի նշանակություն ունի, քան թե նրանից դուրս,— ինչպես վոր քիչ քանակություն չեն կազմում այն մարդիկ, վորոնք վոսկեկար սյուրտուկի մեջ ավելի արժեն, քան թե առանց նրան:[2])

## ԿԱՊԻՏԱԼԻԶՄՆ ԻԲՐԵՎ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Կապիտալիստական արտադրությունը շարունակ ձգտում ե դուրս գալ այդ իմմանենտ սահմաններից, բայց նա հաղթահարում ե նրանց միայն այն միջոցների օգնությամբ, վորոնք նրա առաջ կրկին սահմաններ են դնում և այն ել ավելի հսկայական մասշտաբով:

Կապիտալիստական արտադրության իսկական սահմանը—կապիտալն ինքն ե. այդ նշանակում ե՝ կապիտալն ու նրա արժեքի ինքնաճումը հանդիսանում ե արտադրության յելակետն ու վերջնակետը, մոտիվն ու նպատակը. արտադրությունը միայն արտադրություն ե կապիտալի համար, և վո՛չ թե ընդհակառակը. արտադրության միջոցները չեն հանդիսանում պարզապես միջոցներ՝ արտադրողների հասարակության կենսական պրոցեսի մշտական ընդ-

[1]) Энгельс, «Анти-Дюринг», стр. 297—298.

[2]) Капитал I, стр. 18.

*լայնման համար: Այն սահմանները, վորոնց մեջ միայն կարող է տեղի ունենալ կապիտալ արժեքի պահպանումն ու ավելացումը, վոր հիմնված է արտադրողների էքսպրոպրիացիայի և նրանց լայն մասսաների միավորման վրա, այդ սահմաններն այդ պատճառով* շարունակ կոնֆլիկտի մեջ են մտնում արտադրության մեթոդների հետ, վորոնք պետք է կապիտալը գործադրեն իրենց նպատակների համար և վորոնք ուղղված են դեպի արտադրության անսահման մեծացումը—*դեպի արտադրությունն իբրև ինքնանպատակ, դեպի աշխատանքի հասարակական արտադրողական ուժի անպայման զարգացումը*: Միջոցը—հասարակական արտադրողական ուժերի անսահման զարգացումը—մշտական կոնֆլիկտի մեջ է մտնում սահմանափակ նպատակի,—գոյություն ունեցող կապիտալի արժեքի մեծացման հետ: *Այդ պատճառով*, յեթե արտադրության կապիտալիստական յեղանակը պատմական միջոցն է նյութական արտադրողական ուժի զարգացման և նրա համապատասխան համաշխարհային շուկա ստեղծելու համար, ապա նա, դրա հետ միասին մշտական հակասություն է ներկայացնում իր այդ պատմական խնդրի և արտադրության նրան համապատասխանող հասարակական հարաբերությունների միջև:[1])

*Բայց արտադրության* այդ կապիտալիստական յեղանակի հակասությունը հենց նրա տենդենցի մեջ է դեպի արտադրողական ուժերի բացարձակ զարգացումը, վորը շարունակ կոնֆլիկտի մեջ է մտնում արտադրության այն սպեցիֆիկ պայմանների հետ, վորոնց մեջ շարժվում է և կարող է միայն շարժվել կապիտալը:

Խնդիրն այն չէ, թե գոյության միջոցներ չափազանց շատ են արտադրվում գոյություն ունեցող բնակչության համեմատությամբ: Ընդհակառակը: Նրանցից չափազանց քիչ է արտադրվում, վորպեսզի բնակչության մասսան կարողանար վայելուչ և մարդավարի ապրել:

*Խնդիրն այն չէ, թե արտադրության միջոցներ բավականաչափ շատ չեն արտադրվում նրա համար, վորպեսզի բնակչության աշխատունակ մասն աշխատանք ստանա: Ընդհակառակը: Նախ և առաջ, արտադրվում է բնակչության չափազանց խոշոր մի մաս, վոր փաստորեն անաշխատունակ է, վորը հանգամանքների շնորհիվ ստիպված է շահագործել ուրիշների աշխատանքը կամ զբաղվել այնպիսի աշխատանքներով, վորոնք կարող են աշխատանք համարվել միայն արտադրության խղճուկ յեղանակի ժամանակ: Յերկրորդ, արտադրության միջոցներ բավականաչափ չեն արտադրվում, վորպեսզի ամբողջ աշխատունակ բնակչությունը կարողանար աշխատել ամենից ավելի արտադրողական պայմաններում, հետևաբար, վորպեսզի նա բացարձակ բանվորական ժամանակը բանվորական ժամանակի ընթացքում գործադրվող հաստատուն կապիտալի մեծ մասսայի և մեծ արտադրողականության հետևանքով կրճատվի*[2]):

... վոչ ամեն կամայական փողային կամ արժեքի գումար կարող է փոխարկվել կապիտալի, ընդհակառակը՝ այդ փոխարկման նախադրյալ է հանդիսանում փողի կամ փոխանակային արժեքների վորոշ մինիմում առանձին հողատիրոջ կամ ապրանքատիրոջ ձեռքերում: *Փոփոխական կապիտալի մինիմումը ներկայացնում է մի բանվորական ուժի արտադրության ծախքերը, բանվորական ուժի, վոր գործ է դրվում որեցոր ամբողջ տարվա ընթացքում, հավելյալ արժեք հայթայթելու համար: Յեթե բանվորն ունենար իր սեփական արտադրության գործիքները և յեթե նա բավականանար բանվորի կյանքով, ապա նրա համար բավականաչափ բանվորական ժամանակ կլիներ, վոր անհրաժեշտ եր նրա գոյության միջոցների վերարտադրության համար, ասենք՝ որական 8 ժամ: Հետևաբար, արտադրության միջոցներ էլ նրա համար կպահանջվեր 8 բանվորական ժամերի հաշվով: Ընդհակառակը, կապիտալիստը, վոր բացի այդ 8 ժամից հարկադրում է նրան կատարելու, ասենք, 4 ժամվա հավելյալ աշխատանք—ավելադիր դրամական գումարի կարիք ունի՝ արտադրության ավելադիր միջոցներ ձեռք բերելու համար: Սակայն, մեր յենթադրության դեպքում նա ստիպված կլիներ գործադրել յերկու բանվոր արդեն նրա համար, վորպեսզի ամեն որ յուրացվող հավելյալ արժեքի միջոցով բանվորի կյանք վարի, այսինքն՝ հնարավորություն ունենա բավարարելու իր անհրաժեշտ կարիքները: Այդ դեպքում նրա արտադրության նպատակը կլիներ պարզապես կյանքի պահպանումը, այլ վոչ թե հարստության ավելացումը. մինչդեռ կապիտալիստական արտադրության ժամանակ յենթադրվում է վերջինը: Սովորական բանվորից միայն յերկու անգամ ավելի լավ ապրելու և արտադրվող հավելյալ արժեքի կեսը նորից կապիտալի փոխարկելու համար, նա ստիպված կլիներ բանվորների թիվն ավելացնելու հետ միասին՝ ութ անգամ ավելացնել նաև ավանսով դրված կապիտալի մինիմումը: Իհարկե, նա ինքն էլ, իր բանվորի նման, կարող է անմիջականորեն ձեռնամուխ լինել արտադրության պրոցեսին, բայց այն ժամանակ էլ նա կլինի ինչ-վոր միջին բան կապիտալիստի և բանվորի միջև, կլինի «փոքրիկ տնտեսատեր», «վարպետիկ»: Կապիտալիստական արտադրության վորոշ մակարդակը պահանջում է, վորպեսզի այն բոլոր ժամանակը, վորի ընթացքում կապիտալիստը գործում է իբրև կապիտալիստ, այսինքն՝ իբրև մարմնացած կապիտալ, նա կարողանա գործադրել ուրիշի աշխատանքի յուրացման վրա, այդ պատճառով էլ՝ նրա վերահսկողության և այդ աշխատանքի արդյունքները վաճառելու վրա: Միջնադարյան համքարությունները ձգտում էյին բռնությամբ արգելք հանդիսանալ արհեստավոր վարպետի կապիտալիստ դառնալուն, բանվորների շատ աննշան թվով սահմանափակելով այն մաքսիմումը, վոր առանձին վարպետին թույլ եր տրվում պահելու:* Փողատերը կամ ապրանքատերը միայն այն ժամանակ է իսկապես կապիտալիստ դառնում, յերբ արտադրության համար կանխավճարված նվազագույն գումարը խիստ գերակշռում է միջնադարյան մաքսիմումը: *Այստեղ էլ, ինչպես և բնագիտության մեջ, հաստատվում է Հեգելի իր «Տրամաբանության լոգիկայի» մեջ գրած այն որենքի ճշտությունը*, թե զուտ քանակական փոփոխությունները վորոշ աստիճանում անցնում են վորակական տարբերությունների:

[1]) К. Маркс,—Капитал III, ч. I, стр. 189.

[2]) Նույն տեղը, էջ 195.

*Արժեքի այն նվազագույն գումարը, վոր պետք է ունենա առանձին փողատերը կամ ապրանքատերը, վորպեսզի կապիտալիստ դառնա, փոխվում է կապիտալիստական արտադրության զարգացման տարբեր աստիճաններում, իսկ զարգացման տվյալ աստիճանում տարբեր է արտադրության տարբեր վոլորտներում, կախված է նրանց առանձնահատուկ տեխնիկական պայմաններից: Արտադրության վորոշ ճյուղեր, կապիտալիստական արտադրության հենց բոլորովին սկզբում, կապիտալի այնպիսի մինիմում են պահանջում, վորպիսին այդ ժամանակ դեռ չի լինում առանձին անհատների ձեռքերում: Այդ, մի կողմից, առաջ է բերում առանձին անձերին, ինչպես Ֆրանսիայում, պետական սուբսիդիաներ տալը, Կոլբերի դարաշրջանում և միքանի գերմանական պետությունների մեջ մինչև մեր որերը, մյուս կողմից—առաջ է բերում ընկերությունների կազմակերպում որինականացրած մենաշնորհով՝ արդյունաբերության և առևտրի վորոշ ճյուղերը վարելու համար—ժամանակակից բաժնետիրական ընկերությունների նախորդները:*

... Կապիտալն իրեն է յենթարկում աշխատանքը սկզբում այն տեխնիկական պայմաններում, վորոնց ժամանակ այն պատմականորեն տրված է նրան: Այդ պատճառով էլ նա անմիջականորեն չի փոխում արտադրության յեղանակը: *Այդ պատճառով՝ հավելյալ արժեքի արտադրությունն այն ձևով, վոր մենք քննարկեցինք մինչև այժմ, այսինքն՝ բանվորական որը պարզապես յերկարացնելու միջոցով, անկախ եր պատկերանում՝ արտադրության յեղանակի իրեն մեջ առաջացած վորևէ փոփոխությունից: Հին ձևի փռում այն ավելի պակաս իրական չեր, քան թե ժամանակակից բամբակամանարանում*[1]):

Արտադրության և սպառման միջև յեղած հակասությունը, վոր եյական է կապիտալիզմի համար, միայն նրանումն է կայանում, վոր ազգային հարստությունն աճում է ժողովրդական աղքատության աճման հետ միասին, աճում են հասարակության արտադրողական ուժերն առանց ժողովրդական սպառման համապատասխան աճման, առանց այդ արտադրողական ուժերը ժողովրդական մասսաների ոգտին գործադրելու[2]):

Սպառումը վերջին հաշվով պետք է ընթանա արտադրության հետևից, և, յերբ արտադրողական ուժերը դուրս են պրծնում դեպի արտադրության անսահման աճումը, իսկ սպառումը սեղմված է ժողովրդական մասսաների պրոլետարական վիճակով, ապա այստեղ հակասությունն անկասկած է: Այս հակասությունը չի նշանակում կապիտալիզմի գոյության անհնարինությունը, բայց այս նշանակում է բարձր ձևի փոխարկվելու անհրաժեշտություն. այս հակասությունը վորքան ուժեղ է դառնում, այնքան ավելի յեն զարգանում այս փոխարկման ինչպես ոբյեկտիվ, նույնպես և սուբյեկտիվ պայմանները, այսինքն՝ աշխատողների հակասության գիտակցությունը[3]):

[1]) Капитал I, стр. 283—285.

[2]) Ленин,—Собр. соч. II, стр. 422.

[3]) *Նույն տեղը, էջ* 424



## ԱՆՀՐԱԺԵՇՏ ՅԵՎ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔ

Բանվորական որվա այն մասը, վորի ընթացքում կատարվում է այդ վերարտադրությունը, յես անվանում են անհրաժեշտ բանվորական ժամանակ, իսկ այդ ժամանակի ընթացքում թափած աշխատանքը՝ անհրաժեշտ աշխատանք: *Անհրաժեշտ՝ բանվորների համար այն պատճառով, վորովհետև այն անկախ է նրանց աշխատանքի հասարակական ձևից: Անհրաժեշտ՝ կապիտալի և կապիտալիստական աշխարհի համար այն պատճառով, վորովհետև բանվորի մշտական գոյությունը հանդիսանում է նրանց բազիսը:*

*Աշխատանքի պրոցեսի յերկրորդ շրջանը,— այն, վորի ընթացքում բանվորն աշխատում է արդեն անհրաժեշտ աշխատանքի սահմաններից դուրս,—թեև նրան աշխատանք արժե, բանվորական ուժի ծախսում, սակայն վո՛չ մի արժեք չի ստեղծում բանվորի համար: Նա ստեղծում է հավելյալ արժեք, վորը հրապուրում է կապիտալիստին՝ վոչնչից ստեղծագործելու ամբողջ գրավչությամբ: Բանվորական որվա այդ մասը յես անվանում եմ հավելյալ, ավելցուկային բանվորական ժամանակ, իսկ նրա ընթացքում թափված աշխատանքը—հավելյալ աշխատանք* (surplus labour): Վորքան վոր վճռական նշանակություն ունի արժեքի իմացության համար ընդհանրապես՝ նրան պարզապես իբրև հանգած աշխատաժամանակ, իբրև իրայնացած աշխատանք դիտելը, նույնքան էլ վճռական նշանակություն ունի հավելյալ արժեքի իմացության համար՝ նրան պարզապես իբրև հանգած հավելյալ ժամանակ, պարզապես իբրև իրայնացած հավելյալ աշխատանք դիտելը: *Միայն այն* ձևն է տարբերում միմյանցից հասարակության տնտեսական ֆորմացիաները, *որինակ՝ ստրկության հասարակությունը վարձու աշխատանքի հասարակությունից*, վորի մեջ այդ հավելյալ աշխատանքը քամվում է անմիջական արտադրողից, բանվորից[1]):

*Մենք յելակետ ընդունեցինք այն յենթադրությունը, թե բանվորական ուժը գնվում և վաճառվում է իր արժեքով: Նրա արժեքը, ինչպես նաև ամեն մի այլ ապրանքի արժեք, վորոշվում է նրա արտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակով: Հետևաբար, յեթե բանվորի գոյության միջոցների արտադրության համար, վոր նա միջին չափով սպառում է ամեն որ, պահանջվում է* 6 *ժամ, ապա նա պետք է որական միջին հաշվով* 6 *ժամ աշխատի, վորպեսզի ամեն որ արտադրե իր բանվորական ուժը, կամ վորպեսզի վերարտադրե այն արժեքը, վոր ստացվում է նրա վաճառման ժամանակ: Այդ դեպքում նրա բանվորական որվա անհրաժեշտ մասը կազմում է* 6 *ժամ և դրա համար էլ, այլ հավասար պայմաններում, տվյալ մեծություն է հանդիսանում: Բայց դրանով դեռևս չի վորոշվում բանվորական որվա իրեն մեծությունը:*

*Յենթադրենք, թե*



[1]) Маркс—Капитал I, стр. 186—188.

ab գիծը պատկերացնում է անհրաժեշտ բանվորական ժամանակի տևողությունը կամ յերկարությունը, վոր հավասար է, ասենք, 6 ժամի: Նայելով թե աշխատանքը շարունակվելո՞ւ յե արդյոք ab-ի սահմաններից այն կողմը 1, 3, 6 ժամով և այլն, մենք կստանանք յերեք տարբեր գծեր.

Բանվորական օր I




Բանվորական օր II




Բանվորական օր III




Նրանք պատկերացնում են յերեք տարբեր բանվորական օրեր, 7, 9 և 12 ժամվա տևողությամբ: bc գծի շարունակությունը պատկերացնում է հավելյալ աշխատանքի յերկարությունը: Վորովհետև բանվորական օրն = ab+bc կամ ac, ապա նա փոխվում է bc մեծության փոփոխության հետ միասին: Վորովհետև ab տված մեծություն է, ապա bc-ի հարաբերությունը դեպի ab միշտ կարող է չափվել: I բանվորական օրվա մեջ նա կազմում է— $^1/_6$, II բանվորական օրվա մեջ—$^3/_6$ և III բանվորական օրվա մեջ—$^6/_6$ ab: Այնուհետև, վորովհետև $\frac{\text{հավելյալ բանվորական ժամանակ}}{\text{անհրաժեշտ բանվոր. ժամանակ}}$ հարաբերությունը վորոշում է հավելյալ արժեքի նորման, ապա վերջինս տրված է, քանի վոր հայտնի յե այդ գծերի հարաբերությունը: Նա կազմում վերև բերված յերեք բանվորական օրերի մեջ համապատասխանաբար 16⅔, 50 և 100%: Ընդհակառակը, միայն հավելյալ արժեքի նորման մեզ չեր տա բանվորական օրվա մեծությունը: Յեթե օրինակ, նա հավասար լիներ 100%-ի, բանվորական օրը կարող եր տևել 8, 10, 12 ժամ և այլն: Նա ցույց կտար, վոր բանվորական օրվա յերկու բաղկացուցիչ մասերը, անհրաժեշտ աշխատանքն ու հավելյալ աշխատանքը, իրենց մեծությամբ հավասար են, բայց չեր կարող ցույց տալ, թե վորքան մեծ է այդ մասերից ամեն մեկը:

Այսպես ուրեմն, բանվորական օրը վո՛չ թե հաստատուն, այլ փոփոխական մեծություն է: Ճիշտ է, նրա մասերից մեկը վորոշվում է բանվորի իրեն մշտական վերարտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակով, բայց նրա ընդհանուր մեծությունը փոխվում է հետևյալ աշխատանքի յերկարության կամ տևողականության հետ միասին: Այդ պատճառով՝ բանվորական օրը կարող է վորոշվել, բայց ինքնըստինքյան նա անորոշ մեծություն է:



Թեև, այդպիսով, բանվորական օրը մի անկայուն և հոսուն մեծություն է, այնուամենայնիվ նա կարող է, մյուս կողմից, փոխվել միայն վորոշ սահմաններում: Սակայն, նրա նվազագույն սահմանները չեն կարող վորոշվել: Ճիշտ է, յեթե մենք յենթադրենք, թե bc շարունակության գիծը, կամ հավելյալ աշխատանքն =0-ի, այն ժամանակ մենք կստանանք նվազագույն սահմանը, այսինքն՝ օրվա այն մասը, վոր բանվորն անհրաժեշտաբար պետք է աշխատի՝ սեփական գոյությունը պահպանելու համար: Բայց արտադրության կապիտալիստական յեղանակի ժամանակ անհրաժեշտ աշխատանքը միշտ կազմում է նրա բանվորական օրվա մի մասը միայն, դրա համար էլ՝ բանվորական օրը յերբեք չի կարող կրճատվել մինչև այդ մինիմումի չափերը: Դրա փոխարեն բանվորական օրն ունի առավելագույն սահման: Նա չի կարող վորոշ սահմանից այն կողմն յերկարացվել: Այդ առավելագույն սահմանը վորոշվում է յերկու կերպ: Նախ և առաջ՝ բանվորական ուժի ֆիզիկական սահմանով: Մարդը կարող է 24 ժամվա բնական տևողություն ունեցող օրվա ընթացքում ծախսել կենսական ուժի միայն վորոշ քանակություն: Այսպես, ձին կարող է աշխատել օր-օրի վրա միայն 8-ական ժամ: Օրվա վորոշ մասի ընթացքում ուժը պետք է հանգստանա, քնի, օրվա մյուս մասի ընթացքում մարդը պետք է բավարարի մյուս ֆիզիկական կարիքները,—սնվի, մաքրություն պահպանի, հագնվի և այլն: Այդ զուտ ֆիզիկական սահմաններից դենը բանվորական օրվա յերկարացումը բախվում է բարոյական հատկություն ունեցող սահմանների. բանվորին ժամանակ է հարկավոր իր մտավոր և սոցիալական կարիքները բավարարելու համար, վորոնց ծավալն ու քանակությունը վորոշվում է կուլտուրայի ընդհանուր վիճակով: Այդ պատճառով էլ այն փոփոխությունները, վորոնց յենթակա յե բանվորական օրը, տատանվում են ֆիզիկական և սոցիալական սահմանների միջև: Բայց թե՛ մեկ և թե՛ մյուս սահմանները խիստ առաձգական հատկություն ունեն և ամենալայն ասպարեզ են բաց անում: Այդպես, օրինակ, մենք հանդիպում ենք 8, 10, 12, 14, 16, 18 ժամ տևող բանվորական օրվա, այսինքն՝ ամենազանազան յերկարությամբ բանվորական օրերի:

Կապիտալիստը գնել է բանվորական ուժը նրա օրական արժեքով: Նրան է պատկանում այդ ուժի սպառողական արժեքը մի բանվորական օրվա ընթացքում: Այդպիսով նա իրավունք է ստացել բանվորին հարկադրելու, վոր նա աշխատի իրեն, կապիտալիստի համար մի բանվորական օրվա ընթացքում: Բայց ի՞նչ բան է բանվորական օրը: Համենայն դեպս, այդ ավելի փոքր մի բան է, քան կյանքի բնական օրը: Վո՞րչափով փոքր: Կապիտալիստն իր սեփական հայացքն ունի այդ—ultima Thule-ի (ծայրասահմանի) մասին, բանվորական օրվա անհրաժեշտ սահմանի մասին: Իբրև կապիտալիստ՝ նա իրենից ներկայացնում է միայն անձնավորված կապիտալը: Նրա հոգին—կապիտալի հոգին է: Բայց կապիտալը մի միակ կենսական ձգտում ունի,—ձգտում ավելացնելու իր արժեքը, ստեղծելու հավելյալ արժեք, իր հաստատուն մասով, արտադրության միջոցներով, ներս ծծելու հավելյալ աշխա-

տանքի հնարավոր չափով ավելի մեծ մասսա: Կապիտալը մեռած աշխատանք է, որը, վամպիրի նման, կենդանանում է միայն կենդանի աշխատանք ներս ծծելու հետևանքով և այնքան ավելի յերկար է ապրում, որքան ավելի կենդանի աշխատանք է կլանում: Ժամանակը, որի ընթացքում բանվորն աշխատում է, այն ժամանակն է, որի ընթացքում կապիտալիստը գործադրում է իր գնած բանվորական ուժը: Յեթե բանվորը կապիտալիստի տրամադրության տակ դրված ժամանակն իրեն վրա յե գործադրում, ապա նա կողոպտում է կապիտալիստին:

Յեվ այսպես, կապիտալիստը հենվում է ապրանքային փոխանակության օրենքի վրա: Ինչպես ամեն մի ուրիշ գնորդ, նա յել աշխատում է հնարավոր չափով մեծ օգուտ ձեռք գցել իր ապրանքի սպառողական արժեքից: Բայց հանկարծ հնչում է բանվորի ձայնը, որին մինչև այժմ խլացրել եր արտադրության պրոցեսի աղմուկն ու դղրդոցը:

Այն ապրանքը, որ յես վաճառեցի քեզ, տարբերվում է մնացած ապրանքային ամբոխից նրանով, որ նրա սպառումն արժեք է ստեղծում, և այն էլ ավելի մեծ արժեք, քան թե ունի նա ինքը: Այդ պատճառով էլ դու գնեցիր այն: Այն, ինչ որ քեզ համար հանդիսանում է կապիտալի արժեքի մեծացում, ինձ համար բանվորական ուժի ավելորդ ծախսումն է: Մենք, քեզ հետ միասին միայն մի օրենք գիտենք շուկայում—ապրանքափոխանակության օրենքը: Ապրանքի սպառումը պատկանում է ո՛չ թե վաճառողին, որ խորթացնում է ապրանքը, այլ գնողին, որ ձեռք է բերում այն: Այդ պատճառով էլ քեզ է պատկանում իմ օրական բանվորական ուժի սպառումը: Բայց յես պետք է ամեն օր վերարտադրեմ այդ ուժը այն գնի օգնությամբ, որով յես ամեն օր վաճառում եմ այն, որպեսզի հետո նորից կարողանամ վաճառել այն: Չխոսելով արդեն ծերության հետևանքով բնական մաշման մասին և այլն, յես պետք է հնարավորություն ունենամ վաղն էլ աշխատելու ուժի, առողջության և թարմության հենց այն նորմալ վիճակում, ինչպես այսօր: Դու շարունակ քարոզում ես ինձ «խնայողության» և «ժուժկալության» ավետարանը: Լա՛վ: Յես ուզում եմ բանական, խնայող տնտեսվարի նման պահպանել իմ միակ կարողություն—բանվորական ուժը և հետ կենալ նրա ամեն տեսակ խելագար վատնումից: Յես ամեն օր այդ բանվորական ուժը միայն այն չափով հոսուն վիճակի մեջ կդնեմ, շարժման կփոխարկեմ, աշխատանք կդարձնեմ, որչափով այդ չի վնասի նրա գոյության նորմալ տևողությանը և նրա նորմալ զարգացմանը: Բանվորական օրն անչափ կերպով յերկարացնելով՝ դու կարող ես մի օրում իմ բանվորական ուժի ավելի մեծ քանակություն շարժման մեջ դնել, քան թե յես կարող կլինեմ վերականգնելու յերեք օրում: Այն, ինչ որ դու այդպիսով շահում ես աշխատանքից, յես կորցնում եմ աշխատանքի սուբստանցիայից: Օգտվել իմ բանվորական ուժից և կողոպուտի յենթարկել այն—միանգամայն տարբեր բաներ են: Յեթե միջին ժամանակաշրջանը, որի ընթացքում աշխատանքի բանական չափերի դեպքում



միջին բանվորը կարող է գոյություն ունենալ, 30 տարի յե կազմում, ապա իմ բանվորական ուժի արժեքը, որ դու վճարում ես ինձ օրեցօր $= \frac{1}{365 \times 30}$ կամ նրա ամբողջ արժեքի $\frac{1}{10950}$-ին: Իսկ յեթե դու այն սպառում ես 10 տարում, ապա դու ինձ վճարում ես օրական $\frac{1}{10950}$ փոխանակ նրա ամբողջ արժեքի $\frac{1}{3650}$-ի, այսինքն՝ նրա օրական արժեքի միայն ⅓ մասը և այդպիսով ամեն օր գողանում ես ինձնից իմ ապրանքի արժեքի ⅔-ը: Դու վճարում ես ինձ միօրյա բանվորական ուժի համար, մինչդեռ սպառում ես 3 օրվա բանվորական ուժ: Այդ բանը հակառակ է մեր պայմանագրին և ապրանքափոխանակության օրենքին: Այդպես ուրեմն, յես պահանջում եմ նորմալ տևողություն ունեցող բանվորական օր և պահանջում եմ այն, կոչ անելով ո՛չ քո սրտին, որովհետև դրամական գործերում—վերջ ամեն տեսակ բարեհոգության: Դու կարող ես օրինակելի քաղաքացի լինել, գուցե կենդանիների խնամակալության ընկերության անդամ և այդ բոլորից հետո յել դեռ սրբության համբավ վայելել, բայց այն իրը, որի ներկայացուցիչն ես դու իմ վերաբերմամբ, իր կրծքում սիրտ չունի: Յեթե այնպես է թվում, թե այնտեղ մի բան բաբախում է, այդ պարզապես իմ սեփական սրտի բաբախումն է: Յես նորմալ բանվորական օր եմ պահանջում, որովհետև, ինչպես յուրաքանչյուր այլ վաճառող, յես պահանջում եմ իմ ապրանքի արժեքը:

Մենք տեսնում ենք, որ մի կողմ թողնելով բոլոր առաձգական սահմանները, ապրանքային փոխանակության բնությունն ինքնին ո՛չ մի սահման չի տալիս բանվորական օրվա համար, այդ պատճառով նաև ո՛չ մի սահման հավելյալ աշխատանքի համար: Կապիտալիստը կենսագործում է գնորդի իր իրավունքը, յերբ ձգտում է ըստ կարելույն յերկարացնել բանվորական օրը և, յեթե հնարավոր է, մի բանվորական օրվանից յերկուսը դարձնել: Մյուս կողմից, վաճառվող ապրանքի սպեցիֆիկ բնույթը պայմանավորում է նրա սպառման սահմանը գնորդի կողմից և բանվորն էլ կենսագործում է վաճառորդի իր իրավունքը, յերբ ձգտում է բանվորական օրը սահմանափակել որոշ նորմալ մեծությամբ: Հետևաբար, այստեղ ստացվում է անտինոմիա (օրենքների հակասություն), իրավունքը հակադրվում է իրավունքին, ըստ որում նրանք յերկուսն էլ հավասար չափով սրբագործվում են ապրանքափոխանակության օրենքով: Յերկու իրավունքների ընդհարման դեպքում վճիռը պատկանում է ուժին: Այսպիսով, կապիտալիստական արտադրության պատմության մեջ բանվորական օրվա նորմավորումը հանդես է գալիս իբրև կռիվ բանվորական օրվա սահմանների համար—կռիվ հավաքական կապիտալիստի, այսինքն՝ կապիտալիստների դասակարգի և հավաքական բանվորի, այսինքն՝ բանվոր դասակարգի միջև:

... Կապիտալը չի հնարել հավելյալ աշխատանքը: Ամենուրեք, որտեղ հասարակության մի մասը մենաշնորհի տեր է արտադրության միջոցների վերաբերմամբ, բանվորը, ազատ լինի նա, թե անազատ, պետք է իրեն պահպանության համար անհրաժեշտ բանվորական ժամանակի վրա ավելացնի ավելորդ բանվորական ժամանակ, որն անհրաժեշտ է նրա համար, որպեսզի գոյության միջոցներ արտադրե արտադրության միջոցների սեփականատիրոջ համար, ըստ որում նշանակություն չունի, թե այդ սեփականատերն արդյոք աթենական ka os kajadis (ազնվական) է, էտրուսկական թեոկրատ (քուրմ, որին պատկանում է իշխանությունը), civis romanns (հռոմեական քաղաքացի), նորմանական բարոն, ամերիկական ստրկատեր, վալախեցի բոյարին, ժամանակակից լենդլորդ (հողատեր) թե կապիտալիստ: Ի միջի այլոց, ինքնըստինքյան հասկանալի յէ, որ, յեթե որևիցե հասարակական-տնտեսական ֆորմացիայի մեջ գերակշիռ նշանակություն ունի ո՛չ թե արդյունքի փոխանակային արժեքը, այլ նրա սպառողական արժեքը, ապա հավելյալ աշխատանքը սահմանափակվում է կարիքների ավելի կամ պակաս նեղ շրջանով, բայց համապատասխան արտադրության հենց բնույթից չի բղխում հավելյալ աշխատանքի անսահման կարիքը: Հին աշխարհում չափից անց աշխատանքը սոսկալի յէ դառնում այն դեպքերում, որտեղ խնդիրը վերաբերում է փոխանակային արժեք հայթայթելուն նրա ինքնուրույն փողային ձևով,—ոսկու և արծաթի արտադրության մեջ: Բռնի աշխատանքը, որ սպանում է աշխատավորին, հանդիսանում է այստեղ չափից անց աշխատանքի պաշտոնական ձևը:

Ենթադրենք, թե բանվորական օրը բաղկացած է 6 ժամ անհրաժեշտ աշխատանքից և 6 ժամ հավելյալ աշխատանքից: Այդպիսի դեպքում ազատ բանվորը մատակարարում է կապիտալիստին շաբաթական $6 \times 6$, կամ 36 ժամ հավելյալ աշխատանք: Այդ բանը հավասարազոր է նրան, ինչպես, յեթե նա շաբաթական 3 օր աշխատեր իրեն համար և շաբաթը 3 օր ձրիաբար աշխատեր կապիտալիստի համար: Բայց բանվորական ժամանակի այդ բաշխումն աննկատելի յէ: Հավելյալ աշխատանքն ու անհրաժեշտ աշխատանքը միաձուլվում են: Այդ պատճառով էլ՝ այդ միևնույն հարաբերությունը յես կարող եյի, օրինակ, այն ձևով արտահայտել, թե բանվորը յուրաքանչյուր րոպեյի ընթացքում 30 վայրկյան իրեն համար է աշխատում և 30 վայրկյան կապիտալիստի համար և այլն: Այլ է խնդիրը կոռվորական աշխատանքի վերաբերմամբ: Այն անհրաժեշտ աշխատանքը, որ կատարում է, օրինակ, վալախեցի գյուղացին իր սեփական գոյությունը պահպանելու համար, տարածական տեսակետից անջատված է նրա հավելյալ աշխատանքից բոյարինի համար: Առաջին աշխատանքը նա կատարում է իր սեփական արտում, յերկրորդը—ազնվականի կալվածքում: Այդ պատճառով էլ՝ բանվորական ժամանակի յերկու մասերը գոյություն ունեն ինքնուրույն կերպով, մեկը մյուսի կողքին: Կոռվորական աշխատանքի ձևում հավելյալ աշխատանքը վորոշակի անջատված է անհրաժեշտ աշխատանքից: Արտահայտման ձևի մեջ յեղած այդ



տարբերությունն անշուշտ, քանակական տեսակետից վոչինչ չի փոխում հավելյալ աշխատանքի և անհրաժեշտ աշխատանքի միջև: Շաբաթական յերեք օրվա հավելյալ աշխատանքը մնում է աշխատանքի յերեք օր, որ բանվորի իրեն համար եկվիվալենտ չի ստեղծում, կոչվի այն կոռվորակա՞ն, թե վարձու աշխատանք: Բայց կապիտալիստի մոտ հավելյալ աշխատանքի ծարավը յերևան է գալիս բանվորական օրն անչափ յերկարացնելու ձգտման մեջ. իսկ բոյարինի մոտ խնդիրն ավելի պարզ է: Այստեղ ծարավն արտահայտվում է անմիջականորեն կոռվորական օրերի հետևից ընկնելով:[1])

«Ի՞նչ բան է բանվորական օրը»: Ո՞րքան մեծ է այն ժամանակը, որի ընթացքում կապիտալը կարող է գործադրել այն բանվորական ուժը, որի օրական արժեքը նա վճարում է: Մինչև ո՞ր սահմանները կարելի յէ յերկարացնել բանվորական օրը՝ բանվորական ուժի իրեն վերարտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակից ավելի: Ինչպես մենք տեսանք, այդ հարցերին կապիտալը պատասխանում է. բանվորական օրը հաշվում է օրական լրիվ 24 ժամ, դուրս հանելով հանգստի այն սակավաթիվ ժամերը, առանց որոնց բանվորական ուժը բացարձակապես անպետք է դառնում իր ծառայությունը վերսկսելու համար: Ըստ որում ինքնըստինքյան հասկանալի յէ, որ բանվորն իր ամբողջ կյանքում առանց բացառության ո՛չ այլ ինչ է, յեթե ո՛չ բանվորական ուժ; որ այդ պատճառով նրա ունեցած ամբողջ ժամանակը բնականաբար և իրավունքով բանվորական ժամանակ է ներկայացնում և, հետևաբար, ամբողջությամբ պետք է մտնի կապիտալի ինքնաճման պրոցեսի մեջ: Ինչ վերաբերում է այն ժամանակին, որն անհրաժեշտ է մարդու կրթության համար, մտավոր զարգացման համար, սոցիալական ֆունկցիաներ կատարելու համար, ընկերական հաղորդակցության համար, ֆիզիկական և մտավոր ուժերի ազատ խաղի համար, մինչև անգամ կիրակի օրը տոնելու համար—լինի այդ թեկուզ շաբաթը սրբագործողների յերկրում,—այդ բոլորը լոկ սին անհեթեթություն է: Բայց դեպի հավելյալ աշխատանքն ունեցած իր կույր ձգտման մեջ, իր գայլի ախորժակով դեպի այն՝ կապիտալը տակն ու վրա յէ անում բանվորական օրվա ո՛չ միայն բարոյական, այլ և զուտ ֆիզիկական մաքսիմալ սահմանները: Նա բռնագրավում է մարմնի աճման, զարգացման և առողջ պահպանման համար անհրաժեշտ ժամանակը: Նա կողոպտում է այն ժամանակը, որն անհրաժեշտ է մաքուր օդ և արևի լույս կլանելու համար: Նա կրճատում է ճաշի ժամանակը և ըստ հնարավորության մտցնում այն արտադրության պրոցեսի իրեն մեջ՝ այնպես որ սնունդը տրվում է բանվորին իբրև արտադրության հասարակ միջոցի, ինչպես որ շոգեկաթսային ածուխ է տրվում և մեքենաներին՝ ճարպ կամ յուղ: Առողջ քունը, որ անհրաժեշտ է կենսական ուժի վերականգնման, վերանորոգման և թարմացման համար, կապիտալը վեր է ածում այնքան ժամվա անզգայացման, որքան անպայման անհրաժեշտ է, որպեսզի զվարթանա վերջնականապես ուժասպառ յեղած օր-

[1]) Капитал I, стр. 201—207.

*դանիզմը: Այսպիսով, այստեղ բանվորական ուժի աննորմալ պահպանումը վորոշում է բանվորական օրվա պայմանները, իսկ, ընդհակառակն, բանվորական ուժի ըստ հնարավորության ավելի մեծ օրական ծախսումը, վորքան էլ հիվանդագին, բռնի և տանջալից լինի այն, սահման է դնում բանվորի հանգստի համար: Կապիտալը չի հարցնում բանվորական ուժի կյանքի տևողության մասին: Նրան հետաքրքրում է միմիայն բանվորական ուժի այն մաքսիմումը, վոր կարելի յե շարժման մեջ դնել բանվորական օրվա ընթացքում: Նա հասնում է այդ նպատակին, կրճատելով բանվորական ուժի կյանքը, ինչպես ագահ գյուղական տնտեսավարը հողի յեկամտաբերությունը բարձրացնում է նրանով, վոր կողոպտում է նրա պտղաբերությունը:*

*Այսպիսով՝* կապիտալիստական արտադրությունը, վոր ըստ էության հավելյալ արժեքի արտադրություն է հանդիսանում, բանվորական օրը յերկարացնելու միջոցով հավելյալ աշխատանք ծծելով՝ տանում է վո՛չ միայն դեպի մարդկային բանվորական ուժի կործանումը, վորից խլվում են զարգացման և գործունեության նորմալ բարոյական և ֆիզիկական պայմանները, այլ նա տանում է դեպի բանվորական ուժի իրեն վաղաժամ սպառումն ու վոչնչացումը: Նա յերկարացնում է բանվորի համար արտադրության ժամանակը վորոշ ժամկետի ընթացքում, այդպիսով հասնելով նրա կյանքի տևողության կրճատմանը:

*Բայց բանվորական ուժի արժեքը պարունակում է իր մեջ այն ապրանքների արժեքը, վորոնք անհրաժեշտ են բանվորի վերարտադրության համար կամ բանվոր դասակարգի բազմացման համար: Այսպիսով, յեթե բանվորական օրվա հակաբնական յերկարացումը, վոր ուզում է ձեռք բերել կապիտալը ինքնաճման իր անսահման ձգտումով, կրճատում է առանձին բանվորների կյանքի ժամանակաշրջանը, իսկ դրա հետ միասին նաև նրանց բանվորական ուժի գործունեության տևողությունը, ապա անհրաժեշտ է դառնում մաշված բանվորական ուժերի ավելի արագ փոխարինությունը, այսինքն՝ բանվորական ուժի վերարտադրության մեջ պետք է մտնեն մաշվելու ավելի խոշոր ծախքեր. բոլորովին այնպես, ինչպես վոր մեքենայի ամեն որ վերարտադրության յենթակա արժեքի մասը այնքան ավելի մեծ է, վորքան արագ է մաշվում մեքենան: Այսպիսով,* կապիտալի սեփական շահը, կարծես, մատնանշում է նրան, թե պետք է նորմալ բանվորական որ հաստատել[1]:

*Ապրանքի արժեքը վորոշվում է նրա մեջ պարունակված աշխատանքի ընդհանուր քանակությամբ: Բայց աշխատանքի այդ քանակության մի մասը ներկայացնում է այն արժեքը, վորի համար համարժեք է վճարվել աշխատավարձի ձևով, իսկ մյուս մասն այն արժեքն է հանդիսանում, վորի համար վո՛չ մի համարժեք վճարված չէ: Ապրանքի մեջ պարունակված աշխատանքի մի մասը վճարված աշխատանք է, իսկ մյուս մասը—չվճարված աշխատանք: Այդպիսով,* յեթե կապիտալիստը ապրանքը վաճառում է իր ար-

[1]) Капитал I, стр. 236—238.



ժեքով, այսինքն՝ իբրև նրա վրա թափված աշխատանքի ամբողջ քանակության բյուրեղացումը, ապա նա պետք է անպայման շահույթով վաճառի այն: Նա վաճառում է վո՛չ միայն այն, վորի համար նա համարժեք է վճարել, այլ նաև այն, վոր նրա վրա վոչինչ չի նստել, թեև նա վճարել է իր բանվորի աշխատանքը: Ապրանքի արժեքը կապիտալիստին և նրա իսկական արժեքը—յերկու միանգամայն տարբեր բաներ են: Այդ պատճառով էլ յես կրկնում եմ, վոր նորմալ և միջին շահույթ ստացվում է վո՛չ թե նրանից, վոր ապրանքները վաճառվում են իրենց արժեքից բարձր, այլ նրանից, վոր նրանք վաճառվում են հատկապես իրենց իսկական արժեքով[1]:

## ԱՐԺԵՔԻ ՄԵԾԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊՐՈՑԵՍԸ

*Սակայն, վերադառնանք իր ճանապարհն սկսող մեր կապիտալիստին: Մենք նրան թողինք նրանից հետո, յերբ նա ապրանքային շուկայում գնեց այն բոլոր գործոնները, վորոնք անհրաժեշտ են աշխատանքի պրոցեսի համար, այն է նյութական գործոնները, կամ արտադրության միջոցները, և անձնական գործոնը կամ բանվորական ուժը: Գիտակ մարդու խորամանկ հայացքով նա ընտրեց արտադրության այն միջոցներն ու բանվորական ուժերը, վորոնք պահանջվում են նրա առանձին ձեռնարկության—մանարանի, կոշկի գործարանի համար և այլն: Այսպես ուրեմն, մեր կապիտալիստը ձեռնարկում է իր գնած ապրանքի, բանվորական ուժի գործադրությանը, այսինքն՝ հարկադրում է բանվորական ուժը կրողին՝ բանվորին, իր աշխատանքի միջոցով սպառել արտադրության միջոցներ:* Աշխատանքի պրոցեսի ընդհանուր բնույթն, իհարկե, չի փոխվում նրանից, վոր բանվորն այն կատարում է կապիտալիստի, այլ վոչ թե հենց իրեն համար: Ցեվ այն վորոշ յեղանակն էլ, վորով պատրաստվում են կոշիկները կամ մանվում է մանվածքը, նույնպես չի կարող փոխվել կապիտալիստի միջամտության հետևանքով: *Վերջինս պետք է առաջին ժամանակները բանվորական ուժը վերցնե այնպես, ինչպես վոր նա գտնում է այն շուկայում, հետևաբար ուրեմն, աշխատանքն էլ պետք է վերցնե այնպես, ինչպես այն զարգացել էր այն ժամանակաշրջանում, յերբ դեռևս կապիտալիստներ չկային:* Արտադրության յեղանակի հենց իրեն փոփոխությունն իբրև աշխատանքի կապիտալին հպատակվելու հետևանք, կարող է միայն ավելի ուշ կատարվել, *այդ պատճառով էլ յենթակա յե քննարկման միայն հետագա ժամանակի ընթացքում:*

*Աշխատանքի պրոցեսը, վորչափով այն կատարվում է իբրև բանվորական ուժի սպառման պրոցես կապիտալիստի կողմից, յերկու յուրահատուկ առանձնահատկություն ունի:*

*Բանվորն աշխատում է կապիտալիստի վերահսկողության տակ, վորին*

[1]) Маркс—«Зарплата, цена и прибыль», стр. 55—56

պատկանում է նրա աշխատանքը: Կապիտալիստը հսկում է, վորպեսզի աշխատանքը կատարվի պատշաճ կարգով և վորպեսզի արտադրության միջոցները նպատակահարմար կերպով գործադրվեն, հետևաբար, վորպեսզի հումքը չվատնվի և խնամքով վարվեն աշխատանքի գործիքների հետ, այսինքն՝ վորպեսզի նրանք մաշվեն լոկ այն չափով, վորչափով այդ պահանջում է նրանց գործադրությունն աշխատանքի մեջ:

Իսկ յերկրորդ, արդյունքը կապիտալիստի սեփականությունն է, վոչ անմիջական արտադրողինը, վոչ բանվորինը: Կապիտալիստն, որինակ վճարում է բանվորական ուժի որական արժեքը: Այդպես ուրեմն, նրա գործադրությունը, ինչպես և ամեն մի այլ ապրանք,—որինակ ձիու գործադրությունը, վոր նա վարձում է մի որով, որվա ընթացքում նրան է պատկանում: Ապրանքը գնողին է պատկանում. ապրանքի գործադրությունը և բանվորական ուժի տերը, հանձնելով իր աշխատանքը, փաստորեն տալիս է միայն իր վաճառած սպառողական արժեքը: Այն մոմենտից, յերբ նա մտնում է կապիտալիստի արհեստանոցը, նրա բանվորական ուժի սպառողական արժեքը, այսինքն՝ նրա սպառումը, աշխատանքը, պատկանում է կապիտալիստին: Բանվորական ուժը գնելով՝ կապիտալիստը հենց աշխատանքն իբրև կենդանի ֆերմենտ միացրեց արդյունքի կազմության հենց իրեն, կապիտալիստին պատկանող մեռյալ տարրերին: Նրա տեսակետից՝ աշխատանքի պրոցեսը միայն իրեն գնած ապրանքի, բանվորական ուժի սպառումն է, բայց նա կարող է սպառել այն միայն այն պայմանով, յեթե նրա հետ միացնե արտադրության միջոցները: Աշխատանքի պրոցեսը մի պրոցես է, վոր տեղի յե ունենում կապիտալիստի գնած իրերի միջև, նրան պատկանող իրերի միջև: Այդ պատճառով՝ այդ պրոցեսի արդյունքը նրան է պատկանում նույն չափով, ինչպես գինի գալու պրոցեսի արդյունքը նրա գինետանը:

Արդյունքը—կապիտալիստի սեփականությունը—մի վորոշ սպառողական արժեք է—մանվածք, կոշիկներ և այլն: Բայց թեև կոշիկներն, որինակ, վորոշ չափով հասարակական առաջադիմության հիմք են կազմում և թեև մեր կապիտալիստը—վճռական առաջադիմական է, նա այնուամենայնիվ կոշիկներ է արտադրում վոչ հենց նրանց սիրուն: Սպառողական արժեքը ապրանքային արտադրության ժամանակ առհասարակ մի այնպիսի իր չէ« quon aime pur lui même»(վորին սիրում են հենց իրեն համար): Սպառողական արժեքները առհասարակ այստեղ արտադրվում են միայն այն պատճառով և այն չափով, վոր և վորչափով նրանք նյութական հիմք են հանդիսանում և փոխանակային արժեքի կրողները: Յեվ մեր կապիտալիստը հոգում է յերկու տեսակ իրերի մասին: Նախ և առաջ, նա ուզում է սպառողական արժեք արտադրել, վոր փոխանակային արժեք ունենա, մի առարկա, վոր կանխորոշված է առևտրի համար, ապրանք: Յեվ յերկրորդ, նա ուզում է այնպիսի ապրանք արտադրել, վորի արժեքն ավելի մեծ է, քան թե նրա արտադրության համար անհրաժեշտ ապրանքների արժեքի գումարը, ավելի մեծ է, քան թե արտադրության միջոցների և բանվորական ուժի արժեքի



գումարը, վորոնց համար նա ապրանքային շուկայում կանխավճարել է իր սեփական փողերը: Նա ուզում է արտադրել վո՛չ միայն սպառողական արժեք, այլ նաև ապրանք, վո՛չ միայն սպառողական արժեք, այլ նաև արժեք, և վո՛չ միայն արժեք, այլ նաև հավելյալ արժեք[1]):

Մարքսի մոտ տնտեսական ձևերի վերլուծության ժամանակ, վորոնց սահմաններում կատարվում է ապրանքների շրջանառության պրոցեսը, վերջին ձևը դուրս է գալիս փողը:

«Ապրանքային շրջանառության այդ վերջին արդյունքը կապիտալի արտահայտման առաջին ձևն է: Պատմականորեն կապիտալը հակադրվում է հողային սեփականությանն ամենից առաջ փողի ձևով, իբրև փողային ուժ, իբրև առևտրական կապիտալ և իբրև վաշխառուական կապիտալ... Այդ միևնույն պատմությունն է տեղի ունենում ամեն որ մեր աչքերի առաջ: Ամեն մի նոր կապիտալ առաջին անգամ յելնում է ասպարեզ,— այսինքն՝ ապրանքային, բանվորական կամ փողային շուկա—միշտ փողի ձևով,—փողի, վորը վորոշ հայտնի պրոցեսի միջոցով, հետո կապիտալի յե փոխարկվում»:

Այնուհետև Մարքսը հետազոտության է յենթարկում այն պրոցեսները, վորոնց միջոցով փողը կապիտալի յե փոխարկվում, և գտնում է ամենից առաջ, վոր այն ձևը, վորով փողերը շրջան են անում իբրև կապիտալ, ներկայացնում է իրենից մի ձև—հակառակ այն ձևին, վորով նրանք շրջան են անում իբրև ընդհանրական ապրանքային եկվիվալենտ: Հասարակ ապրանքները վաճառում է, վորպեսզի գնե. նա վաճառում է այն բանը, վորի կարիքն ինքը չունի և վաճառքի ժամանակ ձեռք բերված փողերով գնում է այն բանը, ինչ վոր իրեն պետք է: Մինչդեռ գործի ձեռնարկող կապիտալիստը հենց սկզբից գնում է այն, վորի կարիքը նա ինքը չունի. նա գնում է, վորպեսզի վաճառե, և այն էլ՝ ավելի թանգ վաճառե, վորպեսզի պահպանե սկզբնապես գնման համար ծախսված դրամական գումարը, ավելացած փողային մի գերաճով (прирост) և այդ գերաճը Մարքսն անվանում է հավելյալ արժեք:

Վո՞րտեղից է առաջ գալիս այդ հավելյալ արժեքը: Այն չի կարող կազմվել վո՛չ նրանով, վոր գնորդը ապրանքները գնում է նրանց արժեքից ցած, վո՛չ էլ նրանով, վոր վաճառողը վաճառում է նրանք արժեքից բարձր: Յերկու դեպքում էլ՝ յուրաքանչյուր անձի ոգուտն ու վնասը փոխադարձաբար կհավասարակշռվեյին, վորովհետև ամեն մեկն էլ անպայման գնորդ և վաճառորդ է հանդիսանում: Հավելյալ արժեքը չի կարող նաև փոխանակության հետևանք լինել, վորովհետև փոխանակությունը կարող է միայն մեկին հարստացնել մյուսի հաշվին, բայց չի կարող մեծացնել յերկուսի ունեցած ընդհանուր գումարը, հետևաբար, չի կարող ավելացնել շրջանառության մեջ գտնված արժեքների ընդհանուր գումարը...

«Վորոշ յերկրի կապիտալիստների դասակարգը չի կարող ինքն իրեն խաբել»:

---

1) Маркс—Капитал I, стр. 156—157.

Եվ այնուամենայնիվ մենք գտնում ենք, վոր յուրաքանչյուր յերկրի կապիտալիստների դասակարգը, իբրև ամբողջություն վերցրած, մեր աչքերի առաջ չարունակ հարստանում է, վաճառելով ավելի թանգ, քան թե գնել է, յուրացնելով հավելյալ արժեքը: Այդպիսով մենք դարձյալ հանդում ենք այն հարցին, վոր սկսեցինք, այն է՝ վո՞րտեղից է առաջանում այդ հավելյալ արժեքը: Այդ հարցն անհրաժեշտ է վճռել և այն էլ վճռել զուտ տնտեսական ճանապարհով, բացառելով ամեն խաբեյություն, վորևիցե բռնության ամեն մի միջամտություն. հատկապես ուրեմն այն հարցը, թե ինչ կերպով կարելի յե չարունակ ավելի թանգ վաճառել, քան գնված է, յենթադրելով մինչև անգամ, վոր չարունակ հավասար արժեքները փոխանակվում են հավասար արժեքների հետ:

Այդ հարցը վճռելը Մարքսի աշխատության մեծ պատմական վաստակն է: Այդ բանը պայծառ լույս սփռեց այնպիսի տնտեսական բնագավառների վրա, վորոնց մեջ մինչև այժմ սոցիալիստները—վոչ պակաս քան բուրժուական տնտեսագետները—խարխափում եյին խորին խավարում: Նրանից է սկիզբ առնում գիտական սոցիալիզմը, նա յե—այդ ուսմունքի գաղափարների շրջանի կենտրոնը:

Այդ վճիռն այսպես է: Շրջանառության մեջ գտնվող փողերի գումարը, վոր պետք է կապիտալի փոխարկվի, չի կարող ավելանալ ինքնիրեն, այդ փողերից, կամ այդ ավելացումը չի կարող կազմվել ապրանքների գնումից, վորովհետև փողը գնման գործողության մեջ միայն իրացնում է ապրանքի գինը, իսկ այդ գինը համապատասխանում է ապրանքի արժեքին մեր այն յենթադրության համաձայն, թե փոխանակվում են հավասար արժեքները: Միևնույն հիմունքներով արժեքի մեծացում չի կարող առաջ գալ նաև ապրանքների վաճառման գործողությունից: Նշանակում է, այդպիսի փոփոխություն պետք է տեղի ունենա ապրանքի հետ, վորը գնվում է, այն էլ՝ վո՛չ թե նրա արժեքի հետ, վորովհետև այն գնվում և վաճառվում է իր արժեքով, այլ նրա սպառողական արժեքի հետ իբրև այդպիսին. հետևաբար, փոփոխությունն արժեքի մեջ պետք է տեղի ունենա ապրանքի իրեն սպառումից: «Բայց վորպեսզի ապրանքի սպառումից արժեք դուրս բերվի, հարկավոր է, վորպեսզի մեր կապիտալիստի բախտը բանի շուկայում այնպիսի ապրանք գտնելու, վորի սպառողական արժեքը սպեցիֆիկ հատկություն ունենար արժեքների աղբյուր լինելու, այնպես, վորպեսզի ապրանքի գործածությունն ինքնին աշխատանքի մարմնացում լիներ, այսինքն՝ նոր արժեքի ստեղծում»: Եվ իսկապես «փողատերը շուկայում գտնում է այդպիսի սպեցիֆիկ ապրանք—աշխատանքի ընդունակությունը կամ բանվորական ուժը»: Եթե, ինչպես մենք տեսանք, աշխատանքն իբրև այդպիսին չի կարող արժեք ունենալ, ապա այդպես չէ խնդիրը բանվորական ուժի վերաբերմամբ: Վերջինս արժեք է ստանում, հենց վոր այն, ինչպես վոր փաստորեն տեղի ունի այժմ, ապրանք է դառնում, և այդ արժեքը վորոշվում է «ամեն մի այլ ապրանքի արժեքի նման, այդ սպեցիֆիկ առարկայի արտադրության, հետևաբար նաև



վերարտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակով», այսինքն՝ այն բանվորական ժամանակով, վորը պահանջվում է աշխատավորին անհրաժեշտ կենսամիջոցների արտադրության համար, վորպեսզի նա կարողանա իրեն աշխատանքի և իր ցեղը շարունակելու համար պիտանի վիճակի մեջ պահպանել: Յենթադրենք, թե այդ կենսամիջոցները ներկայացնում են որական 6 ժամվա աշխատաժամանակ: Մեր կապիտալիստը ձեռնարկությունը վարելու համար բանվորական ուժ է գնում, այսինքն՝ աշխատավոր է վարձում, և յեթե նա վճարե վերջինիս 6 ժամվա աշխատանք ներկայացնող մի դրամական գումար, ապա նա հենց դրանով վճարում է նրան բանվորական ուժի որական լրիվ արժեքը: Բայց բանվորը տվյալ կապիտալիստի մոտ աշխատելով 6 ժամ, հատուցանում է նրան միայն ծախքը, այսինքն՝ որական բանվորական ուժի վճարված արժեքը, և այդ դեպքում փողը դեռևս կապիտալի չի փոխարկվի, վո՛չ մի հավելյալ արժեք չի ստեղծի: Այդ պատճառով էլ բանվորական ուժ գնողը բոլորովին այլ կերպ է նայում իր կնքած գործարքի բնույթի վրա: Այն փաստը, վոր ընդամենը միայն 6 ժամվա աշխատանք է հարկավոր բանվորին 24 ժամվա ընթացքում պահպանելու համար, ամենևին չի խանգարում վերջինիս 12 ժամ աշխատելու այդ 24 ժամից: Բանվորական ուժի արժեքն ու նրա իրացումը աշխատանքի պրոցեսի մեջ—միանգամայն տարբեր մեծություններ են: Փողատերը վճարել է բանվորական ուժի որական արժեքը, և դրա համար էլ նրան է պատկանում նաև այդ ուժի ոգտագործումն ամբողջ որվա ընթացքում, աշխատանքը մի որվա տևողության ընթացքում: Այն հանգամանքը, վոր որվա ընթացքում բանվորական ուժի գործադրությամբ ստեղծվող արժեքը յերկու անգամ ավելի յե իր սեփական որական արժեքից, այդ մի հատուկ բախտավորություն է գնորդի համար, բայց ապրանքների փոխանակության օրենքներով վո՛չ մի անարդարություն չի հանդիսանում վաճառորդի վերաբերմամբ: Այսպես ուրեմն, բանվորը, ինչպես մենք ընդունեցինք, կապիտալի տիրոջից ստանում է որական արդյունքների վորոշ քանակություն, վոր իր արժեքով հավասար է 6 ժամվա աշխատանքի, իսկ ինքը վերջինիս մատակարարում է որական այնքան արդյունք, վոր իր արժեքով հավասար է 12 ժամվա աշխատանքի: Տարբերությունը փողատիրոջ ոգտին—6 ժամ չվճարված հավելյալ աշխատանք՝ այսինքն՝ չվճարված հավելյալ արդյունք, վորի մեջ մարմնացած է 6 ժամվա աշխատանք: Ձեռնածությունը ֆոկուսը կատարված է: Հավելյալ արժեքն արտադրված է, փողը փոխարկվեց կապիտալի:

Ապացուցելով այդ յեղանակով, թե ինչպես է ծագում հավելյալ արժեքը և ինչպես այն կարող է ծագել միայն ապրանքների փոխանակությունը կարգավորող օրենքների տիրապետության ժամանակ, Մարքսը մերկացրեց արտադրության արդի կապիտալիստական յեղանակի մեխանիզմն ու նրա վրա հենված յուրացման յեղանակը և հենց դրանով մերկացրեց այն հիմնական տարրը, վորը գտնվում է ամբողջ արդի հասարակակարգի կենտրոնում:

Ի միջի այլոց, կապիտալիզմը պահանջում է մի հիմնական նախադրյալ·

«փողի փոխարկման համար ապրանքային շուկայում ազատ աշխատավոր գտնել, ազատ յերկակի իմաստով. նախ՝ այն իմաստով, վոր նա իբրև ազատ անձնավորություն իր բանվորական ուժը տնօրինում է իբրև ապրանք, և յերկրորդ՝ այն իմաստով, վոր նա վաճառելու համար ուրիշ ապրանք չունի, վոր նա ազատ է անզբաղմունք մարդ է, ազատ այն բոլոր առարկաներից, վորոնք անհրաժեշտ են բանվորական ուժը շարժման մեջ դնելու համար: Բայց հասարակության այդ ստորաբաժանումը մի կողմից՝ փողատերերի կամ ապրանքատերերի, մյուս կողմից—միմիայն բանվորական ուժի տերերի—բնական հարաբերություն չէ և չի հանդիսանում այնպիսին, վոր ընդհանուր լիներ բոլոր պատմական ժամանակաշրջանների համար. «Ակներև է, վոր նա ինքն անցյալ պատմական զարգացման հետևանք է, հասարակական արտադրության ամբողջ մի շարք ավելի հին ֆորմացիաների անկման... արդյունքը»[1]):

Յերբ կապիտալիստը գնում է բանվորական ուժ-ապրանքը, նա գնում է և այն, ինչպես և յուրաքանչյուր այլ ապրանք, նրա համար, վորպեսզի նրանից վորոշ օգուտ քաղի: Յուրաքանչյուր ապրանք գնող աշխատում է իր գնած ապրանքներից վորքան կարելի յե շատ օգուտ քաղել: Յերբ մենք, օրինակ, կոշիկներ ենք գնում, ուզում ենք այդ կոշիկները վորքան կարելի յե յերկար հագնել: Ապրանք գնողն իրավունք ունի լրիվ կերպով օգտագործելու այն, ստանալու այն ամբողջ օգուտը, վոր կարելի յե քաղել ապրանքից: Հետևաբար, բանվորական ուժ գնող կապիտալիստը լիակատար իրավունք ունի, իբրև ապրանք գնող, պահանջելու, վորպեսզի իր գնած ապրանքը վորքան կարելի յե լավ և վորքան կարելի յե յերկար ծառայի իրեն. Յեթե նա բանվորական ուժը գնել է մի շաբաթով, ապա նրան է պատկանում սրա սպառումն ամբողջ շաբաթվա ընթացքում, և գնողի իր տեսակետից նա իրավունք ունի ստիպելու բանվորին աշխատել, յեթե այդ հնարավոր է, շաբաթը 7 անգամ 24-ական ժամ: Մյուս կողմից, բանվորն իբրև ապրանք վաճառող միանգամայն հակադիր տեսակետի վրա յե կանգնած: Իսկապես, կապիտալիստին է պատկանում բանվորական ուժի գործադրման իրավունքը, բայց այդ իրավունքը բախվում է վորոշ սահմանների, վորոնք պարունակվում են բանվորի ֆիզիկական և մտավոր աշխատունակության մեջ: Ձին կարող է առանց իր գոյությունը վտանգի յենթարկելու աշխատել օրական ընդամենը միայն 8 ժամ: Մարդը նույնպես պետք է, իր բանվորական ուժը վերականգնելու համար, վորոշ ժամանակ ունենա կերակուր ընդունելու, հագնվելու, հանգստանալու համար և այլն: Յեթե նա այդ բանը չունի, ապա նրա բանվորական ուժը վո՛չ միայն գործադրվում է, այլև վոչնչացվում: Չափից անց աշխատանքը թուլացնում է բանվորական ուժը և կրճատում բանվորի կյանքը: Յեթե այդպիսով կապիտալիստը բանվորական ուժի անսահման գործադրության միջոցով յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում բանվորի կյանքը

[1]) Ф. Энгельс,—«Анти-Дюринг», стр. 188—191.



կրճատում է յերկու շաբաթով, ապա այդ միևնույնն է, թե նա մի շաբաթվա աշխատավարձ վճարելով, յուրացներ ամբողջ 3 շաբաթվա աշխատանք: Ապրանքափոխանակության հենց այդ նույն տեսակետից այդ նշանակում է հետևաբար, վոր կապիտալիստը թալանում է բանվորին: Այդպիսով՝ բանվորական օրվա տևողության հարցի վերաբերմամբ կապիտալիստն ու բանվորը յերկու հակադիր տեսակետներ են գրավում, չնայելով, վոր նրանք յերկուսն էլ կանգնած են շուկայական հարաբերությունների հողի վրա, և բանվորական օրվա իսկական տևողության հարցը, իբրև ուժի հարց, վճռվում է կռվի միջոցով կապիտալիստների դասակարգի և բանվորների դասակարգի միջև: Հետևաբար, բանվորական օրն ինքնըստինքյան սահմանափակված չէ վո՛չ մի վորոշ շրջանակներով, նայած տեղին ու ժամանակին, մենք 8 ժամվա բանվորական օրվա կողքին նկատում ենք նույնպես 10, 12, 14, 16, 18 ժամվա բանվորական օր: Ընդհանուր առմամբ կռիվը բանվորական օրվա տևողության մասին շարունակում է ամբողջ դարերի ընթացքում[1]):

Յենթադրենք, այժմ, թե բանվորի համար ամեն օր անհրաժեշտ կենսամիջոցների միջին քանակության արտադրությունը պահանջում է 6 ժամվա միջին աշխատանք: Յենթադրենք այնուհետև, թե այդ վեց ժամվա աշխատանքը, արտահայտվելով փողով, հավասար է յերեք շիլլինգի: Այդ դեպքում, յերեք շիլլինգը կլինի այդ մարդու բանվորական ուժի օրական արժեքի գինը կամ փողային արտահայտությունը: Յեթե նա ամեն օր աշխատեր վեց ժամ, ապա նա ամեն օր այնքան արժեք կարտադրեր, վոր բավական կլիներ նրա համար անհրաժեշտ ամենօրյա կենսամթերքների միջին քանակությունը ձեռք բերելու համար, կամ վորը և կկարողանար նրա կյանքը պահպանել, իբրև բանվորի:

Բայց այդ մարդը վարձու բանվոր է: Այդ պատճառով նա պետք է իր բանվորական ուժը վաճառի կապիտալիստին: Յեթե նա վաճառում է այն օրական յերեք շիլլինգով, կամ շաբաթական տասնութ շիլլինգով, ապա նա վաճառում է այն իր արժեքով: Յենթադրենք, թե նա մանող է: Յեթե նա աշխատում է օրական վեց ժամ, ապա նա իր վերամշակած բամբակին ավելացնում է օրական յերեք շիլլինգի արժեք: Նրա այդ ամեն օր ավելացրած արժեքը նրա աշխատավարձի կամ գնի ճիշտ էկվիվալենտը կլիներ, վոր նա կստանար ամեն օր իր բանվորական ուժի համար: Բայց այդ դեպքում կապիտալիստին վո՛չ մի հավելյալ արժեք կամ հավելյալ արդյունք չեր հասնի: Այդպիսով, այստեղ մենք իսկական դժվարության ենք հանդիպում: Կապիտալիստը, ինչպես և ամեն մի ուրիշ գնորդ, հատկապես գնելով բանվորի բանվորական ուժը և նրա փոխարեն վճարելով նրա արժեքը, իրավունք է ձեռք բերել գործադրելու կամ օգտագործելու գնած ապրանքը: Մարդու բանվորական ուժն օգտագործում են, ստիպելով մարդուն աշխատել, ճիշտ այնպես, ինչպես վոր մեքենաներն օգտագործում են՝ նրանց բանի գցելով: Գնե-

[1]) Р. Люксембург, «Введение в полит. эконом», стр. 236—237.

*լով աշխատավորի բանվորական ուժի ամենօրյա կամ ամբողջ շաբաթվա արժեքը, կապիտալիստն իրավունք է ձեռք բերել օգտվելու այդ բանվորական ուժով կամ հարկադրելու նրան՝, աշխատել ամբողջ օրվա կամ ամբողջ շաբաթվա ընթացքում: Իհարկե, բանվորական օրն ու բանվորական շաբաթը վորոշ սահմաններ ունեն, վոր մենք հետագայում ավելի ուշադիր կերպով կքննարկենք:*

*Ներկա մոմենտին յես պետք է ուշադրություն հրավիրեմ մի եյական հանգամանքի վրա:*

Բանվորական ուժի արժեքը վորոշվում է նրա պահպանման և վերարտադրության համար անհրաժեշտ աշխատանքի քանակությամբ, բայց այդ բանվորական ուժի օգտագործումը սահմանափակվում է բանվորի կենսական եներգիայով և ֆիզիկական ուժով: Բանվորական ուժի օրական կամ շաբաթական արժեքն ամենևին այն չէ, ինչ վոր այդ ուժի օրական կամ շաբաթական աշխատանքը, *ինչպես վոր ձիու կերած կերն էլ ամենևին այն չէ, ինչ վոր այն ժամանակամիջոցը, վորի ընթացքում նա ի վիճակի յե կրելու ձիավորին: Բանվորի բանվորական ուժի արժեքը վորոշող աշխատանքի քանակությունը ամենևին վորևե սահման չի վորոշում աշխատանքի այն քանակության համար, վոր ի վիճակի յե կատարելու նրա բանվորական ուժը: Վերցրեք, որինակի համար, մեր մանողին: Մենք տեսանք, վոր նա իր բանվորական ուժի ամենօրյա վերականգնման համար պետք է ամեն օր յերեք շիլլինգի արժեք ստեղծե, վորին նա կհասցնի հասնել, աշխատելով օրական վեց ժամ: Բայց այդ նրան չի զրկում օրական տասը, տասներկու և ել ավելի ժամ աշխատելու հնարավորությունից: Իսկ կապիտալիստը, վճարելով աշխատավորի բանվորական ուժի օրական կամ շաբաթական արժեքը, դրանով իրավունք ձեռք բերեց օգտվելու այդ բանվորական ուժից ամբողջ օրվա կամ ամբողջ շաբաթվա ընթացքում: Այդ պատճառով՝ նա հարկադրում է նրան աշխատել օրական, ասենք, տասներկու ժամ: Բացի այն վեց ժամից, վոր անհրաժեշտ է նրա աշխատավարձի կամ նրա բանվորական ուժի արժեքի վերարտադրության համար, մանողն աշխատելու յե եւս վեց ժամ, վոր յես անվանում եմ հավելյալ աշխատանքի ժամեր, և այդ հավելյալ աշխատանքը կիրականացվի հավելյալ արժեքի և հավելյալ արդյունքի մեջ: Յեթե, որինակ, մեր մանողն իր ամենօրյա վեց ժամվա աշխատանքով բամբակին ավելացնում եր յերեք շիլլինգի արժեք, վոր կազմում է նրա աշխատավարձի ճիշտ եկվիվալենտը,—ապա նա տասներկու ժամվա ընթացքում բամբակին կավելացնի վեց շիլլինգի արժեք և համապատասխանաբար ավելի մեծ քանակությամբ մանվածք կարտադրի: Վորովհետև նա իր բանվորական ուժը վաճառել է կապիտալիստին, ապա նրա ստեղծած ամբողջ արդյունքը կամ նրա արժեքը պատկանում է կապիտալիստին, իբրև նրա բանվորական ուժի ժամանակավոր տիրոջը: Այդպես ուրեմն, կապիտալիստը կանխավճարելով յերեք շիլլինգի արժեք, ձեռք է բերում վեց շիլլինգ արժեք, վորովհետև կանխավճարելով այն արժեքը, վորի մեջ բյուրեղացած է վեց ժամվա աշխատանք, նա դրա փոխարեն ստանում է մի արժեք, վորի մեջ բյուրեղացած է տասներկու ժամվա աշխատանք: Այդ պրոցեսի ամեն օր կրկնվելու դեպքում՝ կապիտալիստն օրական կցանի յերեք շիլլինգ և կհանի վեց շիլլինգ, վորոնցից կեսը կծառայի նրա համար, վորպեսզի նորից աշխատավարձ վճարե, իսկ մյուս կեսը կկազմի հավելյալ արժեքը, վորի համար կապիտալիստը վո՛չ մի համարժեք չի վճարում:* Փոխանակության այդ յեղանակը կապիտալի և աշխատանքի միջև հենց այն յեղանակն է, վորի վրա հիմնված է կապիտալիստական արտադրությունը կամ վարձու աշխատանքի սիստեմը և վորը պետք է շարունակ ստեղծի նորանոր կապիտալիստներ՝ իբրև կապիտալիստներ և բանվորներ՝ իբրև բանվորներ:



Հավելյալ արժեքի մակարդակը—*բոլոր մյուս պայմանների հավասարության դեպքում*—կախված է այն հարաբերությունից, վոր կա բանվորական ուժի արժեքի վերարտադրության համար անհրաժեշտ բանվորական օրվա մասի և ժամանակի այն ավելցուկի կամ հավելյալ ժամանակի միջև, վորը գնում է կապիտալիստի օգտին: *Հետևաբար, այն կախված է նրանից, թե ինչ չափով է ավելանում բանվորական օրն այն ժամանակի համեմատությամբ, վորի ընթացքում բանվորն իր աշխատանքով կվերարտադրեր միայն իր բանվորական ուժի արժեքը կամ կհավաքեր իր աշխատավարձը*[1]):

Ապրանքային արտադրության զարգացման վորոշ աստիճանում փողը փոխարկվում է կապիտալի: *Ապրանքային շրջանառության ֆորմուլան եր Ա (ապրանք)—Փ (փող)—Ա (ապրանք), այսինքն՝ մի ապրանքի վաճառումը մյուսի գնման համար: Ընդհակառակը, կապիտալի ընդհանուր ֆորմուլան հանդիսանում է Փ—Ա—Փ, այսինքն՝ գնում—վաճառման համար (շահույթով)*: Մարքսը հավելյալ արժեք է անվանում պտույտի մեջ դրված փողի սկզբնական արժեքի այդ աճումը: Փողի այդ «աճման» փաստը կապիտալիստական պտույտի մեջ հանրածանոթ է: Հենց այդ «աճումն» է, վոր փողը կապիտալի յե փոխարկում, իբրև արտադրության հատուկ, պատմականորեն վորոշ հասարակական հարաբերություն: *Հավելյալ արժեքը չի կարող ծագել ապրանքային շրջանառությունից, վորովհետև այդ շրջանառությունը գիտե միայն եկվիվալենտների փոխանակությունը. չի կարող ծագել գնի վրա արած վերադրից, վորովհետև գնորդների և վաճառողների փոխադարձ կորուստներն ու շահումները կհավասարակշռվեյին*, իսկ խոսքը վերաբերում է հատկապես մասսայական, միջին հասարակական, այլ վոչ թե անհատական յերևույթին: *Հավելյալ արժեք ստանալու համար «փողատերը պետք է շուկայում այնպիսի ապրանք գտնի, վորի սպառողական արժեքն ինքնին արժեքի աղբյուր լինելու որիգինալ հատկությունն ունենար», այնպիսի մի ապրանք, վորի սպառման պրոցեսը միևնույն ժամանակ արժեքի ստեղծման պրոցես լիներ: Յեվ այդպիսի ապրանք գոյություն ունի: Այդ—մարդու բանվորական ուժն է: Սպառումն աշխատանք է, իսկ աշխատանքն ստեղծում է արժեք:*

[1]) Маркс—«Зарплата, цена и прибыль», стр. 50—53.

*Փողատերը բանվորական ուժը գնում է նրա արժեքով, որը, յուրաքանչյուր այլ ապրանքի արժեքի նման, վորոշվում է նրա արտադրության համար անհրաժեշտ հասարակականորեն-անհրաժեշտ բանվորական ժամանակով (այսինքն՝ բանվորի և նրա ընտանիքի պահպանման արժեքով)։ Գնելով բանվորական ուժը՝ փողատերն իրավունք ունի գործադրելու այն, այսինքն՝ ստիպելու նրան ամբողջ օրն՝ ասենք 12 ժամ, աշխատել։ Մինչդեռ բանվորը 6 ժամվա ընթացքում («անհրաժեշտ» բանվորական ժամանակ) է ստեղծում այն արդյունքը, վոր հանում է նրա պահպանման ծախքերը, իսկ հետևյալ 6 ժամվա ընթացքում («հավելյալ» բանվորական ժամանակ) ստեղծում է կապիտալիստի կողմից չվճարված «հավելյալ» արդյունք կամ հավելյալ արժեք*[1])։

*Բանվորական ուժի գործողությամբ վո՛չ միայն վերարտադրվում է նրա սեփական արժեքը, այլև բացի դրանից արժեքի ավելցուկ է արտադրվում։ Այդ հավելյալ արժեքը կազմում է արդյունքի արժեքի ավելցուկն այն տարրերի արժեքի նկատմամբ, վորոնք գործադրված են արդյունքը ձեռք բերելու համար, այսինքն՝ արտադրության միջոցների և բանվորական ուժի արժեքի նկատմամբ*[2])։

Ապացուցված է, վոր չվճարված աշխատանքի յուրացումը արտադրության կապիտալիստական յեղանակի և նրան հատուկ բանվորների շահագործման հիմնական ձևն է․ վոր նույնիսկ այն դեպքում, յերբ կապիտալիստը բանվորական ուժը գնում է այն լրիվ արժեքով, վոր այդ ուժն իբրև ապրանք ունի շուկայում, նա այնուամենայնիվ նրանից ավելի շատ արժեք է դուրս քաշում, քան վճարել է նրա համար, և վոր այդ հավելյալ արժեքն աղբյուրն է արժեքների այն գումարի, վորի շնորհիվ ունևոր դասակարգերի ձեռքում կուտակվում է կապիտալների մշտական աճող մասսան։ Այդպիսով, պարզաբանված է արտադրության կապիտալիստական յեղանակի ծագումը, ինչպես նաև կապիտալի իրեն արտադրության առաջացումը[3])։

*Յեթե ֆիկսացիայի յենթարկենք յերևան գալու առանձին ձևերը, վոր փոխափոխ ընդունում է ինքնաճող արժեքն իր կենսական շրջապտույտի մեջ, ապա ստացվում են այսպիսի սահմանումներ․* կապիտալը փող է, կապիտալն ապրանք է։ Սակայն իսկապես արժեքն այստեղ դառնում է սուբյեկտը (կրողը) վորոշ պրոցեսի, վորի մեջ նա, շարունակ փողային ձևը փոխելով ապրանքայինի և հակառակը, ինքը փոխում է իր մեծությունը, վանում է իրեն իբրև հավելյալ արժեք հենց իրենից՝ իբրև սկզբնական արժեքից, ինքնաճում է։ Վորովհետև այն շարժումը, վորի մեջ նա միացնում է իրեն հավելյալ արժեքը, նրա սեփական շարժումն է, հետևաբար, նրա աճումը ինքնաճումն է։ Նա մոգական հատկություն ձեռք բերեց արժեք ստեղծելու՝ շնորհիվ

1) Ленин—Собр. соч. XX доп., стр. 481—482.
2) Маркс—Капитал I, стр. 180.
3) Энгельс—Анти—Дюринг, стр. 21



այն հանգամանքի, վոր նա ինքն արժեք է։ Նա կենդանի ձագեր է ծնում, կամ առնվազն, վոսկե ձվեր է ածում։

Իբրև այդ պրոցեսի սուբյեկտ՝ արժեքը շարունակ անց է կենում նրա սահմաններից․ մեկ ընդունելով, մեկ էլ նորից դեն գցելով իրենից փողային և ապրանքային ձևերը և միևնույն ժամանակ անփոփոխ կերպով պահպանվելով ու աճելով այդ փոխարկումների մեջ, արժեքը կարիք ունի ամենից առաջ ինքնուրույն ձևի, վորի մեջ կարելի լիներ հավաստել նրա նույնությունը հենց իրեն հետ։ Իսկ այդ ձևն ունի նա միայն փողի կերպարանքով։ Այդ պատճառով էլ փողն արժեքի ինքնաճման յուրաքանչյուր պրոցեսի յելակետն ու յեզրափակման կետն է[1])։

## ԿԱՊԻՏԱԼ

Կապիտալը կազմված է հում նյութերից, աշխատանքի գործիքներից և գոյության բազմազան միջոցներից, վորոնք գործ են ածվում նոր հում նյութերի, աշխատանքի նոր գործիքների և գոյության նոր միջոցների արտադրության համար։ Կապիտալի այդ բոլոր բաղկացուցիչ մասերը աշխատանքի ստեղծագործություն են, կուտակված աշխատանք։ Կապիտալը կուտակված աշխատանք է, վոր ծառայում է իբրև միջոց նոր արտադրության համար։

*Այդպես են ասում տնտեսագետները։*

*Ի՞նչ բան է սևամորթ ստրուկը։—Սև ցեղին պատկանող մարդ։*

*Մի բացատրությունն արժե մյուսին։*

*Նեգրը նեգր է։ Միայն վորոշ հարաբերությունների ժամանակ է նա ստրուկ դառնում։ Բամբակաման մեքենան մեքենա յէ՝ բամբակ մանելու համար։* Միայն վորոշ հարաբերությունների ժամանակ է այն կապիտալ դառնում։ Դուրս կորզված այդ հարաբերություններից, այն նույնպես կապիտալ չի հանդիսանում, ինչպես վոսկին ինքնըստինքյան—փող չի հանդիսանում կամ շաքարը—շաքարի գին։

Արտադրության մեջ մարդիկ ներգործում են վոչ միայն բնության վրա (այլև միմյանց վրա)։ Նրանք արտադրում են միայն այնպես, վոր վորոշ կերպով գործում են միատեղ և փոխադարձաբար փոխանակում են իրենց աշխատանքները։ Արտադրելու համար նրանք պետք է վորոշ կապակցության և հարաբերությունների մեջ մտնեն միմյանց հետ, և միայն այդ հասարակական կապակցությունների և հարաբերությունների շրջանակներում է կատարվում նրանց ներգործությունը բնության վրա, տեղի յե ունենում նրանց արտադրությունը։

Կապիտալը—նույնպես հասարակական-արտադրական հարաբերություն

1) Капитал I, стр. 124.

ե: Այդ—բուրժուական հասարակության բուրժուական արտադրական հարաբերությունն ե:

*Մի՞թե գոյության միջոցները, աշխատանքի գործիքները, հում նյութերը, վորոնցից բաղկացած ե կապիտալը, արտադրված և կուտակված չե՞ն տվյալ հասարակական պայմանների ժամանակ, վորոշ հասարակական հարաբերությունների դեպքում: Մի՞թե նրանք տվյալ հասարակական պայմանների ժամանակ, վորոշ հասարակական հարաբերությունների դեպքում չե՞ն գործադրվում նոր արտադրության նպատակով: Յեվ մի՞թե այդ վորոշ հասարակական բնույթը չե՞ վոր նոր արտադրության համար ծառայող արդյունքները հենց կապիտալի յե փոխարկում:*

Կապիտալը կազմված չե պարզապես գոյության միջոցներից, աշխատանքի գործիքներից և հում նյութերից, պարզապես նյութական արդյունքներից. այն կազմված ե միևնույն ժամանակ փոխանակային արժեքներից: Հետևաբար, կապիտալը—պարզապես նյութական արդյունքների գումարը չե. այդ—ապրանքների, փոխանակային արժեքների, հասարակական մեծությունների գումարն ե:

*Յեթե մենք փոխարինենք բուրդը բամբակով, հացը—բրինձով, յերկաթուղին—շոգենավով, կապիտալները միևնույնը կմնան, յեթե միայն յենթադրենք, թե բամբակը, բրինձը, շոգենավը—կապիտալի մարմինը—միևնույն փոխանակային արժեքն ունի, միևնույն գինը, ինչպես բուրդը, հացը, յերկաթուղին, վորոնց մեջ առաջ մարմնացած եր կապիտալը: Կապիտալի մարմինը կարող ե շարունակ փոխվել, առանց կապիտալի ամենափոքրիկ փոփոխություն առաջ բերելու:*

Բայց, թեև յուրաքանչյուր կապիտալ ապրանքների, այսինքն՝ փոխանակային արժեքների գումարն ե, սակայն ապրանքների, փոխանակային արժեքների ամեն գումար կապիտալ չե:

*Հապա ի՞նչ կերպով ե ապրանքների, փոխանակային արժեքների գումարը կապիտալ դառնում:*

*Այն հանգամանքի շնորհիվ, վոր այն*, իբրև ինքնուրույն հասարակական ուժ, այսինքն՝ իբրև հասարակության մի մասի ուժը, պահպանվում ե և մեծացվում ե անմիջական կենդանի աշխատանքի հետ փոխանակվելու միջոցով: Բացի աշխատանքի ընդունակությունից ուրիշ վոչինչ չունեցող դասակարգի գոյությունը հանդիսանում ե կապիտալի անհրաժեշտ նախադրյալը:

Միայն կուտակված, անցյալ, իրայնացած աշխատանքի տիրապետությունն ե անմիջական կենդանի աշխատանքի վրա, վոր կուտակված աշխատանքը կապիտալի յե փոխարկում:

*Կապիտալը բնորոշվում ե վո՛չ նրանով, վոր կուտակված աշխատանքը կենդանի աշխատանքին իբրև միջոց ե ծառայում նոր արտադրության համար:* Կապիտալը բնորոշվում ե նրանով, վոր կենդանի աշխատանքը կուտակված աշխատանքի համար իբրև միջոց ե ծառայում նրա փոխանակային արժեքը պահպանելու և մեծացնելու համար:



*Վերցնենք այսպիսի մի որինակ. Ֆերմերը տալիս ե իր որամշակին որական 5 զիլբերգրոշ: Այդ 5 զիլբերգրոշի փոխարեն որամշակն աշխատում ե ֆերմերի արտում մի որ և նրան 10 զիլբերգրոշի յեկամուտ ե տալիս: Ֆերմերը չի ստանում պարզապես միայն որամշակին իր վճարած արժեքների փոխհատուցումը, այլ կրկնապատկում ե այն: Հետևաբար, նա արդյունավետ, արտադրողական կերպով գործադրեց, սպառեց այդ 5 զիլբերգրոշը, վոր նա տվեց որամշակին: Հենց այդ 5 զիլբերգրոշով նա գնեց որամշակի աշխատանքն ու ուժը, վորը կրկնակի արժեքով հողագործական արդյունքներ ե արտադրում և հինգ զիլբերգրոշից տասը զիլբերգրոշ ե շինում: Իսկ որամշակն ստանալով 5 զիլբերգրոշ իր արտադրողական ուժի փոխարեն, վորի գործողությունը հենց նա զիջեց ֆերմերին, այդ փողը փոխանակում ե գոյության միջոցների հետ, վոր նա սպառում ե այս կամ այն ժամանակամիջոցում: Հետևաբար, այդ 5 զիլբերգրոշն սպառվեցին յերկակի կերպով. վե*րարտադրողաբար—*կապիտալի համար, վորովհետև նա փոխանակվեց այն բանվորական ուժի հետ, վորը 10 զիլբերգրոշ բերեց*, անարտադրողական կեր*պով*--*բանվորի համար, վոր փոխանակեց այն գոյության միջոցների հետ, վորոնք ընդմիշտ անհետացան և վորոնց արժեքը նա կարող ե կրկին ստանալ այն դեպքում միայն, յեթե միևնույն փոխանակությունը կրկնե ֆերմերի հետ:* Հետևաբար, կապիտալը յենթադրում ե վարձու աշխատանք, վարձու աշխատանքը յենթադրում ե կապիտալ: Նրանք փոխադարձաբար պայմանավորում են միմյանց. նրանք փոխադարձաբար արտադրում են միմյանց:

*Բամբակագործ ֆաբրիկայի բանվորը,— արդյոք նա բամբակե գործվածքնե՞ր ե արտադրում: Վո՛չ*, նա կապիտալ ե արտադրում: Նա արժեքներ ե արտադրում, վորոնք կրկին ծառայում են նրա համար, վորպեսզի տնօրինեն նրա աշխատանքը և վերջինիս միջոցով նոր արժեքներ ստեղծեն[1]):

*Այսպես ուրեմն*, կապիտալ ասելով Մարքսը հասկանում ե վոչ սովորական տնտեսագիտական հասկացողություն, վորի համաձայն «կապիտալն արտադրության արտադրված միջոցն ե». ընդհակառակը, նա պնդում ե, թե արժեքների վորոշ գումար այն ժամանակ ե միայն կապիտալի փոխարկվում, յերբ նա մեծանում ե իր արժեքի մեջ՝ հավելյալ արժեքի ստեղծման միջոցով[2]):

Կապիտալը միայն տիրապետությունը չե աշխատանքի նկատմամբ, ինչպես արտահայտվում ե Ա. Սմիթը: Այն իր հիմքում տիրապետություն ե չվճարված աշխատանքի նկատմամբ: Յուրաքանչյուր հավելյալ արժեք, ինչպիսի հատուկ ձևի մեջ ել այն չբյուրեղանա հետագայում, իբրև շահույթ, տոկոս, ռենտա և այլն, իր բուն եյությամբ ներկայացնում ե չվճարված բանվորական ժամանակի մարմնացումը: Կապիտալի ինքնաճման գաղտնիքի լու-

[1]) Маркс—Наемный труд и капитал.

[2]) Энгельс—«Анти-Дюринг», стр. 192.

ծումն այն է, որ կապիտալն իր տրամադրության տակ ունի ուրիշի չվճարված աշխատանքի որոշ քանակություն[1]) :

*Փողը փոխարկելով ապրանքների, որոնք ծառայում են իբրև նոր արդյունքի նյութական տարրեր կամ աշխատանքի պրոցեսի գործոններ, միացնելով մեռած իրերին կենդանի բանվորական ուժը, կապիտալիստը արժեքը, անցյալ, իրայնացած մեռած աշխատանքը—կապիտալի յե փոխարկում, ինքնաճող արժեքի, շնչավորված հրեշի, վորն սկսում է «աշխատել», կարծես նրան պատած սիրո կրքի ազդեցության տակ*[2]) :

Արտադրության ամբողջ պրոցեսի համար, առանձնապես հասարակական կապիտալի արտադրության պրոցեսի համար, անհրաժեշտ պայման է հանդիսանում, որպեսզի արտադրության պրոցեսը միևնույն ժամանակ վերարտադրության պրոցես լինի, հետևաբար, ուրեմն, նաև նրա մոմենտներից ամեն մեկի շրջապտույտի պրոցեսը···

Կապիտալի պատկերացումն, իբրև ինքնաճող արժեքի, ընդգրկում է ո՛չ միայն պատկերացումը դասակարգային հարաբերությունների մասին, հասարակության որոշ բնույթի մասին, որը բղխում է նրանից, որ աշխատանքը գոյություն ունի իբրև վարձու աշխատանք: Կապիտալը, բացի դրանից, շարժումն է, շրջապտույտի պրոցես, որ զանազան ստադիաներ է անցկենում··· Այդ պատճառով էլ՝ կապիտալը կարելի յե ըմբռնել միայն իբրև շարժում, և ո՛չ թե իբրև մի իր, որ անդորրության մեջ է գտնվում:

*Կապիտալի շարժումները, պատկերացվում են առանձին արդյունաբերական կապիտալիստի գործողություններով, այն իմաստով, վոր նա գործում է իբրև ապրանքների և աշխատանքի գնորդ, ապրանքների վաճառորդ, արտադրողական կապիտալիստ և, հետևաբար, իր գործունեությամբ սպասարկում է շրջապտույտին: Յեթե հեղափոխություն է կատարվում հասարակական կապիտալի արժեքի մեջ, ապա կարող է պատահել, վոր տվյալ կապիտալիստի անհատական կապիտալը չկարողանա գլուխ յելնել հեղաշրջման հետ և կործանվի, վորովհետև ի վիճակի չէ համակերպվելու արժեքի այդ փոփոխության պայմանների հետ: Վորքան ավելի կտրուկ և հաճախ են դառնում հեղափոխություններն արժեքի մեջ, վորքան ավելի յե հաղթահարում ինքնուրույն գոյության հասած կապիտալ արժեքի ավտոմատիկ, բնության տարերային պրոցեսի ուժով գործող շարժումը անհատ կապիտալիստի նախատեսության և հաշվարկումների վրա, այնքան ավելի արտադրության նորմալ ընթացքն յենթարկվում է աննորմալ սպեկուլյացիայի, այնքան ավելի մեծ վտանգի յե յենթարկվում առանձին կապիտալների գոյությունը: Այսպիսով*, արժեքի մեջ տեղի ունեցող այդ պարբերական հեղափոխությունները հաստատում են այն, ինչ վոր նրանք, կարծես թե, պետք է հերքեյին, այն է, վոր արժեքն իբրև կապիտալ ինքնուրույն

[1]) Капитал I, стр. 515
[2]) Капитал I, стр. 166



գոյություն է ձեռք բերում, վոր նա պահպանում է ու կայունացնում իր շարժման միջոցով[1]) :

*Կապիտալի ծագման պատմական նախադրյալն է հանդիսանում նախ և առաջ՝ վորոշ փողային գումարների կուտակումն առանձին անձերի ձեռքերում, ընդհանրապես ապրանքային արտադրության զարգացման համեմատաբար բարձր մակարդակի ժամանակ, և, յերկրորդ՝ յերկակի իմաստով «ազատ» բանվորի առկայությունը, ազատ՝ բանվորական ուժը վաճառելու բոլոր կաշկանդումներից կամ սահմանափակումներից և ազատ հողից ու առհասարակ արտադրության միջոցներից, տնտեսազուրկ բանվորի, «պրոլետարի», վորը վոչնչով չի կարող ապրել, բացի իր բանվորական ուժը վաճառելուց*[2]) :

*Առհասարակ ապրանքային արտադրությամբ զբաղվելը փոխարկվում է բանվորական ուժի շահագործման զբաղմունքի· բայց միայն կապիտալիստական ապրանքային արտադրությունն է շահագործման այնպիսի յեղանակ դառնում, վորը, կազմակերպելով աշխատանքի պրոցեսն ու հզորապես զարգացնելով տեխնիկան, պատմության նոր դարաշրջան է բաց անում և իր հետագա շարժման ժամանակ հեղաշրջում է կատարում հասարակության ամբողջ տնտեսական կառուցվածքի մեջ և իրենից շատ ու շատ հետ է թողնում բոլոր նախորդող դարաշրջանները*[3]) :

Աշխատանքի արտադրողական ուժերը, ինչպես պատմականորեն զարգացածները, այնպես նաև բնությամբ իրենով պայմանավորվածները, թվում են կապիտալի արտադրողական ուժերը, յերբ կապիտալը տիրապետում է աշխատանքին[4]) :

*Ամենից առաջ* Wakefield-*ն հայտնագործեց գաղութներում, վոր փող, գոյության միջոցներ, մեքենաներ և արտադրության այլ միջոցներ ունենալը մարդուն դեռևս կապիտալիստ չի դարձնում, յեթե պակասում է նրան այնպիսի մի հավելում, ինչպիսին* վարձու բանվորն է, *մի ուրիշ մարդ, վոր ստիպված է կամավոր կերպով ինքն իրեն վաճառելու: Նա հայտնագործեց*, վոր կապիտալն իր չէ, այլ հասարակական հարաբերություն մարդկանց միջև, վոր կատարվում է իրերի միջոցով: *Պարոն Պիլը,—գանգատվում է նա,—Անգլիայից իրեն հետ Նոր Հոլանդիայի Կարապի ծովափը վերցրեց 50·000 ֆ· ստ· ընդհանուր գումարի գոյության միջոցներ և արտադրության միջոցներ: Պարոն Պիլն այնքան շրջահայաց էր, վոր բացի դրանից իրեն հետ վերցրեց բանվոր դասակարգից 3000 հոգի—տղամարդիկ, կանայք և յերեխաներ: Բայց նշանակված վայրը ժամանելուց հետո «Պարոն Պիլի մոտ մինչև անգամ մի սպասավոր էլ չմնաց, վորը կարողանար պատրաստել նրա անկողինը կամ գետից ջուր բերել»: Թշվա՜ռ պարոն Պիլ: Նա ամեն բան նախա—*

[1]) Капитал II, стр. 77—79.
[2]) Ленин—Собр. соч. XX доп., стр. 482.
[3]) Капитал II, стр. 13.
[4]) Капитал I, стр. 496.

*տեսել էր, բայց մոռացել էր միայն Կարապի ծովափը փոխադրել անգլիական արտադրական հարաբերությունները:*

Wakefield-*ի հետևյալ հայտնագործումների ըմբռնման համար յերկու նախնական դիտողություն:* Մենք գիտենք, վոր յերբ արտադրության ու գոյության միջոցները հանդիսանում են անմիջական արտադրողի, բանվորի իրեն սեփականությունը, ապա նրանք կապիտալ չեն կազմում: Նրանք կապիտալ են դառնում միայն այն պայմաններում, յերբ նրանք միևնույն ժամանակ ծառայում են իբրև բանվորի շահագործման և յենթարկման միջոցներ: Բայց նրանց այդ կապիտալիստական հոգին տնտեսագետի գլխում այնքան սերտ ամուսնական կապերով է կապված նրանց նյութական սուբստանցիայի հետ, վոր նա բոլոր հանգամանքներում էլ նրանց կապիտալ է անվանում, մինչև անգամ այնպիսի պայմաններում, յերբ նրանք կապիտալի ուղղակի հակադրությունն են հանդիսանում: *Այդպես է գործի հանգամանքը նաև* Wakefield-*ի մոտ: Այնուհետև, արտադրության միջոցների ցրվածությունը, վորոնք բազմաթիվ միմյանցից անկախ, ինքնուրույնաբար տնտեսավարող բանվորների անհատական սեփականությունն են կազմում, նա անվանում է կապիտալի հավասար բաշխում: Տնտեսագետն էլ նույնպես է վարվում, ինչպես ֆեոդալական իրավաբանը: Վերջինս մինչև անգամ զուտ փողային հարաբերություններին փակցնում էր իր ֆեոդալական իրավաբանական պիտակները (էտիկետկաները)*[1]:

*Ի՞նչ կերպով է ապրանքների, փոխանակային արժեքների գումարը կապիտալ դառնում: Շնորհիվ այն հանգամանքի, վոր այն իբրև ինքնուրույն հասարակական ուժ, այսինքն՝ իբրև հասարակության մի մասի ուժը պահպանվում է ավելացվում է անմիջական կենդանի աշխատանքի հետ փոխանակվելու միջոցով: Հետևաբար, կապիտալը յենթադրում է վարձու աշխատանք: Վարձու աշխատանքը յենթադրում է կապիտալ: Նրանք փոխադարձաբար պայմանավորում են միմյանց. նրանք փոխադարձաբար արտադրում են միմյանց: Բամբակագործական ֆաբրիկայի բանվորը — արդյոք նա միայն բամբակե գործվածքնե՞ր է արտադրում: Վո՛չ, նա արտադրում է կապիտալ: Նա արժեքներ է արտադրում, վորոնք կրկին այն բանի համար են ծառայում, վորպեսզի տնօրինեն նրա աշխատանքը և վերջինիս միջոցով նոր արժեքներ ստեղծեն: Կապիտալը կարող է լոկ այն յեղանակով մեծանալ, վոր այն փոխանակվում է աշխատանքի (բանվորական ուժի) հետ, վոր այն կյանքի յե կոչում վարձու աշխատանքը: Վարձու բանվորի բանվորական ուժը կարող է կապիտալի հետ փոխանակվել լոկ այն պայմանով, յեթե այն ավելացնում է կապիտալը, յեթե այն ուժեղացնում է այն իշխանությունը, վորի ստրկուհին է հանդիսանում ինքը: Այդ պատճառով կապիտալի մեծացումը—պրոլետարիատի, այսինքն՝ բանվոր դասակարգի մեծացումն է*[2]:

[1]) Капитал I, стр. 758--759.

[2]) Наемный труд и капитал, стр. 48—51



## ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆ ԻԲՐԵՎ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ

*Յեթե մենք համեմատենք արժեքի ստեղծման պրոցեսն աշխատանքի պրոցեսի հետ, ապա կտեսնենք, վոր վերջինս կայանում է օգտակար արժեքներ արտադրող սպեցիֆիկ օգտակար աշխատանքի մեջ: Այստեղ* շարժումը դիտվում է վորակական տեսակետից, նրա հատուկ բնույթի, նպատակի և բովանդակության կողմից: *Արժեքի ստեղծման պրոցեսում այդ նույն աշխատանքի պրոցեսը ներկայանում է բացառապես քանակական կողմից: Այստեղ խնդրի* էությունն այն ժամանակն է միայն, *վոր պահանջում է աշխատանքն իր գործողության համար, կամ միայն այն* ժամանակաշրջանի տևողությունը, *վորի ընթացքում արտադրողական կերպով ծախսվում է բանվորական ուժը: Արտադրության միջոցներն այստեղ գործում են պարզապես իբրև աշխատանքը ներծծելու միջոցներ և իրենք ներկայացնում են միայն վորոշ նրանց մեջ մարմնացած աշխատանքի քանակություն: Նրանք հաշվի յեն առնվում միայն իբրև իրայնացած աշխատանքի վորոշ քանակություն: Յեվ աշխատանքը, կայանալիս լինի այն արտադրության միջոցների մեջ, թե միացյալ բանվորական ուժի կողմից, թե՛ այս և թե՛ այն դեպքում հաշվի յե առնվում միայն ժամանակի քանակությամբ: Նա կազմում է այսքան ժամ, որ և այլն*[1]:

Կապիտալին հատուկ է յերկու տեսակի տենդենց. մի կողմից, այն տենդենցը, վորը կենդանի աշխատանքի անմիջական գործադրության դեպքում աշխատում է վերածել անհրաժեշտ աշխատանքի և շարունակ կրճատել արդյունքը պատրաստելու համար անհրաժեշտ աշխատանքը, այդ նպատակի համար շահագործելով աշխատանքի հասարակական արտադրողական ուժերը, հետևաբար, ըստ հնարավորության ավելի տնտեսել անմիջականորեն գործադրվող կենդանի աշխատանքը. մյուս կողմից, կապիտալին հատուկ է տենդենց այդ անհրաժեշտ չափերին վերածված աշխատանքը գործադրել ըստ հնարավորության ավելի խնայողական պայմաններում, այսինքն՝ գործադրվող հաստատուն կապիտալի արժեքը վերածել հնարավոր մինիմումի[2]:

*Յեթե բանվորն իր տրամադրության տակ ունեցած ամբողջ ժամանակն ստիպված է ծախսել իր ընտանիքի համար գոյության անհրաժեշտ միջոցների արտադրության վրա, ապա նրան, իհարկե, ժամանակ չի մնա յերրորդ անձերի օգտին անհատույց աշխատանք կատարելու համար: Այդպիսով,* քանի աշխատանքի արտադրողականությունը վորոշ մակարդակի չի հասել, *բանվորի տրամադրության տակ չկա այն ավելորդ ժամանակը, առանց վորի անկարելի յե հավելյալ աշխատանքը, հետևաբար, անկարելի յեն նաև կապիտալիստները, բայց միևնույն ժամանակ անկարելի յեն նաև ստրկատերերը, ֆեոդալական բարոնները, մի խոսքով՝ խոշոր սեփականատերերի վո-*

[1]) Маркс—Капитал I, стр. 167.

[2]) Маркс—Капитал III, ч. I, стр. 53

*ընեցել դասակարգ:* *Այդպիսով*, կարելի յե խոսել հավելյալ արժեքի բնական հիմքի մասին, **բայց միայն այն միանգամայն** ընդհանուր իմաստով, թե բնության մեջ գոյություն չունի վո՛չ մի բացարձակ արգելք, վոր խանգարի մարդուն վերցնելու իրենից և մեկ ուրիշի վրա դնելու այն աշխատանքը, վոր անհրաժեշտ է սեփական գոյության պահպանման համար: *Այդ միևնույն իրավունքով կարելի յե ասել, որինակ, թե բնության մեջ բացարձակ արգելք չկա, վոր խանգարի մարդուն կերակրի համար գործածելու ուրիշ մարդու միս:*

*Ամենևին հարկ չկա, ինչպես այդ արվում եր յերբեմն, միստիկական պատկերացումներ կապելու աշխատանքի այդ անմիջականորեն աճող արտադրողականության հետ:* Միայն այն ժամանակ, յերբ մարդիկ իրենց աշխատանքով արդեն դուրս յեկան սկզբնական կենդանական վիճակից, յերբ այդպիսով նրանց աշխատանքն արդեն վորոշ չափով հանրայնացված է — միայն այն դեպքում են պայմաններ մեջտեղ գալիս, վորոնց ժամանակ մի մարդու հավելյալ աշխատանքը դառնում է մյուսի գոյության պայմանը: *Կուլտուրայի սաղմային աստիճանների ժամանակ աշխատանքի արտադրողական ուժը չընչին է: Բայց նույնպիսի յեն նաև նրանց պահանջները, վորոնք զարգանում են նրանց բավարարման միջոցների հետ միասին և անմիջականորեն կախված են այդ վերջինների զարգացումից: Այնուհետև, մատնանշված առաջին աստիճանների ժամանակ հասարակության այն մասերի մեծությունը, վորոնք ուրիշի աշխատանքով են ապրում, չնչին փոքր է՝ անմիջականորեն արտադրողների մասսայի հետ համեմատած:* Աշխատանքի հասարակական արտադրողական ուժի աճմանը զուգընթաց՝ այդ մասերն էլ աճում են բացարձակապես և հարաբերական չափով: Սակայն, կապիտալն իբրև հասարակական հարաբերություն, առաջ է գալիս տնտեսական հողի վրա, վոր զարգացման յերկարատև պրոցեսի արդյունք է: Աշխատանքի առկա արտադրողականությունը, վորից նա յելնում է, իբրև իր հիմքից, բնության պարգև չէ, այլ պատմության պարգևն է, վոր ընդգրկում է վո՛չ թե դարերի, այլ հազարավոր դարերի ժամանակաշրջաններ[1]:

## ՀԱՍՏԱՏՈՒՆ ՅԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

*Արտադրության միջոցները մի կողմից, բանվորական ուժը—մյուս կողմից, ներկայացնում են միայն սկզբնական կապիտալ արժեքի գոյության զանազան ձևերը, վոր դեն է գցել իրենից իր փողային ձևը և աշխատանքի պրոցեսի գործոնի յե փոխարկվել:*

*Այսպես ուրեմն*, կապիտալի այն մասը, վոր փոխարկվում է արտադրության միջոցների, այսինքն՝ հում նյութի, օժանդակ նյութերի և աշխատանքի միջոցների, արտադրության պրոցեսի մեջ չի փոխում իր արժեքի մեծու-

[1]) Капитал I, стр. 492—493



թյունը: Այդ պատճառով էլ յես անվանում եմ այն կապիտալի հաստատուն չփոփոխվող մաս, կամ կարճ՝ հաստատուն կապիտալ:

*Ընդհակառակը*, կապիտալի այն մասը, վորը բանվորական ուժի յե փոխարկված, արտադրության պրոցեսի մեջ փոխում է իր արժեքը: Նա վերարտադրում է իր սեփական եկվիվալենտը և բացի դրանից մի ավելցուկ, հավելյալ արժեք, վորն իր հերթին կարող է փոփոխվել, ավելի մեծ կամ ավելի փոքր լինել: Կապիտալի այս մասը հաստատուն մեծությունից անընդհատ փոխարկվում է փոփոխականի:

Այդ պատճառով էլ յես անվանում եմ այն կապիտալի փոփոխական մասը, կամ, կարճ՝ փոփոխական կապիտալ: Կապիտալի հենց այն բաղկացուցիչ մասերը, վորոնք աշխատանքի պրոցեսի տեսակետից տարբերվում են իբրեվ օբյեկտիվ (իրային) և սուբյեկտիվ (անձնական) գործոններ, իբրեվ արտադրության միջոցներ և բանվորական ուժ, արժեքի ավելացման պրոցեսի տեսակետից տարբերվում են իբրեվ հաստատուն կապիտալ և փոփոխական կապիտալ:

*Հաստատուն կապիտալի հասկացողությունն ամենևին չի բացառում հեղափոխությունը նրա բաղկացուցիչ մասերի արժեքի մեջ*[1]:

*Հայտնի յե, վոր յես տարբերում եմ կապիտալի յերկու մասերը: Հաստատուն կապիտալ (հումք, գործիքներ, մեքենաներ և այլն), վորի արժեքը միայն* նորից կրկնվում է *արդյունքի արժեքի մեջ, և, յերկրորդ՝* փոփոխական կապիտալ, *այսինքն՝ աշխատավարձի վրա ծախսված կապիտալ: Այս վերջինն իր մեջ պարունակում է ավելի քիչ իրային աշխատանք, քան թե բանվորը վերադարձնում է նրա փոխարեն: Որինակ, յեթե ամենօրյա աշխատավարձը հավասար է տասը ժամի, իսկ բանվորն աշխատում է տասներկու ժամ, ապա նա փոխհատուցում է փոփոխական կապիտալը, ավելացրած նրա մեկ հինգերորդ մասն ևս (յերկու ժամ)*: Այս վերջին ավելցուկն յես անվանում եմ գերարժեք (հավելյալ արժեք)[2]:

*Հետևաբար, արտադրության պրոցեսի տեսակետից կապիտալի մեջ անհրաժեշտ է տարբերել յերկու մասեր. հաստատուն կապիտալ, վոր ծախսվում է արտադրության միջոցների վրա (մեքենաներ, աշխատանքի գործիքներ, հում նյութ և այլն). նրա արժեքը (միանգամից կամ մաս առ մաս) անփոփոխ անցնում է պատրաստի արդյունքին,—և փոփոխական կապիտալ, վոր ծախսվում է բանվորական ուժի վրա: Այդ կապիտալի արժեքն անփոփոխ չի մնում, այլ աշխատանքի պրոցեսի մեջ աճում է, ստեղծելով հավելյալ արժեք: Այդ պատճառով՝* կապիտալի կողմից բանվորական ուժի շահագործման աստիճանն արտահայտելու համար՝ հարկավոր է հավելյալ արժեքը համեմատել վո՛չ թե ամբողջ կապիտալի, այլ միմիայն փոփոխական կապիտալի հետ: *Հավելյալ արժեքի նորման, ինչպես Մարքսն է անվանում այդ հարաբերու-*

[1]) Капитал I, стр. 180—181

[2]) К. Маркс և Ф. Энгельс. Письма, стр. 153—184.

թյունը, մեր օրինակում կլինի, օրինակ, $\frac{6}{6}$ այսինքն՝ 100 տոկոս[1]):

Իրականության մեջ մենք արդեն գիտենք, վոր հավելյալ արժեքը պարզապես հետևանք է արժեքի այն փոփոխության, վորը կատարվում է «V»-ի հետ, կապիտալի այն մասի հետ, վոր փոխարկված է բանվորական ուժի, վոր, հետևաբար, v + m = v + △v, ըստ վորում △v-ն ներկայացնում է v-ի փոխարկումը: Բայց արժեքի իսկական փոփոխությունն ու այն հարաբերությունը, վորով փոփոխվում է արժեքը, մթագնվում են այն հանգամանքի շնորհիվ, վոր իր փոփոխվող բաղկացուցիչ մասի աճման հետևանքով, աճում է նաև ամբողջ կանխավճարված կապիտալը[2]):

## ԱՐԺԵՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄՆ ՈՒ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Աշխատանքի պրոցեսի զանազան գործոնները տարբեր մասնակցություն են ունենում արդյունքի արժեքի կազմվելու մեջ:

Բանվորն աշխատանքի առարկային նոր արժեք է միացնում, կցելով նրան աշխատանքի վորոշ քանակություն, ինչպես էլ վոր լինի այդ աշխատանքի կոնկրետ բովանդակությունը, նպատակն ու տեխնիկական բնույթը: Մյուս կողմից, արտադրության սպառված միջոցների արժեքները մենք կրկին գտնում ենք իբրև արդյունքի արժեքի բաղկացուցիչ մասերը, օրինակ, բամբակի և իլիկների արժեքը—մանվածքի արժեքի մեջ: Հետևաբար, արտադրության միջոցների արժեքը պահպանվում է, փոխանցելով արդյունքի մեջ: Այդ փոխանցումը կատարվում է աշխատանքի պրոցեսի մեջ, յերբ արտադրության միջոցներն արդյունքի յեն փոխարկվում: Այդ բանը կատարվում է աշխատանքի միջոցով: Բայց ի՞նչ կերպով:

Բանվորը միևնույն ժամանակի ընթացքում կրկնակի չի աշխատում. մի կողմից, նրա համար, վորպեսզի իր աշխատանքով արժեք միացնե բամբակին, իսկ մյուս կողմից՝ նրա համար, վորպեսզի պահպանե բամբակի հին արժեքը, կամ վոր միևնույնն է, վորպեսզի արդյունքին, մանվածքին փոխանցե իր վերամշակած բամբակի և այն իլիկների արժեքը, վորով նա աշխատում է: Հին արժեքը նա պահպանում է պարզապես նոր արժեքի միացումով: Բայց վորովհետև աշխատանքի առարկային նոր արժեք միացնելը և հին արժեքների պահպանումը արդյունքի մեջ՝ յերկու միանգամայն տարբեր հետևանքներ են, վոր բանվորը ձեռք է բերում միևնույն ժամանակի ընթացքում, թեև այդ ժամանակ նա կրկնակի չի աշխատում, ապա ակներև է, վոր հետևանքի այդ յերկակիությունը կարող է բացատրություն գտնել միայն հենց նրա աշխատանքի յերկակի բնույթից: Աշխատանքը միևնույն ժամանակ, դիտվելով իր մի հատկության կողմից՝ պետք է արժեք ստեղծի,

1) Ленин, т. XX, стр. 482.
2) Маркс. Капитал I, стр. 184.



իսկ դիտվելով հատկության մյուս կողմից՝ պետք է պահպանի կամ փոխանցի արժեքը:

Ինչ կերպով է ամեն մի բանվոր միացնում բանվորական ժամանակը, ուստի և արժեքը: Միշտ միայն իր արտադրողական աշխատանքի հատուկ ձևով:

... Հետևաբար, բանվորը պահպանում է արտադրության գործադրված սպառված միջոցների արժեքը կամ այն փոխանցում է արդյունքին, իբրև վերջինիս արժեքի բաղկացուցիչ մասերը, վո՛չ թե առհասարակ իր աշխատանքը միացնելու միջոցով, այլ այդ միացնելիք աշխատանքի առանձնապես օգտակար բնույթի հետևանքով, նրա սպեցիֆիկ արտադրողական ձևի հետևանքով:

... Աշխատանքի պարզ քանակական միացումով նոր արժեք է միացվում, իսկ միացնելիք աշխատանքի հատուկ բնույթի հետևանքով՝ արտադրության միջոցների հին արժեքները պահպանվում են արդյունքի մեջ: Միևնույն աշխատանքի այդ յերկկողմանի գործողությունը, իբրև հետևանք այդ աշխատանքի յերկակի բնույթի դրսևորվում է զանազան յերևույթների մեջ:

... Վորքան ավելի շատ անհրաժեշտ բանվորական ժամանակ մտնի մանելու գործողության դեպքում բամբակի տվյալ քանակության մեջ, այնքան ավելի շատ կլինի բամբակին միացվող նոր արժեքը. բայց վորքան ավելի մեծ քանակությամբ բամբակ մանվի բանվորական ժամանակի տվյալ քանակության ընթացքում, այնքան ավելի շատ հին արժեք է պահպանվում արդյունքի մեջ:

... Արտադրության տվյալ անփոփոխ պայմաններում բանվորն այնքան ավելի շատ արժեք է պահպանում, վորքան ավելի շատ արժեք է նա միացնում. բայց նա ավելի մեծ արժեք է պահպանում վո՛չ թե այն պատճառով, վոր նա ավելի մեծ արժեք է միացնում, այլ վորովհետև միացնում է այն չփոփոխվող և իր սեփական աշխատանքից անկախ պայմաններում:

Իհարկե, վորոշ հարաբերական իմաստով կարելի յե ասել, թե բանվորը միշտ հին արժեքները պահպանում է հենց այն համեմատությամբ, վորով նա նոր արժեք է միացնում:

... Աշխատանքի պրոցեսի մեջ արժեքն արտադրության միջոցներից անցնում է արդյունքին միայն այն չափով, վորչափով վոր արտադրության միջոցներն իրենց ինքնուրույն սպառողական արժեքի հետ միասին կորցնում են նաև իրենց փոխանակային արժեքը: Նրանք հանձնում են արդյունքին միայն այն արժեքը, վոր նրանք կորցնում են իբրև արտադրության միջոցներ:

... Յեթե մանող մեքենան 10 տարվա մեջ անցրել է իր ժամանակը, ապա նրա ամբողջ արժեքը աշխատանքի տասնամյա պրոցեսի ընթացքում անցել է 10 տարվա արդյունքին: Հետևաբար, աշխատանքի վորոշ միջոցի կենսաշրջանն ընդգրկում է իր օգնությամբ շարունակ նորից և նորից կրկնվող աշխատանքի պրոցեսների ավելի մեծ կամ ավելի փոքր քանակություն: Աշխատանքի միջոցի նկատմամբ էլ խնդիրը նույնն է, ինչպես նաև մարդու

նկատմամբ: Ամեն մի մարդու կյանք օրական պակասում է 24 ժամով: Բայց մարդու ճակատին գրված չէ, թե նրա կյանքից քանի՞ օր է պակասել: Սակայն այդ հանգամանքը չի խանգարում կյանքի ապահովագրության ընկերություններին շատ ճիշտ և, վոր ավելի ևս կարևոր է, շատ օգտավետ յեզրակացություններ անելու մարդկային կյանքի միջին տևողությունից: Միևնույնը նաև աշխատանքի միջոցների վերաբերմամբ: Փորձից հայտնի յե, թե միջին հաշվով վորքան ժամանակ կարող է դիմանալ աշխատանքի վորոշ միջոց, օրինակ վորոշ տեսակի մեքենաներ:

... Այստեղից լիակատար պարզությամբ յերևում է, վոր արտադրության միջոցը յերբեք արդյունքին ավելի շատ արժեք չի տալիս, քան թե ինքը կորցնում է աշխատանքի պրոցեսում, իր սեփական սպառողական արժեքի վոչնչացման հետևանքով: Յեթե արտադրության միջոցն արժեք չունենար և այդ պատճառով վոչինչ չունենար կորցնելու, այսինքն՝ յեթե նա ինքն էլ մարդկային աշխատանքի արդյունք չլիներ, այն ժամանակ նա արդյունքին վոչ մի արժեք չէր հանձնի: Նա կծառայեր սպառողական արժեք ստեղծելու համար, առանց մասնակցելու փոխանակային արժեքի կազմության մեջ: Այդպես է բանը արտադրության այն բոլոր միջոցների վերաբերմամբ, վորոնք տրված են բնության կողմից, առանց մարդու աջակցության, ինչպես հողն է, քամին ու ջուրը, յերկաթը հանքարանում, ծառը կուսական անտառում և այլն:

Այստեղ մեր առաջ է յելնում մի ուրիշ հետաքրքրական յերևույթ: Յենթադրենք, թե մեքենայի արժեքը, օրինակ, 1000 Ֆ. ստ., և այն մաշվում է 1000 օրում: Այդ դեպքում մեքենայի մեկ հազարերորդ արժեքը նրանից ամեն օր անցնում է նրա օրական արդյունքին: Միևնույն ժամանակ ամբողջ մեքենան շարունակում է, թեև ավելի պակասող կենսագործությամբ, գործել աշխատանքի պրոցեսի մեջ: Այսպիսով, բանից դուրս է գալիս, վոր աշխատանքի պրոցեսի մի գործոնը, արտադրության մի միջոցը, ամբողջությամբ մասնակցություն է ունենում աշխատանքի պրոցեսի մեջ, բայց միայն մասամբ—արժեքի մեծացման պրոցեսում: Տարբերությունը աշխատանքի պրոցեսների և արժեքի մեծացման պրոցեսի միջև արտացոլվում է այստեղ նրանց իրային գործոնների վրա, վորովհետև արտադրության միևնույն միջոցը, իբրև աշխատանքի պրոցեսի տարր, ամբողջությամբ մտնում է արտադրության տվյալ պրոցեսի մեջ, իսկ իբրև արժեքի ստեղծման տարր մտնում է մաս առ մաս:

Մյուս կողմից, արտադրության միջոցը կարող է, ընդհակառակը, ամբողջությամբ մտնել արժեքի ստեղծման պրոցեսի մեջ, թեև աշխատանքի պրոցեսի մեջ այն մտնում է միայն մի մասով:

... Միայն այն չափով, վորչափով արտադրության միջոցները աշխատանքի պրոցեսի ժամանակ կորցնում են այն արժեքը, վոր գոյություն ուներ արտադրության այդ միջոցների հին սպառողական արժեքների ձևով, նրանք արժեքը փոխանցում են արդյունքի նոր ձևին: Կորուստի մաքսիմումը, վոր նրանց արժեքը կարող է կրել աշխատանքի պրոցեսում, ակներև է՝ սահմանափակված է արժեքի այն սկզբնական մեծությամբ, վորով նրանք մըտնում են աշխատանքի պրոցեսի մեջ, կամ այն բանվորական ժամանակով, վոր անհրաժեշտ է նրանց սեփական արտադրության համար: Այդ պատճառով՝ արտադրության միջոցները յերբեք չեն կարող արդյունքին ավելի մեծ արժեք միացնել, քան այն արժեքը, վոր նրանք ունեն, անկախ նրանց սպասարկած աշխատանքի պրոցեսից:



... Աշխատանքի պրոցեսում նա ծառայում է միայն իբրև սպառողական արժեք, իբրև օգտակար հատկություններ ունեցող մի իր, և այդ պատճառով՝ նա վոչ մի արժեք չէր հանձնի արդյունքին, յեթե մինչև իր պրոցեսի մեջ մտնելը արժեք չունենար:

... Բանվորը պահպանելով հին արժեքները, չի կարող նոր աշխատանք միացնել, հետևաբար, չի կարող նոր արժեք ստեղծել, վորովհետև նա պետք է ամեն անգամ աշխատանքը միացնի վորոշ օգտակար ձևով, իսկ օգտակար ձևով նա չի կարող միացնել, առանց արդյունքները նոր արդյունքի՝ արտադրության միջոցների փոխարկելու և հենց այդպիսով առանց դրանով նրանց արժեքները նոր արդյունքին փոխանցելու: Հետևաբար, պահպանել արժեքը՝ արժեք միացնելու միջոցով, այդ բանվորական ուժի գործողությունների մեջ յերևան յեկող կենդանի աշխատանքի բնական հատկությունն է, բնության պարգևը, վոր բանվորին վոչինչ չի արժենում, բայց շատ բան է բերում կապիտալիստին, այն է՝ բերում է նրան առկակապիտալային արժեքի պահպանումը:

... Արտադրության միջոցների մեջ առհասարակ սպառվում է նրանց սպառողական արժեքը, վորի սպառումով աշխատանքն արդյունքներ է ստեղծում: Նրանց արժեքն իսկապես չի սպառվում, այդ պատճառով էլ չի կարող նաև վերարտադրվել: Այդ արժեքը պահպանվում է, բայց վոչ այն պատճառով, վոր նրա հետ (արժեքի) վորևե գործողություններ են կատարվում աշխատանքի պրոցեսում, այլ այն պատճառով, վոր այն սպառողական արժեքը, ինչպիսի կերպարանքով այն սկզբնապես գոյություն ուներ, թեև անհետանում է, բայց անհետանում է միայն ուրիշ սպառողական արժեքի մեջ: Այդ պատճառով՝ արտադրության միջոցների արժեքը դարձյալ յերևան է գալիս արդյունքի արժեքի մեջ, բայց խստորեն ասած՝ չի վերարտադրվում: Արտադրվում է նոր սպառողական արժեք, վորի մեջ կրկին յերևան է գալիս հին փոխանակային արժեքը[1]:

Մինչդեռ աշխատանքն իր նպատակահարմար ձևի շնորհիվ արտադրության միջոցների արժեքը փոխանցում է արդյունքներին և հենց դրանով էլ պահպանում նրանց, նրա շարժման յուրաքանչյուր մոմենտը ավելադիր արժեք է ստեղծում, նոր արժեք: Յենթադրենք, թե արտադրության պրոցեսը ընդհատվում է այն կետի վրա, յերբ բանվորն արտադրել է իր սեփական բանվորական ուժի արժեքի էկվիվալենտը, յերբ նա, օրինակ, վեցժամյա աշ-

[1]) Капитал, I, стр. 170—179

խառնուքով միացրեց 3 շիլլինգ արժեք: Այդ արժեքը կազմում է ավելցուկը արդյունքի արժեքի, վերջինիս այն տարրերի վերաբերմամբ, վորոնք իրենց ծագումով պարտավոր են արտադրության միջոցների արժեքին: Այդ—միակ նոր արժեքն է, վոր առաջ է գալիս այդ պրոցեսում, արդյունքի արժեքի միակ մասը, վոր արտադրել է հենց այդ պրոցեսը[1]):

Ամենից առաջ հարկավոր է նշել, վոր մեքենան միշտ ամբողջությամբ է մասնակցում աշխատանքի պրոցեսի մեջ և միշտ միայն մասամբ՝ արժեքի ստեղծման պրոցեսում: Նա յերբեք ավելի արժեք չի միացնում, քան թե միջին հաշվով կորցնում է ինքը մաշվելու հետևանքով: Այդպիսով, մեծ տարբերություն կա մեքենայի արժեքի և արժեքի այն մասի միջև, վորը պարբերաբար նրանից փոխանցվում է արդյունքին: Մեծ տարբերություն կա մեքենայի միջև իբրև արժեքի կազմության տարր և մեքենայի միջև իբրև արդյունքի կազմության տարր: Վորքան ավելի յերկար լինի այն ժամանակաշրջանը, վորի ընթացքում միևնույն մեքենան նորից ու նորից ծառայում է աշխատանքի միևնույն պրոցեսի մեջ, այնքան ավելի մեծ է այդ տարբերությունը: Ճիշտ է, մենք տեսանք վոր աշխատանքի յուրաքանչյուր միջոց բառիս բուն իմաստով կամ արտադրության գործիք միշտ ամբողջությամբ է մասնակցում աշխատանքի պրոցեսի մեջ և միշտ միայն մասամբ, նրա մաշվելու օրական միջին համեմատականությամբ, արժեքի կազմության պրոցեսում: Սակայն այդ տարբերությունը օգտվելու և մաշվելու միջև շատ ավելի մեծ է մեքենայի վերաբերմամբ, քան թե գործիքի, վորովհետև մեքենան, կառուցված լինելով ավելի դիմացկուն նյութից, ավելի յերկար է ապրում, իսկ նրա գործադրությունը, վոր կարգավորվում է խիստ գիտական օրենքներով, հնարավոր է դարձնում մեծ խնայողություն անել նրա բաղկացուցիչ մասերի և նրա գործադրած միջոցների ծախսման մեջ, և, վերջապես, նրա արտադրության ասպարեզը անհամեմատ ավելի լայն է, քան թե գործիքինը: Յեթե մենք մի կողմ դնենք մեքենայից ու գործիքից նրանց օրական միջին ծախքերը, կամ արժեքի այն բաղկացուցիչ մասը, վոր նրանք միացնում են արդյունքին օրական միջին մաշումով և օժանդակ նյութեր գործադրելով, ինչպես օրինակ՝ յուղ, ածուխ և այլն, ապա բանից դուրս կգա, վոր նրանք գործում են ձրիաբար, ինչպես բնության ուժերը, վորոնք գոյություն ունեն առանց մարդկային աշխատանքի աջակցության: Վորքան ավելի մեծ են մեքենայի արտադրողական գործունեության չափերը գործիքի արտադրողական գործունեության համեմատությամբ, այնքան ավելի մեծ են նրա անհատույց, ծառայության չափերը՝ գործիքի նույնպիսի ծառայության հետ համեմատած: Միայն խոշոր արդյունաբերության մեջ մարդը սովորում է հարկադրել իր անցյալ, արդեն իրայնացած աշխատանքի արդյունքին՝ գործել որ մասշտաբով, ձրիաբար, բնության ուժերի նման[2]):

[1]) Капитал I, стр. 179—180

[2]) Նույն տեղը, եջ 365—366



## ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ՆՈՐՄԱՆ

Հավելյալ արժեքը, վոր արտադրվում է արտադրության պրոցեսի ավանսավորված կապիտալի կողմից, վոր մենք կնշանակենք K, կամ K-ի ավանսավորված կապիտալ արժեքի մեծացումը հանդես է գալիս մեր առաջ իբրև ամենից առաջ արդյունքի արժեքի ավելցուկ՝ նրա արտադրության տարրերի արժեքների գումարի նկատմամբ:

K կապիտալը բաժանվում է յերկու մասի. փողային գումար c, վոր ծախսվում է արտադրության միջոցների վրա և մի այլ փողային գումար v, վոր ծախսվում է բանվորական ուժի վրա. c-ն ներկայացնում է արժեքի այն մասը, վոր փոխարկված է հաստատուն կապիտալի, v-ն արժեքի այն մասը, վոր փոխարկված է փոփոխական կապիտալի: Հետևաբար, սկզբնապես $K=c+v$ օրինակ, 500 ֆ. ստ. ավանսավորված կապիտալը հավասար է 410 ֆ. ստ. հաստատուն կապիտալի (c) +90 ֆունտ ստ. փոփոխական կապիտալի (v): Արտադրության պրոցեսի վերջում ստացվում է մի ապրանք, վորի արժեքն հավասար $(c+v)+m$, վորտեղ m-ը հավելյալ արժեքն է. օրինակ 410 ֆ. ստ.(c)+90 ֆ. ստ.(v)+90 ֆ. ստ.(m): Սկզբնական K կապիտալը դարձավ K', 500 ֆունտ ստերլինգից 590 ֆունտ ստերլինգ: Յերկուսի միջև յեղած տարբերությունն = m-ի, հավելյալ արժեքի 90 ֆ. ստ.:

Մենք գիտենք, վոր հաստատուն կապիտալի արժեքն է միայն կրկին յերևան գալիս արդյունքի մեջ: Հետևաբար, իսկապես պրոցեսի մեջ նոր արտադրված արժեքը տարբեր է արդյունքի՝ պրոցեսից ստացված ամբողջ արժեքից, այդ պատճառով այն հավասար է վոչ թե $(c+v)+m$ կամ վոչ թե $410c+90v+90m$, ինչպես թվում է առաջին հայացքից, այլ հավասար է $v+m$ կամ $90v+90m$, այսինքն՝ վոչ թե 590 ֆունտ ստ., այլ 180 ֆ. ստ.: Յեթե c-ն, հաստատուն կապիտալը, լիներ հավասար 0-ի, այլ խոսքերով յեթե գոյություն ունենային արդյունաբերության այնպիսի ճյուղեր, վորոնց մեջ կապիտալիստը կարիք չունի արտադրության վոչ մի արտադրված միջոց գործադրել, վոչ հում նյութ, վոչ օժանդակ նյութեր, վոչ աշխատանքի գործիքներ, այլ հարկ կլինի գործադրել միայն բնության տված նյութեր և բանվորական ուժ, ապա արդյունքին չեր փոխանցվի հաստատուն կապիտալի և վոչ մի բաժինը: Արդյունքի արժեքի այդ մասը, մեր օրինակի նկատմամբ 410 ֆունտ ստ., դուրս կընկներ, բայց 180 ֆունտ ստ. նոր արտադրված արժեքը, վոր իր մեջ 90 ֆ. ստ. հավելյալ արժեք է պարունակում, կպահպաներ բոլորովին նույն չափերը, ինչպես այն դեպքում, յեթե c-ն արժեքի ամենավիթխարի գումար ներկայացներ:

Մենք կունենայինք $K=0+v=v$ և K' մեծացած կապիտալ, $=0+v+m$ և հետևաբար, $K'-K$ առաջվա պես կլիներ հավասար m: Ընդհակառակը, յեթե m լիներ=0-ի, ուրիշ խոսքով՝ յեթե բանվորական ուժը, վորի արժեքը ավանսավորվում է իբրև փոփոխական կապիտալ, միայն եկվիվալենտ արտադրեր, այն ժամանակ K կլիներ $=c+v$ և K' (արդյունքի արժեքը) =

(c+v+o „այդ պատճառով եւ K = K'-ին: Կանխավճարված կապիտալը չէր ավելանա:

*Այդպես ուրեմն, ամենից առաջ մենք զրոյի յենք հավասարեցնում կապիտալի հաստատուն մասը: Այն ժամանակ ավանսավորված կապիտալ c + v վեր է ածվում v-ի, իսկ արդյունքի արժեքը (c+v) + m վեր է ածվում նոր արտադրած v+m արժեքին: Յեթե նոր արտադրված արժեքը տրված է = 180 ֆունտ ստեռլինգի, վորի մեջ մարմնավորվում է արտադրության պրոցեսի ամբողջ ընթացքում շարունակվող աշխատանքը, ապա մենք պետք է հանենք փոփոխական կապիտալի արժեքը=90 ֆունտ ստեռլինգի, վորպեսզի ստանանք հավելյալ արժեքը=90 ֆունտ ստեռլինգի, 90 ֆ. ստ. =m թիվն այստեղ արտահայտում է արտադրված հավելյալ արժեքի բացարձակ մեծությունը: Իսկ նրա հարաբերական մեծությունը, այսինքն՝ այն պրոպորցիան, վորով ավելացավ փոփոխական կապիտալը, ակներև կերպով վորոշվում է հավելյալ արժեքի հարաբերությամբ դեպի փոփոխական կապիտալը, կամ արտահայտվում է $\frac{m}{v}$ ֆորմուլայով: Հետևաբար, վերև բերված որինակի համար այն կարտահայտվի $\frac{90}{90}=100\%$-ի:* Փոփոխական կապիտալի այդ հարաբերական մեծացումը, կամ հավելյալ արժեքի հարաբերական մեծացումը յես անվանում եմ հավելյալ արժեքի նորմա:

... *Վորովհետև* փոփոխական կապիտալի արժեքը հավասար է նրա գնած բանվորական ուժի արժեքին, վորովհետև այդ բանվորական ուժի արժեքը վորոշում է բանվորական որվա անհրաժեշտ մասը, իսկ հավելյալ արժեքն իր հերթին վորոշվում է բանվորական որվա ավելորդ մասով, ապա դրանից հետեվում է հետևյալը. հավելյալ արժեքը հարաբերում է փոփոխական կապիտալին այնպես, ինչպես հավելյալ աշխատանքն հարաբերում է անհրաժեշտ աշխատանքին, կամ հավելյալ արժեքի նորման $\frac{m}{v}$ = $\frac{\text{հավելյալ աշխատանք}}{\text{անհրաժեշտ աշխատանք}}$ *Պրոպորցիայի յերկու մասերն էլ զանազան ձևերով միևնույն հարաբերությունն են արտահայտում. մի դեպքում՝ իրայնացած աշխատանքի ձևով, մյուս դեպքում՝ հոսուն աշխատանքի ձևով:*

Այդ պատճառով՝ հավելյալ արժեքի նորման բանվորական ուժի շահագործման աստիճանի ճշգրիտ արտահայտությունն է կապիտալի կողմից, կամ բանվորի շահագործման աստիճանինը—կապիտալիստի կողմից:

*Մեր յենթադրության համաձայն՝ արդյունքի արժեքն=եր 410 ֆ. ստ. c+90 ֆ. ստ. v+90 ֆ. ստ. n ավանսավորված կապիտալն=եր 500 ֆ. ստ.: Վորովհետև հավելյալ արժեքը=90-ի, իսկ ավանսավորված կապիտալն=500-ի, ապա հաշվարկման սովորական յեղանակով կստացվեր, վոր հավելյալ արժեքի նորման (վորը շփոթում են շահույթի նորմայի հետ)=18 տոկոսի. մի հարաբերություն, վորի ցած մակարդակը կհուզեր պարոն Կերի-*



*ին և այլ հարմոնիստներին: Իսկ իրականության մեջ հավելյալ արժեքի նորման հավասար է վոչ թե*

$$\frac{m}{K} \text{ կամ } \frac{m}{c+v} \text{ այլ } \frac{m}{v}, \text{ հետեվաբար վոչ թե } \frac{90}{500}, \text{ այլ } \frac{90}{90}=100\%\text{-ի},$$

*շահագործման կարծեցյալ աստիճանից ավելի քան հինգ անգամ ավելի: Թեև տվյալ դեպքում մենք չգիտենք վոչ բանվորական որվա բացարձակ մեծությունը, վո՛չ այն ժամանակաշրջանը, վորի ընթացքում շարունակվում է աշխատանքի պրոցես, (որ, շաբաթ և այլն), վոչ էլ վերջապես այն բանվորների թիվը, վորոնց միաժամանակ շարժման մեջ է դնում 90 ֆ. ստ. փոփոխական կապիտալը, այնուամենայնիվ հավելյալ արժեքի նորման $\frac{m}{v}$-ը, վորովհետեվ այն կարող է փոխարկվել $\frac{\text{հավելյալ աշխատանքը}}{\text{անհրաժեշտ աշխատանքի}}$, ճիշտ կերպով ցույց է տալիս բանվորական որվա յերկու բաղկացուցիչ մասերի միջև յեղած փոխադարձ հարաբերությունը: Այն հավասար է 100 տոկոսի: Հետևաբար, բանվորն որվա մի կեսն աշխատել է իրեն համար, իսկ մյուս կեսը կապիտալիստի համար:*

*Այսպես ուրեմն, հավելյալ արժեքի նորմայի հաշվարկման մեթոդը, կարճ ասած, հետևյալն է. մենք վերցնում ենք արդյունքի ամբողջ արժեքը և զրոյի յենք հավասարեցնում հաստատուն կապիտալ—արժեքը, վորը միայն կրկին յերևան է գալիս արդյունքի արժեքի մեջ: Արժեքի մնացած գումարը միակ արժեքն է, վոր իսկապես նորից արտադրված է ապրանքի կազմության պրոցեսում: Յեթե հավելյալ արժեքը տրված է, ապա մենք, փոփոխական կապիտալը գտնելու համար, հանում ենք այն այդ նոր արտադրված արժեքից: Իսկ յեթե տրված է փոփոխական կապիտալը, և մենք փնտրում ենք հավելյալ արժեքը, ապա մենք ընդհակառակն ենք վարվում: Յեթե տրված են թե հավելյալ արժեքը, թե՛ փոփոխական կապիտալը, ապա մնում է միայն վերջին գործողությունը կատարել, հաշվել հավելյալ արժեքի հարաբերությունը դեպի փոփոխական կապիտալը, $\frac{m}{v}$[1].*

## ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ՆՈՐՄԱՆ ՅԵՎ ՄԱՍՍԱՆ

*Այս գլխում, ինչպես և առաջ, մենք յենթադրում ենք, թե բանվորական ուժի արժեքը, հետևաբար, բանվորական որվա այն մասը, վորն անհրաժեշտ է բանվորական ուժի վերարտադրության և պահպանման համար, ներկայացնում է տվյալ, հաստատուն մի մեծություն:*

*Այդպիսի յենթադրության դեպքում՝ հավելյալ արժեքի նորմայի հետ միասին տրված է նաև նրա այն մասսան, վոր առանձին բանվորը մատակարարում է կապիտալիստին վորոշ ժամանակամիջոցի ընթացքում: Յեթե, ո-*

[1]) Капитал I. стр. 182—189

բինակ, անհրաժեշտ աշխատանքը կազմում է օրական 6 ժամ, վոր վոսկու քա-
նակությամբ արտահայտված 3 շիլլինգ կամ 1 թալեր է տալիս, ապա 1 թա-
լերը ներկայացնում է բանվորական ուժի օրական արժեքը կամ այն կապի-
տալ արժեքը, վոր ավանսավորված է բանվորական ուժի գնման համար: Վո՞ր-
քան հավելյալ արժեք կմատակարարե կապիտալիստին այդ թալերը: Այդ
բանը կախված է հավելյալ արժեքի նորմայից: Յեթե այն հավասար է 50 տո-
կոսի, ապա հավելյալ արժեքը կլինի ½ թալեր. յեթե հավելյալ արժեքի նոր-
ման=100 տոկոսի, ապա այդ 1 թալեր փոփոխական կապիտալը 1 թալերի
հավելյալ արժեքի մասսա կարտադրի, կամ բանվորը մատակարարում է օ-
րական 6 ժամվա հավելյալ արժեքի մասսա: Հետևաբար, յեթե բանվորական
ուժը տված մեծություն է ներկայացնում, ապա հավելյալ արժեքի նորման
վորոշում է այն գումարը, կամ հավելյալ արժեքի մասսան, վոր արտադրում
է առանձին բանվորը:

Բայց փոփոխական կապիտալը փողային արտահայտությունն է բոլոր
բանվորական ուժերի ընդհանուր արժեքի, վորոնք միաժամանակ գործադրբ-
վում են կապիտալիստների կողմից: Հետևաբար, ավանսավորված փոփոխա-
կան կապիտալի արժեքը հավասար է մեկ բանվորական ուժի միջին արժեքին,
բազմապատկած գործադրվող բանվորական ուժերի թվով: Այդ պատճառով՝
բանվորական ուժի տվյալ արժեքի դեպքում փոփոխական կապիտալի մե-
ծությունը ուղիղ համեմատական է միաժամանակ զբաղված բանվորների
թվին: Այդպիսով, յեթե մեկ բանվորական ուժի օրական արժեքն=1 թալե-
րի, ապա անհրաժեշտ է ավանսավորել 100 թալերի կապիտալ, 100 բանվո-
րական ուժ շահագործելու համար, և n թալեր, օրական n բանվորական
ուժ շահագործելու համար: Բայց այնուհետև, վորովհետև առանձին բան-
վորի արտադրած հավելյալ արժեքի մասսան, բանվորական ուժի տվյալ ար-
ժեքի դեպքում, վորոշվում է հավելյալ արժեքի նորմայով, այլ խոսքերով՝
բանվորի հավելյալ աշխատանքի հարաբերությամբ դեպի նրա անհրաժեշտ
աշխատանքը, ապա դրանից բղխում է հետևյալ առաջին օրենքը. փոփոխա-
կան կապիտալի արտադրած հավելյալ արժեքի մասսան հավասար է այդ ա-
վանսավորված փոփոխական կապիտալի մեծությանը, բազմապատկած հա-
վելյալ արժեքի նորմայով. կամ այն հավասար է բանվորական ուժի արժե-
քին, բազմապատկած նրա շահագործման աստիճանով, բազմապատկած միա-
ժամանակ զբաղեցրած բանվորական ուժերի թվով:

... Հավելյալ արժեքի նորմայի նվազումը չի փոխում նրա մասսան,
յեթե միևնույն ժամանակ գործադրվող փոփոխական կապիտալը, կամ զբաղ-
ված բանվորների թիվն աճում է: 100 թալերի փոփոխական կապիտալը,
վոր գործադրում է 100 բանվոր հավելյալ արժեքի 100 տոկոսի նորմայով,
արտադրում է 100 թալերի հավելյալ արժեքի մասսա: Հավելյալ արժեքի
նորման կարելի յե կրկնակի կրճատել, և այնուամենայնիվ հավելյալ արժեքի
մասսան նախկինը կմնա, յեթե միևնույն ժամանակ փոփոխական կապիտալն
ու զբաղված բանվորների թիվը կրկնապատկվի: Յեվ ընդհակառակը. յեթե



փոփոխական կապիտալը նվազում է և միաժամանակ նույն համեմատակա-
նությամբ մեծանում է հավելյալ արժեքի նորման, ապա արտադրվող հա-
վելյալ արժեքի մասսան անփոփոխ է մնում:

... Յեթե տրված է հավելյալ արժեքի նորման և բանվորական ուժի ար-
ժեքը, ապա արտադրվող հավելյալ արժեքի մասսաները ուղղակի համեմա-
տական են ավանսավորված փոփոխական կապիտալների մեծություններին:
Բայց մենք արդեն գիտենք, վոր կապիտալիստն իր կապիտալը յերկու մասի
յե բաժանում: Մի մասը նա ծախսում է արտադրության միջոցների վրա:
Այդ—նրա կապիտալի հաստատուն մասն է: Մյուս մասը նա փոխարկում է
կենդանի բանվորական ուժի: Այդ մասը կազմում է նրա փոփոխական կապի-
տալը: Արտադրության միևնույն յեղանակի հիմքի վրա, արտադրության
տարբեր ճյուղերում, կապիտալի զանազան տեսակ բաժանումներն են տեղի
ունենում նրա հաստատուն և փոփոխական բաղկացուցիչ մասերի միջև: Ար-
տադրության միևնույն ճյուղի մեջ, արտադրության պրոցեսի տեխնիկա-
կան հիմքի և հասարակական պայմանների փոփոխությանը զուգընթաց այդ
հարաբերությունը փոխվում է:

... Հետևաբար, վերևում հաստատված օրենքն այսպիսի ձև է ընդու-
նում. զանազան կապիտալների արտադրած արժեքի և հավելյալ արժեքի մաս-
սաները, բանվորական ուժի տվյալ արժեքի և շահագործման միևնույն աս-
տիճանի դեպքում, ուղղակի համեմատական են այդ կապիտալների փոփո-
խական բաղկացուցիչ մասերի մեծություններին, այսինքն՝ նրանց այն բաղ-
կացուցիչ մասերին, վորոնք կենդանի բանվորական ուժի յեն փոխարկված:

Այս օրենքն, ըստ յերևույթին, հակասում է յերևույթների արտաքին
տեսքի վրա հիմնված ամբողջ փորձին: Ամեն վոք գիտե, վոր բամբակաման
գործարանատերը, վորն ամբողջ գործադրվող կապիտալի տոկոսային հարա-
բերության տեսակետից համեմատաբար շատ հաստատուն և քիչ փոփոխա-
կան կապիտալ է գործադրում, դրանից ավելի պակաս շահույթ կամ հավել-
յալ արժեք չի ստանում, քան հացագործը, վոր շարժման մեջ է դնում համե-
մատաբար շատ փոփոխական և քիչ հաստատուն կապիտալ:

... Թեև կլասիկական տնտեսագիտությունը յերբեք չի ձևակերպել այդ
օրենքը, սակայն նա բնազդաբար կառչում է նրանից, վորովհետև այն՝ ար-
ժեքի օրենքի անհրաժեշտ հետևանքն է ներկայացնում: Նա աշխատում է
բռնի աբստրակցիայով փրկել այդ օրենքն այն հակասություններից, վորոն-
ցով ուղեկցվում է նրա հանդես գալը: Հետագայում մենք կտեսնենք, թե ինչ-
պես Ռիկարդոյի դպրոցը սայթաքեց այդ գայթակղության քարի պատճա-
ռով: Վուլգար տնտեսագիտությունը, վորն «իսկապես ել վո՛չ մի բան չսովո-
րեց», այստեղ ել, ինչպես և ամենուրեք, հակառակ յերևույթի օրենքի, ընկ-
նում է արտաքին տեսքի հետևից: Նա յենթադրում է, իբր հակադրությունն
Սպինոզային, թե «տգիտությունը բավարար հիմք է»[1]):

[1]) Капитал I, стр. 276—282

կապիտալի տվյալ մեծության դեպքում հավելյալ արժեքի նորման կարող է աճել, թեև նրա մասսան նվազում է և հակառակը: Հավելյալ արժեքի մասսան հավասար է նյա նորմային, բազմապատկած բանվորների թվով. բայց նորման յերբեք չի հաշվվում ամբողջ կապիտալի, այլ միայն փոփոխական կապիտալի, իսկապես միայն մի բանվորական օրվա վերաբերմամբ[1]):

1908 թվականին կատարվեց Ռուսաստանի ֆաբրիկաների և գործարանների հետազոտություն: Այդ հետազոտությունը, անկասկած, չափազանցացրած թվեր տվեց բանվորների աշխատավարձի մեծության մասին և փոքրացրած թվեր—արտադրության չափի և կապիտալիստների շահույթների մեծության մասին, վորովհետև մեզ մոտ բոլոր նման հետազոտությունները կատարվում են զուտ կազյոննի ճանապարհով, ըստ վորում հարց ու փորձ յեն յենթարկում միայն կապիտալիստներին, իսկ բանվորներին հարց ու փորձ անելը հարկավոր չեն համարում:

Դե՛հ, տեսնենք, թե ինչ ցույց տվեց այդ, կապիտալիստների համար ամենից ավելի շահավետ, վիճակագրությունը:

Նախնական տեղեկությունների համաձայն, վորոնք և միայն հրատարակված են մինչև այսօր, Ռուսաստանում կար ընդամենը գրեթե 20·000 ֆաբրիկա և գործարան (ճշգրիտ թիվն է—19·983. մենք փակագծերի մեջ կբերենք ճշգրիտ թվերը, իսկ տեքստում փոքր ինչ կկլորացնենք նրանք, վորպեսզի հեշտ լինի կարդալու ժամանակ գլխավոր տվյալները պատկերացնել և միտը պահել):

Ցերկսեռ բանվորների ընդհանուր թիվը 2¼ միլլիոն եր (2·253·787): Այս թվի մեջ մտել են թե՛ հանքագործները և թե՛ ակցիզով հարկադրված արտադրությունների բանվորները:

Այդ բոլոր բանվորների աշխատավարձը կազմում եր կես միլլիարդ ռուբլուց ավելի մի գումար (555,7 միլլիոն):

Մի բանվորի միջին աշխատավարձն իմանալու համար, հարկավոր է աշխատավարձի ընդհանուր գումարը բաժանել բանվորների թվի վրա: Կատարելով այդ բաժանումը, կստանանք 246 ռուբլի թիվը:

Այսպես ուրեմն, Ռուսաստանի յերկու և մի քառորդ միլիոն ֆաբրիկագործարանային բանվորները 1908 թվին ընդհանուր առմամբ, այսինքն՝ իրար վրա հաշված, վաստակում եյին ընդամենը ամսական 20-ական ռուբլի 50 կ.:

Ցեթե նկատի ունենանք, վոր այդպիսի գումարով պետք է պահվի ընտանիքը,—և այդ՝ բնակարանների և կենսամթերքների ներկա թանգության ժամանակ,—ապա այդպիսի աշխատավարձը չի կարելի աղքատիկ չանվանել:

Տեսնենք այժմ, թե ինչպիսի շահույթ ունեյին կապիտալիստները: Շահույթը վորոշելու համար պետք է հանել արտադրության ընդհանուր գումարից, այսինքն՝ բոլոր ֆաբրիկաների և գործարանների համախառն ստացած գումարից՝ կապիտալիստների բոլոր ծախքերը:

Արտադրության ընդհանուր գումարը 4 և կես միլլիարդից ավելի յե (4·651 միլլիոն ռուբլի): Կապիտալիստների բոլոր ծախքերը—4 միլլիարդ (4·082 միլլիոն) ռուբլի:

[1]) Капитал III, ч. I, стр. 176.



Նշանակում է՝ կապտալիստների շահույթը կես միլիարդ ռուբլուց ավելի յե (568,7 միլլիոն ռուբլի):

Միջին հաշվով յուրաքանչյուր գործարանին այդ շահույթից ընկնում է 297 հազար ռուբլի: Յուրաքանչյուր բանվոր կապիտալիստին տարեկան 252 ռուբլի շահույթ է բերում:

Համեմատենք այժմ բանվորների աշխատավարձը և կապիտալիստների շահույթը: Յուրաքանչյուր բանվոր միջին հաշվով (այսինքն՝ իրար վրա հաշված) ստանում է տարեկան 246 ռուբլի աշխատավարձ, իսկ կապիտալիստին տալիս է տարեկան 252 ռուբլի շահույթ:

Այստեղից հետևում է, վոր բանվորն օրվա ավելի փոքր մասն աշխատում է իրեն համար, իսկ օրվա մեծ մասը—կապիտալիստի համար: Յեթե, որինակ, ընդունենք բանվորական օրվա միջին մեծությունը 11 ժամ, ապա դուրս կգա, վոր բանվորը վարձ է ստանում ընդամենը միայն 5 և կես ժամի համար, և մինչև իսկ մի փոքր ավելի պակաս, քան 5 և կես ժամը: Իսկ մնացած 5 և կես ժամը բանվորն աշխատում է ձրի, չստանալով վոչ մի վարձ, և բանվորի ամբողջ մշակածն այդ կես օրվա ընթացքում կազմում է կապիտալիստների շահույթը[1]):

## ԲԱՑԱՐՁԱԿ ՅԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔ

Մենք յենթադրում ենք, թե բացի այդպիսի անհրաժեշտ բանվորական ժամանակից բանվորը կարող է աշխատել 2, 3, 4, 6 ժամ և այլն: Այդ յերկարացման չափերից է կախված հավելյալ արժեքի նորման և բանվորական օրվա մեծությունը: Յեթե, այդպիսով, անհրաժեշտ բանվորական ժամանակն հաստատուն է հանդիսանում, ապա ամբողջական բանվորական օրը փոփոխական մեծություն է ներկայացնում: Յենթադրենք այժմ, թե մեզ տրված է ինչպես բանվորական օրվա ընդհանուր տևողությունը, այնպես նաև նրա բաժանումն անհրաժեշտ և հավելյալ աշխատանքների:

Թող ac գիծը




ներկայացնի տասներկու ժամվա բանվորական օրը, ab կտորը — տասը ժամ անհրաժեշտ աշխատանք, bc կտորը — յերկու ժամ հավելյալ աշխատանք: Հարց է առաջ գալիս. ինչ կերպով կարող է ավելացվել հավելյալ արժեքի արտադրությունը, ուրիշ խոսքերով, ինչ կերպով կարող է յերկարացվել հավելյալ աշխատանքը, առանց ac գիծը վորևէ կերպով ավելի յերկարացնելու կամ անկախ նրա վորևէ հետագա յերկարացումից:

[1]) Ленин—Собр. соч. т. XII, ч. I, стр. 258—260

*Չնայելով այն հանգամանքին, վոր բանվորական օրվա սահմանները, ac տրված են, bc կարող է, ըստ յերևույթին, յերկարացվել, յեթե վոչ c սահմանակետից այն կողմն ընդլայնվելու միջոցով, վորը միևնույն ժամանակ հանդիսանում է բանվորական օրվա վերջնական կետը, ապա սկզբնական b կետի տեղափոխության միջոցով հակադիր ուղղությամբ, a-ի կողմը:*

*Յենթադրենք, թե ac գծի մեջ*

*bb' հավասար է bc-ի կեսին, այսինքն՝ հավասար է մեկ բանվորական ժամի: Յեթե մենք այժմ յենթադրենք, վոր տասներկու ժամվա ac բանվորական օրվա դեպքում b-ն հետ է շարժվում մինչև b', ապա ուրեմն bc-ն ընդլայնվում և դառնում b'c, հավելյալ աշխատանքն ավելանում է կեսով չափ, 2 ժամից մինչև 3, թեև բանվորական օրն առաջվա նման մնում է տասներկու ժամվա: Բայց հավելյալ աշխատանքի այդ ընդլայնումը bc-ից մինչև b'c, 2 ժամից մինչև 3 ժամը, ըստ յերևույթին, անկարելի յե, առանց միաժամանակ անհրաժեշտ աշխատանքը կրճատելու ab-ից մինչև ab', 10-ից մինչև 9 ժամ: Տվյալ դեպքում հավելյալ աշխատանքի յերկարացմանը կհամապատասխաներ անհրաժեշտ աշխատանքի կրճատումը, կամ այն բանվորական ժամանակի մասը, վոր բանվորը մինչև այժմ փաստորեն իրեն վրա յեր գործադրում, պետք է կապիտալիստի օգտին ծախսվող բանվորական ժամանակի փոխարկվի: Այդ առթիվ փոփոխության կենթարկվեր վո՛չ թե բանվորական օրվա տևողությունը, այլ այն պրոպորցիան, վորով վերջինս բաժանվում է անհրաժեշտ և հավելյալ աշխատանքների:*

*... Մեր յենթադրությամբ բոլոր ապրանքները,—հետևաբար ուրեմն նաև բանվորական ուժը,—վաճառվում և գնվում են իրենց լրիվ արժեքով: Քանի վոր այդ յենթադրված է, բանվորական ուժի արտադրության կամ նրա արժեքի վերարտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակի պակասեցման պատճառը կարող է լինել վո՛չ թե բանվորի աշխատավարձի իջեցումը նրա բանվորական ուժի արժեքից ցած, այլ միայն հենց այդ արժեքի իրեն իջեցումը: Բանվորական օրվա տվյալ յերկարության դեպքում՝ հավելյալ աշխատանքի աճումը պետք է առաջ գա անհրաժեշտ աշխատանքի կրճատման հետևանքով, և վո՛չ թե ընդհակառակը,— վո՛չ թե անհրաժեշտ բանվորական ժամանակի կրճատում հավելյալ աշխատանքի աճման հետևանքով: Վորպեսզի մեր օրինակում անհրաժեշտ բանվորական ժամանակը պակասի $^1/_{10}$-ով, այսինքն՝ 10 ժամից հասնի 9 ժամի, հետևաբար ուրեմն հավելյալ աշխատանքն աճի 2-ից մինչև 3 ժամը, անհրաժեշտ է իսկապես բանվորական ուժի արժեքի իջեցումը $^1/_{10}$-ով:*

*Բայց բանվորական ուժի արժեքի այդպիսի իջեցումը $^1/_{10}$-ով յենթադրում է, իր հերթին, վոր գոյության միջոցների միևնույն քանակությունը· վոր առաջ արտադրվում եր 10 ժամվա ընթացքում, այժմ արտադրվում է*



*9 ժամվա ընթացքում: Բայց այդ անկարելի յե առանց աշխատանքի արտադրողական ուժը բարձրացնելու:*

... Աշխատանքի արտադրողական ուժի բարձրացում ասելով այստեղ մենք հասկանում ենք առհասարակ ամեն մի փոփոխություն աշխատանքի պրոցեսի մեջ, վոր կրճատում է տվյալ ապրանքի արտադրության համար հասարակականորեն անհրաժեշտ բանվորական ժամանակը· այդպիսով, արտադրողականության բարձրացման հետևանքով՝ աշխատանքի ավելի փոքր քանակությունն ընդունակություն է ձեռք բերում ավելի մեծ քանակությամբ սպառողական արժեքներ արտադրելու:

... Անհրաժեշտ է հեղաշրջում աշխատանքի պրոցեսի տեխնիկական և հասարակական պայմաններում, հետևաբար ուրեմն, նաև արտադրության յեղանակի իրեն մեջ, վորպեսզի բարձրանա աշխատանքի արտադրողական ուժը, վորպեսզի աշխատանքի արտադրողական ուժի բարձրացման հետևանքով իջնի բանվորական ուժի արժեքը և կրճատվի բանվորական օրվա այն մասը, վորն անհրաժեշտ է այդ արժեքի վերարտադրության համար:

Բանվորական օրվա յերկարացման միջոցով արտադրվող հավելյալ արժեքը յես անվանում եմ բացարձակ հավելյալ արժեք: *Ընդհակառակը*, այն հավելյալ արժեքը, **վոր ծագում է անհրաժեշտ** բանվորական ժամանակի կրճատման և բանվորական օրվա յերկու բաղկացուցիչ մասերի հարաբերական մեծությունների համապատասխան փոփոխության հետևանքով, յես անվանում եմ հարաբերական հավելյալ արժեք:

*Վորպեսզի բանվորական ուժի արժեքն իջնի, աշխատանքի արտադրողականության բարձրացումը պետք է ընդգրկի արդյունաբերության այն ճյուղերը, վորոնց արդյունքները վորոշում են բանվորական ուժի արժեքը, այսինքն՝ կամ արդեն պատկանում են գոյության սովորական միջոցների թվին, կամ կարող են փոխարինել վերջիններին:* Բայց ապրանքի արժեքը վորոշվում է վոչ միայն այն աշխատանքի քանակությամբ, վորն ապրանքին վերջնական ձև է հաղորդում, այլ նաև այն աշխատանքի քանակությամբ, վոր պարունակված է այդ ապրանքի արտադրության միջոցների մեջ: *Օրինակ, կոշկի արժեքը վորոշվում է վո՛չ միայն կոշկակարի աշխատանքով, այլև կաշվի, խեժի, կպրած թելի արժեքը և այլն: Հետևաբար*, բանվորական ուժի արժեքն ընկնում է նմանապես աշխատանքի արտադրողական ուժի բարձրացման և ապրանքների համապատասխան եժանացման հետևանքով արդյունաբերության այն ճյուղերում, վորոնք մատակարարում են հաստատուն կապիտալի նյութական տարրերը, այսինքն՝ աշխատանքի միջոցներն ու աշխատանքի նյութը՝ *գոյության անհրաժեշտ միջոցների պատրաստման համար: Ընդհակառակը*, արտադրողական ուժի բարձրացումն *արտադրության այնպիսի ճյուղերում, վորոնք չեն մատակարարում վո՛չ գոյության անհրաժեշտ միջոցներ, վո՛չ արտադրության միջոցներ նրանց պատրաստման համար*, բանվորական ուժի արժեքն անփոփոխ է թողնում:

Ապրանքների եժանացումն իջեցնում է, իհարկե, բանվորական ուժի

արժեքն այն չափով միայն, վորչափով այդ ապրանքը մասնակցում է բանվորական ուժի վերարտադրության մեջ: Այսպես, օրինակ, չապիկը գոյության անհրաժեշտ միջոց է, բայց շատերից մեկն է միայն: Այդ ապրանքի էժանացումը պակասեցնում է միայն բանվորի ծախքերը չապիկների վրա: Բայց գոյության անհրաժեշտ միջոցների ընդհանուր գումարը բաղկացած է զանազան ապրանքներից, արդյունաբերության հատուկ ճյուղերի ամենաբազմատեսակ արդյունքներից, և յուրաքանչյուր այդպիսի ապրանքի արժեք միշտ կազմում է բանվորական ուժի արժեքի համապատասխան մասը: Այդ վերջին արժեքը նվազում է նրա վերարտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակի հետ, վորի ընդհանուր կրճատումը հավասար է նրա կրճատումների գումարին արտադրության վերև հիշված հատուկ ճյուղերի մեջ: Մենք այստեղ քննարկում ենք այդ ընդհանուր հետևանքն այնպես, կարծես թե այն յուրաքանչյուր մասնավոր դեպքում անմիջական հետևանք և անմիջական նպատակ լիներ: Երբ առանձին կապիտալիստն աշխատանքի արտադրողական ուժի բարձրացման միջոցով էժանացնում է իր ապրանքը, օրինակ՝ չապիկները, ապա նա, գուցե, ամենևին իրեն նպատակ չի դնում համապատասխանաբար իջեցնելու բանվորական ուժի արժեքը, հետևաբար ուրեմն նաև անհրաժեշտ բանվորական ժամանակը. սակայն այնչափով միայն, վորչափով նա վերջիվերջո օժանդակում է այդ հետևանքին, նա օժանդակում է հավելյալ արժեքի ընդհանուր արժեքի բարձրացմանը: Կապիտալի ընդհանուր և անհրաժեշտ տենդենցները հարկավոր է տարբերել նրանց արտահայտման ձևից:

Այստեղ տեղը չէ քննարկել, թե հատկապես ի՛նչ ճանապարհով կապիտալիստական արտադրության իմմանենտ օրենքները դրսևորվում են կապիտալների արտաքին շարժման մեջ, կենսագործվում են իբրև մրցակցության հարկադրական օրենքներ և հասնում են առանձին կապիտալիստի գիտակցությանն իբրև նրա գործունեության շարժիչ մոտիվներ: Համենայն դեպս մի բան պարզ է. մրցակցության գիտական վերլուծությունը հնարավոր է դառնում նրանից հետո, յերբ գիտակցված է կապիտալի ներքին բնույթը միանգամայն այնպես, ինչպես վոր յերկնային մարմինների թվացող շարժումը հասկանալի յե դառնում միայն այն մարդու համար, ով վոր գիտե նրանց իսկական, բայց մեր զգայարանքներին չենթարկվող անմիջական շարժումը:

... Բայց ապրանքի իսկական արժեքը հանդիսանում է ո՛չ թե նրա անհատական, այլ նրա հասարակական արժեքը, այսինքն՝ այդ արժեքը չափվում է ո՛չ թե բանվորական ժամանակի այն քանակությամբ, վոր ապրանքի փաստորեն նստեց արտադրողին տվյալ առանձին դեպքում, այլ ապրանքի արտադրության համար հասարակականորեն անհրաժեշտ բանվորական ժամանակով: Հետևաբար, յեթե նոր մեթոդ գործադրող կապիտալիստը վաճառում է իր ապրանքը նրա հասարակական արժեքի համաձայն 1 շիլլինգով, նա այն վաճառում է նրա անհատական արժեքից 3 պենսով ավելի և այդպիսով իրացնում է 3 պ. ավելցուկ հավելյալ արժեք: Մյուս կողմից, տասներկու



ժամվա բանվորական օրն այժմ արտահայտվում է նրա համար 24 կտոր ապրանքի մեջ, փոխանակ նախկին 12-ի: Հետևաբար, մեկ բանվորական օրվա արդյունքը վաճառելու համար, այժմ նրան անհրաժեշտ է կրկնակի ավելացնել վաճառահանումը կամ շուկան իր ապրանքի համար:

... Բացառիկ բարձր արտադրողական ուժ ունեցող աշխատանքը գործում է իբրև բազմապատկված աշխատանք, այսինքն՝ հավասար ժամանակամիջոցներում ստեղծում է ավելի խոշոր մեծություն ունեցող արժեք, քան նույն տեսակի միջին հասարակական աշխատանքը: Բայց մեր կապիտալիստն այժմ, ինչպես և առաջ, միայն 5 շ. է վճարում բանվորական ուժի օրական արժեքի համար: Հետևաբար, առաջվա տասը ժամի փոխարեն բանվորին հարկավոր է միայն $7^1/_5$ ժամ այդ արժեքի վերարտադրության համար: Նրա հավելյալ աշխատանքը, այդ պատճառով, աճում է $2^4/_5$ ժամով, նրա արտադրած հավելյալ արժեքը — 1 շիլլինգից մինչև 3 շ.: Այդպիսով, արտադրության բարելավված յեղանակ գործադրող կապիտալիստը յուրացնում է բանվորական օրվա ավելի մեծ մասն իբրև հավելյալ աշխատանք, քան թե արտադրության միևնույն ճյուղի մնացած կապիտալիստները: Նա առանձին դեպքում միևնույն բանն է անում, ինչ վոր ընդհանրապես և ամբողջապես վերցրած՝ կատարում է ամբողջ կապիտալը՝ հարաբերական հավելյալ արժեքի արտադրության ժամանակ: Բայց, մյուս կողմից, այդ ավելցուկ հավելյալ արժեքն անհետանում է, հենց վոր արտադրության նոր յեղանակն ընդհանրական ծավալումն է ձեռք բերում, և դրա հետ միասին վերացվում է արտադրվող ապրանքի անհատական արժեքի և նրա հասարակական արժեքի միջև յեղած տարբերությունը: Արժեքը բանվորական ժամանակով վորոշելու հենց այդ միևնույն օրենքը, վոր իրեն զգալ է տալիս արտադրության նոր յեղանակ մտցրած կապիտալիստին՝ իբրև ապրանքն իր հասարակական արժեքից ցած վաճառելու մի անհրաժեշտություն, — այդ միևնույն օրենքը մրցակցության հարկադրական օրենքի ձևով ստիպում է մեր կապիտալիստի մրցակիցներին, իրենց մոտ էլ արտադրության նոր յեղանակ մտցնելու: Այսպես ուրեմն, այդ ամբողջ պրոցեսը այն ժամանակ միայն կդիպչի հավելյալ արժեքի ընդհանուր նորմային, յերբ աշխատանքի արտադրողական ուժի բարձրացումը կտարածվի արտադրության այնպիսի ճյուղերի վրա, և հետևաբար, կէժանացնե այնպիսի ապրանքները, վորոնք գոյության անհրաժեշտ միջոցների մեջ են մտնում և այդ պատճառով էլ կազմում են բանվորական ուժի արժեքի տարրերը:

Ապրանքների արժեքը հակառակ համեմատական է աշխատանքի արտադրողական ուժին: Այս բանը վերաբերում է նաև բանվորական ուժի արժեքին, վորովհետև այն վորոշվում է ապրանքային արժեքներով: Ընդհակառակը, հարաբերական հավելյալ արժեքը ուղղակի համեմատական է աշխատանքի արտադրողական ուժին: Աշխատանքի արտադրողական ուժի բարձրանալու հետ այն բարձրանում է, իջնելու հետ՝ ընկնում: 12 ժամվա միջին հասարակական բանվորական օրը, փողի անփոփոխ արժեքի դեպքում,

մինչ մինույն 6 ժ. արժեքն է արտադրում, ինչ հարաբերությամբ էլ արժեքի այդ գումարը բաժանվի բանվորական ուժի արժեքի էկվիվալենտի և հավելյալ արժեքի վրա: Բայց յեթե աշխատանքի արտադրողական ուժի բարձրացման հետևանքով որական կենսամիջոցների արժեքը, հետևաբար նաև բանվորական ուժի արժեքն իջնում է 5-ից մինչև 3 ժ., այն ժամանակ հավելյալ արժեքը աճում է 1-ից մինչև 3 ժ.: Բանվորական ուժի արժեքը վերարտադրելու համար առաջ անհրաժեշտ էր 10 ժամվա աշխատանք, իսկ այժմ պահանջվում է միայն 6 աշխատաժամ: Չորս ժամն ազատվեց և նրանք կարելի յե միացնել հավելյալ արժեքի բնագավառին: Այստեղից կապիտալի իմմանենտ ձգտումն ու մշտական տենդենցը՝ բարձրացնել աշխատանքի արտադրողական ուժն ապրանքներն էժանացնելու նպատակով և ապրանքների էժանացման օգնությամբ էժանացնել բանվորին իրեն:

... վորովհետև հարաբերական հավելյալ արժեքը աճում է ուղղակի համեմատական կերպով աշխատանքի արտադրողական ուժի զարգացման նկատմամբ, մինչդեռ ապրանքների արժեքն ընկնում է հակառակ հարաբերությամբ դեպի այդ վերջինը,—ուրիշ խոսքով, վորովհետև միևնույն պրոցեսը էժանացնում է ապրանքները և մեծացնում նրանց մեջ պարունակվող հավելյալ արժեքը, ապա հենց դրանով բացատրվում է այն փաստի առեղծվածային իմաստը, վոր միայն փոխանակային արժեքների արտադրության մասին հոգացող կապիտալիստը շարունակ աշխատում է իջեցնել իր ապրանքների փոխանակային արժեքը, — մի հակասություն, վորով քաղաքատնտեսության հիմնադիրներից մեկը, Կենեն, տանջում էր իր հակառակորդներին, և վորի առթիվ նրանք այնպես էլ չկարողացան նրան պատասխան տալ:

... Այսպիսով, կապիտալիստական արտադրության ժամանակ, աշխատանքի խնայողությունը, վոր ստացվում է աշխատանքի արտադրողական ուժի զարգացման հետևանքով, ամենևին նպատակ չունի միայն վորոշ քանակությամբ ապրանքների արտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակի կրճատումը: Յեթե բանվորն իր բանվորական աշխատանքի արտադրողականության բարձրացման հետևանքով սկսում է մի ժամվա ընթացքում, ասենք 10 անգամ ավելի շատ ապրանք արտադրել, քան թե առաջ, և հետևաբար, ապրանքի ամեն մի կտորի համար տասն անգամ ավելի քիչ բանվորական ժամանակ է գործադրում, ապա այդ բանն ամենևին չի խանգարում, վոր նրան այժմ էլ ստիպում են նախկին 12 ժամն աշխատել և 12 ժամում 1200 կտոր ապրանք արտադրել 120-ի փոխարեն: Նրա բանվորական օրը կարող է մինչև անգամ յերկարել, այնպես վոր նա այժմ 14 ժամվա ընթացքում կարտադրե 1400 կտոր և այլն:

... Կապիտալիստական արտադրության ժամանակ աշխատանքի արտադրողական ուժի զարգացումը նպատակ ունի կրճատել բանվորական օրվա այն մասը, վոր բանվորը գործադրում է իրեն վրա, և հատկապես, նրա համար, վորպեսզի յերկարացնի բանվորական օրվա մյուս մասը, վորի ընթացքում բանվորը ձրիապես աշխատում է կապիտալիստի համար: Թե ի՛նչ աստիճանի հասանելի յե այդ հետևանքը առանց ապրանքներն էժանացնելու,



յերևան կգա հարաբերական հավելյալ արժեքի արտադրության մեթոդների մանրամասն քննարկման ժամանակ, վորին և մենք անցնում ենք այժմ[1]):

Հավելյալ արժեքի մեծացումն հնարավոր է յերկու հիմնական յեղանակների միջոցով. բանվորական օրը յերկարացնելու միջոցով («բացարձակ հավելյալ արժեք») և անհրաժեշտ բանվորական օրը կրճատելու միջոցով («հարաբերական հավելյալ արժեք»): Վերլուծելով առաջին յեղանակը Մարքսը ծավալում է բանվոր դասակարգի կռվի մի հսկայական պատկեր բանվորական օրը կրճատելու համար, ինչպես և պետական իշխանության միջամտության՝ բանվորական օրն յերկարացնելու (XIV—XVII դարերում) և այն կրճատելու համար (XIX դարի գործարանային օրենսդրությունը): «Կապիտալի» լույս տեսնելուց հետո՝ աշխարհի բոլոր քաղաքակրթված յերկրների բանվորական շարժման պատմությունը հազարավոր ու հազարավոր նոր փաստեր է տվել, վոր նկարագրում են այդ պատկերը[2]):

Բանվորական օրվա յերկարացումը այն սահմաններից դենը, վորի շրջանակներում բանվորն ի վիճակի կլիներ արտադրելու միայն իր բանվորական ուժի արժեքի էկվիվալենտը, և այդ հավելյալ աշխատանքի յուրացումը կապիտալի կողմից,—ահա թե ինչումն է կայանում բացարձակ հավելյալ արժեքի արտադրությունը: Այդ պրոցեսը կարող է տեղի ունենալ և իսկապես տեղի յե ունենում արտադրության այնպիսի յեղանակների հիման վրա, վորոնք ստացված են պատմությունից՝ առանց կապիտալի աջակցության: Այդպիսի դեպքում միայն ձևական կերպարանափոխություն է կատարվում, կամ այլ կերպ ասած, շահագործման կապիտալիստական յեղանակը տարբերվում է նախկին յեղանակներից, ինչպես օրինակ, ստրկատիրական սիստեմից և այլն, միայն նրանով, վոր մի դեպքում հավելյալ աշխատանքը խլվում է ուղղակի հարկադրանքի միջոցով, իսկ մյուս դեպքում՝ իբրև միջնորդ ողակ հանդես է գալիս բանվորական ուժի «կամավոր» վաճառքը: Հետևաբար, բացարձակ հավելյալ արժեքի արտադրությունը յենթադրում է աշխատանքի միայն ձևական յենթարկումը կապիտալին:

Բացարձակ հավելյալ արժեքի արտադրությունը կազմում է կապիտալիստական սիստեմի ընդհանուր հիմքը և հարաբերական հավելյալ արժեքի արտադրության յելակետը: Այս վերջին արտադրության մեջ բանվորական օրն արդեն հենց սկզբից բաժանված է յերկու մասի—անհրաժեշտ աշխատանք և հավելյալ աշխատանք: Հավելյալ աշխատանքը յերկարացնելու նպատակով՝ անհրաժեշտ աշխատանքը կրճատվում է այն մեթոդների միջոցով, վորոնք թույլ են տալիս ավելի կարճ ժամանակում արտադրել աշխատավարձի էկվիվալենտը: Բացարձակ հավելյալ արժեքի արտադրությունը կապված է միայն բանվորական օրվա տևողության հետ. հարաբերական հավելյալ աշխատանքի արտադրությունը արմատից հեղափոխում է ինչպես

[1]) Капитал I, стр 288—298

[2]) Ленин, т. XX, стр. 483.

աշխատանքի տեխնիկական պրոցեսները, այնպես նաև հասարակական խըմբավորումները:

*Հետևաբար*, հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը յենթադրում է արտադրության սպեցիֆիկ կապիտալիստական յեղանակ. *վերջինս իրեն համար բնորոշ մեթոդներով, միջոցներով ու պայմաններով ինքը տարերայնորեն ծագում է ու զարգանում, միայն աշխատանքը կապիտալին ձևականորեն յենթարկման հողի վրա:*

*Դրա հետ միասին՝* աշխատանքի ձևական յենթարկումը կապիտալին տեղի յե տալիս իրական յենթարկմանը:

*... Յեթե, մի կողմից, բացարձակ հավելյալ արժեքի արտադրության համար միանգամայն բավական է աշխատանքի ձևական յենթարկումը կապիտալին, բավական է, օրինակ, վորպեսզի առաջ ինքնուրույն կերպով, ինքն իրեն համար, կամ իբրև համքարային վարպետի օգնական աշխատող արհեստավորը դառնա կապիտալիստի անմիջական վերահսկողության ներքո գտնվող վարձու բանվոր, — ապա, մյուս կողմից,* հարաբերական հավելյալ արժեքի արտադրության մեթոդները, ինչպես մենք տեսանք, միևնույն ժամանակ հանդիսանում են բացարձակ հավելյալ արժեքի արտադրության մեթոդներ: *Չէ՞ որ* բանվորական օրվա չափազանց յերկարացումը *մեր առաջ յելավ իբրև խոշոր արդյունաբերության* ամենից ավելի բնորոշ արդյունքը: *Ընդհանրապես* արտադրության սպեցիֆիկ կապիտալիստական յեղանակը դադարում է հարաբերական հավելյալ արժեքի արտադրության համար հասարակ միջոց լինելուց, յեթե այն գրավել է արտադրության ամբողջ մի ճյուղ կամ, դրանից էլ ավելի, արտադրության բոլոր վճռական ճյուղերը: *Նա այն ժամանակ դառնում է արտադրական պրոցեսի ընդհանրական, տիրապետող ձևը: Իբրև հարաբերական հավելյալ արժեքի արտադրության հատուկ մեթոդ, այն գործում է այժմ այն չափով միայն, վորչափով նախ՝ ընդգրկում է արդյունաբերության այն ճյուղերը, վորոնք մինչև այն ժամանակ միմիայն ձևականորեն եյին յենթարկված կապիտալին, հետևաբար, վոր չափով այն շարունակ ավելի ու ավելի յե տարածվում: Յերկրորդ՝ վոր չափով արդեն նրա իշխանության մեջ ընկած արդյունաբերության ճյուղերը, արտադրության մեթոդների փոփոխության շնորհիվ, անընդհատ հեղափոխականացվում են:*

Վորոշ տեսակետից բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքների միջև յեղած տարբերությունն առհասարակ պատրանքի յե վերածվում: Հարաբերական հավելյալ արժեքը բացարձակ է, վորովհետև այն պայմանավորում է բանվորական օրվա բացարձակ յերկարացումը այն բանվորական ժամանակի սահմաններից դենը, վոր անհրաժեշտ է բանվորի իրեն գոյության համար: Բացարձակ հավելյալ արժեքը հարաբերական է, վորովհետև այն պայմանավորում է աշխատանքի արտադրողականության զարգացումը, վորը թույլ է տալիս անհրաժեշտ բանվորական ժամանակը սահմանափակել բանվորական օրվա մի մասով: *Բայց յեթե ուշադրություն դարձնենք* հավելյալ արժեքի շարժման վրա, այդ յերևութական նույնությունը կանհետանա: *Քանի վոր արտադրության կապիտալիստական յեղանակը առաջ է յեկել և արտադրության ընդհանրական յեղանակ է դարձել,* բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքի միջև յեղած տարբերությունն իրեն զգալ է տալիս, յերբ խնդիրը վերաբերում է ընդհանրապես հավելյալ արժեքի նորմայի բարձրացմանը: Յենթադրելով, վոր բանվորական ուժը վճարվում է իր արժեքով, *մենք կանգնում ենք այսպիսի յերկընտրանքի առաջ. յեթե տրված է աշխատանքի արտադրողական ուժը և նրա ինտենսիվության նորմալ աստիճանը, ապա հավելյալ արժեքի նորման կարող է բարձրացվել միայն բանվորական օրվա բացարձակ յերկարացման միջոցով. մյուս կողմից՝ բանվորական օրվա տվյալ սահմաններում՝ հավելյալ արժեքի նորման կարող է բարձրացվել միայն բանվորական օրվա բաղկացուցիչ մասերի, այսինքն՝ անհրաժեշտ և հավելյալ աշխատանքի, հարաբերական մեծությունը փոփոխության յենթարկելու միջոցով, վորն, իր հերթին, յենթադրում է աշխատանքի արտադրողականության կամ ինտենսիվության փոփոխություն, քանի վոր աշխատավարձը չպետք է բանվորական ուժի արժեքից ցած ընկնի:*

*Յեթե բանվորն իր տրամադրության ներքո ունեցած ամբողջ ժամանակն ստիպված է ծախսել իրեն և իր ընտանիքի համար անհրաժեշտ գոյամիջոցների արտադրության վրա, ապա, իհարկե, նա ժամանակ չի ունենա անվարձ աշխատանք կատարելու յերրորդ անձերի օգտին: Այսպիսով, քանի աշխատանքի արտադրողականությունը վորոշ մակարդակի չի հասել, բանվորի տրամադրության տակ չկա այն ավելցուկժամանակը, առանց վորի անկարելի յե հավելյալ աշխատանքը, անկարելի յեն, հետևաբար, նաև կապիտալիստները, բայց միևնույն ժամանակ անկարելի յեն նաև ստրկատերերը, ֆեոդալական բարոնները, մի խոսքով՝ բոլոր սեփականատերերի խոշոր դասակարգ*[1]):

## ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

*Վերլուծելով հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը,* Մարքսը հետազոտում է կապիտալիզմի կողմից աշխատանքի արտադրողականության բարձրացման յերեք հիմնական պատմական ստադիաները. 1) Պարզ կոոպերացիան. 2) Աշխատանքի բաժանումն ու մանուֆակտուրան. 3) Մեքենաներն ու խոշոր արդյունաբերությունը: *Թե վորքան խորը կերպով է Մարքսն այստեղ բաց արել կապիտալիզմի զարգացման հիմնական, տիպիկ գծերը, յերևում է, ի միջի այլոց, նրանից, վոր ռուսական այսպես կոչված «տնայնագործական» արդյունաբերության հետազոտություններն ամենահարուստ նյութ են տալիս հիշված յերեք ստադիաներից առաջին յերկուսի*

[1]) Маркс—Капитал I, стр. 490—492

նկարագրման համար: Իսկ խոշոր մեքենական արդյունաբերության հեղափոխիչ ներգործությունը, վոր նկարագրել է Մարքսը 1867 թվին, նրանից հետո անցած հիսուն տարվա ընթացքում յերևան եր գալիս ամբողջ մի շարք «նոր» յերկիրների վերաբերմամբ (Ռուսաստան, Ճապոնիա և այլն)[1]:

Կապիտալիստական արտադրությունը, յեթե մենք քննարկում ենք այն առանձնացած, մի կողմ թողնելով շրջանառության պրոցեսը և մրցակցության առաջացրած ավերածությունները, չափազանց խնայողաբար է վարվում այն աշխատանքի հետ, վորն արդեն իրականացած է, մարմնացած է ապրանքների մեջ, ընդհակառակը, այն անհամեմատ ավելի մեծ չափով, քան թե արտադրության յուրաքանչյուր այլ յեղանակ, հանդիսանում է մարդկանց վատնիչ, կենդանի աշխատանքի վատնիչ, վատնիչ վոչ միայն մարմնի և արյան, այլև նյարդերի և ուղեղի: Իսկապես, միայն անհատական զարգացման հսկայական վատնումի շնորհիվ է ապահովվում և իրականացվում մարդկության զարգացումն այս պատմական դարաշրջանում, վորն անմիջականորեն նախորդում է մարդկային հասարակության գիտակցական վերակառուցմանը: Վորովհետև ամբողջ տնտեսությունը, վորի մասին այստեղ խոսվում է, բղխում է աշխատանքի հասարակական բնույթից, ապա փաստորեն աշխատանքի հենց այդ անմիջական-հասարակական բնույթն է, վոր առաջացնում է բանվորի կյանքի և առողջության վատնումը[2]:

## ա. ԿՈՈՊԵՐԱՑԻԱ.

Կապիտալիստական արտադրությունն սկսվում է փաստորեն միայն այնտեղ, վորտեղ տվյալ անհատական կապիտալը միաժամանակ զբաղմունք է տալիս բանվորների մի նշանակալից թվի, և, հետևաբար, աշխատանքի պրոցեսն ընդլայնում է իր չափերը և մատակարարում է արդյունքի քանակապես զգալի մասսաներ: Կապիտալիստական արտադրության յելակետը թե պատմականորեն, թե՛ տրամաբանորեն, կազմում է բանվորների խոշոր թվի միատեղ աշխատանքը, վորոնք միացած են միևնույն աշխատատեղում (կամ, յեթե կուզեք, աշխատանքի միևնույն ասպարեզում) միևնույն տեսակի ապրանքների արտադրության համար, միևնույն կապիտալիստի ղեկավարությամբ: Այսպես, որինակ՝ արտադրության յեղանակի հենց իրեն տեսակետից՝ մանուֆակտուրան իր զարգացման սկզբում հազիվ թե տարբերվում է համքարային արհեստավորական արդյունաբերությունից վորևե այլ բանով, բացի միաժամանակ միևնույն կապիտալի կողմից զբաղեցրած մեծ քանակությամբ բանվորներից: Համքյարային վարպետի արհեստանոցը միայն ընդարձակվում է իր չափերը:

Այդպես ուրեմն, սկզբում զուտ քանակական տարբերություն: Ինչպես մենք տեսանք, տվյալ կապիտալի կողմից արտադրվող հավելյալ արժեքի մասսան հավասար է այն հավելյալ արժեքին, վոր մատակարարում է առանձին բանվորը, բազմապատկած միաժամանակ զբաղված բոլոր բանվորների թվով: Այդ թիվն ինքն ըստինքյան ամենևին չի ազդում հավելյալ արժեքի նորմայի կամ բանվորական ուժի շահագործման աստիճանի վրա. ինչ վերաբերում է վորակական փոփոխություններին աշխատանքի պրոցեսի մեջ, ապա նրանք, ըստ յերևույթին, նշանակություն չունեն առհասարակ վորևե ապրանքային արժեք արտադրելու համար: Այդ բղխում է արժեքի բնությունից:

…Աշխատանքի այն ձևը, վորի ժամանակ շատ մարդիկ պլանաչափ և միահամուռ մասնակցում են աշխատանքի միևնույն պրոցեսում կամ աշխատանքի զանազան, բայց միմյանց հետ կապված պրոցեսներում, կոչվում է կոոպերացիա:

Ինչպես վոր հեծելազորի եսկադրոնի հարձակման ուժը կամ հետևակազորի գնդի դիմադրության ուժն եյականապես տարբեր են հարձակման և դիմադրության այն ուժերի գումարից, վոր ընդունակ են զարգացնելու առանձին հեծյալները և հետևակները, ճիշտ այնպես ել առանձին բանվորների ուժերի մեխանիկական գումարը տարբեր է այն հասարակական ուժից, վորը ծավալվում է, յերբ շատ ձեռքեր են մասնակցում միաժամանակ միևնույն անբաժան գործողության մեջ, յերբ պահանջվում է, որինակ, ծանրություն բարձրացնել, ճախարակը շուռ տալ, ճանապարհից հեռացնել արգելքները: Բոլոր այդպիսի դեպքերում համակցված աշխատանքի արդյունքը կամ ամենևին չի կարելի ձեռք բերել անհատների ջանքերով, կամ կարելի յե իրագործել միայն շատ ավելի յերկարատև ժամանակի ընթացքում, կամ թե չե՝ միայն գաճաճային մասշտաբով: Այստեղ խնդիրը վերաբերում է վոչ միայն անհատական արտադրողական ուժի բարձրացմանը կոոպերացիայի միջոցով, այլև նոր արտադրողական ուժ ստեղծելուն, վորն հենց իր եյությամբ մասսայական ուժ է:

… Կոոպերացիան, մի կողմից, թույլ է տալիս ընդլայնելու աշխատանքի տարածական վոլորտը, և այդ պատճառով՝ աշխատանքի վորոշ պրոցեսների ժամանակ նա պահանջում է արդեն հենց աշխատանքի առարկաների դասավորությունը տարածության մեջ. այդպես, որինակ, այն անհրաժեշտ է ճահիճները չորացնելու աշխատանքների, ամբարտակների կառուցման, վոռոգման վերաբերյալ աշխատանքների, ջրանցքներ, ճանապարհներ, յերկաթուղիներ անցկացնելու ժամանակ և այլն: Մյուս կողմից, կոոպերացիան թույլ է տալիս հարաբերական չափով, այսինքն՝ արտադրության մասշտաբի համեմատությամբ, տարածական տեսակետից սեղմել արտադրության ասպարեզը: Աշխատանքի տարածական վոլորտի այդ սահմանափակումը, նրա ներգործության վոլորտի միաժամանակ ընդարձակման հետ, վոր թույլ է տալիս խնայել արտադրության անարտադրողական ծախքերի (faux frais) նշանակալից մասը, առաջ է գալիս բանվորական մասսաների կենտրոնացումով, աշխատանքի զանազան պրոցեսների ձուլումով և արտադրության միջոցների կոնցենտրացիայով:

Առանձին անհատական բանվորական ուժերի հավասարամեծ գումարի

[1] Ленин—Собр. соч. т. XX, доп. стр. 483

[2] Капитал III, кн. I-ая, стр. 63—64.

*համեմատությամբ՝ համակցված բանվորական ուժը սպառողական արժեքների ավելի մեծ մասսաներ է արտադրում և այդ պատճառով կրճատում է այն բանվորական ժամանակը, որ անհրաժեշտ է որոշ օգտակար էֆեկտ ձեռք բերելու համար: Յուրաքանչյուր առանձին դեպքում աշխատանքի արտադրողական ուժի այդպիսի բարձրացումը կարող է ձեռք բերվել զանազան յեղանակներով. կամ բարձրացվում է աշխատանքի մեխանիկական ուժը, կամ տարածական տեսակետից ընդարձակվում է նրա ներգործության ոլորտը, կամ արտադրության ասպարեզը տարածական տեսակետից սեղմվում է արտադրության մասշտաբի համեմատությամբ, կամ կրիտիկական մոմենտին շարժման մեջ է դրվում աշխատանքի ավելի մեծ քանակություն կարճ ժամանակամիջոցի ընթացքում, կամ արթնացվում է առանձին անձերի մրցակցությունը և լարվում նրանց* animal spirit-*ը (կենսական եներգիան), կամ շատ մարդկանց միատեսակ գործողություններն անընդհատության և բազմակողմանիության դրոշմ են ձեռք բերում, կամ զանազան գործառնություններն սկսում են միաժամանակ կատարվել, կամ արտադրության միջոցները խնայվում են շնորհիվ նրանց միատեղ գործածության, կամ անհատական աշխատանքը միջին հասարակական աշխատանքի բնույթ է ձեռք բերում:* Բայց այդ բոլոր դեպքերում համակցված բանվորական որվա սպեցիֆիկ արտադրողական ուժը աշխատանքի հասարակական արտադրողական ուժն է, կամ հասարակական աշխատանքի արտադրողական ուժը: Այն ծագում է հենց կոոպերացիայից իրենից: Ուրիշների հետ պլանաչափ համագործակցությամբ՝ բանվորը ջնջում է անհատական սահմանները և ծավալում է իր ցեղական կարողությունները:

*... Կոոպերացվող բանվորների թիվը, կամ կոոպերացիայի մասշտաբն ամենից առաջ կախված է այն կապիտալի մեծությունից, որ առանձին կապիտալիստը կարող է ծախսել բանվորական ուժ գնելու համար, այսինքն՝ նրանից է կախված, թե յուրաքանչյուր առանձին կապիտալիստ ինչ չափերով իր տրամադրության տակ ունի շատ բանվորների գոյության միջոցներ:*

*... Արտադրության միջոցների նշանակալից մասսայի կոնցենտրացիան առանձին կապիտալիստների ձեռքում — վարձու բանվորների կոոպերացիայի նյութական պայմանն է, և կոոպերացիայի չափերը, կամ արտադրության մասշտաբը, կախված է այդ կոնցենտրացիայի աստիճանից:*

Սկզբնապես անհատական կապիտալի վորոշ մինիմալ մեծությունն անհրաժեշտ եր նրա համար, վորպեսզի միաժամանակ շահագործվող բանվորների ,հետևաբար ուրեմն, նաև նրանց արտադրած հավելյալ արժեքի մասսան, բավական լիներ շահագործողին իրեն՝ ձեռքի աշխատանքից ազատելու համար, մանր վարպետին կապիտալիստի փոխարկելու համար, նրա համար, վորպեսզի ձևականորեն կապիտալիստական հարաբերություն ստեղծվի: Այժմ այդ մինիմումը հանդիսանում է նյութական պայման՝ աշխատանքի շատ բաժան-բաժան յեղած ,միմյանցից անկախ անհատական պրոցեսներն աշխատանքի մի համակցված հասարակական պրոցեսի փոխարկելու համար:



*Նմանապես և, սկզբնապես կապիտալի տիրապետությունն աշխատանքի վրա միայն ձևական հետևանքն եր այն բանի, վոր բանվորն աշխատում է վոչ թե իրեն, այլ կապիտալիստի համար, և հետևաբար, աշխատում է կապիտալիստի հսկողության տակ:* Շատ վարձու բանվորների համագործակցության (կոոպերացիայի) զարգացմամբ կապիտալի տիրապետությունն անհրաժեշտ է դառնում հենց աշխատանքի պրոցեսի կատարման համար, դառնում է արտադրության իսկական պայմանը: *Կապիտալիստի հրամանը արտադրության դաշտում այժմ նույնքան անհրաժեշտ է դառնում, վորքան գեներալի հրամանը ճակատամարտի դաշտում:*

*Ամեն մի անմիջականորեն հասարակական կամ ընդհանրական աշխատանք ավելի մեծ կամ ավելի փոքր չափով կարիք ունի կառավարման, վորը ներդաշնակություն է հաստատում անհատական գործունեյությունների միջև և կատարում է այն ընդհանուր ֆունկցիաները, վորոնք առաջ են գալիս ամբողջ արտադրական մարմնի շարժումից, տարբերելով նրա ինքնուրույն օրգանների շարժումից: Առանձին ջութակահարն ինքն է կառավարում իրեն, որկեստրը կարիք ունի դիրիժորի: Կառավարման, հսկողության և ներդաշնակման ֆունկցիաները դառնում են կապիտալի ֆունկցիաները, հենց վոր նրան յենթարկված աշխատանքը կոոպերատիվ աշխատանք է դառնում:* Բայց կառավարման ֆունկցիան, իբրև կապիտալի սպեցիֆիկ ֆունկցիա, վորոշ բնորոշ առանձնահատկություններ է ձեռք բերում:

*Ամենից առաջ*, արտադրության կապիտալիստական պրոցեսի շարժիչ մոտիվն ու վորոշող նպատակն է հանդիսանում կապիտալի արժեքի ըստ հնարավորության ավելի մեծ ինքնաճումը, այսինքն՝ հավելյալ արժեքի ըստ հնարավորության ավելի մեծ արտադրությունը, և հետևաբար, բանվորական ուժի ըստ հնարավորության ավելի մեծ շահագործումը կապիտալիստի կողմից: Միաժամանակ զբաղված բանվորների մասսայի աճման հետ միասին աճում է նաև նրանց դիմադրությունը, հետևաբար ուրեմն, անխուսափելիորեն աճում է նաև կապիտալի ճնշումը, վորի նպատակն է ճնշել այդ դիմադրությունը: *Կապիտալիստի կառավարչությունը վո՛չ միայն հատուկ ֆունկցիա չե, վոր առաջ է գալիս աշխատանքի հասարակական պրոցեսի հենց իրեն բնությունից և մտնում է այդ վերջինի կազմի մեջ, այլ այն միևնույն ժամանակ աշխատանքի այդ հասարակական պրոցեսի շահագործման ֆունկցիան է, և իբրև այդպիսին, անհաղթահարելի հակամարտությամբ է պայմանավորված շահագործողի և նրա շահագործման հում նյութի միջև: Այնուհետև, արտադրության միջոցների չափերի աճմանը զուգընթաց, վորոնք կանգնած են վարձու բանվորի հանդեպ իբրև օտարի սեփականություն, աճում է նրանց նպատակահարմար գործադրության վերահսկողության յենթարկելու անհրաժեշտությունը: Բացի դրանից, վարձու բանվորների կոոպերացիան միայն կապիտալի գործունեյության հետևանքն է, վոր այդ բանվորներին գործադրում է միաժամանակ: Նրանց ֆունկցիաների կապակցությունը, նրանց միասնականությունն իբրև արտադրողական կոլեկտիվ մարմ-*

*նի միասնությունն, գտնվում է նրանցից դուրս, կապիտալի մեջ, վոր նրանց կապում է միմյանց հետ և պահում է միմյանց հետ: Այդ պատճառով էլ նրանց աշխատանքների կապակցությունը նրանց հանդեպ կանգնած է իդեալապես իբրև պլան, գործնականապես իբրև կապիտալիստի հեղինակություն, իբրև օտար կամքի իշխանություն, վոր նրանց գործունեությունն յենթարկում է իր նպատակներին:*

*Այսպիսով,* կապիտալիստական ղեկավարությունն ըստ իր բովանդակության յերկակի բնույթ է կրում, իրեն յենթարկված արտադրական պրոցեսի յերկակիության համապատասխան, վորը մի կողմից՝ աշխատանքի հասարակական պրոցես է, վորի նպատակն է արդյունքի պատրաստումը, մյուս կողմից՝ կապիտալ արժեքի ինքնաճման պրոցես է: Իր ձևով կապիտալիստական ղեկավարությունը բռնակալական է: Կոոպերացիայի լայն մասշտաբով զարգանալուն զուգընթաց՝ այդ բռնակալությունն էլ զարգացնում է յուրատեսակ, նրան հատուկ ձևեր: *Ինչպես մենք արդեն տեսանք, կապիտալիստն ազատվում է ձեռքի աշխատանքից, հենց վոր նրա կապիտալը հասնում է այն նվազագույն մեծությանը, վորի ժամանակ հնարավոր է դառնում կապիտալիստական արտադրությունը, այդ բառիս իսկական իմաստով: Նմանապես և առանձին բանվորների և բանվորների խմբերի վրա ունենալիք անմիջական և մշտական վերահսկողության ֆունկցիան հետագայում անցնում է վարձու աշխատավորների հատուկ կատեգորիայի ձեռքը: Ինչպես վոր զորաբանակը կարիք ունի ռազմական հրամանատարների հիերարխիայի, ճիշտ նմանապես և միևնույն կապիտալի հրամանատարության ներքո միահամուռ աշխատանքով միավորված բանվորների մասսայի համար հարկավոր են արդյունաբերական ավագ սպաներ (կառավարիչներ,* managers) *և յենթասպաներ (վարպետներ,* foremen, overlookers, contremaîtres), *վորոնք աշխատանքի պրոցեսի ժամանակ տնօրինում են կապիտալի անունից: Վերակացության աշխատանքն ամրապնդվում է իբրև նրանց բացառիկ ֆունկցիան:*

... Կապիտալիստը վո՛չ թե այն պատճառով է կապիտալիստ հանդիսանում, վոր նա կառավարում է արդյունաբերական ձեռնարկությունը, այլ ընդհակառակը, նա արդյունաբերության ղեկավար է դառնում այն պատճառով, վոր նա կապիտալիստ է: Բարձրագույն իշխանությունն արդյունաբերության մեջ դառնում է կապիտալի ատրիբուտը ճիշտ այնպես, ինչպես վոր ֆեոդալական դարաշրջանում բարձրագույն իշխանությունը ռազմական գործում և դատարանում հողատիրության ատրիբուտն էր:

... *Իբրև միմյանց հետ կոոպերացված բանվորներ, իբրև գործունեություն ծավալող մեկ օրգանիզմի անդամներ, նրանք ներկայացնում են միայն կապիտալի գոյության առանձին յեղանակները: Այդ պատճառով՝* այն արտադրողական ուժը, վոր ծավալում է բանվորն իբրև հասարակական բանվոր, կապիտալի արտադրողական ուժն է:

... *Կոոպերացիայի այն ձևերը, վորոնց տիրապետությունն աշխատանքի պրոցեսում մենք գտնում ենք մարդկային կուլտուրայի առաջին աստի-*



*ճանների ժամանակ, օրինակ, վորսորդական կյանք վարող ժողովուրդների մեջ կամ Հնդկաստանի հողագործական համայնքներում, հիմնված են, մի կողմից, արտադրության պայմանների ընդհանուր տիրապետության վրա, մյուս կողմից՝ այն հանգամանքի վրա, վոր առանձին անհատը դեռ չի կտրել իրեն՝ ցեղի կամ համայնքի հետ կապող պորտալարը, և այնքան սերտորեն է զոդված նրա հետ, ինչպես առանձին մեղուն փեթակի հետ: Թե՛ մեկը և թե՛ մյուսը տարբերում են կոոպերացիայի այս ձևերը կապիտալիստական կոոպերացիայից:* Կոոպերացիայի սպորադիկ (յեզակի դեպքերում) գործադրությունը խոշոր մասշտաբով հին աշխարհում, միջին դարերում և արդի գաղութներում հիմնված է անմիջական տիրապետության և հպատակության հարաբերությունների վրա, սովորաբար ստրկության վրա: Ընդհակառակը, կոոպերացիայի կապիտալիստական ձևն արդեն բոլորովին սկզբից յենթադրում է ազատ վարձու բանվորի գոյությունը, վոր իր բանվորական ուժը վաճառում է կապիտալին: Սակայն պատմականորեն այն ծավալվում է իբրև գյուղացիական տնտեսության և ինքնուրույն արհեստավորական արտադրության հակադրություն, անկախ այն հանգամանքից, թե այդ վերջինն արդյոք համքյարական ձևի ունի՞, թե՞ վոչ: *Այդ ձևերի վերաբերմամբ կապիտալիստական կոոպերացիան հանդես է գալիս վոչ իբրև կոոպերացիայի հատուկ պատմական ձև, այլ հենց կոոպերացիայի սկզբունքը հակադրվում է նրանց իբրև արտադրության կապիտալիստական պրոցեսի համար բնորոշ և նրա սպեցիֆիկ առանձնահատկությունը կազմող պատմական ձև:*

Ինչպես վոր աշխատանքի՝ կոոպերացիայի կողմից ծավալված՝ հասարակական արտադրողական ուժը կապիտալի արտադրողական ուժի կերպարանք է ընդունում, ճիշտ նմանապես և կոոպերացիան ինքը կանգնած է առանձին ինքնուրույն աշխատավորների կամ մանր վարպետների արտադրության պրոցեսի հանդեպ, և իբրև արտադրության կապիտալիստական պրոցեսի սպեցիֆիկ ձև: Այս է առաջին փոփոխությունը, վոր կրում է աշխատանքի իսկական պրոցեսը, յերբ այն յենթարկվում է կապիտալին: Այդ փոփոխությունը կատարվում է տարերային կերպով: Նրա նախադրյալը — նշանակալից թվով վարձու բանվորների միաժամանակ գործադրությունն աշխատանքի միևնույն պրոցեսում — կազմում է կապիտալիստական արտադրության յելակետը: Առանց այդ պայմանի կապիտալի գոյությունն իսկ անկարելի յե: *Այսպես ուրեմն,* յեթե, մի կողմից, արտադրության կապիտալիստական յեղանակը պատմականորեն անհրաժեշտ է՝ աշխատանքի պրոցեսը հասարակական պրոցեսի փոխարկելու համար, ապա, մյուս կողմից՝ աշխատանքի պրոցեսի այդ հասարակական ձևը ներկայացնում է իբրև մի մեթոդ, վոր կապիտալը գործ է ածում աշխատանքը՝ նրա արտադրողական ուժի բարձրացման միջոցով՝ ավելի ևս օգտակար կերպով շահագործելու նպատակով:

...Պարզ կոոպերացիան միշտ տիրապետող ձևն է հանդիսանում արտադրության այն ճյուղերում, վորտեղ կապիտալը գործում է լայն մասշտաբով, իսկ աշխատանքի բաժանումն ու մեքենաները դեռ նկատելի դեր չեն խաղում:

Կոոպերացիան մնում է արտադրության կապիտալիստական յեղանակի հիմնական ձևը, թեև իր պարզ կերպարանքով նա ինքը միայն մի հատուկ ձև է ներկայացնում նրա մյուս ավելի զարգացած ձևերի կողքին[1]):

## գ. ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱ

Կոոպերացիան, վոր հիմնված է աշխատանքի բաժանման վրա, իր կլասիկական ձևն է ստեղծում մանուֆակտուրայի մեջ: Իբրև արտադրության կապիտալիստական պրոցեսի բնորոշ ձևը, այն տիրապետում է մանուֆակտուրայի ժամանակաշրջանի ընթացքում, այդ բառի իսկական իմաստով, այսինքն՝ մոտավորապես XVI դարի կեսից մինչև XVIII դարի վերջին յերրորդը:

Մանուֆակտուրան ծագում է յերկու յեղանակով:

*Առաջին դեպքում մի արհեստանոցում միևնույն կապիտալիստի հրամանատարության ներքո միացվում են բանվորներ զանազան ինքնուրույն արհեստների, վորոնց սահմաններում կատարվում է արդյունքի մշակման ամբողջ պրոցեսը մինչև նրա վերջնական հասունությունը: Այդպես, որինակ, կառքն սկզբնապես մեծ թվով անկախ արհեստավորների աշխատանքների ընդհանուր արդյունք էր, ինչպիսիներն են՝ կառագործը, թամբագործը, դերձակը, փականագործը, պղնձագործը, տոկարը, պուզմենտագործը, ապակեգործը, ներկարարը, լաքարարը, վոսկեզօծողը և այլն: Կառքի մանուֆակտուրան այդ բոլոր տարբեր արհեստավորներին միացնում է մի արհեստանոցում, վորտեղ նրանք միասին կատարում են իրենց աշխատանքը: Իհարկե, կառքը չի կարելի վոսկեզօծել, նախ քան այն չինելը: Բայց յերբ միաժամանակ շատ կառքեր են արտադրում, ապա նրանց մի մասը կարող է անընդհատ վոսկեզօծման յենթարկվել, մինչդեռ մյուս մասը դեռ անցնում է արտադրության պրոցեսի ավելի վաղ փուլերը: Մենք առայժմ դեռ մնում ենք պարզ կոոպերացիայի հողի վրա, վորը պատրաստ է գտնում իր մարդկային և իրային նյութը, բայց շուտով եյական փոփոխություն է տեղի ունենում: Դերձակը, փականագործը, պղնձագործը և այլն, քանի վոր նրանք միայն կառագործությամբ են զբաղվում, հետզհետե կորցնում են ամբողջ ծավալով իրենց հին արհեստով զբաղվելու սովորությունը, իսկ դրա հետ միասին նաև ընդունակությունը: Մյուս կողմից, նրա միակողմանի գործունեությունը այդ նեղացրած վոլորտի սահմաններում այժմ ամենից ավելի նպատակահարմար ձևեր է ձեռք բերում: Սկզբնապես կառագործական մանուֆակտուրան ինքնուրույն արհեստների համակցումն էր ներկայացնում: Հետզհետե կառքերի արտադրությունը բաժանվում է զանազան մասնակի գործողությունների, վորոնցից յուրաքանչյուրը բյուրեղանում է իբրև բանվոր մասնագետի բացառիկ ֆունկցիա և վորոնց լրիվ ամբողջությունը կատարվում է այդպիսի մասնաբանվորների միության կողմից: Նմանապես և մահուդի մանուֆակտուրան և այլ մանուֆակտուրաների մի ամբողջ շարք առաջ են յեկել զանազան արհեստների համակցման միջոցով միևնույն կապիտալի կառավարչության ներքո:*

*Բայց մանուֆակտուրան առաջ է գալիս նաև հակադիր ճանապարհով: Շատ արհեստավորներ, վորոնք կատարում են միևնույն կամ միատեսակ աշխատանք, որինակ, թուղթ են շինում, տառեր կամ ասեղներ, մի կապիտալիստի կողմից միացվում են մի ընդհանուր արհեստանոցում: Այս—կոոպերացիա յե նրա ամենապարզ ձևով: Այդ արհեստավորներից ամեն մեկը (թերևս մի կամ յերկու վարպետացուներով) պատրաստում է ամբողջ ապրանքը, այսինքն՝ հաջորդական կարգով զանազան գործողություններ է կատարում, վորոնք անհրաժեշտ են նրա պատրաստման համար: Նրա աշխատանքը պահպանում է իր հին արհեստավորական բնույթը: Սակայն արտաքին հանգամանքները շուտով հարկադրում են այլ կերպ ոգտագործելու բանվորների կենտրոնացումը մի աշխատատեղում և նրանց աշխատանքների միաժամանակությունը:*

.. Մանուֆակտուրան յերկակի ճանապարհով է առաջ գալիս, կազմվում է արհեստից. մի կողմից, այն բղխում է այլատեսակ ինքնուրույն արհեստների համակցությունից, վորոնք կորցնում են իրենց ինքնուրույնությունը, միակողմանի յեն դառնում այն չափով, վորքան այդ անհրաժեշտ է, վորպեսզի նրանք միևնույն ապրանքի արտադրության պրոցեսի մեջ միմյանց լրացնող մասնակի գործառնություններ դառնան: Մյուս կողմից մանուֆակտուրան առաջ է գալիս միատեսակ արհեստավորների կոոպերացիայից, տվյալ անհատական արհեստը բաժան-բաժան է անում զանազան առանձնացած գործառնությունների, այդ վերջիններն մեկուսացնում է և այն աստիճանի ինքնուրույն դարձնում, վորքան այդ անհրաժեշտ է, վորպեսզի նրանցից ամեն մեկը կարողանա առանձին բանվորի բացառիկ ֆունկցիան դառնալ: *Այդ պատճառով, մի կողմից, մանուֆակտուրան արտադրության պրոցեսի մեջ մտցնում է աշխատանքի բաժանում և ավելի յե զարգացնում այն, մյուս կողմից, նա համակցում է այնպիսի արհեստներ, վորոնք առաջ ինքնուրույն են յեղել:* Բայց ինչպես էլ վոր լինի այս կամ այն մասնակի դեպքում նրա յելակետը, նրա վերջնական ձևը միշտ միևնույնն է. արտադրական մեխանիզմ, վորի որգանները մարդիկ են:

... *Ամենից առաջ արտադրության պրոցեսի մասնատումը նրա առանձին փուլերին՝ տվյալ դեպքում միանգամայն զուգադիպում է արհեստավորական գործունեությունը նրա զանազան մասնակի գործառնություններին վերածելուն: Բարդ լինի արդյոք թե՞ պարզ այդպիսի գործառնությունը, այն, համենայն դեպս, պահպանում է իր արհեստավորական բնույթը և, հետևաբար, կախված է յուրաքանչյուր առանձին բանվորի ուժից, ճարտարությունից, արագությունից, նրա իր գործիքը բանեցնելու հմտությունից:* Հիմքը մնում է արհեստը: Այդ նեղ տեխնիկական հիմքը բացառում է արտադրության պրոցեսի իսկական գիտական անդամատության հնարավորությունը, վորովհետև

[1]) Капитал I, стр. 298—313

*ամեն մի մասնակի պրոցես, որի միջով անցնում է արդյունքը, պետք է կատարվի իբրև մասնակի արհեստային աշխատանք: Հատկապես այն պատճառով, որ արհեստագործական արվեստը, այդպիսով, մնում է արտադրության պրոցեսի հիմքը, յուրաքանչյուր բանվոր հարմարվում է բացառապես մի մասնակի ֆունկցիա իրականացնելու, և նրա բանվորական ուժը նրա ամբողջ կյանքում այդ մասնակի ֆունկցիայի օրգանն է մնում: Վերջապես,* աշխատանքի բաժանումն արդեն ինքն ըստինքյան կոոպերացիայի առանձին տեսակն է, և նրա առավելություններից շատերը բխում են առհասարակ կոոպերացիայի ընդհանուր էությունից, և ոչ թե նրա տվյալ առանձին ձևից:

*... Բայց համակցված կոլեկտիվ աշխատավորը, որ կազմում է մանուֆակտուրայի կենդանի մեխանիզմը, բաղկացած է բացառապես այդպիսի միակողմանի մասնաբանվորներից: Այսպիսով, ինքնուրույն արհեստի համեմատությամբ այստեղ* ավելի կարճ ժամանակամիջոցի ընթացքում ավելի շատ արդյունք է արտադրվում, այսինքն՝ աշխատանքի արտադրողական ուժը բարձրանում է: Տվյալ մասնակի աշխատանքի մեթոդն ինքն էլ կատարելագործվում է *շնորհիվ այն հանգամանքի, որ այն դառնում է որոշ բանվորի ինքնուրույն, բացառիկ ֆունկցիան: Միևնույն ոչ բարդ գործառնության մշտական կրկնությունը և ուշադրության կենտրոնացումը այդ նեղ ասպարեզում՝ սովորեցնում են փորձնական յեղանակով, ուժի ամենափոքր ծախսումով ձեռք բերել փնտռելիք օգտակար հետևանքը: Իսկ որովհետև շարունակ բանվորների զանազան սերունդներ բախվում են միմյանց հետ միատեղ աշխատանքի հողի վրա միևնույն մանուֆակտուրաներում, ապա մատնանշված ճանապարհով ձեռք բերված տեխնիկական արվեստի յեղանակներն արագությամբ ամրապնդվում են, կուտակվում և հանձնվում նոր սերունդներին:*

*... Ինդուսին, ինչպես և սարդին, միայն ժառանգված, սերնդեց սերունդ կուտակված հատուկ ունակությունն է վիրտուոզություն հաղորդում: Յեվ այնուամենայնիվ մանուֆակտուրային բանվորների մեծամասնության համեմատությամբ այդպիսի ինդուս ջուլհակը շատ բարդ աշխատանք է կատարում:*

*... Սակայն աշխատանքի արտադրողականությունը կախված է ո՛չ միայն աշխատավորի վիրտուոզությունից, այլ նաև նրա գործիքների կատարելագործված լինելուց: Միևնույն տեսակի գործիքները, օրինակ՝ կտրող, ծակող, հրող, հարվածող գործիքները և այլն, գործ են ածվում աշխատանքի զանազան պրոցեսներում, և միևնույն ժամանակ աշխատանքի միևնույն պրոցեսում միևնույն գործիքը, տարբեր գործառնությունների համար է ծառայում: Բայց այն մոմենտից, յերբ աշխատանքի տվյալ պրոցեսի տարբեր գործառնություններն առանձնացան միմյանցից, ըստ որում յուրաքանչյուր մասնակի գործառնություն մասնաբանվորի ձեռքում ընդունեց ըստ հնարավորության ավելի կատարյալ, հետևաբար ուրեմն, նաև բացառիկ ձև,— այդ մոմենտից անհրաժեշտություն է առաջ գալիս փոփոխություններ կատարելու այն գործիքների մեջ, որոնք առաջ տարբեր նպատակների եյին ծառայում:*



*Ձևի փոփոխության այդ ուղղությունը պարզվում է փորձով, որը ցույց է տալիս, թե հատկապես ինչպիսի առանձին դժվարություններ է ներկայացնում գործիքների օգտագործումը նրանց չփոփոխված ձևով: Բանվորական գործիքների տարբերացումը (զանազան տեսակների բաժանումը), որի շնորհիվ միևնույն տեսակի գործիքները հաստատուն ձևեր են ընդունում, նրանց ամեն մի հատուկ գործածության համար հատուկ ձևեր, և նրանց մասնագիտացումը, որի շնորհիվ յուրաքանչյուր այդպիսի առանձնացած գործիք իր գործունակությունն յերևան է հանում միայն սպեցիֆիկ մասնաբանվորի ձեռքերում,— սրանք են մանուֆակտուրայի բնորոշ առանձնահատկությունները: Միմիայն Բիրմինհամում պատրաստվում են մինչև 500 զանազան տեսակ մուրճեր, ըստ որում ո՛չ միայն նրանցից յուրաքանչյուրը ծառայում է արտադրական հատուկ պրոցեսի համար, այլ հաճախ զանազան տեսակների տվյալ լրությունը ծառայում է միայն միևնույն պրոցեսի առանձին գործառնությունների համար: Մանուֆակտուրայի ժամանակաշրջանը պարզում է, բարելավում և բազմացնում բանող գործիքները՝ նրանք մասնաբանվորների բացառիկ առանձնացած ֆունկցիաներին հարմարեցնելու միջոցով: Հենց դրանով* այն նյութական նախադրյալներ է ստեղծում մեքենայի համար, որը ներկայացնում է բազմաթիվ հասարակ գործիքների համակցումը:

Մասնաբանվորներն ու իր գործիքը կազմում են մանուֆակտուրայի պարզ տարրերը:

*Այսպիսով, աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը ո՛չ միայն պարզում և բազմացնում է հասարակական հավաքական բանվորի որակապես տարբեր օրգանները, այլև հաստատուն մաթեմատիկական հարաբերություններ է ստեղծում այդ օրգանների քանակական չափերի միջև, այսինքն՝ բանվորների հարաբերական քանակության և բանվորական խմբերի հարաբերական մեծության միջև այդ հատուկ ֆունկցիաներից ամեն մեկի մեջ: Որակական անդամատման կողքին նա աշխատանքի հասարակական պրոցեսում քանակական նորմաներ և պրոպորցիաներ է հաստատում:*

*...Մանուֆակտուրան, որոշ դեպքերում ինքն առաջացած լինելով տարբեր արհեստների համակցումից, կարող է իր հերթին ծավալվել և զանազան մանուֆակտուրաների համակցում դառնալ: Այսպես, օրինակ, Անգլիայում ապակի շինող խոշոր ձեռնարկություններն իրենք են պատրաստում իրենց կավե հալոցները, որովհետև վերջիններիս որակից է կախված էապես՝ կհաջողվի՞ արդյոք արդյունքի ստացումը, թե ոչ: Արտադրության որոշ միջոցի մանուֆակտուրան այստեղ կապված է արդյունքի մանուֆակտուրայի հետ: Ընդհակառակը, որոշ արդյունքի մանուֆակտուրան կարող է կապակցվել այն մանուֆակտուրաների հետ, որոնց համար տվյալ արդյունքն ինքն իբրև հում նյութ է ծառայում կամ հետագայում միանում է այդ մանուֆակտուրաների արդյունքների հետ:*

*... Մանուֆակտուրայի ժամանակաշրջանը, արագությամբ իր գիտակցական սկզբունքը դարձնելով ապրանքների արտադրության համար անհրա-*

ժեշտ բանվորական ժամանակի նվազեցումը, առանձին դեպքերում ծավալում է մեքենաների գործածությունը, հատկապես մի քանի տարրական նախապատրաստական պրոցեսներում, վորոնք իրենց կատարման համար մեծ քանակությամբ մարդիկ և ուժի մեծ ծախսում են պահանջում: Այդպես, որինակ, թղթի մանուֆակտուրայի մեջ շուտով սկսեցին հատուկ աղացներ կառուցել՝ չորի կտորները գզգզելու համար, իսկ մետաղների հալման ժամանակ— մեքենական սանդեր, հանքանյութը մանրելու համար: Մեքենան իր ամենատարրական ձևով ավանդված է դեռ հռոմեյական կայսրության կողմից— իբրև ջրաղաց: Արհեստագործական ժամանակաշրջանն ևս մեծ հայտնագործություններ է թողել մեզ, ինչպես— կողմնացույց, վառոդ, տպագրություն և ավտոմատիկ (մեխանիզմով շարժման մեջ դրվող) ժամացույց: Բայց դրանից հետո յել մեքենան այնուամենայնիվ ելի շարունակում է այն յերկրորդական դերը խաղալ, վոր հատկացնում է նրան Ադամ Սմիթը աշխատանքի բաժանման կողքին: Շատ կարևոր դեր խաղաց մեքենաների հատուկենտ (սպորադիկ) գործածությունը XVII դարում, վորովհետև նա այն ժամանակվա մեծ մաթեմատիկոսներին գործնական հենակետեր և դրդիչներ տվեց՝ արդի մեխանիկայի ստեղծագործման համար:

Մանուֆակտուրայի ժամանակաշրջանի համար սպեցիֆիկ մեխանիզմ է մնում ինքը, բազմաթիվ մասնաբանվորներից կազմված, կոլեկտիվ բանվորը: Զանազան գործառնությունները, վոր փոխնիփոխ կատարում է ապրանք արտադրողը և վոր նրա աշխատանքի պրոցեսում ձուլվում, մի ամբողջություն են կազմում, պահանջում են նրանից զանազան ընդունակությունների լարումն: Մի դեպքում նա պետք է ավելի մեծ ուժ ծավալե, մյուս դեպքում— ավելի մեծ ճարտարություն, յերրորդում— ավելի մեծ ուշադրություն և այլն, բայց միևնույն անհատը հավասար չափով չունի այդ բոլոր հատկությունները: Զանազան գործառնությունների բաժանումից, առանձնացումից ու մեկուսացումից հետո՝ բանվորները բաժանվում են, դասակարգվում են և խմբավորվում իրենց գերակշիռ ընդունակությունների համապատասխան: Յեթե այդպիսով բանվորների բնածին առանձնահատկությունները այն հողն են կազմում, վորի մեջ իր արմատներն է տարածում աշխատանքի բաժանումը, ապա, մյուս կողմից, մանուֆակտուրան, քանի վոր այն արդեն մտցրած է, զարգացնում է բանվորական ուժերը, վորոնք իրենց բուն իսկ բնությամբ պիտանի յեն միայն միակողմանի սպեցիֆիկ ֆունկցիաներ կատարելու համար:

... Վորովհետև հավաքական բանվորի տարբեր ֆունկցիաները կարող են լինել ավելի պարզ և ավելի բարդ, ավելի կոպիտ և ավելի նուրբ, ապա նրա որգանները, անհատական բանվորական ուժերը, կարիք ունեն կրթության շատ տարբեր աստիճանների և այդ պատճառով էլ շատ տարբեր արժեք ունեն: Այդպիսով, մանուֆակտուրան զարգացնում է բանվորական ուժերի նվիրապետությունը (աստիճանների սիստեմը), վորին համապատասխանում է աշխատավարձերի սանդուխքը:



...Այդ պատճառով՝ մանուֆակտուրան յուրաքանչյուր արհեստի մեջ, վոր նա ընդգրկում է, ստեղծում է այսպես կոչված չսովորած բանվորների մի դասակարգ (անվարժ բանվորների, այնպիսիների, վորոնք վորևէ սպեցիֆիկ ճարտարություն չեն ձեռք բերել), վորոնց խստորեն բացառում էր արտադրության արհեստագործական կազմակերպությունը: Մինչև վիրտուոզությունը զարգացնելով միակողմանի մասնագիտությունը՝ առհասարակ աշխատանքի ընդունակության հաշվին, նա հատուկ մասնագիտության է վերածում ամեն զարգացման բացակայությունն իսկ:

... Այսպիսով, թեև աշխատանքի առանձին ճյուղերի առանձնացումը, մեկուսացումն ու զարգացումը համքյարային կազմակերպությունների կողմից նյութական նախադրյալ ծառայեցին մանուֆակտուրայի ժամանակաշրջանի համար, այնուամենայնիվ համքարային կազմակերպությունները իրենք բացառում էյին աշխատանքի մանուֆակտուրային բաժանման հնարավորությունը: Ընդհանրապես և ամբողջությամբ վերցրած՝ բանվորը սերտ աճում էր արտադրության իր միջոցների հետ նույնքան սերտ կերպով, ինչպես խխունջը կեչու հետ և հետևաբար, պակասում էր մանուֆակտուրայի առաջին նախադրյալը. արտադրության միջոցների առանձնացումը, վորոնք իբրև կապիտալ կանգնում են բանվորի հանդեպ:

Մինչդեռ աշխատանքի բաժանումն ամբողջ հասարակության մեջ— կատարվո՞ւմ է այդ բաժանումն արդյոք ապրանքային փոխանակության միջոցով, թե՞ նրանից անկախ, այդ միևնույն է—պատկանում է ամենազանազան սոցիալ-տնտեսական ֆորմացիաներին, աշխատանքի մանուֆակտուրային բաժանումն արտադրության կապիտալիստական յեղանակի միանգամայն սպեցիֆիկ ստեղծագործությունն է[1]):

## c. ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Մեծ թվով բանվորների կենտրոնացումը միևնույն կապիտալի հրամանատարության ներքո կազմում է թե՛ առհասարակ կոոպերացիայի և թե՛ մանավորապես մանուֆակտուրայի յելակետը: Իր հերթին աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը տեխնիկական անհրաժեշտություն է դարձնում գործի մեջ դրված բանվորների թվական աճումը: Այժմ բանվորների այն մինիմումը, վոր պետք է գործադրի առանձին կապիտալիստը, հրամանագրվում է աշխատանքի առկա բաժանումով: Մյուս կողմից, աշխատանքի հետագա բաժանման ոգուտները կապված են բանվորների թվի նոր ավելացման հետ, վորն իրագործելի յե միայն այն յեղանակով, վոր միանգամից ձեռնարկվում է բոլոր տարբեր արտադրական խմբերի մեծացմանը վորոշ համեմատականությամբ: Բայց կապիտալի փոփոխական բաղկացուցիչ մասի հետ միասին պետք է ավելանա նաև նրա հաստատուն մասը, վո՛չ միայն արտադրության ընդհանուր պայմանների չափերը — շենքերի, հնոցների և այլն,—այլև առանձնապես

[1]) Капитал I, стр. 313—338

*նաև հում նյութի քանակությունը, վորը և աճում է բանվորների թվից շատ ավելի արագ: Տվյալ ժամանակամիջոցի ընթացքում բանվորների տվյալ քանակության գործադրած հում նյութի մասսան ավելանում է աշխատանքի արտադրողական ուժին համեմատ, վոր ձեռք է բերվել աշխատանքի բաժանման հետևանքով: Այսպիսով*, առանձին կապիտալիստի համար անհրաժեշտ կապիտալի նվազագույն գումարի աճումը, կամ գոյության ու արտադրության հասարակական միջոցների աճող կերպով կապիտալի փոխարկումը մի որենք է, վոր ծագում է մանուֆակտուրայի հենց տեխնիկական բնույթից:

Մանուֆակտուրայի, ինչպես և հասարակ կոոպերացիայի մեջ, գործող բանվորական մարմինը կապիտալի գոյության ձևն է: *Բազմաթիվ անհատական մասնաբանվորներից կազմված հասարակական–արտադրական մեխանիզմը պատկանում է կապիտալիստին: Դրա հետևանքով՝* զանազան աշխատանքների զուգորդումից ծագող արտադրության ուժը կապիտալի արտադրողական ուժն է հանդիսանում: Մանուֆակտուրան այդ բառի իսկական իմաստով վո՛չ միայն առաջվա ինքնուրույն բանվորին յենթարկում է կապիտալից բխող իշխանությանն ու կարգապահությանը, այլ բացի դրանից, նվիրապետական սանդուղք է ստեղծում բանվորների իրենց մեջ: Մինչդեռ հասարակ կոոպերացիան առանձին մարդկանց արտադրության յեղանակն ընդհանրապես վերցրած անփոփոխ է թողնում, մանուֆակտուրան արմատապես հեղափոխում է այն և ամբողջությամբ իրեն է յենթարկում անհատական բանվորական ուժը: *Նա բանվորին հրեշ է դարձնում, արվեստական կերպով մշակելով նրա մեջ միայն մի հատուկ ընդունակություն և ճնշելով արտադրական ձիրքերի և շնորհքների ամբողջ մնացած աշխարհը: Նա ոգտագործում է բանվորին այնպես, ինչպես անասունն է ոգտագործվում Լա-Պլատայի պետություններում, վորտեղ անասունին սպանում են միայն նրա համար, վորպեսզի ստանան նրա մորթին կամ նրա ճարպը:*

*... Յեթե սկզբնապես բանվորն իր բանվորական ուժը վաճառում է կապիտալին, վորովհետև նա նյութական միջոցներ չունի ապրանք արտադրելու համար, ապա այժմ նրա անհատական բանվորական ուժն իսկ չի կարող ոգտագործվել, մինչև վոր այն վաճառված չլինի կապիտալին: Նա ընդունակ է գործելու միայն ուրիշների հետ կապված, իսկ այդ կապակցությունն իրագործվում է միայն նրա վաճառքից հետո, կապիտալիստի արհեստանոցում:*

*... Արդի մանուֆակտուրան,—յես չեմ խոսում այստեղ մեքենաների գործածության վրա հիմնված խոշոր արդյունաբերության մասին,—կամ գտնում է իր տարրերն արդեն պատրաստի ձևով, թեև ցրիվ յեկած, որինակ՝ զգեստեղենի մանուֆակտուրան այն խոշոր քաղաքներում, վորտեղ առաջ է գալիս այն, և նա հարկ է ունենում միայն հավաքելու այդ ցրիվ յեկած անդամներին, կա՛մ թե չե՝ բաժանման սկզբունքն աչքի յե ընկնում ինքնըստինքյան, պահանջելով արհեստավորական արտադրության առանձին գործառնությունները (որինակ՝ կազմարարական գործում) պարզապես հանձնել առանձին մասնաբանվորների: Այդպիսի դեպքերում մի շաբաթվա փորձ ել չի պահանջվում,*



*վորպեսզի հարկավոր պրոպորցիա գտնվի ձեռքերի այն թվի միջև, վորոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր փունկցիայի կատարման համար:*

*Աշխատանքի մանուֆակտուրային բաժանումն արհեստավորական գործունեության անդամատման, աշխատանքի գործիքների մասնագիտացման, մասնաբանվորների առաջացման, նրանց խմբավորման և համակցման միջոցով մի հավաքական որգանիզմի մեջ, վորակական անդամատումը և քանակական համեմատականություն է ստեղծում հասարակական արտադրության առանձին պրոցեսների միջև, այսինքն՝ ստեղծում է հասարակական աշխատանքի վորոշ կազմակերպություն և դրա հետ միասին զարգացնում է աշխատանքի նոր, հասարակական արտադրողական ուժը:* Իբրև արտադրության հասարակական պրոցեսի սպեցիֆիկ կապիտալիստական ձև,—իսկ այն պատմական հիմքի վրա, վորի վրա այն ծագում է, այն կարող է զարգանալ միայն կապիտալիստական ձևով,— այն միմիայն առանձին մեթոդ է՝ բանվորի հաշվին հարաբերական հավելյալ արժեք արտադրելու կամ կապիտալի ինքնաճումն ուժեղացնելու համար, վոր սովորաբար անվանում են հասարակական հարստություն «Wealth of Nations» և այլն: *Այն վո՛չ միայն զարգացնում է աշխատանքի հասարակական արտադրողական ուժը կապիտալիստի, այլ վո՛չ թե բանվորի համար, այլև զարգացնում է այն անհատական բանվորին խեղանդամելու միջոցով: Այն կապիտալի տիրապետության նոր պայմաններ է ստեղծում աշխատանքի վերաբերմամբ: Այդ պատճառով, յեթե*, մի կողմից, պատմական պրոգրես և անհրաժեշտ մոմենտ է հանդիսանում հասարակության տնտեսական զարգացման մեջ, ապա, մյուս կողմից՝ այն քաղաքակրթված և նրբացրած շահագործման գործիք է:

*... Դրա հետ միասին մանուֆակտուրան չեր կարողանում վո՛չ ընդգրկել հասարակական արտադրությունն իր ամբողջ ծավալով, վո՛չ ել կերպարանափոխել այն* հիմնականորեն: *Իբրև տնտեսական ճարտարապետություն բարձրանում եր այն քաղաքային արհեստի և գյուղական տնային արդյունաբերության լայն պատվանդանի վրա:* Նրա սեփական նեղ տեխնիկական հիմքը, զարգացման վորոշ աստիճանում, հակասության մեջ մտավ արտադրության հենց իրեն ստեղծած պահանջների հետ:

Մանուֆակտուրայի ամենակատարյալ ստեղծագործություններից մեկն արհեստանոցն եր — *հենց աշխատանքի գործիքների, հատկապես բարդ մեքենական ապարատների արտադրության համար, վորոնք այն ժամանակ արդեն գործածական եյին: «Այդպիսի արհեստանոցը,—ասում է* Ure-ը,— *ներկայացնում եր աշխատանքի բաժանման պատկերն իր բոլոր բազմաթիվ աստիճաններով: Գայլիկոնը, կտրիչը, տոկարի դազգյահը, յուրաքանչյուրն իր սեփական բանվորն ուներ, վորը նվիրապետական կարգով կապված եր մյուսների հետ այս կամ այն յեղանակով, կախված նրա արվեստի աստիճանից»: Աշխատանքի մանուֆակտուրային բաժանման այդ արդյունքը, իր հերթին, մեքենաներ եր արտադրում: Վերջիններս վերացնում են աշխատանքի արհեստագործական տիպն իբրև հասարակական արտադրության հիմնա-*

կան սկզբունք։ Դրանով, մի կողմից, վերացվում է բանվորին ցմահ մի մասնակի ֆունկցիային կապելու տեխնիկական անհրաժեշտությունը։ Մյուս կողմից, ընկնում են այն արգելքները, որ այդ սկզբունքը դեռ դնում էր կապիտալի տիրապետության առաջ[1])։

## ժ ՄԵՔԵՆԱՆԵՐՆ ՈՒ ԽՈՇՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մանուֆակտուրայի մեջ արտադրության յեղանակի հեղաշրջման յելակետն է ծառայում բանվորական ուժը, խոշոր արդյունաբերության մեջ — աշխատանքի միջոցը։ Այդ պատճառով ամենից առաջ անհրաժեշտ է հետազոտել, թե ինչ կերպով աշխատանքի միջոցը գործիքից մեքենայի յե փոխարկվում, կամ մեքենան ինչով է տարբերվում արհեստավորական գործիքից։ Բնական է, մեզ համար խնդիրն այստեղ վեր է ածվում միայն խոշոր, ընդհանուր բնորոշ գծերին, վորովհետև հասարակության պատմության դարաշրջանները, յերկրի պատմության դարաշրջանների նման, միմյանցից աբստրակտորեն խիստ սահմանազատիչ գծերով չեն բաժանվում։

Մաթեմատիկոսներն ու մեխանիկները — և այդ կրկնում են մի քանի անգլիական տնտեսագետներ —ասում են, թե գործիքը պարզ մեքենա յէ, իսկ մեքենան բարդ գործիք է։ Նրանք վո՛չ մի էյական տարբերություն չեն գտնում նրանց միջև և մինչև անգամ հասարակ մեխանիկական միջոցները, ինչպես լծակը, թեք մակարդակը, պտուտակը, սեպը և այն մեքենա յեն անվանում։ Իսկապես, յուրաքանչյուր մեքենա այդպիսի պարզ միջոցներից է կազմված, ինչպիսի յել վոր լինեն նրանց փոփոխությունները ու զուգորդությունները։ Սակայն, տնտեսական տեսակետից այդ սահմանումը, միանգամայն անպետք է, վորովհետև նրա մեջ բացակայում է պատմական տարրը։ Մյուս կողմից՝ գործիքի և մեքենայի միջև տարբերություն են ուզում գտնել նրանում, վոր գործիքի նկատմամբ իբրև շարժիչ ուժ ծառայում է մարդը, ընդհակառակը, մեքենայի շարժիչ ուժը — մարդկային ուժից տարբեր բնության ուժն է, օրինակ՝ կենդանին, ջուրը, քամին և այլն։ Բայց այն ժամանակ յեզներ լծած գութանը, վոր վերաբերում է արտադրության ամենատարբեր դարաշրջաններին, մեքենա կլիներ, իսկ Claussen-ի circular loom-ը (Կլաուսենի շրջանական ջուլհակային մեքենան), վոր շարժման մեջ է դրվում մի բանվորի ձեռքով և մի րոպեյում 96·000 հանգույց է անում, կլիներ հասարակ գործիք։ Այդ դեռ քիչ է. միևնույն ջուլհակային մեքենան կլիներ գործիք, յեթե այն շարժման մեջ է դրվում ձեռքով և մեքենա, յեթե շարժվում է շոգիով։ Վորովհետև կենդանական ուժի գործադրությունը մարդկության ամենահին հայտնագործություններից մեկն է, ապա այնպես դուրս կգար, թե մեքենական արտադրությունը նախորդել է արհեստագործական արտադրությանը։ Յերբ John Wyatt-ը 1735 թվին հայտարարեց իր մանող մեքե-

[1]) Капитал I, стр. 338—348



նայի մասին, իսկ նրա հետ միասին նաև XVIII դարու արդյունաբերական հեղափոխության մասին, նա վո՛չ մի բառով չհիշատակեց, թե այդ մեքենան շարժման մեջ է դնում էշը և վո՛չ թե մարդը, և այնուամենայնիվ այդ դերն իսկապես էշին մնաց։ Նրա ծրագիրն ասում էր. մեքենան նրա համար է, «վորպեսզի մանի առանց մատների օգնության»։

Ամեն մի կատարելագործված մեքենա կազմված է յերեք էյապես տարբեր մասերից. շարժիչ մեխանիզմից, տրանսմիսիայից (հաղորդիչ մեխանիզմից), վերջապես, գործիչ մեխանիզմից կամ իսկական բանող մեքենայից։ Շարժիչ մեխանիզմը գործում է իբրև ամբողջ մեքենայի շարժիչ ուժը։ Նա կամ ինքն է առաջացնում իր շարժիչ ուժը, ինչպես օրինակ՝ շոգեմեքենան, կալորիական մեքենան (վոր գործում է տաքացրած օդով), էլեկտրոմագնիսական մեքենան և այլն, կամ թե չէ՝ իր իմպուլսը դրսից է ստանում, բնության վորևիցե պատրաստի ուժից, ինչպես ջրանիվը՝ գահավիժվող ջրից, հողմաղացի թևը՝ քամուց և այլն։ Հաղորդիչ մեխանիզմը, վոր կազմված է թափանիվներից, գլանակներից, ատամնավոր անիվներից, շռնչանիվներից, առանցքներից, հաղորդիչ լարերից, փոկերից, ամենաբազմատեսակ միջանկյալ հարմարեցումներից ու մասերից, կանոնավորում է շարժումը, փոխում է նրա ձևը, յեթե այդ պետք է, օրինակ՝ ուղղագծից դարձնում է շրջանաձև, բաշխում և հաղորդում է այն գործիչ մեխանիզմներին։ Մեխանիզմի այդ յերկու մասերը միայն նրա համար գոյություն ունեն, վորպեսզի շարժման մեջ դնեն այն գործիչ մեխանիզմը, վորի շնորհիվ վերջինս բռնում է աշխատանքի առարկան և նպատակահարմար կերպով փոփոխում է այն։ Արդյունաբերական հեղափոխությունը XVIII դարում յելակետ է ընդունում մեքենայի հենց այդ մասը, գործիչ մեխանիզմը։ Յեվ այժմ էլ նա նորից ու նորից հեղաշրջումների յելակետ է հանդիսանում այն բոլոր դեպքերում, յերբ արհեստագործական կամ մանուֆակտուրային արտադրությունը մեքենականի յե փոխարկվում։

Յեթե մենք մոտիկից դիտենք գործիչ մեխանիզմը, կամ իսկական բանող մեքենան, ապա մենք ընդհանրապես և ամբողջությամբ առած՝ նրա մեջ կտեսնենք, թեև հաճախ շատ փոխված ձևով, միևնույն ապարատներն ու գործիքները, վորոնցով աշխատում են արհեստավորն ու մանուֆակտուրային բանվորը. բայց այդ արդեն մարդու գործիքները չեն, այլ մեխանիզմի գործիքներն են կամ մեխանիկական գործիքներ։ Մենք կտեսնենք, վոր կամ ամբողջ մեքենան ներկայացնում է հին արհեստավորական գործիքի լոկ ավելի կամ պակաս չափով փոփոխված մեխանիկական հրատարակությունը, ինչպես ջուլհակային մեքենական դազգյահի դեպքում, կամ բանող մեքենայի մարմնին կցած գործող օրգանները հին ծանոթներ են հանդիսանում, ինչպես իլիկը՝ մանող մեքենայի մոտ, ասեղները՝ գուլպայագործ մեքենայի մոտ, սղոցները՝ փայտ սղոցող մեքենայի մոտ, դանակները՝ կտրիչ մեքենայի մոտ և այլն։ Այդ գործիքների տարբերությունը բանող մեքենայի իսկական մարմնից այնքան հեռու յե տարածվում, վոր յերևան է գալիս մինչև անգամ թե՛ մեկի և թե՛ մյուսների արտադրության մեջ։ Այն է՝ այդ գործիքները մեծ մասամբ

*դեռ արտադրվում են արհեստագործական կամ մանուֆակտուրային յեղանակով և ապա ամրացվում են մեքենական յեղանակով արտադրված բանող մեքենայի մարմնին: Այդպես ուրեմն, գործիչ մեխանիզմը — այդ այնպիսի մեխանիզմ է, վոր համապատասխան շարժում ստանալով՝ իր գործիքներով կատարում է հենց այն գործողությունները, վորոնք առաջ կատարում եր բանվորը նման գործիքներով: Արդյոք այդ շարժիչ ուժը մարդուց է բխում, թե իր հերթին մեքենայից, այս բանը վոչինչ չի փոխում գործի էության մեջ: Այն բանից հետո,* յերբ գործիքը բառիս իսկական իմաստով մարդուց անցավ մեխանիզմին, մեքենան բռնում է հասարակ գործիքի տեղը: Տարբերությունը մեքենայի և գործիքի միջև հենց առաջին հայացքից աչքի յե ընկնում, թեկուզ առաջին մոտորը (շարժիչ ուժը) դեռ ելի մարդն ինքը մնար: *Աշխատանքի գործիքների քանակությունը, վորոնցով մարդը կարող է միաժամանակ գործել, սահմանափակված է արտադրության նրա գործիքների քանակությամբ, նրա մարմնի որգանների քանակությամբ:*

... *Այսպիսով, գործիքների քանակությունը, վորոնցով միաժամանակ գործում է միևնույն բանող մեքենան, հենց բոլորովին սկզբից ազատագրվում է այն որգանական սահմանափակումներից, վորոնց յենթակա յե բանվորի ձեռքի գործիքը:*

... *Մեքենան, վորից բխում է արդյունաբերական հեղափոխությունը, փոխարինում է միաժամանակ միայն մի գործիքով աշխատող բանվորին այնպիսի մեխանիզմով, վորը միանգամից գործում է միատեսակ կամ միասեռ գործիքների բազմությամբ և գործողության մեջ է դրվում մի շարժիչ ուժով, ինչպիսի ձև էլ ունենա այդ վերջինը: Այստեղ մենք մեր առաջ ունենք մեքենան, բայց դեռևս միայն իբրև մեքենական արտադրության հասարակ տարր:*

*Բանող մեքենայի չափերի մեծացումը և նրա միաժամանակ գործող գործիքների քանակությունն ավելի խոշոր շարժիչ մեխանիզմ է պահանջում, իսկ այդ մեխանիզմը կարիք ունի ավելի հզոր շարժիչ ուժի, քան թե մարդկային ուժն է, վորպեսզի հաղթահարի նրա սեփական դիմադրությունը,— մենք էլ չենք խոսում այն մասին, վոր մարդը չափազանց անկատար մի միջոց է՝ միակերպ և անընդհատ շարժում արտադրելու համար: Բանի վոր մենք յենթադրեցինք, թե մարդը գործում է արդեն միայն իբրև հասարակ շարժիչ ուժ, և թե, հետևաբար, նրա գործիքի տեղը բռնել է բանող մեքենան, ապա բնության ուժերը կարող են փոխարինել նրան նաև իբրև շարժիչ ուժ:*

... *Այն բանից հետո միայն, յերբ գործիքները մարդկային որգանիզմի գործիքներից մեխանիկական ապարատի,—գործիքներով աշխատող մեքենայի,—գործիքներ դարձան, այն ժամանակ միայն շարժիչ մեքենան էլ ինքնուրույն ձև է ստանում, վոր միանգամայն ազատ է մարդկային ուժի հետ կապված սահմանափակումներից: Այդ ժամանակվանից այն առանձին բանող մեքենան, վոր մենք քննարկում եյինք մինչև այժմ, իջեցվում է մինչև մեքենական արտադրության հասարակ տարրի աստիճանը: Մի շարժիչ մեխանիզմ*



*կարող է այժմ շարժման մեջ դնել շատ բանող մեքենաներ միաժամանակ: Միաժամանակ շարժման մեջ դրվող բանող մեքենաների քանակության ավելացումով — աճում է նաև շարժիչ մեխանիզմը, իսկ դրա հետ միասին հաղորդիչ մեխանիզմը ծավալվում և բարդ ապարատ է դառնում:*

... *Բայց մեքենաների սիստեմն այդ բառի իսկական իմաստով բռնում է առանձին ինքնուրույն մեքենայի տեղն այն դեպքում միայն, յերբ աշխատանքի առարկան անցնում է փոխադարձաբար կապակցված մասնակի պրոցեսների հաջորդական մի շարք, վորոնք կատարվում են զանազան տեսակ, բայց փոխադարձ միմյանց լրացնող բանող մեքենաների մի շղթայով: Այստեղ կրկին մեր առաջ է յելնում մանուֆակտուրայի համար բնորոշ կոոպերացիան, վորը հիմնված է աշխատանքի բաժանման վրա, բայց այժմ նա ներկայանում է արդեն մասնակի բանող մեքենաների զուգորդություն:*

... *Մեքենական արտադրությունն ամենազարգացած ձևն է ձեռք բերում բանող մեքենաների մասնատված սիստեմում, վորոնք իրենց շարժումն ստանում են հաղորդիչ մեխանիզմի միջոցով միայն մի կենտրոնական ավտոմատից: Այստեղ առանձին մեքենայի տեղը հանդես է գալիս մեխանիկական հրեշը, վորի մարմինն ամբողջ գործարանային շենքեր է բռնում, և վորի դիվական ուժը, սկզբում գրեթե քողարկված նրա հսկայական անդամների հանդիսավոր-չափակցված շարժումով, դուրս է պրծնում նրա անթիվ բանող որգանների տենդային խոլական պարով, այդ բառի իսկական իմաստով:*

Մեքենական դազգյահները, շոգեմեքենաները և այլն ավելի շուտ են հանդես յեկել, քան բանվորը, վորի բացառիկ զբաղմունքը շոգեմեքենաներ, մեքենական դազգյահներ և այլն արտադրելն է. *ճիշտ այնպես, ինչպես վոր մարդն զգեստ եր հագնում ավելի առաջ, քան հայտնվեցին դերձակները:*

... Մեքենական արտադրությունն սկզբնապես առաջացավ իրեն անհամապատասխան նյութական հիմքի վրա: Զարգացման վորոշ աստիճանում նա պետք է հեղաշրջում կատարի այդ հիմքի մեջ, վոր նա գտավ պատրաստի և ավելի ես մշակեց, պահպանելով նրա հին ձևը, և պետք է իրեն համար նոր հիմք ստեղծի, վոր համապատասխան լինի արտադրության նրա սեփական յեղանակին: *Ինչպես վոր առանձին մեքենան գաճաճային մեքենա յե մնում, քանի նա շարժման մեջ է դրվում միայն մարդու ձեռքով, ինչպես վոր մեքենաների սիստեմը չեր կարող ազատ զարգացում ձեռք բերել, քանի դեռ գործածվող շարժիչ ուժերի — կենդանիների, քամու և մինչև անգամ ջրի — փոխարեն հանդես չեկավ շոգեմեքենան, այնպես էլ խոշոր արդյունաբերության ամբողջ զարգացումը ջլատված եր մինչև այն ժամանակ, քանի արտադրության նրա սեփական յեղանակը — մեքենան ինքն իր գոյությունը պարտական եր անհատական ուժին, անհատական արվեստին, այսինքն՝ քանի նա կախված եր մկանային ուժից, աչքի ճշտությունից և ձեռքերի վիրտուոզությունից, վորոնցով մանուֆակտուրայի մասնաբանվորը կամ արհեստավորը գործում է իր գաճաճային գործիքով:*

Բայց զարգացման վորոշ աստիճանում խոշոր արդյունաբերությունը նաև

տեխնիկական հակասության մեջ է ընկնում իր արհեստագործական կամ մանուֆակտուրային հիմքի հետ: Շարժիչ մեքենաների, հաղորդիչ մեխանիզմի և բանող մեքենաների չափերի մեծացումը, բարդության և բազմակերպության ավելացումը, բանող մեքենայի բաղկացուցիչ մասերի ավելի խիստ կանոնավորությունը, վորոնք աճում են այն չափով, վորչափով բանող մեքենան կապը կտրում է իր արհեստագործական նմուշի հետ, վոր սկզբնապես ամբողջովին վորոշում եր նրա կառուցվածքը, և ձեռք է բերում ազատ ձև, վորը վորոշվում է բացառապես նրա մեխանիկական խնդրով, և շարունակ ավելի ու ավելի անխուսափելի և աճող գործադրությունն այնպիսի նյութի, վոր ավելի դժվար է մշակման յենթարկվում, որինակ՝ յերկաթը — փայտի փոխարեն,— ահա այն բնականաբար աճած խնդիրները, վորոնց լուծումն ամենուրեք հանդիպում է այնպիսի շրջանակների, վորոնք պայմանավորվում են աշխատանքների կախվածությամբ բանվորի անձից և վորոնք նույնիսկ մանուֆակտուրայի համակցված բանվորական անձնակազմը կարողացավ միայն մի փոքր լայնացնել, բայց վոչ ըստ եյության վոչնչացնել: Մանուֆակտուրան չեր կարող ստեղծել այնպիսի մեքենաներ, ինչպես որինակ՝ ժամանակակից տպագրական մամուլն է, արդի ջուլհակային շոգեմեքենան և արդի գզիչ մեքենան:

... Այսպես ուրեմն, խոշոր արդյունաբերությունը պետք է տիրապետեր արտադրության իրեն համար բնորոշ միջոցին, հենց մեքենային, պետք է մեքենաներով մեքենաներ արտադրեր: Այն ժամանակ միայն նա ստեղծեց իրեն ադեքվատ տեխնիկական հիմքը և կանգնեց իր սեփական վոտքերի վրա: Այն չափով, վորով XIX դարի առաջին տասնամյակներին աճեց մեքենական արտադրությունը, մեքենան իսկապես ել հետզհետե տիրապետեց բանող մեքենաների արտադրությանը: Սակայն միայն վերջին տասնամյակում (1867 թ. առաջ) հսկայական յերկաթուղային շինարարությունն ու օվկիանոսային նավագնացությունը կյանքի կոչեցին այն կիկլոպյան (հսկայական) մեքենաները, վորոնք գործադրվում են առաջին մոտորների կառուցման ժամանակ:

... Յեթե մենք մեքենայակառուցման մեջ գործադրվող մեքենայի մեջ դիտում ենք իսկական բանող մեքենան, ապա մենք մեր առաջ կտեսնենք կրկին արհեստավորական գործիքը, միայն կիկլոպյան չափերով: Որինակ՝ ծակիչ մեքենայի հսկայական մեխանիզմը,—այդ մի վիթխարի գայլիկոն է, վոր շարժման մեջ է դրվում շոգեմեքենայով և առանց վորի, իր հերթին, չեյին կարող արտադրվել մեծ շոգեմեքենաների և հիդրավլիկական ճնշիչների գլանները: Տոկարի մեքենական դազգյահը — տոկարի սովորական վոտքի դազգյահի կիկլոպյան վերարտադրությունն է: Հարթիչ մեքենան — յերկաթե ատաղձագործ է, վոր մշակում է յերկաթը նույն գործիքով, ինչպես վոր ատաղձագործը մշակում է փայտը. այն գործիքը, վոր Լոնդոնի նավաշինարաններում շերտ-շերտ կտրում է յերկաթը, մի հսկայական ածելի յե. այն մեքենայի գործիքը, վոր կտրում է յերկաթը, ինչպես դերձակի մկրատը



կտրում է մահուդը,—այդ մի հրեշավոր մկրատ է, իսկ շոգեմուրճը գործում է սովորական մուրճի գլխով, բայց այնպիսի ծանրություն ունի, վոր այն չեր կարող շարժել ինքը Թորը*): Որինակ՝ այդպիսի շոգեմուրճերից մեկը, վորոնք հանդիսանում են Nasmyth-ի գյուտը, կշռում է ավելի քան 6 տոնն և ուղղահայաց կերպով 7 ֆուտ բարձրությունից իջնում է 36 տոնն ծանրություն ունեցող զնդանի վրա: Նա, խաղալով, փոշի յե դարձնում գրանիտի ժայռը և վոչ պակաս ընդունակ է մի շարք թեթև հարվածներով մեխը խփելու փափուկ փայտի մեջ:

... Հանդես գալով իբրև մեքենա՝ աշխատանքի միջոցը գոյության այնպիսի նյութական ձև է ձեռք բերում, վորը պայմանավորում է մարդկային ուժի փոխարինումը բնության ուժերով և եմպիրիկական ավանդական յեղանակների փոխարինումը՝ բնագիտության գիտակցական գործադրությամբ: Մանուֆակտուրայի մեջ աշխատանքի հասարակական պրոցեսի անդամատումը զուտ սուբյեկտիվ է, ներկայացնում է պարզապես մասնաբանվորների համակցում. մեքենաների սիստեմում խոշոր արդյունաբերությունը տեր է միանգամայն օբյեկտիվ արտադրական օրգանիզմի, վոր բանվորն ստիպված է վերցնել իբրև արտադրության պատրաստի նյութական պայման: Պարզ կոոպերացիայի մեջ, և մինչև անգամ աշխատանքի բաժանման հետևանքով մասնագիտացած կոոպերացիայի մեջ, առանձնացած բանվորի դուրս մղումը կոլեկտիվ բանվորի կողմից դեռևս ելի ավելի կամ պակաս չափով պատահական է: Իսկ մեքենան, մի քանի բացառություններով, վորոնց մասին կհիշատակվի հետագայում, գործում է միայն անմիջականորեն հանրայնացված կամ միատեղ աշխատանքի ձեռքերում: Հետևաբար, աշխատանքի պրոցեսի կոոպերատիվ բնույթն այստեղ տեխնիկական անհրաժեշտություն է դառնում, վոր թելադրվում է աշխատանքի միջոցի իրեն բնությամբ[1]):

Մեքենաները նույնքան քիչ են տնտեսական կատեգորիա կազմում, վորքան և գութանը քաշող յեզները: Դրանք արտադրողական ուժեր են, վո՛չ ավելի: Իսկ արդի գործարանը, վոր հիմնված է մեքենաների գործածության վրա, արտադրության հասարակական հարաբերություն է, տնտեսական կատեգորիա[2]):

## ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

Յուրաքանչյուր աշխատանք մեքենայի մոտ պահանջում է բանվորի վաղորոք պատրաստված լինելը: Դեռ յերեխա ժամանակվանից նա ամենից ավելի հեշտ կերպով սովորում է իր սեփական շարժումները հարմարեցնել ավտոմատիկ միակերպ-անընդհատ շարժումներին: Վորչափով վոր գործարանի

*) Թորը հին գերմանների վորոտի աստվածն եր:

[1]) Капитал I, стр. 348—364.

[2]) Маркс—«Нищ. философии», стр. 124

հավաքական մեքենաներն իրենք են կազմում բազմատեսակ, միաժամանակ գործող և համակցված մեքենաների սիստեմ, այդչափով նաև կոոպերացիան, որի հիմքում ընկած է մեքենաների այդ սիստեմը, պահանջում է բանվորների այլատեսակ խմբերի բաշխումը զանազանատեսակ մեքենաների միջև: Բայց մեքենական արտադրությունը վոչնչացնում է այդ բաշխման մանուֆակտուրային ամրապնդման անհրաժշտությունը, նվաճելով միևնույն բանվորներին անփոփոխ կերպով միևնույն ֆունկցիաների համար: Վորովհետև գործարանի շարժումն ամբողջությամբ վերցրած բղխում է վո՛չ թե բանվորից, այլ մեքենայից, ապա այստեղ կարող է անձնակազմի մշտական փոփոխություն տեղի ունենալ, առանց աշխատանքի պրոցեսի ընդհատումներ առաջ բերելու:

... Թեև մեքենան այդպիսով տեխնիկորեն շուռ է տալիս աշխատանքի բաժանման հին սիստեմը, այնուամենայնիվ վերջինս շարունակում է իր գոյությունը քարշ տալ գործարանում սկզբում սովորության ուժով, իբրև մանուֆակտուրայի տրադիցիա, իսկ հետո սիստեմատիկ կերպով վերարտադրըվում և ամրապնդվում է կապիտալի կողմից է՛լ ավելի զարշելի ձևով իբրև բանվորական ուժի շահագործման միջոց: Մասնակի գործիքը բանեցնելու ցմահ մասնագիտությունը փոխարկվում է մասնակի մեքենային ծառայելու ցմահ մասնագիտության: Մեքենան ի չարն են գործ դնում նրա համար, վորպեսզի բանվորին իրեն վաղ մանկական հասակից մեքենայի մաս դարձնեն: Այդպիսով, վո՛չ միայն զգալի չափով պակասում են նրա իրեն վերարտադրության համար անհրաժեշտ ծախքերը, այլև միևնույն ժամանակ իր ավարտին է հասնում նաև նրա անոգնական կախումը ֆաբրիկայից ամբողջապես վերցրած, հետևաբար, կապիտալիստից: Այստեղ էլ, ինչպես և միշտ, անհրաժեշտ է տարբերություն դնել արտադրության հասարակական պրոցեսի զարգացումից բղխող արտադրողականության բարձրացման և այդ զարգացման կապիտալիստական շահագործումից բղխող արտադրողականության բարձրացման միջև:

... Մեքենական աշխատանքը ծայրահեղ սաստիկ լարելով նյարդային համակարգությունը, ճնշում է մկանների բազմակողմանի խաղը և մարդուց խլում է ազատ ֆիզիկական և հոգևոր գործունեության ամեն մի հնարավորություն: Մինչև անգամ աշխատանքի թեթևացումը տանջանքի աղբյուր է դառնում, վորովհետև մեքենան վո՛չ թե բանվորին է ազատում աշխատանքից, այլ նրա աշխատանքը՝ ամեն բովանդակությունից: Յուրաքանչյուր կապիտալիստական արտադրության, վորչափով վոր այն վո՛չ միայն աշխատանքի պրոցես է, այլ միևնույն ժամանակ նաև կապիտալի արժեքի մեծացման պրոցես, ընդհանուր է այն հանգամանքը, վոր վո՛չ թե բանվորն է գործադրում աշխատանքի պայմանը, այլ ընդհակառակը, աշխատանքի պայմաններն են գործադրում բանվորին, բայց միայն մեքենայի զարգացումով այդ այլանդակ հարաբերությունը տեխնիկապես-շոշափելի ռեալականություն է ստանում: Իր ավտոմատի փոխարկվելու շնորհիվ՝ աշխատանքի միջոցը



հենց աշխատանքի պրոցեսի ժամանակ կանգնած է բանվորի հանդեպ իբրև կապիտալ, իբրև մեռյալ աշխատանք, վոր իրեն է յենթարկում կենդանի բանվորական ուժը և ծծում է նրա հյութերը:

Արտադրության պրոցեսի մտավոր ուժերի անջատումը ձեռքի աշխատանքից և նրանց փոխարկումը կապիտալի իշխանության աշխատանքի վրա, ինչպես մենք արդեն առաջ ցույց ենք տվել, իր կատարելությունն է գտնում խոշոր արդյունաբերության մեջ, վոր կառուցվում է մեքենաների հիմքի վրա:

... Գործարանային օրենսգիրքը, վորի մեջ կապիտալը մասնավոր-իրավական կարգով և ինքնիշխան կերպով, առանց իշխանությունների բաժանման, վոր ընդհանրապես այնքան թանգագին է բուրժուազիայի համար, և առանց ներկայացուցչական սիստեմի, վոր է՛լ ավելի թանգագին է նրա համար, ձևակերպում է իր ինքնակալությունը բանվորների վերաբերմամբ,—այդ օրենսգիրքը պարզապես կապիտալիստական ծաղրանկարն է աշխատանքի պրոցեսի այն հասարակական կարգավորման, վոր անհրաժեշտ է դառնում խոշոր մասշտաբով կոոպերացիայի ժամանակ և աշխատանքի միջոցների, մասնավորապես մեքենաների միատեղ գործադրության ժամանակ: Ստրուկների հսկիչի մտրակի փոխարեն հանդես է գալիս վերակացուի տուգանքների գիրքը: Բոլոր տուգանքները, բնականաբար, վեր են ածվում դրամական տուգանքների և հանուրդների աշխատավարձից, և շնորհիվ գործարանային Լիկուրգոսների օրենսդրական սրամտության, նրանց օրենքների խախտումը, թերևս, ավելի շահավետ է իրենց համար, քան թե նրանց կատարումը: Մենք այստեղ նշում ենք միայն այն նյութական պայմանները, վորոնց մեջ կատարվում է գործարանային աշխատանքը: Բոլոր զգայարանները միակերպ տառապում են արհեստականորեն բարձրացած ջերմությունից, հում նյութերի մասնիկներով աղտոտված օդից, խլացուցիչ աղմուկից և այլն, էլ չխոսելով կյանքի համար վտանգավոր վիճակի մասին նեղ դասավորված մեքենաների արանքում, վորոնք տարվա յեղանակների կանոնավորությամբ տալիս են սպանվածների և վիրավորների իրենց արդյունաբերական բյուլետենները: Արտադրության հասարակական միջոցների խնայողությունը, վոր առաջին անգամ ջերմոցային հասունություն է ձեռք բերում գործարանային սիստեմում, կապիտալի ձեռքում դառնում է սիստեմատիկ կողոպուտ աշխատանքի պրոցեսով զբաղված բանվորից այն բոլոր պայմանների, վորոնք անհրաժեշտ են կյանքի համար, այն է՝ տարածության, օդի, լույսի, ինչպես նաև այն բոլոր միջոցների, վորոնք բանվորին պաշտպանում են արտադրության պրոցեսի կյանքի համար վտանգավոր կամ հակաառողջապահական պայմաններից,—իսկ բանվորի հարմարության համար կատարած հարմարեցումների մասին հարկ էլ չկա խոսելու: Իրավացի չէ՞ արդյոք Ֆուրյեն, վոր ֆաբրիկները «մեղմացրած տաժանակրություն» է կոչում[1]):

Աշխատանքի ավելի մեծ բաժանումը հնարավորություն է տալիս մի բան—

1) Капитал I .стр. 400—407

վորին կատարելու հնգի, տասի, քսանի աշխատանք. հետևաբար, այն 5, 10, 20 անգամ մեծացնում է մրցակցությունը բանվորների միջև: Բանվորները միմյանց վերաբերյալ մրցակցություն են անում վո՛չ միայն այն յեղանակով, վոր մեկն իրեն ավելի եժան է վաճառում, քան թե մյուսը,—նրանք միմյանց հետ մրցակցության մեջ են մտնում նաև այն յեղանակով, վոր մեկը կատարում է հնգի, տասի, քսանի աշխատանքը. և աշխատանքի բաժանումը, վոր անց է կացնում և ավելի ու ավելի ուժեղացնում է կապիտալը, հարկադրում է բանվորներին միմյանց այդպիսի մրցակցություն անել:

Այնուհետև, հենց այն չափով, վորչափով մեծանում է աշխատանքի բաժանումը, աշխատանքը պարզվում է: Իր գինը կորցնում է բանվորի հատուկ հմտությունը. նա դառնում է հասարակ միակերպ արտադրողական ուժ, վորը կարիք չունի լարելու իր ֆիզիկական և մտավոր ձիրքերը: Նրա աշխատանքը դառնում է յուրաքանչյուրի համար մատչելի աշխատանք: Այդ պատճառով՝ նրան ամեն կողմից ճնշում են մրցակիցները. բացի դրանից, հիշենք, վոր քանի ավելի պարզ է աշխատանքը, քանի ավելի հեշտ է վարժությունը, հետևաբար, վորքան ավելի քիչ են նրա յուրացման համար պահանջվող արտադրության ծախքերը, այնքան ավելի ցած է ընկնում աշխատավարձը, վորովհետև այն, ամեն մի ուրիշ ապրանքի գնի նման, վորոշվում է նրա արտադրության ծախքերով:

Յեվ այսպես, այն չափով, վորչափով աշխատանքն ավելի ու ավելի քիչ բավարարություն է տալիս և ավելի ու ավելի վանող է դառնում, հենց նույն չափով էլ ուժեղանում է մրցակցությունը, իսկ աշխատավարձն ընկնում է: Բանվորն աշխատում է իր վարձի նախկին չափը նրանով պահպանել, վոր նա ավելի շատ է աշխատում,—միևնույն է՝ ավելի շատ ժամեր աշխատելով, թե ժամի ընթացքում ավելի տալով: Հետևաբար, կարիքից հարկադրված՝ նա ուժեղացնում է աշխատանքի բաժանման կործանարար ներգործությունը: Հետևանքն այս է. վորքան ավելի շատ է աշխատում նա, այնքան ավելի քիչ աշխատավարձ է ստանում այն հասարակ պատճառով, վոր նա նույն չափով մրցակցության մեջ է մտնում իր ընկերակիցների հետ, դրա համար այդ ընկերակիցներին էլ իրեն մրցակից է դարձնում, վորոնք նույնքան վատ պայմաններ յեն համաձայնում, ինչպես և ինքը, այն հասարակ պատճառով, վոր նա մրցակցություն է անում ինքն իրեն հետ — ինքն իրեն հետ իբրև բանվոր դասակարգի անդամի:

Մեքենաներն այդ նույն ներգործությունն են անում անհամեմատ ավելի մեծ չափով, վորովհետև նրանք հմուտ բանվորներին դուրս են մղում անհմուտներով, տղամարդկանց — կանանցով, հասակավորներին — յերեխաներով, վորովհետև այնտեղ, վորտեղ առաջին անգամ մտցվում են մեքենաները, նրանք մասսաներով են փողոց նետում ձեռքով աշխատող բանվորներին, իսկ այնտեղ, վորտեղ նրանք բարելավվում են, կատարելագործվում են, փոխարինվում են ավելի արտադրողական մեքենաներով, բանվորներն արձակվում են համեմատաբար ավելի փոքր խմբերով: Վերևում մենք թռուցիկ



գծերով նկարագրեցինք կապիտալիստների արդյունաբերական պատերազմը միմյանց միջև: Այդ պատերազմն այն առանձնահատկությունն ունի, վոր ճակատամարտերն այնտեղ շահվում են վո՛չ այնքան զորահավաքով, վորքան աշխատանքի բանակի ցրումով: Կապիտալիստ-զորավարները միմյանց հետ մրցում են այն բանում, թե նրանցից վորը կկարողանա արդյունաբերական զինվորների ամենամեծ քանակությունն արձակել:

Ճիշտ է, տնտեսագետները մեզ պատմում են, իբր թե մեքենաների շնորհիվ ավելորդ դարձած բանվորներն աշխատանքի համար նոր ճյուղեր են գտնում:

Նրանք չեն համարձակվում ուղղակի պնդելու, թե հենց այն բանվորները, վորոնք արձակվեցին, ապաստարան են գտնում աշխատանքի նոր ճյուղերում: Իրողությունները չափազանց բարձր են աղաղակում այդպիսի սուտ դեմ: Նրանք, իսկապես, միայն պնդում են, թե զբաղմունքների նոր յեղանակները բացվում են բանվոր դասակարգի ուրիշ բաղկացուցիչ մասերի համար, որինակ՝ յերիտասարդ բանվորական սերնդի այն մասի համար, վոր արդեն պատրաստ էր արդյունաբերության ընկնող ճյուղի մեջ մտնելու: Իհարկե, այդ մե՜ծ մխիթարություն է դուրս նետված բանվորների համար: Պարոն կապիտալիստները թարմ, շահագործման համար պիտանի, մսի և արյան պակասություն չեն ունենա. նրանք կարող են մեռելներին թողնել՝ թաղելու իրենց մեռելներին: Բայց այդ մխիթարություն է ավելի շուտ բուրժուաների իրենց, քան թե բանվորների համար: Յեթե վարձու բանվորների ամբողջ դասակարգը վոչնչացվեր մեքենաների կողմից, վորքա՜ն սարսափելի կլիներ այդ բանը կապիտալի համար, վորն առանց վարձու աշխատանքի դադարում է կապիտալ լինելուց:

Բայց յենթադրենք, թե բոլոր, մեքենաների կողմից ուղղակի աշխատանքից դուրս մղվածները և նոր սերնդի այն ամբողջ մասը, վորն արդեն հույսեր էր կապել այդ աշխատանքների հետ, նոր զբաղմունքներ կգտնի: Կարելի յե կարծել, վոր այդ աշխատանքները նույնքան բարձր կվարձատրվեն, վորքան կորցրածները: Այդ բանը կհակասեր բոլոր տնտեսական որենքներին: Մենք տեսնում ենք, թե ինչպես ժամանակակից արդյունաբերությունն այնտեղն է հասցնում, վոր ավելի բարդ, բարձր աշխատանքը միշտ փոխարինվում է պարզ, ավելի ցած վորակի աշխատանքով:

Նշանակում է, էլ ի՞նչ յեղանակով կարող է արդյունաբերության մի ճյուղից մեքենաների շնորհիվ դուրս մղված բանվորների մասսան իրեն համար ապաստան գտնել մի այլ ճյուղի մեջ, յեթե միայն այն ավելի ցած, ավելի վատ չվարձատրվի:

Իբրև բացառություն որինակ էյին բերում հենց մեքենաների արտադրությամբ զբաղված բանվորներին: Քանի վոր արդյունաբերության մեջ պահանջվում և գործադրվում է ավելի շատ մեքենա, ապա մեքենաների քանակությունը, այդ պատճառով և մեքենաների արտադրությունը, հետևաբար ուրեմն նաև մեքենաների արտադրության մեջ աշխատող բանվորների զբաղ-

մուտքները, անհրաժեշտաբար պետք է ավելանան։ Իսկ չէ՞ որ արդյունաբերության այդ ճյուղի մեջ գործադրվող բանվորները հմուտ, մինչև անգամ ուսած բանվորներ են։

1840 թվականից հետո այդ պնդումը, որ այն ժամանակ էլ միայն կիսով չափ էր ճիշտ, կորցրեց իր ամբողջ ճշմարտությունը, որովհետև մեքենաների արտադրության համար այժմ գործ են դրվում նույնքան ավելի ու ավելի բազմատեսակ մեքենաներ, որքան բամբակեղեն մանվածքի արտադրության համար, և մեքենաների արտադրության մեջ զբաղված բանվորները, արտակարգ ճարտարություն ունեցող մեքենաների համեմատությամբ, կարող են միայն ամենաանհմուտ մեքենաների դերը կատարել։

Բայց մեքենայի կողմից հեռացված տղամարդու փոխարեն գործարանը, գուցե, աշխատանք է տալիս յերեք յերեխայի և մի կնոջ։ Սակայն մի՞թե մի տղամարդու աշխատավարձը բավական չէր մի կին և յերեք յերեխա պահելու համար։ Յեվ արդյոք աշխատավարձի մինիմումը չպե՞տք է բավական լինի բանվոր դասակարգի պահպանման և բազմացման համար։ Բայց այդ դեպքում ի՞նչ են ապացուցում այդ սիրված բուրժուական ֆրազները։ Միայն մի բան, որ այժմ չորս անգամ ավելի բանվորական կյանք է գործադրվում, որպեսզի գոյության միջոցներ հայթայթվեն մեկ բանվորական ընտանիքի համար։

Ամփոփում ենք. որքան ավելի աճում է արտադրողական կապիտալը, այնքան ավելի ընդարձակվում է աշխատանքի բաժանումը և մեքենաների գործադրությունը, այնքան ավելի ուժեղանում է մրցակցությունը բանվորների միջև, այնքան ավելի կրճատվում է նրանց աշխատավարձը։

Դրա վրա պետք է ավելացնել և այն, որ բանվոր դասակարգը լրացվում է նաև հասարակության ավելի բարձր շերտերից. նրա մեջ է թափվում մանր արտադրողների և մանր ռանտյեների մասսան, որին ո՛չ մի այլ բան չի մնում, քան թե իր ձեռքերը բարձրացնել բանվորների ձեռքերի կողքին։ Այսպիսով, դեպի վեր պարզած և աշխատանք պահանջող ձեռքերի անտառն ավելի ու ավելի խիտ է դառնում, իսկ ձեռքերն իրենք՝ ավելի ու ավելի նիհար[1])։

Սակայն մեքենան գործում է ո՛չ միայն իբրև անպարտելի մրցակից, որ շարունակ պատրաստ է վարձու բանվորին «ավելորդ» դարձնել։ Կապիտալը որոտաձայն և կանխամտածված դիտավորությամբ հռչակում է նրա մասին իբրև բանվորին թշնամի ուժի մասին և նրանից օգտվում է իբրև այդպիսի ուժից։ Նա դառնում է ամենահզոր մարտական զենքը բանվորների պարբերական ըմբոստացումները, գործադուլները և այլն ճնշելու համար, որոնք ուղղված են կապիտալի ինքնակալության դեմ։ Ըստ Հասկելի՝ շոգեմեքենան հենց սկզբից «մարդկային ուժի» հակամարտիկը դարձավ և կապիտալիստներին հնարավորություն տվեց կոտրելու բանվորների աճող պահանջները, որոնք նոր ծնվող գործարանային սիստեմին ճգնաժամով էին

[1]) Маркс—«Наемный труд и капитал», стр. 66—71



սպառնում։ Կարելի յէր ամբողջ մի պատմություն գրել 1830 թվից կատարված այնպիսի գյուտերի, որոնք կյանքի կոչվեցին բացառապես իբրև կապիտալի մարտական միջոցներ՝ բանվորների ըմբոստությունների դեմ։ Ամենից առաջ մենք հիշատակում ենք selfasteing mulc-ը, որովհետև այն սկսում է ավտոմատիկ սիստեմի նոր դարաշրջանը[1])։

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՆՏԵՆՍԻՖԻԿԱՑԻԱՆ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՃՈՒՄԸ

... Ինքնըստինքյան հասկանալի յէ, որ մեքենաների զարգացման և մեքենական բանվորների հատուկ դասակարգի մեջ փորձի կուտակմանը զուգահեռ բնականաբար աճում է աշխատանքի արագությունը, ուրեմն նաև ինտենսիվությունը։ Այսպես, Անգլիայում կես դարի ընթացքում բանվորական օրվա յերկարացումն ընթանում է գործարանային աշխատանքի ինտենսիվության աճման հետ ձեռք-ձեռքի տված։ Սակայն, հասկանալի յէ, որ այնպիսի աշխատանքի ժամանակ, որը տենդոտ գործունեության անցողական պարոքսիզմի բնույթ չունի, այլ կատարվում է օրեցօր, շարունակ կրկնվող կանոնավոր միակերպությամբ, անխուսափելի կերպով գալիս է այն մոմենտը, յերբ բանվորական օրվա յերկարացումն ու աշխատանքի ինտենսիֆիկացիան փոխադարձաբար բացառում են միմյանց, այնպես որ բանվորական օրվա յերկարացումը համատեղելի յէ միայն աշխատանքի ինտենսիվության աստիճանի իջեցման հետ և, ընդհակառակը, ինտենսիվության աստիճանի բարձրացումը համատեղելի յէ միմիայն բանվորական օրվա կրճատման հետ։ Յերբ բանվոր դասակարգի հետզհետե ավելացող վրդովմունքը հարկադրեց պետությանը բռնությամբ կրճատել բանվորական ժամանակը և ամենից առաջ գործարանում բառիս իսկական իմաստով գործադրել նորմալ բանվորական օրը, այսինքն՝ այն մոմենտից, յերբ մի անգամ ընդմիշտ անկարելի դարձավ հավելյալ արժեքի արտադրության ավելացումը բանվորական օրը յերկարացնելու միջոցով, կապիտալն ամբողջ եներգիայով և լիակատար գիտակցությամբ նետվեց դեպի հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը մեքենական սիստեմի արագացրած զարգացման օգնությամբ։ Դրա հետ միասին փոփոխություն է կատարվում հարաբերական հավելյալ արժեքի բնույթի մեջ։

Հարաբերական հավելյալ արժեքի արտադրության մեթոդը, ընդհանրապես վերցրած, այն է, որ բանվորն աշխատանքի արտադրողական ուժի բարձրացման շնորհիվ հնարավորություն է ձեռք բերում նախկին չափով աշխատանքի ծախսումով նախկին ժամանակամիջոցի ընթացքում ավելի արտադրելու։ Նախկին աշխատաժամանակն ընդհանուր արդյունքին շարունակ այնպիսի արժեք է միացնում, ինչպես առաջ, թեև այդ անփոփոխ մնա-

[1]) Капитал I, стр. 415.

ցած փոխանակային արժեքն այժմ մարմնանում է փոխանակային արժեքների ավելի մեծ քանակության մեջ, այդ պատճառով էլ ապրանքի միավորի արժեքն ընկնում է: Բոլորովին այլ բան է նկատվում այն դեպքում, յերբ բանվորական օրվա հարկադրական կրճատումը, որ հզոր զարկ է տալիս արտադրողական ուժի զարգացմանն ու արտադրության պայմանների էկոնոմիզացիային, ստիպում է բանվորին ավելացնելու աշխատանքի ծախսումը ժամանակի միավորում, բարձրացնելու բանվորական ուժի լարումը, ավելի խիտ կերպով լցնելու բանվորական ժամանակի ծակոտիները (միջոցները), այսինքն՝ աշխատանքը խտացնելու մինչև այն աստիճան, որը հնարավոր է միայն կրճատման բանվորական օրվա շրջանակներում: Այդ՝ տվյալ ժամանակամիջոցի սահմաններում խտացրած աշխատանքի մեծ մասսան հաշվի յե առնվում այժմ, իբրև աշխատանքի ավելի մեծ քանակություն, քան թե նա է իրականության մեջ: Բանվորական ժամանակն իբրև «էքստենսիվ մեծություն» չափելուն զուգընթաց այժմ հանդես է գալիս նրա խտացման աստիճանի չափումը: Տասը ժամվա բանվորական օրվա ավելի ինտենսիվ ժամն այժմ բովանդակում է նույնքան կամ ավելի շատ աշխատանք, այսինքն՝ ծախսված բանվորական ուժ, քան թե տասներկու ժամյա բանվորական օրվա ավելի ծակոտկավոր ժամը[1]):

Յեթե մեքենան ամենահզոր միջոցն է հանդիսանում աշխատանքի արտադրողականությունը մեծացնելու, այսինքն՝ այն բանվորական ժամանակը կրճատելու համար, որն անհրաժեշտ է ապրանքների արտադրության համար, ապա իբրև կապիտալի ներկայացուցիչ՝ նա ամենից առաջ արդյունաբերության իր կողմից անմիջականորեն նվաճված ճյուղերում ամենահզոր միջոց է դառնում այն բանի համար, որպեսզի բանվորական օրը յերկարացվի իր բոլոր բնական սահմաններից այն կողմը: Նա ստեղծում է, մի կողմից, նոր պայմաններ, որոնք կապիտալին թույլ են տալիս լիակատար ազատություն տալ իր այդ մշտական տենդենցին. մյուս կողմից՝ ստեղծում է նոր մոտիվներ, որոնք սրում են դեպի ուրիշի աշխատանքն ունեցած նրա անհագ ծարավը:

Ամենից առաջ աշխատանքի միջոցի շարժումն ու գործունեությունն ինքնուրույն բնույթ են ձեռք բերում մեքենայի մեջ բանվորի վերաբերմամբ: Աշխատանքի միջոցն ինքն իրեն դառնում է մի արդյունաբերական perpetuum mobile (մշտաշարժ առարկա), որն անընդհատ կարտադրեր, յեթե նա որոշ բնական սահմանների չբախվեր հանձին իր օգնական-մարդկանց, նրանց մարմնի թուլության և նրանց ինքնակամության: Կապիտալը, — իսկ իբրև այդպիսին ավտոմատը, — ունի կապիտալիստի մեջ իր գիտակցությունն ու կամքը, — աշխատանքի միջոցը վոգևորված է մի ձգտումով՝ նվազագույն չափերի վերածել նրան դիմադրող, բայց առաձգական մարդկային բնության այդ հակազդեցությունը: Բայց հենց առանց այն էլ այդ հակազդեցությունը

[1]) Капитал I, стр. 388—389



թուլացած է աշխատանքի կարծեցյալ հեշտությունից մեքենայի մոտ և կանանց ու յերեխաների զիջողությամբ, հնազանդությամբ[1]):

Այսպես, մեքենաների կապիտալիստական գործադրումն ստեղծում է մի կողմից, նոր հզոր մոտիվներ բանվորական օրն անչափ յերկարացնելու համար և հեղափոխում է հենց աշխատանքի յեղանակն ու հասարակական բանվորական օրգանիզմի կարգն այն ձևով, որ կոտրում է բանվորական օրն յերկարացնելու այդ տենդենցի դեմ յեղած ամեն դիմադրություն, մյուս կողմից՝ նա արտադրում է, — մասամբ կապիտալին յենթարկելով բանվոր դասակարգի մինչև այն նրա համար անմատչելի շերտերը, մասամբ առանց աշխատանքի թողնելով մեքենաների միջոցով դուրս մղված բանվորներին, — բանվորական ավելցուկ բնակչություն, վորը հարկադրված է յենթարկվելու այն օրենքներին, վորոնք թելադրում է նրան կապիտալը: Այստեղից այն նշանավոր յերևույթը ժամանակակից արդյունաբերության պատմության մեջ, վոր մեքենան տապալում է բանվորական օրվա բոլոր բարոյական և բնական սահմանները: Այստեղից այն տնտեսական պարադոքսը (անհեթեթությունը), վոր ամենահզոր միջոցը բանվորական ժամանակի կրճատման համար՝ փոխարկվում է ամենահուսալի միջոցին այն բանի համար, վորպեսզի բանվորի և նրա ընտանիքի ամբողջ կյանքը բանվորական ժամանակի վերածվի, վոր տրամադրվում է կապիտալին նրա արժեքը մեծացնելու համար[2]):

[1]) Капитал I, стр. 381—382

[2]) Նույն տեղը, էջ 386—387

## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Հասարակական պատմական ինչպիսի՞ պայմաններում փողը կապիտալի յե փոխարկվում:

2. Վո՞րն ե բանվորական ուժ ապրանքի բնորոշ առանձնահատկությունը:

3. Վո՞րն ե հավելյալ արժեքի աղբյուրը և ինչո՞վ ե պայմանավորվում նրա մեծությունը:

4. Տվեք կապիտալի մարքս-լենինյան ձևակերպումը:

5. Վորո՞նք են կապիտալի մասերը և նրանցից յուրաքանչյուրն ի՞նչ դեր ե կատարում հավելյալ արժեքի ստեղծման գործում:

6. Վորո՞նք են հավելյալ արժեքի բարձրացման մեթոդները:

7. Թվեք արտադրության կապիտալիստական յեղանակի զարգացման պատմական ետապները և նրան բնորոշող գծերը:

8. Ինչպիսի՞ ազդեցություն ե գործում կապիտալիստական ռացիոնալիզացիան բանվոր դասակարգի վրա:

9. Ի՞նչ դեր են խաղում սոցիալ-դեմոկրատներն ու ֆաշիստները հավելյալ արժեքի մեծացման և կապիտալի հավերժացման գործում:

10. Բացահայտեցեք հավելյալ արժեքի մարքս-լենինյան տեսության ռուբինյան—մենշեվիկյան և մեխանիստական ռեվիզիայի եյությունը:

11. Ինչո՞ւ սխալ ե մտածել հավելյալ արժեքի կատեգորիայի ներկայությունը սոցիալիստական տնտեսության մեջ:

12. Մերկացրեք սոց. արդյունաբերության մեջ հավելյալ արժեքի առկայության տրոցկիստական հակահեղափոխական եյությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. К. Маркс.—«Капитал» т. I стр. 116—205, 276—417, 446—450, 484—516
2. Ленин.—т. XVIII, изд. II-ое, стр. 17—19.
3. Ленин.—г. 1 (Ի՞նչ են ժողովրդի բարեկամները).
4. Ленин.—т. II, стр. 50—56.
5. Ленин.—т. III стр. 236—243, 423—431.
6. К. Маркс.—«Нищета философии» изд. 1930 г. стр. 159—171.


---



# ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

## ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Նախորդ գլուխներում Մարքսի, Ենգելսի, Լենինի աշխատությունների հիման վրա մենք ցուցահանեցինք ապրանքակապիտալիստական տնտեսության ծագման և զարգացման նախնական փուլերը: Հավելյալ արժեքի և կապիտալի ուսումնասիրությունը մեզ բերեց այն յեզրակացության, վոր կապիտալիստական արտադրությունը վո՛չ միայն ապրանքների, այլ միաժամանակ հավելյալ արժեքի ու կապիտալի արտադրություն ե: Սրա հետ մեկտեղ, մենք տեսանք, վոր արտադրության կապիտալիստական պրոցեսը խարսխված ե փոխադարձաբար միմյանց հակադիր, հակամարտ դասակարգերի,— բուրժուազիայի և պրոլետարիատի,—արտադրական հարաբերությունների սխեմի վրա: Արտադրության տեր կապիտալիստը գործադրում ե բոլոր հնարավոր միջոցները պրոլետարից ավելի և ավելի հավելյալ արժեք քամելու համար: Շահագործման նորման բարձրացնելու նպատակով, կապիտալիստական դասակարգը վո՛չ միայն կիրառում ե տնտեսական միջոցառումներ ու մեթոդներ, այլ նա կյանքի յե կոչում վողջ իրավական ղատական հաստատությունները՝ պետական բուրժուական ապարատը: Յեվ յերբ այդ յերկու դասակարգերից մեկը՝ պրոլետարիատը, փորձում ե դիմաչել տիրապետող կապիտալի շահերին, վերջինս ապահովում ե իր շահույթի մասսայի աճումը, հենված ֆաշիստական գնդերի և զինված ուժի վրա:

Ինչ խոսք, վոր այդ հակասությունների աճումը տանում ե դեպի կապիտալի վերջնական կործանումն ու պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը՝ սոցիալիստական հասարակության վերջնական և համաշխարհային հաղթանակը:

Սակայն, վորպեսզի ավելի լիակատար ու հստակ գաղափար կազմենք բանվոր դասակարգի և կապիտալիստների վողջ պայքարի իսկական բովանդակության՝ այդ պայքարի ներքին մեխանիզմի մասին՝ մեզ անհրաժեշտ ե ծանոթանալ աշխատավարձի վերաբերյալ յեղած Մարքս-լենինյան ուսմունքին:

Չնայած այն պատմական համաշխարհային իրողությանը, վոր աշխարհի մեկ-վեցերորդ մասում հաղթանակել ե պրոլետարիատը և վաղուց ավարտել ե սոցիալիզմի հիմքերի կերտումը մեր յերկրում, չնայած այն հանգամանքին, վոր սոցիալիստական հեղափոխության հետևանքով միանգամայն փոխվել ե տնտեսական կատեգորիաների բնությունը մեր յերկրում՝ այնուամենայնիվ, տակավին մենք ականատես ենք արտադրության կապիտալիստական յեղանակի մնացորդներին մեզ մոտ: Մինչև որս էլ մենք

հանդիպում ենք «թեորետիկների» (Բուխարին, Պրեոբրաժենսկի, և այլն), վորոնք մեր արտադրական հարաբերությունները, ԽՍՀՄ-ի բոլորովին նոր տնտեսական կատեգորիաները մեկնաբանում են անտիլենինյան-բուրժուական վոգով (աշխ. ծախսումների, կազմակերպված կապիտալիզմի, կապիտալի հավասարակշռության, աշխատավարձի հավասարեցման աջ-«ձախ» թեորիաներ):

Մարքսիստ ագրարնիկների կոնֆերենցիայում, կոմունիստական կուսակցության ղեկավար ընկ. Ստալինը ջախջախիչ քննադատության յենթարկեց բոլոր այն հոսանքներն ու թեորիաները, վորոնք գալիս եյին հակառակորդ դասակարգի ակունքներից և ուղղված եյին մարքսիզմի-լենինիզմի դեմ: Միաժամանակ ընկ. Ստալինը նշեց, վոր մեր զարգացման ներկա ետապում աշխատավարձի տեսականի ու գործնականի ճիշտ ըմբռնումը խոշոր նշանակություն ունի մեր հետագա առաջխաղացման համար: Հետևաբար, աշխատավարձի տեսության ուսումնասիրությունն առանձնակի գիտական-քաղաքական նշանակություն է ձեռք բերում մեզ մոտ: Խիստ կարևոր է ընթերցողին վերհիշել Մարքսի այն կարևորագույն թեզը, վոր՝

«Պրոդուկտների փոխարկումն ապրանքների, յենթադրում է ամենից առաջ, վոր այստեղ ինքը՝ բանվորը հանդես է գալիս սոսկ ապրանք վաճառողի դերում, իբրև ազատ վարձու բանվորի: Յեվ միայն այն բանից հետո, յերբ այստեղ աշխատանքը հանդես է գալիս վորպես վարձու աշխատանք և արտադրության միջոցները՝ վորպես կապիտալ, հետևաբար, միայն հասարակական այս սպեցիֆիկ կառուցվածքի հետևանքով, արտադրության այդ յերկու կարևոր ֆակտորների հետևանքով արժեքի մի մասը փոխարկվում է հավելյալ արժեքի»:

Պատմական այս մոմենտից էլ սկսում է արտադրության կապիտալիստական յեղանակի պատմությունը: Ահա թե ինչու վարձու աշխատանքի հարաբերությունը դեպի կապիտալ, բնորոշում է արտադրության այդ յեղանակի վողջ եյությունը:

Բանվորը վաճառում է իր ուժը ճիշտ այնպես և այն որենքներով, ինչպես սովորական պայմաններում վաճառվում և գնվում են մնացած ապրանքները: Հենց այս, շուկայական, բուրժուական հարաբերությունների մակերեսին մնալն է, վոր բուրժուական մտածողներին բերում է այն հիմնովին սխալ պատկերացման, վոր աշխատանքն արժեք ունի և վոր իբր թե աշխատավարձն աշխատանքի վարձատրությունն է: Բուրժուական քաղաքատնտեսությունը,—անգամ ի դեմս իր լավագույն մտածողների՝ Ա. Սմիթ, Ռիկարդո,—չկարողացավ արտաքին յերևանավորման տակ բացահայտել յերևույթի եյությունը: Այս հասկանալի յե, քանի վոր նրանք իրենց աշխարհայացքով իդեալիստներ եյին:

Յելնելով սկզբունքային այն մեկնակետից, թե «աշխատանքը արժեքի



սուբստանցն ու իմմանենտ չափն է, բայց նա ինքն արժեք չունի», Մարքսն առաջին անգամ բացահայտեց արտադրության կապիտալիստական յեղանակի միստիֆիկացիան, շեշտելով, վոր շուկայում կապիտալին հակադրվում է վոչ թե աշխատանքը, այլ բանվորական ուժ ապրանքը: Ահա թե ինչու Մարքսը ուսուցանում է, վոր «բանվորները վաճառում են կապիտալիստին վոչ թե աշխատանքը, այլ բանվորական ուժը»:

Նախորդ թեմաների շարադրության մեջ մենք բազմաթիվ փաստերով տեսանք, թե ինչպես ապրանքա-կապիտալիստական արդյունաբերության ժամանակ շատ կատեգորիաներ, ինչպես նաև փողը, կապիտալը յերևան են գալիս վոչ այնպես, ինչպես նրանք կան իրականում՝ այլ աղավաղված, միջնորդական կերպով:

Անդրադառնալով աշխատավարձի եյությանը, Մարքսը գրում է.

«Բանվորական ուժի արժեքը կամ գինը ընդունում է իրեն արժեքի կամ գնի կերպարանքը, թեև մոտիկից քննարկելիս՝ դուրս է գալիս, վոր աշխատանքի արժեքն ու գինը արտահայտությունները իմաստից զուրկ են: Թեև վճարվում է բանվորի օրական աշխատանքի միայն մի մասը, իսկ մնացած մասը բոլորովին անվճար է մնում, այն է,— չվճարվող կամ հավելյալ աշխատանքը կազմում է այն ֆոնդը, վորից ծագում է հավելյալ արժեքը կամ շահույթը,— այնուամենայնիվ այն տպավորություն է ստացվում, իբր թե ամբողջ աշխատանքն է վճարվում:

Այդ խարդախ տեսքը վարձու աշխատանքը տարբերում է աշխատանքի մյուս պատմական ձևերից: Աշխատավարձի սիստեմի ժամանակ մինչև անգամ չվճարված աշխատանքը վճարված է թվում»:

Նման խարդախ դրություն է ստեղծվում, վորովհետև բանվորական ուժի իսկական արժեքը իրեն դրսևորում է յերևույթի մակերեսին՝ վորպես յերևան գալու ռեալ օբյեկտիվ ձև, վորպես աշխատանքի գին, վորպես աշխատանքի վարձատրություն: Ենգելսին ուղղած իր նամակներից մեկում Կ. Մարքսը հիշատակում է, վոր «առաջին անգամ նա չի ցույց տվել, վոր աշխատավարձն իր յետև թաքնված հարաբերությունների արտահայտության հակաբնական ձևն է»: Յեվ այս իսկ պատճառով, անհրաժեշտ է ամենից առաջ լավ յուրացնել աշխատավարձի մարքս-լենինյան տեսության այն դրույթը, ըստ վորի աշխատավարձը բանվորական ուժի արժեքի փոխակերպումն է:

Խոր ըմբռնելով աշխատավարձի բովանդակության և նրա յերևան գալու բազմաթիվ կոնկրետ ձևերը, անհրաժեշտ է հիշել, վոր բանվորական ուժ ապրանքը տարբերվում է մյուս ապրանքներից այն բանով, վոր նա իր սպառման պրոցեսում ստեղծում է ավելի արժեքներ, քան ինքն արժե: Այս տեղից պարզ է, վոր բանվորական ուժի արժեքի վորոշումը վորոշ չափով տարբերվում է մնացած ապրանքների արժեքի վորոշումից:

Հետազոտելով աշխատավարձի յերկու հիմնական ձևերը, Մարքսը մոտ

չտեսնված խորությամբ և պատմական փաստերի մի ամբողջ շարանով ապացուցում է, որ բանվորական ուժի արժեքի փոխարկվելը աշխատավարձի՝ բղխում է իրեն կապիտալիստական արտադրական հարաբերությունների ներքին էությունից:

Ուսումնասիրելով հավելյալ արժեքի արտադրության պրոցեսը, մենք նկատեցինք, որ կապիտալն սկիզբ է առնում այնտեղ, ուր փողատերը գործադրում է այդ գումարը, վարձելով բանվորական ուժը: Բայց այս բանվորական ուժն իբրև ապրանք, մեր վերև հիշատակված հանգամանքներով հանդերձ, յենթակա յե արժեքի ընդհանուր օրենքին: Ուրեմն շուկայում կապիտալին հակադրվում է բանվորական ուժը և ո՛չ թե աշխատանքը: Հետևաբար «աշխատանքի արժեք կամ գինը» բանվորական ուժի իսկական արժեքի և գնի հակաբանական արտահայտությունն է լոկ: Այնուամենայնիվ, պետք է նկատել մի հանգամանք, որ աշխատավարձը բանվորական ուժի արժեքի արտաքին դրսևորման օբյեկտիվ ձևն է: Այս առթիվ անհրաժեշտ է, լավ հիշել և ապա խստորեն հաշվի առնել Կ. Մարքսի ներքոհիշյալ լուսաբանությունը:

«Դրսևորման նման ձևերի մասին՝ ինչպիսին է «աշխատանքի արժեք և գին», կամ «աշխատանքի վարձատրությունը», ի տարբերություն այն էական հարաբերությանը, որը նրանց մեջ յերևան է գալիս,—բանվորական ուժի արժեքից և գնից տարբեր,—կարելի յե միևնույնն ասել, ինչ որ կարելի յե ասել ընդհանրապես դրսևորման ձևերի և նրանց իբրև թաքնված հիմքի մասին: Առաջիններն անմիջականորեն վերարտադրվում են իրենք իրենց, իբրև մտածողության սովորական ձևեր, իսկ յերկրորդը՝ կարող է բացահայտվել լոկ գիտական ուսումնասիրությամբ»:

Ահա թե ինչպիսի խոշոր քայլ կատարեց դեպի առաջ քաղաքատնտեսությունն՝ ի դեմս Կարլ Մարքսի: Բոլոր կատեգորիաների ուսումնասիրության ժամանակ մենք պետք է խստորեն կիրառենք Մարքսի սույն մեթոդը՝ յերևույթների հետևում տեսնել նրանց էությունը, մակերեսից թափանցել յերևույթի բովանդակության մեջ, գտնել այդ դրության իմմանենտ օրենքները և տվյալ շարժման տենդենցը: Մարդկային հետախուզող միտքը յերկար ճանապարհ է կտրել, մինչև հասել է աշխատավարձի գաղտնիքի բացահայտումին: Այս բանը մենք պարտական ենք բացառապես Մարքսին:

Աշխատավարձի էության ճիշտ ըմբռնումը դժվարանում է վոչ միայն այն իրականությամբ, որ մարդկանց արտադրական հարաբերությունները կապիտալիստական սիստեմում յերևան են գալիս իրայնացած, այլ նաև այն փաստով, որ աշխատավարձը վճարվում է բանվորական ուժի վատնումից հետո: Հետևաբար, աշխատավարձի կատեգորիայի առկայությունը լիովին մթագնում ու շղարշում է կապիտալի յեկամտի աղբյուրը, նրա շահագործման պրոցեսը: Անգամ իրեն բանվորին էլ թվում է, որ իր աշխատանքը լիովին վճարված է:

Մենք ավելորդ ենք համարում առանձնակի կանգ առնել աշխատավարձի



ձևերի վրա: Միայն անհրաժեշտ է նշել, որ Մարքսը մանրամասնորեն «Կապիտալում» քննարկում է աշխատավարձի յերկու հիմնական յեղանակները՝ ժամանակավարձ, հատավարձ: Այստեղ նույնպես մենք գործ ունենք միևնույն էության տարբեր արտահայտության հետ: Դրա համար էլ Մարքսի հայեցակետով, հատավարձը փոխակերպված ժամանակավարձն է: Ընթերցողները պետք է մոռացության չմատնեն մի չափազանց կարևոր հանգամանք, որ աշխատավարձի բազմաթիվ ձևերը նպատակ ունեն այս կամ այն միջոցներով ավելի շատ հավելյալ արժեք կորզել բանվոր դասակարգից:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է հանգամանորեն ծանոթանալ և քննության յենթարկել շահույթներին մասնակցելու աշխատավարձի ձևը, որը բավական տարածված է արդի իմպերիալիստական յերկրներում:

Դժբախտաբար, մինչև վերջին ժամանակներս շատ էր տարածված անտիլենինյան, բուրժուական այն հայացքը, որի համաձայն աշխատավարձը պայմանավորված է աշխատանքի արտադրողականությամբ: Ընդհակառակը, մեր բերած փաստերը ցույց են տալիս, որ որքան զարգանում է կապիտալիզմը, բանվոր դասակարգի աշխատավարձն ընկնում է, ապա ուրեմն նրա դրությունը գնալով վատթարանում է: Աշխատավարձի տենդենցը տանում է դեպի նրա նվազումը բանվորական ուժի արժեքից:

Միանգամայն սխալ, ըստ էության բացահայտ սոցիալ-դեմոկրատական մեթոդ են գործադրում, յերբ բանվոր դասակարգի այսօրվա աշխատավարձը համեմատում են նրա անցյալի աշխատավարձի հետ: Աշխատավարձի դինամիկան կապիտալիզմի օրով այս յեղանակով դիտողները գալիս են այնպիսի բացահայտ բուրժուական յեզրակացության, որ, իբր թե բանվորական աշխատավարձը տենդենց ունի «հարաբերականորեն» բարձրանալու: Մինչդեռ Մարքսը կտրականապես ժխտում է խնդրի նման լուծման իսկությունը և պահանջում է մեզնից միշտ էլ բանվոր դասակարգի աշխատավարձը համեմատել աճող կապիտալի, կապիտալիստական դասակարգի ինքնաճող, չտեսնված չափերի հասնող շահույթի և իրեն բանվորական ուժի արժեքի հետ: Մարքսն անդադրում պնդում էր, որ կապիտալիզմի զարգացման հետևանքով աշխատավարձն ընկնում է հարաբերականորեն և բացարձակապես: Միմիայն այս յեղանակով պետք է մոտենալ ժամանակակից կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի աշխատավարձին, որպեսզի իրոք պարզ լինի միլիոնավոր պրոլետարների ծայրահեղ թշվառության և սովամահության բուն պատճառը:

Կամենալով ապացուցել կապիտալի և աշխատանքի անտագոնիզմի բացակայությունը, նորագույն բուրժուական տնտեսագետները և սոցիալ-դեմոկրատ «թեորետիկները», ժխտում են բանվորական ուժի և կապիտալի անհաշտելի պայքարը, այդպիսով բացասում են հավելյալ արժեքի բանվորական ծագումն ու արդարացնում «կապիտալի խաղաղ ներաճումը սոցիալիզմի մեջ»: Բացասելով բանվորական ուժի առ ու ծախքը, ժամանակակից սոցիալ-դեմոկրատիան ըստ էության ժխտում է նաև կապիտալի գոյու-

թյունը, արտադրության կապիտալիստական յեղանակը հրամցնում է բանվորներին վորպես «տնտեսական դեմոկրատիա»: Ժամանակակից սոցիալ-դեմոկրատիան կանգնելով բուրժուական դասակարգի աշխարհայացքի պատվանդանի վրա, չի կարող արդեն ընդունել պրոլետարիատի անմահ տեսաբան Մարքսի ներքոհիշյալ դրույթը:

> «Աշխատավարձն ու շահույթը հակառակ հարաբերության մեջ են գտնվում միմյանց հետ: Կապիտալի բաժինը — շահույթը — աճում է հենց այն աստիճանով, վորով ընկնում է աշխատանքի բաժինը — աշխատավարձը»:

Այս է շահույթի և աշխատավարձի փոխադարձ հարաբերության անողոք դիալեկտիկան:

Մենք ահագին նյութ ենք տալիս ընթերցողներին, հենց այս կապակցությամբ:

Պարզաբանելով աշխատավարձի էյությունն ու ձևերը, տալով աշխատավարձի բուրժուական և սոցիալ-դեմոկրատական թեորիաների ծավալուն քննադատությունը, ընթերցողները պետք է ի մոտո շոշափեն աշխատավարձի պրոբլեմը ԽՍՀՄ-ում:

Հայտնի յե, վոր աշխատավարձի հավասարեցման «ձախ» թեորիան հիմնովին հակասում է մարքսիզմի-լենինիզմի վոգուն: Դեռ ավելին: Շնորհիվ մինչև վերջերս եւ մեր արդյունաբերության մի շարք ճյուղերում աշխատավարձի փաստական հավասարությանը՝ մենք այդպիսով ուղղակի արգելակում էյինք մեր տնտեսության առաջխաղացմանը: Ահա թե ինչու կուսակցության ղեկավար ընկ. Ստալինն առանձնապես կանգ առավ այդ խնդրի վրա: Նա ասում է.

> «Մարքսը և Լենինն ասում են, վոր վորակյալ և վոչ-վորակյալ աշխատանքների տարբերությունը գոյություն է ունենալու նույնիսկ սոցիալիզմի ժամանակ, նույնիսկ դասակարգերը վոչնչացվելուց հետո, վոր միայն կոմունիզմի ժամանակ կվերջանա այդ տարբերությունը, ուստի նույնիսկ սոցիալիզմի ժամանակ «աշխատավարձը» պետք է տրվի ըստ աշխատանքի և վոչ թե ըստ պահանջի»:

Այստեղից մեզ համար գործնական խնդիր, անողոք և անհաշտ պայքար մղել աշխատավարձի Մարքս-լենինյան տեսության ու սոցիալիստական պրակտիկայի աղճատման ամեն մի փորձի դեմ: Կրկին անգամ պետք է ընկերներին հիշեցնել, վոր մեզ մոտ տնտեսական կատեգորիաները, ապա նաև աշխատավարձը, բոլորովին այլ բնույթ և տարբեր էյություն ունեն, քան կապիտալիստական անարխիկ տնտեսության մեջ:

Այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ-ում անշեղ կերպով բարձրանում է բանվորների և ծառայողների աշխատավարձն ու նրանց կյանքի բարեկեցության մակարդակը՝ կապիտալիստական յերկրներում վոչ միայն գլխապտույտ արագությամբ նվազում է բանվորների աշխատավարձը, այլ այսօր տասնյակ միլիոնավոր պրոլետարներ չունեն և վոչ մի կոպեկ յեկամուտ, մեռնում են քաղցի և կրիզիսի ճիրաններում: Մյուս յերկրների պրոլետարների



և աշխատավորներին ներկա համաշխարհային կրիզիսից դուրս գալու համար միայն մեկ յելք կա՝ փշրել բուրժուական պետական մեքենան բռնի հեղափոխության ճանապարհով, հաստատել պրոլետարիատի դիկտատուրա ու ԽՍՀՄ-ի հարուստ փորձի օրինակով անմիջապես ձեռնամուխ լինել կոմունիստական հասարակության կերտման:

Ի վերջո ավելացնենք, վոր բանվոր դասակարգի դրության վատթարացման մեր նյութերը հավաքել ենք սրանից վեց ամիս առաջ: Մյուս կողմից՝ մենք այդ խնդիրը լուսաբանում ենք լոկ աշխատավարձի կապակցությամբ: Այն իր վողջ ծավալով լուսաբանվելու յե մեր գրքի յերրորդ պրակում:

Այստեղ պետք է ավելացնենք, վոր աշխատավարձի թեորիան ճիշտ և լրիվ յուրացրած չի կարելի համարել, յեթե ընթերցողներն իրենց լավ չեն պարզել արդի կապիտալիստական արտադրության ռացիոնալիզացիայի բնույթը, նրա դասակարգային սոցիալական բովանդակությունն ու կործանարար ազդեցությունը բանվոր դասակարգի վրա:

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ԱՐԺԵՔԻ ՓՈԽԱՐԿՈՒՄՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ

Հարցրեք բանվորներին. «վո՞րքան է ձեր աշխատավարձը», և դուք միատեսակ պատասխան չեք ստանա: Մեկը կասի. «յես իմ բուրժուայից ստանում եմ օրական մի ռուբլի»: Մյուսը կպատասխանի. «յես ստանում եմ յերկու ռուբլի» և այլն: Նայելով, թե նրանցից յուրաքանչյուրն աշխատանքի վո՛ր ճյուղում է զբաղված, նրանք զանազան դրամական գումարներ կանվանեն, վոր նրանք ստանում են իրենց բուրժուաներից՝ վորոշ աշխատանք կատարելու համար. օրինակ՝ մի արշին կտավ գործելու կամ մի տպագրական թերթ շարելու համար:

Չնայած, սակայն, պատասխանների այդ տարբերությանը, մի բան աներկրայելի յե մնում. աշխատավարձը, այդ — այն դրամական գումարն է, վոր կապիտալիստը վճարում է բանվորներին վորոշ բանվորական ժամանակի համար կամ վորոշ աշխատանք կատարելու համար:

Այնպես է դուրս գալիս, կարծես թե կապիտալիստը գնում է բանվորներից, իսկ բանվորները վաճառում են նրան իրենց աշխատանքը: Բայց այդ միայն այդպես թվում է: Բայց իսկապես, բանվորները վաճառում են կապիտալիստին վո՛չ թե աշխատանքը, այլ բանվորական ուժը: Կապիտալիստը բանվորական ուժը գնում է մի օրով, մի շաբաթով, մի ամսով և այլն: Գնելով բանվորական ուժը՝ կապիտալիստն ստիպում է բանվորներին աշխատել պայմանավորված ժամանակի ընթացքում և այդ միջոցով սպառում է այն: Այն փողերով, վոր կապիտալիստը ծախսել է բանվորական ուժի վրա, նա կարող եր գնել, օրինակ՝ 2 ֆունտ շաքար. 2 ֆունտ շաքարի համար վճարած 2 ռուբլին — շաքարի գինն է: Այն 2 ռուբլին, վոր կապիտալիստը վճարում է բանվորական ուժի 12 ժամվա սպառման համար, 12 ժամվա աշխատանքի գինն է: Հետևաբար, բանվորական ուժը նույնպիսի ապրանք է, ինչպես և շաքարը, միայն թե՝ առաջինը չափվում է ժամերով, իսկ յերկրորդը՝ կշռով:

Բանվորը փոխանակում է իր ապրանքը — բանվորական ուժը — կապիտալիստի ապրանքի — փողի — հետ: Այդ փոխանակությունը կատարվում է վորոշ համարաբերությամբ: Օրինակ՝ 2 ռուբլի վճարվում է ջուլհակի 12 ժամվա աշխատանքի համար: Բայց այդ յերկու ռուբլին իրենցից ներկայացնում են այն բոլոր ապրանքները, վոր կարելի յե գնել նրանցով: Այդպիսով, բանվորն իսկապես իր ապրանքը (բանվորական ուժը) փոխանակում է զանազան ուրիշ ապրանքների հետ: Կապիտալիստից իր որական աշխատանքի համար իբրև փոխանակություն ստացած 2 ռուբլով բանվորը գնում է նույնքան միս, զգեստ, վառելափայտ և այլն: Հետևաբար, 2 ռուբլին արտահայտում է այն հարաբերությունը, վորով բանվորական ուժը փոխանակվում է ուրիշ ապրանքների հետ, այսինքն՝ բանվորական ուժի փոխանակային արժեքը: Իսկ յուրաքանչյուր ապրանքի փոխանակային արժեքը, արտահայտված փողով, կոչվում է ապրանքի գինը: Հետևաբար, աշխատավարձը միայն բանվորական ուժի գնի առանձին անունն է:

Վերցրե՛ք վորևե բանվորի, օրինակ՝ ջուլհակի: Կապիտալիստը տալիս է նրան դազգյահ և մանվածք: Ջուլհակն աշխատանքի յե կպչում և մանվածքը քաթանի յե փոխարկվում: Կապիտալիստն ինքն է վերցնում քաթանը և վաճառում այն, օրինակ՝ 20 ռուբլով:

Արդյոք ջուլհակի աշխատավարձը նոր արտադրված արդյունքի, քաթանի, կամ 20 ռուբու բաղկացուցիչ մասն է հանդիսանում:

Ամենևի՛ն:

Ջուլհակն իր վարձն ստացել է քաթանը վաճառելուց շատ առաջ, և, գուցե, ե՛լ ավելի առաջ, քան այն պատրաստված էր: Հետևաբար, կապիտալիստն աշխատավարձն վճարում է վոչ թե այն փողերից, վոր նա ստացել է քաթանի համար, այլ ուրիշ, պահեստի գումարներից:

Կարող է պատահել, վոր կապիտալիստը բոլորովին գնող չգտնի իր քաթանի համար, կամ նրա վաճառքով չվերադարձնի նույնիսկ վճարած աշխատավարձը, կամ ընդհակառակը, քաթանը վաճառի մեծ վաստակով: Ջուլհակն այդտեղ վո՛չ մի գործ չունի: Իր կապիտալի մի մասով կապիտալիստը գնում է ջուլհակի բանվորական ուժը ճիշտ այնպես, ինչպես առաջ կապիտալի մյուս մասով նա գնել էր մանվածքը (հում նյութը) և դազգյահը (աշխատանքի գործիքը): Այդպիսի գնումներ կատարելով, կապիտալիստն ապրանք է արտադրում իրեն պատկանող հում նյութի և աշխատանքի գործիքների օգնությամբ: Վերջիններիս թվին է պատկանում նաև մեր ջուլհակը, վորը նմանապես, ինչպես և դազգյահը վոչինչ չի ստանում իր աշխատանքի արդյունքից կամ նրա գնից:

Այդպիսով, աշխատավարձը բանվորի բաժինը չէ իր արտադրած ապրանքի մեջ: Աշխատավարձն արդեն գոյություն ունեցող ապրանքի այն մասն է, վորով կապիտալիստը վորոշ քանակությամբ բանվորական ուժ է գնում:

Իսկ ինչո՞ւ համար է բանվորը վաճառում իր ապրանքը — բանվորական ուժը:



Նրա համար, վորպեսզի ապրի:

Բանվորական ուժի արտահայտումը, կամ աշխատանքը, դրա հետ միասին նաև բանվորի կենսագործունեությունն է: Հենց այդ կենսագործունեությունը նա վաճառում է, վորպեսզի իրեն համար գոյության միջոցներ հայթայթի: Կենսագործունեությունը նրա համար միայն իբրև ապրելու միջոց է ծառայում: Նա աշխատում է, վորպեսզի ապրի: Նա աշխատանքը մինչև անգամ իր կյանքի մասը չի համարում: Այդ մի զոհաբերություն է, վոր նա բերում է կյանքին, մի ապրանք, վոր նա զիջում է յերրորդ անձի: Այդ պատճառով՝ նրա գործունեության արդյունքը չի հանդիսանում նրա գործունեության նպատակը: Նա իրեն համար չի արտադրում այն մետաքսը, վոր նա գործում է, այն վոսկին, վոր նա հայթայթում է, այն պալատը, վոր նա կառուցում է: Իրեն համար նա աշխատավարձ է արտադրում, իսկ մետաքսը, վոսկին, պալատը նրա համար փոխարկվում են վորոշ քանակությամբ գոյության միջոցների, գուցե, բրդե կուռտիկի, պղնձե դրամի, բնակարանի ներքնահարկում: Բանվորի համար, վոր 12 ժամ գործում է, մանում, ծակում, կառուցում և այլն, նրա այդ 12 ժամվա գործունեությունն ամենևին կյանք չի հանդիսանում: Նրա կյանքն սկսվում է այն ժամանակ, յերբ նա սեղան է նստում, պանդոկ է գնում, պառկում է քնելու: Իսկ նրա աշխատանքը 12 ժամի ընթացքում նրա համար իմաստ ունի միայն իբրև աշխատավարձ, վոր նրան հնարավորություն է տալիս ճաշելու, պանդոկն այցելելու կամ անկողնի մեջ քնելու: Յեթե մետաքսի վորդը հարկ ունենար մանելու միայն նրա համար, վորպեսզի ամբողջ կյանքն ապրեր իբրև թրթուռ, ապա նա միանգամայն նման կլիներ վարձու բանվորի:

Բանվորական ուժը միշտ ապրանք չի յեղել, և աշխատանքը միշտ վարձու աշխատանք, այսինքն՝ ազատ աշխատանք չի յեղել: Ստրուկն իր բանվորական ուժը չէր վաճառում ստրկատիրոջը, ինչպես վոր յեզն էլ այն չի վաճառում գյուղացուն: Ստրկին վաճառում էին ստրկատիրոջը միանգամ ընդմիշտ, նրա բանվորական ուժի հետ միասին: Նա ապրանք էր, վոր կարող էր ձեռքեձեռք անցնել: Ստրուկն ինքն ապրանք էր, բայց նրա բանվորական ուժը նրա ապրանքը չէր: Ճորտը վաճառում է իր բանվորական ուժի միայն մի մասը: Վո՛չ թե նա յե վարձատրություն ստանում հողատիրոջից, այլ ընդհակառակը, հողատերն է նրանից հարկ ստանում:

Ճորտը հանդիսանում է հողի պատկանելությունը և այդ հողի արդյունքները հանձնում է նրա տիրոջը: Իսկ ազատ բանվորը վաճառում է ինքն իրեն և այն էլ մաս առ մաս: Նա վաճառում է որըստորե իր կյանքի 8, 10, 12, 15 ժամը նրան, ով ավելի յե առաջարկում, վաճառում է հում նյութի, աշխատանքի գործիքների և գոյության միջոցների սեփականատիրոջը, այսինքն՝ կապիտալիստին:

Բանվորը կարող է, յերբ կամենա հեռանալ կապիտալիստից, վորի մո[illegible] վարձվել է, և կապիտալիստը կարող է բանվորին արձակել, յերբ կամ[illegible] յերբ նա նրանից օգուտ չի քաղում կամ դադարում է այն օգուտը քաղ[illegible]

*վոր նա հույս ուներ:* Բայց բանվորը, վորի համար բանվորական ուժի վաճառքը գոյության միակ աղբյուրն է հանդիսանում, չի կարող թողնել—հեռանալ գնողների, այսինքն՝ կապիտալիստների ամբողջ դասակարգից, յեթե նա իր կյանքից ձեռք չի վերցնում: Նա չի պատկանում այս կամ այն կապիտալիստին, այլ պատկանում է կապիտալիստների ամբողջ դասակարգին, և արդեն իր գործն է այդ դասակարգի մեջ իրեն համար գնող ճարելը[1]:

*Ձեզանից ամեն մեկը համոզված է, վոր այն, ինչ վոր դուք ամեն որ վաճառում եք, ձեր աշխատանքն է, վոր այդպիսով՝ աշխատանքը գին ունի և վոր՝ վորովհետև ապրանքի գինը նրա արժեքի դրամական արտահայտությունն է, ապա, անշուշտ, պետք է գոյություն ունենա ինչ-վոր «աշխատանքի արժեքի» նման մի բան, այդ բառի սովորական իմաստով: Սակայն գոյություն չունի «աշխատանքի արժեքի» նման վո՛չ մի բան, այդ բառի սովորական իմաստով:* Մենք տեսանք, վոր ապրանքի արժեքը կազմում է նրա մեջ բյուրեղացած աշխատանքի այն քանակությունը, վոր անհրաժեշտ է նրա արտադրության համար: *Յեթե մենք ոգտվենք արժեքի այդ հասկացողությունից, ապա ինչպե՞ս կարող ենք մենք վորոշել, ասենք՝ տաս ժամվա բանվորական որվա արժեքը: Վորքա՞ն աշխատանք է պարունակվում այդ որվա մեջ: Տաս ժամվա աշխատանք: Տավտոլոգիա կլիներ և կատարյալ անհեթեթություն ասել, թե տաս ժամվա բանվորական որվա արժեքը տաս բանվորական ժամ է կամ հավասարվում է նրանց մեջ պարունակված աշխատանքի քանակին: Իհարկե, նրանից հետո միայն, յերբ մենք նախորոք բաց անենք «աշխատանքի արժեք» արտահայտության իսկական, թաքնված իմաստը, մենք ի վիճակի կլինենք բացատրելու արժեքի հասկացողության այդ անբնական և անթույլատրելի թվացող գործադրությունը, ճիշտ այնպես, ինչպես վոր մենք կարող ենք յերկնային մարմինների յերևացող կամ միայն վորոշ ձևի մեջ դիտվող շարժումները բացատրել լոկ այն բանից հետո, յերբ մենք նախորոք ըմբռնել ենք նրանց շարժման որենքները*[2]:

Ձեզ անհրաժեշտ է պարզել ձեզ համար, վոր աշխատանքի վարձատրությունն ու աշխատանքի քանակությունը — յերկու տարբեր և միանգամայն անհամեմատելի բաներ են: *Յենթադրենք, որինակ՝ վոր մի կվարտեր ցորենի և մի ունցիա վոսկու մեջ իրացնացած է աշխատանքի միատեսակ քանակություն: Յես վերցնում եմ այդ որինակը նրա համար, վոր այն գործ է ածել Բենիամին Ֆրանկլինը 1721 թ. հրատարակած իր յերկի մեջ —* A modern Jngniry into the Nature of Necekity of a Paper Currency, *վորի մեջ նա իբրև առաջիններից մեկը գտավ արժեքի իսկական եյությունը: Այդպես ուրեմն, մենք յենթադրում ենք, վոր մի կվարտեր ցորենը և մի ունցիա վոսկին միատեսակ արժեքներ կամ էկվիվալենտներ են ներկայացնում, այդ պատճառով էլ՝ նրանք հանդիսանում են միջին աշխատանքի միատեսակ քանակության բյուրեղացում, այսինքն՝ այնպիսի աշխատանքի, վոր գործ է դրված նրան-*

[1]) Маркс—«Наемный труд и капитал», изд. 1931 г., стр. 16—19

[2]) Маркс—«Зарпл.. цена и прибыль», стр. 47—48, изд. 1923 г.



*ցից յուրաքանչյուրի վրա այսքան որերի կամ այսքան շաբաթների ընթացքում: Այդ ձևով վորոշելով ցորենի և վոսկու հարաբերական արժեքները, արդյոք մենք վորևէ կերպով մոտենու՞մ ենք գյուղական բանվորների կամ հանքագործ բանվորների աշխատավարձը: Ամենևի՛ն: Մենք ամենևին չենք շոշափում այն խնդիրը, թե վճարվա՞ծ է արդյոք որական, թե շաբաթական աշխատանքը, և առհասարակ այստեղ արդյոք վարձու աշխատանք գործադրվա՞ծ է: Վերջին դեպքում աշխատավարձի չափերը կարող են ամենաբազմազան լինել: Այն բանվորը, վորի աշխատանքը մուծվել է մի կվարտեր ցորենի մեջ, կարող եր ստանալ միայն յերկու բուշել ցորեն, իսկ հանքագործության մեջ զբաղված բանվորը կարող եր ստանալ կես ունցիա վոսկի: Յեթե մինչև անգամ յենթադրենք, թե նրանց աշխատավարձը միատեսակ է, այնուամենայնիվ այդ աշխատավարձը կարող է շատ բազմապիսի կերպով շեղվել նրանց պատրաստած առարկաների արժեքներից: Այն կարող է հավասար լինել մի կվարտեր ցորենի կամ մի ունցիա վոսկու կեսին, մի յերրորդին, մի քառորդին, մեկ հինգերորդին կամ վորևէ այլ մասին:* Իհարկե, այդ բանվորների աշխատավարձը չի կարող գերազանցել նրանց պատրաստած ապրանքների արժեքից, չի կարող այդ արժեքից բարձր լինել, բայց կարող է շատ բազմազան աստիճաններով ցած լինել նրանից: Բանվորների աշխատավարձը սահմաններ ունի նրանց արդյունքների արժեքի մեջ, բայց նրանց արդյունքների արժեքի սահմանները չեն վորոշում նրանց աշխատավարձը: *Յեվ ամենից առաջ այնպիսի արժեքները, ինչպես, որինակ՝ հացի և վոսկու հարաբերական արժեքներն են, հաստատվում են նրանց մեջ դրված աշխատանքի արժեքից միանգամայն անկախ կերպով — մենք ուզում ենք ասել՝ միանգամայն անկախ աշխատավարձից:* Այդ պատճառով՝ ապրանքների արժեքը վորոշել նրանց մեջ դրված աշխատանքի հարաբերական քանակությամբ, այդ ամենևին այն չէ, ինչ վոր տավտոլոգիական մեթոդը — վորոշել ապրանքների արժեքն աշխատանքի արժեքով կամ աշխատավարձով: *Բայց այդ կետը մենք ավելի մանրամասնորեն կպարզաբանենք հետագայում*[1]:

Բանվորը վաճառում է վո՛չ թե իր աշխատանքը, այլ իր բանվորական ուժը, վոր նա ժամանակ առ ժամանակ դնում է կապիտալիստի տրամադրության տակ: *Այս դիտողության ճշտությունն ապացուցվում է այն փաստով, վոր — չգիտեմ ինչպես է անգլիական, բայց համենայն դեպս մայր ցամաքի որենքներով — առավելագույն ժամկետ է սահմանված, վորի տևողությամբ յուրաքանչյուր անձ կարող է իր բանվորական ուժը վաճառել: Յեթե բանվորներին հնարավորություն ընձեռված լիներ առանց ժամանակի վորևէ սահմանափակման վաճառելու իրենց բանվորական ուժը, ապա դրանից անմիջապես հետո ստրկություն առաջ կգար: Յեթե, որինակ՝ այդպիսի վաճառքն ընդգրկեր բանվորի ամբողջ կյանքը, ապա նա իսկույն ևեթ կդառնար աշխատանք տվողի ցմահ ստրուկը*[2]:

[1]) Маркс—«Зарплата, цена и прибыль», стр 40—41

[2]) Маркс—Зарплата, цена и прибыль», стр. 48.

Այժմ վերադառնանք «աշխատանքի արժեք» կամ «գին» արտահայտության:

Մենք տեսանք, վոր այդ արժեքը փաստորեն միայն բանվորական ուժի արժեքն է, վոր վորոշվում է այն ապրանքների արժեքով, վորոնք անհրաժեշտ են նրա պահպանման համար: Բայց վորովհետև բանվորն ստանում է իր աշխատավարձը միայն իր աշխատանքն արդեն կատարելուց հետո, և վորովհետև նա, բացի դրանից, գիտի, վոր այն, ինչ վոր ինքը տալիս է կապիտալիստին, իր աշխատանքն է, ապա նրա բանվորական ուժի արժեքը կամ գինը նրան պատկերանում է իբրև իր աշխատանքի գինը կամ արժեքը: Յեթե նրա բանվորական ուժի արժեքն յերեք շիլլինգ է, վորոնց մեջ իրագործված է վեց ժամվա աշխատանք և յեթե նա աշխատում է տասներկու ժամ, ապա նա անխուսափելիորեն այդ յերեք շիլլինգների մեջ կտեսնի տասներկու ժամվա աշխատանքի արժեքը կամ գինը, թեև իսկապես աշխատանքի այդ տասներկու ժամն իրագործված է վեց շիլլինգի արժեքի մեջ: Դրանից յերկակի յեզրակացություն է բխում:

*Առաջին*՝ բանվորական ուժի արժեքը կամ գինն ընդունում է աշխատանքի իրեն արժեքի կամ գնի կերպարանքը, թեև մոտիկից քննարկելիս՝ դուրս է գալիս, վոր աշխատանքի արժեքն ու գինն արտահայտություններն իմաստից զուրկ են: Յերկրորդ՝ թեև վճարվում է բանվորի որական աշխատանքի միայն մի մասը, իսկ մնացած մասը բոլորովին անվճար է մնում, այն է՝ չվճարվող կամ հավելյալ աշխատանքը կազմում է այն ֆոնդը, վորից ծագում է հավելյալ արժեքը կամ շահույթը,—այնուամենայնիվ այն տպավորությունն է ստացվում, իբր թե ամբողջ աշխատանքն է վճարվում:

Այդ խաբուսիկ տեսքը վարձու աշխատանքը տարբերում է աշխատանքի մյուս պատմական ձևերից: Աշխատավարձի սիստեմի ժամանակ մինչև անգամ չվճարված աշխատանքը վճարված է թվում: Դրան իբրև հակադրություն, ստրկության ժամանակ մինչև իսկ վճարված աշխատանքի մասը չվճարված է թվում: Ակներև է, ստրուկը, վորպեսզի աշխատի, պետք է ապրի, և նրա բանվորական որվա մի մասն այն բանի վրա յե գնում, վորպեսզի վերարտադրի նրա սննդի արժեքը: Բայց վորովհետև նրա և իր տիրոջ միջև վո՛չ մի գործարք չի կնքվել, վորովհետև յերկու կողմերի միջև էլ վո՛չ գնումն է կատարվել, վո՛չ վաճառք, ապա ամբողջ աշխատանքը միանգամայն անվճար է թվում:

Վերցրե՛ք, մյուս կողմից, ճորտ գյուղացուն, վոր գոյություն ուներ, յես կարող եյի ասել, դեռ յերեկ ամբողջ Արևելյան Յեվրոպայում: Այդ գյուղացին աշխատում եր, դիցուք, յերեք որ իր սեփական կամ իրեն հատկացրած դաշտում, իսկ հետևյալ յերեք որը պարտադիր և չվճարվող աշխատանք եր կատարում իր տիրոջ կալվածքում: Այդպիսով, այստեղ վորոշակի կերպով բաժանված են աշխատանքի վճարված և չվճարված մասերը, բաժանված են ժամանակով և տեղով, և մեր լիբերալները զայրույթով եյին լցվում այն վրդովեցուցիչ մտքի համար, թե մարդուն ստիպում են աշխատել առանց վորևէ վարձատրության:



Իսկ ըստ եյության այդ ամենևին նշանակություն չունի, թե արդյոք մարդը շաբաթը յերեք որ իրեն համար իր դաշտում է աշխատում և յերեք որ ձրի իր տիրոջ կալվածքում, թե՞ նա գործարանում կամ արհեստանոցում վեց ժամ իրեն համար է աշխատում և վեց ժամ իրեն աշխատանք տվողի համար, թեև այս վերջին դեպքում աշխատանքի վճարված և չվճարված մասերն անխզելի կերպով միացած են միմյանց հետ, և այդ ամբողջ գործարքի եյությունը բոլորովին վարագուրված է պայմանագրի առկայությամբ և շաբաթվա վերջին ստացվող աշխատավարձով: Չվճարված աշխատանքը մի դեպքում պատկերացվում է կամավոր կերպով տրված, իսկ մյուս դեպքում—հարկադրված: Դրանում է հենց ամբողջ տարբերությունը:

Յեթե հետագա շարադրության մեջ յես գործածելու լինեմ «աշխատանքի արժեք» արտահայտությունը, ապա այդ կանեմ միայն իբրև արտահայտության ընդհանուր գործածական յեղանակ — «բանվորական ուժի արժեքի» փոխարեն[1]):

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁՆ ԻԲՐԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ԱՐԺԵՔԻ ՀԱԿԱԲԱՆԱԿԱՆ (ԻՌՌԱՑԻՈՆԱԼ) ՁԵՎԸ

Ամենից առաջ տեսնենք, թե ինչ կերպով են արտահայտվում բանվորական ուժի արժեքն ու գինն իրենց փոխարկված ձևով, իբրև աշխատավարձ:

Ինչպես մենք գիտենք, բանվորական ուժի որական արժեքը հաշվարկվում է բանվորի կյանքի վորոշ տևողության համաձայն, վորին համապատասխանում է բանվորական որվա վորոշ տևողությունը: Յենթադրենք, թե սովորական բանվորական որը շարունակվում է 12 ժամ և բանվորական ուժի որական արժեքը հավասար է 3 շիլլինգի, վոր ներկայացնում է իր մեջ 6 աշխատաժամ մարմնացնող արժեքի դրամական արտահայտությունը: Յեթե բանվորն ստանում է 3 շիլլինգ, նա ստանում է իր բանվորական ուժի արժեքը, վոր գործում է 12 ժամվա ընթացքում: Բանվորական ուժի այդ որական արժեքն արտահայտելով այժմ իբրև որական աշխատանքի արժեք, մենք կստանանք հետևյալ փորմուլան. 24 ժամվա աշխատանքն ունի 3 շիլլինգի արժեք: Այդպիսով՝ բանվորական ուժի արժեքը վորոշում է աշխատանքի արժեքը, կամ — դրամական արտահայտությամբ — նրա անհրաժեշտ գինը: Իսկ յեթե բանվորական ուժի գինը շեղվում է նրա արժեքից, ապա աշխատանքի գինն էլ շեղվում է իր այսպես կոչված արժեքից:

Վորովհետև աշխատանքի արժեքը միմիայն իռռացիոնալ (հակասական) արտահայտությունն է բանվորական ուժի արժեքի համար, ապա ինքնըստինքյան հասկանալի յե, վոր աշխատանքի արժեքը միշտ ավելի պակաս պետք է լինի, քան աշխատանքի միջոցով ստեղծված նոր արժեքը, վորովհետև կա-

[1]) Маркс—«Зарпл., цена и прибыль», стр. 53—54.

պիտալիստը միշտ ստիպում է բանվորական ուժին ավելի յերկար գործելու, քան թե անհրաժեշտ է նրա սեփական արժեքի վերարտադրության համար։ *Վերևում բերված օրինակի մեջ 12 ժամվա ընթացքում գործող բանվորական ուժի արժեքը հավասար է 3 շիլլինգի,—մի արժեքի, վորի վերարտադրության համար բանվորական ուժը պետք է գործի 6 ժամ։* Մինչդեռ նոր արտադրված արժեքը 6 շիլլինգ է, վորովհետև իրապես բանվորական ուժը գործում եր 12 ժամ, իսկ նրա արտադրած արժեքը կախված է վո՛չ թե նրա սեփական արժեքից, այլ նրա գործողության տևողությունից։ Այդպիսով, մենք ձեռք ենք բերում այն առաջին հայացքից անհեթեթ հետևանքը, թե 6 շիլլինգի արժեք ստեղծող աշխատանքն ինքը 3 շիլլինգի արժեք ունի։

*Մենք այնուհետև տեսնում ենք, վոր 3 շիլլինգի արժեքը, վորի մեջ արտահայտվում է բանվորական օրվա վճարված մասը, այսինքն՝ 6 ժամվա աշխատանքը, ներկայացնում է ամբողջ 12 ժամվա բանվորական օրվա արժեքը կամ գինը, բանվորական օրվա, վոր իր մեջ բովանդակում է աշխատանքի 6 չվճարված ժամ։* Այդպես ուրեմն, աշխատավարձի ձևը ջնջում է բանվորական օրվա՝ անհրաժեշտ և հավելյալ, վճարված և չվճարված աշխատանքի բաժանվելու ամեն մի հետք։ Յուրաքանչյուր աշխատանք պատկերացվում է իբրև վճարված աշխատանք։ Կոռային աշխատանքի ժամանակ նորտ գյուղացու աշխատանքն իրեն համար և նրա հարկադրական աշխատանքը կալվածատիրոջ համար ամենաշոշափելի կերպով տարբերվում են միմյանցից, տարածությամբ և ժամանակով։ Ստրկական աշխատանքի ժամանակ մինչև անգամ բանվորական օրվա այն մասը, վորի ընթացքում ստրուկը միմիայն փոխհատուցում է իր սեփական գոյության միջոցների արժեքը, վորի ընթացքում նա իրապես աշխատում է լոկ իրեն համար, պատկերացվում է իբրև աշխատանք տիրոջ համար։ Նրա ամբողջ աշխատանքը պատկերացվում է իբրև չվճարված աշխատանք։ Ընդհակառակը, վարձու աշխատանքի սիստեմի ժամանակ մինչև անգամ հավելյալ կամ չվճարված աշխատանքը վճարված է թվում։ Այնտեղ սեփականության հարաբերությունը թաքցնում է ստրուկի իրեն համար կատարած աշխատանքը, այստեղ դրամական հարաբերությունը թաքցնում է վարձու բանվորի ձրի աշխատանքը։

Այդ պատճառով էլ հասկանալի յե, թե ի՛նչպիսի հսկայական նշանակություն ունի բանվորական ուժի արժեքի և գնի փոխարկումն աշխատավարձի ձևին, այսինքն՝ հենց աշխատանքի իրեն արժեքի և գնի ձևին։ Թե՛ բանվորի և թե՛ կապիտալիստի բոլոր իրավական պատկերացումները, արտադրության կապիտալիստական յեղանակի բոլոր միստիֆիկացիաները, նրա առաջացրած՝ ազատության բոլոր իլյուզիաները, վուլգար տնտեսագիտության բոլոր ջատագովական ճամարտակությունները հիմնված են արտահայտման այդ արտաքին ձևի վրա, վոր թաքցնում է իսկական հարաբերությունը և ուղղակի հակադիր հարաբերության յերևույթ է ստեղծում։

*Յեթե համաշխարհային պատմությունը շատ ժամանակ հարկավոր յեղավ, վորպեսզի բաց անի աշխատավարձի գաղտնիքը, ապա, ընդհակառակը, չկա ավելի դյուրին բան, քան արտահայտման այդ արտաքին ձևի անհրաժեշտությունը* ( raison d'être, *գոյության պատճառները*) *հասկանալը*։



Փոխանակությունը կապիտալի և աշխատանքի միջև սկզբնապես ըմբռնվում է բոլորովին նույն կերպով, ինչպես յուրաքանչյուր մի այլ ապրանքի գնումն ու վաճառումը։ Գնողը տալիս է վորոշ դրամական գումար, վաճառողը — մի բան, վոր տարբեր է փողից։ *Իրավաբանական գիտակցությունն այստեղ լավագույն դեպքում միայն նյութական տարբերություն է տեսնում, վորն արտահայտվում է հետևյալ, իրավաբանորեն համարժեք ֆորմուլաների մեջ* «Do ut des», «do ut facias», «facio ut des» *և* «facio ut facias» (*այսինքն՝ «տալիս եմ, վորպեսզի դու տաս», «տալիս եմ, վորպեսզի դու անես», «անում եմ, վորպեսզի դու տաս» և «անում եմ, վորպեսզի դու անես»,—հռոմի պարտավորական իրավունքի չորս հիմնական ձևերը—Կ.*)։

Ապա, վորովհետև փոխանակային արժեքն ու սպառողական արժեքն ինքնըստինքյան անհամաչափելի մեծություններ են, ապա «աշխատանքի արժեք», «աշխատանքի գին» արտահայտություններն ավելի իրրացիոնալ չեն թվում, քան թե, օրինակ՝ «բամբակի արժեք», «բամբակի գին» արտահայտությունները։ Սրա վրա ավելանում է նաև այն հանգամանքը, վոր բանվորին վճարում են միայն յերբ նա կատարել է իր աշխատանքը։ *Փողն իր ֆունկցիայով իբրև վճարման միջոց* post factum (*հետագայում*) *իրացնում է մատակարարված արդյունքի արժեքը կամ գինը, հետևաբար, տվյալ դեպքում մատակարարված աշխատանքի արժեքը կամ գինը*։

Վերջապես, այն «սպառողական արժեքը», վոր բանվորը մատակարարում է կապիտալիստին, իրապես հանդիսանում է վո՛չ թե բանվորական ուժը, այլ նրա ֆունկցիան, վորոշ օգտակար աշխատանքը, դերձակի, կոշկակարի, մանողի և այլն աշխատանքը։ Վոր հենց այդ նույն աշխատանքը, այլ կողմից դիտված, արժեք ստեղծող ընդհանրական տարր է,— մի հատկություն, վոր նրան տարբերում է բոլոր մյուս ապրանքներից,— այդ հանգամանքը վրիպում է առորյա գիտակցությունից։

*Յեթե մենք կանգնենք բանվորի տեսակետի վրա, վորն իր 12 ժամվա աշխատանքի համար ստանում է 6 ժամվա աշխատանքով արտադրած արժեք, ասենք 3 շիլլինգ, ապա նրա համար 12 ժամվա աշխատանքն իսկապես միայն մի միջոց է 3 շիլլինգ գնելու համար։ Նրա բանվորական ուժի արժեքը կարող է փոփոխվել նրա գոյության սովորական միջոցների արժեքի հետ միասին. կարող է բարձրանալ 3 շիլլինգից մինչև 4 կամ իջնել 3 շիլ. մինչև 2 շիլլինգ, կամ բանվորական ուժի անփոփոխ արժեքի դեպքում՝ նրա գինը կարող է, պահանջի և առաջարկի տատանումների հետևանքով, բարձրանալ մինչև 4 շիլլինգ կամ ընկնել մինչև 2 շիլլինգ,—այդ բոլոր դեպքերում բանվորը միատեսակ տալիս է 12 ժամվա աշխատանք։ Այդ պատճառով, յուրաքանչյուր փոփոխություն նրա ստացած համարժեքի մեծության մեջ անհրաժեշտաբար պատկերանում է նրան իբրև իր 12 բանվորական ժամերի ար-*

*ժեքի կամ գնի փոփոխություն: Այդ միևնույն հանգամանքը հակառակ* սխալին հասցրեց *Ա. Սմիթին*, վորը բանվորական օրը դիտում էր իբրև հաստատուն մեծություն. այդ նրան հասցրեց այն պնդումին, թե աշխատանքի արժեքը հաստատուն է, չնայելով նրան, վոր գոյության միջոցների արժեքը փոխվում է, և այդ պատճառով էլ միևնույն բանվորական օրը կարող է բանվորի համար արտահայտվել փողի ավելի մեծ կամ ավելի փոքր քանակությամբ:

*Նա ասում է.*

«*Բանվորի ստացած գինը (արտահայտված աշխատանքի մեջ) պետք է միշտ միատեսակ մնա, վորքան էլ վոր փոփոխելու լինի ապրանքների այն քանակությունը, վոր նա ստանում է այդ գնի համար: Այդ գնով մի դեպքում կարելի յե ապրանքների ավելի մեծ քանակություն գնել, մյուս դեպքում— ավելի փոքր քանակություն. բայց այդ դեպքում փոխվում է նրա՛նց արժեքը, այլ վոչ թե այն աշխատանքի արժեքը, վոր գնում է նրանց*»:

*Մյուս կողմից՝ վերցնենք կապիտալիստին: Նա, ամենից առաջ, ուզում է ըստ հնարավորության ավելի շատ աշխատանք ձեռք բերել՝ ըստ հնարավորության ավելի փոքր քանակությամբ փողով*: Այդ պատճառով գործնականապես նրան հետաքրքրում է միայն բանվորական ուժի, գնի և այն արժեքի միջև յեղած տարբերությունը, վոր ստեղծում է այդ ուժի գործունեությունը: *Բայց նա աշխատում է բոլոր ապրանքներն ըստ հնարավորության եժան գնել և իր շահույթի աղբյուրը տեսնում է միշտ պարզապես խաբելու մեջ, արժեքից ցած գնելու և նրանից բարձր վաճառելու մեջ*: Հետևաբար, նա հեռու յե այն հանգամանքն ըմբռնելուց, վոր, յեթե իսկապես գոյություն ունենար մի այնպիսի բան, ինչպիսին աշխատանքի արժեքն է, և նա իսկապես վճարեր այդ արժեքը, ապա չէր կարող վո՛չ մի կապիտալ գոյություն ունենալ, նրա փողերը չեյին կարողանա կապիտալի փոխարկվել:

Բացի դրանից՝ աշխատավարձի իսկական շարժումն այնպիսի յերևույթներ է հայտաբերում, վորոնք, ըստ յերևույթին, ապացուցում են, թե վճարվում է վո՛չ թե բանվորական ուժի արժեքը, այլ նրա ֆունկցիայի, այսինքն՝ հենց աշխատանքի իրեն արժեքը: *Այդ յերևույթները մենք կարող ենք վերածել յերկու խոշոր դասակարգերի. 1. աշխատավարձի փոփոխությունը բանվորական օրվա տևողության փոփոխությանը զուգընթաց: Նույնպիսի իրավունքով կարելի յեր յեզրակացություն անել, թե վճարվում է վո՛չ թե մեքենայի արժեքը, այլ նրա գործողությունների արժեքը, վորովհետև մեքենան էլ մի շաբաթով վարձելն ավելի արժե, քան թե մի օրով: 2. Միևնույն ֆունկցիաները կատարող զանազան բանվորների աշխատավարձերի մեջ յեղած անհատական տարբերությունները*: Բայց նույնպիսի անհատական տարբերություններ մենք գտնում ենք ստրկական աշխատանքի սիստեմի մեջ, վորտեղ արդեն վո՛չ մի իլյուզիայի տեղ չի մնում, վորտեղ բանվորական ուժն ինքը վաճառվում է բոլորովին բաց կերպով, առանց վորևէ քողազարդման: Տարբերությունն այն է միայն, վոր ստրկական սիստեմի ժամանակ միջին վո-



րակից բարձր բանվորական ուժից ստացվող օգուտը և միջին վորակից ցած բանվորական ուժից ստացվող կորուստն ստրկատիրոջ է բաժին ընկնում, իսկ վարձու աշխատանքի սիստեմի ժամանակ — բանվորին իրեն է բաժին ընկնում, վորովհետև վերջին դեպքում բանվորական ուժը վաճառվում է բանվորի իրեն կողմից, իսկ առաջին դեպքում — յերրորդ անձի կողմից:

Սակայն, արտահայտման այնպիսի ձևերի մասին, ինչպիսիք են՝ «աշխատանքի արժեքն ու գինը» կամ «աշխատավարձը», ի տարբերություն այն եյական հարաբերությունից, վոր դրսևորվում է նրանց մեջ,—ի տարբերություն բանվորական ուժի արժեքից ու գնից,—կարելի յե միևնույն բանն ասել, ինչ վոր առհասարակ արտահայտման յուրաքանչյուր ձևի և նրանց հետևը թագնված իրենց հիմքի մասին: Առաջինները անմիջականորեն վերարտադրվում են իրենք իրենց, իբրև մտածողության սովորական ձևեր, յերկրորդը կարող է հայտաբերվել միմիայն գիտական հետազոտության միջոցով: Կլասիկ քաղաքատնտեսությունը շատ է մոտենում իրերի ճշմարիտ դրության, սակայն գիտակցորեն չի ձևակերպում այն: Այդ բանը նա չի յել կարող անել առանց դեն նետելու իր բուրժուական մորթին[1]):

*Արտադրության կապիտալիստական յեղանակ ունեցող բոլոր յերկրներում բանվորական ուժը վարձատրվում է միայն այն բանից հետո, յերբ այն արդեն գործել է նրա գնման պայմանագրով հաստատված ժամկետի ընթացքում, օրինակ՝ յուրաքանչյուր շաբաթվա վերջին: Այսպիսով՝ ամենուրեք բանվորը կանխավճարում է կապիտալիստին իր բանվորական ուժի սպառողական արժեքը. Նա տրամադրում է գնողին սպառելու իր բանվորական ուժը նախքան նրա գինը վճարելը, մի խոսքով*, ամենուրեք բանվորը վարկավորում է կապիտալիստին:

*Վոր այդ վարկը մի դատարկ մտացածին բան չէ, ցույց է տալիս վո՛չ միայն այն, վոր վարկատուն կորցնում է իր աշխատավարձը կապիտալիստի սնանկանալու դեպքում, այլև ամբողջ մի շարք փաստեր, վորոնք ավելի յերկարատև ազդեցություն են գործում: Սակայն ապրանքափոխանակության իրեն բնույթը չի փոխվում այն բանից, թե ինչպես են գործում փողերը— արդյոք իբրև գնման միջո՞ց, թե՞ իբրև վճարման միջոց: Բանվորական ուժի գինը, տնից ազատվելու վարձավճարի նման, սահմանված է հենց պայմանագիրը կնքելու ժամանակ, թեև իրացվելու յե միայն հետագայում*: Բանվորական ուժն արդեն վաճառված է, թեև նրա վարձը կստացվի միայն ավելի ուշ: *Բայց տվյալ հարաբերությունն իր մաքուր կերպարանքով հետազոտելու համար, օգտակար է առժամանակ յենթադրել, թե բանվորական ուժի տերն այդ ուժի վաճառքի հետ միաժամանակ միշտ ստանում է նաև պայմանագրում վորոշված գինն իր ապրանքի համար*[2]):

---

[1]) Капитал I, стр. 520—524.

[2]) *Նույն տեղը*, *եջ* 144—145

# ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՁԵՎԵՐԸ

## Ա․ ԺԱՄԱՆԱԿԱՎԱՐՁ

*Աշխատավարձն ինքն իր հերթին շատ բազմազան ձևեր է ընդունում,* վորի մասին վո՛չ մի տեղեկություն չկա քաղաքատնտեսության ձեռնարկների մեջ, վորոնք կոպիտ կերպով շահագրգռված լինելով նյութով՝ արհամարհում են ձևի բոլոր տեսակի տարբերությունները: *Սակայն այդ բոլոր ձևերի հետազոտությունը վերաբերում է աշխատավարձի հատուկ ուսմունքին և, հետևաբար, ներկա աշխատության խնդիրը չէ: Այստեղ տեղին կլիներ միայն յերկու հիմնական ձևերի նկարագրությունը:*

*Ինչպես մենք հիշում ենք, բանվորական ուժը վաճառվում է միշտ վորոշ ժամանակամիջոցով:* Հետևաբար, «ժամանակավարձը», որինակ՝ որավարձը, շաբաթավարձը և այլն, հանդիսանում է այն փոխարկված ձևը, վորի մեջ անմիջականորեն արտահայտվում է բանվորական ուժի որական արժեքը, նրա շաբաթական արժեքը և այլն:

*Ամենից առաջ նկատենք, վոր բանվորական ուժի, գնի և հավելյալ արժեքի տասնհինգերորդ գլխում շարադրված փոփոխության որենքները փոխարկվում են աշխատավարձի որենքներին՝ պարզ ձևական կերպարանափոխության միջոցով: Նմանապես և բանվորական ուժի փոխանակային արժեքի և գոյության միջոցների մասսայի միջև յեղած տարբերությունը, վորոնց փոխարկվում է այն, պատկերանում է այժմ իբրև տարբերություն անվանական և ռեալ աշխատավարձի միջև: Ավելորդ բան կլիներ արտահայտման տվյալ մասնակի ձևի վերաբերմամբ կրկնել այն բոլորը, ինչ վոր շարադրվեց այդ որենքների վերաբերմամբ, նրանց հիմնական և եյական ձևով: Այդ պատճառով մենք կսահմանափակվենք մատնանշելով այն սակավաթիվ գծերը, վորոնք հատկապես բնորոշում են ժամանակավարձը:*

*Դրամական այն գումարը, վոր ստանում է բանվորն իր որական, շաբաթական և այլն աշխատանքի համար, կազմում է նրա անվանական աշխատավարձի գումարը, այսինքն՝ աշխատավարձի, վոր գնահատված է նրա արժեքի կողմից: Ակներև է, սակայն, վոր բանվորական որվա տևողությունից կախված, այսինքն՝ աշխատանքի որական մատակարարած քանակությունից կախված, մի և նույն որական, շաբաթական և այլն աշխատավարձը կարող է աշխատանքի շատ տարբեր գին ներկայացնել, այսինքն՝ շատ տարբեր դրամական գումարներ աշխատանքի միևնույն քանակության համար: Այդպիսով,* ժամանակավարձի բնագավառում անհրաժեշտ է հետագա տարբերությունը սահմանել աշխատավարձի, որինակ՝ որական, շաբաթական և այլն, ընդհանուր գումարի և աշխատանքի գնի միջև: *Բայց ինչպե՞ս գտնել այդ գինը, կամ աշխատանքի տվյալ քանակության դրամական արժեքը:* Մենք կստանանք աշխատանքի միջին գինը, յեթե բանվորական ուժի միջին որական արժեքը բաժանենք միջին բանվորական որվա ժամերի թվի վրա: *Դիցուք, որինակ, բանվորական ուժի որական արժեքը հավասար է 3 շիլլինգի, կամ 6 աշխատաժամում ստեղծված արժեքի, և դիցուք, բանվորական որը տևում է 12 ժամ. այն ժամանակ մի ժամվա աշխատանքի գինն* $= \frac{3 \text{ շիլ.}}{12} =$ *3 պ.:*

Այդ ձևով գտնված աշխատաժամի գինը ծառայում է իբրև աշխատանքի գինը չափելու միավոր:

Այստեղից հետևում է, վոր որական, շաբաթական և այլն աշխատավարձը կարող է անփոփոխ մնալ, չնայելով աշխատանքի գնի շարունակ ընկնելուն: *Այսպես, որինակ, յեթե սովորական բանվորական որը տևում է 10 ժամ, իսկ բանվորական ուժի որական արժեքը հավասար է 3 շիլլինգի, ապա աշխատաժամի գինն է* $3^3/_5$ *պ.: Վերջինս կիջնի մինչև 3 պ., յեթե բանվորական որն ավելանա մինչև 12 ժամ, և մինչև* $2^2/_5$ *պ., յեթե բանվորական որն աճի մինչև 15 ժամ: Այնուամենայնիվ որավարձն ու շաբաթավարձն անփոփոխ կմնան:* Ընդհակառակը, որավարձը կամ շաբաթավարձը կարող է ավելանալ, չնայելով այն հանգամանքին, վոր աշխատանքի գինն անփոփոխ է մնում և մինչև իսկ ընկնում է: *Այսպես, որինակ, տաս ժամվա բանվորական որվա և բանվորական ուժի որական արժեքը 3 շիլլինգ լինելու դեպքում, աշխատաժամի գինը կլինի* $^3/_5$ *պենս: Յեթե բանվորն աշխատանքն ավելանալու հետևանքով աշխատանքի միևնույն գնով սկսի աշխատել որական 12 ժամ, ապա նրա աշխատավարձը, առանց աշխատանքի գնի վորևէ փոփոխության, կավելանա մինչև 3 շ.* $7^1/_5$ *պենս: Նույն հետևանքը կստացվեր, յեթե ավելանար աշխատանքի վոչ թե եքստենսիվ, այլ ինտենսիվ մեծությունը:*

Այսպիսով, անվանական որավարձի կամ շաբաթավարձի բարձրացումը կարող է զուգընթաց լինել աշխատանքի գնի անփոփոխ մնալուն կամ նույնիսկ անկմանը: *Միևնույն բանը կարելի յե ասել բանվորական ընտանիքի յեկամուտների վերաբերմամբ, քանի վոր հոր մատակարարած աշխատանքի քանակությունը լրացվում է ընտանիքի մյուս անդամների աշխատանքով: Այսպիսով, գոյություն ունեն աշխատանքի գնի իջեցման մեթոդներ, վորոնք անկախ են անվանական որական կամ շաբաթական աշխատավարձի պակասեցումից:*

Ընդհանուր որենքն հետևյալն է. որական, շաբաթական և այլն աշխատանքի տվյալ քանակության դեպքում՝ որական կամ շաբաթական աշխատավարձի չափերը կախված են աշխատանքի գնից, վորն իր հերթին, փոխվում է բանվորական ուժի արժեքի փոփոխության կամ նրա գինը արժեքից շեղվելուն զուգընթաց: Յեթե, ընդհակառակը, տրված է աշխատանքի գինը, ապա որական կամ շաբաթական աշխատավարձը կախված է որական կամ շաբաթական աշխատանքի քանակությունից:

Ժամանակավարձի միավորը, կամ աշխատաժամի գինը բանվորական ուժի որական արժեքը սովորական բանվորական որվա ժամերի թվի վրա բաժանելուց ստացված քանորդն է:

*... Յեթե ժամավարձ է հաստատվում, այնպես վոր կապիտալիստի պարտավորությունն այն չէ, վորպեսզի վորոշ որավարձ կամ շաբաթավարձ*

վճարի, այլ միայն այն է, որպեսզի այն աշխատաժամերը վճարի, որոնց ընթացքում նրան հաճելի յե զբաղմունք տալ բանվորին, ապա կապիտալիստը կարող է բանվորի աշխատաժամանակը կրճատել, բանվորական օրվա այն չափերի համեմատությամբ, որոնք սկզբնապես ծառայել եյին ժամավարձ կամ աշխատանքի գինը չափելու միավորը որոշելու համար: Վորովհետև այդ միավորը որոշվում է.

$$\frac{\text{Բանվորական ուժի օրական արժեքը}}{\text{Տվյալ քանակութ. ժամ ունեցող բանվորական օրվա վրա}}$$ հարաբերությամբ,

ապա հասկանալի յե, վոր նա կորցնում է ամեն իմաստ, հենց վոր բանվորական օրը դադարում է իր մեջ վորոշ քանակությամբ ժամեր պարունակելուց: Հենց դրանով էլ վոչնչացվում է կապը վճարված և չվճարված աշխատանքի միջև: Կապիտալիստն այժմ կարող է բանվորներից վորոշ քանակությամբ հավելյալ աշխատանք կորզել, առանց աշխատաժամանակն այն մակարդակին հասցնելու, վորն անհրաժեշտ է բանվորների գոյությունը պահպանելու համար:

... Անող օրավարձի կամ շաբաթավարձի դեպքում՝ աշխատանքի գինը կարող է անվանական կերպով անփոփոխ մնալ և, չնայելով այդ հանգամանքին, ընկնել իր նորմալ մակարդակից ավելի ցած: Այդ բանը տեղի յե ունենում ամեն անգամ, յերբ աշխատանքի, այսինքն՝ աշխատաժամի հաստատուն գնի դեպքում, բանվորական օրը մեծանում է, անց է կենում իր սովորական տևողական սահմաններից: Յեթե $\frac{\text{բանվորական ուժի օրական արժեքը}}{\text{բանվորական օրը}}$ կոտորակի մեջ աճում է հայտարարը, ապա համարիչն աճում է է՛լ ավելի արագ: Բանվորական ուժի մաշումը, ապա հետևաբար, աճում է նաև բանվորական ուժի արժեքն, յեթե աճում է նրա գործունեյության տևողությունը, և այն էլ՝ նրա օրական արժեքը համեմատաբար չափով ավելի արագ է աճում, քան թե նրա գործունեյության տևողությունը: Դրա հետևանքով արտադրության շատ ճյուղերում, վորտեղ տիրապետում է ժամանակավարձը և բացակայում է աշխատաժամանակի օրենսդրական սահմանափակումը, բնականաբար, սովորություն մշակվեց բանվորական օրը նորմալ համարել մինչև մի վորոշ կետ, օրինակ, մինչև աշխատանքի տասերորդ ժամի վերջանալը (այսպես կոչված «normal working day», «the days work», կամ «the regular hours of work»): Այդ սահմանից այն կողմն անցնող աշխատաժամանակը կազմում է արտաժամանակը overtime և վարձատրվում է աշխատանքի յուրաքանչյուր ժամի հաշվով, ավելի բարձր գնահատությամբ, (extra pay), թեև այդ բարձրացումը հաճախ տեղի յե ունենում միանգամայն աննշան չափով: Նորմալ բանվորական օրն այստեղ կազմում է իսկական բանվորական օրվա մի կոտորակը, այն էլ հաճախ վերջինս ամբողջ տարվա ընթացքում առաջնից ավելի յերկար տևողություն ունի: Աշխատանքի գնի աճումը, բանվորական օրվա վորոշ նորմալ սահմանից այն կողմը յերկա-



րացնելու հետ, բրիտանական արդյունաբերության զանազան ճյուղերում այնպիսի բնույթ է կրում, վոր աշխատանքի ցած գինը այսպես կոչված նորմալ ժամանակի ընթացքում ստիպում է բանվորին աշխատելու ավելի լավ վարձատրվող արտաժամանակը, յեթե նա ընդհանրապես ուզում է բավականաչափ աշխատավարձ ստանալ:

...Հանրածանոթ է այն իրողությունը, վոր աշխատավարձն այնքան ավելի ցած է, վորքան բանվորական օրն ավելի յերկար է արդյունաբերության տվյալ ճյուղի մեջ: Գործարանային տեսուչ A. Redgrave-ը նկարագրում է այդ արտադրությունների համեմատական պատկերով 1839–1859 թ. թ. քսանամյակի մեջ, ըստ վորում բանից դուրս է գալիս, վոր այն գործարաններում, վորոնց վրա տարածվում է տասը ժամվա օրենքի ներգործությունը, աշխատավարձը բարձրացել է, մինչդեռ այն գործարաններում, վորոնք օրական 14–15 ժամ են աշխատում, աշխատավարձն իջել է:

Վերևում մենք ձևակերպեցին հետևյալ օրենքը. աշխատանքի տվյալ գնի դեպքում օրական կամ շաբաթական աշխատավարձը կախված է տրված աշխատանքի քանակությունից: Այդ օրենքից բղխում է, ամենից առաջ, վոր վորքան ավելի ցած է աշխատանքի գինը, այնքան աշխատանքի ավելի մեծ քանակություն կամ առավել ևս յերկարատև բանվորական օր է պահանջվում նրա համար, վորպեսզի բանվորն ապահովված լինի թեկուզ ամենավողորմելի միջին վարձով: Աշխատանքի գնի ցած մակարդակը մղում է դեպի աշխատաժամանակի յերկարացումը:

Բայց և, ընդհակառակը, աշխատաժամանակի յերկարացումը իր կողմից առաջ է բերում աշխատանքի գնի իջեցում, իսկ դրա հետ միասին նաև օրավարձի կամ շաբաթավարձի իջեցում:

$$\text{Աշխատանքի գինը} \; \frac{\text{բանվորական ուժի օրական արժեքը}}{\text{Տվյալ քանակությամբ ժամեր ունեցող բանվորական օրը}}$$

կոտորակով վորոշելուց բղխում է, վոր բանվորական օրվա յերկարացումն ինքն ըստինքյան իջեցնում է աշխատանքի գինը, քանի վոր վո՛չ մի փոխհատուցում տեղի չի ունենում: Բայց հենց այն հանգամանքները, վորոնք թույլ են տալիս կապիտալիստին յերկար ժամանակով յերկարացնել բանվորական օրը, թույլ են տալիս նրան, իսկ վերջիվերջո նաև հարկադրում են նրան՝ իջեցնել աշխատանքի գինը նաև անվանական կերպով, մինչև վոր իջնի աճած աշխատաժամերի թվի միագումար գինը, այսինքն՝ օրավարձը կամ շաբաթավարձը:

...Կապիտալիստին հայտնի չէ, վոր աշխատանքի նորմալ գինը նույնպես չվճարված աշխատանքի վորոշ քանակություն է յենթադրում, և վոր այդ չվճարված աշխատանքն է կազմում նրա շահույթի նորմալ աղբյուրը: Հավելյալ աշխատաժամանակի կատեգորիան նրա համար ընդհանրապես գոյություն չունի, վորովհետև հավելյալ աշխատաժամանակը պարփակված է նորմալ բանվորական օրվա մեջ, վորի համար կապիտալիստն, իր կարծիքով, ամբողջությամբ վճարում է օրավարձով: Բայց նրա համար գոյու-

թյուն ունի արտաժամանակը, բանվորական օրվա յերկարացումը այն սահմաններից դենը, վորոնք համապատասխանում են աշխատանքի սովորական գնին: Նա պնդում է մինչև անգամ այդ գերժամանակը հավելյալ կերպով վճարելու վրա ( extra pay ), յերբ խնդիրը վերաբերում է նրա մրցակիցներին, վորոնք ապրանքի գինը նրա սովորական մակարդակից ել ավելացած են իջեցնում: Բայց նա դարձյալ չգիտե, վոր այդ ավելադիր վարձատրությունը նույն չափով կապված է չվճարված աշխատանքի հետ, ինչպես սովորական աշխատաժամի գինը: Որինակ, դիցուք, թե 12 ժամվա բանվորական օրվա մի ժամի գինը 3 պենս է, այսինքն հավասար է այն արժեքին, վոր արտադրվում է ½ ժամվա աշխատանքով, իսկ արտաժամյա աշխատաժամի գինը 4 պենս է, այսինքն՝ հավասար է այն արժեքին, վոր արտադրվում է ⅔ աշխատաժամում: Այդ ժամանակ կապիտալիստն առաջին դեպքում անվճար կերպով յուրացնում է ½ աշխատաժամ, յերկրորդ դեպքում—⅓[1]):

## Բ. ՀԱՏԱՎԱՐՁ

Հատավարձը ժամանակավարձի միայն փոխարկված ձևն է, ճիշտ այնպես, ինչպես վոր ժամանակավարձն էլ բանվորական ուժի արժեքի կամ գնի փոխարկված ձևն է:

Հատավարձի վրա առաջին անգամ հայացք ձգելիս կարող է այնպես թվալ, թե տվյալ դեպքում բանվորի վաճառած սպառողական արժեքը հանդիսանում է վո՛չ թե բանվորական ուժի ֆունկցիան, վո՛չ թե կենդանի աշխատանքը, այլ արդյունքի մեջ արդեն իրայնացած աշխատանքը, և թե՝ այդ աշխատանքի գինը վորոշվում է վո՛չ թե

բանվորական ուժի օրական արժեքը ____ կոտորակով, ինչպես ժա
ժամերի տվյալ թիվ ունեցող բանվորական օրը
մանակավարձի դեպքում, այլ արտադրողի գործունակությամբ:

Այդպիսի հայացքի ճշտության մասին ունեցած վստահությունը պետք է սաստիկ խախտվեր՝ արդեն միայն այն փաստը նկատի ունենալով, վոր աշխատավարձի այդ յերկու ձևերն էլ միաժամանակ գոյություն ունեն արդյունաբերության միևնույն ճյուղերում: Այդպես, որինակ, Լոնդոնի գրաշարները սովորաբար գործավարձ են ստանում. ժամանակավարձը բացառություն է նրանց մեջ: Ընդհակառակը, գավառական գրաշարների մոտ ժամանակավարձը կանոնն է, հատավարձը— բացառություն: Լոնդոնի նավահանգստի նավային ատաղձագործները գործավարձ են ստանում, մյուս բոլոր անգլիական նավահանգիստներում— «ժամանակավարձ»: Լոնդոնում միևնույն թամբագործական արհեստանոցներում ֆրանսիացիների աշխատանքը վճարվում է հաճախ հատի հաշվով, անգլիացիների աշխատավարձը— օրվա հաշվով:

1) Маркс, Капитал I, стр. 524—532



Ֆաբրիկաներում, այդ բառի խիստ իմաստով վերցրած, վորտեղ ընդհանրապես առած տիրում է գործավարձը, առանձին բանվորական ֆունկցիաներ տեխնիկական նկատառումներով դուրս են հանվում այդ գնահատությունից և վճարվում են ժամանակի հաշվով: Ակներև է, համենայն դեպս, վոր տարբերությունները աշխատավարձի վճարման ձևերի մեջ ինքն ըստինքյան ամենևին չեն փոխում նրա եյությունը, թեկուզ այդ ձևերից մեկը ավելի բարենպաստ լիներ կապիտալիստական արտադրության զարգացման համար, քան թե մյուսը:

Դիցուք՝ սովորական բանվորական օրը բաղկացած է 12 ժամից, վորոնցից 6 ժամը վճարված է, իսկ 6-ը չվճարված: Այդ օրվա ընթացքում արտադրված արժեքը, դիցուք, հավասար է 6 շիլլինգի, հետևաբար, մի աշխատաժամում արտադրված արժեքը—6 պենս է: Յենթադրենք, թե փորձը հետո ցույց տվեց, վոր ինտենսիվության ու հմտության միջին աստիճանով աշխատող բանվորը, հետևաբար, արդյունքի արտադրության վրա միայն հանրորեն—անհրաժեշտ աշխատաժամանակը գործադրող բանվորը 12 ժամ. ընթացքում 24 կտոր արդյունք է արտադրում, ըստ վորում տվյալ դեպքում նշանակություն չունի, թե այդ վերջիններն արդյոք առանձին եկզեմպլյարներ են, թե՞ անբաժանելի արդյունքի չափելի մասեր: Այդ պայմաններում՝ այդ 24 կտորի արժեքը հանելով հաստատուն կապիտալի նրանց մեջ պարունակված մասը, կլինի 6 շիլլինգ, յուրաքանչյուր առանձին հատի արժեքը—3 պենս: Բան–վորն ստանում է հատին 1½ պենս և, հետևաբար, 12 ժամում դատում է 3 շիլլինգ: Այնպես, ինչպես վոր ժամանակավարձի ժամանակ նշանակություն չունի, յենթադրո՞ւմ ենք մենք արդյոք, թե բանվորը 6 ժամ աշխատում է իրեն և 6 ժամ կապիտալիստի համար, թե՝ նա յուրաքանչյուր ժամը կեսն իրեն համար է աշխատում, իսկ մյուս կեսը կապիտալիստի,— ճիշտ այդպես էլ այստեղ մենք միևնույն իրավունքով կարող ենք ասել, թե յուրաքանչյուր առանձին կտորը կիսով չափ վճարված է, կիսով չափ չի վճարված, կամ թե 12 հատի գինը լոկ հատուցանում է բանվորական ուժի արժեքը, մինչդեռ մյուս 12 հատի գինը մարմնացնում է իր մեջ հավելյալ արժեքը:

Հատավարձի ձևը նույնքան իռացիոնալ է, վորքան և ժամանակավարձի ձևը: Այդպես, որինակ, յերկու կտոր ապրանքը ներկայացնում են մեկ բանվորական ժամի արդյունք, և, հետևաբար, արտադրության սպառած միջոցների արժեքը հանելով, արժեքն 6 պենս, մինչդեռ բանվորն ստանում է նրանց համար միայն 3 պենս: Իրականության մեջ հատավարձն իրենով անմիջականորեն չի արտահայտում արժեքի վո՛չ մի հարաբերություն: Այստեղ վո՛չ թե ապրանքի հատի արժեքն է չափվում նրա մեջ մարմնացած բանվորական ժամանակով, այլ, ընդհակառակը, բանվորի թափած աշխատանքը չափվում է ապրանքի նրա արտադրած հատերի քանակությամբ: Ժամանակավարձի ժամանակ աշխատանքն անմիջականորեն չափվում է իր տևողությամբ, հատավարձի ժամանակ— այն արդյունքի քանակությամբ, վորի մեջ խտացել է վորոշ տևողություն ունեցող աշխատանքը: Աշխատաժամանակի իրեն գինը

վերջիվերջո վորոշվում է հետևյալ հավասարությամբ. օրական աշխատանքի արժեքը=բանվորական ուժի օրական արժեքին: Այդպիսով՝ հատավարձը միայն ժամանակավարձի ձևափոխված (փոխարկված) ձևն է:

...Քանի վոր գոյություն ունի հատավարձը, բանվորի անձնական շահը պահանջում է, իհարկե, բանվորական ուժի ըստ հնարավորության ավելի ինտենսիվ լարում, վորն, իր հերթին, կապիտալիստի համար հեշտացնում է ինտենսիվության նորմալ մակարդակի բարձրացումը: Ճիշտ նմանապես և բանվորի անձնական շահը դրդում է նրան յերկարացնելու իր բանվորական օրը, վորովհետև հենց դրանով բարձրանում է նրա օրական կամ շաբաթական աշխատավարձը: Այդ բանն ռեակցիա յե առաջացնում, վոր մենք նկարագրեցինք ժամանակավարձի հետազոտության ժամանակ, եվ չխոսելով այն մասին, վոր բանվորական օրվա յերկարացումը, նույնիսկ մշտական հատավարձի ժամանակ, անխուսափելի կերպով կապված է աշխատանքի գնի անկման հետ:

Ժամանակավարձի դեպքում սակավ բացառություններով տիրապետում է միատեսակ վարձը միատեսակ ֆունկցիաների համար. հատավարձի ժամանակ, ճիշտ է, աշխատաժամանակի գինը չափվում է արդյունքի վորոշ քանակությամբ, բայց օրավարձն ու շաբաթավարձը փոխվում է բանվորների միջև յեղած անհատական տարբերություններից կախված, վորոնցից մեկը տվյալ ժամանակամիջոցում տալիս է արդյունքի նվազագույնը, մյուսը— միջին նորման, յերրորդը—միջին նորմայից ավելին: Այդպես ուրեմն, բանվորի իսկական յեկամտի մեծությունը տվյալ դեպքում սաստիկ տատանվում է, նայելով անհատական բանվորների հմտության, ուժի, եներգիայի, դիմացկունության մակարդակին և այլն: Իհարկե, այդ բանն ամենևին չի փոխում կապիտալի և վարձու աշխատանքի միջև յեղած ընդհանուր հարաբերությունը: Նախ՝ անհատական տարբերությունները հարթվում են, յեթե վերցնենք արհեստանոցն իբրև ամբողջություն, այնպես վոր այդ վերջինը վորոշ աշխատաժամանակի ընթացքում մատակարարում է արդյունքի միջին քանակություն, և արհեստանոցի բանվորներին տրված ամբողջական աշխատավարձը հանդիսանում է միջին աշխատավարձը արտադրության տվյալ ճյուղում: Յերկրորդ՝ աշխատավարձի և հավելյալ արժեքի միջև յեղած հարաբերությունն անփոփոխ է մնում, վորովհետև առանձին բանվորի անհատական վարձին համապատասխանում է հավելյալ արժեքի անհատաբար նրա արտադրած վորակը: Հատավարձը, ընդլայնելով անհատական գործունեյության վոլորտը, հենց դրանով, մի կողմից, նպաստում է անհատականության, ազատության վոգու, ինքնուրույնության և ինքնավերահսկողության ընդունակության զարգացմանը բանվորների մեջ. բայց, մյուս կողմից, նրանց միջև փոխադարձ մրցակցություն է առաջացնում: Այդ պատճառով եվ նա տենդենց ունի բարձրացնելու անհատական աշխատավարձը միջին մակարդակից ավելի բարձր և միևնույն ժամանակ իջեցնելու հենց այդ մակարդակը: Սակայն այնտեղ, վորտեղ վորոշ հատավարձ ամրապես հաստատված է յեր-



կարատև տրադիցիաներով, և այդ պատճառով նրա իջեցումը առանձին դըժվարություններ է ներկայացնում,—այդպիսի բացառիկ դեպքերում տերերը յերբեմն դիմում են հատավարձը բռնությամբ ժամանակավարձի փոխարկելու միջոցին: Դրանից առաջացավ, օրինակ, 1860 թվին ժապավենի արտադրության բանվորների մեծ գործադուլը Կովենտրիում: Վերջապես, հատավարձը—վերևում նկարագրած ժամային սիստեմի գլխավոր հենարանն է:

Վերևում բոլոր ասածներից բղխում է, վոր հատավարձը աշխատավարձի այն ձևն է, վորն ամենից ավելի յե համապատասխանում արտադրության կապիտալիստական յեղանակին: Ամենևին նոր բան չլինելով,—հատավարձը ժամանակավարձի կողքին պաշտոնապես հանդես է գալիս միջիայլոց XIV դարի ֆրանսիական և անգլիական օրենքներում բանվորների մասին,—նա, սակայն, գործադրության ավելի կամ պակաս լայն ասպարեզ է ձեռք բերում միայն իսկական մանուֆակտուրային շրջանում: 1797—1815 թ. թ. գարաշրջանում, յերբ խոշոր արդյունաբերությունն ապրում էր մրրկի և հույզերի յերիտասարդական կյանքը, նա իբրև լծակ ծառայեց՝ աշխատաժամանակն յերկարացնելու և ժամանակավարձն իջեցնելու համար:

...Քանի վոր փոխվում է աշխատանքի արտադրողականությունը, ապա փոխվում է նաև այն բանվորական ժամանակը, վոր ներկայացնում է արդյունքի միևնույն քանակությամբ: Հետևաբար, փոխվում է նաև հատավարձը, վորովհետև նա արտահայտում է վորոշ բանվորական ժամանակի գինը: Վերևում բերված մեր օրինակի մեջ 24 կտոր արդյունքն արտադրվում էր 12 ժամվա ընթացքում, 12 ժամվա ընթացքում նոր արտադրված արժեքը 6 շիլլինգ էր, բանվորական ուժի օրական արժեքը՝ 3 շիլլինգ, բանվորական ժամի գինը՝ 3 պենս և աշխատավարձը 1½ պենս հատի համար: Ապրանքի ամեն մի հատը պարունակում էր իր մեջ ½ բանվորական ժամ: Յեթե միևնույն բանվորական օրը սկսե 24-ի փոխարեն 48 հատ արդյունք տալ, օրինակ, աշխատանքի արտադրողականության կրկնապատկման հետևանքով, և յեթե մյուս բոլոր պարագաները չփոխվեն, ապա հատավարձը 1½ պենսից կիջնի մինչև ¾ պենս, վորովհետև յուրաքանչյուր հատը այժմ վո'չ թե ½ բանվորական ժամ է ներկայացնում, այլ միայն նրա ¼-ը, 1½ պ.×24=3 շիլլինգ, և ¾ պ.×48=3 շիլլինգ: Ուրիշ խոսքով՝ հատավարձն իջնում է հենց նույն այն հարաբերությամբ, վորով աճում է տվյալ ժամանակի ընթացքում արտադրված ապրանքի հատերի թիվը, և, հետևաբար, հենց այն իսկ հարաբերությամբ, վորով պակասում է միևնույն հատի վրա ծախսված բանվորական ժամանակը: Թեև այդ շրջանակներում հատավարձի փոփոխությունը զուտ անվանական է, այնուամենայնիվ նա պայքարի մշտական աղբյուր է ծառայում կապիտալիստի և բանվորի միջև. կամ այն պատճառով, վոր կապիտալիստն օգտվում է հատավարձի անվանական իջեցումից իբրև մի առիթից՝ աշխատանքի գինն. իսկապես իջեցնելու համար, կամ այն պատճառով, վոր աշխատանքի արտադրողական ուժի բարձրացմանն ուղեկցում է նրա ինտենսիվության բարձրացումը կամ թե՝ այն պատճառով, վոր

բանվորը լուրջ է ընդունում հատավարձի արտաքին ձևը, յերևակայելով, թե այդ դեպքում վճարվում է նրա աշխատանքի արդյունքի և վոչ թե նրա բանվորական ուժի համար, և դրա համար էլ դիմադրում է աշխատավարձի ամեն մի իջեցման, քանի վոր նրան զուգահեռ չի ընդունում ապրանքի վաճառքի գնի համապատասխան իջեցում:¹)

## ԱՆՎԱՆԱԿԱՆ ՅԵՎ ԻՐԱԿԱՆ, ԲԱՑԱՐՁԱԿ ՅԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

...Աշխատավարձը չի կարելի վորոշել միայն ապրանքների այն քանակությամբ, վոր ստացվում է նրա հետ փոխանակվելով: Պետք է նկատի ունենալ նաև ուրիշ հանգամանքներ:

Բանվորներն անմիջականորեն ստանում են իրենց աշխատանքի համար վո՛չ թե ապրանքներ, այլ վորոշ դրամական գումար: Արդյոք աշխատավարձը լիովին վորոշվո՞ւմ է միայն այդ դրամական գումարով:

XVI դարում Յեվրոպայում շրջանառության մեջ գտնվող վոսկու և արծաթի քանակությունը զգալի չափով ավելացավ շնորհիվ ավելի հարուստ և ավելի մատչելի ամերիկական հանքերի հայտնագործման: Դրա հետևանքով վոսկու և արծաթի արժեքն ընկավ մնացած ապրանքների արժեքի համեմատությամբ: Բանվորները շարունակում եյին իրենց բանվորական ուժի համար նույն քանակությամբ կորած վոսկի և արծաթ ստանալ, ինչպես և առաջ: Նրանց աշխատանքի դրամական գինը չփոխվեց, իսկ նրանց աշխատավարձն այնուամենայնիվ ընկավ, վորովհետև միևնույն քանակությամբ արծաթի փոխարեն նրանք սկսեցին ավելի պակաս քանակությամբ ապրանք ստանալ: Այդ եր այն հանգամանքներից մեկը, վորոնք նպաստում եյին կապիտալի աճմանը և բուրժուազիայի հզորության զարգացմանը XVI դարում:

Վերցնենք մի ուրիշ դեպք:

1847 թվականի ձմեռը, անբերրիության հետևանքով, զգալի չափով բարձրացան ամենաանհրաժեշտ կենսամթերքների՝ հացի, մսի, յուղի, պանրի և այլն գները: Մի՞թե բանվորների աշխատավարձը չպակասեց, յեթե նրանք շարունակում եյին իրենց բանվորական ուժի համար նույնքան փող ստանալ: Իհարկե, պակասեց: Միևնույն քանակությամբ փողով նրանք սկսեցին ավելի քիչ հաց, միս և այլն ստանալ: Նրանց աշխատավարձը պակասեց վոչ այն պատճառով, վոր արծաթի արժեքն իջավ, այլ այն պատճառով, վոր բարձրացավ կենսամիջոցների արժեքը:

Յենթադրենք, վերջապես, թե նոր մեքենաներ մտցնելու շնորհիվ, բարենպաստ կլիմայական պայմանների շնորհիվ և այլն, ընկան արդյունաբերության և հողագործության բոլոր արդյունքների գները, իսկ բանվորական ուժի դրամական գինը մնաց նույնը: Այժմ բանվորները կարող են միևնույն

¹) Капитал I, стр. 532—540



փողով ավելի շատ ամեն տեսակ ապրանք գնել: Հետևաբար, նրանց աշխատավարձը բարձրացավ հատկապես այն պատճառով, վոր նրա դրամական գինը չփոխվեց:

Այսպիսով, աշխատանքի դրամական գինը, կամ անվանական աշխատավարձը չի համատեղվում իրական աշխատավարձի հետ, այսինքն՝ ապրանքների այնպիսի քանակության հետ, վոր կարելի յե իսկապես ձեռք բերել աշխատավարձի փոխանակությամբ: Այդ պատճառով, խոսելով աշխատավարձի բարձրացման կամ անկման մասին, մենք պետք է նկատի ունենանք, վո՛չ միայն աշխատանքի դրամական գինը կամ անվանական աշխատավարձը, այլ նաև իրական աշխատավարձը:

Բայց վո՛չ անվանական, վո՛չ էլ իրական աշխատավարձով չեն սպառվում այն պայմանները, վորոնք վորոշում են աշխատավարձը:

Ամենից առաջ՝ կարևոր է աշխատավարձի հարաբերությունը կապիտալիստի շահի վերաբերմամբ—այսպես կոչված հարաբերական աշխատավարձը:

Իրական աշխատավարձը արտահայտում է աշխատանքի գնի հարաբերությունը դեպի մյուս ապրանքների գները, իսկ հարաբերական աշխատավարձն, ընդհակառակը, արտահայտում է արժեքները կուտակված աշխատանքի, այսինքն՝ կապիտալի բաժնի նկատմամբ:

Մենք արդեն գիտենք, վոր աշխատավարձը բանվորի բաժինը չէ իր արտադրած ապրանքի մեջ. աշխատավարձն արդեն գոյություն ունեցող ապրանքի մի մասն է, վորով կապիտալիստը գնում է արտադրողական բանվորական ուժի վորոշ քանակություն: Բայց կապիտալիստը պետք է իրեն համար փոխհատուցե այդ աշխատավարձն այն գնից, վորով նա վաճառում է բանվորների արտադրած արդյունքը, և այն էլ փոխհատուցի այնպես, վոր պետք է նրա մոտ ավելցուկ ևս մնա արտադրության ծախքերի նկատմամբ, այն է՝ շահույթ: Այն գինը, վորով վաճառվում է արտադրած ապրանքը, կապիտալիստի համար բաժանվում է յերեք մասի. առաջինը գնում է հում նյութի և մեքենաների մաշված մասի, ինստրումենտների և աշխատանքի այլ գործիքների գնի փոխհատուցման համար. յերկրորդը փոխհատուցում է տրված աշխատավարձը, իսկ յերրորդը ներկայանում է ծախքերից դուրս ստացված ավելցուկը,—կապիտալիստի շահույթը:

Առաջին մասը փոխհատուցում է արդեն առաջ գոյություն ունեցող արժեքները: Իսկ աշխատավարձի և կապիտալիստի շահույթի փոխհատուցումը ընդհանուր առմամբ կատարվում է բանվորի աշխատանքով ստեղծված և արտադրության միջոցներով տրված նոր արժեքի հաշվին: Այդ պատճառով, աշխատավարձն ու շահույթը համեմատելու հնարավորություն ունենալու համար՝ մենք իրավունք ունենք քննարկել նրանց իբրև բանվորի աշխատանքի արդյունքի մասեր:

Իրական աշխատավարձը կարող է անփոփոխ մնալ կամ մինչև անգամ աճել, մինչդեռ հարաբերականը կարող է միևնույն ժամանակ իջնել: Յենթա-

դրենք, օրինակ, թե կենսամիջոցների գներն իջել են յերկու յերրորդով, իսկ դրական աշխատավարձը—ընդամենը մի յերրորդով, ասենք՝ 3-ից մինչև 2 ռուբլի: Թեև բանվորը կարող է այդ 2 ռուբլով ավելի շատ ապրանք ձեռք բերել, քան թե առաջ 3 ռուբլով, այնուամենայնիվ նրա աշխատավարձն իջել է կապիտալիստի շահույթի համեմատությամբ: Կապիտալիստի շահույթն ավելացավ 1 ռուբլով, այսինքն՝ բանվորին նա վճարում է ավելի քիչ քանակությամբ փոխանակային արժեքներ, իսկ բանվորը պարտավոր է ավելի շատ արտադրել: Կապիտալի բաժինն ավելացավ աշխատանքի բաժնի համեմատությամբ: Հասարակական հարստության բաշխումը կապիտալի և աշխատանքի միջև ե՛լ ավելի անհամաչափ դարձավ: Կապիտալիստն իր տրամադրության տակ ավելի մեծ քանակությամբ աշխատանք ունի նույն կապիտալով: Կապիտալիստների դասակարգի իշխանությունը բանվոր դասակարգի վրա—աճեց: Բանվորի հասարակական դրությունը վատթարացավ, կապիտալիստի դրությունից մի աստիճան ել ցած իջավ:

Վորն է այն ընդհանուր օրենքը, վորը վորոշում է աշխատավարձի և շահույթի բարձրացման և անկման միջև յեղած փոխհարաբերությունը·

**Աշխատավարձն ու շահույթը հակադարձ հարաբերության մեջ են գըտնվում միմյանց հետ: Կապիտալի բաժինը—շահույթը—աճում է հենց այն աստիճանով, վորով ընկնում է աշխատանքի բաժինը—աշխատավարձը—և ընդհակառակն: Շահույթն ավելանում կամ պակասում է այն չափով, վորով ընկնում կամ բարձրանում է աշխատավարձը:**

Ճիշտ է, կարելի յե առարկել, թե կապիտալիստը կարող է շատ շահույթ վաստակել իր արդյունքները շահավետ կերպով փոխանակելու հետևանքով, իր ապրանքի պահանջն ուժեղացնելու հետևանքով,—նոր շուկաներ բացվելու կամ հներն ընդլայնելու շնորհիվ և այլն,—և թե, այդպիսով, կապիտալիստի շահույթը կարող է աճել շնորհիվ այն հանգամանքի, վոր մյուս կապիտալիստները վնասի մեջ ընկնեն, անկախ աշխատավարձի տատանումներից, բանվորական ուժի փոխանակային արժեքից կամ թե չէ կապիտալիստի շահույթը կարող է ավելանալ գործիքների կատարելագործման, բնության նոր ուժերի գործադրության շնորհիվ և այլն:

Բայց այդ դեպքում էլ հարկ կլինի ընդունել, վոր միևնույն հետևանքը կստացվի, թեկուզ և այն հակադիր ճանապարհով ձեռք բերվի: **Ճիշտ է, շահույթն ավելացավ վոչ այն պատճառով, վոր աշխատավարձն իջավ, այլ աշխատավարձն ընկավ այն պատճառով, վոր շահույթն ավելացավ:** Կապիտալիստըն ավելի մեծ քանակությամբ փոխանակային արժեքներ ձեռք բերեց ուրիշի աշխատանքի միևնույն քանակությամբ, ավելի թանգ չվճարելով այդ աշխատանքի համար: Հետևաբար, վարձատրությունն առաջվանից ավելի եժանացավ, համեմատած այն զուտ շահույթի հետ, վոր այն բերում է կապիտալիստին:

Հիշենք նաև, վոր ապրանքի միջին գինը,—այն հարաբերությունը, վորով նա փոխանակվում է այլ ապրանքների հետ,—վորոշվում է արտադրու-



թյան ծախքերով, առանց նկատի առնելու ապրանքային գների տատանումները: Այդ պատճառով էլ ընդհանուր առմամբ հավասարակշռվում են այն օգուտները, վոր կապիտալիստների մի մասն ստանում է մյուսների հաշվին:

Մեքենաների կատարելագործումը և բնության ուժերի արտադրողական գործադրության նոր յեղանակները հնարավորություն են տալիս միևնույն բանվորական ժամանակում աշխատանքի և կապիտալի միևնույն քանակության միջոցով ավելի մեծ քանակությամբ արդյունքներ ստեղծել, բայց ամենևին վոչ ավելի մեծ քանակությամբ փոխանակային արժեքներ: Յեթե յես մանող մեքենայի ոգնությամբ սկսեմ մի ժամում յերկու անգամ ավելի մանվածք պատրաստել, քան թե ձեռքով աշխատելիս,—ասենք՝ 100 ֆունտ, 50-ի փոխարեն,—ապա յես այդ 100 ֆնտի համար ավելի շատ ապրանք չեմ ստանա, քան թե առաջ 50-ի համար, վորովհետև արտադրության ծախքերը կիսով չափ պակասեցին, և յես նույն ծախքերն անելով՝ կարող եմ կրկնակի քանակությամբ արդյունքներ պատրաստել:

Վերջապես, ինչպես էլ վոր բաշխելու լինի միմյանց միջև կապիտալիստների դասակարգը— մի յերկրի բուրժուազիան, թե ամբողջ աշխարհի—արտադրության զուտ յեկամուտը, այդ յեկամտի ընդհանուր գումարն այն արժեքն է հանդիսանում, վոր կենդանի աշխատանքն ավելացրեց կուտակվածի վրա: Այդ ընդհանուր գումարն ավելանում է այն չափով, վոր չափով աշխատանքը մեծացնում է կապիտալը, այսինքն՝ վորչափով շահույթն աճում է աշխատավարձի հաշվին:

**Այդպիսով, մենք տեսնում ենք, վոր մինչև իսկ կապիտալի և վարձու աշխատանքի միջև յեղած հարաբերությունների սահմաններում՝ մեկի և մյուսի շահերը ուղղակի հակադիր են միմյանց:**

**Կապիտալի արագ աճումը հավասարազոր է շահույթի արագ աճմանը: Բայց շահույթը կարող է արագ աճել այն պայմանով միայն, յեթե արագությամբ ընկնում է աշխատանքի գինը,—հարաբերական աշխատավարձը:** Վերջինս կարող է ընկնել մինչև անգամ այն ժամանակ, յերբ բարձրանում է ինչպես իրական, այնպես և անվանական աշխատավարձը, միայն թե վոչ այն չափով, ինչպես շահույթը: Յեթե, օրինակ, արդյունաբերության ծաղկման շրջանում աշխատավարձը բարձրացել է 5%-ով, իսկ շահույթը—30%-ով, ապա հարաբերական աշխատավարձը չի ավելացել, այլ պակասել է:

**Հետևաբար, յեթե կապիտալի արագ աճման դեպքում ավելանում է բանվորի յեկամուտը, ապա միևնույն ժամանակ ընդարձակվում է նաև այն հասարակական անդունդը, վոր նրան բաժանում է կապիտալիստից, աճում է կապիտալի իշխանությունն աշխատանքի վրա, աշխատանքի կախումը կապիտալից:**

Յերբ ասում են, թե բանվորը շահագրգռված է կապիտալի արագ աճումով, այդ նշանակում է, թե վորքան ավելի արագությամբ բանվորն ավելացնե ուրիշի հարստությունը, այնքան ավելի յուղալի փշրանքներ նրան բաժին կընկնեն, այնքան ավելի շատ բանվորներ կարող են զբաղմունք ունե-

նալ, այնքան ավելի շուտ կարող է ավելանալ կապիտալից կախված ստրուկների թիվը։

Այսպես ուրեմն, մենք կարող ենք հետևյալ յեզրակացությունները անել․

Մինչև անգամ բանվոր դասակարգի համար ամենաբարենպաստ վիճակը և կապիտալի ամենաարագ աճումը, վորքան էլ նրանք բարելավեն բանվորի նյութական դրությունը, չեն կարող վոչնչացնել նրա շահերի և կապիտալիստի շահերի միջև յեղած հակադրությունը։ Շահույթի և աշխատավարձի միջև շարունակում է գոյություն ունենալ հակառակ համեմատական կախումը։

Վորքան էլ բարձրանա աշխատավարձը կապիտալի արագ աճման դեպքում, շահույթի աճման տեմպը անհամաչափ ավելի արագ է։

Բանվորի նյութական դրությունը բարելավվում է ի հաշիվ հասարակական դրության․ ընդարձակվում է այն անդունդը, վոր բաժանում է նրան կապիտալիստից։ Վերջապես, մինչև անգամ այն հանգամանքը, վոր վարձու աշխատանքի համար ամենաբարենպաստ պայման է հանդիսանում կապիտալի արտադրողականության արագ աճումը, նշանակում է միայն այն, վոր քանի բանվոր դասակարգն ավելի յեռանդուն կերպով աշխատի իրեն թշնամական ուժը, ոտարի իրեն վրա իշխող հարստությունը բազմապատկելու և ավելացնելու վրա, այնքան ավելի նպաստավոր կլինեն այն պայմանները, վորոնց առկայության դեպքում նրան թույլ է տրվում աշխատելու բուրժուական հարստությունն ավելացնելու վրա, կապիտալի իշխանությունն ուժեղացնելու վրա․ այսինքն՝ նրան թույլ է տրվում կռելու այն վոսկե շղթաները, վորոնցով բուրժուազիան տանում է նրան իր հետևից։1)

Գերմանիայի Տնտեսական Խորհուրդը, Անտանտի որգանը, ամբողջ աշխարհի կապիտալիստների որգանը այսպիսի հանրագումարներ տվեց։ Արդյունքների գները բարձրացան միջին հաշվով՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում 120%-ով, իսկ աշխատավարձն այնտեղ աճեց միայն 100%-ով։ Անգլիայում—արդյունքները՝ 170%-ով, աշխատավարձը՝ 130%-ով։ Ֆրանսիայում—արդյունքների գները՝ 300%-ով, աշխատավարձը՝ 60%-ով (յես գումարում եմ ընկ․ Բրաունի թվերը նրա վերոհիշյալ բրոշյուրի մեջ և Գերմանիայի Տնտես․ Խորհրդի թվերը «Times» լրագրից, 1920 թ․ մարտի 10-ին)։

Պարզ բան է, վոր այդպիսի դրության ժամանակ բանվորների վրդովմունքի աճումը, հեղափոխական տրամադրությունների և գաղափարների աճումը, տարերային մասսայական գործադուլների աճումն անխուսափելի յե։ Վորովհետև բանվորների դրությունն անտանելի յե դառնում։ Բանվորները փորձով համոզվում են, վոր կապիտալիստները չափազանց հարստացել են պատերազմի շնորհիվ և ծախսերն ու պարտքերը գցում են բանվորների ուսերին։2)

Բանվորական ուժի պահանջի և առաջարկի միջև յեղած հարաբերու-

1) Маркс «Наемн. труд и капитал», изд. 1931 г., стр. 34—39.

1) Ленин, собр. соч. т. XVII, стр. 258



թյունը, նրա հետ միասին նաև բանվորական ուժի շուկայական գները շարունակ փոփոխության են յենթարկվում։ Յերբ պահանջը գերակշռում է առաջարկությանը, ապա աշխատավարձը բարձրանում է, յերբ առաջարկն է գերակշռում պահանջին, ապա այն իջնում է,—թեկուզ մինչև անգամ պահանջի և առաջարկի միջև իսկական հարաբերությունը հաստատելու համար հարկ կլիներ դիմելու գործադուլի կամ այլ ձևաց յեղանակի։ Քանի վոր դուք ընդունում եք պահանջն ու առաջարկն իբրև որենք, վոր կարգավորում է աշխատավարձը, ապա նույնքան յերեխայական կլիներ, վորքան և անոգուտ, վիճել աշխատավարձը բարձրացնելու դեմ, վորովհետև որենքի համաձայն, վոր դուք ընդունում եք, աշխատավարձի պարբերական բարձրացումը նույնքան անհրաժեշտ ու բնական է, ինչպես և նրա պարբերական անկումը։ Իսկ յեթե դուք պահանջն ու առաջարկն իբրև որենք չեք ընդունում, վոր կարգավորում է աշխատավարձը, ապա յես կրկնում եմ իմ հարցը․ ապա ինչո՞ւ աշխատանքի վորոշ քանակության համար վորոշ քանակությամբ փող են տալիս։

Բայց յեթե խնդրին նայենք համայնապարփակ տեսակետից, ապա դուք, իհարկե, շատ կսխալվեք, յերբ ընդունենք, թե բանվորական ուժի կամ վորևէ այլ ապրանքի արժեքը վերջնականապես վորոշվում է պահանջով և առաջարկով։ Առաջարկն ու պահանջը կարգավորում են միայն շուկայական գնի ժամանակավոր տատանումները։ Դուք նրանով կարող եք բացատրել, թե ինչու ապրանքի շուկայական գինը բարձրանում է նրա արժեքից ավելի բարձր, կամ իջնում է ավելի ցած, բայց դուք նրանցով յերբեք չեք բացատրի արժեքի հյությունը։ Յենթադրեցեք, թե առաջարկն ու պահանջը հավասարակշռության մեջ են գտնվում, կամ, ինչպես արտահայտվում են տնտեսագետները, նրանք ծածկում են միմյանց։ Հենց այն մոմենտին, յերբ այդ փոխադարձաբար միմյանց հակառակ ուժերն հավասար են դառնում, նրանք փոխադարձաբար ջլատում են միմյանց և դադարում են այս կամ այն ուղղությամբ գործելուց։ Յերբ առաջարկն ու պահանջը հավասարակշռության մեջ են գտնվում և այդ պատճառով դադարեցնում են իրենց գործողությունները, ապրանքի շուկայական գինը համապատասխանում է նրա իրական արժեքին, նրա նորմալ գնին, վորի շուրջը տատանվում են նրա շուկայական գները։ Այդ պատճառով էլ արժեքի բնությունն հետազոտելու ժամանակ մենք կարիք չունենք քննարկելու, թե ինչպես են ազդում ժամանակավորապես առաջարկն ու պահանջը շուկայի գների վրա։ Միևնույն բանը պետք է ասել աշխատավարձի և մյուս ապրանքների գների մասին։1)

1) Маркс, «Зараб. плата, цена и прибыль», стр. 33—34

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Յուրաքանչյուր յերկրում գոյություն ունի աշխատանքի վորոշ միջին ինտենսիվություն․ այդ միջին աստիճանի ինտենսիվությանը չհասնող աշխատանքը տվյալ ապրանքի արտադրության վրա ավելի ժամանակ է ծախսում, քան թե հասարակականորեն անհրաժեշտ է այդ յերկրի համար, և այդ պատճառով նորմալ վորակի աշխատանք չի հանդիսանում: Միայն ինտենսիվության այն աստիճանը, վոր ազգային միջինից ավելի վեր է բարձրացնում, միայն նա յե տվյալ յերկրում փոխում արժեքի չափումը բանվորական ժամանակի պարզ տևողությամբ: Այլ կերպ է խնդիրը համաշխարհային շուկայում, վորի հանդեպ յուրաքանչյուր առանձին յերկիր կանգնած է իբրև ամբողջության մի եյական մասը: Աշխատանքի միջին ինտենսիվությունը փոխվում է զանազան յ երկրներում: Այստեղ այն ավելի շատ է, այնտեղ՝ ավելի քիչ: Այսպիսով՝ այդ ազգային միջինները մի սանդուխք են կազմում, վորի չափման միավորն իրենից ներկայացնում է համաշխարհային միջին աշխատանքի միավորը: Հետևաբար, ավելի ինտենսիվ ազգային աշխատանքն ավելի պակաս ինտենսիվի համեմատությամբ հավասար ժամանակում արտադրում է ավելի մեծ արժեք, վորն արտահայտվում է փողի ավելի մեծ քանակությամբ:*

*Բայց արժեքի օրենքն իր միջազգային գործադրության մեջ և՛լ ավելի խոշոր փոփոխություններ է կրում շնորհիվ այն հանգամանքի, վոր համաշխարհային շուկայում ավելի արտադրողական ազգային աշխատանքն հաշվի յե առնվում նույնպես իբրև ավելի ինտենսիվ աշխատանք, մինչև, վոր մրցակցությունը հարկադրում է ավելի արտադրողական ազգին՝ իջեցնել իր ապրանքի վաճառքի գինը մինչև նրա արժեքը:*

*Ազգային աշխատանքի միջին ինտենսիվությունն արտադրողականությունը տվյալ յերկրում միջազգային մակարդակից ավելի վեր է բարձրանում հենց այն չափով, վորչափով զարգանում է այդ յերկրի կապիտալիստական արտադրությունը: Հետևաբար զանազան յերկրներում հավասար բանվորական ժամանակում արտադրած միևնույն տեսակի ապրանքների զանազան քանակություններն ունեն վոչ միատեսակ միջազգային արժեք, վոր արտահայտվում է տարբեր գներով, այսինքն՝ դրամական գումարներով, վորոնք զանազան են, նայելով միջազգային արժեքների տարբերությանը: Այսպիսով՝ փողերի հարաբերական արժեքն ավելի քիչ է արտադրության ավելի զարգացած կապիտալիստական յեղանակ ունեցող ազգի, քան ավելի պակաս ունեցողի մեջ:* Այստեղից հետևում է, վոր անվանական աշխատավարձը, այսինքն՝ դրամով արտահայտված բանվորական ուժի համարժեքն առաջին ազգի մեջ ավելի բարձր կլինի, քան թե յերկրորդի մեջ․ *բայց այդ դեռ ամենևին չի նշանակում, վոր այնտեղ ավելի մեծ կլինի նաև* իրական աշխատավարձը, այսինքն՝ բանվորի տրամադրության ներքո գտնվող գոյամիջոցների քանակությունը:



*Բայց յեթե մինչև անգամ մի կողմ թողնենք փողերի արժեքների այդ հարաբերական տարբերությունը զանազան յերկրներում, ապա այնուամենայնիվ հաճախ այնպես դուրս կգա, վոր օրական, շաբաթական և այլն աշխատավարձը մի ազգի մոտ, վոր արտադրության ավելի բարձր զարգացած կապիտալիստական յեղանակ ունի, ավելի բարձր է, քան թե մյուսի մոտ, մինչդեռ աշխատանքի հարաբերական գինը, այսինքն՝ աշխատանքի գինը հավելյալ արժեքի և արդյունքի արժեքի համեմատությամբ՝ յերկրորդ ազգի մոտ ավելի բարձր է, քան առաջինի մոտ:*

*Ինչպես հայտնի, յե, Արևելյան Յեվրոպայում և Ասիայում անգլիական ընկերություններն իրենց վրա վերցրին յերկաթուղիների կառուցումը և այդ գործի մեջ բնիկների կողքին բանեցնում են վորոշ քանակությամբ անգլիացի բանվորներ: Գործնական անհրաժեշտությունն ստիպեց նրանց այդ ձևով հաշվի առնել ազգային տարբերություններն աշխատանքի ինտենսիվության մեջ,—և այդ բանն ամենևին վնասաբեր չեղավ նրանց համար: Նրանց փորձը սովորեցրեց նրանց, վոր յեթե աշխատավարձի բարձրությունն ավելի կամ պակաս չափով համապատասխանում էլ է աշխատանքի միջին ինտենսիվությանը, ապա աշխատանքի հարաբերական գինը (այսինքն՝ համեմատած արդյունքի հետ) սովորաբար փոխվում է ուղղակի-հակադիր ուղղությամբ*[1]:

*Ռուսական գործարանային բանվորի միջին աշխատավարձը* 1911 *թվին —տարեկան* 251 *ռուբլի յեր,* 8,2%*-ով ավելի (նկատի ունենալով բոլոր աշխատավարձի գումարը), քան թե* 1910 *թվին,—հրճվում է ֆինանսների մինիստրը:*

*Ամերիկայում* 1910 *թվին արդյունաբերական բանվորի միջին աշխատավարձը* —1036 *ռուբլի յեր, այսինքն՝ ռուսականից ավելի քան* չորս անգամ *ավելի բարձր:* 1860 *թվին այդ գումարն հավասար եր* 576 *ռուբլու, այսինքն՝* այժմյան *ռուսականից յերկու անգամ ավելի*[2]:

## ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ «ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՅԵՐԿԱԹԵ ՈՐԵՆՔԸ»

*Արդեն* XVIII *դարում բուրժուական քաղաքատնտեսության ֆրանսիական և անգլիական հիմնադիրները նկատեցին, վոր բանվորների աշխատավարձն ընդհանրապես և ամբողջությամբ առած տենդենց ունի կանգ առնելու կենսամիջոցների այն նվազագույն մակարդակի վրա, վորոնք անհրաժեշտ են ապրելու համար: Բայց նրանք խիստ յուրատեսակ բացատրեցին այն մեխանիզմը, վորի միջոցով կարգավորվում է աշխատավարձի այդ մինիմումը, այն է՝ աշխատանքի առաջարկության մեջ առաջ յեկող տատանումներով: Յեթե բանվորներն ավելի մեծ աշխատավարձ են ստանում, քան այդ բացար-*

[1]) Капитал I, стр. 541—543

[2]) Ленин, собр. соч. т. XX, доп. ч. I, стр. 390

ձակապես անհրաժեշտ է ապրելու համար,—բացատրում եյին այդ գիտնականները,—այն ժամանակ նրանք ավելի հաճախ են ամուսնանում և ավելի մեծ քանակությամբ յերեխաներ են արտադրում: Հենց դրանով աշխատանքի շուկան այնպես է լցվում, վոր առաջարկն զգալի չափով գերազանցում է այն պահանջից, վոր արվում է կապիտալի կողմից: Այն ժամանակ կապիտալը, օգտվելով բանվորների մեջ յեղած մեծ մրցակցությունից, սաստիկ իջեցնում է աշխատավարձը: Իսկ յեթե աշխատավարձը չի բավականանում մինչև անգամ ապրելու համար, այն ժամանակ բանվորները մասսաներով մեռնում են, նրանց շարքերը նոսրանում են, մինչև վոր նրանցից ճիշտ այնքան է մնում, վորքան հարկավոր է կապիտալի համար, և հենց դրանով աշխատավարձն սկսում է կրկին դեպի վեր բարձրանալ: Ծոճանակի այդ տատանման շնորհիվ չափազանց բազմացման և չափազանց ել մաշացման մեջ և բանվոր դասակարգի ներսում աշխատավարձը միշտ վերադառնում է կենսամիջոցների մինիմումին, վորոնք անհրաժեշտ են կյանքի համար: Մինչև ընդհուպ 60-ական թվականները տիրապետող այդ տնտեսագիտական թեորիան ընդունեց նաև Լասսալը և անվանեց այն «յերկաթե անողոք օրենք»:

Ներկայումս, այն բանից հետո, յերբ կապիտալիստական արտադրությունն իր լիակատար զարգացմանը հասավ, այդ թեորիայի թույլ կողմերն աչքի յեն զարնվում: Չէ՞ վոր խոշոր արդյունաբերությունը, տնտեսական կյանքի և մրցակցության տենդոտ արագ տեմպի պահին, չի կարող աշխատավարձի իջեցումն ուշացնել մինչև այն ժամանակ, մինչև վոր բանվորներն, առատության շնորհիվ, կսկսեն չափազանց հաճախ ամուսնանալ, ապա կսկսեն չափազանց շատ յերեխաներ արտադրել, վորոնք իրենց հերթին պետք է մեծանան և աշխատանքի շուկայում յերևան գան նրա համար, վորպեսզի ստեղծեն կապիտալիստի համար անհրաժեշտ գերլրությունը: Աշխատավարձի շարժումը, արդյունաբերական կյանքի իրեն զարկերակին համապատասխան, ամենևին տեղի չի ունենում ճոճանակի տարուբերման դանդաղկոտությամբ, վորի յուրաքանչյուր տատանումն ամբողջ մի սերունդ, այսինքն՝ 25 տարի յե տևում: Ընդհակառակը, աշխատավարձը շարունակ գտնվում է անընդհատ տարուբերվող շարժման մեջ, այնպես, վոր վո՛չ բանվոր դասակարգն հնարավորություն ունի իր բազմացումն հարմարեցնելու աշխատավարձի մակարդակին, վո՛չ ել արդյունաբերությունը կարող է իր պահանջով սպասել բանվորների բազմացման համապատասխան ավելացմանը: Բացի դրանից, աշխատանքի շուկան իր չափերով ընդհանրապես վորոշվում է վո՛չ թե բանվորների բնական բազմացումով, այլ թարմ պրոլետարականացած շերտերի անընդհատ հոսանքով գյուղից, արհեստից և մանր արդյունաբերությունից, ինչպես նաև պրոլետարիատի սեփական կանանցից ու յերեխաներից: Աշխատանքի շուկայի գերլրությունը պահեստի բանակի գոյության ձևով մշտական յերևույթ է ներկայացնում և ժամանակակից արդյունաբերության կենսական պայմանն է հանդիսանում: Հետևաբար, աշխատավարձի մակարդակը վորոշելու համար



նշանակություն ունի վո՛չ թե բանվորական ուժի առաջարկի փոփոխությունը, վո՛չ թե շարժումը բանվոր դասակարգի իրեն ներսում, այլ պահանջի փոփոխությունը կապիտալի կողմից,—նրա, այսինքն՝ կապիտալի շարժումը:

Բանվորական ուժն իբրև առառ, միշտ պահեստում գտնվող ապրանք, ավելի կամ ավելի վատ է վարձատրվում կախված այն հանգամանքից, թե արդյոք հաճելի՞ յե կապիտալին բարձր կոնյունկտուրայի ժամանակաշրջանում հսկայական չափով ներծծել իր մեջ բանվորական ուժը, թե կրիզիսից հետո յեկող մարմուրության շրջանում նրան կրկին մասսաներով փողոց ժայթքել:

Հետևաբար, աշխատավարձի օրենքը բոլորովին այլ մեխանիզմ ունի, քան այդ յենթադրում է բուրժուական քաղաքատնտեսությունը կամ Լասսալը: Իսկ իրական հետևանքը, այսինքն՝ վարձու աշխատանքի և կապիտալի փաստորեն գոյություն ունեցող հարաբերությունները դուրս են գալիս ե՛լ ավելի վատթար, քան հին յենթադրության ժամանակ: Աշխատավարձի կապիտալիստական օրենքը—այդ «յերկաթե» օրենք չէ, բայց այդ օրենքն ե՛լ ավելի անողոք է և դաժան, վորովհետև այն «ճկուն» օրենք է, վոր ձգտում է զբաղված բանվորների աշխատավարձը վերածել նրանց կենսամիջոցների մինիմումին այն ձևով, վոր դրա ժամանակ գործազուրկների հսկայական շերտերը կախված են մնում կյանքի և մահվան միջև[1]:

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Բոլորին հայտնի յե, վոր ռուս բանվորների հուշակավոր գործադուլային պայքարը 1905 թվին չափազանց խոշոր հաջողություններ ունեցավ վո՛չ միայն քաղաքական, այլև տնտեսական ասպարեզում: Ներկայումս գործարանային տեսուչների հաշվետվությունների տվյալները թույլ են տալիս բավական ճշգրիտ պատկերացում կազմել այդ հաջողությունների մեծության մասին:

Այդ տվյալների համաձայն՝ ռուսական ֆաբրիկա-գործարանային բանվորի միջին աշխատավարձը հավասար եր·

| | | | |
|---|---|---|---|
| 1901 թ. | 201 ռ. | 1906 թ. | 231 ռ. |
| 1902 » | 202 » | 1907 » | 241 » |
| 1903 » | 208 » | 1908 » | 242 » |
| 1904 » | 213 » | 1909 » | 236 » |
| 1905 » | 205 » | 1910 » | 242 » |
| Հինգտարվա միջինը | 206 » | Հինգտարվա միջինը | 238 » |

Այստեղից մենք տեսնում ենք, վոր 1905 թիվը բեկման տարի յեր: Հատկապես 1905 թվից հետո աշխատավարձը 205 ռուբլուց միանգամից բարձրանում է մինչև 231 ռուբլի տարեկան, այսինքն՝ 26 ռուբլով, ավելի քան 10%-ով:

[1]) Р. Люксембург, «Введ. в политэкономию» стр. 262—264

1905 թվի վերաբերմամբ, որ ցույց ե տալիս աշխատավարձի իջեցումն 8 ռուբլով 1904 թվի համեմատությամբ, պետք ե նկատի ունենալ հետևյալը․ նախ, 1905 թվականը տնտեսական դեպրեսիայի, այսինքն՝ արդյունաբերության անկման տարի յեր․ յերկրորդ, առևտրի մինիստրության տվյալներով՝ բանվորներն այդ տարվա ընթացքում աշխատավարձի թերստացումից գործադուլային օրերի համար կորցրին 17½ միլիոն ռուբլի, այսինքն՝ միջին հաշվով յուրաքանչյուր բանվորի համար 10 ռուբլուց ավելի։

Հետևաբար, կարելի յե այնպես համարել, որ իսկական աշխատավարձը 1905 թվին տարեկան 215 ռուբլի յե, բայց այդ 215 ռուբլուց բանվորները 10-ական ռուբլի տվին գործադուլային պայքարի համար, որ 1905 թվին աչքի յեր ընկնում խոշոր, մինչև այն ժամանակ աշխարհում ո՛չ մի տեղ չտեսնված համառությամբ և լայնածավալությամբ։

Հետևանքն ստացվեց այն, որ մենք այժմ, քննարկելով տվյալները 1901–1910 թվականների ամբողջ տասնամյակի համար, պարզ տեսնում ենք նախահեղափոխական և հետ-հեղափոխական դարաշրջանների միջև յեղած զարմանալի տարբերությունը։

Մինչև 1905 թվականը ռուսական ֆաբրիկա-գործարանային բանվորների միջին աշխատավարձը 206 ռ. եր։ 1905 թվից հետո—238 ռուբլի, այսինքն՝ տարեկան 32 ռուբլի ավելի։ Ավելացումը 15,5 տոկոս։

Աշխատավարձի բարձրացումը մի տարվա մեջ այնպիսի զարկ ստացավ, որ կապիտալիստների հետագա բոլոր ջանքերը (որոնք, ինչպես հայտնի յե, մեկը մյուսի հետևից հետ խլեցին 1905 թվի բոլոր նվաճումները) չկարողացան բանվորներին տանել դեպի կյանքի առաջվա ցած մակարդակը։ 1905 թվականը այնպես բարձրացրեց ռուսական բանվորի կյանքի մակարդակը, ինչպես որ սովորական ժամանակ այդ մակարդակը մի քանի տասնամյակների ընթացքում չի բարձրանում։

Բանվորները 1905 թվականի գործադուլներում պաշտոնական վիճակագրությամբ կորցրին 17½ միլիոն ռուբլի, գործադուլային օրերի համար աշխատավարձ չստանալով։ Արդյունքների թերամշակումը կապիտալիստների մոտ 1905 թվին կազմում եր, նույն վիճակագրության համաձայն, 127,3 միլիոն ռուբլի։

Իսկ աշխատավարձի բարձրացումից—1905 թվից հետո բանվորները հինգ տարվա մեջ (1906—1910) շահեցին միջին հաշվով 32-ական ռուբլի բանվորին, այսինքն՝ ընդամենը, հաշվելով 1,8 միլիոն բանվոր, տարեկան 57,6 միլիոն ռուբլի կամ 286 միլիոն ռուբլի ամբողջ հնգամյակի ընթացքում[1])։

## I.

Հայտնի յե, որ ամբողջ Ռուսաստանում ֆաբրիկա-գործարանային բանվորների դատումները խոշոր թռիչք գործեցին դեպի վեր հատկապես 1905 թվին և 1905 թվից հետո։ Գործարանային տեսուչների հաշվետվությունների համաձայն՝ ֆաբ.-գործ. բանվորի միջին դատումը Ռուսաստանում 1901–1905 թ..թ. հնգամյակում հավասար եր 206 ռուբլու, իսկ 1906–1910 թ.թ. հետևյալ հնգամյակում—238 ռուբլու։

Մոսկվայի նահանգում բանվորների դատումները մի փոքր ավելի ցած են Ռուսաստանում յեղած միջիններից։ 1901—1905 թ. թ. նրանք հավասար եյին 201 ռ., գործարանային տեսուչ Կոզմինիխ-Լանինի վիճակագրությամբ, իսկ հետևյալ քառամյակում—1906—1909 թ. թ.—235 ռուբլու։

Այսպես ուրեմն, 1905 թ. շնորհիվ, Մոսկվայի բանվորների դատումները միջին հաշվով բարձրացան յուրաքանչյուր բանվորին 34 ռուբլով, այսինքն՝ համարյա 17%։ Հաշվելով Մոսկվայի նահանգում 300-ից մինչև 350 հազար ֆաբրիկա-գործարանային բանվոր, այդ կանի տարեկան 11 միլիոն ռուբլի շահում բոլոր բանվորների համար։

Մենք տեսնում ենք, որ 1905 թ. գործադուլներում բանվորների կրած զոհաբերությունների արդյունքն յեղավ բանվորների տնտեսական դրության լուրջ բարելավումը։

Ցեվ թև. հունիսի 3-ի սիստեմի, այսինքն՝ հակահեղափոխական սիստեմի հաղթանակից հետո, ամբողջ մի շարք բանվորական նվաճումներ հետ խլվեցին, բայց այնուամենայնիվ կապիտալին չհաջողվեց դատումներն առաջվա ցած աստիճանին իջեցնել։ Մոսկվայի նահանգում 1901 թվից մինչ 1905 թվականը բանվորների դատումը տարեկան մոտ 200 ռուբլի յեր, տատանվելով ըստ տարիների 127 ռուբլուց (1902 թ.) մինչև 203 ռուբլին (1905 թ.)։ 1906 թվին, յերբ առաջին անգամ յերևան յեկան 1905 թ. հետևանքները, դատումը բարձրացավ մինչև 228 ռուբլու, այնուհետև 1907 թվին—մինչև 237 ռուբլու, 1908 թվին մի փոքր իջավ (236½ ռ.), 1909 թվին կրկին հասավ 237 ռուբլու։

Թվերը ցույց են տալիս, որ առանց 1905—1906 թ.թ. նվաճումների բանվորները բոլորովին անտանելի կերպով կաղքատանային, որովհետև կյանքի թանգությունը վերջին տասնամյակում շարունակ աճում ե։

## II.

Բանվորների աշխատավարձը Մոսկվայի նահանգի խոշոր ֆաբրիկաներում, իբրև, ընդհանուր կանոն, ավելի բարձր ե, քան թե մանրներում։ Որինակ, մանածագործների մոտ, որոնք կազմում են 68%, այսինքն՝ մեր նահանգի ֆաբ.-գործ. բանվորների ընդհանուր թվի յերկու յերրորդից ավելին, միջին տարեկան աշխատավարձը 1900 թվին հավասար եր․

[1]) Ленин, собр. соч. т. XII, ч. I, стр. 260—261

| | Ռուբլի | % |
|---|---|---|
| 1000-ից ավելի մարդ ունեցող փաբրիկաներում | 249 | 100 |
| 501—1000 » » » » | 204 | 93 |
| 101—500 » » » » | 197 | 90 |
| 51—100 » » » » | 188 | 86 |
| 21—50 » » » » | 192 | 88 |
| 20 յեվ ավելի ֆիչ » » » | 164 | 75 |
| Ընդամենը | 211 | 96 |

Վորքան ավելի խոշոր է փաբրիկան, այնքան ավելի բարձր է բանվորի աշխատավարձը: Մետաղագործների մոտ նկատում ենք միևնույն բանը: Խոշոր փաբրիկաներում բանվորների համար ավելի հեշտ է միանալ և կապիտալին դիմադրություն ցույց տալը, միասին իրենց պահանջները պաշտպանելը: Իրենց առաջավոր ընկերներին հասնելու համար՝ մանր ֆաբրիկաների և արհեստանոցների բանվորները պետք է ավելի յեռանդուն կերպով միություններ կազմեն (արհեստակցական, լուսավորական, կոոպերատիվ և այլն) և ավելի սերտ կերպով խտացնեն իրենց շարքերն իրենց բանվորական դրոշի շուրջը:

Խոշոր ֆաբրիկաներում բանվորների ավելի մեծ համախմբվածության հետևանքով՝ բանվորների գործադուլներն էլ այստեղ ավելի հեշտ են կազմակերպվում և ավելի հաջող են անցնում: 1905 և 1906 թվականների գործադուլային շարժմանն ավելի մասնակցեցին խոշոր, քան թե մանր ֆաբրիկաները:

Այդ բանի կապակցությամբ մենք տեսնում ենք, վոր խոշորագույն ֆաբրիկաների բանվորներն ավելի շահվեցին այդ տարիների գործադուլներից, քան թե մանր գործատների բանվորները: Ահա Մոսկվայի նահանգի բոլոր արտադրությունների բանվորների վերաբերյալ տվյալները.

МЕК ԲԱՆՎՈՐԻ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՍՏԻՄԸ

| Ֆաբրիկաների տարակարգերն ըստ բանվորների թվի | Հնգամյակում (1901—1905) | Քառամյակում (1906—1909) | Ավելացումն ռուբլիներով |
|---|---|---|---|
| 1000 մարդուց ավելի ունեցողները | 196 | 234 | 38 |
| 501—1000 » » | 186 | 231 | 45 |
| 101—500 » » | 211 | 238 | 27 |
| 51—100 » » | 215 | 240 | 25 |
| 21—50 » » | 216 | 241 | 25 |
| 20 յեվ ավելի ֆիչ » » | 193 | 207 | 14 |
| Ընդամենը | 201 | 235 | 34 |

Այդ թվերի առթիվ հարկավոր է բացատրել ամենից առաջ բացառությունը (յերևույթական) վերևում բերված որենքից, վորի համաձայն աշխատավարձը խոշոր ֆաբրիկներում ավելի մեծ է, քան թե փոքրերում: Բանն այն է. վոր մետաղագործները, տպագրիչները և մի քանի ուրիշները շատ ավելի յեն ստանում, քան թե մանածագործները (360 ռ., 310 ռ., 211 ռ., դեմ և այլն):



Իսկ ամենախոշոր ֆաբրիկաներում մանածագործների բաժինը բանվորների ընդհանուր թվի մեջ շատ ավելի մեծ է, քան թե միջին և մանր ֆաբրիկաներում: Հենց դրանից էլ ստացվում է յերևացող բացառությունը կանոնից. կարծես թե միջին և մանր ֆաբրիկաներում աշխատավարձն ավելի բարձր է, քան թե խոշորներում:

Ի՞նչ յեզրակացություն ունենք մենք, ուրեմն, աշխատավարձի ավելացման վերաբերմամբ խոշոր և մանր ֆաբրիկաներում 1905 թվականից հետո:

Խոշոր ֆաբրիկաներում (500 և ավելի բանվոր) այդ ավելացումը կազմում է տարեկան մոտ 40 ռուբլի, այսինքն՝ ռուբլուն 20 կոպեկ:

Միջին մանր ֆաբրիկաներում, 21-ից մինչև 500 բանվոր, ավելացումն հավասար է մոտ 25 ռուբլու, այսինքն՝ ռուբլուն մոտ 12 կոպեկ:

Ամենամանր ֆաբրիկաներում (20 և ավելի պակաս բանվոր) ավելացումն ընդամենը 14 ռուբլի յէ, այսինքն՝ ռուբլուն 7—8 կոպեկ:

Այդպես ուրեմն, բանվորների ավելի յեռանդուն և միահամուռ գործադուլային պայքարը խոշոր ֆաբրիկաներում այն հետևանքին հասցրեց, վոր աշխատավարձն ավելի մեծ չափով ավելացավ: Մենք արդեն մատնանշեցինք, վոր միություններ կազմելով՝ մանր ֆաբրիկաների բանվորները կարող են այդ տեսակետից հավասարվել խոշորների բանվորների հետ:

## III.

Բանվորների նվաճումները 1905 թ. գործադուլային պայքարի հետևանքով արտահայտություն գտան վոչ միայն աշխատավարձի մեծացման մեջ: Բացի դրանից՝ դեպի լավը փոխվեց առհասարակ բանվորի ամբողջ դրությունը:

Բանվորների դրության մեջ առաջացած այդ բարելավման չափերը չի կարելի ճշգրիտ կերպով արտահայտել թվերով, բայց ամեն մի բանվոր 1905—1906 թվականներին լավ հասկացավ և զգաց այդ բարելավումը:

Գործարանային տեսուչ Կոզմինիխ-Լանինի տվյալները թույլ են տալիս միայն վորոշելու 1905 թ. ազդեցությունը բանվորների տուգանման վրա: Տուգանելով բանվորներին, կապիտալիստը յուրացնում է դատավորի դերը: Այդ պատճառով տուգանքների հետ միշտ կապված է առանձնապես շատ կամայականություն բանվորների վերաբերմամբ, իսկ յերբեմն և ուղղակի ծաղրուծանակ բանվորների նկատմամբ: Բնական է, վոր բանվորները միշտ պահանջում են վերացնել տուգանքները, կապիտալիստներից խլել իրենց սեփական գործի մեջ դատավոր լինելու իրավունքը:

Ահա Մոսկվայի նահանգի բոլոր բանվորների տուգանումների մասին յեղած տվյալներն ըստ տարիների.

| Թվական | Միջին հաշվով 1 բանվորին տուգանք է ընկնում կոպեկներով |
|---|---|
| 1901 թվին . . . . . | 30 |
| 1902 . . . . . . | 27 |
| 1903 » . . . . . | 27 |
| 1904 » . . . . . | 29 |
| 1905 » . . . . . | 17 |
| 1906 » . . . . . | 12 |
| 1907 » . . . . . | 15 |
| 1908 » . . . . . | 18 |
| 1909 » . . . . . | 21 |

*Մենք տեսնում ենք, թե ինչպես հաջողությամբ բանվորները «կրճատեցին» տուգանքների գումարը: Մինչև 1905 թիվը տուգանքները կազմում էյին 27-ից մինչև 30 կոպեկ բանվորին:*

*Վրա յե հասնում 1905 թվականը: Տուգանքներն ընկնում են համարյա յերկու անգամ, մինչև 17 կոպեկ: 1905 թվի հետևանքներն ավելի պարզ դրսևորում են 1906 թվին. տուգանքներն ընկնում են մինչև 12 կոպեկը:*

*Անցնում է հեղափոխությունը: Կապիտալիստները համարձակություն են ձեռք բերում: Տուգանքները նորից բարձրացնում են—մինչև 15—18—21 կոպ.:*

*Բայց մինչև անգամ 1909 թվին,—իսկ այդ ամենախորին և ամենայերկար անդորրության տարին էր,—կապիտալիստներին չի հաջողվում տուգանքները բարձրացնել մինչև նախկին խայտառակ բարձրությունը: Վորքան էլ ծառայամտություն է ցուցադրում կապիտալիստը Պուրիշկևիչի առջև, այնուամենայնիվ յերկու «սիրելի բարեկամներին» չի հաջողվում վերադառնալ հնամանդին. բանվորն Ռուսաստանում այլևս այն չէ: Բանվորն Ռուսաստանում արդեն վորոշ բան սովորել էր:*

*Յեթե համեմատենք տուգանքների գումարը բանվորների աշխատավարձի գումարի հետ,—իսկ այդպիսի համեմատությունն անհրաժեշտ է, վորովհետև միևնույն բանը չէ մի պրասի վճարել, ռուբլիանոց թե մանեթուկեսանոց աշխատավարձից,—ապա բանվորների հաղթանակն 1905 թվին էլ ավելի պարզ կերպով յերևան կգա:*

*Միջին հաշվով բանվորների 100 ռուբլի աշխատավարձին տարեկան տուգանք էր ընկնում կոպեկներով.*

| | | | |
|---|---|---|---|
| 1901 թվին . . | 15 կոպ. | 1906 թվին . . | 5 կոպ. |
| 1902 » . . | 14 » | 1907 » . . | 6 » |
| 1903 » . . | 13 » | 1908 » . . | 8 » |
| 1904 » . . | 14 » | 1909 » . . | 9 » |
| 1905 » . . | 9 » | | |

*Հետևաբար, 1905 թ. հետևանքով Մոսկվայի նահանգի բանվորները խայտառակ տուգանքների յեռակի կրճատումն ձեռք բերին: Ձեռք կբերեն նաև տուգանքների լիակատար վերացումը:*



IV

*Իբրև վերջաբան մի փոքր կանգ առնենք այն հարցի մասին, թե աշխատավարձի, վոր բաժինն են Մոսկվայի բանվորներն ստանում կանխիկ փողով:*

*Մոսկվայի բանվորների դրությունն այդ տեսակետից ծանր է: 1909 թվին նրանք ստացան ընդամենը 73 միլիոն ռուբլի աշխատավարձ. դրանից 61½ միլիոն ռուբլին, այսինքն՝ 84,2%-ը տրվեց կանխիկ փողով: Աշխատավարձի համարյա մեկ տասերորդ մասը, 7,2 միլիոն ռուբլի, տրվեց սննդամթերքներով և գործարանային խանութի ապրանքներով: Վճարման այդ տեսակը բանվորներին ճորտական կախման մեջ է դնում տերերից և այդ տերերին դերշահույթ է տալիս:*

*Այդ տեսակետից առանձնապես վատթար է բամբակամշակման արդյունաբերության բանվորների դրությունը. աշխատավարձի մեկ հինգերորդ մասից ավելի (5,9 միլիոն ռուբլի 28,8 միլիոնից) տրվեց սննդամթերքներով: Յեթե վոր բանվորները կարողանային իրենց համար ազատ բանվորական կոոպերատիվներ ձեռք բերել, այն ժամանակ վո՛չ միայն հարյուր հազարավոր ռուբլիներ կխնայվեյին կապիտալի սորուկների համար, այլ և կվերանար նրանց կիսաճորտական կախումը տնտեսատերերի խանութներից:*

*Այնուհետև՝ 3 ¾ միլիոն ռուբլի (5 %) աշխատավարձ բանվորներն ստացան իբրև վճար այն պրոդուկտների համար, վոր նրանք վերցրել էյին սպառողական ընկերությունների խանութներից և այլն: Վերջապես, 680 հազար (0,9%) աշխատավարձ ստացվեց իբրև այն բանվորների պահպանումը, վորոնք սնվում էյին տնտեսատերերի հաշվին:*

*Վարձատրության այդ տեսակը, վոր բանվորին դատապարտում է հազար ձևի անձնական ճորտական բնույթ ունեցող կախման, ավելի նկատելի կերպով պահպանվել է մետաքսի և քաթանի մշակման արտադրությունների մեջ, ապա սննդի և կենդանական պրոդուկտների արտադրության մեջ:*

*Ինչ վերաբերում է 1905 թվականի ազդեցությանն աշխատավարձի ձևերի վրա, ապա այդ տեսակետից համարյա վո՛չ մի նվաճում չի կատարվել: Ահա տվյալներն սկսած 1901 թվից.*

| Թվական | Բանվորների դատումի ամբողջ գումարը միլիոն ռուբլիներով | Այդ հաշվով վճարված է կանխիկ գործարան. խանութի ապրանք | | (Տոկոսներով) սպառող խանութներից վերցրած | Բանվորների սպրուստով տնտեսատերերի հաշվին |
|---|---|---|---|---|---|
| 1901 | 53 | 81.4 | 8,9 | 7.3 | 2.4 |
| 1902 | 54 | 81,5 | 9.1 | 7,0 | 2,4 |
| 1903 | 57 | 83,0 | 8.3 | 6,6 | 2,1 |
| 1904 | 55 | 82,7 | 9,0 | 6,5 | 1,8 |
| 1905 | 57 | 82.8 | 9.2 | 6.5 | 1,5 |
| 1906 | 64 | 85 1 | 7.6 | 5,8 | 1.5 |
| 1907 | 71 | 83,8 | 9,4 | 5.3 | 1,5 |
| 1908 | 73 | 82.9 | 10.4 | 5,2 | 1,5 |
| 1909 | 73 | 84.2 | 9,8 | 5.1 | 0,9 |

1905 *թվականից հետո կանխիկ վճարումն ավելացավ չափազանց աննշան*

*չափերով: Նույնքան քիչ կրճատվեց նաև բանվորների ապրուստի սիստեմը տնտեսատիրոջ հաշվին: Ընդհակառակը, մինչև անգամ մի քիչ ավելացավ վճարումը գործարանային խանութների միջոցով:*

Ընդհանրապես և ամբողջությամբ վերցրած՝ դրությունը մնաց նույնքան վատթար, որքան և առաջ: *Մոսկվայի բանվորները պետք է ձգտեն ձեռք բերել աշխատավարձի վճարումը կանխիկ փողով և գործարանային խանութների փոխանակումն ազատ բանվորական սպառողական ընկերություններով*[1]:

*Ամերիկան տակավին ելի ամենահարուստ կապիտալիստական երկիրն է աշխարհում: Ամերիկյան բանվորի, մինչև անգամ անվորակյալ բանվորի, աշխատավարձի մակարդակն ավելի բարձր է ո՛չ միայն սերբական կամ բուլղարական բանվորի նույնպիսի մակարդակից, այլև այնպիսի արդյունաբերական տեսակետից զարգացած երկրների բանվորի աշխատավարձի մակարդակից, ինչպիսին Գերմանիան է կամ Անգլիան: Սակայն խնդիրն այն չէ, որ ամերիկյան բանվորի աշխատավարձը համեմատենք նրա եվրոպացի եղբայրակիցների աշխատավարձի հետ: Ինչպես Մարքսը նշել է, բանվորական ուժի արտադրության և վերարտադրության համար անհրաժեշտ կենսամիջոցների գումարը տարբեր է, կախված ոչ միայն այս կամ այն երկրի կլիմայական և բնության այլ առանձնահատկություններից:*

*«Անհրաժեշտ պահանջները (բանվորական մասսաների), ինչպես նաև նրանց բավարարման եղանակներն իրենք պատմության արդյունք են ներկայացնում և մեծ մասամբ կախված են երկրի կուլտուրական մակարդակից, ի միջի այլոց նաև նրանից, թե ինչպիսի պայմաններում, հետևաբար և ինչպիսի սովորույթներով ու կենսական պահանջներով է ձևակերպվել ազատ բանվորների դասակարգը: Իբրև հակադրություն այլ ապրանքների,—եզրակացնում է Մարքսը,—բանվորական ուժի արժեքի որոշումն իր մեջ պատմական և բարոյական տարր է բովանդակում»:*

*Պատմական այն տարրը, որ Ամերիկայում որոշում էր բանվորական ուժի արժեքը*, բղխում էր ամերիկյան կապիտալիզմի զարգացման առանձնահատկություններից, *ազատ հողերի առկայությունից, հողի մասնավոր սեփականատիրության բացակայությունից, աշխատանքի «հազվադեպությունից», աշխատանքի պահանջի գերազանցումից առաջարկին հանդեպ: Հենց այդ պատճառով էլ մեթոդոլոգիական տեսակետից սխալ կլիներ ամերիկյան բանվորի աշխատավարձն ու ապրուստի մակարդակն ուսումնասիրել նրա եվրոպական եղբայրակիցների համեմատությամբ, որովհետև այդպիսի համեմատությունն անխուսափելի կերպով մի կողմ պետք է թողներ այն առանձնահատուկը, որ կար ամերիկյան կապիտալիզմի մեջ:*

Ամերիկյան բանվորին հարկավոր է ուսումնասիրել ամերիկյան պայմաններում: *Եվ այն ժամանակ միանգամից երևան կգար, որ Ամերիկայում բանվորական ուժի արժեքը որոշող պատմական տարրի ազդեցությունը սաստիկ թուլացել է, իսկ մի քանի դեպքերում նաև անհետացել է՝ ամերիկյան կապիտալիզմի զարգացման առանձնահատկությունների չքացման հետ միասին, և որ մոտավորապես XIX դարի վերջից կամ XX դարի սկզբից ամերիկյան բանվորի աշխատավարձն ընկել է նրա բանվորական ուժի արժեքից ավելի ցած. նրա ապրուստի մակարդակը, որ XIX դարի ընթացքում շատ բարձր էր կանգնած, այժմ արդեն շատ ավելի ցած է նույնիսկ այն համեստ «ամերիկական ստանդարտից», որ նրա համար հորինել են Վաշինգտոնի կառավարության պաշտոնական օրգանները՝ բուրժուական տնտեսագիտության լավագույն ներկայացուցիչների աշխատակցությամբ:*

1) Ленин, т. XII, ч. II, стр. 231—236



*Ամերիկյան կապիտալիզմն իր զարգացման ամենաբարձր փուլերից մեկն ապրեց հետ-պատերազմական տարիներում: Հատկապես այդ ժամանակաշրջանում մաքսիմալ էին հարստությունների կուտակումը, կապիտալիստական դասակարգերի եկամուտների աճումը: Բուրժուական տնտեսագետները պրետենզիա չեն հայտնում այն մասին, թե ամբողջ երկրի զարգացմանը զուգընթաց՝ աճել է նաև աշխատավարձը, որի մակարդակն այս բոլեյիս միանգամայն բավական է, որպեսզի բանվորին ապրուստի այն մինիմումն ընձեռե, որ համապատասխանում է ամերիկյան ստանդարտին և ապահովում է բանվորի և նրա ընտանիքի առողջությունը: Այդպե՞ս է այդ արդյոք:*

*Մեր տրամադրության տակ մի շարք առանձին ջոկովի հետազոտություններ կան, որոնք վերաբերում են երկրի զանազան ռայոններին և տարբեր ժամանակաշրջանների: Այդ հետազոտությունները նպատակ ունեն որոշելու ծախսերի այն նվազագույն գումարը, որն անհրաժեշտ է բանվորի և նրա ընտանիքի գոյության համար, պաշտոնապես հաստատված ամերիկյան ստանդարտի համաձայն: Այդ հետազոտությունների արդյունքներն ամփոփված են հետևյալ աղյուսակում.*

| | Հետազոտության թվականը | Գումարը դոլլարներով |
|---|---|---|
| Նյու-Յորկի բանվորների բյուջեն (Մորի հետազոտությունը) . . . . . . . . | 1906 | 836 |
| Նյու-Յորկի բյուջեն (Դ—ր Շապինի հետազոտությունը) | 1907 | 900 |
| Չիկագոյի բյուջեն (պրոֆ. Կեննելիի հետազոտությունը.) ընդգրկում է առավելապես սպանդանոցների բանվորներին . . . . . . . | 1914 | 733 |
| Նյու-Յորկի անվորակյալ բանվորների բյուջեն . . | 1917 | 980 |
| Խաղաղ օվկիանոսի ափին ընկած նահանգների բանվորական բյուջեները (Կալիֆորնիայի համալսարանի հետազոտությունը) . . . . . . . | 1917 | 1476 |

*Այսպես են բանվորական նվազագույն բյուջեները բուրժուական տնտեսագետների գնահատությամբ: Բանվորական ընտանիքի՝ այս բյուջեյով որոշված գումարից պակաս եկամուտը պետք է այնտեղ հասցնի, որ բան-*

վոր դասակարգը գտնվի մշտական ֆիզիկական և բարոյական դեգրադացիայի պրոցեսում: Դ-ր Շապինի տվյալներով, կատարված ամենաստույգ հետազոտությունը՝ այցելելով բոլոր բանվորական ընտանիքների բնակարանները,—թերասնունդ ընտանիքների, այսինքն՝ կիսաքաղց ապրողների տոկոսը կազմում է 76, յեթե ընտանիքի յեկամուտը հասնում է տարեկան 400-ից մինչև 600 դոլլարի: Վատ հագնված և խիտ ապրող ընտանիքների նույնպիսի բարձր տոկոս են տալիս նաև բոլոր այն խմբերը, վորոնք տարեկան 400-ից մինչև 900 դոլլար յեկամուտ ունեն:

Աշխատավարձը նույն ժամանակաշրջանում (1906—1917 թ.թ.) յերբեք չի հասել այն մակարդակին, վոր բավարարում է պարզ ֆիզիկական գոյության պահանջները: Ֆեդերալ էմիգրանտական հանձնաժողովի հետազոտությունը 1908—1909 թ. թ. բանվորական ընտանիքի միջին յեկամուտը ցույց է տալիս տարեկան միայն 720 դոլլար: Պողպատի և յերկաթամշակման արդյունաբերության մեջ այդ յեկամուտը հավասար եր միայն 568 դոլլարի, բիտումինոզ ածխի հայթհայթման մեջ—577, անտրացիտի—618, մետաքսի ֆաբրիկաներում—635, շաքարի գործարաններում—681, կաշեգործարաններում-671 դոլլար: 1908 թվին Պենսիլվանիա նահանգի պողպատաձուլական գործարանների բանվորների տարեկան յեկամուտը (ամբողջ ընտանիքի յեկամուտը, վոչ միայն նրա գլխի աշխատավարձը) միայն 349 դոլլար եր: Միջին աշխատավարձը 1903-ից մինչև 1916 թ. տարեկան 800-ից մինչև 900 դոլլար եր անվորակյալ բանվորների համար:

Այսպիսով՝ ամբողջ նախապատերազմական և պատերազմական շրջանի ամերիկյան անվորակ բանվորի աշխատավարձը չեր բավականացնում, վորպեսզի բավարարեր նրա ամենակենսական կարիքները:

Իրերի դրությունը չփոխվեց նաև հետպատերազմյան շրջանի համար,—ամենամեծ «բարգավաճման» շրջանի համար: Ներքևում բերված տվյալներն հաշվի յեն առնում թե՛ անվորակ և թե՛ վորակյալ բանվորի նվազագույն բյուջեն: Աշխատանքի մինիստրությունն այսպիսի գնահատական է տալիս այդ բյուջեյին.

«Նկատի յեր առնված սահմանել առողջության և ճարևայելչության (decency) ամենացածր մակարդակը, վորից ավելի ցածր ընտանիքը չի կարող իջնել, առանց ֆիզիկական և բարոյական այլասերման վտանգին յենթարկվելու»:

Ուրեմն, այս այն մինիմումն է, վորը բացառում է ամեն մի ծախս, բացի ամենաանհրաժեշտից, բացառում է կինո, թատրոն այցելելը, լրագիրներ կարդալը և միքանի վայրերի համար մինչև անգամ տրամվայ կամ ստորերկրյա յերկաթուղի նստելը: Յերկրորդ բյուջեն առաջինից տարբերվում է նրանով, վոր նա պարունակում է յերկրորդ կարգի անհրաժեշտության մի քանի կարիքներ:



ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԸ 1929 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ (դոլլարներով)

| Քաղաքներ | Անվորակ բանվորի բյուջեն | Վորակյալ բանվորի բյուջեն |
|---|---|---|
| Նյու-Յորկ | 2174 | 3402 |
| Բրուկլին | 2291 | — |
| Սկնեկտըդի | 2169 | |
| Ռոչեստեր | 2271 | — |
| Չիկագո | 2452 | — |
| Սան-Ֆրանցիսկո | 2533 | — |
| Ֆիլադելֆիա | 2403 | — |
| Մինեապոլիս | 2474 | 2876 |
| Ռիդինգ | 2167 | 2517 |
| Լոս-Անժելոս | 2488 | — |
| Սկրենտոն | — | 2646 |

Ամենախնամոտ հետազոտությունը կատարել են Ոհայո նահանգի Միդլտաուն քաղաքացի Լինդս ամուսինները: Հինգ հոգուց բաղկացած ընտանիքի նվազագույն բյուջեն նրանք սահմանել են 1924 թ. համար 1920 դոլլար: Այդ փոքրիկ քաղաքում ինքնագործունյա զբաղմունք ունեցող 17 հազար մարդուց միայն 210 հոգի ցույց են տվել տարեկան 5 հազար դոլլարից ավելի յեկամուտ. բոլոր հետազոտված բանվորների 90 %-ը ստանում եյին տարեկան ամուրիները՝ 1 հազար դոլլարից պակաս, իսկ ամուսնացածները—2 հազար դոլարից պակաս:

Այժմ անցնենք ապրուստի մակարդակին: Մի կողմ դնենք «կյանքի արժեքի», իրական աշխատավարձի, բարեկեցության և այլն բազմաթիվ և խիստ վիճելի ցուցանիշները, վորոնք վերջիվերջո խիստ աղոտ պատկերացում են տալիս մեզ հետաքրքրող հարցի մասին, թե ինչպես է ապրում ամերիկյան բանվորը: Դժբախտաբար այստեղ հարկ է լինում գործել խիստ թերի տվյալներով, վորպիսիները կան միայն առանձին շրջանների վերաբերմամբ: Խնամոտության և լրիվության տեսակետից բացառիկ ընտրովի հետազոտություն է կատարված Չիկագոյի անվորակյալ բանվորների վերաբերմամբ: Կա Նյու-Յորկի անվորակյալ բանվորների, առավելապես նեգրերի բնակարանային պայմանների հետազոտությունը: Ապա՝ ավելի պակաս լրիվ հետազոտված է Ոհայո նահանգի տիպիկ ամերիկական Զենզվիլլ քաղաքը: Այնուհետև մեր տրամադրության տակ կան 25 հազարից պակաս և 25-ից մինչև 500 հազար բնակչություն ունեցող 36 քաղաքների ընտանիքների ապրուստի մակարդակի վերաբերյալ հետազոտության նյութերը: Սրանց մեջ են նաև այնպիսի խոշոր արդյունաբերական կենտրոններ, ինչպիսիներն են՝ Ֆիլադելֆիան, Սենտ-Լուիսը: 36 քաղաքների տվյալները կտան մեզ միջին դասակարգերի բարձրագույն և վերին խավի ապրուստի մակարդակի և հարմարության առարկաներով ապահովված լինելու պատկերը, Զենզվիլլի տվյալները—միայն միջին դասակարգերինը, իսկ Չիկագոյի և Նյու-Յորկի հետազոտությունը—անվորակ բան-

վորներինը: Ցերեք հետազոտությունների (տոկոսներով) տվյալները բերված են հետևյալ աղյուսակի մեջ:

Այստեղ պայծառ կերպով յերևան են գալիս սոցիալական կոնտրաստները կապիտալիստական հասարակայնության հիմնական անտագոնիստական դասակարգերի և մանր ու միջին բուրժուազիայի միջև:

Չիկագոյի անվորակ բանվորն իր բնակարանի համար միջին հաշվով վճարում է տարեկան վոչ ավելի, քան 300 դոլլար: Բանվորների խմբեր կան, վորոնց բնակարանի վարձը միայն 100 դոլլարի յե հասնում. նրանք այն բնա-

| | Վաննա չունի | Ելեկտրական լույս չունեն | Ավտոմոբիլ չունեն | Ռադիո չունեն | Պիանինո չունեն | Վո՛չ մի խնայողություն չունեն |
|---|---|---|---|---|---|---|
| Չիկագո | 57,5 | 29,3 | 97,0 | 92,9 | 79,8 | 68,9 |
| Ջենզվիլլ | 38.2 | 26.3 | 49.3 | 84.0 | 56,7 | 22,5 |
| 36 քաղաքներ | 5,3 | 3,1 | 40,6 | 63.9 | 49,2 | — |

կարաններն են, վորոնք մեծ մասամբ ընկած են գետնի յերեսին յեղած յերկաթուղիների շրջանում, սրանց մշտական և սոսկալի աղմուկի մեջ. դրանք հաճախ այնպիսի բնակարաններ են, վորոնց արտաքինը բակում է ղոնվում,— մի խայտառակ բիծ Ամերիկայի «բարգավաճման» ֆոնի վրա:

Նյու–Յորկի բանվորի բնակարանային վարձը տարեկան 316 դոլլար է անում ամբողջ քաղաքի համար և 480 դոլլար նեգրական բանվորական ընտանիքի համար Հարլեմում, վոր կազմում է ամբողջ տարեկան յեկամտի 19 և 32%–ը: Այդ բնակարանների բանվոր բնակչությունն ապրում է չափազանց կուտակված, յերկուական կամ յերեքական մարդ մի սենյակում, մինչդեռ սահմանված ստանդարտը, վորի ժամանակ հնարավոր է սենյակը պահել բնակարանային առողջապահության և սանիտարիայի պահանջած կանոնների համաձայն դրության մեջ, սենյակին մի մարդուց դենը չի անցնում: 1014 հետազոտված բանվորական ընտանիքներից Նյու–Յորկում կենտրոնական տաքացում ունեն միայն 134–ը, վաննա—447, արտաքնոց բնակարանում—510, տաք ջուր—579, ելեկտրականություն—757, գազ—868: Սրանք են ամերիկյան բանվորի բնակարանային–կենցաղական պայմանները: Յեվ միևնույն ժամանակ.

«Վարձով է տրվում (այս հայտարարությունն ուղղված է սակավաթիվ բացառություն կազմող անձանց) մի յեռահարկ բնակարան, 15 սենյակից բաղկացած, վորը կանխորոշված է այնպիսի մի հատուկ մարդու համար, վորն ուզում է իդեալական բնակարան ունենալ քաղաքում, բարձր, ամպերի մեջ»: Այդ անօրինակ բնակարանը բռնում է Դելմանիկ հյուրանոցի—Նյու–Յորկի նորագույն և գեղեցկագույն հյուրանոցային տան—ամբողջ 30, 31 և 32 հարկերը: Վարձավճարն է—45 հազար դոլլար»:



Միստեր Վիլլարդը, «Նեյշըն»–ի խմբագիրն հարցնում է թունալից.

«Վճարը 45 հազար,—ո՞րը, թե ժամը»:

Տենդենց կա՞ դեպի բանվոր դասակարգի դրության բարելավումը:

Աշխատավարձի ավելացումն արդյոք նշանակո՞ւմ է պրոլետարիատի դրության բարելավում: Վերջին հարցը, վոր ամենից ավելի հաճախ հանդիպում է բուրժուական տնտեսագետների մոտ, ինքնըստինքյան սխալ է, վորովհետև մինչև անգամ աշխատավարձի բարձրացումը կապիտալիստական հասարակության մեջ ինքնըստինքյան չի նշանակում բանվոր դասակարգի դրության բարելավում:

«Բոլոր միջոցներն արտադրության զարգացման համար,—ասում է Մարքսը,—վեր են ածվում արտադրողի հպատակեցման և շահագործման միջոցների, խեղանդամում են բանվորին, նրան դարձնելով վոչ–լրիվ մարդ, ստորացնում են նրան մինչև մեքենայի կցորդի դերը, աշխատանքի ծանրությամբ խլում են նաև նրա բովանդակալից լինելը. օտարում են բանվորից հոգևոր ուժերն աշխատանքի պրոցեսի մեջ այն չափով, վորչափով գիտությունը վերջինիս հետ միանում է իբրև ինքնուրույն ուժ. նրանք խեղաթյուրում են այն պայմանները, վորոնց մեջ աշխատում է բանվորը, աշխատանքի պրոցեսի ժամանակ նրան յենթարկում են ամենածանր և զարշելի բռնակալության, նրա կյանքի ամբողջ ժամանակը վեր են ածում աշխատաժամանակի, նրա կնոջն ու յերեխաներին նետում են կապիտալի ջագերնաուտյան կառքի տակ... Դրանից հետևում է, վոր ինչ չափով կապիտալը կուտակվում է, բանվորի դրությունը պետք է վատանա, **վորքան էլ բարձր կամ ցածր լինի նրա վարձատրությունը**» (ընդգծումն իմն է.—Հ. Պ.):

Բայց մեզ այստեղ հետաքրքրում է ամերիկյան բանվորի դրությունը նրա աշխատավարձի կապակցությամբ: Մենք չենք շոշափում մյուս մոմենտները՝ բանվորական օրը, աշխատանքի ինտենսիվացում, բանվորի ֆիզիկական և բարոյական խեղաթյուրումը և այլն. այդ բոլոր յերևույթները աճող ուժով զարգանում են բոլոր հետպատերազմյան տարիների ընթացքում: Բայց մինչև անգամ այդ, այստեղ մեզ հետաքրքրող, նեղ բնագավառում էլ բանվոր դասակարգի դրությունը չբարելավվեց:

1920 թ. ցենզի համաձայն՝ 7972 հազար ֆաբրիկա–գործարանային բանվորներից անվորակ եյին հաշվում 4278 հազարը, կամ 53,7%–ը: Յեթե ֆաբրիկային բանվորներին ավելացնենք տրանսպորտում, հանքագործության, յերկրագործության և անտառաբուծության մեջ զբաղված բանվորներին, այն ժամանակ անվորակ բանվորների ընդհանուր թիվն 1920 թ. համար կլինի մոտ 10 միլիոն մարդ: Այն ժամանակվանից անցել է տաս տարի, վորոնց ընթացքում յերկրի արդյունաբերության զարգացումը մեծ հաջողություններ է ձեռք բերել: Վո՛չ մի կասկած չի կարող լինել այն մասին, վոր ներկայումս անվորակ բանվորների ընդհանուր թիվն ու տոկոսը շատ ավելի բարձր է: Ի՞նչպիսի յե ուրեմն բանվոր դասակարգի անվորակ մասի աշխատավարձի դինամիկան:

Յեթե մենք զուգադրենք իրական աշխատավարձի ինդեքսը յերկու հնգամյակ

ների ընթացքում—1895–1899 թ. թ. (ամենից ավելի բարձր աշխատավարձի շրջան 1890–1920 թվականների ընթացքում) և 1920–1924 թ.թ., ապա մենք կգտնենք, վոր միջին աշխատավարձը առաջին հնգամյակում կազմում եր 114,2, իսկ յերկրորդ հնգամյակում—115, վոր իրական աշխատավարձի հավելում ե տալիս 0,8%-ով: Անվորակ բանվորների աշխատավարձի մասին հատուկ աշխատություն գրող հեղինակը, վորից մենք փոխ ենք առել այս տվյալները, հակամետ չե իրական համարելու այդ ավելացումը:

«Նախորդ տարիներն,—ասում ե նա,—անվորակ բանվորների աշխատավարձը լրացվում եր բանջարաբուծությունից, այգեգործությունից և այլ ստացված յեկամուտներով: Վերջին քառորդ դարի ընթացքում մեր անվորակ բանվորներն առավելապես քաղաքաբնակներ դարձան: Պետք ե հաշվի առնել նմանապես շարունակ ավելացող տատանումները աշխատանքի զբաղման մշտականության մեջ»:

Այսպիսով, վո՛չ միայն անվորակ բանվորների ներկայումս գոյություն ունեցող աշխատավարձը բավական չե ապրուստի սահմանված մակարդակը պահպանելու համար, այլ և նրա դինամիկան ավելանալու տենդենց չի ցույց տալիս: Այդ նշանակում ե, թե բանվոր դասակարգի դրությունը, վորչափով այն վորոշվում ե նրա աշխատավարձով, վերջին տասնամյակի ընթացքում չի լավացել:

Ճիշտ ե, վոր վորակյալ բանվորների աշխատավարձի բացարձակ գումարը զգալի չափով ավելի բարձր ե, քան անվորակներինը: Բանվորական արիստոկրատիան, վոր ընդգրկված ե առավելապես Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի մեջ, ներկայումս զգալի չափով ավելի բարձր ապրուստի մինիմում ե վայելում, վոր մի քանի դեպքերում մոտենում ե միջին բուրժուազիայի ստորին խավերի ապրուստի մակարդակին: Բայց վերջին տարիները ցույց են տալիս, վոր վորակյալ բանվորների աշխատավարձն ել նույնպես չի ավելանում: Վորակյալ բանվորների աշխատավարձի շարժման զուգադրումը խոշոր արդյունաբերական կորպորացիաների շահույթների և այդ կորպորացիաների վճարած դիվիդենդների հետ, տալիս ե հետևյալ պատկերը:

Խոշոր արդյունաբերական կորպորացիաների շահույթները, հարկերն ու բոլոր մնացած ծախսերը հանելուց հետո, 1922 թվին կազմում եյին 5,183 միլիոն, 1927 թվին—7,538 միլիոն (ամերիկական գանձարանի տվյալներով) և 1929 թվին—9·900 միլիոն դոլլար (պրոֆ. Ֆրայդեյի գնահատումը): Այսպիսով, 1929 թ. շահույթները 1922 թ. համեմատությամբ ավելացան 91%-ով: Շահույթների վիթխարի ավելացումն հնարավորություն տվեց նույնքան վիթխարի դիվիդենդներ վճարելու: 1922 թվին վճարվել եր 3·436 միլիոն դոլլար դիվիդենդ, 1927 թվին—6·423 միլիոն (գանձարանի տվյալները), իսկ 1929 թվին—8 միլիարդ (պր. Ֆրայդեյի գնահատումը), կամ ավելացումն 133%-ով: Միևնույն ժամանակում վորակյալ բանվորների աշխատավարձն ավելացավ միայն 19%-ով, ըստ վորում միջին ավելացումը վորակյալ բանվորների բոլոր կատեգորիաների համար պարտական ենք գլխավորապես կառուցող բանվորների աշխատավարձի 38%-ով ավելանալուն: 1929 թվին վո-



րակյալ բանվորների աշխատավարձը 1928 թ. համեմատությամբ ավելացավ միայն 2%-ով:

Դիվիդենդների և աշխատավարձերի շարժման գրաֆիկ պատկերացումը կտար դիվիդենդների կտրուկ կերպով դեպի վեր բարձրացող կորագիծ և աշխատավարձերի շարժման համարյա հորիզոնական գիծ, վորը 1922–1929 թ. շրջանում գտնվում ե համարյա միևնույն մակարդակի վրա:

Վորակյալ բանվորների աշխատավարձի հետագա հեռանկարների հաշվառման համար պետք ե նկատի ունենալ, վոր արտադրական պրոցեսի շարունակ աճող մեքենայացումն ու ռացիոնալացումը քանի գնում, այնքան ավելի ու ավելի պակասեցնում ե վորակյալ բանվորների կադրերը, հենց դրանով իսկ փոխադրելով նրանց անվորակների տարակարգը, ավելի ցած աշխատավարձով և ապրուստի ավելի ցած մինիմումով: Մշտական գործազրկությունը, վոր այնտեղ ե հասցնում, վոր մինչև անգամ վորակյալ բանվորները լավագույն դեպքում զբաղված են միայն տարվա յերեք քառորդ մասը, նրանց անվանական աշխատավարձի մեկ քառորդով կրճատվում ե:

Ամերիկյան բանվորի դրության լավագույն ցուցանիշը, գուցե, նրա մասնակցությունն ե այդ մասնակցության դինամիկայում յերկրի ազգային յեկամտի մեջ: Բանվորների և ծառայողների բաժինն ազգային յեկամտի մեջ 1919–1921 թ. թ. կազմում եր 57%, 1924 թվին այն իջավ մինչև 46%: Դրա հետ մեկտեղ չպետք ե մոռանալ, վոր բանվորների և ծառայողների կատեգորիայի մեջ են մտնում տարեկան ինչպես 500 դոլլար, այնպես և 150 հազար դոլլար յեկամուտ ունեցող անձինք: Յեթե այդ կատեգորիայից հանենք իսկական բանվորներին, այսինքն՝ միմիայն ֆիզիկական աշխատանք կատարող անձերին, ապա ազգային յեկամտի դասակարգային բաշխումը 1925 թվականի համար հետևյալ պատկերը կունենա:

| | Ինքնագործ. զբաղվածների տոկոսը | Ազգային յեկամուտի տոկոսը | Միջին յեկամուտը (դոլլարներով) |
|---|---|---|---|
| Բանվոր դասակարգը | 63,0 | 38,0 | 1.150 |
| Ֆերմերները | 14,6 | 9,2 | 1.250 |
| Անաշխատ յեկամուտ ունեցող անձինք | | | |
| 3 հազարից պակաս | 16,0 | 22.5 | 2.635 |
| 3—10 հազար | 5.7 | 16,7 | 5 530 |
| 10 հազարից ավելի | 0.7 | 13.6 | 35 000 |

Այդ տվյալները պարզ են և վո՛չ մի մեկնաբանության կարիք չունեն: Ինքնագործունյա զբաղված բնակչության 6,4%-ը համակենտրոնացնում ե ամբողջ ազգային յեկամտի 30,3%-ը. ինքնագործունյա զբաղված բնակչու-

թյան 63%-ը, այսինքն՝ բանվորները, տնօրինում են ազգային յեկամտի լոկ 38%-ը։

Այսպես է ամերիկյան բանվորների դրությունը։ Այդ դրությունը չբարելավվեց յերկրի ամենաբարձր տնտեսական վերելքի տարիները։ Ամերիկյան կապիտալիզմի հեռանկարները, վորոնց մասին խոսք կլինի ստորև, հիմք չեն տալիս կարծելու, թե այդ դրությունը ապագայում կբարելավվի։

Աշխատավարձի և ապրուստի մակարդակի մասին յեղած տվյալները բավական չեյին լինի ամերիկյան բանվորի դրության մասին դատելու համար։ Վերլուծության համար պետք է ներգրավեն հետպատերազմյան ամերիկյան կապիտալիզմի զարգացման եյական գծերից մեկը—գործազրկությունը[1])։

## ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱՆ ՅԵՎ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Խոշոր ֆաբրիկան ուժեղացնում է շահագործումը, յերկարացնելով բանվորական տարին մինչև մաքսիմումը և հենց դրանով ստեղծելով գյուղից միանգամայն կտրված պրոլետարիատ։

Յեթե հետախուզեյինք բանվորական տարվա յերկարության մեջ յեղած տարբերությունները, ֆաբրիկաների տեխնիկական դրվածքից (ձեռքի և մեխանիկական շարժիչների և այլն) կախված, ապա անկասկած կարելի կլիներ գտնել ամբողջ մի շարք ամենահետաքրքրական ցուցումներ բնակչության կյանքի պայմանների, բանվորների դրության, մեր կապիտալիզմի եվոլյուցիայի վերաբերմամբ և այլն[2])։

1930 թ. սկսվեց բոլոր կապիտալիստական յերկիրների բանվորական մասսաների համար գործազրկության բուռն աճման նշանի տակ։ Ամեն որ հեռագիրը հաղորդումներ է բերում այս կամ այն յերկրից գործազրկության նոր «ռեկորդների» մասին, ինչպես նաև գործազուրկների մարտական յելույթների, ցույցերի, ընդհարումների մասին վոստիկանության և զորքերի հետ։

Իբրև վառոդակ մի ուռուցք՝ տնտեսական ճգնաժամը տարածվում է կապիտալիստական աշխարհի բոլոր անկյունները։ Կանգ են առնում կամ արտադրությունը կրճատում են գործարանները, ֆաբրիկաները, հանքահորերը։ Համաշխարհային շուկայի ցնցումները թափանցում են ամենահեռավոր գաղութների ամենախուլ անկյունները, ավերելով միլիոնավոր գյուղացիական տնտեսությունները, սովի և աղքատության դատապարտելով ամբողջ մարզերի բնակչության ճնշող մեծամասնությունը։

[1]) Павлов И. М. «Америк. хоз.на рубеже», стр. 40—53
[1]) Ленин, собр. соч. т. XII, ч. I, стр. 271



Գործազուրկների պայքարի աճող հեղափոխական վերելքի հիմնական լծակն է դառնում կապիտալիստական ստաբիլիզացիայի հետագա խախտման ամենակարևոր գործիքը։

1930 թ. գործազրկությունը տարբերվում է նախկին տարիների գործազրկությունից վո՛չ միայն իր քանակական թափով, այլ և այն պատճառների զգալի չափով, փոփոխությամբ, վորոնք առաջացրել են նրա վերելքը, նրա բնույթի և նշանակության փոփոխությամբ վողջ պրոլետարիատի համար ամբողջությամբ վերցրած։

Դեռ մինչև համաշխարհային տնտեսական ճգնաժամի սուր փուլի վրա հասնելը, դեռ ևս յերրորդ շրջանի բոլորովին սկզբում, յերբ կապիտալի ռեֆորմիստական լակեյները բոլոր յեղանակներով պնդում եյին հաստատուն, անսասան կայունացման, ծաղկման և վերելքի մասին, գործազրկությունը մի շարք կապիտալիստական յերկրներում դարձել եր բանվորական կյանքի կենտրոնական հարցը։ Եվ չխոսելով Անգլիայի մասին, վորտեղ խրոնիկական գործազրկությունը հետ-պատերազմյան կապիտալիզմի անկապտելի որգանական է դարձել,—մի շարք այլ յերկրներում վերջին տարիների յուրաքանչյուր ձմեռը բարձրանում եր գործազրկության մի չտեսնված ալիք։ Գարնանն ու ամառը այդ ալիքը մեծ մասամբ իջնում եր, սակայն տարեցտարի թողնում եր մշտապես (պերմանենտ) գործազուրկների մի հետզհետե աճող մնացորդ։

Դա կապիտալիստական ռացիոնալացման տիպիկ գործազրկությունն եր։ Մի շարք յերկրներում այդ շրջանում տեղի յեր ունենում արդյունաբերական արտադրանքի վորոշ աճում։ Սակայն արտադրանքի այդ ընդլայնումը՝ աշխատանքի ինտենսիվության աճման և վերջին տարիների տեխնիկական տեղաշարժերի հետևանքով՝ շարունակ ավելի ու ավելի հետ եր մնում արտադրողականության աճումից։ Այդ հետ մնալու անխուսափելի հետևանքն եր բանվոր դասակարգի զգալի շերտերի դուրս մղվելն արտադրությունից, գործազուրկների նախապատերազմական պահեստի բանակի վերածումը յուրատեսակ «ավելորդ» մի բանակի, վոր ամբողջությամբ չեր ներծծվում արտադրության մեջ մինչև անգամ վերջինիս վերելքի և ընդլայնման շրջաններում։

Նոր արտադրությունների զարգացումը և նոր շրջանների ինդուստրացումը կլանում եյին կապիտալիստական ռացիոնալացման «հաջողությունների» շնորհիվ դուրս մղված բանվորական ուժի միայն մի փոքր մասը։

Որինակ, Անգլիայում բանվորների թվի աճումը այսպես կոչված «նոր» արտադրությունների հինգ հիմնական խմբերում (ավտո, քիմիա, գունավոր մետաղներ, արվեստական մետաքս և ելեկտրո-արդյունաբերություն) 1924 թվից մինչև 1928 թ. ժամանակաշրջանում չորս անգամ ավելի պակաս եր, քան թե միևնույն ժամանակամիջոցում հենց մի՛միայն ածխային արդյունաբերությունից դուրս նետված բանվորների թիվը։

ՀԱՄՆ-ում հարավային նահանգների ինդուստրացումը, առաջվա զուտ

յերկրագործական շրջանների արագ արդյունաբերական զարգացումը տեղի յե ունենում բանվորների թվի չափազանց աննշան աճումով. 1923-ից մինչև 1927 թիվը հարավի արդյունաբերության մեջ զբաղված աշխատողների թիվն ավելացավ միայն 60 հազարով: Այդ աճումը շատ հետ եր մնում ինչպես հյուսիսային նահանգներում համապատասխան արդյունաբերություններից դուրս մղվածների թվից, այնպես նաև ինդուստրացման շնորհիվ հարավի սպիտակ և նեգրական ֆերմերների արագացրած ավերումից:

Գործազրկությունը ՀԱՄՆ-ում ամենապայծառ և տիպիկ նմուշներ եր այդ շրջանի ամբողջ գործազրկության, կապիտալիստական ռացիոնալացման գործազրկության:

Հուչակավոր «ծաղկման» ամենաբարձր վերելքի, արդյունաբերական արտադրանքի տարեկան ռեկորդների շրջանում՝ ժամանակակից կապիտալիզմի այդ առաջավոր յերկիրը գործազուրկների մի բանակ ուներ, վորի թիվը շատ բուրժուական տնտեսագետները 3–5 միլիոն մարդ եյին հաշվում:

Բնորոշ է, վոր Հուվերի հանձնաժողովի աղմուկ հանած աշխատությունը «ծաղկման» շրջանի այդ յուրահատուկ մոմենտները, ամերիկյան կապիտալիզմի զարգացման ամբողջ մի շրջանի յուրատեսակ ապոթեոզը, հանդիսանում գործազրկության նախագահական կոնֆերենցիայի կից կոմիտեյի հաշվետվությունը:

Այդ հաշվետվությունը մեծ ուշադրություն է նվիրում այսպես կոչված «տեխնոլոգիական գործազրկությանը», վերագրելով այն «ծաղկման» արեգակի վրա յեղած սև բծերի թվին և ըստ եյության հավատալով կապիտալիզմի ամենալիակատար անզորությանն այդ պրոբլեմը լուծելու: Միակ դեղատոմսը, վոր այդ ասպարեզում կարող են առաջարկել Հուվերի հանձնաժողովը, աշխատանքի դեպարտամենտը և ֆինանսական կապիտալի մյուս գործակատարները, այն ընդհանուր ֆրազներն են, թե երբ «բանվորների ավելցուկը կլանվում է վոչ նյութական կուլտուրայի արտադրության նոր ճյուղերով»:

Ամբողջովին նույն ուղիով են ընթանում նաև բոլոր յերկրների ռեֆորմիստները, վորոնք փորձում են համոզել բանվորներին, թե կապիտալիստական ռացիոնալիզացիայի ստեղծած գործազրկությունը «ժամանակավոր» է, և դժվարին «անցման շրջանից» հետո կսկսվի, նոր շուկաների նվաճման հետևանքով, գործազուրկների ներծծումն արտադրության մեջ, աշխատավարձի բարձրացումն ու մնացած բարիքները: Այդ «թեորիան» ընդհանուր է հանդիսանում ինչպես աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի, այնպես նաև անգլիական բանվորական կուսակցության պայծառափայլ առաջնորդների, գերմանական սոցիալ դեմոկրատների և ռեֆորմիզմի այլ սյուների համար:

Այդ համոզիչ խոսքերով ռեֆորմիստները կենսագործում են իրենց միսիան իբրև բուրժուազիայի «տերտերներ», վորոնք բանվորներին կոչ են անում «տոկալ» յերկրավոր կյանքում այն աշխարհի բարորության սիրուն:

Այդ թեորիաները բառ առ բառ հիշեցնում են բուրժուական տնտեսագետ-



ների բոլորովին նման մխիթարանքները մեքենայական արտադրության առաջին ետապներում, վորոնց ծաղրում եր Մարքսը, ցույց տալով թե ինչպես «այդ ժամանակավոր կարիքն ուժեղանում է և ամրապնդվում մեքենաների արագ և անընդհատ կատարելագործման շնորհիվ», և մեքենաների միջոցով դուրս նետված բանվորները, «աշխատանքի բաժանումով խեղանդամված», լավագույն դեպքում «կարող են մուտք գտնել միայն աշխատանքի սակավաթիվ ավելի ցած, իրենց պարզության հետևանքով միշտ լիքը լցված և վատ վճարվող ճյուղերում»: Մարքսը մի անգամ ընդմիշտ հերքեց ու ծաղրի առարկա դարձրեց «փոխհատուցման (կոմպենսացիա) թեորիան մեքենաների միջոցով դուրս մղված բանվորների վերաբերմամբ»— «գալիքի թեորեման» այն մասին, վոր «ավելի կամ պակաս յերկարատև անցման շրջանի վերջանալուց հետո միևնույն ֆաբրիկան սկսում է ավելի մեծ քանակությամբ բանվորների խոշտանգել, քան այն, վոր նա սկզբնապես դուրս նետեց փողոց»:

Տակավին իր ամենավաղ աշխատություններից մեկում, նկարագրելով «կապիտալիստների արդյունաբերական պատերազմը իրար մեջ», Մարքսը գրում է.

«Այդ պատերազմն այն առանձնահատկությունն ունի, վոր նրա մեջ հաղթանակն ստացվում է վոչ այնքան բանվորական բանակի ավելացման, վորքան նրա նվազեցման շնորհիվ: Զորահրամանատար կապիտալիստները վիճում են միմյանց հետ, թե ով կարող է ավելի մեծ քանակությամբ արդյունաբերական զինվորներ բաց թողնել:

Ճիշտ է, տնտեսագետները մեզ պատմում են, թե մեքենաների շնորհիվ դուրս մղված բանվորները աշխատանք են գտնում արդյունաբերության նոր ճյուղերի մեջ: Նրանք չեն համարձակվում ուղղակի պնդել, թե այն միևնույն բանվորները, վորոնց դուրս են մղում մեքենաները, աշխատավարձ են գտնում աշխատանքի նոր ճյուղերում: Փաստերը չափազանց բարձր են աղաղակում այդպիսի ստի դեմ: Իսկապես ասած՝ նրանք պնդում են միայն, թե աշխատավարձի նոր ուղիներ են բացվում բանվոր դասակարգի մյուս մասերի համար, որինակ, բանվորական յերիտասարդ սերնդի այն մասի համար, վորն արդեն պատրաստվում եր մտնելու արդյունաբերության անհետացող ճյուղերի մեջ: Այդ իհարկե մեծ մխիթարություն է կործանված բանվորների համար: Պարոն կապիտալիստները պակասություն չեն ունենա շահագործման համար պիտանի թարմ մսի և արյունի,—և թող մեռելները թաղեն իրենց մեռելներին: Այդ դատողություններով բուրժուաներն ավելի շուտ իրենք իրենց եյին մխիթարում, քան թե բանվորներին: Չէ՞ վոր յեթե մեքենաները վոչնչացնեյին վարձու բանվորների ամբողջ դասակարգը,—ինչպիսի սոսկալի ժամանակներ կսկսվեյին կապիտալի համար, վորն առանց վարձու աշխատանքի դադարում է կապիտալ լինելուց»:

Այնուհետև Մարքսը ցույց է տալիս մեքենաների շնորհիվ բանվորների այդ դուրս մղման և աշխատանքի պայմանների վատթարացման կապը: Նա գրում է.

«Յենթադրենք, սակայն, թե ինչպես այն բանվորները, վորոնց անմիջականորեն դուրս են մղում մեքենաները, այնպես և յերիտասարդ սերնդի ամբողջ այն մասը, վոր արդեն աշխատանքի հույս ունի տվյալ ճյուղում, իրենց համար նոր զբաղմունք են գտնում: Կարելի՞ յե արդյոք սպասել, վոր նոր զբաղմունքը նույնքան լավ կվարձատրվի, ինչպես կորցրած զբաղմունքը: Այդ բանը կհակասեր էկոնոմիկայի բոլոր որենքներին: Մենք տեսանք, թե ինչպես ժամանակակից արդյունաբերության զարգացումը տանում է դեպի բարդ, բարձրագույն զբաղմունքների փոխարինումը ավելի պարզացված, ավելորդ զբաղմունքներով: Հետևաբար, հնարավո՞ր է արդյոք, վոր մեքենայի շնորհիվ արդյունաբերության մի ճյուղից դուրս նետված բանվորները ապաստանարան գտնեն մի ուրիշ ճյուղում այլ կերպ, քան ավելի ցած, ավելի վատթար վարձատրության պայմանով»:

Ցույց տալով, վոր հենց մեքենաներ պատրաստելու վրա զբաղված բանվորները այս կանոնից բացառություն չեն կազմում, Մարքսը հետևյալ ամփոփումներն է անում.

«Վորքան ավելի յե զարգանում աշխատանքի բաժանումը և մեքենաների գործադրությունը, այնքան ավելի ուժեղանում է մրցակցությունը բանվորների միջև, այնքան ավելի պակասում է նրանց աշխատավարձը: Դրա վրա ավելանում է և այն, վոր բանվոր դասակարգը համալրվում է նաև հասարակության ունևոր շերտերից. պրոլետարիատի շարքերն է անցնում մանր արդյունաբերողների և մանր ռանտյեների մասսան, վորոնք ստիպված են անմիջապես շուկա հանել իրենց ձեռքերը բանվորների ձեռքերի կողքին:

Այդպիսով՝ մեկնած և աշխատանք վորոնող ձեռքերի անտառը ավելի և ավելի խտանում է, իսկ ձեռքերն իրենք—ավելի և ավելի նիհարում են»:

Մարքսի այս բոլոր դրույթներն այժմ էլ որվա ամենամեծ չարիքի նշանակություն ունեն: Նրանք հարվածում են վոչ հոնքին՝ այլ ուղիղ աչքին, վո՛չ միայն Հուվերի և նրա գիտական գվարդիայի գավեշտական փորձերի՝ հերքելու մարքսիզմը Ամերիկայի «բացառիկ» փորձով, այլ և այդ ասպարեզում յեղած ռեֆորմիստական թեորիաների բոլոր վարյանտներին: ՀԱՄՆ-ն այստեղ էլ բացառություն չի հանդիսանում, այլ Մարքսի այդ դրույթների ամենալիավարտ հաստատումն ու օրինակը:

«Տեխնոլոգիական» գործազրկությունը ուժգին հարված է հասցրել նաև ամերիկական պրոլետարիատի վորակյալ վերնախավին,—բանվորական արիստոկրատիային, վոր Աշխատանքի ամերիկյան Ֆեդերացիայի հենարանն է հանդիսանում: Դրա հետ կապված՝ մինչև անգամ այդ դեղին կազմակերպությունը, վոր յուրաքանչյուր քայլափոխում դավաճանում է բանվոր դասակարգի շահերին, ստիպված յեղավ ուշադրություն դարձնելու այդ պրոբլեմի վրա, հավաստելով միևնույն ժամանակ իր լիակատար անզորությունը՝ լուծելու այն: Աշխատանքի ամերիկյան Ֆեդերացիայի որգանը «Նորմալ գործազուրկները» վերնագրով հոդվածում գրում է, թե վերջին տարիներս ՀԱՄՆ-ում ստեղծվել է—



«...մարդկանց բազմամիլիոն մի շերտ, վորոնց գոյությունն ամբողջովին կախված է աշխատավարձից, բայց վորոնց համար աշխատանքը միշտ հանդիսանում է անկանոն, պատահական, ժամանակավոր և այն էլ շարունակ ավելի ու ավելի կարճատև: Պետք է այն էլ ասել, վոր այստեղ խոսքը վերաբերում է վոչ ծերունիներին, թույլերին և այլն, վորոնց մասին խոսելու կարիք էլ չկա, վորոնք ռացիոնալացման մասնագետների կողմից սիստեմատիկ և համառ կերպով դուրս են մղվում արտադրությունից:

Դետրոյտում 50 հազար մարդուց վոչ պակաս վերագրվում են այսպես կոչված «համպրուկային բրիգադին»: Նրանք յերբեմն, հատկապես հաջողակ սեզոններին, միքանի ամսով ներգրավվում են արտադրության մեջ, վորպեսզի հետո կրկին փողոց նետվեն: Ուզածդ րոպեյին ՀԱՄՆ-ի ամեն մի ձեռնարկության տրամադրության տակ կա վոչ միայն անհրաժեշտ պահեստ, այլ և տասնյակ անգամներ ավելի, քան նրան պետք է, և այն էլ՝ վո՛չ միայն միևնույն քաղաքից, այլև յերկրի բոլոր ծայրերից: Բանվորների մասսայական արձակումների ժամանակ ձեռնարկուն վոչ մի րոպե կարիք չունի մտահոգվելու. նա գիտե, վոր յեթե պետք լինի, նա վորքան ուզենա՝ կարող է ստանալ նրանց: Արտադրությունից դուրս մղվածները հատուկ խմբեր են հանդիսանում, վորոնց մասին վոչ վոք հոգ չի տանում, բացի բարեգործական ընկերություններից՝ իրենց պատահական վողորմություններով: «Նորմալ գործազուրկների» այդ շերտն աճում է ավելի արագ, քան յերբևէ յեղել է Ամերիկայի պատմության մեջ: Մեքենաների կատարելագործման յուրաքանչյուր որը կամ աշխատանքի կազմակերպման վորևէ հաջողությունը նրանց շարքերն են նետում նորանոր բանվորների»:

ՀԱՄՆ-ում յեղած այս «տեխնոլոգիական» գործազրկության պայծառ պատկերն է տալիս ամերիկական տնտեսագետ Ստյուարտ Չեյզն իր «Մեքենաներն ու մարդիկ» գրքում: Բերելով բազմաթիվ օրինակներ, յերբ նոր մեքենաների և գյուտերի շնորհիվ մի բանվորը փոխարինում և դուրս է մղում տասնյակների, Չեյզը գրում է.

«Մեքենաները չստեղծեցին գործազրկությունը, բայց նրանք մանր դրդրովածությունից այն դարձրին մարդկության գլխավոր խոցերից մեկը... Ու՞ր պետք է գնան դուրս մղվածները: Միակ պատասխանն է—նստարանը պարկում,—մի նստարան, վորին վիճակված է այսուհետև շարունակ ավելի և ավելի աճել յերկարությամբ... Մեքենայի շնորհիվ դուրս մղվելն այժմ ավելի արագ տեմպով է կատարվում, քան թե առաջ յերբևիցե, իսկական ֆանտաստիկական տեմպով»:

Նա ցույց է տալիս, վոր ե՛լ ավելի շատ մարդիկ առանց այն էլ անհավատալի չափով ուռած բաշխման սիստեմի մեջ խռնելու հնարավորություններն սպառված են: Մեխանիկական հարմարություններն սկսում են այդ ասպարեզից էլ դուրս մղել աշխատավորներին: Չեյզը տարակուսանքով հավաստում է.

«Մարդիկ պետք է հազարներով առանց աշխատանքի թափառեն փողոցներում, վորովհետև մեքենաները կարող են ավելի տալ, քան թե բավա—

կան է, բոլորին մատակարարելու համար… Այսուհետև, որքան ավելի լավ մենք ի վիճակի լինենք արտադրելու, այնքան ավելի վատ… Այս—գժանոցի էկոնոմիկան է»:

*Ձեյլը վիրավոր է, որ ճանապարհը կորցրել է ամերիկյան կապիտալիզմի հակասությունների թավուտներում և ելք չի գտնում: Այդ ելքն իսկապես գոյություն չունի կապիտալիզմի շրջանակներում: Ձեյլի գիրքը բնորոշ է հատկապես այն տեսակետից, որ ժամանակակից գործազրկությունը նրա համար—կապիտալիստական հակասությունների այդ փակուղու ամենապայծառ արտահայտությունն է հանդիսանում, կապիտալիզմի այդ անընդունակության արտահայտությունը՝ արտադրողական ուժերի զարգացումը համաձայնեցնելու միլիոնավոր աշխատավորների ո՛չ միայն շահերի, այլ և հենց նրանց գոյության հետ:*

*Այդպիսի լիավարտ ձևով հանդես գալով ՀԱՄՆ-ում,—մեր օրերի ամենահզոր կապիտալիզմի երկրում,—ստրուկտուրային գործազրկությունը ե՛լ ավելի մեծ թափով հարվածում է եվրոպական կապիտալիզմին:*

*Արտահայտություն գտնելով այնքան տարբեր ձևերի մեջ, ինչպես օրինակ Անգլիայում և Գերմանիայում, այդ գործազրկությունը հավասար չափով ցույց է տալիս կապիտալիզմի անզորությունը՝ լուծելու հետ-պատերազմական հակասությունների հանգույցը*[1]):

### ԱՆԳՈՐԾՆԵՐԻ ԹԻՎԸ 1930 Թ. ՓԵՏՐՎԱՐԻՆ

| | | | |
|---|---|---|---|
| ՀԱՄՆ | 6 000.000 | Իսպանիա | 200.000 |
| Գերմանիա | 4.500.000 | Պորտուգալիա | 100.000 |
| Անգլիա | 2.000.000 | Սկանդ. երկիրներ և Ֆինլանդիա | 150.000 |
| Իտալիա | 1 000.000 | Եվրոպական մյուս երկիրներ | 100.000 |
| Ավստրիա | 500.000 | Հարավային Ամերիկա | 1.000.000 |
| Լեհաստան | 400.000 | Մեքսիկա | 500.000 |
| Չեխո-Սլովակիա | 400.000 | Կանադա | 200 000 |
| Վենգրիա | 300.000 | Ավստրալիա | 200.000 |
| Բուլղարիա | 200.000 | Հարավ. Աֆրիկա | 100.000 |
| Հարավ-Սլավիա | 200.000 | Ճապոնիա | 1.000 000 |
| Ռումինիա | 200.000 | | |
| Հունաստան | 100 000 | | |
| | | Ընդամենը | 19.350 000[2]) |

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԽՍՀՄ ՄԵՋ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

*Ե՛հ, իսկ ի՞նչպես է գործը մեզ մոտ ԽՍՀՄ մեջ: Գործադրելի՞ չէ արդյոք մեզ մոտ կապիտալի, հավելյալ արժեքի, շահույթի հասկացողությունը:*

[1]) Рубинштейн, «Миров. эконом. кризис капитализма» стр. 105—110, изд. 1931

[2]) *Ներկայումս անգործների թիվը կապիտալիստական յերկրներում հասնում է* 36 *միլիոնի:*



*ի՞նչպես հասկանալ մեր բանվորների ստացած աշխատավարձը. արդյոք այն ըստ էության միևնույն բանը չէ, ինչ որ աշխատավարձը կապիտալիստական յերկիրներում:*

*Ահա այն հարցերը, որոնք սովորաբար հուզում են ուսանողին:*

*Տարակուսանքն ավելանում է նրանով, որ տնտեսության հարցերի վերաբերյալ մեր բառապաշարը փոխ է առնված կապիտալիստական պրակտիկայից: Մեր ձեռնարկությունների իրենց շենքերն ու սարքավորումը հիմնական կապիտալ են անվանում: Հումքը, վառելիքը և բանվորներին տրվելու համար անհրաժեշտ փողերը—շրջանառու կապիտալ: Բանվորներին տրված փողերը կոչում են աշխատավարձ: Տարվա վերջին ձեռնարկությունները պարզում են իրենց շահույթները:*

*…Մենք արդեն գիտենք, որ կապիտալի հասկացողությունն անբաժանելի յե բանվոր դասակարգի շահագործումից կապիտալիստների դասակարգի կողմից:*

*Կապիտալիստական ձեռնարկության շենքերի, մեքենաների, հումքի և փողերի մեջ իրականացված են յերկու դասակարգերի հարաբերություններ—հավելյալ արժեք յուրացնողների և բանվորական ուժ վաճառողների:*

*Կապիտալիստները կարող են հավելյալ արժեք յուրացնել այն պատճառով միայն, որովհետև արտադրության միջոցները խլված են արտադրողների ձեռքից և պատկանում են չարտադրողներին:*

*Մեր պետական ձեռնարկություններն աշխատավորների իրենց սեփականությունն են կազմում: Վերացված է տնտեսական խզումն արտադրողի և արտադրության միջոցների միջև: Այստեղից հենց ինքը կոլեկտիվ տնտեսատերն է աշխատում իր սեփական արտադրության միջոցներով: Այստեղ չկա շահագործող և չկա շահագործում. հետևաբար, այստեղ տեղիք էլ չկա խոսելու հավելյալ արժեքի մասին:*

*«Հավելյալ արժեք» արտահայտությունը վերցրած չէ կապիտալիստական պրակտիկայից: Այդ արտահայտությունը ծագել է կապիտալիստական հարաբերությունների գիտական վերլուծման ժամանակ: Նշանակում է, մենք կարող ենք բոլորովին հրաժեշտ տալ այդ արտահայտությանը, որչափով որ խոսքը վերաբերում է մեր պետական տնտեսությանը:*

*Որտեղ չկա հավելյալ արժեք, այնտեղ չի կարելի խոսել կապիտալի մասին, որովհետև կապիտալի հիմնական հատկանիշը հենց հավելյալ արժեքի յուրացումն է: Չի կարելի խոսել շահույթի մասին, որը հավելյալ արժեքի ձևերից մեկն է: Որտեղ չկա բանվորական ուժ գնողը, այնտեղ չկա նաև նրա վաճառքը, հետևաբար չկա նաև բանվորական ուժի գին, նշանակում է՝ չկա նաև աշխատավարձ այդ բառի կապիտալիստական իմաստով:*

*Ինքնըստինքյան հասկանալի յե, որ մասնավոր ձեռնարկություններում, որոնք չեն ազգայնացվել կամ որոնք մասնավոր ձեռքերի յեն հանձնված վարձակալության կամ կոնցեսիայի կարգով, դեռ պահպանվել է բանվորական ուժի գնումն ու վաճառումը, հետևաբար նաև կապիտալիստական հարաբերությունները, թեև պրոլետարական իշխանությունն այստեղ ի հարկե*

կապիտալիստների ախորժակների առաջ արգելքներ է դնում, վորոնք տեղ չունեն կապիտալիստական յերկիրներում:

Բոլորովին այլ է խնդիրը—պետական ձեռնարկություններում: Լավագույն ապացույցն այն բանի, վոր պետական ձեռնարկությունները բանվորական ուժ գնողներ չեն հանդիսանում, նրանց ձգտումն է՝ բանվորներին վորքան կարելի յե, ավելի շատ տալ: Գնողը կանգնած է վաճառողի հանդեպ: Գնողը ձգտում է տալ մինիմում՝ մաքսիմումի համար, այսինքն՝ տալ վորքան կարելի յե քիչ և ստանալ վորքան կարելի յե շատ:

Պետական արդյունաբերությունը ձգտում է բանվորներին տալ վորքան կարելի յե շատ և նրանցից վերցնել միայն այնքան, վորքան անհրաժեշտ է մեր տնտեսության ուղիղ զարգացման համար: Ինչի՞ մեջ է գաղտնիքն այն բանի, վոր վարձողի և բանվորի շահերի միջև հակասություն չկա: Պարզապես նրանում է գաղտնիքը, վոր արտադրողն առկա յե, իսկ վարձողը չկա: Պետարդյունաբերության տերը հանդիսանում է բանվոր դասակարգը: Պետարդյունաբերության բանվորների ամբողջական աշխատավարձը—դա զուտ արտադրանքի այն մասն է, վոր տնտեսատերը վերցնում է իրեն սպառումի համար, ղեկավարվելով վո՛չ միայն այսօրվա, այլ նաև վաղվա շահերով: Բանվոր դասակարգը գիտակցաբար սահմանափակում է իր սպառումը, վորպեսզի արտադրանքի վորոշ բաժինը կարելի լինի գործադրել արտադրության ընդլայնման վրա:

... Զուտ արտադրանքն այստեղ բաժանվում է անհրաժեշտ և հավելյալ արդյունքի: Զուտ արտադրանքի արժեքն այստեղ բաժանվում է վոչ թե աշխատավարձի և հավելյալ արժեքի, այլ սպառումի մասի և կուտակելի մասի...

Այդպիսով, մեզ մոտ, վորքան վոր խոսքը վերաբերում է պետարդյունաբերությանը, ապրանքների շարքից դուրս ընկավ այն ապրանքը, առանց վորի կապիտալիզմ չկա, այն է՝ բանվորական ուժը: Քանի վոր բանվոր դասակարգը տիրել է արտադրության միջոցներին, նա չպետք է և չի կարող շուկա տանել բանվորական ուժը, վորը պետք է հենց նրան իրեն:

«Կապիտալ», «շահույթ», «աշխատավարձ» բառերը մեր պետական ձեռնարկություններում կորցրել են իրենց ներքին դասակարգային բովանդակությունը: Նրանք մեզանում պահպանել են միայն պայմանական գործածությունը: Հին բառերով մենք միանգամայն նոր հարաբերություններ ենք նշանակում: Յեվ հատկապես այդ պայմանական իմաստով մենք հետագայում գործ կածենք այդ բառերը, վորչափով վոր խոսք կլինի մեր պետական ձեռնարկությունների մասին:

...**Մասնավոր ձեռնարկությունների բանվորները**: Մինչև անգամ այնչափով, վորչափով խոսքը վերաբերում է աշխատավարձին այն ձեռնարկություններում, վորոնք դեռ մնացել են մասնավոր ձեռքերում, բանվորները ԽՍՀՄ մեջ ոգտվում են այնպիսի առավելություններով, վորոնք անծանոթ են բուրժուական յերկիրների բանվորներին: Աշխատանքի օրենսգիրքն ապահովում է բանվորների համար 8 ժամվա բանվորական օր, վոր այժմ փաստորեն



փոխարինվում է յոթժամյա բանվորական որով, 42 ժամվա անընդհատ շաբաթական հանգիստ, յուրաքանչյուր կես տարին 2 շաբաթվա հանգիստ, սոցիալական ապահովագրություն: Նրանց կոլեկտիվ պայմանագրերը վարձողների հետ կարգավորում են արհմիութենական կազմակերպությունները: Վերջիններս պաշտպանում են բանվորների բոլոր օրինական պահանջները, ըստ վորում այդ պաշտպանությունը շատ-շատ ավելի եյական է, քան բուրժուական յերկրի վորևէ արհմիության պաշտպանությունը: Յերբ բանվորը դատարանում արդարություն է փնտրում իր շահագործումը չափազանց հեռու տարածող վարձողի դեմ, բանվորը վստահ է, վոր իր գործը քննելու յե վո՛չ թե բուրժուական իշխանության կողմից դրված անձը, այլ իր իսկ պրոլետար-յեղբայրը: Նա վստահ է, վոր դատարանը կթափանցի նրա գործի մեջ և թույլ չի տա նրան նեղացնել: Բանվորի շահերը պաշտպանելու մեջ մեծ դեր է խաղում նաև խորհրդային մամուլը: Բանթղթակցի (բանվորական թղթակցի) ամեն մի նկատողությունը իր չարին անցկացրած մանր տնտեսատիրոջ մասին պատշաճ արձագանք է գտնում, և տնտեսատիրական կամայականությունն օրինական դիմադրության է հանդիպում:

**Պետական ձեռնարկությունների բանվորները**: Բայց բոլորովին այլ մակարդակի վրա չե դրված աշխատավարձի հարցը խոշոր արդյունաբերության և տրանսպորտի մեջ, վորոնք գտնվում են բանվոր դասակարգի ձեռքերում: Բացի բանվոր դասակարգից, ուրիշ վոչ վոքից չե կախված հարցն այն մասին, թե արտադրության արդյունքի արժեքի վոր մասը տալ բանվորներին և վոր մասը թողնել արտադրության ընդլայնման համար:

Յեռակի ամրացուցիչը, վորով ուժեղ է ԽՍՀՄ-ը (խորհուրդները, արհմիությունները, կոմունիստական կուսակցությունը) արտահայտություն է գտնում նաև աշխատավարձի կարգավորման գործում: Այստեղ մենք տեսնում ենք արհմիությունների, ԺՏԳԽ-ի և Աշխժողկոմատի օրգանների սերտ համագործակցությունը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ:

Աշխատավարձի հարցերի քննարկման մեջ ներգրավվում են լայն բանվորական մասսաները: Կոլեկտիվ պայմանագիրը կնքելուց առաջ վերջինիս պայմանները քննարկվում են յուրաքանչյուր ձեռնարկության մեջ բանվորների և ծառայողների ընդհանուր ժողովի կողմից: Նախքան քննարկումը լսվում է վարչության ընդարձակ զեկուցումը ձեռնարկության գործերի դրության մասին, ինչպես նաև հաղորդագրություններ ԽՍՀՄ տնտեսական կոնյունկտուրայի մասին, ամբողջությամբ վերցրած: Այդպիսով, Միության բանվոր դասակարգն ամբողջությամբ և յուրաքանչյուր ձեռնարկության բանվորներն առանձին-առանձին վերցրած տեսնում են, թե արտադրանքի վոր մասը կարող է տրվել բանվորներին իբրև աշխատավարձ և վոր մասը պետք է գործադրվի արտադրության միջոցների վերականգնման և ուժեղացման վրա:

**Աշխատավարձը և աշխատանքի արտադրողականությունը**: Աշխատավար-

ձի քաղաքականությունը մեզ մոտ հետապնդում է բանվոր դասակարգի կենսական մակարդակի բարձրացման նպատակը՝ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և արդյունաբերությունն ամրապնդելու և զարգացնելու միջոցով: Յեվ մեր տնտեսության վիճակի մասին յեղած տվյալները պերճախոս կերպով վկայում են, վոր մենք մատնանշված բոլոր յերեք գծերով էլ արագությամբ առաջ ենք շարժվում[1]):

Բանվորական ուժը արդի կապիտալիստական հասարակության մեջ ապրանք է հանդիսանում, վորի գինը վորոշվում է նույն փակտորների միջոցով, ինչպես նաև մյուս ապրանքների գները: Բանվորական ուժի այդ գինն արտահայտվում է աշխատավարձի ձևով: Բանվորական ուժի ապրանքային բնությունն ամենևին չի փոխվում նրանից, վոր գլխավոր կապիտալիստական յերկրներում աշխատավարձը մեծ մասամբ նորմավորվում է կոլեկտիվ պայմանագրերով, ինչպես վոր մյուս ապրանքների բնությունն էլ չի փոխվում այն պատճառով, վոր նրանց գները կարգավորում են կոնցեռնները, կարտելները, տրեստները և այլն:

Ինչպես գների դինամիկայի, այնպես և մյուս տնտեսական պրոցեսների վոլորտում տարերային փակտորների ունեցած ազդեցության բացահայտ գերակշռության մասին կարգավորող փակտորների վերաբերմամբ՝ պայծառ կերպով վկայում է մեր աչքերի առաջ մի քանի ամիսների ընթացքում կատարվող համաշխարհային, և մանավորապես ամերիկական տնտեսական կրիզիսը:

Միայն ԽՍՀՄ մեջ, վորտեղ շուկայական հարաբերությունների տարերքը փոխարինված է պլանային տնտեսությամբ և վորտեղ արմատապես փոխված են արտադրական հարաբերությունները՝ արտադրության միջոցների համայնացման կապակցությամբ,—բանվորական ուժը դադարում է ապրանք լինելուց: Այդ պատճառով էլ այստեղ կտրուկ կերպով փոխվում է ինչպես աշխատավարձի սոցիալ-տնտեսական բնույթը, այնպես և նրա զարգացման հիմնական տենդենցները:

... Այդպիսով՝ մենք գալիս ենք այն յեզրակացության, վոր իրական աշխատավարձի ամենախոշոր աճումը տեղի յե ունեցել ԽՍՀՄ մեջ: Մենք, իհարկե, անտես չենք առնում այն հանգամանքը, վոր համեմատության յելակետը—1913 թ.— իր մակարդակով շատ ցածր էր նախապատերազմական Ռուսաստանում: Սակայն արտադրողական ուժերի բուռն աճումը ԽՍՀՄ մեջ՝ նրա սոցիալական բնության առանձնահատկության կապակցությամբ՝ հասցրեց իրական աշխատավարձի մակարդակի չտեսնված վերելքի, վորի ինդեքսը գերակշռում է արդեն ամերիկականից, հաշված մոտավորապես նույն բազայի նկատմամբ: Այդ հանգամանքը կողմնակի ապացույց կարող է ծառայել այն բանի, վոր իրական աշխատավարձը ԽՍՀՄ մեջ իր բացարձակ մակարդակով

[1]) Ф. Михалевский, «Полит. Экономия».



էլ արդեն գերազանցում է մի շարք յեվրոպական յերկրների աշխատավարձից:

Մինչև այժմ մենք խոսում եյինք միայն անհատական աշխատավարձի մասին, վոր վճարվում է առանձին բանվորներին: Բայց բանվորը ԽՍՀՄ մեջ նշանակալից չափով օգտվում է աշխատանքի վարձատրության շարունակ ավելի ու ավելի զարգացող կոլեկտիվ ձևով, վորի մեջ մտնում են սոցիալական ապահովագրությունը, վոր կիրառվում է բացառապես տնտեսական կազմակերպությունների հաշվին, ձեռնարկությունների հատկացումները կուլտուրական կարիքների համար, հատկացումները բանվորների կենցաղի բարելավման ֆոնդին և այլն: Յեթե աշխատավարձի այդ ձևն էլ հաշվի առնենք, վոր արդյունաբերության մեջ աշխատանքի վարձատրության դրամական մասի 28%-ից ավելի յե կազմում նախապատերազմականի 8,9%-ի դիմաց (ձեռնարկությունների ծախքերի գումարը աշխատավարձի միքանի նատուրալ տեսակների վրա), այն ժամանակ իրական աշխատավարձի դինամիկան ԽՍՀՄ մեջ նախապատերազմական ժամանակի հանդեպ էլ ավելի կտրուկ վերելք կցուցաբերե. 1926/27 թվին 141,4% (1913 թ. ընդունելով=100-ի), 1927/28 թ.—160,9%, 1928/29 թ.—168,6%:

Սակայն աշխատավարձի դինամիկայի վերլուծությունը ԽՍՀՄ մեջ թերի կմնա, յեթե նկատի չունենանք մի շարք այլ առանձնահատկություններ նրա զարգացման մեջ:

Հենց այստեղ տեղին է մատնանշել հետևյալ բնորոշ գիծը ԽՍՀՄ աշխատավարձի քաղաքականության մեջ—միևնույն վորակի աշխատավորների աշխատանքի հավասար վարձատրության սկզբունքը, անկախ նրանց սեռից, հասակից (դեռահասներ), ազգությունից և ցեղից: Մանավորապես՝ մինչև 14 տ. յերեխաների աշխատանքի գործադրությունը բոլորովին արգելված է ԽՍՀՄ մեջ, 14—16 տ. թույլ է տրվում միայն հատուկ դեպքերում, իսկ դեռահասները (16—18 տ.) արտադրության մեջ զբաղվում են միայն 6 ժամ: (Դեռահասները ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության մեջ ընդամենը 4,2 % են կազմում): Պետք է հաշվի առնել նմանապես և այն, վոր աշխատավարձի նշված դինամիկան անց է կացել բանվորական օրվա կտրուկ կրճատման ֆոնի վրա ԽՍՀՄ մեջ—9,9 ժամից 1913 թվին խոշոր արդյունաբերության մեջ մինչև 7,3 ժամը 1930 թվին: Ներկայումս արդյունաբերության զգալի մասն արդեն անց է կացրած 7 ժամվա բանվորական օրվա (բոլոր բանվորների 41,4%-ը), իսկ մի շարք վնասակար արտադրությունների մեջ բանվորական օրը բանվորների նշանակալից խմբերի համար էլ ավելի պակաս է (ածխայինը—6 ժամ, ապակեգործականը—6 ժամ, հիմնական քիմիականը— 6 ժամ և այլն): Բացի դրանից, պետք է հաշվի առնել հնգօրյա շաբաթի (4 օր աշխատանք և մի օր հանգիստ) աստիճանական ներմուծումը, վոր փոխարինում է նախկին յոթնօրյա շաբաթին: Հնգօրյակն այժմ ընդգրկում է արդեն բոլոր բանվորների 61 %-ը:

Վերջապես, պետք է դեռևս նշել, վոր աշխատավարձի աճումը ԽՍՀՄ մեջ, յերկրի բուռն զարգացող ինդուստրացման կապակցությամբ, ուղեկցվում եր զբաղված բանվորների թվի ավելացումով և վերջին տարիների ընթացքում գործազրկության կտրուկ վերացումով[1]:

Ե՛լ ավելի ապշեցուցիչ հետևանք է ստացվում, յեթե գործը քննարկենք ազգային յեկամուտը ըստ դասակարգերի բաշխելու տեսակետից: Ազգային յեկամտի ըստ դասակարգերի բաշխման հարցը արմատական հարց է հանդիսանում բանվորների և գյուղացիների նյութական և կուլտուրական դրության տեսակետից: Իզուր չէ, վոր Գերմանիայի, Անգլիայի, ՀԱՄՆ-ի բուրժուական տնտեսագետները ջանում են խճողել այդ հարցը հօգուտ բուրժուազիայի, չարունակ հրատարակելով այդ առթիվ իրենց «միանգամայն օբյեկտիվ» հետազոտությունները:

Համագերմանական վիճակագրական վարչության տվյալների համաձայն՝ աշխատավարձի բաժինը Գերմանիայի ժողովրդական յեկամուտի մեջ 1929 թ. կազմում եր 70 %, իսկ բուրժուազիայի բաժինը—30 %: Ֆեդերալ առևտրական հանձնաժողովի և տնտեսական հետազոտությունների Ազգային բյուրոյի տվյալներով՝ բանվորների բաժինը ՀԱՄՆ-ի ժողովրդական յեկամտի մեջ 1923 թ. կազմում եր 54 %-ից ավելի, իսկ կապիտալիստների բաժինը—45 %-ից ավելի: Վերջապես, Բոլեյ և Ստեմպ տնտեսագետների տվյալներով՝ բանվոր դասակարգի բաժինն Անգլիայի ժողովրդական յեկամուտի մեջ 1924 թ. կազմում եր 50%-ից մի քիչ պակաս, իսկ կապիտալիստների բաժինը Անգլիայի ժողովրդական յեկամտի 50 %-ից մի քիչ ավելի:

Հասկանալի յե, վոր չի կարելի այդ հետազոտությունների արդյունքներին առանց այլևայլության հավատ ընծայել: Չի կարելի, վորովհետև բացի զուտ տնտեսական կարգի սխալներից՝ այդ հետազոտությունների մեջ կան ուրիշ տեսակի սխալներ, վորոնք նպատակ ունեն մասամբ ծածկելու կապիտալիստների յեկամուտներն ու փոքրացնելու նրանք, մասամբ ուռցնելու և մեծացնելու բանվոր դասակարգի յեկամուտները, բանվորների կարգը դասելով ահագին ռոճիկներ ստացող պաշտոնյաներին: Յես ել չեմ խոսում այն մասին, վոր այդ հետազոտությունների մեջ հաճախ հաշվի չեն առնվում ֆերմերների և ընդհանրապես գյուղական կապիտալիստների յեկամուտները:

Ընկ. Վարգան քննադատական վերլուծության յենթարկեց այդ տվյալները: Յեվ ահա, թե ինչ ստացվեց նրա մոտ: Դուրս է գալիս, վոր բանվորների և քաղաքի ու գյուղի մյուս աշխատավորների բաժինը, վորոնք ուրիշի աշխատանք չեն օգտագործում, կազմում եր Գերմանիայում ժողովրդական յեկամուտի 55 %-ը, ՀԱՄՆ-ում—54 %, Անգլիայում—45 %. իսկ կապիտալիստների բաժինը՝ Գերմանիայում— 45 %, ՀԱՄՆ-ում—46 %, Անգլիայում——55 %:

[1]) В. Эвентов, «Зараб. плата в СССР и в капиталистических странах».



Այսպես է գործի դրությունը ամենախոշոր կապիտալիստական յերկիրներում:

Իսկ ի՞նչպես է իրերի դրությունը ԽՍՀՄ մեջ:

Ահա ձեզ Պետպլանի տվյալները: Դուրս է գալիս, վոր

ա) Ուրիշի աշխատանք չշահագործող բանվորների և աշխատավոր գյուղացիների բաժինը մեզ մոտ 1927/28 թ. կազմում եր ամբողջ ժողովրդական յեկամուտի 75,2 % (այդ թվում քաղաքային և գյուղական բանվորների բաժինը—33,2 %), 1929/30 թվին—77,1 % (այդ թվում քաղաքային և գյուղական բանվորների բաժինը— 35,5 %):

բ) Կուլակների և քաղաքային կապիտալիստների բաժինը կազմում եր 1927/28 թ.— 8,1 %, 1928/29 թ.— 6,5 %, 1929/30 թ.— 1,8 %:

գ) Տնայնագործների բաժինը, վորոնց մեծամասնությունը աշխատավոր ...արը է հանդիսանում, կազմում եր 27/28 թ.—6,5 %, 28/29 թ.—5,4% 29/30 թ. 4,4 %:

դ) Պետական սեկտորի բաժինը, վորի յեկամուտներն հանդիսանում են բանվոր դասակարգի և ընդհանրապես աշխատավոր մասսաների յեկամուտներ, կազմում եր 27/28 թ.—8,4%, 28/29 թ.—10,5%, 29/30 թ.—15,2%:

Այդպիսով, դուրս է գալիս, վոր մինչդեռ առաջավոր կապիտալիստական յերկիրներում շահագործող դասակարգերի բաժինը ժողովրդական յեկամտի մեջ կազմում է մոտ 50 %, յերբեմն էլ դրանից ավելի, մեզ մոտ ԽՍՀՄ մեջ շահագործող դասակարգերի բաժինը կազմում է ժողովրդական յեկամուտի 2%-ից վոչ ավելին:

Իսկապես, դրանով էլ բացատրվում է այն զարմանալի փաստը, վոր ՀԱՄՆ-ում 1922 թվին, ամերիկական բուրժուական գրող Դեննիի խոսքերով, «սեփականատերերի 6 %-ը կենտրոնացնում եր իր ձեռքերում ամբողջ ազգային հարստության 59 %-ը», իսկ Անգլիայում 20/21 թ., նույն Դեննիի խոսքերով, «Սեփականատերերը, վորոնք ընդամենը 2 %-ից էլ պակաս են, տիրում եյին ամբողջ ազգային հարստության 64%ին» (տես Դեննիի գրքույկը «Америка завоевывает Англии»—«Ամերիկան նվաճում է Անգլիային»):

Կարո՞ղ են նման փաստեր տեղի ունենալ մեզ մոտ ԽՍՀՄ մեջ, խորհուրդների յերկրում: Պարզ է, վոր չեն կարող: ԽՍՀՄ մեջ վաղուց արդեն չկան և չեն կարող լինել այդպիսի «սեփականատերեր»:

Բայց յեթե ԽՍՀՄ մեջ 1929/30 թ. ժողովրդական յեկամուտի ընդամենը միայն մոտ 2 %-ն է բաժին ընկնում շահագործող դասակարգերին, ապա ո՞ւր է գնում ժողովրդական յեկամուտի մնացած մասսան:

Պարզ է, վոր այդ մնում է բանվորների և աշխատավոր գյուղացիների ձեռքում:

Ահա վորտեղ է Խորհրդային իշխանության ուժի և հեղինակության աղբյուրը բանվոր դասակարգի և գյուղացիության միլիոնների մեջ:

Ահա վորտեղ է ԽՍՀՄ բանվորների և գյուղացիների նյութական բարեկեցության սիստեմատիկ աճման հիմքը:

Այդ վճռական փաստերի լույսի մեջ միանգամայն հասկանալի յեն դառնում՝ բանվորների իրական աշխատավարձի բարձրացումը, բանվորների սոցիալական ապահովագրության բյուջեյի աճումը, գյուղացիության չքավոր և միջակ տնտեսությունների ոգնության ուժեղացումը, հատկացումների ավելացումները բանվորական բնակարանային շինարարության համար, բանվորների կենցաղի բարելավման համար, մայրության և մանկության համար և դրա կապակցությամբ ԽՍՀՄ ազգաբնակչության տարեկանական աճումը մահացության կրճատմանը, առանձնապես յերեխաների մահացության կրճատմանը զուգընթաց:

Հայտնի յե, որին., վոր բանվորների իրական աշխատավարձը, հաշվելով սոցապահովագրությունն ու շահույթներից կատարված հատկացումները բանվորների կենցաղը բարելավելու ֆոնդին, աճել է նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ մինչև 167 %-ը: Լոկ միայն բանվորների սոցիալական ապահովագրությունը վերջին 3 տարվա ընթացքում աճել է 980 միլիոն ռուբլուց 27/28 թվին մինչև 1400 միլիոն ռուբլի 29–30 թվին: Մայրության և մանկության պաշտպանության վրա վերջին 3 տարվա ընթացքում (27–28 թ.—29–30 թ.) ծախսվել է 494 միլիոն ռուբլի: Նախադպրոցական կրթության վրա (մանկապարտեզներ, հրապարակներ և այլն) նույն ժամանակամիջոցում ծախսվել է 204 միլիոն ռուբլի: Բանվորական բնակարանային շինարարության վրա—1·880 միլիոն ռուբլի:

Այդ չի նշանակում, իհարկե, թե ամեն անհրաժեշտ բան արված է իրական աշխատավարձի լուրջ բարձրացման համար, թե իրական աշխատավարձը չեր կարելի ավելի բարձր աստիճանի վրա հասցնել: Յեվ յեթե այդ չի արված, ապա այդ բանում մեղավոր է մեր մատակարարման ապարատի բյուրոկրատիզմն ընդհանրապես, սպառողական կոոպերացիայի բյուրոկրատիզմն ամենից առաջ և առանձնապես: Պետպլանի տվյալներով՝ համայնացված սեկտորը ներքին առևտրի վերաբերմամբ ընդգրկում է 29/30 թվին մեծածախի ավելի քան 99%-ը, իսկ մանրածախի ավելի քան 89 %-ը: Այդ նշանակում է, վոր կոոպերացիան սիստեմատիկ կերպով դուրս է մղում մասնավոր սեկտորին և առևտրի ասպարեզում մոնոպոլիստ է դառնում: Այդ, իհարկե, լավ է: Բայց վատ է այն, վոր այդ մոնոպոլիան մի շարք դեպքերում կիրառվում է ի վնաս սպառողների: Դուրս է գալիս, վոր չնայելով իր համարյա մոնոպոլ դրությանը առևտրի մեջ, կոոպերացիան գերադասում է բանվորներին ավելի «յեկամտաբեր» ապրանքներ մատակարարել, վորոնք մեծ շահույթներ են տալիս (գալանտերեյա և այլն), և խուսափում է նրանց ավելի պակաս «յեկամտաբեր» ապրանքներ մատակարարել, թեև նրանք ավելի անհրաժեշտ լինեյին բանվորների համար (գյուղատնտեսական արդյունքներ): Դրա կապակցությամբ բանվորներն ստիպված են գյուղատնտ. ապրանքների նկատմամբ ունեցած իրենց կարիքների մոտ 25%-ը բավարարել մասնավոր շուկայում, ավելորդ գումարներ վճարելով գների պատճառով: Յես էլ չեմ խոսում այն մասին, վոր կոոպերացիայի ապարատը ամենից ավելի հոգում է բալանսի մասին, վորի պատճառով չափազանց դժվարությամբ է համաձայնում մանրածախ գների իջեցմանը, չնայելով ղեկավար կենտրոնների կողմից արված կատեգորիկ դիրեկտիվներին: Դուրս է գալիս, վոր կոոպերացիան տվյալ դեպքում գործում է վո՛չ իբրև սոցիալիստական սեկտոր, այլ իբրև մի յուրատեսակ սեկտոր, վորը վարակված է ինչ-վոր նեպմանական վոգով: Հարց է առաջ գալիս, թե ում է հարկավոր այդպիսի կոոպերացիան և ինչ ոգուտ բանվորների համար նրա մոնոպոլիայից, յեթե նա չի կատարում բանվորների իրական աշխատավարձի լուրջ բարելավման խնդիրը:



Յեվ յեթե, չնայելով դրան, մեզ մոտ իրական աշխատավարձն այնուամենայնիվ անշեղ կերպով տարեցտարի բարձրանում է, ապա այդ նշանակում է, վոր մեր հասարակակարգը, ժողովրդական յեկամտի բաշխման սիստեմը և ամբողջ իրադրումն աշխատավարձի գծով այնպես են, վոր նրանք հնարավորություն ունեն չեզոքացնելու և ծածկելու այն բոլոր մինուսները, վորոնք գալիս են կոոպերացիայից:

Յեթե այդ հանգամանքին միացնենք մի շարք այլ ֆակտորներ, ինչպես, որինակ, հասարակական սննդի դերի ավելացումը, բնակարանների եժանացումը բանվորների համար, հսկայական քանակությամբ ստիպենդիաները բանվորների և նրանց յերեխաների համար, կուլտուրական սպասարկումը և այլն, ապա կարելի յե համարձակությամբ ասել, վոր բանվորների աշխատավարձի մեծացումը շատ ավելի մեծ տոկոս կկազմե, քան այդ մատնանշվում է մեր միքանի հիմնարկությունների վիճակագրության մեջ:

Այդ բոլորը միասին վերցրած, պլյուս ավելի քան 830 հազար արդյունաբերական բանվորների (33,5 %) 7 ժամյա բանվորական որվա փոխադրելը, պլյուս ավելի քան 1,5 միլիոն արդյունաբերական բանվորների (63,4 %) հնգորյա շաբաթի փոխադրելը, պլյուս հանգստյան տների, սանատորիաների և կուրորտների լայն ցանցի առկայությունը բանվորների համար, վորոնցով վերջին 3 տարվա ընթացքում անց են կացել ավելի քան 1700 հազար հոգի բանվորներ,— այդ բոլորը բանվոր դասակարգի աշխատանքի և կենցաղի այնպիսի միջավայր է ստեղծում, վոր մեզ հնարավորություն է տալիս աճեցնելու բանվորների նոր սերունդ, առողջ և կենսուրախ, ընդունակ՝ խորհրդային յերկրի հզորությունը պատշաճ բարձրության հասցնելու և այն իր կրծքով պաշտպանելու թշնամիների վոտնձգություններից[1]):

Յես նոր խոսեցի մեր ձեռնարկությունների համար կազմակերպված ձևով բանվորներ հավաքագրելու մասին: Սակայն բանվոր ճարել դեռ չի նշանակում ամեն ինչ անել: Մեր ձեռնարկությունները բանվորական ուժով ապահովելու համար անհրաժեշտ է ամրացնել բանվորներին արտադրությանը և քիչ թե շատ ավելի մշտական դարձնել ձեռնարկության բանվորների կազ-

1) Ստալին, «Լենինիզմի հարցերը», էջ 744—749.

մր: Հաղիվ թե կարիք կա ապացուցելու, վոր առանց ունենալու արտադրության տեխնիկական քիչ թե շատ յուրացրած բանվորներ, մեխանիզմին քիչ թե շատ վարժված բանվորների մշտական կազմ, հնարավոր չե առաջ շարժվել, հնարավոր չե կատարել արտադրական պլանները:

Հակառակ դեպքում հարկավոր կլիներ ամեն անգամ նորից սովորեցնել բանվորներին, ժամանակի կեսը մսխել նրանց սովորեցնելու համար, փոխանակ արտադրության համար օգտագործելու: Իսկ իրականում ի՞նչ է կատարվում այժմ մեզ մոտ: Կարելի՞ յե ասել, վոր ձեռնարկություններում բանվորների կազմը քիչ թե շատ մշտական է: Դժբախտաբար այդ չի կարելի ասել: Ընդհակառակը մեզ մոտ, ձեռնարկություններում դեռ մինչև այժմել կա բանվորական ուժի այսպես կոչված հոսունություն:

Դեռ ավելին՝ մի շարք ձեռնարկություններում բանվորական ուժի հոսունությունը վոչ միայն չի վերանում, այլ ընդհակառակն աճում և ուժեղանում է: Համենայն դեպս դուք քիչ ձեռնարկություն կգտնեք, վորտեղ բանվորական ուժի կազմը կես տարվա մեջ կամ նույնիսկ մի յեռամսյակում չփոխվի առնվազն 30—40 տոկոսով:

Առաջ, արդյունաբերության վերականգնման շրջանում, յերբ մեր տեխնիկական սարքավորումը բարդ չեր և արտադրության մասշտաբը փոքր, կարելի յեր մի կերպ հանդուրժել բանվորական ուժի այսպես կոչված հոսունությունը: Այժմ այլ բան է: Այժմ իրերի դրությունն արմատապես փոխվել է:

Այժմ ծավալուն վերակառուցման շրջանում, յերբ արտադրությունը հասել է վիթխարի մասշտաբի, իսկ տեխնիկական սարքավորումը դարձել է վերին աստիճանի բարդ, բանվորական ուժի հոսունությունը մեր արտադրության համար դարձել է մի չարիք, վոր կազմալուծում է մեր ձեռնարկությունները: Այժմ «հանդուրժել» բանվորական ուժի հոսունությունը նշանակում է քայքայել մեր արդյունաբերությունը, վոչնչացնել արտադրական պլանների կատարման հնարավորությունը, վերացնել արտադրանքի վորակը բարելավելու հնարավորությունը:

Վորո՞նք են բանվորական ուժի հոսունության պատճառները:

Աշխատավարձի սխալ կազմակերպումը, սխալ տարիֆային սիստեմը, աշխատավարձի «ձախ» հավասարեցումը: Մի շարք ձեռնարկություններում աշխատավարձի դրույքները սահմանված են այնպես, վոր ծանր ու թեթև աշխատանքի տարբերությունը համարյա ջնջվում է: Հավասարեցման հետևանքն է այն, վոր վոչ վորակյալ բանվորը չի շահագրգռված վորակյալների կարգն անցնելու և այդպիսով զուրկ է առաջ ընթանալու հեռանկարներից, ուստի նա իրեն «ժամանակավոր» հյուր է զգում արտադրության մեջ և աշխատում է միայն նրա համար, վոր մի քիչ «փող աշխատի» և ապա գնա մի այլ տեղ «բախտ վորոնելու»: Աշխատավարձի հավասարեցման հետևանքն այն է, վոր վորակյալ բանվորը հարկադրված է ձեռնարկությունից–ձեռնարկություն անցնել, վորպեսզի գտնի վերջապես այն ձեռնարկությունը,



վորտեղ կարող են ըստ արժանավույն գնահատել վորակյալ աշխատանքը:
Դրանից է առաջանում «ընդհանուր» շարժումը ձեռնարկությունից–ձեռնար-
կություն, բանվորական ուժի հոսունությունը:
Չարիքը վոչնչացնելու համար պետք է վերացնել հավասարեցումը, պետք
է կազմակերպել դրույքների այնպիսի սիստեմ, վոր նկատի առնվի վորակյալ
և վոչ վորակյալ աշխատանքի, ծանր և թեթև աշխատանքի տարբերությունը:
Չի կարելի հանդուրժել, վոր սև մետաղագործության ապարիգում բանվորն
տաանա նույնքան, վորքան ավելողը: Չի կարելի հանդուրժել, վոր յերկաթու-
ղային տրանսպորտի մեքենավարն ստանա նույնքան, վորքան արտագրողը:
Մարքսը և Լենինն ասում են, վոր վորակյալ և վոչ վորակյալ աշխատանք-
ների տարբերությունը գոյություն է ունենալու նույնիսկ սոցիալիզմի ժա-
մանակ, նույնիսկ դասակարգերը վոչնչացնելուց հետո, վոր միայն կոմունիզ-
մի ժամանակ կվերանա այդ տարբերությունը, ուստի նույնիսկ սոցիալիզմի
ժամանակ «աշխատավարձը» պետք է տրվի ըստ աշխատանքի և վոչ թե ըստ
պահանջի:
Սակայն մեր տնտեսական և արհմիութենական «հավասարարները» հա-
մաձայն չեն դրան: Նրանք յենթադրում են, վոր մեր խորհրդային կարգերում
տարբերությունն արդեն վերացել է: Ո՞վ է իրավացի, Մարքսն ու Լենինը, թե
«հավասարարները»: Պետք է յենթադրել, վոր այժ  ով դրույքային սիստեմը
հիմնում է հավասարեցման «սկզբունքի» վրա, ա  դ հաշվի առնելու վո-
րակյալ ու վոչ վորակյալ աշխատանքների տարբեր  ւնը, խզում է իր կա-
պը մարքսիզմից, խզում է լենինիզմից:
Արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղու  ուրաքանչյուր ձեռ-
նարկության մեջ, յուրաքանչյուր ցեխում կան քիչ  շատ վորակյալ բան-
վորների առաջավոր խմբակներ, վորոնց նախ և  աջ ու գլխավորապես
պետք է ամրացնել արտադրությանը, յեթե մենք ուզում ենք իրոք ապահովել
բանվորների մշտական կազմը ձեռնարկության մեջ: Նրանք, բանվորների
այդ առաջատար խմբակները, կազմում են արտադրության հիմնական օղա-
կը: Ամրացնել նրանց ձեռնարկությանը, ցեխին, նշանակում է ամրացնել
բանվորների ամբողջ կազմը, հիմքից կասեցնել բանուժի հոսունությունը:
Իսկ ինչպե՞ս ամրացնել նրանց ձեռնարկությանը: Նրանց կարելի յե ամ-
րացնել միմիայն առաջ քաշելով դեպի վեր, բարձրացնելով նրանց աշխատա-
վարձի մակարդակը, կազմակերպելով աշխատավարձն այնպես, վոր արժանի
գնահատություն տրվի աշխատողի վորակավորմանը:
Իսկ ի՞նչ է նշանակում առաջ քաշել դեպի վեր և բարձրացնել նրանց աշ-
խատավարձի մակարդակը: Այդ, բացի մյուս բոլորից, նշանակում է հեռա-
նկար բանալ վոչ վորակյալ բանվորների առաջ, խթանել նրանց դեպի վեր
ընթանալու, վորակյալների կարգն անցնելու:
Դուք ինքներդ գիտեք, վոր այժմ մեզ անհրաժեշտ են միլիոնավոր վո-
րակյալ բանվորներ: Սակայն վորակյալ բանվորներ տեղծելու համար պետք

է մղում տալ, հեռանկար տալ չվարժված բանվորներին՝ առաջ գնալու, դեպի վեր ընթանալու։ Եվ վորքան ավելի համարձակ վոտք դնենք մենք այդ ուղին, այնքան ավելի լավ, վորովհետև այդ է բանվորական ուժի հոսունության վերացնելու հիմնական միջոցը։ Իսկ խնայողություն անել այդ գործում, նշանակում է հանցանք գործել, գնալ մեր սոցիալիստական ինդուստրիայի շահերի դեմ։

Սակայն այդ դեռ բոլորը չէ։

Բանվորներին ձեռնարկության ամրացնելու համար անհրաժեշտ է եվ ավելի բարելավել բանվորների ապրանքավորումը, նրանց բնակարանային պայմանները։

Չի կարելի ժխտել, վոր վերջին ժամանակներս քիչ բան չի արված բանվորների բնակարանային շինարարության և հայթայթման ասպարեզում։ Սակայն մինչև այժմ արվածը շատ քիչ է բանվորների արագորեն աճող պահանջներին բավարարելու համար։ Չի կարելի հենվել այն հանգամանքի վրա, վոր առաջ բանվորներին ապրանք հայթայթելու գործն ավելի վատ եր, քան այժմ, վոր այդ հիման վրա կարելի յե բավարարվել գոյություն ունեցող դրությամբ։

Միմիայն փտած, մինչև ուղն ու ծուծը նեխված մարդիկ կարող են մխիթարվել անցյալը մատնանշելով։ Պետք է յելակետ ունենալ վոչ թե անցյալը, այլ բանվորների ներկայիս հարաճուն պահանջները։ Պետք է հասկանալ, վոր մեզ մոտ արմատապես փոխվել են բանվորի գոյության պայմանները։ Այժմ բանվորն այն չէ, ինչ առաջներում, ներկայումս բանվորը, մեր խորհրդային բանվորը, ուզում է ապրել, բավարարելով իր բոլոր նյութական ու կուլտուրական պահանջներին պարենավորման իմաստով, բնակարանային իմաստով, կուլտուրական և այլ տեսակ բոլոր պահանջների բավարարման իմաստով։ Նա իրավունք ունի դրան և մենք պարտավոր ենք ապահովել նրա համար այդ պայմանները։

Ճիշտ է, մեզանում նա չի տուժում գործազրկությունից, նա ազատ է կապիտալիզմի լծից, նա այլևս իր գործի ստրուկը չէ, այլ տերը։ Սակայն այդ քիչ է։ Նա պահանջում է բավարարել իր բոլոր նյութական և կուլտուրական պահանջները։ Մենք պարտավոր ենք կատարել այդ պահանջը։ Մի մոռանաք, վոր այժմ մենք ինքներս վորոշ պահանջներ ենք առաջադրում բանվորին, պահանջում ենք նրանից աշխատանքային կարգապահություն, լարված աշխատանք, սոցմրցում ու հարվածայնություն։ Մի մոռանաք, վոր բանվորների հսկա մեծամասնությունը մեծ խանդավառությամբ ընդունեց Խորհրդային իշխանության այդ պահանջները և կատարում է վերջիններս հերոսաբար։ Ուստի մի զարմանաք, վոր կատարելով Խորհրդային իշխանության պահանջները, բանվորներն իրենց հերթին դրա փոխարեն պահանջելու յեն կատարել մեր ստանձնած պարտավորությունները՝ եվ ավելի բարելավել նրանց նյութական և կուլտուրական դրությունը։



Ուրեմն, վերացնել բանվորական ուժի հոսունությունը, վոչնչացնել «հավասարեցումը», ճիշտ կազմակերպել աշխատավարձը, բարելավել բանվորների կենցաղային պայմանները—*այս է մեր խնդիրը*[1])։

*Այս վիճակի մեջ է մեր արդյունաբերության զարգացման յերկրորդ նոր պայմանը։*

## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ բանվորական ուժի արժեքը յերևան է գալիս վորպես աշխատավարձ։
2. Աշխատանքը արժեք ունի՞ թե վոչ։
3. Թվեք աշխատավարձի հիմնական ձևերի տարբերիչ գծերն ու փոխադարձ առնչությունը։
4. Ի՞նչ ենք հասկանում իրական և անվանական աշխատավարձ ասելով։
5. Ինչպիսի հարաբերություն գոյություն ունի կապիտալի աճման և աշխատավարձի միջև։
6. Ցույց տվեք հարաբերական և բացարձակ աշխատավարձի բարձրացման տեսության բուրժուական եյությունը։
7. Ի՞նչ դեր են խաղում պրոֆմիությունները աշխատավարձի խնդրում։
8. Իլյուստրացիայի յենթարկեք (փաստացի տվյալներով) աշխատավարձի աճման դինամիկան ԽՍՀՄ-ում և անկումը կապիտալիստական յերկրներում։
9. Արդի միլիոնավոր անգործների բանակի ազդեցությունը աշխատավարձի վրա։
10. Ցույց տվեք աշխատավարձի հավասարեցման «ձախ» տենդենցների մանր-բուրժուական եյությունը։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. К. Маркс «Капитал» том I, стр. 516—541
2. К. Маркс «Зарплата, цена и прибыль».
3. *Մարքս «Վարձու աշխատանք և կապիտալ»։*
4. *Լենին «Պետություն և հեղափոխություն»։*
5 *Ստալին «Նոր պայմաններ, աշխատանքի նոր խնդիրներ»։*
6 Ленин «Сборник» том XI, стр. 389.


[1]) Ստալին «Աշխատանքի նոր խնդիրներ»։

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ


Առաջաբանի փոխարեն . . . . . . . . . 3—5

Նախնական դիտողություններ և ցուցմունքներ . . . . 7—11

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . . . . . . . 12—94

1. Ընդհանուր հասկացողություն արտադրության, արտադրողական ուժերի և արտադր. հարաբերությունների մասին . . 12—24

2. Արտադրական հարաբերությունների և արտադրողական ուժերի դիալեկտիկան . . . . . . . 24—33

3. Հասարակական արտ. ձևերը . . . . . . 33—51

4. Արտադրողական ուժերը և արտադրական հարաբերությունները ԽՍՀՄ-ում . . . . . . . . 51—60

5. Ի՞նչ է նշանակում սոցիալիզմի տնտեսական բազա . . . 60—61

6. Բազիսի և վերնաշենքի հարաբերակցությունը . . . . 61—65

7. Քաղաքատնտեսության առարկայի որոշումը . . . 65—69

8. Ընդհանուր հասկացողություն քաղաքատնտ. մեթոդի մասին . 69—71

9. Քաղաքատնտեսության դասակարգային էությունը . . . 71—72

10. Քաղաքատնտ. և խորհրդային տնտեսություն . . . . 72—74

11. Քաղաքտնտ. մեջ յեղած տարաձայնությունների շուրջը . . 74—94

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ. ԱՊՐԱՆՔ . . . . . . . . 95—165

1. Նախնական դիտ[illegible]ություններ և մեթոդական ցուցմունքներ . . 95—99

2. Աշխատանքի հա[illegible]կական և տեխնիկական բաժանումը . . 99—103

3. Ապրանքակապի[illegible]ական տնտեսություն . . . . 103—107

4. Փոխանակությ[illegible]և կապի հիմնական ձևն արտադրողների միջև 107—112

5. Արդյունքի փո[illegible]ն ապրանքի . . . . . 112—114

6. Ապրանքի սպառ[illegible]ի արժեք և արժեք . . . . 115—119

7. Արժեքի մեծությ[illegible]ափումը . . . . . . 119—121

8. Անհատական և հա[illegible]ակական աշխատանք . . . . 121—122

9. Ապրանքի մեջ պարունակվող աշխատանքի յերկակի բնույթը . 122—126

10. Աբստրակտ աշխատանքը, վորպես հասարակական աշխատանքի սպեցիֆիկ ձև . . . . . . . . 126—128

11. Հասարակական և անհատական աշխատանք . . . . 128—129

12. Հասարակ և բարդ աշխատանք . . . . . . 129—131

13. Աշխատանքի արտադրողականությունը և արժեքը . . . 131—133

14. Արժեք և նրա փոխանակային ձևը . . . . . . 133—134

15. Մարքսի արժեքի թեորիայի էությունը . . . . . 135—138

16. Արժեքի ձևերի զարգացումը . . . . . . . 138—140

17. Արժեքի պարզ, յեզակի կամ պատահական ձևը . . . 140—141

18. Արժեքի հարաբերական ձևի բովանդակությունը . . . 141—144

19. Արժեքի պարզ ձևը՝ վերցրած ամբողջությամբ . . . 144—146

20. Արժեքի ծավալուն հարաբերական ձևը . . . . . . 146—147

21. Արժեքի ընդհանուր ձևը . . . . . . . 147—150

22. Արժեքի հարաբերական ձևի և եկվիվալենտային ձևի զարգացման միջև գոյություն ունեցող հարաբերությունը . . . 150—151

23. Անցում արժեքի ընդհանրական ձևից դրամական ձևին . . 151—153

24. Արժեք և գին . . . . . . . . . 153—156

25. Ապրանքային ֆետիշիզմը և նրա գաղտնիքը . . . . 156—164

26. Արժեքի դերն ապրանքատնտեսության մեջ . . . . 164—166

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ—ՓՈՂ . . . . . . . . 167—199

1. Նախնական դիտողություններ և մեթոդական ցուցմունքներ . 167—171

2. Արժեքի փողային ձևը . . . . . . . . 171—173

3. Փողային ֆետիշիզմը . . . . . . . . 173

4. Արժեքի չափանիշ և գների մասշտաբ . . . . . 173—176

5. Շրջանառության միջոց . . . . . . . 176—180

6. Ապրանքների մետամորֆոզը—փողի շրջանառությունը . . 180—186

7. Դրամ, արժեքի նշան . . . . . . . . 186—191

8. Փող, վորպես գանձ . . . . . . . . 191—193

9. Վճարելամիջոց . . . . . . . . . 193—197

10. Համաշխարհային փող . . . . . . . . 197—198

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ—ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔ . . . . . . 199—303

1. Նախնական դիտողություններ և մեթոդական ցուցմունքներ . 199—203

2. Հավելյալ արժեք և կապիտալ . . . . . . . 203—213

3. Բանվորական ուժն իբրև ապրանք և նրա առանձնահատկությունները 213—216

4. Բանվորական ուժի արժեքը . . . . . . . 216—222

5. Աշխատանք և բանվորական ուժ . . . . . . 222—223

6. Կապիտալիզմն իբրև ապրանքային արտադրության բարձրագույն աստիճան . . . . . . . . . 223—226

7. Անհրաժեշտ և հավելյալ աշխատանք . . . . . 227—233

8. Արժեքի մեծացման և հավելյալ արժեքի արտադրության պրոցեսը 235—245

9. Կապիտալ.— . . . . . . . . . 245—250

10. Արտադրության կապիտալիստական պրոցեսն իբրև հակադրությունների միասնություն . . . . . . . 251—252

11. Հաստատուն և փոփոխական կապիտալ . . . . . 252—254

12. Արժեքի փոխանցումն ու ստեղծումը . . . . . 254—258

13. Հավելյալ արժեքի նորման . . . . . . . 259—261

14. Հավելյալ արժեքի նորման և մասսան . . . . . 261—265

15. Բացարձակ և հարաբերական արժեք . . . . . 265—273

16. Հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը և տեխնիկայի զարգացումը . . . . . . . . 273—274

17. Կոոպերացիա . . . . . . . . . 274—280

19. Մանուֆակտուրա . . . . . . . . . 280—285

19. Մանուֆակտուրայի կապիտալիստական բնույթը . . . 285—288

20. Մեքենաները ու խոշոր արդյունաբերությունը . . . 288—293

21. Տեխնիկայի զարգացումը և բանվոր դասակարգը . . . 293—299

2336

22. Աշխատանքի ինտենսիֆիկացիան և պրոլետարիատի շահագործման աճումը . . . . . . . . . . 299—302

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.—ԱՇԽԱՏԱՎԱՐՁ . . . . . . . . . 303—372

1. Նախնական դիտողություններ և մեթոդական ցուցմունքներ . 303—309
2. Բանվորական ուժի արժեքի փոխարկումն աշխատավարձի . . 309—315
3. Աշխատավարձն իբրև բանվորական ուժի արժեքի հակարանական ձևը 315—320
4. Աշխատավարձի ձևերը . . . . . . . . 320—328
5. Անվանական և իրական, բացարձակ և հարաբերական աշխատավարձ 328—335
6. Այսպես կոչված «աշխատավարձի յերկաթե օրենքը» . . 335—337
7. Աշխատավարձի դինամիկան . . . . . . . . 337—352
8. Կապիտալիստական ռացիոնալիզացիան և գործազրկությունը . 352—358
9. Աշխատավարձը ԽՍՀՄ մեջ և կապիտալիստական յերկրներում . 358—372

Гос. библиотека ՀՍԽՀ — ССРА им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Պետհրատի տպարան
Գլավլիտ 7135 (բ.)
Հրատ. 2095
Պատվեր 576
Տիրաժ 10000

Սրբագրիչներ՝ Հ. Սաուկյան յեվ Ա. Ծուղուրյան

Հանձնված ե արտադրության 17 փետրվարի 1932 թ. Ստ. Ֆ. A.
Ստորագրված ե տպագրելու 27 հունիսի 1932 թ.

գլ

Գինը 3 ռ. 50 կոպ. (23½ մ.)

Адеян П., Адоян А., Макинц Н.

# ОСНОВЫ МАРКСИСТСКО-ЛЕНИНСКОЙ ПОЛИТ. ЭКОНОМИИ

Книга первая

Госиздат ССР Армения
Эривань—1939

ՀՀ Ազգային գրադարան
NL0196390